Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

ЛЕОНИД ЮЗЕФОВИЧ

ФИЛЭЛЛИН

Неисторический роман

Перевод с русского на армянский язык
Нерсес Атабекян

Հրատարակվել է «Թարգմանության ինստիտուտ»
ինքնավար ոչառևտրային կազմակերպության
աջակցությամբ, Ռուսաստան

LEONID YUZEFOVICH

PHILHELLENE

Non–historical novel

Translation from Russian into Armenian
Nerses Atabekyan

Vogi-Nairi, Yerevan

Լեոնիդ ՅՈՒԶԵՖՈՎԻՉ

ՀԵԼԼԵՆԱՍԵՐԸ

Վեպ՝ օրագրերով, նամակներով ու բացակա զրուցակիցների հետ մտովի զրույցներով
Ոչ պատմական վեպ

Թարգմանությունը ռուսերենից՝
Ներսես ԱԹԱԲԵԿՅԱՆԻ

Երևան 2023

ՀՏԴ 821.161.1-31 Յուզեֆովիչ
ԳՄԴ 84(2)-44
Յ 672

«Գեղarm» հանդեսի մատենաշար

Յուզեֆովիչ Լեոնիդ
Յ 672 Հելլենասերը: Ոչ պատմական վեպ: Թարգմ.՝ Ն.Աթաբեկյան:– Երևան, «Ոգի-Նաիրի» հրատ., 2023, 336 էջ:

Հելլենասեր՝ հույներին սիրող: XIX դարի 20-ական թվականներին այսպես սկսեցին կոչել նրանց, ովքեր համակրում կամ անմիջաբար մասնակցում էին Օսմանյան կայսրության դեմ հույն ապստամբների պայքարին: Հունաստան մեկնած և այնտեղ մահացած Բայրոնի պես՝ իրեն հելլենասեր է համարում վեպի գլխավոր հերոսը՝ պաշտոնաթող շտաբս-կապիտան Գրիգորի Մոսցեպանովը: Գրքում ազատություն է տրվել հեղինակային երևակայությանը, բայց նախշերը հյուսվել են իրական դեպքերի հենքի վրա: Գործողությունները սկսվում են Նիժնի-տագիլյան գործարաններում, շարունակվում՝ Եկատերինբուրգում, Պերմում, Ցարսկոյե Սելոյում, Տագանրոգում, Ռուսաստանից տեղափոխվում Նավպլիոն ու Ալեքսանդրիա և ավարտվում Աթենքում՝ Ակրոպոլիսում: Վեպի կենտրոնական հերոսներից են Ալեքսանդր I-ը, միստիկ բարոնուհի Յուլիա Կրիդները, եգիպտացի զորավար Իբրահիմ փաշան և այլ իրական դեմքեր: «Հելլենասերը» ավելի շուտ պատմական թեմայի վարիացիա է, քան ավանդական պատմավեպ:

ՀՏԴ 821.161.1-31 Յուզեֆովիչ
ԳՄԴ 84(2)-44

ISBN 978-9939-969-65-7

© Юзефович Л. А., 2023
© Издательство АСТ, 2023
© «Ոգի-Նաիրի» (թարգմանության համար), 2023

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Այս վեպը պատմականորեն շատ ավելի հավաստի է, քան կարող է թվալ ընթերցողին: Իհարկե, ներառված օրագրերն ու նամակները,- չխոսելով արդեն հերոսների մտովի զրույցների մասին,- երևակայության արգասիք են, բայց այդ օրագրերի ու նամակների որոշ հեղինակներ և նամակներում հիշատակվածներից շատերն իրական դեմքեր են և գործում են սեփական անուններով կամ ունեն նախատիպեր: Ալեքսանդր I-ի կյանքի վերջին տարիների հանգամանքները, այդ թվում՝ Բրեստ-Լիտովսկում ստացած սրունքի վնասվածքը և ուղևորությունն Ուրալ, ինչպես և այլ պատմական դեմքերի կենսագրական մանրամասները գերազանցապես համապատասխանում են իրականությանը: 1820-ական թվականների Հունական պատերազմը հանուն անկախության, ներառյալ՝ թուրքերի կողմից պաշարված հունական Ակրոպոլիսի ապաշրջափակման երկու փորձերը և Հունաստանում Օտտոն I թագավորի գահակալման սկիզբը, հիմնականում ստույգ են շարադրված ու թվագրված են այն ժամանակով, երբ տեղի են ունեցել: Հերոսները մտածում, գրում ու խոսում են այն մասին, ինչի մասին այդ ժամանակ մարդիկ մտածում, գրում ու խոսում էին, ճիշտ է՝ ոչ այնպես, ինչպես այն ժամանակվա իրենց կրկնակներն ու կրկնակների ժամանակակիցները, այլ հաճախ իրենց լրիվ ուրիշ կերպ էին պահում: Ես անցյալի վերստեղծման խնդիր չեմ դրել, բայց գուցե խստապահանջ ընթերցողն ավելի ներողամիտ կվերաբերվի այստեղ շարադրված պատմությանը, եթե իմանա, որ այն ծավալվում է բնական բեմապատկերներում և դարաշրջանի իրական միջավայրում:

Օձը

Գրիգորի Մաքսիմովիչ Մոսցեպանովը *Պետական խորհրդի ռազմական գործերի դեպարտամենտի պետ և Նորին Մեծության անձնական գրասենյակի կառավարիչ կոմս* **Ալեքսեյ Անդրեևիչ Արակչեևին**

Նոյեմբեր, 1822 թ.

Առանձնակի կարևոր մի գաղտնիք ունեմ հայտնելու, որը մեծապես կարող է նպաստել կիսալուսնի հանդեպ խաչի հաղթանակին: Պատրաստ եմ ընդհանուր գծերով բացելու որևէ զինվորական կամ պետական անձի՝ ձերդ պայծառափայլության կողմից նրան լիազորելու դեպքում, իսկ լիովին՝ ձերդ պայծառափայլությանը կամ գերապայծառ տեր թագավոր կայսր Ալեքսանդր Պավլովիչին, համայն Ռուսիո ինքնակալ միապետին՝ մշտապես հոգածու իր ժողովուրդների բարօրությանը:

Պերմի նահանգապետ, բարոն Անտոն Կառլովիչ Կրիդները կոմս Արակչեևին

Մայիս, 1823 թ.

Պաշտոնաթող շտաբս-կապիտան Գրիգորի Մաքսիմով Մոսցեպանով, 36 տարեկան, հույն-ուղղափառ դավանանքի, Կիևի նահանգի ազնվականներից: Ամուրի: Կենում է Նիժնիտագիլյան գործարաններում՝ կոմս Ն. Ն. Դեմիդովի կալվածքում, որը ներկայումս դեսպանորդ է Ֆլորենցիայում, Տոսկանայի դքսի արքունիքում:

Հրետանային կորպուսն ավարտելուց հետո ծառայել է հրետանու կազմում, պաշտոնաթող է եղել ոտքի մատները կորցնելու հետևանքով:

Ուսուցչի պաշտոն է վարել Պետերբուրգի Օխտայի վառոդի գործարանին կից զինվորների երեխաների դպրոցում. 1820 թվականին կոմս Դեմիդովի կողմից հրավիրվել է նույն պաշտոնին Նիժնիտագիլյան գործարանների ուսումնարանում: Աշխատանքից ազատվել է կառավարիչ Ս. Մ. Սիգովի և գավառական ոստիկանապետ Ն. Ի. Պլատոնովի դեմ բանսարկությունների համար, որոնց տարբեր պաշտոնատար անձանց ուղղված խնդրագրերում սուտ մեղադրում էր կաշառակերության և այլ հանցանքների մեջ և նրանց ոչ հատուկ որակներ վերագրում: Գրում էր նաև, որ նրանք ծրագրում են սպանել իրեն: Հարբեցողության մեջ չի նկատվել, խոստովանության գնում է, հաղորդություն ընդունում է: Կենակցում է քաղքենուհի Նատալյա Բաժինայի հետ, որի տանն էլ բնակվում է:

Ինչ վերաբերում է նրա գաղտնիքին, ապա, չնայած, ամենայն հավանականությամբ, հորինված է բարձր անձանց ուշադրությունը գրավելու նպատակով, Վերինուրալյան Լեռնային գումարտակի պետ մայոր Չիխաչովին հանձնարարել եմ դրա մասին տեղեկանալ անձամբ Մոսցեպանովից: Նրա զեկուցագիրը ստանալուն պես՝ անհապաղ կհասցվի ձերդ պայծառափայլության գիտությանը:

Գրիգորի Մոսցեպանովը Մատվեյ եղբորը՝ Կազան

Հունիս, 1823 թ.

Ինձ համար չանհանգստանաս. ռոճիկից հետ գցած փողը դեռ չի վերջացել: Պետերբուրգում դրանով չես ապրի, բայց այստեղ մթերքը թանկ չէ, իսկ Նատալյան ձրի է պատրաստում: Տեսնում է, որ չեմ նեղացնում իր Ֆեդկային, գրել ու հաշվել եմ սովորեցնում: Շատ լավ տղա է: Սիրեց ինձ, չխոսենք արդեն մոր մասին: Առաջին իսկ պահանջով պառկում է հետս, թեկուզ օրը ցերեկով, ոչ թե հանգուցյալ կնոջս պես: Նրա առաջ, պատահում էր, շաբաթով չոքեչոք էի անում, մինչև մոտ թողներ: Ասենք, պառկելն էլ դագաղում պառկելու պես էր, դեռ լավ է, եթե լաց չէր լինում:

Պարապությունից սովորեցի արմտիքից ու ճիպոտներից շրջանակներ հյուսել: Առաջինը՝ իշխան Ալեքսանդր Իպսիլանտիի համար: Վերխո-

տուրիեում, հունական խանութում նրա վիմատիպն էի տեսել. հասակով մեկ, գեներալական համազգեստով, մի ձեռքը՝ ծայրատ: Ֆրանսիացիներն են պոկել Կուլմի մոտ: Դիմանկարը վաճառքի չէր, տերերը կախել էին պատից, բայց ձրի տվեցին՝ իրենց հերոսի հանդեպ իմ սիրո համար: Նախանցյալ տարի նա հույներին ապստամբության կոչ էր արել Օդեսայից և ինքն էլ հազար հետերիստներով թուրքերի վրա գնացել Վալախիայում. ջարդվել էր, փորձել Տրիեստով Մորեա, նույն ինքը՝ Պելեպոնես լողալ, բայց ավստրիացիք բանտ էին դրել: Այնտեղ քար էր նրա շուրջը, իսկ այստեղ շրջանակված է սոճու արմտիքով: Անփորձությանս պատճառով ծուռտիկ են հյուսված, բայց կարծում եմ՝ ինձնից չի նեղացել: Հետո, ձեռքս վարժելով, մի փորագրանկար էլ շրջանակեցի: Ուսումնարանի գրադարանի մի հատորյակում էր սոսնձած, պոկեցի՝ չամաչելով, որ կողոպտում եմ ինչ-որ մեկին,- մեկ է, ինձնից բացի՝ այնտեղ գիտական գրքեր կարդացող չկա: Աթենք քաղաքն է փորագրված՝ լուսավորության հայրենիքը. իրար գլխի կիտված տնակներ, վերևում՝ Ժայռուտ լեռը, գագաթին՝ առանց աշտարակների պարիսպ: Չասենք, թե ահեղ ամրոց է, բայց ժայռը բարձր է, զառիվեր, հեշտ չես բարձրանա: Ավելի վեր՝ Պարթենոնը, հաշմ կանգնած է այն ժամանակից, երբ ներսում պայթեց թուրքական վառոդը: Տանիքը՝ պոկված, սյուների կեսը չկա, քամին է խաղում մնացածների արանքում, իսկ ներսում թուրքերը մզկիթ են սարքել: Հիմա այն դատարկ է, բայց փոփոխամիտ է պատերազմի բախտավիճակը: Աստված չանի աթենացիք նորից լսեն՝ մոլլաներն ինչպես են կանչում Ակրոպոլիսում: Դրա համա՞ր անպարտելի Աթենաս Պալլասն իր վահանն ու նիզակը դրեց Սուրբ կույսի ոտքերի տակ:

Ասում են՝ տեր թագավորի փողը չի հերիքում սուլթանի հետ պատերազմելու համար. ինչ կա որ, ես գիտեմ՝ որտեղից վերցնել, ու գրել եմ ֆինանսների մինիստր կոմս Գուրիևին, որ ուրալյան բոլոր ոսկեհանքերը, ում էլ որ պատկանեն, թեկուզև հենց Դեմիդովին, պետք է հանձնել պետական կառավարման, իսկ գավառական ոստիկանապետերի փոխարեն, որոնք բոլորը գող են, նշանակել ինձպեսներին՝ վերքերի ու հաշմության պատճառով ծառայությունից ազատված սպաների: Բարձր Դռան հետ պատերազ-

մի դեպքում դա, ի թիվս իմ մտածած այլ նորամուծությունների, մեծապես կնպաստի կիսալուսնի հանդեպ խաչի հաղթանակին:

Ես դրա մասին սկսեցի մտածել, երբ Սորեան Իպսիլանտիի կոչով ապստամբեց, և Սուրբ կիրակի օրով սուլթան Մահմուդը հրամայեց հովվապետ Գրիգորիին կախել եկեղեցու դարպասից. հենց պատարագից տարան, ոսկեկար շուրջառը հագին: «Ռուսկի ինվալիդում» նրա նահատակության մասին կարդալու օրվանից ապրում եմ մտքով, որ պատերազմն անխուսափելի է, և ինձ՝ հաշմանդամիս, հարկ է պատրաստվել դրան: Հունական կրակը վառվեց իմ սրտում, բայց նույնիսկ նրա լույսի ներքո ճշմարիտ ուղին միանգամից չհայտնվեց մշուշից:

Սկզբում, չթաքցնեմ, սարսափելի էր ոտք դնել այդ ճանապարհին: Մինչև առաջին խնդրագիրը որոշեցի կրկին մտածել հետևանքների մասին ու գնացի լճափին զբոսնելու: Ես նրանցից եմ, ովքեր լավ են մտածում քայլելիս: Անցնում եմ ամբարտակի մոտով, ձեռքս տարա գրպանս, իսկ այնտեղ ինչ-որ կլոր, պինդ բան կա: Հանեմ՝ ընկույզ է, կարմիր թղթով փաթաթած: Սիդորկա Վանյուկովը՝ սիրելի աշակերտս էր, ի տրիտուր իր հանդեպ բարության, նվիրել այդ գանձը, դրել էի գրպանս ու մոռացել, իսկ սերթուկս ամառային է, աշունքից չհագած: Սիրտս միանգամից թեթևացավ, ասես հունական հողն էր կանչում իր պտուղով, որ չմոռանամ իր տառապանքները: Տանը ընկույզը դրեցի իմ առջև ու սկսեցի գրել արդեն առանց վախի:

Նահանգապետին՝ բարոն Կրիդներին, հայտնեցի, որ Նիժնիտագիլյան գործարանների կառավարիչ Սիգովը, գործակատար Ռյաբովի հետ, սպանել է շտեյգեր Պրոկոպի Սպիրինին, ինչը թաքցրել է լեռնային ոստիկանապետ Պլատոնովը: Սպիրինը Չերեմշանկա գետակի ափին անխառն ոսկու հանքակտոր էր գտել ու չէր հայտնել, ինչը, իհարկե, օրենքին դեմ է, բայց որ սպանե՞ս մարդուն, այդպիսի օրենք ոչ մեկը չունի, բացի շրջմոլիկներից ու ավազակներից: Իսկ նրան սառցահարել էին նկուղում, մանեկաբանալիով մատները ոլորել, գլուխը խփել պատերին, ինչից էլ մեռել էր, իսկ Պլատոնովի թղթերով դուրս էր գալիս, որ հարբած՝ խուզահորանն է ընկել:

Երկրորդ խնդրագիրն ուղարկեցի ներքին գործերի մինիստր կոմս Կոչուբեյին: Սևագիրը պահպանվել է, բառացի արտագրում եմ. «1806 թվակա-

նին կոմս Ն. Ն. Դեմիդովը, առաջնորդվելով մարդասիրությամբ, կարգադրել է Նիժնիտագիլյան գործարաններում մանկատուն բացել ապօրինածին երեխաների համար: Ինքը ներկայումս դեսպանորդ է Ֆլորենցիայում, ու քանզի կառավարիչ Սիգովը, սարսափելով իր խարդավանքների բացահայտումից, խոչընդոտում է իմ և նրա նամակագրությանը, հայտնաբերածս իրազեկում եմ ոչ թե նրան, այլ ձերդ գերազանցությանը:

Այնուհետև՝ ըստ կետերի.

«1. Մանկատան փոխարեն, ինչպիսին մտահղացել էր պարոն սեփականատերը, Սիգովը վեց արշին երկարությամբ ու դրանից էլ փոքր լայնությամբ մի խրճիթ է սարքել: Երեխաներին կցված հսկիչ կանայք կամ հարբած են, կամ էլ գնում են իրենց գործերով՝ սաներին թողնելով առանց հսկողության: Մանկիկներն օրորոց չունեն, օրորոցների փոխարեն ուռենու ճյուղերից հյուսած ցանցեր են, ինչպիսիք մուրացկաններն են ունենում: Երկուական, երեքական երեխա են դնում ամեն մեկի մեջ՝ խոտով լցված խսիրե պարկերի վրա: Մի՞թե այդպիսի հարուստ կալվածքում նրանց համար բարձեր չեն ճարվել, սպիտակեղեն, տակաշորեր և այլ անհրաժեշտ պարագաներ: Իսկ ի՜նչ աղաղակ է այնտեղ, ի՜նչ աղմուկ: Մեկը սկսում է լաց լինել, ու բոլորը միանում են: Հիվանդը պառկած է առողջի հետ, իրարից վարակվում ու մեռնում են: Որն էլ չի մեռնում, ընդմիշտ կորցնում է առողջությունը, որ կյանքի առաջնագույն բարիքն է: Սիգովն իր համար քարաշեն պալատներ է կառուցել, իսկ տարաբախտ փոքրիկների համար խնայել տասը արշին հողն ու տանիքի թիթեղը, չնայած ներկայիս թագավորող միապետը 1802 թվի մայիսի 16-ի մանիֆեստում հռչակել է. «Հավաստելու համար, թե սրտիս որքան մոտ են դաժան ճակատագրի զոհերը, նրանց առնում եմ իմ հատուկ հովանու տակ»:

2. Հակառակ 1715 թվի նոյեմբերի 12-ի գերագույն հրամանագրի, որով կարգադրվում է ամոթապարտ մանկանց առողջությունը պահպանելու համար ընտրել հմուտ կանանց, Սիգովի անհոգի հսկիչները կաթով եռջուր են լցնում նրանց կոկորդները, ինչից երեխաները մեռնում են: Ծայրահեղ քաղցը նրանց ստիպում է ուտիճներ փնտրել պատաճեղքերում և ագահաբար ուտել,- իսկ ի՞նչն է աշխարհում ավելի խղճալի, քան ամե-

նայն օգնությունից զուրկ ու անխուսափելի մահվան մատնված մանկիկը: Նրանք՝ Սիգովի և լեռնային ոստիկանապետ Պլատոնովի անփութության զոհերը, երկնքում կկանգնեն այն անմեղ քրիստոնեական մանկանց կողքին, որոնց Քիոսում մորթեցին Կարա-Ալիի ենիչերիները:

3. Կոմս Դեմիդովի տեղիս կալվածներում երկու սեռի 20000-ից ավելի մարդ է ապրում: Եթե այդ թվից ընդունենք տարեկան միջինը 40 ընկեցիկ, ապա 16 տարում, մանկատան հիմնումից հետո, 640-ից պակաս չպիտի լինեին: Գոնե կե՛սը մնար»:

Սրանից հետո ևս երկու կետ է գալիս, բայց այսքանն էլ բավական է իմ ուղղությունը հասկանալու համար: Բոլոր պաշտոնյաներին գրում եմ նույն ոճով, սլավոնական բառեր դնում, եթե տեղին է, սակայն ջանում եմ հնության չանցնել: Անցյալով բարեբարոյությունն է արտահայտվում, բայց դրա ավելցուկն ինքնահավանությունն է:

Ընդամենը քսանից ավելի խնդրագիր եմ ուղարկել. Պերմ՝ նահանգային պաշտոնավայրեր, և Պետերբուրգ՝ կառավարական: Փոստատուն էի հանձնում Վերխոտուրիեում, որ այստեղ չբռնեն, բայց ոչ մեկից պատասխան չստացա: Կոչուբեյը մանկատան մասին խնդրագիրը քննության էր ուղարկել վաճառական Դանիլովին՝ Պետերբուրգում դեմիդովյան գործարանների գլխավոր գրասենյակի կառավարչին, իսկ նա վաղուց է ատամ սրում վրաս, որ իր գլխից թռնելով՝ ճշմարտություն եմ փնտրում: Ուսումնարանից վռնդեցին, գրասենյակային բնակարանից դուրս արին: Ոյաբովը ունեցած-չունեցածս թափեց ուղիղ փողոց՝ ո՛չ ազնվական կոչումս հարգեց, ո՛չ պատվո դաշտում ստացած հաշմությունս:

Ես այստեղ բոլորին պատմում եմ, որ ոտքիս մատները ռումբն է տարել, և չնայած դրանք ճզմվել են հրետասայլի անիվի տակ, տարբերությունը մեծ չէ: Այսպես, թե այնպես, կորսվել են պատերազմում, իսկ արշավանքի ժամանակ, թե ճակատամարտում՝ կարևոր չէ: Ծները չեն կրծել, ոնց որ Սիգովի գյադա Վենկա Ոյաբովի անդամի կեսը, երբ փողոցում հարբած հանել էր պետքի համար ու մոռացել հետ գցել շալվարի մեջ, ու գիշերը քնել-մնացել էր ցանկապատի տակ: Իսկ որ շտեյգեր Սպիրինի մասին գրել էի, թե մեռած է, իսկ նա ողջ դուրս եկավ, իմ մեղքը չէ, այլ ինձ խաբածնե-

րի: Իսկ ինչ նրա տառապանքների մասին գրել էի բարոն Կրիդներին, լրիվ ճիշտ է, բացի մարդասպանությունից, բայց Սիգովի ու Ռյաբովի դահճությունը ներեցին, իսկ ինձ զրպարտիչ հռչակեցին:

Գլխավորը, ինչի մասին ուզում եմ գրել քեզ, անցած տարվա մայիսին է պատահել: Տարուց ավելի է անցել, բայց աչքիս առաջ այնքան կենդանի, այնքան պարզ է կանգնած, ասես առավոտյան արթնացել ու անկողնում պառկած՝ հիշում եմ, թե ինչ է եղել երեկ: Այդ ժամանակ Նատալյայի մոտ չէի ապրում, այլ գրասենյակի բնակարանում՝ Աղվեսասարի տակ, Լեռնային վաշտի զորանոցների դիմաց: Ընթրիքից հետո ծխամորճով նստել էի լուսամուտի տակ ու փեղկն էլ բացել էի, որ ծխահոտը սենյակները չընկնի: Տանել չեմ կարողանում: Լուսամուտի շրջանակներն այնտեղ ծխնիներով են, ոչ ինչպես Նատալյայի մոտ: Նատալյայի տանը դրանք, որ էժան նստի,- քաղքենիները մաքուր օդի օգտակարությունը չգիտեն,- այնպես են սարքած, որ ոչ միայն փեղկ չես բացի, անգամ օդանցք չկա: Նույնիսկ հիշում եմ՝ ինչ էր հագիս: Խալաթի վրայից ոչխարենու կացավեյկա էր, գլխիս՝ նրբաադիպակի թասակ, որ ճաղատս չմրսի: Անցած տարվա գարունն ուշացած էր, մինչև Համբարձման տոնն էլ դեռ տեղ-տեղ ձյուն կար: Լույսը բացվելուն պես քամին սկսում էր փչել ուղիղ հյուսիսից, ասես կողմնացույցով, բայց այդ երեկո, ինչպես լինում է մայրամուտից առաջ, հանդարտվել էր: Արևը դեռ չէր նստել, երբ լուսինը դուրս եկավ: Կոմս Նիկոլայ Նիկիտիչ Դեմիդովի կալվածքներին պահակություն անելու նրա հերթն էր: Պատուհանի տակ փոքրիկ պարտեզ էր՝ շամբուկով ու յասամանով: Նոր-նոր էին կանաչել, իսկ խաշամը տանտերը կիտուկ էր արել, որը այլևայլ աղբի հետ ցանկապատի տակ սպասում էր, թե երբ կվառեն: Ցերեկները հավերն էին այդտեղ քուջուջ անում, բայց երեկոյան նրանց փակում էին հավաբնում:

Հանկարծ լսում եմ՝ թփերը դողացին, ասես ոչ թե գարուն է, այլ աշուն, ու չոր տերևները թափվելուց առաջ խշշում են վերջին անգամ, ինչպես չորացած ամեն ինչ, որից հեռանում է կյանքը: Միևնույն ժամանակ՝ ժապավենաթել շղարշավարագույրն անշարժ էր, չնայած կարող է նույնիսկ քնած երեխայի շնչից թրթռալ: Դիմացի մայթին ջահել բարդիները նույնպես անշարժ էին: Ուրալում բարդի չի աճում, իսկ այսպիսին, որ մոմի նման

երկնուղեշ լինի ու արծաթած սաղարթով, առավել ևս: Դրանց տնկիները իմ ու քո հայրենակիցները կոմս Դեմիդովի կարգադրությամբ Սալոռոսիայից են բերել և տնկել գործարանի գրասենյակի ու Լեռնային վաշտի զորանոցների դիմաց: Քսան տարում մեծ ծառեր են դարձել: Մեկ-մեկ այցելում եմ, ականջ դնում՝ ինչպես են քչփչում մեր ծնողների, իմ և քո մանուկ տարիների, Դնեպրի մասին, թե ոնց է կիևյան բլուրների տակ փռված՝ արևի տակ շողում այնպես, որ փայլը երկինք է հասնում: Այդ բարդիները զգայուն են մթնոլորտի ամենափոքրիկ տատանումների հանդեպ, բայց այդ երեկո ոչ մի տերևիկ չէր դողում:

Շուտով թփերն էլ խաղաղվեցին: Նայեմ՝ լռության մեջ մի փոշեսյուն կանգնեց ցանկապատի տակ կիտած աղբից: Բարձրացավ, սկսեց փքվել՝ տեղում պտույտ գալով, չաղանալով, լցվելով իր իսկ պտույտով, ու գնա՛ց, գնա՛ց ներս քաշելու ամենը, որ կարող է քաշել:

Ծխամորճս հանգել էր: Ծնչելը մոռացած՝ նայում էի, թե ոնց է կատարյալ անհողմության մեջ իմ առաջ հառնում հերվա սաղարթի, հավի ծերտի հետ խառն հողի, փտած տերևի այդ սյունը, բայց ո՛չ մաշկով, ո՛չ նույնիսկ ակնակապիճներով ամենաթույլ սյուք անգամ չէի զգում: Ծուրջը ոչինչ չէր շարժվում այն ամենից, որ իր թեթևությամբ ենթակա է օդի տարերքին: Փողոցն ամայի էր, միայն ես էի տեսնում պարտեզի վրա հառնած հրաշագործ սյունը, որին մի անիմանալի ուժ էր պտտում: Գլուխը հասավ տանիքին, և այդ ժամանակ լույս ցայտեց ներսում, կլոր ճերմակ կրակը կենտրոնից շատրվանեց միանգամից բոլոր կողմերը, հորդեց՝ չնվազելով, քշված մի ուժով, որով ծովի ալիքները երբեմն ոչ թե քամին, այլ հենց ծովի խորխորատն է քշում: Այդ մշուշային կրակից մի անմարմին գլուխ հյուսվեց ու հայտնվեց դեմքը, փայլով փողփողացող, ինքը՝ հուր, երերուն, ինչպես արտացոլումը հոսող ջրի մեջ: Սկզբում կնոջ դեմք թվաց, հետո՝ պարմանու, մի վայրկյան անց՝ այրական: Մեկը ալիք-ալիք հորդում էր մյուսի ու երրորդի վրա, մինչև հասկացա, որ այդ ամենը գոյություն չունի, կա միայն հոգին պայծառացնող լույսը, որ արձակում են անմարմին մաքուր ոգիները: Մի քանի բառ արձակվեց նրանից այնպիսի արագությամբ, որ, եթե ենթակա լինեին բնության օրենքներին, այդ ժամանակամիջոցում ո՛չ լեզուն

կհասցներ արտաբերել, ո՛չ ականջը լսել: Ես հասկացա, որովհետև ոչ թե ականջիս հնչեցին, այլ ընկան ուղիղ սրտիս մեջ:

Թասակս հանելով՝ չոքեցի: Հողմասյունը ցրվել էր, միայն լույսն էր կանգնած օդում: Իսկ երբ նա էլ անհետացավ, նետվեցի սեղանի մոտ ու թղթին տվի այն ամենը, որ դուրս էի բերել սրտից: Այնպես էր զարկում, որ արյան հոսքը կարող էր քշել այնտեղ թափված բառերը:

Հետո վազեցի փոքր սրահ, մի շերեփ ջուր առա դույլից, կեսը խմեցի, մյուս կեսը լցրի գլխիս ու հիշեցի Սաղմոսարանից. «Նա քամիները հրեշտակներ դարձրեց իրեն, և կիզող հուրը՝ սպասավորներ»:

Կինս միշտ մեղադրում էր, թե քարսիրտ եմ: Գուցե այդպես էլ կար. բայց մի՞թե դա այդքան վատ է: Գուցե Տերը հենց այդպիսի սրտերում է դնում իր խոսքը, որ չմշուշվեն կենդանի ջերմությամբ:

Իհարկե, կարող էր և աչքիս երևալ: Ինքս երբեմն մտածում եմ, որ այդպիսի բան չի եղել, եղել է միայն իմ գլխում,- բայց եթե հայտնվեց, ուրեմն մեկն այնտեղ դրել էր, չէ՞: Եվ եթե զուտ մայրամուտի շողերի բեկում էր և արյան խշշոց՝ ականջներում, ինչո՞ւ գաղտնիքը, որ այսքան երկար հասկանալ չէի կարողանում, դրանից հետո բացվեց ինձ: Ո՞չ այն պատճառով, որ ստով պարուրված հոգիս մաքրվել էր վերին կանչի համար:

Փառք Աստծու, հասցրի մինչև պատերազմը, իսկ այն սարերի հետևում չէ: Միայն չեմ հասկանում, թե ինչու է հապաղում տեր թագավորը, քանի դեռ հարցը կարելի է լուծել փոքր արյունով: Մեզ պետք չէ նույնիսկ նավատորմ ուղարկել Մորեա և ափ իջնել, բավական է միայն տիրել Դունայի ամրոցներին ու Սուլինի գետաբերանին, գրավել Դունայով մինչև Չեռնովոդի գիծը, իսկ Տրոյական ամրապատնեշով՝ մինչև Քյուսթենջի, և սուլթանին այդ խիստ հարմար դիրքերից սպառնալով՝ ստիպել ճանաչելու Հունաստանի ազատությունն այն սահմաններում, որ հարմար կլինեն տեր թագավորին:

Նատալյա Բաժինան Մատվեյ Մոսցեպանովին

Հուլիս, 1823 թ.

Առավոտյան Գրիգորի Մաքսիմովիչը պետքի համար դուրս էր եկել բակ ու ցանկապատի տակ մի գրություն գտել: Ըստ երևույթին ցանկապատի վրայով էին գցել: Չտվեց կարդամ, ինքս գրպանից հանեցի ու կարդացի առանց թույլտվության: Գրված չէր՝ ումից է, բայց հեշտ էր հասկանալ: Մայր էին հայհոյում, սպառնում, որ թողնի զրպարտություններ գրելը, թե չէ կգտնվեն բարի մարդիկ, ծեծելով կսպանեն, մարմինն ածուխ կանեն, հետք չի մնա: Միայն թե Գրիգորի Մաքսիմովիչին չգրեք, որ կարդացել եմ: Ձեր անունից գրեք, որ իր խնդրագրերից բարի բան դուրս չի գա: Գրիգորի Մաքսիմովիչից շատ եմ լսել ձեր ու Գրիգորի Մաքսիմովիչի եղբայրական սիրո մասին ու մտածեցի, որ կլսի ձեզ: Չէ՞ որ իր համար էլ սարսափելի է: Այսօր գիշերվա կեսին վեր թռավ իր իսկ բղավոցից: Խռպում էր, հազում, մի կերպ շունչը տեղը բերեց: Ձեռքս դրեցի ճակատին՝ լրիվ քրտինքի մեջ կորած:

Ասում եմ. «Վատ երա՞զ էր»:

«Տեսա՞ր,- պատասխանում է,- ասես կրակից դուրս սողաց, ճանկերով բռնեց կոկորդս ու պատռեց մինչև փորս»:

«Ո՞վ»,- հարցնում եմ:

Չպատասխանեց:

Մայոր Բորիս Չիխաչով: Հիշատակարան

Հուլիս, 1823 թ.

Նիժնիտագիլյան գործարաններ հասնելուն պես ուղղվեցի գործարանային գրասենյակ: Կառավարիչ Սիգովը տեղում էր: Բացատրեցի, թե ինչ հարցով եմ ուղարկվել նահանգապետի՝ բարոն Կրիդների կողմից. խոստացավ, որ կաջակցի, բայց խնդրեց մի քիչ սպասել: Շտապ պիտի հոգար տիրոլյան կովերի նախրի հոգսը, որ Դեմիդովը գնել էր Սաքսոնիայում՝ տե-

ղական ցեղատեսակը բարելավելու նպատակով: Այդ կովերն իրենց ոտքով կտրել էին Եվրոպայի կեսն ու այստեղ հասել ինձնից մի քիչ առաջ:

Մինչ Սիգովը կենդանիներին կտեղավորեր բակերում, նայեցի նրա աշխատասենյակը: Սպարտական կահավորում, վարագույրներ չկան, պատերին նկարների փոխարեն՝ հնոցների ու մեխանիզմների ուրվանկարներ: Սեղանի գլխին՝ Նիկիտա Ակինֆեևիչ և Նիկոլայ Նիկիտիչ Դեմիդովների դիմանկարները, սեղանին՝ արույրե գրապարագաներ, երկու թանաքաման՝ կափարիչներին գործարանատիրոջ խորհրդանշանը: Նույնպիսի դեմիդովյան հին սամույր է դրոշմած գրիչների ու մատիտների գավաթին: Մատիտները միանման սրված են, գրչածայրերի եզրերը՝ հատած, իսկ ծայրերը՝ սրտիկաձև խուզած: Կահավորման ու հարդարանքի մեջ ասկետիկ կարգ կար, կամ, ավելի շուտ, պճնամոլ ասկետիզմ, որը չի անցնում ո՛չ խեղճության, ո՛չ խստության:

Սիգովը ծնունդով դեմիդովյան ճորտերից է, արհեստավոր է եղել թերթագլանման ֆաբրիկայում, ազատական ստացել իրբիտյան քաղքենության կցագրումով ու նշանակվել կառավարիչ: Ես նրա հետ գործ ունեցել էի և կարող եմ պնդել, որ ունակություններով ու եռանդով աչքի ընկնող կերպար է: Կառավարում է պողպատե աջով, բայց որպես իսկական ռուս մարդ՝ տասը մեղավորից իննին մտրակածեծ կանի, տասներորդին կների, օղի կխմի հետը, ու ժողովուրդը նրան դեռ կխճա էլ, որ էդպիսի շան գործի է՝ մարդկանց է չարչարում, հոգին կորցնում: Նա, իհարկե, միզանտրոպ է, մարդկանց ավելի բարձր չի դասում, քան Դեմիդովը՝ ուրալյան կովիկներին, սակայն չի երազում բարելավել մարդկային ցեղատեսակն ու հույսը չի դնում Տիրոլի և Սաքսոնիայի վրա, որտեղ գուցե գոյություն ունի կովային կատարելատիպը, բայց՝ ոչ մարդկային:

Ծուտով աշխատասենյակի տերը վերադարձավ:

«Հիմա նրան կբերեն,- ասաց՝ նկատի ունենալով Մոսցեպանովին,- բայց պետք է զգուշացնեմ՝ ձեզ համար դժվար կլինի: Այնքան էլ չի հարգում նարնջե եզրաքուղերով ու մերակներով պարոններին»:

Ինչպես հայտնի է, 1819 թվականին բոլոր նահանգները ի լրումն զինանշանների սեփական գույներն էին ստացել, և Պերմին շնորհվել էր

նարնջագույնը: Հասկացա, որ Մոսցեպանովը, մայրաքաղաքային ղեկավարության ուշադրությանն արժանանալու իր հավակնություններով, դժգոհ կլինի այն իմ շքազգեստի վրա տեսնելուց:

«Ու նաև,- հավելեց Սիգովը:- Եթե մի բան սրտով չի, այնպիսի նողկալի բառերով է հայհոյում, որ լսած չկամ: Ձեր շահերից է բխում դրանց ուշադրություն չդարձնելը»:

«Կջանամ առիթ չտալ»,- պատասխանեցի ես:

Ու հենց այդ պահին էլ նա հայտնվեց: Ձեռքին՝ ձեռնափայտ, քայլելիս մի քիչ ընկնում է աջ ոտքին: Թղթերով 36 տարեկան է, բայց ավելի մեծ է երևում: Բավական բարձրահասակ, կորամեջք, լայն, ներս ընկած կրծքով: Գագաթը՝ ճաղատ, շուրջը վուշի գույն մազերն օձած են, հոտից դատելով՝ յուղով: Ծրթունքները հաստ են նեգրի շրթունքների պես, իսկ մանր աչքերը՝ կապույտ: Այդպիսիք ունենում են մաքուր աղջնակներն ու անառակ տղեկները: Կոկիկ սափրած այտերն ու ճակատին փոփոլացրած քյանքուլը վկայում էին, որ տնից դուրս գալուց առաջ որոշ ժամանակ է անցկացրել հայելու առջև, հետևաբար ամենայն լրջությամբ է վերաբերվում ինձ հետ հանդիպմանը: Դա թույլ էր տալիս հուսալ, որ առաքելությունս բարեհաջող ելք կունենա:

Սիգովը մեզ ներկայացրեց իրար ու դուրս եկավ՝ ինձ մենակ թողնելով Մոսցեպանովի հետ: Ես առանց ավելորդ երկարաբանության նրան հայտարարեցի, որ եկել եմ Պերմի նահանգապետի՝ բարոն Կրիդների կողմից, որն ինձ հանձնարարել է պարզել, թե այդ ինչ գաղտնիք էր ուզում բացել նորին պայծառափայլություն կոմս Արակչեևին:

Մոսցեպանովը խնդրեց ներկայացնել Արակչեևի հանձնարարական նամակն ու համոզվելով, որ չունեմ, ասաց, որ իր գաղտնիքը կբացի միայն նրան, ով կգա նորին պայծառափայլության գրավոր լիազորություններով: Համառ փորձերիս՝ համոզելու, որ բարոն Կրիդները Արակչեևից այդ լիազորությունները ստացել ու բանավոր ինձ է փոխանցել, հաջողություն չունեցան: Նա իրենն էր պնդում:

«Լա՛վ,- հաշտվեցի ես:- Գրավոր շարադրեք ձեր գործը, կնքեք ձեր կնիքով ու ստացականով հանձնեք ինձ: Սուրհանդակի միջոցով, պետա-

կան կնիքով ծրարում կուղարկեմ Պերմ»:

Բայց նա դրան էլ չհամաձայնեց՝ ծիծաղելի պատճառաբանությամբ, թե ճանապարհին կնիքը կկոտրեն ու կկարդան իր նամակը:

Ասացի, որ սուրհանդակները պաշտոնական նամակները չեն բացում, բայց նա այդտեղ էլ պատրվակ գտավ. իբր նախ պիտի իր աչքով հավաստիանա պարոն բարոն Կրիդների՝ կոմս Արակչեևից ստացած լիազորություններին, հնարավոր է, որ նա այդպիսիք չունի:

Հանձն առա նրան հասցնել Պերմ, որպեսզի համոզվի, որ նահանգապետն ունի այդպիսիք: Չցանկացավ մեկնել՝ առանց պատճառները բացատրելու, փոխարենը պատրաստակամություն հայտնեց պետության հաշվին ինձ հետ մեկնել Պետերբուրգ՝ կոմս Արակչեևի մոտ:

Ասացի, որ ուրախությամբ կտանեի, ինքս տասը տարի չեմ եղել Պետերբուրգում, բայց այդպիսի հրաման չունեմ: Նա կարծես ըմբռնումով ընդունեց փաստարկները: Լարվածությունս թուլացավ, ու կրկին սկսեցի համոզել, որ բացի իր գաղտնիքը: Հանկարծ նա ձեռնափայտն ուժգին զարկեց հատակին ու հայհոյեց, ըստ երևույթին այն նույն բառերով, որոնց մասին զգուշացրել էր Սիգովը: Ես երեխա չեմ, զինվորներից ինչ ասես լսել եմ, բայց այդպիսի բառեր՝ երբեք: Թողած տպավորությամբ դրանք գերազանցում էին ցանկացած հայհոյահաչի:

Մոսցեպանովի դեմքին հայտնված զայրույթի մեջ ակնհայտորեն խանգարված բանականության հետքեր կային, և դա հաստատեց կասկածներս, որ նրա գաղտնիքը կոտրած կոպեկ չարժի:

Սիգովի խորհրդին հետևելով՝ անհետևանք թողեցի այդ արարքը, բայց խնդրեցի գրավոր հաստատել, որ հրաժարվում է ինձ հետ խոսել իր գործի մասին, և նշել հրաժարվելու պատճառը: Նա թուղթ ու գրիչ վերցրեց ու գրեց. «Մայոր Չիխաչովի հետ իմ գործի մասին խոսելուց հրաժարվում եմ, քանզի նա կոմս Արակչեևից լիազորություններ չի ներկայացրել»:

Բացեց սեղանին դրած դրոշմարկղիկը, մեջը խոթեց կանաչավուն քարով կնքամատանին, որ վաղուց էի նկատել մատին, ու սեղմեց թղթին: Թերթին դրոշմվեց ձվածիրը՝ դրա մեջ առնված նրա անվան սկզբնատառերով՝ Գ և Մ: Տառերը բաժանված էին կետով, բայց երկրորդ կետը, չգիտես

ինչու, բացակայում էր: Կամ ջնջվել էր, կամ չէր էլ եղել:

Տեսնելով, որ նա հանդարտվեց, առաջարկեցի գոնե այլաբանորեն ակնարկել, թե ինչին է վերաբերում գաղտնիքը: Իմ այդ խնդրանքն էլ կատարվեց: Մոսցեպանովն ինչ-որ բան ավելացրեց գրության տակ ու թուղթը կրկին տվեց ինձ:

«Առասպելական Զմեյ Գորինիչը,- աճող զարմանքով կարդացի ես,- քթանցքերից ծուխ էր արձակում, երախից՝ կրակ, իսկ սպանվելուց հետո սև արյուն հորդեց ներսից, որը հողը չէր ընդունում: Սույն գաղտնիքն ունեմ բացելու նորին կայսերական մեծությանը՝ նորին պայծառափայլություն կոմս Արակչեևի միջոցով»:

Առողջ գիտակցությամբ այսպիսի բան չես գրի:

Պարզ էր, որ դայակի հեքիաթների հրաշունչ օձը այլաբանություն է, բայց ոչ մի կերպ չէի կարողանում կապել ո՛չ խաչի ու կիսալուսնի, ո՛չ էլ, առավել ևս, երկրորդի հանդեպ առաջինի հաղթանակի հետ:

«Հրաշալի է»,- գլխով արեցի ես՝ ձևացնելով, թե գրվածը հարցեր չի հարուցում, բայց Մոսցեպանովը դրան չհավատաց:

«Վերաբերում է մեր օգնությանը հույներին»,- իմ անհասկացողությանը զիջում արեց նա, բայց հետագա պարզաբանումներից խուսափեց:

Կես րոպեի չափ լուռ իրար էինք նայում: Նրան առաջինը ծանձրացրեց այդ պահմտոցին, մոտեցավ բաց պատուհանին և փողոցում կանգնած ինչ-որ մեկին ձայն տվեց. «Տո՛ւն գնա: Ծուտով կգամ»:

Մյուս պատուհանից նայելով՝ ներքևում տեսա մի ջահել կնոջ՝ թաթարական աչքերով ու երկար քթով: Այլ մեկը չէր կարող լինել, բացի Մոսցեպանովի կենակցուհուց՝ Նատալյա Բաժինայից: Անունը գիտեի Մոսցեպանովի՝ Արակչեևին ուղղված նամակի պատճենից, որ տվել էր Կրիդները: Կինը գրավիչ չթվաց, բայց նրա պոռթկուն մղումն այդ ճաղատ բանսարկուին ընդառաջ՝ բացառիկ նրբագեղ էր: Նազանքն անհնար է արտահայտել բառերով: Այդ հատկությունը,- կարծես թե միակը մեր բնական հատկություններից,- կապված է ինչպես մարմնի, այնպես էլ հոգու հետ, մտնում է կանացի հմայքի բաղադրակազմի մեջ և հաճախ հենց միայն դրան էլ հանգում: Նայելով պատուհանի տակ կանգնած երկարաքիթ կնոջը՝ մտա-

ծեցի, որ եթե տղամարդու մասին իրոք պետք է դատել նրան սիրող կնոջով, ապա Մոսցեպանովը այնքան էլ խելագար չէ, որքան ուզում է թվալ:

Ես մեր խոսակցությունն ավարտված էի համարում, բայց նա, սպասելով, մինչև կանչեմ Սիգովին, նրա ներկայությամբ ինձ բողոքեց, որ Սիգովը խոչընդոտում է կոմս Դեմիդովի հետ իր նամակագրությանը. իբր Պետերբուրգում, դեմիդովյան գործարանների գլխավոր գրասենյակում, Ֆլորենցիա՝ Դեմիդովին ուղղված իր նամակները բացում ու հասցեատիրոջը չեն ուղարկում: Իբր այդպես են վարվել ուսումնարանի պանսիոնում կատարվող անկարգությունների մասին իր նամակի հետ. այնտեղ շիլան եփում են հին պղնձե կաթսայում, շիլան արջասպից կապտում է, իսկ եթե որևէ աշակերտ սխալ է գրում կամ գծում և ուզենա ջնջել, սխալներն ուղղելու համար ուրիշ ուսումնարաններում գումէլաստիկ կա, իսկ այստեղ հացի պատառով են ջնջում: Պատահում է՝ հացն ուտում են, և արդեն ոչնչով չես ջնջի: Ձմռանը շատերը դրսի հագուստ չունեն, ո՛չ ականջակալներով գլխարկ, ո՛չ թաղիքե կաճյակներ, ո՛չ վզնոց թաշկինակներ: Դրանից վնաս է գալիս առողջությանը, ու կորցնում են սովորելու ցանկությունը:

Սիգովը լսում էր անխռով հանգստությամբ: Կարծում եմ, որ առարկելիք ուներ ու նախկինում առարկել էր, բայց արդեն ձանձրացել էր: Իսկ այդ ընթացքում Մոսցեպանովն ուսումնարանից անցավ ապօրինի երեխաների մանկատանը, որտեղ նրանք իբր հարյուրներով են մեռնում սովից ու վատ խնամքից: Սկսեց թվեր շաղ տալ, ինչ-որ բան էր բազմապատկում ինչ-որ բանով, գումարում, հանում, արդյունքում ստացվեց, որ ներկա պահին սաները պիտի այսքան լինեին, իսկ եթե այդքան չկան, ուրեմն տարբերությունը մեռածներն են:

Այդ ճառի ընթացքում աշխատասենյակ մտավ նախորդ այցերից ինձ ծանոթ գործակատար Ռյաբովը ու կանգնեց դռան մոտ: Ըստ երևույթին սպասում էր, թե Սիգովը երբ կհրամայի միջանցք շպրտել աղմկարարին:

Նրա հայտնվելուն պես Մոսցեպանովը քթանցքերով աղմուկով ներս քաշեց օդը, կնճռոտեց ճակատը ու քիթը մատներով սեղմելով՝ խոնթխոնթաց. «Թո՛ւ: Կարգադրեք դուրս կորչի: Սապոգներից գարշահոտ է փչում»:

«Ինչի՞ հոտ»,- վիրավորվեց Ռյաբովը:

«Նրա,- բացատրեց Մոսցեպանովը,- որ քեզնից թափում ես քո էնի-քով, որ շները կես են գցել: Ու սապոգներից դենը չի թափվում»:

Ես վերջնականապես դադարեցի որևէ բան հասկանալ:

Ոյաբովը հարձակվեց վիրավորողի վրա, բայց Սիգովը, ինձ ցուցադ-ելով իր համբերատարությունը, նրան դուրս հանեց աշխատասենյակից: Մոսցեպանովը հաղթական նայեց նրա հետևից, ապա վերադարձավ ըն-կեցիկներին՝ նրանց համեմատելով Քիոսի հույն մանուկների հետ, որոնց կոտորել էին Կարա-Ալիի ենիչերիները, իսկ Սիգովին՝ անձամբ չարագործ փաշայի հետ, և հասավ այնտեղ, որ նրան պատվիրում էր օրինակ վերցնել ոչ այլ ոքից, եթե ոչ Նապոլեոն Բոնապարտից. նա իբր Մոսկվայի հրդեհի ժամանակ հրամայել էր զինվորական պահպանություն կարգել մանկա-տան մոտ՝ կրակից ու կողոպուտից պաշտպանելու համար:

«Օ՛: Ահա թե ով է ձեզ մարդասիրության օրինակ ծառայում»,- չներեց Սիգովը:

«Դու ինձ Բոնապարտին երեսով չտա՛ս,- եռաց Մոսցեպանովը:- Ես նրա հետ պատվո դաշտում եմ հանդիպել, նրանից նշան ունեմ վրաս»:

Նա առաջ պարզեց մատնազուրկ ոտքն ու հայտարարեց, որ այդպես կվարվի Բարձրյալի գահի առաջ՝ Ահեղ դատաստանի օրը, և հրեշտակները իր ձեռքը կտան իր խնդրագրերը՝ որպես արդարացուցիչ փաստաթղթեր:

Սիգովը թաքուն աչքով արեց ինձ՝ կոչելով տեղի ունեցողը գնահատել որպես բալագան: Չէի կարող չհամաձայնել: Ես էլ այն տպավորությունն էի ստացել, որ Մոսցեպանովը գիժ է ձևանում իր մասին կեղծ տպավորու-թյուն ստեղծելու համար, բայց վերջին արտահայտությունն այլ կերպ հնչեց և ինձ ստիպեց նրան վերաբերվել որպես մարդու, որն իսկապես ինչ-որ կարևոր բան գիտի և, որ ամենավտանգավորն է, պատրաստ է ամեն ինչի:

«Օձը չի ուզում թողնել որսը, որով պարարտանում է»,- ծանր հառա-չեց նա, ինչից կրծքի տակ ինչ-որ բան սուլեց ու խռխռաց: Երևի վատ թու-թուն էր ծխում:

Հանելուկային օձի կրկնակի հիշատակումը բերեց այն մտքին, որ դրա տակ ինչ-որ վնասակար մարդ էր հասկացվում, եթե արյունը սև էր, որը Մոսցեպանովի կարծիքով արժանի էր մահվան: Կարծես թե նրան թուրքերի բարեկամն ու հույների թշնամին էր համարում:

Գրիգորի Մոսցեպանովը Մատվեյ Մոսցեպանովին

Հուլիս, 1823 թ.

Երեկ երկար խոսակցություն ունեցա Պետերբուրգից ժամանած լեռնային մայոր Չիխաչովի հետ: Նահանգապետը՝ բարոն Կրիդները, նրան ուղարկել է այստեղ՝ իմանալու իմ գաղտնիքը, բայց Պերմի նահանգում այն ոչ մեկին բացել չեմ պատրաստվում, այլապես օգուտ չի լինի ո՛չ ինձ, ո՛չ հույներին: Այն ժամանակից, որ դրա մասին գրեցի Արակչեևին, ութ ամիս է անցել, և Աստված գիտի դեռ ինչքան կանցնի, մինչև նրանք իրար գան: Ռուսական պետության նահանգները շատ են, իսկ մայրաքաղաքային գրասենյակների միջանցքները՝ երկար. մինչև մեկից հասցնեն մյուսը, թուղթը կփտի:

Որոշել եմ ավելի նուրբ գործել: Չիխաչովը խնդրեց ակնարկով բացատրել գործս, ու ես նրան մի այնպիսի բան գրեցի, որ աչքերը ճակատը թռան: Իհարկե, դա կհասցնի Կրիդներին, Կրիդների միջոցով կհասնի Արակչեևին, իսկ նա բացատրությունների համար ինձ կպահանջի Պետերբուրգ, ինչպես ցանկացած խելամիտ մարդ կվարվեր նրա տեղում:

Իմ վիճակում միայն հետագա հանդգնությունը կարող է փրկել: Սիգովին ու Պլատոնովին լավ գիտեմ. գայլ են, մարդ չեն: Եթե գնում ես նրանց դեմ, առանց վախի պիտի գնաս: Հերիք է նույնիսկ ոչ թե հաշտվեմ, այլ կես քայլ նահանջեմ, վերջս կգա: Կզգան թուլությունը, ու այդ ժամանակ դրանց ոչնչով չես կանգնեցնի: Այստեղ երկաթ շատ կա, կհերիքի մի մութ անկյունում գլխիս հասցնելու համար:

Դեռ ջահել եմ, ինչքան կարելի է կուկու կանչել էս խուլ անկյունում, հաշվել ուրիշի տարիները, երբ քոնոնք անցնում են: Իմ գաղտնիքը հենց իմ մեջ է, ոչ ոք նրան չի տիրի, մինչև ինքս չբացեմ: Ամենը, որ կարող էի, այստեղ արել եմ, դրանից ավելի անելիք Նիժնի Տագիլի գործարաններում չունեմ: Աստված տա, թռչող օձն ինձ կհասցնի Պետերբուրգ, իսկ Նատալյային ու Ֆեդենկային հետո կբերեմ: Արդեն հինգերորդ ամիսն եմ կենում նրա մոտ, այդ ընթացքում հասկացել ու տեսնում եմ, որ ավելի լավ կին ոչ մի տեղ չեմ գտնի: Այդպիսի ծաղիկներ հարյուր տարին մեկ են ծաղկում աղբակույտից, բայց դրանք պետք է տեղափոխել լավ հողի մեջ ու պաշտ-

պանել հողմերից, թե չէ կթոշնեն՝ չհասցնելով մեզ ուրախացնել իրենց գեղեցկությամբ ու բույրով: Որպես ազնվական՝ ես ազատ եմ ապրելու որտեղ խելքս փչի, բայց իմ փողով գնալ Պետերբուրգ, բնակարան վարձել, նոր հագուստ առնել, որ դրանով ընդունեն պաշտոնական վայրերում, մեր թանկ ժամանակներում դրան ո՛չ իմ փողը կհերիքի, ո՛չ քոնը: Համ էլ, մինչև ե՞րբ եմ քեզնից պարտք անելու: Խիղճն էլ լավ բան է, չնայած և եղբայրներ ենք:

Այստեղ ապրելու փող դեռ կա, բայց նայում եմ առաջ ու տեսնում, որ այստեղ էլ մի օր կվերջանա: Եվ այդ դեպքում ի՞նչ: Աշնանը փորձեցի նավթից յուղ քաշել՝ կանթեղների համար, ու լավ էլ գնում էր, առաջին ամիսը 12 ռուբլու ծախեցի, իսկ երկրորդ ամսին՝ համարյա ոչինչ: Սիգովը նամակ էր ուղարկել բոլոր եկեղեցիներն ու վանքերը, որ իմ յուղը չվերցնեն:

Ես նրա դեմ դուրս եկել ու ճշմարտություն էի փնտրում ոչ թե զուտ ճշմարտության, այլ մահկանացուներից թաքուն գաղտնիքը գտնելու համար հոգիս մաքրելու: Դրա մասին միայն դու գիտես, բայց ճշմարտությունն այնպիսի բան է, որ փնտրողը չի կարող անտարբեր լինել նրա հանդեպ: Թող որ չգտա, Սիգովն ու Պլատոնովը պատժված չեն, բայց իմ խնդրագրերից վախենալով՝ երկուսն էլ ավելի զուսպ են դարձել: Մարդիկ տեսան, որ եթե համարձակ մերկացնես պետերի չարաշահումները, վերադասի առաջ մերկացվելու վախից դրանք կամաց-կամաց արմատախիլ կլինեն:

Կիևում, ասենք՝ թեկուզ Պետերբուրգում ապրած մարդու համար Նիժնիտագիլյան գործարանները երկրային դժոխք են: Սատանան փորձանքի մեջ գցեց, որ հավատամ դեմիդովյան խոստումներին: Սիրենի պես գայթակղեց այս թավուտներն, ու դու չմտածեցիր ականջներս խցանել մոմով: Հիմա աղոթիր Գրիշա եղբորդ համար, որ ամեն ինչ կարգի ընկնի: Նա հավատում է, որ շատ շուտով կկանգնի կոմս Արակչեևի կամ նույնիսկ հենց իր՝ թագավորի առաջ: Հունական կրակն ավելի ու ավելի է տարածվում ռուսական սրտերում, ու թագավորն էլ ռուս մարդ է:

Մարգարեություն

Իգնատի Ելովսկի: Ալեքսանդր I կայսեր կամեր-քարտուղարի մատյանը

Օգոստոս, 1823 թ.

Մեր փոքրիկ ցարսկոսելսկյան հասարակությունը քննարկում է վերջին նորությունը. մեզ մոտ կարող է ևս մեկ պալատական բժիշկ հայտնվել, ոմն Կոնստանտին Կոստանդիս, հույն: Ինչ-որ մեկը նրան երաշխավորել է տեր թագավորին որպես, չնայած տարիքին, փորձառու ախտորոշող ու դեղագետ:

Հույն հացահատիկավաճառի ընտանիքից է, ավարտել է Տագանռոգի գիմնազիան, բժշկություն է ուսումնասիրել Փարիզում ու Կոստանդնուպոլսում. այս քաղաքում՝ ժառանգական հրեա-բժիշկների մոտ, որոնց նախնիները բուժում էին բասիլևսներին ու ստրատեգոսներին, իսկ նրանցից անցան սուլթաններին ու փաշաներին: Պատրիարք Գրիգորիի զարհուրելի մահապատժից հետո, երբ Ստամբուլի խաժամուժը սկսեց կոտորել հույն-ֆանարիոտներին, Կոստանդիսը թաքնվել էր ֆրանսիական նավում, ապրել Ֆրանսիայում, բայց որոշել էր վերադառնալ Ռուսաստան: Մայրը Դոնի կազակուհի է, ռուսերենը մանկուց է նրա մայրենի լեզուն: Լեյբ-վիրաբույժ Տարասովին կարգադրված է փորձել և օգնական ընդունել, եթե բռնի քննությունը: Տեր թագավորն ուրախ է ցույց տալու, որ մորեական ապստամբների հանդեպ իր վերաբերմունքը չի տարածվում ընդհանրապես հույների վրա:

Նրա դիրքորոշումը հունական հարցում անփոփոխ է: Ես դրանում համոզվեցի նրա և Աստվածաշնչյան ընկերության անդամ, բոստոնյան քվակեր ու աբոլիցիոնիստ Թոմաս Շիլլիտոուի զրույցի ժամանակ: Նա մեզ

մոտ է ժամանել Լոնդոնից, որտեղ հանրության սրտերն էր բորբոքում շաքարի ու ծխախոտի պլանտացիաներում անմարդկային աշխատանքից տառապող թշվառ նեգրերի մասին դասախոսություններով ու նվիրատվություններ հավաքում նրանց փրկագնելու համար: Մեր տիկնայք իշխանուհի Գոլիցինայի գլխավորությամբ քարոզչին ընդունեցին ինչպես Մովսեսը՝ Աստվածատուր օրենքը, ու պոկ չեն գալիս նրանից: Քորոցների համար ամուսիններից խնդրած, բայց սև ստրուկների ազատագրման աստվածահաճո գործին զոհաբերած փողերը նրանց թույլ են տալիս մաքուր խղճով մազերից բռնած գետնին քարշ տալ կալվածատան աղջիկներին: Գոլիցինան Շիլլիտոուի համար ոչ միայն թագավորի մոտ մասնավոր ընդունելության, այլև նրա ներկայությամբ գլխարկը չհանելու թույլտվության է հասել: Քվակերները գլխարկը միայն աղոթելիս են հանում, Աստծո առաջ:

Թարգմանիչ պետք չէր, տեր թագավորը հրաշալի տիրապետում է անգլերենին: Բազմիցս հանդես է եկել ստրկության դեմ և մինչև վերջերս հովանավորում էր Աստվածաշնչյան ընկերությանը. Շիլլիտոուն հիմքեր ուներ ֆինանսական աջակցություն ակնկալելու, բայց պետք չէր իրեն թագավորի շրջապատում այդպես տնավարի պահել: Իսկ նա անպատշաճ մտերմավարությամբ հայտարարեց, թե իրենց ընդհանուր նպատակը Ավետարանի հաղթանակն է ժողովուրդների կյանքում: Տեր թագավորը նրբանկատորեն լռեց, բայց ես կրկին նկատեցի, թե ինչպիսի հմտությամբ է տիրապետում միայն աչքերով ժպտալուն՝ ընտրյալների այդ արվեստին:

Կիսաշրջված էր նստել դեպի հյուրը՝ աջ ականջը դարձնելով նրան: Ձախը, որ պատանության տարիներին վնասվել էր հրետանու որոտից, համարյա չի լսում: Ես տեսնում էի նրա կիսադեմը՝ պարզորոշ, ասես քարին քանդակած: Ուղիղ նայելիս դեմքն այդպիսի հստակ գծեր չունի ու քիչ հոգս չի պատճառում դիմանկարիչներին: Դժվար է իրար նման երկու պատկեր գտնել: Չար լեզուներն ասում են, որ նա Պրոթեոսն է. հեշտությամբ փոխում է համոզմունքները, ու դրա հետ մեկտեղ՝ արտաքինը, սակայն դիմագծերի փոփոխականությունը վկայում է ոչ թե ոգու անկայունության, այլ այն մասին, որ դրանք ձևավորող կամքը չի կարողացել սեղմել մինչև այն սահմանները, որ, հասարակության կարծիքով, վայել են տղա-

մարդկանց: Փափուկ գծեր ունենալ մեզանում թույլատրվում է միայն երեխաներին ու հրեշտակներին:

Թեյ մատուցեցին՝ բիսկվիթով ու մի ափսե ընտրագույն վայրի մորիով: Տեր թագավորն ինքն է աճեցնում իր ջերմոցում, ու պատահում է, որ պահքի օրերին միայն դրանով էլ սնվում է: Բիսկվիթն ու մորին արդեն բավական էին աղանդերի համար, բայց սեղանին շաքարաման էլ կար: Տեսնելով՝ Շիլլիտոուն ափը կտրուկ դրեց իր ու դրա միջև՝ հայտարարելով, որ շաքարը ստրուկների աշխատանքի պտուղն է, և ինքը շաքար չի օգտագործում:

Ծիծաղս եկավ: Իմ լաքեյը, ցանկանալով գոնե մի բանով տարբերվել իր նմաններից, նույն հպարտությամբ հայտարարում է. «Ես տառեխ չեմ ուտում, տե՛ր իմ: Այ էդպիսի մարդ եմ ես»:

Խոսք բացվեց Աստվածաշնչյան ընկերության մասին, որը բաժանմունքներ ուներ մեր շատ նահանգներում: Նահանգապետերը գիտեին՝ ում հովանու տակ է այն ստեղծվել, միահամուռ անդամագրվել էին, բայց անցած տարվանից թագավորը սառել էր ընկերության հանդեպ: Պատճառն այն էր, որ այն Լոնդոնի շահերին էր ծառայում: Անգլիացիները գիտեն իրենց օգտին դարձնել նույնիսկ այնպիսի աստվածահաճո գործը, ինչպիսին Ավետարանի թարգմանությունն է հնագույն լեզուներից ժամանակակից լեզուների:

Թագավորի հայացքների փոփոխությանը Շիլլիտոուն տեղյակ չէր ու ոգևորությամբ հայտնեց, որ Աստվածաշնչյան ընկերության անդամ դոկտոր Պինկերտոնը հասարակ ժողովրդական հունարենով տասը հազար Ավետարան է հասցրել Մորեա՝ վերջերս թուրքերից մաքրված Ասթրոս:

«Որպեսզի Ավետարանը հաղթանակ տանի Ղուրանի դեմ,- արտաբերեց նա այնպիսի տոնով, ասես խոսքը երկու գրական դպրոցների մրցակցության մասին էր,- հույները պետք է հասկանան, թե այնտեղ ինչ է գրված: Թարգմանությունը կենդանի ժողովրդական լեզվի նրանց կօգնի ազատագրվել»:

Ես փախցրի հայացքս, որ խեղճ քվակերը աչքերիս մեջ չկարդա իր դատավճիռը:

«Ազատությունը,- սառը պատասխանեց թագավորը,- հիմա ավելի հե-

ռու է հույներից, քան ապստամբության սկզբում: Նրանց առաջնորդները գժտվել են իրար հետ, մի բռնակալության փոխարեն նրանք ստացել են միանգամից մի քանիսը»:

«Բայց և այնպես, դա ավելի լավ է, քան Քիոսի կոտորածը»,- առարկեց Շիլլիտոուն՝ դեռևս չգիտակցելով իր սխալը:

«Մինչ Կարա-Ալին իր ենիչերիներով ափ կիջներ Քիոսում,- հակադարձեց թագավորը,- Սամոսից այնտեղ էին լողացել հույներն ու կոտորել բոլոր մահմեդականներին, ներառյալ երեխաներին»:

«Նրանք վրեժ էին լուծում հովվապետ Գրիգորիի համար, Ստամբուլի հույների սպանության համար»,- նրանց արդարացրեց Շիլլիտոուն:

«Իսկ Կարա-Ալին՝ մորեական թուրքերի,- այդ գրոհն էլ հետ մղեց թագավորը:- Երբ Իպսիլանտին ապստամբության կոչ արեց Օդեսայից, խռովությունը Մորեայում հենց դրանից էլ սկսվեց, որ հարևան հույները գլխովին կոտորեցին նրանց: Այդպիսի պատերազմներում մեկի հանցանքների համար վճարում են մյուսները»:

Հիմա էլ նույնն էր կատարվում. հույների պատճառով տուժեցին նեգրերը: Շիլլիտոուն ստիպված էր բավարարվել նրանով, որ աբոլիցիոնիստների համար բաց է թագավորի սիրտը, բայց ոչ քսակը: Սև լայնեզր գլխարկն անհետացավ անաղմուկ փակված դռների հետևում: Եթե ֆլիգել-համիարզն ավելի երկար նայեր նրան, մահուդը կսկսեր ծխալ հայացքի տակ: Դրախտային այգուց Ադամին ու Եվային վտարող հրավառ սրով հրեշտակապետը պակաս ցասումով էր նայում նրանց:

Զբոսայգուն նայող պատուհանը կրնկի վրա բաց էր, կանաչի մեջ ճերմակին էին տալիս աստվածների և աստվածուհիների հելլենական անդրիները, որոնց անունները դատարկ հնչյուն են ներկայիս Հունաստանի բեղավոր ավազակների համար: Մոտիկ կանացի ծիծաղ էր հնչում: Անտեսանելի քրքջանները, արծաթաջուրը բերանում, հույս ունեին, որ թագավորը լսում է իրենց ու շատ էին ջանում, բայց վերջին կես տարին կանայք նրա համար ընդամենը հաճելի զրուցակիցներ էին: Ոչ ոք չի կարող պարծենալ, թե իրեն նրա մասին հայտնի է մի այնպիսի բան, որ չիմանային մյուսները:

Երեկոյան նա միայնակ զբոսնում էր այգում: Ելիզավետա Ալեքսեև-

նան սովորաբար այդ նույն ժամանակ է զբոսնում, բայց ամուսնու և կնոջ երթուղիներն այնպես էին կազմված, որ նույնիսկ հեռվից չկարողանան տեսնել իրար: Նրանց միակ, մանկահասակ դստեր մահվանից հետո թագավորը երկարամյա կապի մեջ էր Մարիա Նարիշկինայի հետ, իսկ նրանից լքված կողակիցը կապվել էր կավալերգարդ Օխոտնիկովի հետ և աղջիկ ունեցել նրանից, որը նույնպես շուտով մահացավ: Այդ ժամանակից ի վեր ամուսինները շարժվում են չհատվող ուղեծիրներով: Նրանց հարաբերություններն անցել էին այն փուլը, երբ փոխադարձ ջղագրգռությունը ստիպում է հանդիպման առիթ փնտրել, բայց այդպես էլ չէին մտել այն փուլը, երբ հանդիպումն ընդհանրապես ոչինչ չի նշանակում:

Թագավորը հրաժարվեց ընթրիքից: Զբոսանքից հետո անցանք աշխատասենյակ, որը նրան նաև ննջարան է ծառայում, և այնտեղ ինձ հինգ նամակ թելադրեց: Այդ ընթացքում երկու գավաթ կանաչ թեյ խմեց ու մի բուռ կեղևահան սալորաչիր կերավ: Թույլ ստամոքսը նրա անեծքն է:

Նամակներից մեկն ուղղված էր կոմս Սպերանսկուն:

«Նա,- հասցեատիրոջը նկատի ունենալով՝ հիշեց թագավորը,- մի անգամ ինձ ասաց, որ ժամանակը մեծ հրաշագործ է. մերթ հզոր, մերթ՝ հեզ»:

Ես հարցրի, թե դա ինչպես հասկանալ, արդյոք ո՞չ այն իմաստով, որ որոշ ժամանակներ վեհացնում են հոգին, այլք՝ հակում հողին»:

«Ո՛չ,- պատասխանեց թագավորը:- Նկատի է առնվում, որ մեր կյանքը երբեմն դանդաղ է հոսում, և մենք տարբերում ենք յուրաքանչյուր ակնթարթը, երբեմն էլ թռչում է աննկատ»:

Չհարցրի, թե դա ինչից է կախված: Սեր և բաժանում ճանաչածի համար հասկանալը հեշտ է:

«Հունական պատմության վերջին հարյուրամյակները մեզ համար մի ակնթարթի պես են անցել»,- ավարտեց նա իր միտքը:

«Որովհետև նրանց մոտ ոչինչ չէ՞ր կատարվում»,- ենթադրեցի ես:

Գլխով արեց. «Այո՛, ինչպես երազում»:

Ես առարկեցի, որ երազը երկար էր, բայց հույներն արթնացել են:

«Նրա՛նք չեն արթնացել,- եղավ պատասխանը:- Գիտես, հեքիաթներում մարդը ուտում է կախարդական պտուղը, առավոտյան իրեն նայում

հայելու մեջ ու տեսնում, որ գիշերվա ընթացքում պոզեր կամ ավանակի ականջներ են աճել, կամ էլ պատվել է բրդով: Ներկայիս հույները ալբանացիների, սլավոնների ու թուրքերի խառնուրդ են՝ հելլենական արյան մի փոքրիկ չափաբաժնով: Նրանք ձևանում են այն, ինչ իրենց ցանկանում ենք ընդունել»:

Պատուհանից այն կողմ, եղրևանու թփերի տակ պահված փոքրիկ փողային նվագախումբը կամացուկ գերմանական նուրբ մեղեդիներ էր հնչեցնում: Երաժշտությունը թագավորին օգնում էր հաղթահարել անքնությունը: Մենք ավարտեցինք աշխատանքը այն շեփորների օրորոցային երգեցողության ներքո, որ ժամանակին դղրդում էին Լայպցիգի մոտ ու Բորոդինոյի դաշտում: Ռազմական պղինձը իրեն օտար հնչյուններ արտամղելով՝ խոսում էր այն մասին, որ հերոսի կյանքը նույնպես երազ է, իսկ երազն ու մահը քույր ու եղբայր են:

«Ստույգ չեմ հիշում՝ հռոմեացիներից ո՞վ, կարծես թե Ցիցերոնը, իրեն ժամանակակից Հունաստանը համեմատել է զոհակենդանու կաշվի հետ,- ափսեից վերջին սալորաչիրը վերցնելով՝ ասաց թագավորը:- Գառների ու ցլերի մսեղիքը վառում էին զոհասեղաններին, իսկ քերթած կաշին սրբազան էր համարվում ու պահպանվում տաճարական պահոցներում: Այսօր, ինչպես կեսարների ժամանակներում, Հունաստանը սնամեջ պատիճն է նրա, որ ժամանակին աստվածների կերակուր է եղել: Հույները հելլենասերների օգնությամբ դրանից խրտվիլակ են սարքել, պարում են շուրջն ու գոռում, թե Հելլադան հառնել է»:

Օգոստոսին Պետերբուրգում շուտ չի մթնում: Ժամը իննին դեռ լույս է, բայց նրա աշխատասենյակում՝ մշտական կիսախավար, պատուհանի տակ աճած եղրևանիների պատճառով: Նույնիսկ ցերեկն այստեղ ստիպված են մոմեր վառել: Թագավորն արգելել է կտրել եղրևանիները: Մի անգամ համարձակություն ունեցա հիշեցնելու, որ ցերեկով վառվող մոմը տանը հանգուցյալ ունենալու նախանշան է, բայց նա ծիծաղեց իմ սնահավատության վրա: Կարծում է՝ հավատը սնահավատությունից նույնքան հեշտ է բաժանել, որքան քափգիրով քաշել արգանակի փրփուրը: Լուսավորյալ մտքերի այդ սնահավատությունից մենք ազատվում ենք այն տարիքում, որին թա-

գավորը դեռ չի հասել:

Դուրս գալիս գիտեի՝ հիմա ծնկի կգա սրբապատկերների առջև, կկարդա սիրած 91-րդ սաղմոսը: Այդ սովորության պատմությունը հասնում է 1812 թվականի օգոստոս: Այդ ժամանակ նա պետք է թողներ Պետերբուրգն ու մեկներ բանակ: Նախօրեին մինչև ուշ գիշեր փաստաթղթերի վրա էր աշխատել, իսկ երբ դուրս եկավ առանձնասենյակից, տեսավ իրեն սպասող մի կնոջ՝ մուգ կամզեով, որի ծայրերը հուզիչ պարզությամբ կապված էին գոտկատեղին: Թույլ լուսավորված սրահում թագավորը լավ չէր տեսել նրան, ու չնայած այդ դերին հետագայում հավակնում էր իշխանուհի Գոլիցինան, նրան չէր հավատում: Անդեմ, անանուն, կիսախավարից ելած և այնտեղ էլ չքացած անծանոթուհին նախընտրելի էր նրա համար: Այդ հանելուկի անլուծելիության մեջ ավելի իմաստ կար, քան կարող է ունենալ ցանկացած պատասխան:

Կինն անխոս նրան մի քառածալ թերթիկ տվեց ու հեռացավ: Թագավորը մտածելով, թե ինչ-որ խնդրագիր է, թերթիկը դրեց գրպանն ու մոռացավ դրա մասին, բայց գիշերակացին հանկարծ նորից գտավ, երբ գրպաններում ինչ-որ բան էր փնտրում: Բացեց թերթիկն ու հասկացավ, որ իր առաջ ձեռագիր 91-րդ սաղմոսն է: Ընթերցանությունը զարմանալի կերպով խաղաղություն բերեց նրան, պատերազմի սկզբից առաջին անգամ հանգիստ քնեց:

Իսկ չորս տարի անց, երբ բոլորիս ծանոթ հոգեվիճակում, երբ թվում է՝ խախտված նյարդերը կարելի է բուժել թղթերն ու գրքերը կարգի բերելով, գրքերն էր դասավորում աշխատասեղանին. մեկն ընկավ հատակին ու բացվեց: Գետնից վերցնելով՝ թագավորը մեքենայաբար նայեց բացված էջը. նրա առաջ նույն 91-րդ սաղմոսն էր: Անգիր արեց և այդ օրվանից ամեն երեկո կրկնում է. «Բարի է Տիրոջից գոհանալը, սաղմոս ասելը քո անվանը, ով Բարձրյալ, առավոտից քո ողորմությունը պատմելը և գիշերը՝ քո ճշմարտությունը...»: Առաջ այդ բառերն անդորր էին բերում, բայց հիմա դրանք էլ էին հաճախ անզոր:

Արդեն դռների մեջ ինձ կանգնեցրեց թագավորի ձայնը. «Սպասի՛ր... Սա բարոնուհի Կրիդների նամակն է: Պատասխանիր, ինչպես հարկ կհա-

մարես: Քեզ հայտնի է կարծիքս ինձ սուլթանի հետ պատերազմի մեջ քաշելու վերաբերյալ»:

Եվ գերմաներեն արշինանոց տառերով գրոտած երկու թերթիկ տվեց: Այդպիսի ձեռագիր ունենում են զարգացած երևակայությամբ մարդիկ:

«Պատասխանել ձերդ մեծության անունի՞ց»,- հարցրի ես:

«Ո՛չ, քո՛»,- ոչ առանց տատանվելու որոշեց նա՝ հրաշալի հասկանալով, որ դա սարսափելի հարված կլինի բարոնուհու համար:

Բարոնուհի Յուլիա Կրիդները՝ Ալեքսանդր I-ին

Օգոստոս, 1823 թ.

Կրկին դիմում եմ ձեզ, քանզի գիտեմ՝ ինչ էլ որ ասեք, ձեր սիրտը պատկանում է Հունաստանին:

Եսայի մարգարեն ասել է. «Օձի զարմից դուրս են գալիս իժի ծնունդներ, իսկ սրանց ծնունդներից էլ՝ թևավոր օձեր»:

Իժը փարավոնների սրբազան օձն է: Նրա թույնից է մահացել Կլեոպատրան, իսկ հիմա Իբրահիմ փաշան՝ եգիպտական Մեհմեդ-Ալիի որդին, լավագույնը նրա գեներալներից, նավատորմ ու զորք է հավաքում Ալեքսանդրիայում՝ օգնելու սուլթան Մահմուդին: Ոգու աղոթքում ինձ հայտնություն եղավ, որ իժը եգիպտական տեղապահն է, իսկ նրա պտուղը՝ Իբրահիմ փաշան՝ հենց Եսայու գուշակած թևավոր օձը: Նրա միջոցով է կատարվելու մարգարեությունը, թե՝ Հունաստանի կործանումը Եգիպտոսից կգա:

Այլևս հապաղել չի կարելի: Դուք պետք է պատերազմ հայտարարեք սուլթանին և ինչպես 1812 թվականին, գլխավորեք բանակը: Բոլոր քրիստոնեական միապետերը կգան ձեր հետևից, ինչպես Ագամեմնոնի հետևից, ձեր զորքը կնմանվի հրեշտակների լեգեոնի, որի տակ կցնցվի հողը և Բոսֆորում կդողան միևարեթները:

Դրա մասին է ասում Եսային. «Ես արևելքից կանչեցի թռչուններին, իսկ հեռավոր երկրից՝ նրան, ում մասին մտածեցի»:

Նաև Երեմիան. «Հյուսիսից նրա վրա հարձակվեց մի ազգ, որը նրա երկիրն ավերակ պիտի դարձնի»:

Եվ կրկին նա. «Ահա հյուսիսից մի զորագունդ է գալիս, մի մեծ ազգ, նաև բազում թագավորներ ոտքի են ելնելու երկրի ծայրերից»:

Իգնատի Ելովսկի. Ալեքսանդր I-ի կամեր-քարտուղարի մատյանը

Սեպտեմբեր, 1823 թ.

Բարոնուհի Կրիդներին ուղարկելիք նամակը գրեցի մի ամբողջ երեկո: Ահա թե ինչ ստացվեց երկու սևագրերից հետո.

«Ձեր նամակները վշտացնում են տեր թագավորին: Նա միշտ հեռու է եղել այն մտքից, որ, նախախնամության հանդեպ ձեր խորին հավատով, ձեզ թույլ կտաք ժամանակի ոգով գայթակղվել: Խռովությունն ու անիշխանությունը լավը չեն բռնակալությունից, ժողովուրդներին, ինչպես և առանձին մարդկանց հատուկ ազատության ձգտումը պետք է բավարարվի օրենքի լույսի ներքո, ոչ թե գաղտնագործության խավարում: Մութի մեջ ծնված ամեն ինչ սովորություն ունի խժռելու իր եղբայրներին:

Երեխան կարող է ընկնել պատուհանից և անվնաս մնալ, պատանին՝ ողջ թափով սլացող ձիու թամբից, կամ հարբած քնել-մնալ վառվող տանը և ոչինչ չզգալ, վախից բացի, բայց տարեցտարի ավելի ու ավելի քիչ է այդպես լինում: Պահապան հրեշտակները հոգնում են մեզ պահպանելուց: Միապաղաղությունը հոգնեցուցիչ է նույնիսկ նրանց համար, և քանզի բնավորությունը մեզ տրվում է բնությունից, օրորոցից մինչև գերեզման կատարում ենք միևնույն սխալները: Երկու հազար տարվա ընթացքում հույները բազում անգամներ ոտքը խփել են նույն քարին, բայց չեն հոգացել այն ճանապարհից հեռացնելու մասին: Նրանք երբեք չեն կարողացել լեզու գտնել իրար հետ ու կրկին զզվռտվում են շների պես, չնայած եգիպտական սուրը արդեն կախված է գլխներին: Տեր թագավորն ինձ խնդրել է հիշեցնել ձեզ այդ հանգամանքը:

Անձամբ իմ կողմից կցանկանայի ավելացնել, որ հիշատակված Իբրահիմ փաշան Սեհմեդ-Ալիի մարմնի պտուղը չէ, ինչպես գրում եք: Ոչ թե նրա հարազատ որդին է, այլ որդեգրյալը»:

Ես թագավորին չէի խանդում Նարիշկինայի հանդեպ, երբ նրա հետ էր, առավել ևս՝ նրա թռուցիկ սիրո առարկաներին, որ անհետանում էին առաջին մերձեցումից հետո, առավելագույնը՝ երկրորդ կամ երրորդ, սակայն բարոնուհին ուրիշ էր: Թագավորը միայնակ է և կարեկցանքի կարիք ունի, իսկ բարոնուհին առանց մարմնական հավակնությունների նրա սրտում կարող է զբաղեցնել այն տեղը, որ պահել էի ինձ համար:

Ես կամեր-քարտուղար էի դարձել արդեն այն բանից հետո, երբ բարոնուհի Բեատա-Բարբարա-Յուլիա ֆոն Կրիդները, ծնունդով՝ Ֆիտինգոֆ, Պետերբուրգից հեռացել էր իր լիֆլյանդական կալվածքը,- բայց նրա կյանքը բավականաչափ ծանոթ էր ինձ: Մուսաներն էին դաստիարակել նրան դայակների փոխարեն. օժտված էր տարատեսակ տաղանդներով և դեռ երեխա՝ նամակագրական կապի մեջ էր եվրոպական երևելիների հետ:

Ո՛չ վաղ ամուսնությունը կրկնակի տարիքով մարդու հետ, ո՛չ երեխաների ծնվելը նրան երջանիկ չէին դարձրել, բայց կաթիլը քար է ծակում: Ի վերջո ամուսնուն համոզեց ազատություն տալ իրեն, որ իր շնորհները չկորչեն, և ամուսինը ընդհուպ մինչև իր մահը, տարիներով կնոջը չտեսնելով, կանոնավոր կերպով ապահովում էր նրա ապրուստը, իսկ երեխաներն անմայր էին մեծանում: Բարոնուհին շրջագայում էր Եվրոպայով մեկ, փայլում սալոններում, նվագածում, ասմունքում, յուղաներկ կտավներ նկարում, սիրում ու լքում սիրեկաններին, քարոզում մեկ մենեստրելների սերը, մեկ կաշվե պարկիկը, որ ջենթլմենները հայտնի պետքի համար պիտի հագցնեն հայտնի մարմնամասին, երբ գործ ունեն օտար կնոջ հետ: Փարիզում, նմանակելով մադամ դը Ստալի «Դելֆինային», հրատարակեց «Վալերիա» նամականի-վեպը: Չեմ կարդացել, բայց լսել եմ, որ սիրո պատմություն է, որը պլատոնական ենք կոչում, նկարագրված մեծ իմացությամբ՝ թե իրենց ինչպես կպահեին հերոսները, եթե այդքան առաքինի չլինեին: Գիրքը չէին գնում, և այդ ժամանակ հեղինակն ինկոգնիտո պտտվեց կանացի տաղավարներով՝ ներկայացնելով իբր a la Valerie ոճի նորածև զգեստներ, գլխարկներ, ժապավեններ: Հենց դրա մասին լուրը տարածվեց Փարիզում, խռովված տիկնայք մի շաբաթվա մեջ գնեցին ամբողջ տպաքանակը:

Սակայն բարոնուհին որոշել էր ընթերցող ունենալ անձամբ Բոնապարտին, այն ժամանակ՝ Առաջին կոնսուլ: Տիկնոջ հմայքին գերված՝ Պետական խորհրդի գրադարանավարը, որի պարտականություններից էր կոնսուլներին նոր հրատարակություններ ներկայացնելը, դրանց մեջ ընդգրկեց «Վալերիան», սակայն Բոնապարտը մի քանի էջ կարդալով, մի կողմ դրեց գիրքն ու այլևս դրան չվերադարձավ: Գիրքը երկրորդ անգամ խցկելու փորձի ժամանակ ասաց, որ նամականի-վեպերն իրեն չեն հետաքրքրում, սակայն բարոնուհին այստեղ էլ թևաթափ չեղավ և իր մտահղացումից հրաժարվեց միայն այն բանից հետո, երբ «Վալերիայի» երրորդ օրինակը, որ Բոնապարտը գտել էր իր սեղանին, թռավ բուխարու մեջ: Այնտեղ թռավ նաև գրքի մեջ դրված երկտողը, որով խնդրվում էր գնահատել Ֆրանսիան հոգու հայրենիք ընտրած օտարուհու աշխատանքը:

Բարոնուհին այն կանանցից չէր, որոնց զգեստի յուրաքանչյուր մերակ գոց է կողպեքի պես, իսկ բանալիները պահվում են սրտի զարդատուփում: Մի անգամ նրան չթողեցին թատրոն, որտեղ ազատ տեղ չկար: Առանց երկար մտածելու բարոնուհին կարգադրիչին հարցրեց՝ իր համար բազկաթոռ կճարվի՞, եթե նրա առաջ մերկացնի կուրծքը: Կարգադրիչը ծիծաղելով համաձայնեց, մտածելով, թե կատակ է, սակայն բարոնուհին կատարեց խոստումը ու տեղ ստացավ պարտերում:

Սիրեկաններն ավելի ու ավելի էին ջահելանում, ավելի ու ավելի հաճախ էր փոխում նրանց: Մեկը, լրիվ տղա, որ կրքոտ սիրահարված էր նրան, ցուրտ առավ ու մահացավ: Նրա մահվանից հետո ինչ-որ բան կոտրվեց բարոնուհու մեջ: Հենց այդ ժամանակ էլ նրան ի Քրիստոս դարձրեց շվեյցարացի հերնհուտերների եղբայրությունից մի կոշկագործ, որը նրա համար կոշիկներ էր կարում:

Բարոնուհին կանխատեսության շնորհ հայտնաբերեց իր մեջ, սկսեց մարգարեություններով ծանձրացնել օգոստափառ այրերին և ի վերջո հասավ տեր թագավորին: Կայսրը նրա առաջին նամակը ստացավ 1812 թվականին. կանխատեսված էր սև հրեշտակի, այսինքն՝ Բոնապարտի անկումը և Ավետարանի մոտալուտ հաղթանակը՝ լուսավոր հրեշտակի, այսինքն՝ տեր թագավորի առաջնորդած ժողովուրդների մեջ: Թագավորն

անուշադրության մատնեց նամակը, սակայն բարոնուհին շարունակում էր նամակների տեղատարափը: Դրանք թագավորին էր փոխանցում Ֆրեյլին Ստուրձան: Թագավորը չէր պատասխանում, չնայած որոշ նամակներ կարդում էր:

Հերթական ուղերձը ստացվեց, երբ սև հրեշտակն արդեն բանտված էր Էլբայում: «Փոթորիկ է մոտենում, այդ շուշանները հայտնվել են, որ չքանան»,- մարգարեանում էր բարոնուհին ու ճիշտ դուրս եկավ. շուտով Նապոլեոնն ափ իջավ Ֆրանսիայում, Փարիզը տրորեց Բուրբոնների շուշաններն ու նետեց նրա ոտքերի տակ: Թագավորը ծանր տարավ այդ նորությունը: Ճնշված վիճակում ժամանեց Հելբրոն և այնտեղ էլ ծանոթացավ բարոնուհու հետ:

Թագավորը 38 տարեկան էր, բարոնուհին՝ 52, բայց խելացի կինը ոչ մի տարիքում տգեղ չի լինում: Փակօձիք հասարակ սև զգեստով, հարթ սանրվածքով, առանց դիմաներկի, առանց զարդերի՝ բարոնուհին իր վեցերորդ տասնամյակում էլ հրապուրիչ էր: Միանձնուհու հագուստը նրան ապաշխարության կարիք ունեցող կնոջ տեսք էր տալիս:

«Ես,- ասաց նա,- մեծ մեղսավոր էի, բայց մեղքերիս թողություն գտա Քրիստոսի խաչի տակ: Սեփական թուլության գիտակցումը առաջին քայլն է քավության ճանապարհին: Դուք հոգեկան հանգիստ չեք գտնում, որովհետև չեք խոնարհվել, ինչպես մաքսավորը՝ Աստվածամարդուն, չեք կոչել սրտի խորքից. «Տե՛ր, գթա ինձ, մեղավորիս»:

Այս տոնով խոսեց երեք ժամից ավելի: Սկզբում թագավորը փորձում էր պատասխանել, հետո լռեց, գլուխը դրեց ձեռքերին ու լաց եղավ: Այդ օրվանից սկսեցին տեսնվել համարյա ամեն օր: Բարոնուհին նրան վարժում էր ոգու լռելյայն աղոթքին, որին հետևում էին եղբայր հերնհուտերները: Նրանց կարծիքով՝ այդ աղոթքը պետք է բոլոր երկրաբնակների սեփականությունը դառնար, բայց առայժմ դրան միայն իրենք էին տիրապետում: Էությունն այն է, որ անբարբառ դիմես Աստծուն: Սուրբ Հոգին ամենուր է, պետք է գտնես քո մեջ ու ձուլվես Աստծուն, ոչ թե լեզվով ողորմություն խնդրես Նրանից:

Լռություն քարոզելով՝ բարոնուհին անդադար խոսում էր: Այդ ընթաց-

քում Նապոլեոնը բանակի գլուխն անցած դուրս եկավ պրուսացիների և անգլիացիների դեմ: Դա ցնցեց թագավորին: Նա համարյա պատրաստ էր հավատալ, որ աստվածային նախախնամությունը ոչ թե իր, այլ կորսիկացու միջոցով է գործում, ու տատանվում էր՝ չիմանալով՝ այդ դեպքում պե՞տք է արդյոք նոր պատերազմ սկսել նրա դեմ:

Բարոնուհին ցրեց նրա կասկածները: Կարողացավ համոզել, որ Փարիզը նոր Բաբելոնն է, իսկ տեր թագավորը՝ նա, ում մասին կանխագուշակել է Եսայի մարգարեն. «Հանուն քո սիրո կատարեցի կամքդ Բաբելոնի նկատմամբ՝ վերացնելու համար քաղդեացիների սերունդը»:

Վաթեռլոոյից հետո այդ ամենն արդեն կարևոր չէր: Թագավորը վերադարձավ Պետերբուրգ, դաստիարակը հետևեց նրան: Այստեղ այնքան հաճախ չէին հանդիպում, որքան նա կուզեր, բայց հարաբերությունները պահպանում էին բարձր մակարդակը: Ի պատիվ բարոնուհու պետք է ասել, որ դա չէր չարաշահում և միայն մի անգամ, հանգուցյալ ամուսնու հանդեպ մեղքի զգացումից տառապելով, թագավորին խնդրեց աջակցել նրա սիրելի զարմիկի կարիերային: Այդ օրվանից բարոն Կրիդները սկսեց արագ բարձրանալ ծառայության մեջ, և հիմա զբաղեցնում էր Պերմի քաղաքացիական նահանգապետի պաշտոնը:

Բարոնուհին մեկնեց Լիֆլյանդիա՝ չամուսնացած կրտսեր դստեր մոտ: Մի քանի տարի նրանից ոչ մի լուր չկար, բայց ահա գարնանից, իր կալվածքում նստած, թագավորին ռմբակոծում է նամակներով՝ ամենադյութիչ արտահայտություններով պահանջելով պատերազմ հայտարարել սուլթանին, և ծերունական մոռացկոտությամբ հղվում Սուրբ գրքի այն տեղերին, որոնցով նրան ոգեշնչել էր Նապոլեոնի հետ պատերազմի: Եսային ու Երեմիան կրկին զենքի էին կոչվել:

Մեր հերձվածողների հանգույն՝ բարոնուհին հավատում է, որ ցարի մեղքերի համար Աստված պատժում է նրա ողջ երկիրը, ուստի Ռուսաստանին սով, մահտարաժամ, նոր Պուգաչով ու Պետերբուրգի անկում էր գուշակում ծովի հատակը, եթե տեր թագավորը չլսի իրեն:

Թագավորին դա այնքան էլ դուր չի գալիս, բացի այդ, դժգոհ է, որ բարոնուհին խնդրում է իրենից հեռացնել կոմս Արակչեևին՝ որպես ամե-

նայն, այդ թվում՝ հունական ազատության թշնամու: Կոմսի հանդեպ ատելությունից դրդված՝ երբեք անունը չի տալիս, նրա մասին գրում է այլաբանորեն, որպես ոմն «չարագործի»: Ճիշտ է, խելքը հերիքում է չօգտագործելու նրա ամենահայտնի մականունը՝ Օձ, թե չէ տեր թագավորը պարզապես դեն կնետեր նամակները: Առաջ հույս ունեի, որ նրա հոգու համար ճակատամարտում այդ երկուսն իրար կոկորդ կկրծեն, բայց ըստ երևույթին Օձը կհաղթի հերնհուտերուհուն:

Մենք՝ տղամարդիկ, հաճախ մոլորության մեջ ենք ընկնում մեզ թանկ մարդկանց գնահատելիս, բայց սթափ ենք դատում նրանց մասին, ում ատում ենք: Կանայք, հակառակը, կուրանում են չարությունից, փոխարենը՝ սերը խորաթափանց է դարձնում նրանց: Եթե բարոնուհին այդքան չի հասկանում տեր թագավորին, ուրեմն չի սիրում նրան, իսկ Օձի հանդեպ ատելությունը զրկում է սթափ տեսնելու և քայլերը կանխատեսելու ունակությունից:

Կարծում եմ՝ առաջին զոհը կլինի նրա զարմիկը՝ «Կո՛ւժ, քեզ ասեմ, կուլա՛, դու լսիր» սկզբունքով: Իմանալով, որ թագավորը բարկացած է բարոնուհու վրա՝ Արակչեևը, իհարկե, կօգտվի նրա վրիպումից ու Պերմի նահանգապետի պաշտոնում բարոն Կրիդների տեղը կդնի իր հաճախորդներից որևէ մեկին: Ես համոզվեցի դրանում՝ թագավորին տեսնելով Պերմի նահանգի քարտեզն ուսումնասիրելիս: Այնպես էր նայում, ասես Ուրալյան լեռնաշղթայի շրջակա հողերը բնակեցված են շնագլուխ մարդկանցով: Չեմ կասկածում, որ քարտեզն Արակչեևն էր տվել:

Նույն երեկոյան տուն դառնալիս հանդիպեցի Կոստանդիսին: Նրանից գինու հոտ էր փչում: Պարզվեց՝ քննություն է անցել լեյբ-վիրաբույժ Տարասովի մոտ ու գրանցվելու է որպես նրա օգնական: Ծնորհավորեցի, բայց և ինձ թույլ տվի հարցնել, թե ում հովանավորությունն է օգնել հայտնվելու գործընկերներից շատերի համար ցանկալի այդ պաշտոնում: Կոստանդիսը տվեց բարոնուհի Կրիդների անունը: Բուժել էր նրան Ռիգայում, երբ այնտեղ կանգ էր առել Պետերբուրգի ճանապարհին:

Մտքում հայհոյեցի ինձ: Իհարկե, խելագարությանը սահմանակցող հուզավառությունն ընդամենը դիմակ է. բարոնուհին խելամտորեն հաշ-

վարկել է, որ թագավորը, և՛ իր, և՛ հույների հանդեպ մեղավորություն զգալով, չի մերժի շնորհազրկված խորհրդապահուհուն: Բարոնուհին լրտես էր ուղարկել թագավորի մոտ՝ նրա հիվանդությունների մասին տեղեկանալու և իր խարդավանքները նրա առողջությանը համակշռելու համար, բայց հաշվի չէր առել, որ Կոստանդիսը չի ցանկանա վտանգել այդպիսի պաշտոնը: Դժվար թե ամեն ինչ ազնվորեն զեկուցի բարոնուհուն:

«Ձեր բախտը բերել է,- ասացի:- Ուրիշները դրա մասին անգամ երազել չեն համարձակվում նույնիսկ ավելի ծանրակշիռ երաշխավորների դեպքում: Միայն թե չմտածեք, որ ձեր երջանկությամբ պարտական եք բացառապես բարոնուհուն»:

«Ահա թե ինչ: Իսկ էլի ո՞ւմ»,- հետաքրքրվեց նա:

«Սուլթան Մահմուդին,- բացատրեցի ես:- Դուք փախել եք Կոստանդնուպոլսից, որտեղ ձեզ մահ էր սպառնում, բայց եթե ձեր տեղում հայտնվեր որևէ փորձառու թուրք բժիշկ, որը Սորեայից փախել է ձեր ցեղակիցների վայրագությունների պատճառով, տեր թագավորը նրան էլ կընդուներ: Նա կարեկցում է բոլոր հալածյալներին»:

Մի րոպեի չափ լուռ քայլում էինք: Օգոստոսի ծաղիկներն առաջվա պես ամառային-վառ էին, բայց համարյա չէին բուրում: Մի քանի օր առաջ թագավորն ուշադրությունս հրավիրել էր դրա վրա, իհարկե, ոչ առանց իր մասին ակնարկի: Քառասունվեց տարեկանում նա անընդհատ մտածում ու խոսում է իր աշնան մասին:

«Ազնվորեն խոստովանեք,- առաջարկեցի ես,- չէ՞ որ դուք համակրում եք հույն ապստամբներին»:

Կոստանդիսն սկսեց հակառակը համոզել:

«Դուք հույն եք,- ընդհատեցի նրա կեղծավոր ժխտումները,- ես ձեզ ամեն դեպքում չէի մեղադրի, բայց վատ չէր լինի իմանայիք՝ ո՛չ Անգլիայի նենգությունը, ո՛չ Մետեռնիխի խարդավանքները, ո՛չ նողկանքը, որ թագավորը տածում է կոտորածի ու խռովության հանդեպ, և ո՛չ նույնիսկ հոգածությունը Բոնապարտի դեմ պատերազմից դեռևս ուշքի չեկած Ռուսաստանի բարօրության համար՝ չեն խանգարում նրան օգնության հասնելու հավատակից հույներին: Նա միշտ պատրաստ է զորակցելու բարուն ընդ-

դեմ չարի, բայց միայն պայմանով՝ պետք չէ հաշվել, թե այն որ կողմում է ավելի շատ: Եվ եթե հարկ է նախ զատել մեկը մյուսից, հետո մեկը և մյուսը դնել կշեռքի տարբեր նժարների ու նայել, թե որը ծանր կկշռի, սխալվել կարելի է և՛ տեսակավորելիս, և՛ կշռելիս»:

Կոնստանտին Կոստանդիս: Թափառիկ բժշկի նոթերը

Սեպտեմբեր, 1823 թ.

Ես ճանապարհ ընկա քարտեզով, որի վրա լեռները, ծովերն ու գետերը անընդհատ փոխում են գծագրությունը, և չգիտեմ ո՛չ տարածությունը, որ պետք է կտրեմ, ո՛չ երթուղու վերջնակետը: Մնում է հավատալ, որ ինչքան անորոշ է նպատակը, այնքան մեծ է ամենաանսպասելի տեղում նրան հասնելու հնարավորությունը:

Նոր վիճակիս համապատասխան կազմեցի հետևյալ կենսական կանոնները.

1. Դիմակը պետք է թաքցնի դեմքը, բայց համապատասխանի նրա գծերին, թե չէ կարող է մաշկը պլոկել մսից:

2. Իրերն իրենց ամբողջության մեջ տեսնելն ինձ համար անհասանելի շքեղություն է: Պիտի վերակազմեմ դրանք իրենց բեկորներից ու լեզվից թռցրած բառերից:

3. Ստվերների լեզվի թարգմանիչ. ահա իմ երկրորդ մասնագիտությունը:

4. Միտքը չափվում է այն թաքցնելու ունակությամբ:

5. Ուղիղ ճանապարհը տանում է գերեզմանոց:

6. Եթե ծարավը ստիպի ջրհոր, իսկ քաղցը կամ տապը՝ ծառ փնտրել, որ հագեցամ նրա պտուղներով կամ արևից փրկվեմ սաղարթի տակ, և եթե ջրհորի հատակին ցերեկով աստղեր տեսնեմ, իսկ տերևների խշշոցի մեջ լսեմ երկնոլորտների մեղեդին, պետք է հիշեմ, որ ո՛չ մեկը, ո՛չ մյուսը իմ խնդիրների մեջ չեն մտնում:

Եվ այսպես, Ցարսկոյե Սելոյում եմ:

Սութն ավելի ու ավելի շուտ է ընկնում, խոնավություն է փչում լճակներից: Պալատում ցուրտ է ու լուռ, այգին՝ ամայի, կողաշենքերը՝ մարդկանց փոխարեն բնակեցված ստվերներով: Այստեղ ամեն ինչ հիշեցնում է մեռյալների թագավորություն, որը հիմա, ինչպես հավատում է հասարակ ժողովուրդը, ոչ թե Ադն է կառավարում, այլ նավակն ու թիերը լքած նավավար Քարոնը: Ուղևորներից ստացած պղնձադրամները միջոց են տվել, որ նա վարձկաններ հավաքագրի ու հեղաշրջում անի: Կայսր Ալեքսանդր Պավլովիչը նույնպես գահի բռնատեր է և նախկին նավավարի նման սիրում է մառախուղ, ցուրտ ու լռություն: Դրա ֆոնին՝ նրա թողտվությամբ սպանված հոր ուրվականը պակաս վախենալու է թվում:

Մի հնօրյա երգ կա, որ երեխա ժամանակ ինձ համար երգում էր մայրս: Աթենուհի էր, չնայած այստեղ նրան Դոնի կազակուհի եմ ներկայացնում, իսկ այդ ատտիկյան բալլադը նույնիսկ մորեական հույները չգիտեն՝ չխոսելով արդեն ալեքսանդրիացիների մասին, որպիսին իմ հայրն էր: Երգվում է, թե ինչպես են երեք պատանի Քարոնից գողանում իրենց տապանասալերի բանալիներն ու որոշում փախչել ստորգետնյա թագավորությունից: Այդ ծրագրի մասին տեղեկանում է նույնպես մեռած մի աղջիկ: Սկսում է խնդրել, որ իրեն էլ վերցնեն:

«Ո՛չ, ո՛չ,- պատասխանում են նրանք:- Քո մետաքսե շորերը շրշում են, թխկթխկում են քո կրունկները, լուսնի տակ փայլում արծակ վարսերդ. դու մեզ կմատնես Քարոնին»:

«Ես կհանեմ խշխշան շորերս,- խոստանում է աղջիկը,- կկտրեմ շքեղ վարսերս, Քարոնին կթողնեմ ոսկյա կոշիկներս...»:

Ես ուրախ կլինեի սափրել գլուխս ու հեռանալ այստեղից թեկուզ ոտաբոբիկ: Քաղաքականությունից, մեկ է, ինձ հետ ոչ ոք չի խոսում, բացի կամեր-քարտուղար Ելովսկուց, բայց մեր զրույցներից որևէ արժեքավոր բան քաղելու համար պիտի կարողանաս իրեն պատկանող մտքերը պերճախոսության հոսքում առանձնացնել թագավորից փոխ առած մտքերից: Ինքը դրանք իրարից չի տարբերում: Նա իր պատրոնի ստվերն է: Այդպիսի ստվերներ լինում են ձմեռային օրվա մայրամուտին. երկա՜ր-երկա՜ր,

քծնաբար պատճենող նրանց շարժումները, ում պարտական են իրենց գոյությամբ, բայց և անկարող են դույզն-ինչ նմանությամբ կրկնել:

Ելովսկին ամուրի է և, Տարասովի ասելով, վերջին երեք տարիներին կանանցով չի հետաքրքրվում: Տղամարդիկ նույնպես նրան չեն հետաքրքրում: Պատճառն ինձ համար առեղծված է: Այնքան աստվածավախ չէ, որ դրանով բացատրենք նրա ասկետիզմը, իսկ սեռական անդամները նորմալ զարգացած են: Ես զննել եմ նրան, երբ տառապում էր միզապարկի բորբոքումով: Եթե նրա համար, ինչպես Կանտի, Օնանի զբաղմունքն ինքնասպանությունից մահացու մեղք է, հասկանալի է, թե ինչու է մինչև ականջները լցված լեղիով:

Երեկ որոշել էր այն թափել թուրքերից պաշարված Միսոլոնգիի պաշտպանների վրա. այն պատճառով, որ ամրոցի աշտարակները վերանվանել են Սպարտակի, Վիլհելմ Թելի, Սկանդերբեգի, Բենջամին Ֆրանկլինի և ազատության այլ մարտիկների պատվին: Դա նրան ահավոր ծիծաղաշարժ է թվում: Ես չեմ համարձակվում ո՛չ պաշտպանել ապստամբներին, ո՛չ մեղադրել, ո՛չ, առավել ևս, ծաղրել, և ինձ թույլ եմ տալիս նրանց քննադատել բացառապես ողջամտության դիրքերից, իսկ դա հեշտ չէ. շատ ուժեղ հակվես մի կողմ՝ կկասկածեն արմատականության մեջ, մյուս կողմ՝ կկորցնես հարգանքը:

Ես ու Ելովսկին երեկոյան հանդիպեցինք այգում, ու նրան տուն ուղեկցեցի: Ճանապարհին նրանից անընդհատ հորդում էր, ինչպես ջրաղացի աղունաշիթից. Արիստիդես, Թեմիստոկլես, Պերիկլես, Էսքիլես, Ֆիդիաս: Նրա կարծիքով՝ այդ ժամանակներից ի վեր Հունաստանում ուշադրության արժանի ոչինչ չի կատարվել: Ո՛չ քաջարի Դեսպոյին գիտի, որն իրեն դուստրերի ու թոռների հետ պայթեցրեց աշտարակում, ո՛չ նավապետ Ստաֆեսին, որի նավի հետևից հասել էին թուրքերը ու երբ առաջարկել էին իջեցնել առագաստները, պատասխանել էր թուրք ծովակալին. «Դու փեսա չես ու ես՝ հարս, որ քո հայտնվելուն պես հանեմ դիմաքողը»: Լսե՞լ է նա պարգիացիների մասին, որոնք Կորֆու արտաքսվելիս կրակին էին տալիս գերեզմաններից հանած նախնիների ոսկորներն ու մոխիրը տանում իրենց հետ: Բոցարիս, Դյակոս, Յորգակի. այս անունները

Ելովսկու համար դատարկ հնչյուն են: Նրա երևակայությունը չի հերիքում պատկերացնելու, թե ինչպես են լեռնական սուլիաները, Վելի փաշայից սուլթանին հնազանդվելու պահանջով նամակ ստանալով ու տառաճանաչ չլինելու պատճառով չկարողանալով կարդալ՝ հասկանում մեկ բան. պետք է կռվել: Կարևոր չէ այս անգամ ինչ է գրված: Սև տառերը սպիտակ թղթին նրանց միշտ մահ են խոստանում:

Ելովսկին հընթացս հարձակվեց ռուս հելլենասերների վրա: Մասնավորապես, մի պատմություն արեց նրանցից մեկի՝ գեներալ Մ.-ի մասին, որը հայտնի էր որպես անուղղելի գանձագող, հարբեցող ու համարյա խաղախարդախ: Մի անգամ շարահրապարակում, գումարտակային զորաշարքը ստուգելիս, սկսում է զինվորներին հարցուփորձ անել, թե ով որտեղից է: Մեկին, որը Կուրսկի նահանգից էր, հարցնում է, թե ինչով է նշանավոր այդ նահանգը: Զինվորը զեկուցում է, թե՝ սոխակներով, ինչից հետո գեներալ Մ.-ն հետաքրքրվում է՝ չի՞ ուզում լսել նրանց: «Ոչ մի կերպ»,- հատու զեկուցում է ղեկավարության այդպիսի հարցերի պատասխանելուն վարժեցված զինվորը: «Կեցցե՛ս,- գովում է Մ.-ն:- Հիմա սոխակների ժամանակը չի, երբ մեր հավատակից հույներն այսքան դառնություն են կրում կեղտոտ թուրքերից»: Անցնում է հաջորդին և պարզելով, որ Կյազմայից է ու գիտի, որ Կյազման հայտնի է իր քաղցրաբլիթներով, հարցնում է, թե ճաշակելու ցանկություն չունի՞: Այս զինվորն էլ է առաջինի նման պատասխանում և նույնպես արժանանում է գովեստի. թե՝ նկատի ունենալով սպասվող պատերազմը սուլթանի հետ, պետք է հրաժարվել անուշեղենից ու վարժվել զրկանքների:

Ես ծիծաղեցի, բայց պարզվում է՝ տոնը ճիշտ չէի ընտրել: Ելովսկին խստորեն հանդիմանեց, որ այստեղ արցունքների միջից ծիծաղն է վայելում:

«Գիտե՞ք ով է Մեհմեդ Ալին»,- հանկարծ հարցրեց նա:

«Եգիպտական տեղապահ, սուլթանի վասալը»,- պատասխանեցի ես և հաջորդ հինգ րոպեներին իմացա, որ Սուլթան Մահմուդը հույների դեմ կռվում է առանց սերալից դուրս գալու, ուրիշ բան Մեհմեդ Ալին: Այդ ալբանացին Կահիրեի իշխանությունը կառավարում է առանց հարեմի,

առանց ներքինիների և առանց վեզիրների, ենիչերիներ նույնպես չունի, նրանք կռիվ են գնում, եթե երկար խնդրես, փոխարենը՝ ցանկացած պահի պատրաստ են խռովություն բարձրացնելու և գահ բարձրացնելու նրան, ով կխոստանա մի կոպեկ ավելացնել իրենց ռոճիկին: Մեհմեդ Ալիի բանակը վարժել են ֆրանսիացի սպաները, նավատորմը վատը չի, ֆրանսիացի ինժեներներն օգնել են ջրանցք փորել Ծովի ու Նեղոսի միջև. նա կարող է ջրի վրայով զորքը Կահիրեից հասցնել Ալեքսանդրիա, ոչ թե թնդանոթներով հանդերձ քարշ գալ ցամաքով՝ կորցնելով մարդկանց ու ձիերը: Նրա որդեգիր Իբրահիմ փաշան կոտորեց Նուբիա փախած մամլուքներին. նրա ձեռքերն ազատ են և ուրախությամբ կլվանա հունական արյան մեջ:

Ես լսում էի՝ վախենալով որևէ բան բաց թողնել: Ելովսկու հետաքրքրությունը եգիպտական գործերի հանդեպ մատնում էր թագավորի շահագրգռությունն այդ հարցում, և քանի որ այդպես է, ուրեմն դրա մասին պետք է հայտնել Նավպլիոն: Զգուշությունից դրդված՝ այդպիսի նամակները փոստատուն չեմ հանձնում, Պետերբուրգում փոխանցում եմ մի մարդու, որը դրանք ուղարկում է ըստ պատկանելության: Որպես փոստատար հանդես են գալիս հույն նավապետներն ու ռուսական և օտարերկրյա նավերի նավաստիները: Մենք Ծովի ժողովուրդ ենք, մեր մարդիկ ունենք ողջ Եվրոպայի առևտրական նավերի վրա:

«Սուլթանը Մեհմեդ Ալիին համոզել է արշավախումբ կազմել հույների դեմ,- ասաց Ելովսկին:- Նա կոտրատվում էր պչրուհու պես ու սակարկում գնչուի նման՝ որդիների համար փաշայություն խնդրելով Կրետեում կամ Մորեայում, բայց հիմա համաձայնության են եկել»:

Ես վախենում էի մատնել ուրախությունս: Ուրեմն թագավոր կայսրն անհանգստացած է նրանց պայմանավորվածությամբ: Աստվա՜ծ իմ, վերջապե՛ս: Ստածում էի՝ նա է ինձ հետ խոսում իր կամեր-քարտուղարի բերանով: Այլ խոսքով, թագավորը վճռել է միջամտել պատերազմին, եթե Իբրահիմ փաշան ափ իջնի Մորեայում կամ Ատտիկայում:

Ելովսկու ձայնն ինձ երկիր վերադարձրեց: Հասկացա, որ ոչինչ էլ չի կատարվի: Երբ մենք խեղդվենք արյան մեջ, թագավորը թաշկինակը կտանի աչքերին, ինչպես մի քանի օր առաջ այգու ծառուղում մեռած թռչնակին

տեսնելով, կհառաչի ու կգնա իր ջերմոցում մորի քաղելու: Ինչ սպասես մի տղամարդուց, որն ամաչում է իր բարակ ոտքերից ու անդրավարտիքի տակ դնովի սրնքամկաններ է կրում: Որպես բժիշկ՝ հասու էի այդ մակադիրների գաղտնիքին, որն անհայտ էր նույնիսկ Ելովսկուն:

«Մարգարեություն կա. Հունաստանի կործանումը կգա Եգիպտոսից»,- ասաց նա՝ նմանակելով թագավորի կեղծավոր-անկիրք ձայներանգը:

Ես չեմ հավատում այդպիսի գուշակություններին: Դրանք կամ հետին թվով են հորինվում, երբ արդեն կատարվել են, կամ նպատակ ունեն վախեցնելու նրանց, ում վերաբերում են, բայց իմ մեջ դեռ հիմա էլ ապրում է փոքրիկ տղան, ում համար մեծ սփոփանք էր իմանալ, որ տապանասալերը դռների պես փակվում են բանալիով, ու եթե գտնես ճիշտ բանալին, մահվանից հետո կարելի է դուրս գալ գետնի տակից: Երեխա ժամանակ հին, ժանգոտած բանալիների մի ամբողջ հավաքածու էի կազմել՝ հույս ունենալով դրանց մեջ հետագայում գտնել անհրաժեշտը, ու կտակ էի գրել՝ խնդրելով դրանք դնել դագաղիս մեջ, երբ գա իմ մահվան ժամը: Այդ տղան գիտի, որ աշխարհում ամեն ինչ վատ է վերջանում:

Գիշերը երկար չէի կարողանում քնել: Ժամացույցի ճոճանակի շարժումն իմ ներսում ռիթմական փուլերով արձագանքում էր հանգուցյալ մորս պաշտած՝ Միխայիլ Ակոմինատի «Աթենքի ողբին»: Մայրս ստիպել էր անգիր անել այդ բյուզանդական դպիրի ողբը, որ համարյա հազար տարեկան է, բայց կարծես երեկ է գրվել:

Ես այն կրկնում էի բանաստեղծության պես. «Քո փառքը լեռներ էր շարժում, իսկ հիմա խաղում է միայն ամպերով: Երբեք չեմ տեսնի քաղաքը, որ ապրում է իմ սրտում: Ես Իքսիոնոսի նման եմ: Ես նույն կրքով սիրում եմ Աթենքը, ինչպես նա՝ Հերային, բայց նա երջանկություն ունեցավ գրկելու գոնե ստվերը իրենից փախչող աստվածուհու, իսկ ես նույնիսկ ստվերին չեմ տիրում: Ես Աթենքում եմ, բայց չեմ տեսնում Աթենքը: Տեսնում եմ միայն կմախքը՝ աղբի տակ կորած: Օ՛, մայր իմաստնության, որտե՞ղ են գանձերը քո: Ո՞ւր անհետացավ գեղեցկությունը քո: Ինչո՞ւ ամեն ինչ այստեղ կործանվեց ու վերածվեց ասքի...»:

Ես Աթենքում չեմ եղել, բայց հաճախ եմ պատկերացնում՝ ինչպես եմ իջնում նավից Պիրեոսում կամ Ֆալերոնում, աչքերով փնտրում Ակրոպոլիսը, բայց, ավաղ, փչում է աֆրիկյան քամին, նրա բերած փոշին պատում է երկինքը շեկ մեգով: Ու միջով լսվում է մուեզզինի աղաղակը:

Այուս պատկերն իմ առաջ հառնում է քնի և արթնության սահմանին: Անհասկանալի է՝ երազո՞ւմ եմ տեսնում, արթնանալուց մի վայրկյան առա՞ջ, թե՞ հիշում եմ աչքերս բացելուն պես: Երկրորդն ավելի հավանական է թվում: Երազներն անձայն են, իսկ ես լսում եմ տարածության մեջ խլացող ամբոխի ոռնոցն ու արյան հոտ առած թափառող շների կաղկանձը, որ բարձրանում են հնչյունները հսկա ծագարի պես իր մեջ քաշող անբարբառ երկինք: Ձոհերի ճիչերը չեն հասնում այնտեղ, ուր ես եմ:

Ես Հովսեփ Գաբբայի՝ Սմիռնացի հրեայի տանն եմ: Նա ինձ պես բժշկություն է սովորել Փարիզում, բայց այստեղ՝ Կոստանդնուպոլսում, արևմտյան գիտությունը պակաս վստահություն է ներշնչում, քան հրեական իմաստնությունը, ուստի Գաբբայը ներկայանում է որպես Մայմոնիդեսի հնագույն, ցեղակիցների փորձած դեղատոմսերին դիմող բժիշկ: Նա ինձ օթևան ու ապաստան է տվել, բայց չի դադարում հիշեցնել, որ հրեաները հույների մեղքով այդպիսի քիչ գիշերներ չեն տեսել:

Գաբբայն ու ընտանիքը քնած են, իսկ ես կանգնել եմ պատուհանի առաջ: Տունը հեռու է Ֆանարիոնից, որտեղ հիմա տղամարդկանց մահվանից առաջ բզկտում են դանակներով, կանանց բռնաբարում ու կոկորդներն են կտրում կամ էլ ստրկության քշում երեխաների հետ: Սպանությունները շարունակվում են արդեն հինգ օր, դրանց սկսել են վարժվել: Ծառան, շուկայից գալով, այնքան հանգիստ է պատմում առևտրականներից ու գնորդներից լսածը, ասես խոսքը փողոցային միջադեպի մասին է: Պատմողներից մեկը փողոցում մեռած հույն կնոջ էր տեսել՝ մերկ, հետանցքը շամփուր խրած: Ես չեմ կարողանում քնել, չեմ ուզում ուտել, բայց երբեմն ննջում եմ ու երբեմն հարձակվում ուտելիքի վրա, ինչից հետո սիրտ եմ թափում: Ստամոքսը չի ընդունում այն, ինչով թուլակամորեն գայթակղվել են աչքերն ու ռունգերը:

- Բարձր Դուռը, քանի դեռ կռվում էր Արևմուտքի դեմ, չէր կարող

առանց հույների,- ասում է Գաբբայը:- Օսմանները միայն կռվել գիտեն, դուք նրանց ֆինանսիստներ, ինժեներներ, դիվանագետներ, կառավարիչներ էիք տալիս, ընդ որում՝ նույնիսկ չէին պահանջում, որ ուրանաք ձեր հավատը: Հիմա եվրոպական միապետերը սուլթանի թշնամին չեն: Ինչ ձեզնից էին ստանում, թուրքերը կարող են վերցնել ուղիղ Եվրոպայից, ընդ որում՝ ավելի բարձր որակի: Նրանք երախտագիտություն չեն տածում ձեր հանդեպ, բայց էլի կհանդուրժեին, եթե ինքներդ չխախտեիք պայմանագիրը: Երբ Իպսիլանտին Օդեսայից դիմեց հունական ամբոխին, առաջին հերթին սկսեցին մորթել անմեղ մահմեդական հարևաններին: Ամբոխն ամեն տեղ նույնն է: Ստամբուլում դուք հնձում եք, ինչ հետերիստները ցանել են Վալախիայում, Մորեայում ու կղզիներում»:

Գաբբայն իրավացի է, ու ես ատում եմ նրան այդ իրավացիության համար:

«Դուք մեզ երբեք չեք հասկանա,- ասում եմ:- Ձեզ ազատություն պետք չի, որովհետև հայրենիք չունեք»:

«Ահա մեր հայրենիքը,- ցույց է տալիս նա արծաթով դրվագած փորագրաքանդակ դդումե տուփը՝ Թորայի գալարափաթեթով:- Մենք բավարարվում ենք մեր ազդեցությամբ ու հարստությամբ, բայց դա ձեր պատրիկներին քիչ է: Նրանք իշխանություն, փառք ու պատիվներ ցանկացան»:

Երկու թե երեք օր անց մենք գնում ենք նավահանգիստ: Ամեն ինչ վերջացած է, աղքատները մեռած են, հարուստները փրկագնվել կամ փախել են: Երեկվա մարդասպաններն ու բռնաբարողները հանել են դիմակները, թե դիմակ հագել ու կրկին դարձել սովորական մարդիկ, ինչպիսին մի շաբաթ առաջ էին, երբ նրանցից բլիթ էի առնում, շոյում նրանց երեխաների գլուխները: Քաղաքը լուռ ու դատարկ է, ինչպես մեծ տոնի հաջորդ առավոտյան: Քնատ զինվորները նավահանգստի մուտքի մոտ ուշադրություն չեն դարձնում մեզ. հրեական հագուստն անցաթուղթ է: Իսրայելի որդիները սուլթանի հավատարիմ հպատակներն են: Նոր արտոնությունների ակնկալությամբ նրանք փողոցներով քարշ են տվել տաճարի դարպասներին կախած պատրիարք Գրիգորիի մարմինն ու նետել ծովը: Մրցակիցների ու հալածողների կոտորածը տոն է նրանց համար:

Գաբբայի վարձած նավակն ինձ տանում է դեպի խարիսխ գցած ֆանսիական նավը: Առափնյա մեղմ զեփյուռ է փչում, արևը բարձրանում է ծովածոցի կայծկլտացող երեսին: Երբ թիակները դուրս են գալիս ջրից, ցայտերը մարգարիտների պես թափվում են թաթերից: Ափին տարածված նռնենիներն ու նարնջենիները ծաղկունքի մեջ են, և շաբաթվա ընթացքում առաջին անգամ սկսում եմ անարցունք լաց լինել՝ որ այգիները անուշ բուրում են, աշխարհը սքանչելի է, Աստված ամպրոպ ու փոթորիկ չի թափել այս քաղաքի վրա, հարկ չի համարել ցույց տալ, որ ամեն ինչ տեսնում է, ամեն ինչ լսում, ու ոչ ոք չի խուսափի իր պատժող աջից:

Աչքերս վառվում են, ինչպես ավազահողմից կամ անապատի չոր տապից: Նավակում նստել ու լալիս եմ առանց արցունքների:

Իսկ հիմա արթնանում եմ՝ արցունքների մեջ կորած:

Արագիլը

Ծառլ-Անտուան Ֆաբիե: Ապստամբի օրագիրը

Սեպտեմբեր-հոկտեմբեր, 1823 թ.

Կոստանդիսի զեկուցագրի հետ նամակ ստացվեց Ռուանից՝ հանգուցյալ մորս եղբորից: Ծրարում նաև ռուանյան «Մերկուրիից» մի թղթակցություն կար իմ մասին:

«Այսօր,- գրում էր անվանատառերի հետևում թաքնված հեղինակը,- հելլենասերները մեծ ազդեցություն ունեն Եվրոպայում: Ամենուր նվիրատվություններ են հավաքվում հույների օգտին, կամավորների հավաքագրումը համարյա բացահայտ է: Հասարակությունը դպրոցականների համար սեղմագրած Հերոդոտոս է կարդում, Կոլոկոտրոնիսին համեմատում են Միլտիադեսի հետ, Միաուլիսին՝ Թեմիստոկլեսի, սուլթան Մահմուդին ծաղրանկարներում պատկերում են Քսերքսեսի տեսքով և նոր Սալամին են կանխատեսում նրա համար: Լեոնիդաս թագավորի դերի թեկնածու դեռ չի գտնվել, բայց դա ժամանակի հարց է: Պատերազմը բորբոքվում է, պատմական համեմատությունների սիրահարների համար ամեն ինչ առջևում է: Այն բանից հետո, երբ ավստրիական բանակը Պիեմոնտում, իսկ մերոնք՝ Իսպանիայում, վերջ տվին հեղափոխությանը, այնտեղից փախած որոշ սահմանադրականներ իրենց ծառայությունն են առաջարկել Նավպլիոնի հունական կառավարությանը: Այդ դատարկախոսների ու գրչակների մեջ մի քանի փորձառու մարտական սպաներ կան, այդ թվում՝ ռուանցի գնդապետ Ծառլ-Անտուան Ֆաբիեն: Որպես մեր հայրենակից և Ստորին Սենայի դեպարտամենտում երկու կալվածք ունեցող անձնավորություն՝ նա արժանի է, որ իր մասին ավելի մանրամասն պատմենք:

1812 թվականին մարշալ Մարմոնը նրան Նապոլեոնին ուղղված զեկուցագրով Իսպանիայից ուղարկեց Ռուսաստան: Ֆաբիեն կայսեր մոտ ժամանեց Մոսկվայի ճակատամարտի նախօրեին և չնայած չէր ուզում մասնակցել, գեներալ Բոնամի հրաձգային հատուկ գնդի շարասյունով գրոհեց ռուսական դիրքերը: Նռնակը հաշմեց ոտնաթաթը, բայց նա մնաց բանակում, ծառայությունը շարունակեց համբարակային մասով և արդեն որպես հաշմանդամ աղ դրած մսին հրամանատարություն անելով՝ հասավ գնդապետի աստիճանի: Ի դեմս Լյուդովիկոս XVIII-ի՝ միապետության վերականգնումից հետո հարեց դավադիր-հանրապետականներին, իսկ երբ դավադրությունը բացահայտվեց, բանտարկությունից փախավ Պիրենեյներ, որտեղ կանգնեց Ռիեգոյի դրոշների տակ: Երբ ֆրանսիական զորքերը մտան Իսպանիա, հայրենակիցների դեմ կռվում էր հանուն իսպանական ազատության, իսկ Մադրիդի անկումից հետո որոշեց թուրքերի դեմ կռվել հույների ազատության համար: Նա ամենուր փնտրում է գերագույն ճշմարտությունը, որպեսզի իր սուսերով ծառայի նրան, բայց այստեղ նրբություններ կան: Նրա կարծիքով ճշմարտությունը պիտի հալածվի, և եթե երբեմն հաղթում է, ուրեմն դատապարտված է վերասերվելու ստի: Հետևելով այդ տեսությանը՝ Ֆաբիեն չի վշտանում պարտություններից և չի ուրախանում հաղթանակներով, բայց, ինչպես պատմում են նրան ճանաչողները, միշտ խոր քուն ու նախանձելի ախորժակ ունի: Հուսանք, որ բաշիբոզուկների ու ավազակների կռիվը, որի մեջ որոշել է խցկվել վերջիններիս կողմից, նրան չի զրկի ո՛չ առաջինից, ո՛չ երկրորդից»:

Կենսագրությունս հիմնականում ճիշտ էր շարադրված, իսկ լկտի ոճի հետ վաղուց ժամանակն է, որ հաշտվեմ: Հիմա ոչ մի ժուռնալիստ առանց հեգնանքի չի գրում նույնիսկ դիլիժանսի տակ ընկած կույրի մասին: Այդ հասարակությունը սիրում է մարդկությանը պատկերել ծաղրածուների ամբոխի տեսքով, որի միակ զբաղմունքը իրար հնարավորինս անիմաստ ու անմիտ թակելն է,- դրանով իրենց պարտեզը մշակող բաժանորդներին ապացուցելով, որ աշխարհը վերջնականապես խելքը թոցրել է: Եթե առաջ բուրժուան բավարարվում էր նրանով, որ ողջամտության տիպար էր տեսնում իր մեջ, ապա մեր օրերում ցանկանում է իրեն իմաստնության անոթ համարել:

Հույն կանայք հորիզոնական արհեստով չեն զբաղվում, Նավպլիոնում բոլոր սիրո քրմուհիներն իտալուհիներ ու սլավոնուհիներ են: Նրանց հետ վտանգավոր է գործ ունենալ. զորքը շատ է, շատերը վարակված են: Առաջին անգամ կին տեսա համարյա չորս ամսվա պահեցողությունից հետո: Միսիս Սյուզեն Փելիեմը նամակ էր բերել իմ լոնդոնյան բարեկամներից և շուտով ինձ համար պարզապես Սյուզի դարձավ: Եթե սանդալներով է, իսկ ես՝ բարձրակրունկ սապոգներով, նույն հասակի ենք:

Քանի տարեկան է՝ չգիտեմ: Տեսքից դատելով՝ մոտ երեսուն: Երբեմն մտածում եմ, որ՝ քառասունից ոչ պակաս, բայց երեսուն է երևում, իսկ հաջորդ օրը՝ քսանից մի քիչ ավելի, բայց մեծ է թվում: Կանայք մեզնից տարբեր հարաբերություններ ունեն ժամանակի հետ, կարողանում են կախարդել, ընտելացնել ու չափում են ոչ թե օրացույցով, այլ ապրած երջանկությամբ:

Անգլիայում նա և ամուսինը անգլիացի հելլենասեր ընկերներիս հետ նույն խմբակում էին եղել: Լորդ Բայրոնը նրանց կուռքն է, Հունաստանը սուրբ երկիր են համարում, հույներին՝ նահատակներ, որոնք քավում են մարդկային ցեղի մեղքերը, ինչպես Քրիստոսը խաչի վրա: Նրանց ուխտավորներ կկոչեի, եթե բերած ճամպրուկների քանակը չլիներ: Ավելի ուշ պարզվեց, որ, Սյուզիի զգեստներից բացի, դրանք հինգ հարյուր օրինակ ժողովրդական հունարենով Ավետարան են պարունակում: Գրքերը Նավպլիոնից ուղարկվեցին վերջերս թուրքերից հետ գրաված Աստրոս, որտեղ դոկտոր Փինքերթոնը Աստվածաշնչյան ընկերության բաժանմունք է բացել:

Սյուզին ճամփորդության համար տունիկայի տեսքով սպիտակ զգեստ էր պատվիրել՝ փեշը եզրակարած հունական քառանկյուն զարդանախշով: Անունը՝ մեանդրոս, նրանից իմացա, ինչպես և այն, որ այդ երկրաչափական նախշը խորհրդանշում է մարդկային կյանքը՝ երեսակված չորս առաքինություններով: Սյուզին դրանք թվարկել չկարողացավ, բայց եթե մեկ ուրիշը նրա փոխարեն առաջին մտքին եկածը կասեր, ապա նա հենց ինքն էլ ծիծաղեց սեփական հիմարության վրա: Աչքին թոզ փչելը նրանը չէ: Իր հանդեպ նույն հեգնանքով էլ պատմեց, թե ամբողջովին սևա-

զգեստ հույն կանանց տեսնելով՝ մտածել էր, որ այդպես են հագնվում հանուն ազատության զոհված կամ թուրքերի կողմից մահապարտված ամուսինների հիշատակին, մինչև որ այդպիսի այրիների քանակը չէր ստիպել կասկածել այդ տեսությանը:

Հունական զգեստս հիացմունք պատճառեց Սյուզիին: Մանրակրկիտ զննեց բոլոր կողմերից, ինչպես սպան՝ նորակոչիկին, ու հայտարարեց, որ իմ հագին ավելի լավ է նայվում, քան իրենց՝ հույների: Միստր Փելիեմը համաձայնեց կնոջ հետ: Նա միշտ և ամեն ինչում նրա հետ համաձայն է:

Նկատի ունենալով բրիտանական սնոբիզմը՝ նրան հայտնեցի իմ բարոնական տիտղոսի մասին, բայց ոչ ուղղակի, այլ մի տեսակ իմիջիայլոց, զվարճալի մի պատմությունով այն մասին, թե յակոբինյաններն ինձ յոթ տարեկանում ինչպես են մորս հետ վանական բանտ դրել, որտեղ սովորել էի մուկ վարժեցնել. բանտապահները որքան էլ ջանացին, չկարողացան նրանց խլել ինձնից: Մինչ Սյուզին ու ամուսինը ծիծաղում էին բանտապահներիս վրա, աստվածության հետ համեմատությունից խուսափելու համար բացատրեցի իմ կաղության պատճառը, ավելացնելով, որ քանզի Բայրոնը մանկուց է կաղ, մարմնական արատը նրբացրել է նրա հոգին, իսկ ես դրանով պարծենալ չեմ կարող:

Հաջորդ հանդիպմանը երեքով մտանք սրճարան, որի պատերը զարդարված էին Կապոդիստրիայի, Կոլոկոտրոնիսի, Միաուլիսի և Բայրոնի դիմանկարներով: Ըստ իր լոնդոնցի ընկերուհու պատմածի,- որի անունը պետք չէր տալ այս փառավոր հնգյակից վերջինի հետ առանձնահատուկ հարաբերությունների պատճառով,- Սյուզին մեզ հայտնեց, թե մի անգամ Բայրոնն ինչպես է Ծվեյցարիայում ուղեկցորդի հետ բարձրացել լեռները: Հանկարծ փոթորիկ է սկսվել: Անձրևից սլկուն դարձած լեռնալանջին ստիպված էր երկու ձեռքով կառչել քարերից, ձեռնափայտը չէր օգնում, այլ խանգարում էր: Ուղեկցորդն առաջարկում է տալ իրեն, բայց մերժում է ստանում: Ձեռնափայտի մեջ սուսեր էր պահված, և Բայրոնը սուսերով ձեռնափայտը ուղեկցորդին տալ չէր կարող:

«Գիտե՞ք ինչու»,- հարցրեց Սյուզին:

«Որ ուղեկցորդը չսպանի ու չկողոպտի իրեն»,- անմիջապես գտավ միստր Փելիեմը:

Սյուզին հոգնած հոգոցով հասկանալ տվեց, որ ամուսինը հերթական անգամ հաստատեց իր կարծիքը նրա մասին, բայց իմ մտքին էլ այլ բան չէր գալիս:

«Մի մոռացեք հանգամանքները: Փոթորիկ էր»,- հուշեց Սյուզին երկուսիս, սակայն ժպիտով միայն ինձ խրախուսելով:

Բայց ես չկարողացա արդարացնել նրա սպասումները: Ստիպված էր ինքը պատասխանել. «Երկաթը ձգում է կայծակները: Բայրոնը վախենում էր, որ կայծակը կսպանի ուղեկցորդին: Երբեք իրեն նման բան թույլ չէր տա»:

Միստր Փելհեմը ձեռքը շմփացրեց ճակատին, ասես մոծակ էր սպանում, ու սկսեց իրեն հանդիմանել անհասկացողության համար: Դրանով կրկին հարուցեց կնոջ դժգոհությունը: Նրան ցանկացած խոսակցություն իր անձին հանգեցնելու զարմանալի ունակություն մեղսագրվեց: Այդ պատրվակով Սյուզին ամուսնուն ուղարկեց հյուրանոց, իսկ մենք իջանք առափնյակով, ապա բարձրացանք Պալամիդայի բաստիոնները: Նա հիշում էր իմ կաղության մասին ու ջանում դանդաղ քայլել: Ճանապարհին պատմեցի ողջ Եվրոպայից ժամանող հելլենասերներից գումարտակ կազմելու և գլխավորելու իմ ծրագրի մասին: Սյուզին հետաքրքրությամբ լսում էր, իսկ երբ ճանապարհին հանդիպած երկու հրացանավոր հույն իրենց լեզվով բարևեցին ինձ, նրա հայացքում ակնածանք հայտնվեց:

«Դուք կրունկով սապոգներ եք հագնում, ձեր ոտքի պարագայում դա տառապանք է,- ասաց:- Եթե ինձ համար եք հագել, էլ չհագնեք: Առանց դրա էլ ձեզ ներքևից եմ նայում»:

Ամոթը վառեց ինձ, բայց ժամանակին հիշեցի, որ իր հանդեպ սեր հարուցում է նա, ով միաժամանակ և՛ հարգանք, և՛ խղճահարություն է առաջացնում, ոչ թե այդ զգացումներից միայն մեկը:

Ներքևում ճերմակին էին տալիս Նավպլիոնի տներն ու եկեղեցիները: Հունաստանի մայրաքաղաք լինելու նրա իրավունքն ապացուցում էին նավահանգստի կայմերի անտառը, պատշգամբների ճերմակ-երկնագույն դրոշների շարքերը, խելագար գները սրճարաններում և առափնյա բիլիարդանոցների թիվը: Բռնեցինք վերադարձի ճանապարհը: Սյուզին ճամփեզրով էր քայլում՝ մեջտեղը զիջելով ինձ: Ժամանակ առ ժամանակ

էլ դուրս էր գալիս ճանապարհից, և բարձր ու չոր խոտը, որին չէին հասել տեղիս այծերը, սկսում էր զնգալ ոտքերի տակ: Այդ զնգոցից սիրտս սեղմվում էր:

Սկսում էր մթնել: Ուղեկցուհուս գորշ ռեդինգոտն ու վզի նույնպիսի մկնագույն թաշկինակը ծուլվում էին արագ թանձրացող մթնշաղին: Թվում էր՝ դեմքն ինքնին է լողում երկրի երեսին, զուրկ ոչ միայն մարմնից, այլև նույնիսկ պարանոցից, ինչպես հրեշտակներինը՝ հունական եկեղեցիների որմնանկարներում: Կատարյալ նմանության համար միայն թևերն էին պակասում:

Պալամիդայի անկյունային աշտարակի վրա ազդանշանային կրակ վառեցին: Ի հակադրություն՝ գիշերը միանգամից ուժ առավ՝ սարալանջն ի վար կուլ տալով պատերի ու տանիքների գծագրությունը: Քաղաքը քնած չէր, բայց մեզ հասնող ձայները մթան մեջ բաժանվում էին իրենց արձակող մարդկանցից ու իրերից, և ապրում սեփական կյանքով: Նրանք լողում էին մեր շուրջը՝ զարմանահրաշ համադրություններով, ապշեցուցիչ միություններ կազմելով, որոնք անհնար են ցերեկվա լույսի տակ: Սյուզին նույնպես ապշած էր, թե ինչպես է դրանցով լցվում ճպուռների երգեցողությամբ ներծծված տաք օդը:

«Ծղրիդի՛կ, ծղրիդի՛կ, ինձ ծախիր քո ջութակը»,- երգեց նա:

Նոր էի հասկացել, որ չեմ ուզում բաժանվել նրանից, երբ իմ կացարանը տեսնելու ցանկություն հայտնեց: Թույլ չտվի երկար համոզել: Արդեն բնակարանում Սյուզին թուղթ ու թանաք խնդրեց ու մի երկտող գրեց ամուսնուն՝ բացատրելով, որ կարող է չանհանգստանալ իր համար: Ծառաս այդ նամակով ուղարկվեց հյուրանոց:

«Գրեցի, որ ինձ հրավիրել եք ընթրիքի, իսկ սուտ ասելը լավ չի,- ժպտաց Սյուզին:- Թող դա ճշմարտություն լինի»:

Նրա փոքրիկ եղունգը կտտաց սեղանին դրված գինու շշին:

Մինչ բակում լվացվում էր, գինուն գումարեցի հաց, պանիր, ծնեբեկ, ճաշից մնացած տապակած սառը սիսեռի ափսեն: Ու դուրս եկա նրա հետևից: Ծառաս դեռ չէր վերադարձել, ինքներս մեկմեկու ձեռքերի ջուր լցրինք սափորից և մեզ ուխտի գաղտնի ծես կատարող դավադիրներ զգացինք:

Ճաշելիս Սյուզին խոսք բացեց Սոֆոկլեսի ողբերգությունների մասին, ավելի շուտ՝ թե դրանք ինչ ազդեցություն են գործում հոգու վրա, վեհացնո՞ւմ են, թե՞ մաքրում: Ասացի, որ նույն մեդալի երկու երեսն են. հոգին մաքրելը նպաստում է վեհացմանը և հակառակը,- բայց Սյուզին սկզբունքային տարբերություն էր տեսնում դրանց միջև: Ի հաստատումն՝ օրինակ բերեց իր զարմուհիներին, որոնցից մեկը մաքուր է հոգով, բայց չի գնահատում պոեզիան, այն դեպքում, երբ մյուսը պաշտում է Բայրոնին, բայց դրա հետ միասին՝ հազվագյուտ խոզ է: Այդ փաստի վրա Սյուզին փորձում էր մի ամբողջ տեսություն կառուցել, բայց ծայրը ծայրին չէր գալիս: Վերջնականապես խճճվելով՝ նա հանկարծ վեր կացավ ու համբուրեց շրթունքներս:

Թվում էր՝ համբույրն առավելագույնն է, որ կարող էի հուսալ այդ օրը, բայց Սյուզին, չդադարելով լեզվով բանել բերանիս մեջ, սկսեց արձակել ժիլետս: Երկրորդ կոճակի վրա թողնելով այդ ոչ դյուրին գործը ու գոչելով «Ես ապրե՛լ եմ ուզում», ինքը սկսեց հանվել: Անպատեհ վերադարձած ծառային դուրս արեցի սենյակից:

«Սա ձեզ անհարմարություն չի՞ պատճառում»,- հարցրի՝ խեղված ոտքս սապոգից դուրս քաշելով:

Սյուզին կեղծ քնքշանքով շոյեց թաթս: Այդպես հյուր եկած երեխան է շոյում տիրոջ շանը, պարտադրված ծնողների հորդորով, բայց կասկածելով, որ չի կծում:

Մենք կրկին ծուլվեցինք համբույրի մեջ ու դանդաղ, ժամանակ առ ժամանակ ճանապարհից շեղվելով՝ սկսեցինք շարժվել դեպի մահճակալը: Ես շարժումն աննկատ ուղղորդում էի անհրաժեշտ կողմը: Սյուզին միայն մի անգամ շուրթերը պոկեց իմ շրթունքներից, որ նորից ասի. «Ես ապրե՛լ եմ ուզում»: Լռեցի՝ հասկանալով, որ պետք չի պատասխանել. նրա բառերն ինձ չէին ուղղված, այլ միստր Փելհեմին:

Մահճակալի վրա ձեռքս վերցրի նախաձեռնությունը. պոկեցի հագուստն ու անմիջապես տիրեցի նրան: Սյուզին փորձեց երկարաձգել նախերգանքը, բայց, ի հեճուկս իմ ցանկությունների, հասցրեց միայն մոմը փչել: Գլխի չէի ընկել մոմակալն ավելի հեռու դնել, որ շունչը չհերիքի: Ես ուզում էի մերկ տեսնել նրան, նա՝ վայելել, չհոգալով, թե ինչ տեսք ունի:

Մերձեցումից հետո անշարժ պառկած էր: Հիմա կիսախավարին վարժված աչքերով առանց մոմի էլ կարող էի տեսնել նրան: Պատուհանից այն կողմ տարածված աստղաշատ երկինքը բավարար լույս էր տալիս դրա համար: Գնահատեցի կրծքի ձևը, բայց այդպիսի լույսի տակ անհնար էր հասկանալ՝ ինչ գույնի են պտուկները՝ վարդագույն, թե դարչնագույն: Ցայլքի բուսականությունը մի ոչ մեծ իջվածք ուներ այնտեղ, ուր պորտով մտովի տարած ուղղահայաց գիծը հատում էր ազդրերի վերին մասերը միացնող երևակայական գիծը: Սյուզին պառկած էր մեջքի վրա, այդ իջվածքը փորատակի փափկամազ եռանկյունը նմանեցնում էր սև սրտի:

Նա արմունկին հենվելով՝ շրջվեց իմ կողմը: Ինձ համար շոյիչ մտերմիկ խոստովանությունների էի սպասում, բայց լսեցի երգեցիկ արտասանված երկու անգլերեն բանաստեղծական տող. «Օ՜, սքանչելի Հունաստան, ողբալի բեկոր հինավուրց փառքի: Դու չկաս, բայց դու անմահ ես»:

«Բայրո՞ն»,- հարցրի ես, չնայած կարելի էր չհարցնել:

Տեսնում էի, որ նրա պոռթկումը չի սպառվել, պատրաստ է շարունակելու, բայց վստահ չի՝ ինձ դուր կգա՞ կտրուկ անցումը սիրուց քաղաքական լիրիկային:

Խնդրեցի շարունակել: Ձայնը ամրացավ. «Ո՞վ կառաջնորդի աշխարհով մեկ սփռված քո որդիներին: Ո՞վ կխախտի ստրկության նրանց սովորությունը, որ տևում է այսքան երկար,- արտասանեց նա՝ ֆրանսերեն թարգմանելով իր կարծիքով դժվարըմբռնելի բառերը, բայց դրա հետ և ռիթմից չընկնելով:- Սիրտս կարոտում է հայրենիքիս, հայրենի տունը: Սիրտս ուրախ է խփում հայրենի օջախի կողքին, բայց դուք, հավերժ թափառիկնե՛ր, մեկնեք Հունաստան, տեսեք երկիրը, որ տխուր է ձեզ պես: Այցելեք այդ սրբազան հողը, այդ կախարդական անապատները: Միայն չդիպչեք նրա վեհության բեկորներին: Թող ձեր ձեռքը խնայի հողը, որն առանց այն էլ շատերն են կողոպտել»:

Վերջին տողերում խոսքը Մորեայից հնությունների ապօրինի դուրսբերման մասին էր: Սյուզիին բացատրեցի, որ չնայած այդ գբաղմունքը հանցավոր է հայտարարվել, և կառավարությունը չենթարկվողներին սպառնում է դաժան պատիժներով, Նավպլիոնում համարյա բացահայտ

են վաճառում հարթաքանդակների և արձանների բեկորները: Աստիճանավորները մաս ունեն իրենց իսկ արգելած առևտրի եկամուտներից:

«Հույները հայտնի խարդախներ են, չխաբվեք նրանց հաշվով»,- չափավորեցի նրա ոգևորությունը:

Այնպես նայեց, ասես հայհոյանք էր լսում:

«Նրանց փչացրել է բազմադարյա ստրկությունը,- ավելացրի:- Դաժան են, նենգ, հակված գողության ու խաբեության»:

«Այդ դեպքում՝ ինչո՞ւ ես նրանց հետ»,- հետևեց հարցը:

«Որովհետև,- պատասխանեցի,- մեծահոգի են, ազնիվ, խիզախ, պատրաստ անձնազոհության»:

«Երկրորդը հակասում է առաջինին»,- նկատեց Սյուզին:

Մարմնի՝ կենդանական աստիճանի հասնելուց հետո երջանիկ կերպով տրամաբանորեն մտածելու ունակություն էր գտել: Սոֆոկլեսի մասին նրա դատողություններում ոչ մի տրամաբանություն չկար:

«Այո՛,- խոստովանեցի ես,- բայց հենց կյանքն է այդ հակասությունը դրել նրանց մեջ, ես չեմ հորինել: Հույներն ազնվագույնն են մարդկանցից, և հենց իրենք էլ ավազակներ ու գողեր են, միայն թե խորհուրդ չեմ տալիս փնտրել այդ հակադրությունների միջինը: Անիմաստ է դրանք գումարել, ապա գումարը բաժանել երկուսի, պետք է ընդունել երկու թեզիսներն էլ, եթե նույնիսկ հակասում են իրար: Ես եկել եմ այստեղ հանուն մարդկանց ազատության, որոնք այնքան լավը չեն, որքան ինձ թվում էր հեռվից, և պետք է սիրել այս երկիրը՝ հիշելով այն, ինչն իրենք՝ հույները վաղուց մոռացել են: Հունաստանը սովորեցնում է ապրել ճաքած սրտով»:

Վաղուց ոչ մեկի հետ այդպես անկեղծ չէի եղել: Սկսելով՝ այլևս չկարողացա կանգ առնել և կողքիս պառկած կնոջ հանդեպ երախտագիտության ալիքի վրա պատմեցի, թե ինչպես էի մի տարի առաջ, Պիրենեյներում, Իսպանիայի ու Ֆրանսիայի սահմանին կանգնել Բեոբիյսկյան կամրջին, իսկ իմ կողքով շարասյուն առ շարասյուն անցնում էր ֆրանսիական բանակը, որ խեղդի իսպանական ազատությունը: Լսում էի՝ զինվորներն ինչպես են խոսում իմ մայրենի լեզվով, ու խեղդվում էի ամոթից:

Սերմդ թափելով՝ հոգիդ ես դուրս թափում: Դրանք մերձավոր սուբս-

տանցներ են, բայց կանայք դրանք պատրաստ են իրենց մեջ առնելու միայն այդպիսի հաջորդականությամբ: Ով սկսում է խոստովանությունից, մնում է և՛ առանց խոստովանահոր, և՛ առանց սիրուհու:

«Իսպանիայում,- ասում էի,- ես՝ ֆրանսիացիս, կռվում էի ֆրանսիացիների դեմ, ինչի համար փարիզյան թերթերն ինձ հայրենիքի դավաճան հռչակեցին: Մենք սովորել ենք հայրենիքն ամենագլխավորը համարել այն ամենից, ինչի համար կարելի է մեռնել, բայց տարբեր ժողովուրդների համար դրանք տարբեր են, և եթե նրանից բարձր ոչինչ չկա, այդ դեպքում ո՞ւր է բոլոր մարդկանց համար միասնական ճշմարտությունը: Չէ՞ որ այն չի կարող չլինել: Մի՞թե արյան կանչը մեր երակներում դատապարտված է խլացնելու խղճի ձայնը: Երբ ինձ համոզում են, որ խիղճը նույնպես հպատակություն պիտի ունենա ու որոշ դեպքերում ավելի լավ է լռի, ինձ գայլ եմ զգում շների ոհմակում»:

«Դու այն ձեռնափայտի պես ես: Ներսում պողպատ է»,- շշնջաց Սյուզին:

Մեր մարմինները կրկին ծուլվեցին, բայց երբ ամեն ինչ ավարտվեց, շարունակեցի այնտեղից, որտեղ ընդհատել էի. «Ինձ հավատացնում են, թե միայն կրոնական ընդհանրությունն է եղբայրացնում մարդկանց: Բա չէ՞: Հելլենասերներն այստեղ են գալիս ողջ աշխարհից, մեր մեջ ֆրանսիացիներ կան, ամերիկացիներ, իտալացիներ, գերմանացիներ: Լյութերականներ, կաթոլիկներ, իմ պես անաստվածներ»:

«Դու աթեի՞ստ ես: Ինչպես յակոբինյանները՞ը»,- ապշեց Սյուզին:

Ես դա հաստատեցի, և նա գործի դրեց իմ գրկում ձեռք բերած տրամաբանությունը. «Յակոբինյանները երեխա ժամանակ քեզ բանտ են դրել մորդ հետ: Մի՞թե դա հետք չի թողել ողջ կյանքիդ վրա»:

«Իմ մեջ ավելի մեծ հետք է թողել այն, որ դա վանական բանտ էր,- պատասխանեցի ես, հետո ավարտեցի նրա հարցով ընդհատված միտքս:- Մենք՝ հելլենասերներս, այստեղ փնտրում ենք այն վայրն աշխարհում, որտեղ ճշմարտությունը կախված չի լինի տոհմից, իսկ եղբայրությունը՝ դավանանքից»:

«Դժվար թե դա դուր գա հույներին,- եզրակացրեց Սյուզին և անմիջապես էլ հայտարարեց, որ ուտել է ուզում: Ընդսմին, այնպիսի տեսք ու-

ներ, ասես հաճոյախոսություն է անում ինձ:

Ըստ էության՝ հենց այդպես էլ կար: Նա սովածացել էր, ուրեմն ինձ որպես լավ սիրեկան էի դրսևորել:

Թև առած՝ բերեցի սեղանին մնացած հացն ու պանիրը, և իմ ձեռքով, ինչպես երեխային, կերակրելով նրան՝ փոքրոգաբար հիշեցրի կտակի մասին, որ կազմել էի այն դեպքի համար, եթե զոհվեմ այստեղ. մարմինս Ֆրանսիա չտանել, այլ թաղել Հելլադայի հողում:

Սյուզին դադարեց ծամել: Որոշեցի, որ նրան անհարմար է ծնոտներով աշխատել այդպիսի խոստովանությունների պահին, ու սխալվեցի: Ինչպես կար՝ տկլոր անցավ վրայովս, սեղանից վերցրեց իմ բրեգետը, բայց կափարիչը բացել չկարողացավ: Ես բացեցի՝ նկատելով, որ եթե ժամն էր ուզում իմանալ, կարող էր հարցնել, կասեի:

«Ու կխաբեիր: Որ ավելի երկար մնամ»,- անժպիտ պատասխանեց նա:

Սյուզիին ուղեկցեցի հյուրանոց, ապա մարմնիս մեջ երանելի թեթևություն զգալով՝ վերադարձա, ու հանկարծ հասկացա, որ պետք է խնդրագիր ուղարկել ներքին գործերի նախարարություն, որ իրենց վրա վերցնեն Նավպլիոն ժամանող հելլենասերների բնակարանների վարձը: Մի ամիս առաջ արդեն խնդրել էի ու մերժում ստացել, իսկ հիմա հասկացա, թե հատկապես որն էր իմ սխալը: Քառասուն տարեկանում, խեղված ոտքով ու ճերմակող մազերով՝ ինձ երիտասարդ էի զգում: Հեշտանքի բռնակալությունից ազատագրվելը նորացրել էր մարմինս, թեթևացած անդամներս ուղեղին թույլ էին տալիս աշխատել ողջ ուժով: Ահա, մտածեցի, այլաբանությունն այն փոփոխությունների, որ կկատարվեն Հունաստանի հետ՝ սուլթանի իշխանությունից ազատագրվելուց հետո:

Հոկտեմբերի սկզբին միստր Փելհեմը սկսեց նավ փնտրել, որը Անգլիայի ճանապարհին կանգառ կաներ Պիրոսում: Նա և Սյուզին չէին կարող տուն վերադառնալ առանց Պարթենոնի սրբազան ավերակներին խոնարհվելու, իսկ առաջ դա անհնար էր: Աթենքը գարնանից մերն է, սակայն Ակրոպոլիսում նստած թուրք սիփահիներն անձնատուր են եղել ընդամենը երկու շաբաթ առաջ:

Հարմար նավը գտնվեց, և Սյուզին սկսեց կապել ճամպրուկները: Բաժանմանը սպասելով՝ նյարդայնանում էի, բայց համոզում էի ինձ, որ դա տառապանքի պատճառ չէ, մեկ է, մեր սիրավեպն անդառնալիորեն գնում էր դեպի վերջաբան: Դեռ մեկ-մեկ հանդիպում էինք, չնայած ճաքած սրտով արդեն սկսել էի հոգնեցնել, և նա ինչ-որ ավելի ամբողջական բան էր ցանկանում:

Մեկնելուց մի շաբաթ առաջ Փելիեմ ամուսինները մի մաշված կառքով, որի համար նրանցից թագավորական կառեթի գումար էին պոկել, մեկնեցին Արգոս՝ նայելու այնտեղի ավերակներն ու հիանալու տեսարաններով: Ես չպնդեցի, որ ուղեկցեմ, իրենք էլ չհրավիրեցին: Սյուզին ապահովության համար հարսանքավորի պես պճնված երկու բեղավոր անբան էր հրավիրել, նրանցից, որ օրեր շարունակ թրև են գալիս հյուրանոցի առաջ՝ հուսալով որևէ բան պոկել կենվորներից: Վարձակալած ձիերին գումարած՝ նրանք էժան չէին նստել միստր Փելիեմի վրա, ի լրումն՝ գումարի առյուծի բաժինը կանխավճար էին պահանջել: Մեկը՝ ոմն Անգելոս, ժամանակին ապրել էր Կորֆուում, ու քիչ թե շատ կարողանում էր անգլերեն բացատրվել: Սյուզիին գերել էր վշտալի պատմությամբ այն մասին, թե ինչպես է մորթել իրեն դավաճանած գեղեցկուհի կնոջն ու ստիպված փախել հարազատ վայրերից՝ սրտում տանելով հանգուցյալի անեղծ կերպարը, որին շարունակում էր հավատարմորեն սիրել: Այստեղ հաճախ են այդպիսի պատմություններ անում զբոսաշրջիկներին, բայց Սյուզին հպարտանում էր, որ տղան իր առաջ բացել է տառապյալ սիրտը: «Իմ եռակի թորած Անգելոսը»,- ասում էր նրա մասին, ինչպես շատ մոտ մարդու մասին են խոսում: Սյուզին այդ հունական արտահայտությունը հենց նրանից էլ լսել էր: Այն տղամարդկանց մասին է, որոնք շատ բան են կրել կյանքում ու եռակի թորմամբ հասել մաքրագույն անիսոնի օղու թնդության:

Հույները հրաշալի նավազներ են, բայց՝ անպետք հեծելակներ: Երբ առավոտյան եկա հյուրանոց՝ Սյուզիին ճանապարհելու, Անգելոսը, ալբանական թութակային հագուստով, ձին խաղացնում էր նրա շուրջը, ու թամբին նստել էր, ինչպես շունը՝ ցանկապատի վրա: Մեջքին կարճացված փողով հրացան էր:

Սյուզին նրան օրինակ բերեց, թե՝ շատ ավելի բնական է նայվում, քան ես: Չհարցրի՝ ինչու, պարզապես համաձայնեցի. այո՛, հույներից շատերն են ալբանացիների պես հագնվում: Տառապանքով՝ աչքերը ճակատը գցեց, ինչպես անում էր իմ ներկայությամբ ամուսնու հետ խոսելիս: Պարզվեց, որ նորից այնպես չեմ հասկացել: Վերջին շաբաթներին անընդհատ սխալ էի հասկանում նրան:

«Բաղաքլորը նախշուն է բադից,- բացատրեց:- Ինչո՞ւ ոչ թե դուք մեզ, այլ մենք պիտի ձեզ գայթակղենք մեր փետուրներով: Արու թռչուններն էգերին գայթակղում են վառվռուն գույներով, նույնը և ալբանացիներն ու հույները: Տղամարդիկ գույնզգույն հագուստներ են հագնում, կանայք՝ սև»:

«Դա մահմեդական սովորույթ է: Երկուսն էլ թուրքերից են փոխ առել,- բնության հետ Անգելոսի մերձության նրա պատրանքները ցրեցի ես ու կրկնեցի, որ չեմ վստահում նրան և վտանգավոր եմ համարում այդ ուղևորությունը:

«Ես ապրել եմ ուզում»,- կառք նստելով՝ պատասխանեց Սյուզին:

Այդ բառերը, որ նրանից լսել էի այլ հանգամանքներում, խոցեցին ինձ: Կարծում եմ՝ հենց այդ էլ ուզում էր: Աչքերը գործնական մշուշվեցին: Հասկացա, որ Սյուզին փորձում է հավերժական ուխտավորի դերը՝ պատրաստվելով, ինչպես Բայրոնն էր սովորեցրել, Նավպիլիոնից դուրս գալուն պես նույնքան տխուր հայացք գցել երկրին, որքան տխուր էր այդ երկիրը:

Ձիերը շարժվեցին:

Միսթր Փիլիեմը հրաժեշտ տալով բարձրացրեց շքագլխարկը, բայց Սյուզին չբարեհաճեց նույնիսկ ձեռքով անել, չխոսելով արդեն օդային համբույրի մասին: Ինքնամոռաց սեթևեթում էր Անգելոսի հետ, որը ոչ թե կառքի հետևից էր վարգում ընկերոջ պես, այլ կողքից: Մորթված կինը, որի կերպարը անշեջ շողում էր նրա սրտում, առանձնակի հրապույր էր տալիս նրանց սիրախաղին:

Շուտով ողջ հնգյակը, կառապանն էլ հաշված, անհետացան փողոցի անկյունադարձին, բայց, ինչպես ավելի ուշ պարզվեց, հեռու չէին գնացել: Հաջորդ օրը իմացա, որ վատ կանխազգացումներս չէին խաբել:

Նավպլիոնից երեք-չորս մղոնի վրա կառքի անիվը թռել էր: Ոչ ոք

չէր տուժել, ասենք, անիվն էլ ընդհանուր ջանքերով դրել էին տեղը, բայց սռնուն ամրացնել չէր հաջողվել: Կառապանը գնացել էր մոտակա գյուղ՝ օգնություն կանչելու, ուղևորներն այդ ընթացքում մի կտոր հաց էին կերել, հետո Սյուզին որոշել էր զբոսնել մերձակայքում: Ոչ հեռվում ընդարձակ ճահճուտներ էին սկսվում, որտեղ Հերակլեսը մենամարտել էր Լերնեյան հիդրայի հետ. հենց դա էլ գրավել էր նրան: Ուզում էր ալբոմում տեղիս բնապատկերների մի քանի ճեպանկար անել: Միստր Փելհեմը որոշեց ուղեկցել կնոջը, Անգելոսը պոչ եղավ նրանց, իսկ երկրորդ պահնորդին թողեցին կառքն ու ձիերը հսկելու:

Սյուզին ու Անգելոսը սկսեցին քիչ-քիչ հետ մնալ միստր Փելհեմից, բայց դեռ նրա տեսադաշտում էին, երբ մի միայնակ կաղնի հանդիպեց, չորացած գագաթի երկճեղիում՝ արագիլի բույն: Ամենազարմանալին այն էր, որ հոկտեմբերի վերջին տանտերը բնում էր, ոչ թե մյուսների պես թռել էր Եգիպտոս: Կամ հազվագյուտ տաք աշունն էր փչացրել ներսում դրված բնական օրացույցը, կամ հունական գորտերն էին ախորժալի Մեհմեդ Ալիի տիրույթներում ապրողներից, և ափսոսացել էր բաժանվել նրանցից: Գուցե թուլացել էր ծերությունից ու հասկանում էր, որ չի հասնի Նեղոսի ափերը, կամ էլ թևն էր վնասվել, չգիտեմ: Անծայն, որ չվախեցնի արագիլին, միսթր Փելհեմը սկսեց նշաններով կանչել կնոջը՝ հասկանալ տալով, որ հետաքրքիր բան է գտել: Սյուզին դժկամորեն արձագանքեց, բայց մոտենալով՝ միանգամից հասկացավ, որ իզուր չէին կանչում: Հանեց ալբոմը, զինվեց մատիտով ու պատրաստվեց նկարել՝ շշուկով հիանալով սքանչելի թռչունով: Այդ պահին թիկունքից դղրդաց կրակոցը: Տերևները խշշացին, գնդակահարված արագիլը ծանր ընկավ գետնին:

Սյուզին ճչաց, ցած գցեց նկարչական պիտույքներն ու ափերով փակեց դեմքը, իսկ միստր Փելհեմը շրջվելով տեսավ ինչպես է Անգելոսն իջեցնում ծխացող հրացանը: Կատաղած՝ ձեռնափայտն իջեցրեց գլխին և անմիջապես էլ դանակով փորին պատասխան հարված ստացավ:

Սրիկան վազեց-հասավ իր ձիուն, թռավ թամբին ու անհետացավ: Երկրորդ պահնորդը չփորձեց բռնել նրան: Սյուզիի օգնությամբ վիրավորին հասցրեց ճամփեզր, բայց նա ավելի շուտ մեռավ, քան կհայտնվեր կա-

ռապանը՝ գյուղի դարբնի հետ: Կառքը նորոգեցին, ու գիշերվա դեմ միստր Փելիեմը մեռած վերադարձավ Նավպլիոն:

Վերջին շնչում կնոջը խնդրել էր մարմինը չտեղափոխել Անգլիա, այլ թաղել Հելլադայի հողում: Սյուզին այդպես ասաց, բայց չեմ հավատում: Կարծում եմ՝ ոչ այնքան մարմնի անխուսափելի զմռսման հոգսերն էին վախեցրել, որքան մի ամիս հանգուցյալի կողքին լինելու անհրաժեշտությունը, որին դավաճանել էր: Ինչպես շատերին, նրան էլ, ըստ երևույթին, թվում էր, որ մահվանից հետո մարդուն հայտնի է դառնում այն, ինչ կենդանության օրոք իմանալ չէր կարող: Այդ դեպքում վախենալու բան ուներ:

Անգլիական գերեզմանատուն չունենալու պատճառով Փելիեմին թաղեցինք կաթոլիկ գերեզմանոցում, մռայլ նոճիների տակ, շրջապատված վենետիկցիներով, որոնք ժամանակին տիրել էին այդ հողին: Ես ինձ վրա վերցրի թաղման բոլոր հոգսերը, Սյուզին՝ ծախսերը:

Գերեզմանոցից գնացինք հյուրանոց: Սյուզին առաջ դրան խան էր ասում՝ չկասկածելով, որ հույներն այն փոխ են առել թուրքերից, բայց հիմա բոլոր հունարեն բառերը, որ ջանադրաբար սովորում էր ու պարծենում ինձ հետ խոսելիս, չքացել էին նրա բառարանից:

Հոգեհացի սեղանը բացված էր երկու հոգու համար: Ես Սյուզիիին տվեցի միսթր Փելիեմի մահվան վկայականը, որ ստացել էի ներքին գործերի նախարարությունից, որպեսզի Անգլիայում ամուսնու ազգականներին ներկայացնելու բան ունենա, բայց շնորհակալության չարժանացա: Այն ամենը, որ անում էի նրա համար, ընկալում էր հավուր պատշաճի:

Մեկական գավաթ գինի խմեցինք, և Սյուզին ինձ տվեց այն հարցը, որին վաղուց էի սպասում. «Անգելոսն ինչո՞ւ սպանեց արագիլին»:

«Դուրը չէր եկել, որ հիանում ես նրանով»,- պատասխանեցի ես:

Դա հետաքրքրեց նրան. «Ահա՛ թե ինչ: Ինձ խանդել է արագիլի հանդե՞պ»:

«Ո՛չ,- հիասթափեցրի նրան,- պարզապես հույներն արագիլ չեն սիրում, որովհետև թուրքերը հարգանքով են վերաբերվում նրանց: Ասում են՝ արագիլներն ամեն երեկո նրանց կոչում են փառաբանելու Ալլահին: Մայրամուտին արագիլը երկինք է նայում ու սկսում է բարձր շխկացնել կտու-

ցը: Խփում, խփում, դադարում է, կախում գլուխը, սպասում է, նորից բարձրացնում ու նորից շխկացնում: Ճիշտ ինչպես ուղղափառներին իրիկնային աղոթքի կանչող մուեզզինը»:

«Եվ դրա համար Անգելոսը գնդակահարե՞ց նրան»,- կասկածեց Սյուզին:

Բացատրեցի, որ երբ մի միապետը չի պատերազմում մյուսի դեմ, այլ ժողովուրդը՝ ժողովրդի և կրոնը՝ կրոնի, այդ պատերազմը մարդուն վերադարձնում է նախնադարյան վիճակի: Այդ ժամանակներում ամեն ցեղ ուներ իր աստվածը՝ որևէ գազանի կամ թռչունի տեսքով, և մի ցեղի ռազմիկները հետապնդում էին մյուսի հովանավորին, որ թշնամուն զրկեն պաշտպանությունից:

Սյուզին զայրացած ընդհատեց՝ ասելով, որ Անգելոսը միայն արագիլ չի սպանել:

«Նաև կնոջը,- չդիմացա ես:- Ամուսինդ գիտեր՝ ում հետ գործ ունի: Պետք չէր խփել ձեռնափայտով: Հույները հպարտ ժողովուրդ են»:

«Ատում եմ այդ վայրենիներին»,- պոռթկաց Սյուզին:

«Պատկերացրու մի մարդու,- առաջարկեցի նրան՝ հաղթահարելով գայթակղությունը հիշեցնելու, թե ինչպես էր հիանում բնության հետ նրանց մերձությամբ,- որի ձեռքերն ու ոտքերը ողջ կյանքում կապված են եղել, ու հանկարծ ազատվել է շղթաներից: Առաջին վայրկյանին անդամները արտասովոր թեթև են թվում, և անսովորությունից դրանցով վայրի շարժումներ է անում: Մենք՝ հելլենասերներս, հավատում ենք՝ դա կանցնի»:

«Քո տեղը ես ինձ հելլենասեր չէի կոչի,- ասաց Սյուզին:- Հելլենասերը նա է, ով սիրում է հույներին: Մի՞թե դու սիրում ես նրանց»:

«Մի՞թե ոչ»,- զարմացա ես:

«Ո՛չ,- պնդեց նա անսպասելի թշնամանքով,- դու սիրում ես միայն նրանց վերաբերյալ քո երազանքները: Բայց եթե անկողնում սկսես քեզ բորբոքել իմ մասին երազանքներով և ձեռքով բավարարես քեզ, չէ՞ որ դա չի նշանակի, թե սիրում ես ինձ: Կնշանակի՝ քեզ ես սիրում»:

Ես չպատասխանեցի, և նա փոխեց թեման. «Դու բողոքում էիր, որ

հույները չեն վստահում օտարերկրացիներին ու սպայական պաշտոն չեն տալիս քեզ: Բայց չէ՞ որ դու ազնվական ես, պետք է որ կալվածքներ ունենաս Ֆրանսիայում: Ի՞նչն է խանգարում վաճառել դրանք: Ստացած փողերով կկարողանայիր գումարտակ կամ գունդ կազմել Բայրոնի պես, և ուզածիդ չափ հրամանատարություն անել»:

Ես համաձայնեցի, որ գաղափարը լավն է, բայց քանի որ Իսպանիայում կռվել եմ ֆրանսիական բանակի դեմ, Ֆրանսիայում իմ ողջ ունեցվածքի վրա արգելանք է դրված՝ որպես պետական հանցագործի սեփականության:

«Ես Հունաստանի կառավարության ծառայության մեջ եմ, կամավորներին վարժեցնում եմ զինվորական գործին: Կառավարությունն ինձ ռոճիկ է տալիս,- բացահայտեցի եկամուտներիս աղբյուրը:- Չնչին բան է, բայց Ֆրանսիայում մի փոքրիկ թոշակ ունեմ: Հորեղբայրս իմ վստահագրով այն ստանում է Ռուանում ու փոխանցում ինձ: Թոշակը ռոճիկի հետ բավականացնում է ապրելուն: Գնդին չի հերիքի»:

Սյուզիի դեմքին այնպիսի արտահայտություն հայտնվեց, ասես հաղթաթուղթ էր ստացել: Ծինծու զարմացավ՝ ինչպե՞ս, Իսպանիայում կռվել եմ իմ թագավորի դեմ, իսկ նա շարունակում է ինձ թոշա՞կ վճարել:

Պատասխանեցի, որ թոշակս արյամբ եմ վաստակել, թագավորն իրավունք չունի խլելու, բայց արդեն պատրաստ էր նրա նոր հարցը.

«Եվ դու՝ հանրապետականդ, փող ես վերցնում թագավորի՞ց»:

«Այդ փողն այն հարկերից է, որ նրան վճարում է ժողովուրդը,- արդարացա:- Ես օգնում եմ հույներին, իսկ ֆրանսիացի ժողովուրդը համակրում է հույների ազատագրական պայքարին»:

«Ոչ այնքան, որ ապրուստդ հոգա,- հակադարձեց Սյուզին:- Հույները ճիշտ են անում, որ չեն վստահում քեզ իրենց հրամանատարությունը: Վատ սիրեկանը չի կարող լավ սպա լինել»:

Լռեցի՝ հասկանալով, որ վերջին բառերն ինձ չեն ուղղված, ինչպես ինձ չէր ուղղված «Ես ապրե՛լ եմ ուզում» բացականչությունը: Նրա համար կարևոր են ոչ թե իմ հարաբերությունները թագավորի ու հույների հետ, այլ իրենը՝ հանգուցյալ ամուսնու: Նվաստացնելով ինձ՝ նրա բարեհաճությունն

էր փնտրում, որ խանդոտ ոգին բավարարվի այդ զոհով ու հանգիստ թողնի իրեն:

Սյուզիին մեռյալի իշխանությունից ազատագրելու միայն մի միջոց ուներ՝ վերածնել նրա մեջ այն զգացումը, որով հասել էր այստեղ:

«Ես ծնվել եմ Ֆրանսիայում, եղել եմ Հյուսիսամերիկյան նահանգներում, Անգլիայում, Իսպանիայում, Ռուսաստանում,- հեռվից սկսեցի ես:- Իմ հայրենիքում հավասարություն է օրենքի առաջ, բայց չկա ո՛չ ազատություն, ո՛չ եղբայրություն: Անգլիան ազատ երկիր է, բայց այնտեղ բացակայում են եղբայրությունն ու ազատությունը: Ամերիկայում պահպանվում են այդ երեք մեծ սկզբունքներից երկուսը. եղբայրության մասին այնտեղ խոսք լինել չի կարող, իսկ Ռուսաստանում հենց միայն այդ է: Իսպանիայում չկա ո՛չ մեկը, ո՛չ մյուսը, ո՛չ էլ երրորդը»:

Ես լցրեցի գավաթներն ու ավարտեցի. «Հունական հանրապետությունն այդ երեքն էլ կյանքի կկոչի: Արի մի քանի տարուց՝ ինքդ կամոզվես»:

Սյուզին նարինջ էր ծամում ու նայում պատուհանից դուրս: Դժվարությամբ կարողացա որսալ հայացքը:

«Ոչնչի համար մի զոջա»,- ասացի ու նրան պարզեցի արևի տակ խաղացող գինով գավաթը:

«Հեռացի՛ր»,- գավաթին ձեռք չտալով՝ խնդրեց նա:

Կրկնելու հարկ չեղավ: Նրա համար նախատեսված գավաթը դրեցի սեղանին, իմը խմեցի մինչև վերջ, հրաժեշտ տվի ու դուրս եկա: Այլևս չհանդիպեցինք: Հանդիպման խնդրանքով երկտողերս մնացին անպատասխան: Չորս օր անց հիդրացիների նավը նրան տարավ Անգլիա:

Ես նայում էի հետևից, մինչև որ անհետացավ ծովախորշի մուտքի մոտ, կղզու վրա վենետիկցիների կառուցած Բուրձի ամրոցի հետևում, ու զգում ցրտից նվացող ատամս, խոնավությունը ծակ սապոգիս մեջ, արդեն զզվեցրած բոված սիսեռի այրոցը, և զուտ մարմնական զգացողություններից ավելի՝ անսահման մենություն: Եթե հնարավորություն ունենայի վերադառնալու Ֆրանսիա, դեռ ամռանը կմեկնեի: «Դու պարզապես տեղ չունես գնալու, ահա թե ինչու ես այստեղ»,- մի անգամ

ասաց Սյուզին: Արագ էր սովորել փորփրել վերքերս:

Վրա հասավ իսկական աշունը: Նեխող ջրիմուռների հոտը հիշեցնում էր, որ ամեն ինչ իր ժամանակն ունի. այդ կինը երբեք այնպիսին չի լինի, ինչպես այն գիշեր, երբ մերկ, փորատակի գեղմը՝ դեռ խոնավ, արտասանում էր. «Օ՜, սքանչելի Հունաստան, ողբալի բեկոր վաղեմի փառքի: Դու չկաս, բայց անմահ ես...»:

Հենց նույն օրը հյուրանոցից մի կնքած ծրար բերեցին: Թղթաբերն ասաց, որ նախորդ օրը Սյուզին է տվել իր տիրոջը՝ պատվիրելով հանձնել, երբ նավը մեկնած կլինի: Ծրարում նրա ցայլքի մազերի մի փունջ գտա՝ թաթախված դաշտանի չորացած արյունով:

Եվ վերջ:

Ո՛չ հրաժեշտի նամակ, ո՛չ թեկուզև փուչ արտահայտություններով որևէ երկտող: Միայն մկրատով կտրած իրար կպած մազեր՝ հիշողություն նրա ոտքերի արանքի սև սրտի մասին: Դրանց չէր կցվել ոչ մի բառ, բայց առանց դժվարության կռահեցի ուղերձի իմաստը: Անբառ, ինչպես սկյութների նամակը Դարեհ արքային, իմաստների երկու շերտ էր պարունակում՝ մակերեսային և ավելի խոր: Առաջինով Սյուզին հայտնում էր, որ մեր սերը պտուղ չի տվել, որովայնն ամուլ է, երկրորդով՝ որ ես բոլոր առումներով անպտուղ եմ, և ոչ միայն ինքը, այլև Հունաստանն ինձ հետ հանդիպումից հետո կմնա այնպիսին, ինչպիսին կար:

Կալանավորը

Նատալյա Բաժինան՝ Մատվեյ Մոսցեպանովին

Հոկտեմբեր, 1823 թ.

Փորձա՞նք է, տեր իմ Մատվեյ Մաքսիմովիչ:

Աստվածածնի տոնի հաջորդ առավոտ Գրիգորի Մաքսիմովիչին ձերբակալեցին: Նոր էր տեղաշորից վեր կացել, դեռ նախաճաշ էլ չէր արել, եկան ոստիկանապետ Պլատոնովն ու գործակատար Ռյաբովը, հետները չորս լեռնային զինվոր ու պորուչիկ Պերեվոզչիկովը: Գիշերը անձրևը հեղեղի նման էր գալիս, լրիվ ողողել էր փողոցը, իսկ նրանք նույնիսկ սապոգները չչորացրին, բոլորով տուն թափվեցին: Գրիգորի Մաքսիմովիչին, ի՞նչ թեյ խմել, նույնիսկ չթողեցին կարգին հագնվի: Ցեխերի միջով, ցրտին տարան միտակ շապիկով, բոբի՛կ: Վերցրի սապոգները, վազեցի հետևներից: Բայց ո՞ւր: Վենկա Ռյաբովը էնպես բրթեց, քիչ էր մնում ընկնեի: Էն օրվանից, որ փողոցի շները մանկածին անդամը կրծել են, ինքն էլ շնից վատն է դառել:

Իրիկունը մարդ ուղարկեցին Գրիգորի Մաքսիմովիչի շորերի հետևից, բայց զինվորական համազգեստը չվերցրեց, վերցրեց քաղաքացիական սերթուկը, շալվարը, սապոգները, փոխնորդ սպիտակեղեն և ուրիշ ոչինչ: Ինչքան խնդրեցի, ո՛չ բրդի գուլպաները վերցրեց, ո՛չ կաշվե շալվարը, ո՛չ ոչխարենու կացավեյկան, ո՛չ էլ դիպակե թասակը, որ ուղարկել էիք Գրիգորի Մաքսիմովիչին: Ռյաբովը ծանրութեթև արեց ձեռքին, վերադարձրեց ինձ ու բացեց սեպերը. «Ծանր է, տեղ չեմ հասցնի»: Իսկ դրա քաշը՝ ոնց որ չոր թռչնաբուն: Գրիգորի Մաքսիմովիչը դնելիս միշտ հիշում էր ձեր եղբայրական սերն իր հանդեպ:

Իմ հին բաղնիքում արհեստանոց էր սարքել, լրիվ քարուքանդ արեցին, բանջարանոցն էլ քրքրեցին, տունն էլ, իսկ թե ինչ էին ման գալիս, գտան, թե ոչ՝ չասացին: Այուս օրը ինձ նրա մոտ չթողեցին, չնայեցին արցունքներիս: Նամակ գրեցի՝ չեն վերցնում: Ուզում էի ծխամորճն ու թութունի քսակը փոխանցել՝ չի կարելի: Մի ամբողջ օր գրասենյակում նրան փակի տակ պահեցին, իսկ առավոտ շուտ մարդիկ տեսել էին, որ ինչ-որ տեղ են տանում Վերխոտուրյան մեծուղով:

Թե որն էր նրա մեղքը՝ չգիտեմ, ինձ չեն ասում. իբր՝ կինը չեմ, որ ինձ զեկուցեն, ու եթե կինն էլ լինեի, չէին ասի: Իբր պետական գործ է, գաղտնի, իմ քաշի մարդու խելքի բանը չի, ու չպիտի էլ հարցնեմ, սուս պիտի նստեմ:

Ձեռներդ պաչեմ, մի լքեք ձեր հարազատ եղբորը: Ուր հարկն է խնդրագիր ուղարկեք, որ եկեղեցի գնում է, հաղորդություն առնում, ու խոստովանվում էլ է ու ոչ մեկի վրա ոչ մի վատ բան չի մտածել: Սիգովն ու Պլատոնովը նրան օր ու արև չէին տալիս, որ բացում էր իրանց ստերը:

Նիժնիտագիլյան գործարանների կառավարիչ Սեմյոն Միխեևիչ Սիգովը Պերմի նահանգապետ Կրիդներին

Հոկտեմբեր, 1823 թ.

Ս.թ. հոկտեմբերի 3-ին պաշտոնաթող շտաբս-կապիտան Գրիգորի Մոսցեպանովը ձերբակալվել է իր կենակցուհի Նատալյա Բաժինայի բնակարանում: Նրա մոտ հայտնաբերված բոլոր փաստաթղթերն ուղարկվել են Եկատերինբուրգի գավառական դատարան, իսկ իրերն առնվել են գրասենյակ և իրացուցակի հետ պահվում են գրասենյակային մեծ կնիքով կնքած արկղում:

Իրացուցակի պատճենը կցում եմ:

Սրբերի ծալովի, պղնձով շրջանակած պատկերակալ

«Իշխան Ալեքսանդր Իպսիլանտի, Կուլմի հերոսը» վիմատիպ դիմանկար

1806 թվականի Հրետանային կանոնագիրք

Ժողովրդական լուսավորության մինիստրության հին հանդես, 1819

թվական, թողարկում 4

Սուսեր՝ պատյանով

Համազգեստ՝ հագած

Նապաստակի մորթուց ծածկոց, հնամաշ

Նոր ծածկոց՝ բևեռաղվեսի մորթով աստառած

Բրդե լայնեզր գլխարկ

Մսագույն կարտուզ

Կանաչ դիպակից թասակ

Կաշվե շալվար

Ոչխարի մորթով աստառած կացավեյկա

Հասարակ կտորից խալաթ. կապույտ, հնամաշ

Անմշակ կտավի չորս շապիկ

Ծխամորճ

Երկու խոզանակ, հագուստի ու կոշիկի

Երկու հյուսք թեյ

Ձենապակե թանաքաման

Փող՝ թղթադրամներով 36 ռուբ., արծաթով 3 ռուբ., պղնձով 24 կոպ.

Գրիգորի Մոսցեպանովը Մատվեյ Մոսցեպանովին

Նոյեմբեր, 1823 թ.

Նատալյան քեզ հայտնած պիտի լինի իմ բանտարկության մասին, իսկ հետագան չգիտի: Չթողեցին հրաժեշտ տա: Հաջորդ օրը պորուչիկ Պերեվոզչիկովը, դեռ լույսը չբացված, որ ժողովրդի մեջ իրարանցում չլինի, ինձ տարավ Եկատերինբուրգ: Մեզ հետ չորս զինվոր կար, բոլորը՝ հրացաններով, նրանց պատճառով մեծուղու գյուղերում մարդիկ վախենում էին ջուր տան ինձ: Տեղ հասցրին ու փակեցին բանտում՝ գողերի ու մարդասպանների հետ: Իսկ թե ոնց վարվեցին ինձ հետ, չեմ էլ ուզում գրել: Ավելի լավ է չիմանաս, որ որոշ տեղերում ազնվականությունը շատ քիչ բան է նշանակում:

Էստեղի բանտը հեչ բանի պետք չի, տանիքը՝ ծակ, վառարանները՝ քանդված: Ոնց վառում ես, տաքություն չկա: Քնում ենք ծխի մեջ, իսկ

գիշերը անդամդ սառում-կպնում է փոշտիդ: Պարսպի ցցերը փտել են, ձողաններ են դեմ տվել կամ պահանգներով կապել, որ իրար հենվելով՝ կանգնած մնան, թե չէ թափվում են: Պարսպի տակով մի գետնափոր անցք կա, մեր կողմից ելքի վրա ցախ է կիտած: Անցքով անառակ աղջիկներ են մտնում բանտ: Քանի ձմեռ չէր, տկլոր էին խցկվում: Շորերը հանում էին, փաթաթում ու ձեռներին պահում, որ չցեխոտվեն, իսկ մայր բնության տվածն էնքան էլ թանկ չեն գնահատում: Ժամապահներն իրենք են նրանց քաշում-հանում անցքից ու մի քանի կոպեկ առնելով՝ պառկացնում էն կալանավորների տակ, որոնց գրպաններում մենակ ոջիլ չի վազում:

Նամակ գրելու իրավունքից զրկել են, բայց Նատալյան, հասկացո՛ղ է, սերթուկը, շալվարներս ու սապոգներս ուղարկելիս խելքը կտրել է որոշ բաներ դնել աստառի ու միջադիրների տակ: Արդեն էդ ոջլոտներին տալու բան ունեի, ու մեկի հետ պայմանավորվեցինք, որ նամակս փոստատուն կտանի, թե չէ զինվորները դրա համար շատ են ուզում, մեռոն չկա երեսներին:

Իսկ ինձ շուտով մենակ կմնա խաչս գրավ դնեմ: Արծաթից է, Կիևի աշխատանք, Սուրբ Անդրեյի եկեղեցուց, որտեղ ինձ ու քեզ կնքել են: Դու էլ էդպիսին ունես, ուրեմն նայիր, հիշիր Գրիշա եղբորդ ու մի քիչ փող ուղարկիր նրան ու Նատալյային: Նրա հայրը մահացել է, եղբայրները ձմեռով ձյուն չեն տա, մայրն ինքն է աղջիկների վզին նստած: Ռոճիկիցս հետ գցած փողը ձերբակալելիս առգրավել են, իսկ ինչ նրան տվել եմ ճաշի ու սենյակի համար, վաղուց վերջացած պիտի լինի: Երևի զուտ կաղամբի հույսին է կամ էլ կոպեկներով մեխագործանոցում է չարչարվում, առողջությունը քայքայում:

Ազնվական կոչումով կալանավորներին թուղթ, գրիչ ու թանաք է հասնում, բայց ինձ չեն տալիս: Հարցերի կետերին պատասխանելու համար տված թղթերից երկու թերթ թաքցրի, բակում մի ագռավի փետուր գտա, պատերից մուր քերեցի, ջրով բացեցի ու գրում եմ:

Չեմ ուզում քեզ վշտացնել, բայց, պատահում է, արթնանում եմ գիշերվա կեսին ու չեմ կարողանում հասկանալ՝ որտե՞ղ եմ: Ի՞նչ է կատարվում ինձ հետ: Ինչո՞ւ եմ պառկած փտած ծղոտին, ցեխերի մեջ, ցրտին,

փալասներով ծածկված: Ծան պես քոսոտել եմ, եղունգներս՝ չկտրած, ստամոքսս չի մարսում: Մեկ լուծ ու սև լեղի, մեկ էնպես եմ զոռում, աղիքներս արնախառը դուրս են թափվում, իսկ արդյունքը՝ հեչ:

Զրպարտել են, թե չար բան եմ նյութել ինչ-որ բարձրաստիճան անձնավորության դեմ: Աստված գիտի՝ ում, դատավորները չեն ասում, պահանջում են, որ անկեղծ խոստովանեմ, բայց թվում է՝ իրենք էլ այդ մարդու մասին ինձնից շատ չգիտեն: Անունը չեն տալիս, բայց պահանջում են խոստովանեմ, որ ուզել եմ գնամ մոտն ու իմ արհեստանոցում պատրաստած թույնով սպանեմ:

Դժվար չի հասկանալ, թե որտեղից է էդ անհեթեթությունը: Մայոր Չիխաչովի հետ խոսելիս Պետերբուրգ, կոմս Արակչեևի մոտ մեկնելու պատրաստակամություն էի հայտնել, իսկ Սիգովն ու Պլատոնովը խոսքերս շուռ են տվել, շաղախել իրենց թունավոր թքով ու փսխել: Ստացվում է՝ նրանց հայտնի է Արակչեևին տեսնելու իմ ցանկությունը, էնպես որ, կարծում եմ, հենց նա էլ այդ անհայտ անձն է:

Մեր կառավարիչները մենակ մի հարցում չեն ստել. իսկապես արհեստանոց ունեի, Նատալյայի հին բաղնիքում էի սարքել: Բանջարանոցում երկու բաղնիք ունի. մեկը՝ նոր, էնտեղ լողանում ենք, մյուսը՝ հին, տաքություն չի պահում, եղինջն ու կոթուկը հասել են կտուրին: Խողովակով կաթսա էի դրել էնտեղ, նավթայից յուղ էի քաշում կանթեղների համար: Ձկան քարավանով տակառներով Պեչորայից էին բերում: Պեչորայում տեղեր կան, որ գետնից դուրս է գալիս: Օխտայի վառոդի գործարանում եմ քիմիա սովորել, մնացածը սուտ է, բայց որ սկսես բացատրել, լեզուդ կհոգնի սուտը հերքելով: Եթե ասեն՝ հարևանից մի ռուբլի պարտք ես արել ու հետ չես տվել, միլիոն փաստարկ կբերես քեզ արդարացնելու, բայց որ մեղադրեն, թե ուզել ես կաշին քերթես ու ծախես Սակարևյան տոնավաճառում, պատասխան չես գտնի: Չնայած ճիշտը մենակ էն է, որ դանակ ունես:

Ի լրումն՝ աստվածանարգություն էլ են կարում վրաս: Թե՝ երբ ծերբակալելիս զինվորներն ինձ դուրս են քաշել տնից ու մի խալաթով քարշ տվել փողոցով, պոկվել եմ ձեռներից ու գոռացել. «Պիղատոսնե՛ր: Ո՞ւր եք տանում ինձ»:

Գոռացել եմ, այո՛:

Իմ վիճակում ավելի լավ է խելառ լինես, քան ոչխար, բայց դատավորները խեղդում են, թե՝ ես ինձ ո՛ւմ տեղն եմ դրել, եթե պետական մարդկանց Պիղատոս Պոնտացի եմ ասում: Էդպես կարելի է քրիստոսության էլ հասցնել:

Նաև մեղադրում են, իբր աստվածանարգ բառերով եմ հայհոյում: Սիգովի մի թուղթը կարդացին, թե իր ներկայությամբ ասել եմ էդ բառերը:

«Ի՞նչ բառեր»,- հարցնում եմ:

Քննիչը պատասխանում է. «Ես դրանք բարձրաձայն արտաբերել չեմ կարող, բայց այստեղ գրանցված են»:

Գործին կցված թղթի մի մեծ թերթ ցույց տվեց: Վրայից՝ ավելի փոքր մի թերթիկ ծածկում էր գրածը, որ չերևա: Վերևի թերթիկը մի եզրով սոսնձված է ներքևինին, հետ քաշես, բառերը կերևան, դրանք քեզ հայտնի են՝ ...ես քու պորտը և այլն:

«Սա,- բացատրում եմ,- Աստվածամոր պորտի մասին չի, ինչպես, երևում է, մտածել եք: Էս բառերը բացարձակ ոչինչ չեն նշանակում, ոչ մի լեզվում էդպիսի բառեր չկան: Անվայել խոսքերի օրինակով եմ հորինել, որ ջղայնացած ժամանակ ուզեմ սիրտս թեթևացնել, մայր չհայհոյեմ»:

Կարծես թե հավատացին, բայց մի նոր փորձանք եկավ. Սիգովն ու Պլատոնովը իրենց լրտեսների միջոցով մարդ էին գտել, որ առանց դատ ու դատաստանի ինձ էն աշխարհն ուղարկեն:

Անցած տարի վաճառական Ռաստորգուևևների՝ Կիշտիմի գործարանում բանվորները բունտ էին արել:

Խառնակիչը Կլիմենտի Կոսոլապովն էր, հիմա ինձ հետ էստեղի բանտում է: Կալանավոր է, բայց պահնորդներն ու ժամապահները զգաստ են կանգնում նրա առաջ: Կի՞նն էր եկել մոտը, թե՞ կինը չէր, սատանան գիտի դրանց, Կոսոլապովն, ուրեմն, տարավ մոտը, ամբողջ գիշեր քեֆ արեցին, ու ոչ մեկը մի բառ չխոսեց: Վայրենու մեկն է, ուժն էլ տեղը: Կսպանի, ի՞նչ ունի կորցնելու: Սիբիրից դենը չեն քշի:

Մի քանի օր առաջ նստեց կողքիս, չանչերով բռնեց կոկորդս, բայց հուպ չի տալիս, չի խեղդում: Վախենում եմ շարժվել, նստել եմ դեմը, ո՛չ

կենդանի, ո՛չ մեռած: Իսկ ինքը ժպտում է, ձենը՝ փաղաքուշ. «Վիզդ,- ասում է,- ձե՛րդ բարեձնություն, չի ճարպակալել, խեղդելը հեշտ կլինի»:

Վախից ձենս կորել է:

«Ինչի՞ համար»,- շշնջում եմ:

Ծիծաղեց. «Դարբին մարդ եմ, իմ խելքի բանը չի: Բարի պարոններ կան, ինձ դրա համար շնորհակալություն կասեն»:

Հիմա գիշերներն անքուն պառկում, ականջ եմ դնում՝ չի՞ գալիս: Գիտենք էդ տեսակ դարբիններին - չաքուջը՝ գլխիդ, ոսկիները՝ ջեբը: Գործարանում ամբողջ կյանքում էնքան չի դարբնի, ինչքան Սիգովն իմ հոգու համար կբաշխի:

Ջուտ էն է ուժ տալիս, որ Սաղմոսարանից կրկնում եմ. «Մեղավորները՝ բուսնելով ինչպես խոտ, և անօրենություն գործողները՝ ծաղկելով, կկործանվեն հավիտյանս հավիտենից»: Տա Աստված՝ Սիգովի ու Պլատոնովի գլխին գա:

Հավատում եմ՝ Աստված կպաշտպանի ինձ իր զորավոր աջով, բայց հույսս քեզ վրա էլ է, եղբա՛յր: Մի՛ թող հարազատ արյունդ կորչի, գրիր արդարադատության մինիստրին՝ իշխան Լոբանով-Ռոստովսկուն, թող իր վերահսկողության տակ առնի գործը, թե չէ էլ չես տեսնի միակ եղբորդ:

Գ. Մ. Մոսցեպանովի բացատրագիրը Եկատերինբուրգի գավառական դատարանի հարցաշարի պատասխանների փոխարեն

Դեկտեմբեր, 1824 թ.

Իմ գործով հարցաշարի կետերն այնպես են կազմված, որ մի կեսին պետք է նույն պատասխանը տալ, իսկ երկրորդ կեսի ոչ մի կետ թույլ չի տալիս պատասխանել ըստ գործի էության:

Ուստի պատասխանում եմ ոչ թե համարների կարգով, այլ միանգամից բոլոր կետերին, բացի 8-ից ու 19 ու 20-ից:

Ես մերկացրել եմ Նիժնիտագիլյան գործարանների կառավարիչնե-

րի չարաշահումները, ինչի համար նրանց կողմից հեռացվել եմ գործարանային ուսումնարանի ուսուցչի պաշտոնից, իսկ հիմա զրկված եմ օրենքի պաշտպանությունից և առնված կալանքի տակ: Բանտում ինձ լվերով ու տարականներով լի մի խուց են գցել, բաղնիք չեն տանում, ինչից մարմինս պատվել է չիբաններով ու բշտիկներով, նույնիսկ եկեղեցի չեն թողնում: Վերակացուները, հերթափոխվելով, գիշերներն անքուն գլխիս ճրագ էին վառում, բանտարկյալները հոտած ձեռքերով ճաշը կեղտոտ կաթսայում են եփում: Արդյունքում՝ կորցրել եմ առողջությունս, որ կյանքի առաջնագույն բարիքն է, բայց ոչ ոք չի ուզում հաստատել հիվանդությունս, ինչը Գերագույն պատժական օրենսգրքի 109 գլխի պահանջն է:

Կառավարիչ Սիգովն ինձ հետ վարվեց որպես մարդկային ցեղի դահճի ու մեծագույն հանցագործի: Նրա գյադաները՝ Ռյաբովն ու լեռնային ոստիկանապետ Պլատոնովը, ինձ անշունչ կոճղի պես հանեցին տնից ու անհագնվել, խալաթով, քարշ տվին փողոցով, որ սարսափի մատնեն ժողովրդին ու հպարտանան իրենց հանդուգն զորեղությամբ: Դա տեսնելով՝ շատերն ինձ կործանված համարեցին: Սարսափահար՝ նրանք կեղծ ցուցմունքներ էին տալիս և հրաժարվում նախկիններից:

Լեռնային վաշտի զինվորները հրաժարվեցին իրենց խոսքից, որ Սիգովը զինվորների երեխաներին ճորտ է գրում ու զինվորների կանանց քշում փայտի չորացման վառարանների մոտ աշխատելու, ինչը Լեռնային կանոնագրքով արգելված է: Վիննովյան հանքերում աշխատողները հրաժարվել են Ռյաբովի դեմ բողոքից. նա իր գյադայական ոգևորությամբ ոչխարի խուզի մկրատով խուզում էր մարդկանց գլուխներն ու մորուքները, որ ոսկու ավազը մազերի մեջ չթաքցնեն: Պատահում էր՝ մազերի հետ կաշին էլ էր քերթում, իսկ հիմա դուրս է գալիս, որ այդպիսի բան չի եղել:

Թուջերկաթի արտադրության վարպետները պատմում էին, որ աշխատանքի դիմաց ստացվող դրամական վարձատրությունից իրենց հաշվին քարածխի ցանցեր են առնում՝ հատը 20 կոպ., կարգադրված է թիակներ ու օդամուղներ սարքել երկաթի համար նախատեսված թուջից: Իսկ եթե երկաթի սահմանված քանակ չեն ստանում, գործիքները ծուլվածք չեն համարվում, ու դրանց համար վճարից պահում է արվում, ինչպես թուջի

ձուլապակասորդի համար: Ոստիկանապետ Պլատոնովը տեր թագավորի աչքն է գործարաններում, պետք է որ աղքատ մարդկանց պաշտպանի իմ փոխարեն, բայց Սիգովին հակառակ բառ չի ասի՝ նրանից պետականի կրկնակի ռոճիկ ստանալով:

Կալվածքներ չունի, ծագումով՝ զինվորի երեխա է: Ճշմարտանմա՞ն է, արդյոք, որ պետական ռոճիկը հերիքել է Եկատերինբուրգում սեփական գինետուն բացելուն: Կոչվում է «Կուտուզով», ցուցանակին Միխայլո Իլարիոնովիչն է՝ ֆելդմարշալի համազգեստով, բոլոր աստղերով, ձեռքով է անում. թե՝ ներս արի, հարգելի՛ ժողովուրդ, ջրած օղի խմիր իմ ողջության համար:

Սիգովն ու Պլատոնովը սպառնալիքներով մարդկանց ստիպում էին հրաժարվել ինձ բերած բողոքներից: Ով չէր ուզում, փակի տակ էին առնում, սպառնում զինվորության քշելով, հանքահորի աշխատանքով, մտրակահարությամբ, սնանկացումով, Սիբիրով: Ինձ զրպարտել են, թե թույն եմ եփում արհեստանոցում, որ Պետերբուրգում սպանեմ ոմն բարձրաստիճան անձի, բայց դրան նույնիսկ երդումով չի կարելի հավատալ:

8 կետին՝ թե ումից եմ իմացել խնդրագրերում նկարագրածներս, պատասխանում եմ առանձին:

Կոմս Դեմիդովի Նիժնիտագիլյան գործարաններում ծառայում է բժիշկ Ֆյոդոր Աբրամովիչ Լամոնին, մի բարի հոգի: Մի անտեր շուն կար, թաթը կոտրած, իր մոտ առավ, մի քանի շաբաթ խնամեց ու բաց թողեց: Առավոտյան դուրս է գալիս դարպասից, իսկ փողոցում այնքան այդպիսի հաշմանդամ է հավաքվել, անթիվ-անհամար: Ինչ-որ կերպ իմացել էին, որ այդտեղ օգնություն են տալիս: Մեկի թաթն է կախ, մյուսը մկնատամ ունի կամ աչքի տեղը թարախակույտ է, մի էգի էլ հետույքի կեսը չկա. գործակատար Ռյաբովից է տուժել: Սա որ հարբած է լինում, կացինն առած վազում է փողոցի շների հետևից: Հիմա, եթե շները գիտեն իրենց լավն ու վատը, մարդիկ կիմանան ու կիմանան: Մութն ընկնելուն պես լսում եմ, ոնց են պատուհանս ծեծում: Էնքան բան պատմեցին, որ մինչև մեռնելս պատմեմ՝ չի պրծնի:

Առանձին պատասխանում եմ նաև 11 կետին. օձ ասելով, որը չի ու-

զում հրաժարվել կերից, ինչից փքվում է, նկատի եմ ունեցել Նիժնիտագիլյան գործարանների կառավարիչ Սիգովին, իսկ կեր ասելով՝ աշխատավոր մարդկանցից նրա կողոպտած տերունական ու պետական դրամական միջոցները:

19 կետին, թե ով է մղել գրելու խնդրագրերը, և 20-ին, թե ով է հանցակիցս, պատասխանում եմ միասին. մղվել եմ մարդասիրությամբ, իսկ հանցակիցներս են Հիսուս Քրիստոսն ու չորս ավետարանիչները: Ուրիշ ոչ ոք:

Մատվեյ Մոսցեպանովը՝ արդարադատության մինիստր Դ. Ի. Լոբանով-Ռոստովսկուն

Դեկտեմբեր, 1823 թ.

Ձերդ պայծառափայլության բարեհաճությունն իր օգնությանը դիմողներին և ձերդ պայծառափայլության՝ արդարադատության պահապանի կոչումը, ինձ համարձակություն են տալիս ոչ թե ողորմածություն, այլ արդար դատ խնդրելու եղբորս՝ պաշտոնաթող շտաբս-կապիտան Գրիգորի Մոսցեպանովի համար:

Երկու ամիս տեղեկություն չունեի նրա բանտարկության վայրի մասին և զուտ պատահմամբ իմացա, որ պահվում է Եկատերինբուրգի բանտում: Չփորձելով դիտարկել՝ արդարացի՞ է խլվել ազնվական ռազմիկի ազատությունը, համարձակվում եմ ձերդ պայծառափայլության ուշադրությունը հրավիրել միայն նրա վրա, որ չկա որևէ պատճառ խոչընդոտելու ո՛չ նրա նամակագրությանը հարազատների հետ, ո՛չ կառավարական և նահանգային պաշտոնավայրեր խնդրագիր ներկայացնելուն: Որտեղ օրենքն է մեղադրում, ոչ թե դատողը, կարիք չկա դիմելու արտակարգ միջոցների: Կողմնակի կերպով ինձ հասած լուրերից երևում է, որ եղբորս դատում են ոչ թե նրա հանցանքների, այլ կոմս Դեմիդովի Նիժնիտագիլյան գործարանների կառավարիչների չարաշահումները բացահայտելու համար: Արդյո՞ք այդ մարդիկ չեն նպաստել նրա բանտարկությանը:

Նա ֆինանսների մինիստր կոմս Գուրյևին գրել էր, որ օսմանյան Բարձր Դռան դեմ պատերազմի համար միջոցներ հայթայթելու համար

հարկ է ուրալյան բոլոր ոսկեհանքերը, ում էլ պատկանեն, վերցնել պետական կառավարման: Եթե այդ նախագիծը հայտնի է կոմս Դեմիդովին, նա կարող է եղբորս դեմ լարած խարդավանքի շարժիչը լինել: Որպես հալածյալի ազգական՝ խնդրում եմ թեթևացնել նրա բանտարկության պայմանները, ինչպես և թույլատրել նամակագրություն հարազատների ու բարձրաստիճան պաշտոնավայրերի հետ, որպեսզի նրան հնարավորություն տրվի արդարանալու իրեն ներկայացված մեղադրանքներից:

Սպասում եմ ձերդ պայծառափայլության բարեգութ որոշմանը:

Պերմի նահանգապետ Կրիդները իշխան Լոբանով-Ռոստովսկուն

Մարտ, 1824

Ձերդ պայծառափայլության գրությանն ի պատասխան հայտնում եմ, որ պաշտոնաթող շտաբս-կապիտան Մոսցեպանովը մեղադրվում է Նիժնիտագիլյան գործարանների կառավարիչ Սիգովի և ոստիկանապետ Պլատոնովի դեմ սուտ մատնությունների համար: Անհաշտ մարդ է, ամեն ինչի մասին չափազանցված, իսկ առավել հաճախ՝ ընդհանրապես անհիմն է գրում: Նրա բողոքների քննությունը ցույց է տվել, որ զրպարտություններ են, դրա համար էլ կալանքի է առնվել: Ներկայումս նրա գործը նախաքննությամբ ավարտված ու փոխանցված է Պերմի վերին գավառական դատարան, իսկ ինքը Եկատերինբուրգից տեղափոխվել է Պերմ ու պահվում է հաուպտվախտում: Հարազատների հետ նամակագրությունը թույլատրվել է:

Բարոնուհի Յուլիա Կրիդները զարմիկին՝ բարոն Կրիդներին

Ապրիլ, 1824 թ.

Նամակիցդ հասկացա, որ քեզ հետաքրքրող Մոսցեպանովը, չցանկանալով ինչ-որ գաղտնիք բացել քո ուղարկած մայոր Չիխաչովին, համա-

ծայնել է այն այլաբանորեն բացատրել և հիշատակել է ինչ-որ օձի մասին: Այստեղից էլ արել ես եզրակացությունները: Հիմա այդ Մոսցեպանովը դատի տակ է Պերմում, իսկ դու ծեր հորաքրոջիցդ խորհուրդ ես հարցնում, թե ինչպես վարվես նրա հետ:

Ահավասիկ իմ խորհուրդը. գործի դիր ողջ ազդեցությունդ, որպեսզի դատարանի վճիռը բարենպաստ լինի, և նա ազատություն ստանա: Կուզի մեկնել Պետերեբուրգ՝ մի՛ խոչընդոտիր: Գուցե և նրա գաղտնիքը ցնդաբանություն է, ինչին վստահ չեմ, քանզի խոսքը կիսալուսնի հանդեպ խաչի հաղթանակի մասին է, բայց եթե հաջողվի ընդունելություն կազմակերպել թագավորի մոտ, իմ սանիկը վերջապես կհասկանա, որ մեր նույնիսկ ամենահեռավոր գավառներում դժգոհություն է հասունանում հունական հարցում նրա քաղաքականության դեմ:

Դու խելացի և միանգամայն ճիշտ ես վարվել՝ ոչ մեկին չասելով, որ կռահել ես Օձին ջախջախելու՝ Մոսցեպանովի մտադրությունը: Ինքը՝ Օձը, առավել ևս պիտի անտեղյակության մեջ մնա, այստեղ ոչ մի նախազգուշական միջոց ավելորդ չէ: Որևէ աննշան խուսագրություն ուղարկիր նրան, և թող մոռանա այդ գործը: Միևնույն է, նրանից երախտագիտություն չես տեսնի, իսկ որ արդեն գիտես իր մականունն ու այլոց սեփականությունն ես դարձնում, կարող է մեծ տհաճություններ պատճառել քեզ: Դու իմ զարմիկն ես, իսկ Օձին հայտնի է իր հանդեպ իմ վերաբերմունքը: Նա անզոր է ինձ վնասել, փոխարենը՝ առիթը բաց չի թողնի վրեժը քեզնից առնելու:

Չեմ հասկանում միայն՝ ինչո՞ւ ես կարծում, թե Մոսցեպանովն ուզում էր Արակչեևի հետաքրքրությունը գրգռել իր թվացյալ գաղտնիքով, որ տեղափոխեին նրա մոտ՝ Պետերբուրգ, ու թունավորեր նրան անձնական հանդիպման ժամանակ: Քեզ հատուկ ողջամտության պարագայում ինչպե՞ս կարող էիր այդպիսի բան մտածել: Ի՞նչ է, խելագարվե՞լ ես:

Դա անհավանական է նույնիսկ այն պայմանով, որ քո շտաբս-կապիտանը խելքը թռցրել է: Մայոր Չիխաչովի զեկուցագրից, որ պատճենել ես ինձ համար, կարելի է եզրակացնել, որ առողջ է դատում, բայց դա սխալ եզրահանգում կլինի: Հավատա իմ կենսափորձին ու մարդկանց իմացու-

թյանը, դու գործ ունես մարդու հետ, որն իրեն լիովին հաշիվ է տալիս իր գործողությունների համար: Բոլոր տարօրինակություններով հանդերձ՝ Մոսցեպանովը չի կարող չհասկանալ, որ Օձի զորությունն այնքան մեծ չէ, որ թագավորին հետ պահի հույներին օգնելուց: Կարծում եմ՝ օձ ասելով՝ նա նկատի ունի բոլորովին այլ անձի: Նա ակնարկել է, որ իր գաղտնիքը վերաբերում է թուրքերի հետ գալիք պատերազմին, ինչով պայմանավորված էլ հենց հիշատակվել է սևարյուն օձը: Այո՛, ես և դու չենք սխալվում կոմս Արակչեևի երակներում հոսող արյան գույնի կապակցությամբ, բայց նկատիր, որ խոսքը ոչ թե սովորական, այլ թևավոր օձի մասին է: Չի կարելի բացառել, որ նկատի է առնվում եգիպտական Մեհմեդ Ալիի որդին՝ գեներալ Իբրահիմ փաշան: Եթե այդպես է, ուրեմն միայն ինձ չի բացվել, որ հենց նա էլ Եսայի մարգարեի կանխատեսած թևավոր օձն է: Թևերը նրա նավերի առագաստներն են: Իմացիր Մոսցեպանովից՝ իրավացի՞ եմ, և եթե այո, թող ասի, որտեղից է տեղեկացել: Դու պետք է որևէ պատրվակով գնաս հաուպտվախտ ու երես առ երես հանդիպես նրա հետ, բայց ոչ մի դեպքում չճնշես, թե չէ հեշտությամբ կարելի է փչացնել գործը: Մեկ անգամից ավելի նրա հետ հանդիպել չի կարելի, այլապես կկասկածեն, թե նախաքննությունը շրջանցելով նրանից որևէ բան կորզելու ցանկություն ունես, ու կհայտնեն Պետերբուրգ, հետևաբար մինչև այցելելը պետք է նախապես նրան տրամադրես քո օգտին:

Դատավորներին կարգադրիր ավելի մեղմ վարվել նրա հետ, թեթևացրու նրա բանտարկության պայմանները, ու թող ոչ թե քեզնից, այլ կողքից իմանա, թե ում է պարտական այդ զիջումների համար: Լավ կլինի քեզ մտերիմ աստիճանավորներից որևէ մեկը հաուպտվախտի տեսչական ստուգման ժամանակ, ասես պատահաբար, նրա ներկայությամբ ասի, որ դու էլ հելլենասեր ես: Գիտեմ, որ այդպես չէ, բայց ոչինչ չես կորցնի, փոխարենը՝ կշահես նրա վստահությունն ու կմղես անկեղծության:

Արդյունքների մասին, անշուշտ, չես մոռանա տեղեկացնել քեզ սիրող հորաքրոջդ:

Գրիգորի Մոսցեպանովը Նատալյա Բաժինային

Մայիս, 1824 թ.

Փառքդ շատ, տե՛ր Աստված, Պերմում եմ, հաուպտվախտում, իսկ դա արդեն այն չէ, ինչ բանտը: Բաղնիք կա, քարե վառարանին սպիտակեղենս ախտահանեցի, ու ոջիլները համարյա լրիվ վերացել են: Անկողին են տվել, տոն օրերին մսով շչի են եփում, կիրակի տանում են եկեղեցի ու թողնում գնումների: Մատվեյ եղբայրս փող է ուղարկել, կարող եմ սրտիս ուզած ուտելիքն առնել: Ուղեկցող զինվոր են դնում հետս, բայց առանց հրացանի: Մի կոպեկ եմ տալիս, ամբողջ առածս հետևիցս բերում է: Իսկ ես՝ պարոնտիրոջ նման:

Թույլ են տվել նամակները հանձնել փոստատուն, ճիշտ է, պայմանով, որ դատարանի քարտուղարը նախապես կարդա: Կնիք է դնում, որ թույլատրվում է ուղարկել, առանց դրա չեն ընդունում: Վճարը քաշով է: Մինչև Պետերբուրգ լոտը հիսուն կոպեկի է հասնում, մինչև Կազան՝ 23 կոպ.: Մինչև Նիժնիտագիլյան գործարանները սակացուցակ չկա, վերստերով հաշվել են 18 կոպ.: Որոշեցի ինքս հաշվեմ, ստացվեց 14 կոպ., բայց հետները չես վիճի: Փաթաթելն ու կնիքներն էլ էժան չեն: Կնքամոմն առանց ժլատության են լցնում, ծրարների համար ծանր թուղթ ընտրում, ու կշեռքն էլ փչացած է՝ ինչ ասես ցույց է տալիս:

Հաուպտվախտում, ինձ չհաշված, երկու կալանավոր կա, սպաներ են: Մեկը կնոջն է սպանել, երկրորդը գող է, պետական ունեցվածքը ջհուդներին է ծախել: Սա ձանձրույթից մեզ թղթախաղի տարբեր տեսակներ է սովորեցնում, բայց դու ինձ համար մի վախեցիր, փողով չենք խաղում: Նա ուրախ կլիներ, բայց ես էլ հիմար չեմ, տեսնում եմ, որ նրա կապուկը գործարանային չի: Դամաները չորսաչքանի են, երկրորդ զույգը՝ ճակատին, սրտի թագավորի մի թուշը մյուսից հաստ, ասես փտած ատամից ուռած լինի: Ճապիկները, գաղտնանիշերը թաքցնելու համար, այնպես գույնզգույն են անում, որ աչքերդ խժբժում են:

Պերմում տեսնելու բան չկա, Կամայից բացի: Իհարկե, Դնեպրը չի, Դնեպրին չի հասնի, ոնց որ՝ երկնքի աստղերին, ափն էլ տկլոր է՝ խոտ ու

կավահող, Կիևի բլուրների հետ չես համեմատի, բայց նույնքան զառիվեր է, պարզ եղանակին զառիթափից երևում է ոնց են հակառակ ափին անտառները կապույտ շարքերով կանգնած մինչև հորիզոնը: Ու եթե տաք քամի էլ փչում է, շունչդ կտրվում է արձակությունից, ասես հարյուր տարվա անփորձանք կյանք է խոստացվել:

Ուրիշ լավ բան չկա:

Քարի տները քիչ են, քարաշեն եկեղեցիներն՝ ընդամենը երկուսը: Մի մաքուր պանդոկ կա Ռազգուլյայ տեղավայրում, գինետներն էլ էնտեղ են, բայց ես չեմ գնում ու չեմ խմում: Միայն մեկ, թե երկու անգամ եմ մտել՝ հարցնելու, թե խմիչքն ինչ արժի: Եվ ինչ ես կարծում: Ակցիզայինը, ոնց որ ամեն տեղ, շտոփը 30 կոպ., իսկ քաղցր օղիները, մրգօղիներն ու թրմօղիները, որ ազատ գներով են, Պերմում ավելի էժան են, քան մեզ մոտ՝ գործարաններում: Մեզ մոտ թանկ են, որովհետև տարբերությունը Սիգովը գրպանն է դնում:

Ուտելիքը նույնպես էժան է, մանավանդ աղածոները: Միս ամեն կիրակի չեն ծախում, գլխավոր ապրանքը ձուկն է, այդ էլ ուտում ենք, չնայած ես ձկան մեծ սիրահար չեմ: Միշտ մեկը կգտնվի, որ տաս տապակելու:

Մայիսը վերջանում է, գիշերները լուսավոր են, ինչպես Պետերբուրգում: Քաղաքամերձ այգում շիկահավեր են երգում, դեղնափորիկներ, սոխակներ: Լսում եմ ու երազում, թե ոնց եմ պառկելու քեզ հետ: Իմ գործն անսպասելիորեն բարենպաստ ընթացք ստացավ: Դատարանականները հարգալից են, չեն գոռում վրաս, ոտները գետնին չեն տալիս: Դրանից, ինչպես և ինչ-ինչ ակնարկներից կարծիք եմ կազմել, որ նահանգապետը՝ բարոն Կրիդները, իմ կողմն է բռնել: Հուսամ՝ աշնան կողմը բաց կթողնեն:

Աշնանն այստեղ Աստրախանից պարսկական հյուր է սպասվում՝ խոլերա մորբուս, բայց այդ ժամանակ արդեն տանը կլինեմ: Չհասցնեմ էլ՝ ոչինչ: Չեմ հիվանդանա, եթե աղածո չուտեմ, փոխարենը՝ դատարկ փորին մի գդալ տրորած բողկ: Ասում են, օգնում է նաև, եթե դարպասին դրսից մեծ տառերով կավիճով գրես. «Տանտերերը տանը չեն»: Ենթադրվում է, որ խոլերան, չնայած պարսիկ է, բայց ռուսերեն կարդալ գիտի: Կկարդա ու կողքով կանցնի:

Խոլերան ներքևներից այստեղ բարձրանում է Վոլգայով, Կամայով, իսկ Դնեպրով՝ ոչ: Դնեպրի ջուրը պղտոր չի, ինչպես այստեղի գետերում, այլ անուշահամ ու այնքան մաքուր, որ երեք սաժեն խորության վրա արևի շողերը հատակն են հասնում: Հիշում եմ՝ երեխա ժամանակ ծնողներիս հետ լողում էի նավակով, ու հատակի ավազներում մի արծաթադրամ փայլեց: Բայց չես հասնի՝ խորն է:

Դնեպրի ափին, Կիևից ներքև պապիս խուտորն էր՝ մեղվանոցով: Մենատնտես էր, ծանր աշխատանքից չէր խորշում: Երեխա ժամանակ ես ու Մատվեյ եղբայրս նրա մոտ էինք ապրում: Այդ ժամանակ անտառներում դեռ արջեր կային, ու մեկը սովորություն էր դարձրել՝ գիշերները մեղվանոց էր գալիս: Իրար հետևից փեթակներն ավերում, մեղրը ուտում էր: Պապի համբերությունը հատեց, իրիկվանից հրացանը ձեռքին նստում էր դարանում: Երկու գիշեր նստեց, երրորդին ի՞նչ տեսնի լուսնի լույսով, աչքերին չի հավատում. հարևանն է գալիս, ձեռքին՝ արջի չորացած թաթ: Փեթակները կոտրեց, մեղրը հանեց, փեթակի կտորտանքը քերծոտեց չանչերով: Պապը չէր կրակել, բայց առավոտյան հարևանների հետ ներս ընկան նրա խրճիթը: Գողացած մեղրը խլեցին, գողին ծեծեցին, այնպես, որ արյուն էր խորխում, իսկ արջի թաթը խաղալու տվին ինձ ու եղբորս, միայն թե ինձ մեծ փորձանք եկավ դրանից: Հենց պառկում էինք քնելու, Մատվեյը, ինձնից հինգ տարով մեծ էր, վախացնում էր, թե, այ, հենց քնես, թաթը կմոտենա, կբռնի կոկորդդ ու ճանկերով մինչև փորդ կձևի: Վախից դողում էի: Գիշերները չէի քնում, ականջ էի դնում՝ մոտ չի՞ գալիս: Մի անգամ անձայն դուրս եկա անկողնուց, որ իմ տեղում չգտնի, ու փախա այգի, վախից մոլորվեցի երեք խնձորենու արանքում, սկսեցի գոռալ, մինչև որ մայրս վազեց-եկավ: Հետո այդ թաթը գցեց վառարանը:

Այսքան տարի է անցել, իսկ ի՞նչ է փոխվել:

Մենք բոլորս մանուկներ ենք անցավոր աշխարհում՝ կորել ենք մթան մեջ, դեսուդեն ենք ընկնում, ճչում ենք, լալիս: Մեկը չկա, որ ձեռքներս բռնի ու տանի տուն:

Պարապությունից շատ բան է հիշվում: Հիշում եմ պապիս փեթակները, սիրում էի մենակ խաղալ դրանց արանքում, իսկ անկողնում, քնելուց

առաջ, պատկերացնում էի, որ այնտեղ փոքրիկ մարդուկներ են ապրում՝ մեղվի թևիկներով. դուրս են թռչում, պտտվում օդում կամ նստում փեթակի աչքին, ինչպես դարպասատակի նստարաններին, դզզում են, ծիծաղում, ու ես էլ նրանց պես եմ, իմ տնակն ունեմ:

Եվ ի՞նչ:

Մազերս թափվել են, բայց իմ տունը չունեմ: Պետական տան մեջ եմ ապրում, քնում տախտակներին, լափում փայտե տաշտից, խոզի նման:

Ավելի ուշ մարդուկ-մեղուները ծանծրացրին ինձ ու փեթակ-տնակի փոխարեն նախաքնի երազանքներիս համար սեփական քաղաք հորինեցի: Կանգնած է սարի գլխին, շրջապատված աշտարակավոր պարսպով: Ներսը՝ փողոցներ, տները՝ քարաշեն, հրապարակում՝ տաճար, համալսարան, ինչպես Կազանում, իսկ բնակիչները շատ չեն: Ես նրանց գլխին ցար չեմ, բայց դրա պես մի բան եմ, չնայած դատ ու դատաստանի կարիք չկա, եղբայրաբար ենք ապրում: Իսկ շուրջը անչափելի ուժի թշնամիներ են, մեր քաղաքը նրանց հորդաների մեջ՝ կղզի ծովում: Ծովն ուզում է ծածկի, մոլեգնում է, ելնում ժայռերն ի վեր, բայց ժայռոտ լեռը բարձր է, պարիսպն՝ ամուր:

Մի անգամ հարցրիր՝ ոնց է լինում, որ պառկում ու մի րոպեից արդեն քնած եմ: Ասում էիր՝ այ ես էլ էդպես կարողանայի: Ասացի, որ դա մաքուր խղճից է. քանի չէի սկսել խնդրագրերս ուղարկել, ժամերով անքուն շուռումուռ էի գալիս: Իսկ ճշմարտությունը լրիվ այլ է:

Արդեն երեսուն տարուց ավելի, համարյա ամեն երեկո, բմբուլի ներքնակին պառկած, թե տախտակներին, ինչպես այստեղ, կամ էլ չոր գետնին, ինչպես արշավանքների ժամանակ էր պատահում, շրջվում եմ բոլորից, երկու ձեռքերիս մատները պահում աչքերիս առաջ, շարժում, ասես մատներ չեն, այլ ինձնից սիրված, ինձ սիրող կենդանի մարդիկ, ընկերներս կամ հպատակներս, եթե ինձ ցար համարեմ, կամ էլ երկուսը միասին. ասենք, այստեղ կարևորը դա չի, ապրում ենք սիրով, աստիճանով չենք չափվում: Հետո փակում եմ աչքերս և ահա արդեն լեռան գագաթին եմ, իմ քաղաքում, և որքան վառ ու կենդանի եմ տեսնում այդ ամենը, այնքան արագ եմ քնում, չնայած կարծես հակառակը պիտի լինի:

Աշխարհում ոչ ոք չգիտի իմ այդ գաղտնիքը, նույնիսկ հարազատ եղբայրս: Առանց ամաչելու ո՞ւմ կասես, որ մազերդ ճերմակել են, բայց դեռ մատներիդ հետ ես խաղում: Այսուհետև միայն դու կիմանաս:

Քո պատին իմ նկարն է կախված, եթե գրասենյակ չեն տարել: Վիմագրված է Աթենք քաղաքը, քեզ պատմել եմ նրա մասին: Վերևում ժայռ է՝ ամրոցով, ավելի վեր՝ Պարթենոնը: Կողքից թուրքերը մզկիթ են սարքել, բայց եթե մզկիթը հանենք, իսկ Պարթենոնի գլխին խաչով գմբեթ դնենք, ճիշտ այն քաղաքը կլինի, ուր քնելուց առաջ գնում եմ:

Չգիտեմ՝ քեզ երազ գալի՞ս եմ, թե ոչ, բայց երեկ երազիս քեզ տեսա, իբր ինձ ընդառաջ ես գալիս քամուց թրթռացող միտակ շապիկով: Շապիկի տակ կրծքերդ, ոնց որ խնձորներ՝ տերևների տակ:

Միայն թե քո մաքրությամբ չփորձես ամաչել, որ դատարանի քարտուղարը սա քեզնից առաջ է կարդացել: Չի համարձակվի դունչը խոթել էստեղ: Քսան կոպեկով՝ առանց կարդալու կնիքը կխփի, որ նամակս փոստ տանեն, քսան կոպեկի հերն էլ անիծած:

Ստորև գրում եմ պաչիկ ու շրջանակի մեջ առնում:

Ես շրթունքներս հպել եմ այդ տեղին: Դու էլ էդտեղ թուղթը պաչի, ու կստացվի, որ համբուրվեցինք:

Նատալյա Բաժինայի խոսակցությունը Գրիգորի Մոսցեպանովի հետ

Հունիս, 1824 թ.

Նամակ ուղարկեցի ձեզ, բայց շա՞տ բան կգրես թղթին:

Ահա Երուսաղեմ մուտքի եկեղեցու զանգերը իրիկվա պատարագի են կանչում: Մեծ զանգը գվվաց, իսկ ապակին շրջանակում ճաքած է, նվաց ի պատասխան: Ճիշտ այդպես հոգիս է նվում, երբ մտածում եմ ձեր մասին:

Ձեր նամակը տասն անգամ կարդացել եմ, տասն անգամ համբուրել: Տա Աստված, աշնան դեմ կգաք: Ամառը ձմեռ չի, արագ կանցնի: Միայն վախենամ՝ Կամայի ձուկը ձեզ վնաս տա: Դրա մեջ, ասում են, խոզի ճիճու կա: Գրել եմ, որ տապակած չուտեք: Խաշած կերեք ու հետևեք, որ լավ եփեն:

Դուք իմ եփութափից միշտ լավն եք տեսել, լսեք խորհուրդս: Նույնիսկ մայրս այդ հարցերում լսում է ինձ: Հիմա մեղա է գալիս, որ աղջիկ ժամանակս թակում էր աշխուժության համար: Որ սկսում էր, էլ վերջ չկար. «Էլի ատամներդ բացել ես, քեզանից բարի բան դուրս չի գա, Նատա՛շկա»: Հիմա սսկվել է: Իրանից վատ տնարար ու տնտես չեմ, ատամներս էլ՝ փակ: Տխրեցի մարդու գնալուց հետո:

Հարսանիքից հետո տալերս սկսեցին բակում ամանները լվալ, իսկ ես որոշեցի հանաք անեմ, ասեցի. «Ձեր տանը, ի՞նչ է, ամանները լվանում ե՞ն»:

Զարմացան. «Բա ձեր մոտ ի՞նչ են անում»:

«Մեր մոտ,- ասում եմ,- կեղտոտները շպրտում, նորերն են առնում»:

Վերցրի մեկը ու ցանկապատի վրայով շպրտեցի փողոց:

Դե, մարդս հետո ինձ ման շպրտել ցույց տվեց: Չորս տարի իրար հետ ապրեցինք: Ամեն շաբաթ օր թունդ հարբում ու ձեռն ընկածով դաս էր տալիս ինձ, դրանից էլ աղջիկս մեռած ծնվեց, ու մեկն էլ վիժեցի: Եթե ձեզ հետ ուրախ էլ էի լինում, նախկին ուրախության համեմատ կաթիլ է ծովում: Առանց ձեզ էդ էլ չէր լինի:

Հայրս, երբ դեռ ազատական չէր ստացել, ինձ մեխի արհեստանոցում գործի տվեց: Ուրիշ աղջիկների հետ էնտեղ մանր մեխ սարքել սովորեցի, դրա դիմաց ախպորս զինվորությունից ազատեցին: Քանի ամուսինս կար, տանն էի, իսկ հիմա դարբնոցում ուրիշ գործ եմ անում՝ մաշված երկաթե թիակներից շերեփ ենք սարքում: Փող ունեմ, ու Մատվեյ Մաքսիմովիչն էլ հինգ ռուբլի է ուղարկել: Նրա ուղարկածով լաթակտորներ եմ առել, բարուրներ կարել ու տարել մանկատուն, չնայած երեխեքն էնտեղ առանց ինձ էլ վատ չեն ապրում: Թող ձեր հոգին չցավի նրանց համար: Սիգովը նախկին դաստիարակներին դուրս է արել, նորերն է հավաքել: Երեխեքը նրանց օրոք կուշտ են, տիրոջյան կովերի կաթ են խմում. նրանցից, որ աշնանն են մեր մոտ բերել՝ մայոր Չիխաչովի հետ նույն օրը:

Իմ համար էլ չանհանգստանաք: Ինձ ի՞նչ պիտի պատահի: Ֆեդենկային տատն է նայում. կուշտ է, խնամված, իսկ մաշված բահերն էսօր կան, էգուց՝ չէ: Շաբաթը երկու, երեք օր տանն եմ. նստում, ձեզ եմ կարոտում:

Ձեր քաղաքը կախված է պատին, ոնց որ ձեր ժամանակ: Ձեր ունեցվածքը, որ մնացել էր մոտս, գրասենյակ են տարել, միայն ձեռնափայտը թաքցրի ու էդ նկարի մասին ասեցի, որ իմն է: Ոյաբովը չէր հավատում, իսկ ես շրջանակից կախվեցի, չեմ տալիս: Դե, նա էլ թքեց ու թողեց:

Ամրոցով սարի տակ փոքրիկ մարդուկներ են նկարած. մեկը գբոսնում է, մյուսը այծին է քշում կամ կուժը ձեռին ջրի է գնում: Ֆեդենկան սիրում է դրանք նայել, իսկ ես ուրախանում եմ, որ էդպիսի լավ տղա է: Հորը չի քաշել:

Ձեր բանտարկության նախորդ իրիկունը նրա համար չոր սիսեռ կրակող փոքրիկ թնդանոթ էիք սարքում: Ինչ-որ կեռիկ ոչ մի կերպ չէր ստացվում, էդ ժամանակ գրկեցիք Ֆեդկային ու ասում եք. «Գիտես ինչ, եղբա՛յր, արի գնա քնելու: Ես հիմա ամեն ինչ կվերջացնեմ ու բարձիդ տակ կդնեմ: Առավոտը կգարթնես, կտեսնես՝ թնդանո՞թ է: Ո՞նց ես կրակելու»: Նա պառկեց քնելու, իսկ դուք ալարեցիք էդ կեռիկը տեղը գցեք, ինձ քաշեցիք անկողին: Ուզում էիք առավոտը շուտ վեր կենաք ու վերջացնեք, ու հենց էդտեղ էլ Պլատոնովը եկավ՝ զինվորների ու Ոյաբովի հետ: Ֆեդենկան սպասում է ձեզ, աչքը ջուր կտրեց, իսկ իմ մասին՝ էլ չասեմ:

Մի անգամ, աղջիկ երեխա էի, հայրս հետը տարավ Վերխոտուրյե, տոնավաճառ: Անցնում ենք վաճառասեղանների շարքերով, նա լծվածքի գին է հարցնում, իսկ ես ոտերիս տակ եմ նայում, ոնց որ էդպիսի տեղերում բոլոր երեխաները. երազում եմ կորցրած փող գտնել կամ էլ մի ուրիշ լավ բան: Ծուրջը՝ լիքը ժողովուրդ, անասուններ են քշում, աղմուկ, թխկոց: Հորիցս պոկ չեմ գալիս, վախում եմ կորեմ: Մեկ էլ տեսնեմ՝ մի մկնիկ է վազում: Պուճուր, գորշուկ: Դաշտի մուկ չի: Էդպեսները տներում են ապրում կամ խանութներում: Ըստ երևույթին բնից դուրս եկել ու մոլորվել է, վախից ընկել առևտրաշարքերը: Կամաց շվացրի նրան, ու հերիք չի բազարի աղմուկում լսեց, դեռ հասկացավ էլ, խելո՞ք, որ իրան եմ կանչում: Կանգնեց, մռութիկը դեսուդեն արեց, տեսավ ինձ ու աչքերի հուլունքներով ուղիղ ինձ է նայում:

Նրա համար եմ պատմում, որ երբ դուք նոր էիք տեղափոխվել իմ տուն, ու մեր միջև դեռ ոչինչ չկար, Կազյոնևի դվորի մոտով էի անցնում,

որտեղ նույնպես կրպակներ են, ժողովուրդ է հավաքվում, ու թիկունքից տեսա ձեզ: Անցնում էիք Սիդորկա Վանյուկովի հետ, ում մասին ասում էին՝ ձեր լավագույն աշակերտն է, ինչ-որ բանի մասին էիք խոսում, ու ես՝ հիմարս, չգիտեմ՝ ինչի, շշուկով տվեցի ձեր անունը: Մինչև ձեզ մի քսան քայլ կար, եթե ոչ ավելի, ոչ մի կերպ չէիք կարող լսել, բայց չգիտես ինչի լարվեցիք, սկսեցիք շուրջը նայել, նկատեցիք ինձ ու ժպտացիք: Ես ձեր էդ ժպիտը մինչև մահ չեմ մոռանա: Այն հիմա էլ տաքացնում է սիրտս:

Բանջարանոցն եմ փորփրում, իսկ մտքերս թռչկոտում են՝ մկնիկից կատվին: Հիշեցի ոնց Ֆեդենկային հանելուկ տվեցիք կատվի ու յոթ կատվածագերի մասին: Տերը նրանց համար ցանկապատի մեջ շարքով ութ անցք է անում, որ ազատ բակից բակ անցնեն. մեծ անցքը կատվի համար, դրանից փոքրը՝ մեծ ձագի, ու էդպես հերթով: Յոթերորդի՝ ամենափոքրի համար, ամենափոքրիկ անցքը:

Հարցնում եք Ֆեդկային. «Ճի՞շտ է արել տերը»:

Ասում է. «Ճիշտ է»:

Գլխի չէր ընկել հիմարիկը, որ մայրիկի հետևից բոլոր ձագերը մեծ անցքով կանցնեին: Ես էլ միանգամից չհասկացա:

Իսկ ինձ ասացիք. «Հենց այդպես էլ կա, ամեն կենդանի արարած ուզում է իր անցքով անցնել»:

Ես այն ժամանակ հասկացա, որ ձեր մասին ու իմ մասին եք ասում:

Գրում եք, որ երազում ինձ տեսել եք խնձորի նման կրծքերով, բայց դա տղամարդկային սովից է: Մի կես տարի էլ բանտում մնաք, ձմերուկի չափ կդառնան: Մեծ էին, քանի հոգի էի Ֆեդենկայով, հետո էլ կերակրում էի, հիմա արդեն էն չի: Այ, եթե ձեզնից երեխով մնամ, էն ժամանակվա պես կլինեն:

Ալեքսանդրիա

Իգնատի Ելովսկի: Ալեքսանդր I կայսեր կամեր-քարտուղարի մատյան

Հուլիս, 1824 թ.

Թագավորի մոտ մի ձեռագիր տեսա, առաջին թերթին վերնագիրը՝ «Նշումներ Եգիպտական Ալեքսանդրիայի պատմության վերաբերյալ»: Ստածեցի, որ հետաքրքրության պատճառը Մեհմեդ Ալիի ու նրա որդու մասին բարոնուհի Կրիդների նամակն է, և չէի սխալվում:

«Կոստանդիսից եմ վերցրել,- հայացքս որսալով՝ ասաց նա:- Հարցրի Իբրահիմ փաշայի, Ալեքսանդրիայի մասին, և նա ասաց, որ իր մոտ պահպանվել են հոր նշումները այդ քաղաքի մասին: Նրա հայրը ծնունդով այդտեղից է: Կարդա, հետո կասես կարծիքդ»:

Երբ նա առաջարկում է որևէ բան կիսել իր հետ, լինի գեղեցիկ բնապատկեր, թե սեփական ձեռքով հավաքած մի գավաթ մորի, այնպես եմ հուզվում, որ նույնիսկ չի կարելի ուրախություն անվանել: Ուղղակի հանկարծ դժվարանում է շնչելը:

Ձեռագիրը մեծ չէր, մի երեկոյի ընթացքում կարդացի:

«Ալեքսանդրիայի բարգավաճումը,- գրում էր Կոստանդիս-ավագը,- կապում են առևտրային ուղիների խաչմերուկում ունեցած նպաստավոր դիրքի և ներգաղթողների մշտական հոսքի հետ, բայց հին հեղինակները համարում էին, որ ամեն ինչի ակունքը դինաստիայի նախահայր, Ոդիսևսի պես հնարամիտ Պտղոմեոս Լագոսի հանդգնությունն է: Նա պնդում էր, որ մոտ և, հասկանալի է, արյունակցական կապ ունի Ալեքսանդր Մեծի հետ, չնայած իրականում այն տեսակից էր, որին Ռուսաստանում ասում են նա-

պաստակի ջրի ջուր: Այդ ժամանակներում միայն ընդհանուր նախնիների առկայությունն էր իդեալների ընդհանրություն երաշխավորում, իսկ Պտղոմեոսն իրեն ներկայացնում էր Ալեքսանդրի միակ ժառանգորդ, նրա գործի շարունակող: Նրա հավակնությունները հիմնվում էին նաև այն բանի վրա, որ հենց Ալեքսանդրիան էր դարձել քաղաքին իր անունը տված հիմնադրի վերջին հանգրվանը:

Ալեքսանդրը մահացել էր մալարիայից, Բաբելոնում, Ք.ա. 323 թվականի ամռանը: Զինակիցներն անմիջապես անցան ժառանգությունը կիսելուն, ու երեսուն օր, քանի կռվշտում էին, արքայի մարմինն անթաղ էր: Հանգուցյալը պառկած էր չօդափոխվող հեղձուկ շինության մեջ, բայց քայքայման որևէ հետք չհայտնվեց: Դա վկայում էր Զևս-Ամոնի որդու աստվածային բնույթի մասին:

Ժամանակակիցներին բարոյական դաս տալու համար հնագույն հեղինակները դիմել էին չափազանցումների: Բարոյախոսությունն ինքնին բխում էր մեռյալի անդորրության և ողջերի փութագարության հակադրությունից, Ալեքսանդրի՝ ոգի դարձած մարմնի և նրա ժառանգների՝ մարմնի կարիքների մեջ թաղված ոգու հակադրությունից: Իրականում դժվար թե հուլիսյան տապին նրանք չմտահոգվեին մարմինը քայքայումից պաշտպանելու մասին: Հույները կարողանում էին մարմինը նեխելուց պահպանել՝ դիակը սուզելով հեղուկ մեղրի մեջ. ըստ երևույթին հենց այս դեղատոմսով պահպանված մարմինն էլ պառկած էր ինչ-որ տեղ՝ սպասելով հուղարկավորության: Դիադոխները նրա մասին մոռանալ չէին կարող, պարզապես չգիտեին ինչ անել: Հուղարկավորման տեղի խնդիրը անքակտելի էր նրա հանճարով հիմնված կայսրության ճակատագրի հարցից:

Տևական վեճերից հետո համաձայնության եկան, որ գերագույն իշխանությունը կհանձնվի արքայական ընտանիքին, Պերդիկասը կդառնա ընտանիքի հովանավորը, մյուս բարձրագույն հրամանատարները ի կառավարում կստանան առանձին մարզեր: Արքայի վերջին հանգրվան նշանակեցին նրա հայրենի Պելլան, բայց նոր էին համաձայնության եկել, երբ պայծառատես Ալեքսանդրը՝ Թելմասից, գժտության նոր խնձոր նետեց մակեդոնական գեներալներին: Իբր Զևս-Ամոնը իրեն մի մեծ գաղտնիք է

բացել. քանզի Ալեքսանդրը երջանկագույնն էր երկրային տիրակալներից, ապա նրա աճյունն ընդունող հողին վիճակված է երջանկություն ու հավերժ բարգավաճում:

Փխրուն պայմանավորվածությունը փուլ եկավ, վեճերը վերսկսվեցին: Մինչև այդ արքայի աճյունը ոչ մեկին չէր հետաքրքրում, հիմա պետք եկավ բոլորին: Ոչ ոք զիջել չէր ուզում. վերջապես Պտղոմեոս Լագոսը գիշերով գողացավ Ալեքսանդրի մարմինն ու շտապեց հասցնել բաժանման ժամանակ իրեն հասած Եգիպտոս:

Կորուստն ավելի արագ հայտնաբերեցին, քան նա սպասում էր. Պերդիկան մի մեծ հեծելազորային ջոկատով նետվեց հետապնդման: Տեղեկանալով դրա մասին՝ Պտղոմեոսը, որը բավարար ուժեր չուներ ավարը մարտում պահպանելու համար, կարգադրեց կավից մարդահասակ տիկնիկ պատրաստել, արքայական հանդերձներ հագցնել և դնել ոսկեհուռ ու փղոսկրյա դիապատգարակին, որը տեղավորեցին նույնքան շքեղ մարտակառքի վրա: Կավե արքայի թափորը շարունակում էր ընթանալ գլխավոր ճանապարհով, իսկ դիակով սայլը քշեցին խուլ շրջանցիկ ճանապարհներով: Պերդիկան հասավ կեղծ սգո թափորին ու վերադարձրեց Բաբելոն, բայց կեղծիքը միանգամից չբացվեց: Ժամանակը բաց էր թողնված. անգին մասունքին տիրեց Պտղոմեոսը:

Մեմֆիսում, Պտահի տաճարում, քրմերը զմռսեցին արքայի մարմինը: Հետո ուղարկվեց Ալեքսանդրիա, որտեղ հոյակապ դամբարան էր կառուցվել: Համարյա երկու հարյուր տարի Ալեքսանդրը պառկած էր ոսկյա սարկոֆագում, որը դրված էր մի ուրիշ՝ մարմարե սարկոֆագի մեջ: Պտղոմեոս XI-ը ոսկյա դագաղը փոխարինեց պղնձե դագաղով, իսկ ոսկուց դրամ հատեց, որ տա սիրիական վարձկանների ռոճիկը, բայց այդ ժամանակ էլ դեռ դամբարանը գլխավոր պետական սրբատեղին էր: Այնտեղ էին կատարվում կրոնական ծեսերը, բոլոր կողմերից այնտեղ էին հոսում ուխտավորներն ու զբոսաշրջիկները:

Արիստանդրեսի կանխագուշակությունը կատարվեց. Ալեքսանդրիան դարձավ աշխարհի ամենահարուստ քաղաքը: Երեք դար շարունակ թշնամին ոչ մի անգամ չմոտեցավ նրա պարիսպներին: Հյուսիսում բարձրացավ

Հռոմի աստղը, սակայն մեռած Ալեքսանդրը պահպանում էր քաղաքը նաև Անտիգոնյանների, Սելևկյանների և իր այլ հետնորդների թագավորությունների՝ հռոմեական պրովինցիաներ դառնալուց հետո: Արքայատոհմի վախճանը վրա հասավ, երբ վնասվեց նրա իշխանության առհավատչյան: Երբ Մարկոս Անտոնիոսի զորքը ջախջախվեց, և ինքն էլ նետվեց սրի վրա, Օկտավիանոս Օգոստոսը, Ալեքսանդրիայում իջնելով նավից, չբավարարվեց դամբարանի արտաքին զննությամբ ու ներսը տեսնելու ցանկություն հայտնեց: Ոչ ոք չընդդիմացավ սրբապիղծ հետաքրքրասիրությանը. սարկոֆագը բացեցին, բայց դա քիչ թվաց Օգոստոսին, սկսեց շոշափել Ալեքսանդրի դեմքն ու պատահմամբ ջարդեց քիթը: Նույն երեկոյան Կլեոպատրա VII-ը՝ Պտղոմեոսների տոհմի վերջին թագուհին, մեռավ իժի խայթոցից:

Խոսելով Պտղոմեոսների մասին՝ չի կարելի չհիշել նրանց սիրեցյալին՝ Սերապիս աստծուն, ճակատագրի հետ մարտողների աստծուն: Ճակատագրի բոլոր հալածյալները, իրենց կանխորոշված բախտից խուսափել ցանկացողները հելլենական աշխարհի տարբեր ծայրերից հասնում էին Ալեքսանդրիա, Սերապիում, խմբվում իրանին օձ փաթաթած, ոսկեզօծ գլխով ու ակնախոռոչներում շափյուղաներ կրող այդ աստծո վիթխարի արձանի առջև: Պտղոմեոս Լագոսն այդպիսին էր տեսել Սերապիսին երազում և կարգադրել էր քանդակել մարմարից: Պտղոմեոսները նրան այլ աստվածներից առավել էին պաշտում:

Ընտանեկան ավանդույթով օրինականացված արյունապիղծ ամուսնությունները, որոնք կոչված էին ընտանիքն առանձնացնելու այլ մահկանացուներից, բերեցին նրան, որ ընտանիքի անդամներից յուրաքանչյուրը յուրաքանչյուրի, ինչպես և ինքն իր հետ հնարավոր բոլոր աստիճանների ազգակցության մեջ էր: Բոլոր եգիպտական արքաները, ծննդյան ինչ անուն էլ կրեին, գահ բարձրանալիս դառնում էին Պտղոմեոսներ, թագուհիները՝ Կլեոպատրաներ: Այլ խոսքով՝ միշտ գահակալում էին մի տղամարդ և մի կին, որոնց անցողիկ երկրային հատկությունները ոչ մի դեր չէին խաղում: Մահից հետո նրանք, ինչպես եռացող կաթով կաթսայից, աճյունից հառնում էին նորոգ կյանքով և անոչնչանալի բնությամբ: Ալեքսանդրի մու-

միան նրանց բարգավաճում էր ապահովում: Սերապիսը թույլ էր տալիս խուսափել ճակատագրի կամքից, իսկ արյունապղծությամբ սովորել էին կանգնեցնել բուն ժամանակը:

Ո՛չ հին Պելլան, ո՛չ Անտիոքը, ո՛չ Սիրակուզան ի զորու չէին մրցակցելու Ալեքսանդրիայի հետ: Նրա փարոսը աշխարհի հրաշալիքներից էր, նրա պալատներն ու այգիները ցնցում էին երևակայությունը, Մուսեյոնը հելլենական հանճարի տարատեսակ պտուղներ էր տալիս՝ բանաստեղծություններից մինչև մեխանիկական խաղալիքներ, բժշկական դարմաններից մինչև ռազմական մեքենաներ ու տիեզերաձնության տեսություններ, բայց եթե Ալեքսանդրիան համեմատենք գլխի, իսկ Եգիպտոսը մարմնի հետ, ապա դա տղամարդու գլուխ էր՝ կցված երեխայի, թե անկար ծերունու մարմնի: Մայրաքաղաքից հինգ-վեց մղոն այն կողմ սկսվում էր մի ուրիշ աշխարհ, այնքան տարբեր, ասես գլուխը նրա մասը չէր: Հույնը, Ալեքսանդրիայից Նեղոսով բարձրանալիս ասում էր. «Գնում եմ Եգիպտոս»: Հռոմեացին երբեք չէր ասի, որ Հռոմից մեկնում է Իտալիա, ինչպես որ եգիպտացին չէր բաժանում Մեմֆիսը մնացած երկրից:

Աշխարհում ոչ մի տեղ բյուրոկրատիան այնքան հնարամիտ չէր, որքան Պտղոմեոսների պետության մեջ: Հսկայական երկրի ողջ կենսակարգը, ներառյալ ցանքսի ժամկետներն ու գարու և ցորենի բաժնեչափերը գյուղացիական դաշտերում, որոշվում էր մայրաքաղաքում: Տնտեսությունը լրիվ կքայքայվեր, եթե չլիներ ժողովրդի ու գահի արանքում կանգնած պաշտոնյաների ծախվածությունը: Նրանց շահամոլության շնորհիվ առևտուրը համենայն դեպս գնում էր, հողը բերք էր տալիս, կովերն ու ոչխարները բազմանում էին: Պտղոմեոսների մեջ ամրանում էր համոզմունքը, որ եթե շարունակեն նույն ոգով, գործերն ավելի լավ կգնան, արդյունքում՝ կառավարական կարգադրությունների նոր հոսք էր հաջորդում: Բոլորը կատարելը մարդկային ուժից վեր էր, ու քանի որ օրենքների աղբյուրը աստվածացված արքան էր, և անհնազանդությունը հավասարեցվում էր սրբապղծության, Եգիպտոսը վերածվել էր մեղավորների երկրի: Մեղավորության զգացումը մի կողմից անտարբերություն էր ծնում, մյուս կողմից՝ լարված սպասում ինչոր տիեզերական աղետի, որից հետո այն քիչը, որ կպահպանվի, որքան ար-

դար, նույնքան էլ մշուշոտ հիմերի վրա էր կանգնելու:

Ընդսմին, ի տարբերություն հին եգիպտական արքայատոհմերի, որոնց անծանոթ կամ համարյա անծանոթ էր իշխանության համար ներընտանեկան պայքարը, Պտղոմեոսները բանի տեղ չէին դնում արյունակցական կապերը, եթե դրանք փակում էինք դեպի գահ տանող ճանապարհը կամ սպառնում դրա կորստով: Արյունապիղծ ամուսնություններն ու ազգականների սպանությունները,- ընդհուպ մինչև ուղիղ ժառանգներ ու նախնիներ,- նույն մեդալի երկու երեսն են:

Պտղոմեոս III-ը սպանվեց որդու՝ ապագա Պտղոմեոս IV-ի ձեռքով: Հետագայում մարդասպանը որոշեց ազատվել նաև մորից, կնոջից, հոր եղբորից ու փոքր եղբորից, և եթե այդ ոճիրները չգործվեցին, ապա ոչ այն պատճառով, որ հղացողի խիղճն արթնացել էր: Հաջորդ երկու Պտղոմեոսները քչերին չկոտորեցին իրենց ընտանիքից, ճիշտ է, ոչ ամենամերձավորներին, փոխարենը՝ Պտղոմեոս VIII-ը գահին տիրեց՝ մանկահասակ զարմիկին սպանելով: Նրա մայրն ամուսնացավ որդուն սպանողի հետ, որ արագ մոռանա մայրական վիշտը: Եվ մխիթարվեց՝ հղիանալով ու ծնելով մի ուրիշ տղա, բայց հեռատես հայրը հրամայեց սպանել նաև սեփական երեխային, ինչից հետո բաժանվեց նրա մորից և ամուսնացավ զարմուհու հետ: Սրա ծնած որդին ողջ մնաց միայն այն պատճառով, որ աշխարհ էր եկել հոր մահվանից հետո: Այրիացած թագուհի մայրը նրան գահ բարձրացրեց որպես Պտղոմեոս IX, բայց զղջաց իր ալտրուիզմի համար ու որոշեց անձամբ կառավարել: Որդու հետ հաշվեհարդար տեսնելու փորձն անհաջող էր, նա ինքը սպանեց մորը, բայց Պտղոմեոս X-ի բախտն ավելի քիչ բերեց. սպանվեց հարազատ մոր ձեռքով: Սա գահ բարձրացրեց մյուս որդուն՝ Պտղոմեոս XI-ին, և որպես երախտագիտություն խեղդամահ արվեց նրա կողմից: Պտղոմեոս XII-ը, ամուսնանալով խորթ մոր հետ, նրանից ազատվեց նույն թեթևությամբ, որով Պտղոմեոս XIII-ը սպանել էր հարազատ դստերը: Այդ ամենով հանդերձ՝ նրանց պաշտում էին, զոհեր մատուցում նրանց անդրիներին և ապավինում այդ մանկա-, կնա- և մայրասպաններին՝ որպես միակ պաշտպանների այն դաժան աշխարհում, որտեղ մարդն ուրիշ ոչ մի ապավեն չունի:

Ի տարբերություն ցինիկ հելլեների՝ պարզամիտ բնիկները Պտղոմեոսների մեջ անկեղծորեն աստվածներ էին տեսնում, բայց դա չէր խանգարում հավատալու եգիպտական քրմերի մարգարեություններին, որոնց աստվածները ստիպված զիջել էին իրենց առաջնությունը Օլիմպոսի բնակիչներին: Օզիրիսի և Իսիսի նվաստացված սպասավորները ատում էին հյուսիսային եկվորներին և հոգին թեթևացնում այն աշխարհի շուտափույթ վախճանի մարգարեություններով, որտեղ նրանց նախասրահից առաջ չեն թողնում: Կանխագուշակում էին, որ Ալեքսանդրիան դատապարտված է անխուսափելի կործանման, մի կեսը կուլ կգնա ծովին, մյուսը՝ ճահիճներին, որտեղից դուրս է եկել, և միայն ձկնորսներն իրենց ցանցերը կչորացնեն նրա տեղում:

Այն իսկապես անհետացավ երկրի երեսից՝ մեզ նախազգուշացում թողնելով, որը մինչև օրս բացված չէր: Միայն վերջերս հասկացա, որ վայրի ծովափին, Նեղոսի դելտայի ճահիճների մեջ արքայական հանճարով հառնած, ջրանցքներով կտրտված, ըստ կարգի գծագրված ու խրուտներից կառուցողների ոսկորների վրա բարձրացած քաղաքը Սանկտ Պետերբուրգի նախատիպն է: Նմանությունը չի սպառվում նրանց աշխարհ գալու հանգամանքներով. նրանց կործանման կանխատեսման մեջ նույնպես տեսանելի է Արարչի թաքուն մտահղացումը, որը կրկնակներ է ծնում նույն համառությամբ, որով զորավարը մարտի է ուղարկում նոր ռազմիկների՝ ընկածների փոխարեն, եթե նրանք զոհվել են՝ չկատարելով իրենց առաջ դրված խնդիրները:

Դա դաժան անառակ քաղաք էր, բոլոր արատների զետեղարան, և այդ ամենով հանդերձ՝ աստվածների կացարան: Նրանք այնտեղ ապրում էին գեղեցկության ու մահվան ահի սահմանին, որտեղ միշտ բնակվում են աստվածները, և հեռացան Պտղոմեոսների հետ: Պլուտարքոսը պատմում է, որ Կլեոպատրայի մահվան նախորդ գիշերը, Օկտավիանոս Օգոստոսի լեգեոնների՝ Ալեքսանդրիա մտնելու նախօրեին, քաղաքացիներին արթնացրին մի սքանչելի մեղեդու հնչյունները: Մարդիկ նետվեցին դեպի պատուհաններն ու ոչինչ չտեսան. փողոցները խավար էին, ամայի, իսկ մեղեդին շարունակում էր հնչել: Անտեսանելի նվագախումբը, թաղամասից

թաղամաս անցնելով՝ դանդաղ հատում էր սսկված քաղաքը. Ալեքսանդրի դամբարանի մոտով, որտեղ նա պառկած էր դեռ չջարդած քթով, Սուսեյոնի և Սերապիումի մոտով, թագավորական պալատների ու այգիների մոտով: Դիոնիսոսը՝ հելլենական աստվածներից վերջինն էր իր շքախմբով լքում Ալեքսանդրիան, որը դատապարտված էր առավոտյան դառնալու Հռոմի ավարը: Մարդկային աչքերից թաքնված հավերժահարսերը, սատիրները, բաքոսուհիները հրաժեշտ տալով անցան քաղաքով. մեղեդին մարեց նավահանգստի շրջանում: Պատկերացնում եմ՝ մարդիկ ինչպես են հեռանում պատուհաններից, հորանջում, իրենց պետքերը հոգում, վառում օջախները կամ պառկում՝ ընդհատված քունը շարունակելու, դեռ չհասկանալով կատարվածի իմաստը, ու սիրտս սեղմվում է: Չկա ոչինչ ավելի տխուր այդ խավարի խորքը հեռացող, ալիքների ճողփյունին ու ճայերի ճիչին ձուլվող գիշերային մեղեդուց մի աշխարհի, որ վաղը չքանալու է ընդմիշտ»:

Ես շրջեցի վերջին էջը ու դարձերեսին տեսա երկու գրառում՝ թագավորի ձեռքով:

Առաջինը. «Աստված չանի մի գիշեր մեր երեխաները կամ թոռները այդպիսի երաժշտություն լսեն Միլիոննայայում կամ Գորոխովոյում, մոտենան պատուհաններին ու չտեսնեն երաժիշտներին»:

Երկրորդը. «Խուսափել ճակատագրի կամքից... Հնարավո՞ր է: Կա՞ աշխարհում այդ ուժը, որ հույները մարմնավորում էին Սերապիսի կերպարում»:

Շառլ-Անտուան Ֆաբիե: Ապստամբի օրագիրը

Հուլիս-օգոստոս, 1824 թ.

Հույներն իրենց թեթևամտությամբ, որն իբրև ճակատագրապաշտություն են ներկայացնում, չէին էլ մտածում Իբրահիմ փաշայի մասին, իսկ իմ գլխից նա դուրս չէր գալիս: Օգտվեցի Ալեքսանդրիա այցելելու առիթից, որ գնահատեմ այնտեղից եկող սպառնալիքի չափերը: Իմ հրամանատարությամբ կանոնավոր գունդ այդպես էլ չէր կազմվել, չնայած խոստացել էին դեռ անցյալ տարի, իսկ այստեղ մի դալմաթինյան նավ հանդիպեց. մեծ արկ-

ղերով ինչ-որ գաղտնի բեռով Նավպլիոնից լողում էր Ալեքսանդրիա: Տախտակամածին ծխելու արգելքը ամրապնդեց կասկածը, որ վառոդ է տեղափոխում, որը կառավարությունն անգլիական վարկով գնել է Եվրոպայում ու շահավետ վերավաճառել մեր թշնամի եգիպտացիներին: Զբոսաշրջիկ ներկայացա, ու նավապետը չափավոր վճարով ինձ նավ վերցրեց որպես միակ ուղևորի: Համընթաց քամին մեզ արագ հասցրեց Ալեքսանդրիա:

Խարիսխ գցեցինք հեռավոր նավակայանում: Նավահանգիստը, որտեղ կանգնած էր անգլիական նավատորմը, այդտեղից չէր երևում, իսկ երբ ծովափնյա սրճարանում հարցրի ճանապարհը, այնտեղ նստած հույներն ասացին, որ չարժի շտապել, Իբրահիմ փաշան ինձնից ոչ մի տեղ չի փախչի. մթերքի պաշար չունի, նավաստիները չեն հերիքում, Նեղոսի ու ծովի միջև ջրանցքը տղմոտել է, զինվորական հանդերձանքը քարավաններով Կահիրեից են բերում: Մինչև աշնանային փոթորիկները չեն կարողանա ծով դուրս գալ, իսկ ենթադրությունները, թե ինչ կլինի գարնանը, անիմաստ են: Մոռացել էի, որ այդ փառավոր մարդիկ նավպլիոնյան ստրատեգների տոհմից են, սուրճ խմեցի նրանց հետ ու վերադարձա նավ, իսկ առավոտյան արթնացրեց նախորդ օրվա ծանոթներիցս մեկը: Նստեցինք նավակողից այն կողմ ճոճվող նավակն ու քիչ անց խառնվեցինք փողոցները հեղեղած ամբոխին:

Այդ հոծ զանգվածի մեջ սեղմված՝ ցածրահասակ լինելուս պատճառով շատ բան չէի կարող տեսնել, իսկ ուղեկիցս Ժլատ էր բացատրությունների հարցում: Հետո մարդկանց շրջապտույտը նրան ընդհանրապես ինչ-որ տեղ քշեց: Սաստկացող գարշահոտ էի զգում, բայց չէի կարողանում հասկանալ ո՛չ ծագումը, ո՛չ տեղը, որտեղից փչում էր, մինչև ամբոխը չսկսեց նոսրանալ՝ տարածվելով ծովափնյա շերտով, ինչպես հանդիսատեսը պարտերով՝ ներկայացումը սկսվելուց առաջ: Բացվեց կատարելապես մերկ ափը: Ցցված ծառակոճղերից դատելով՝ առաջ այդտեղ արմավենու պուրակ էր եղել, բայց կես տարվա ընթացքում նավաստիներն ու զինվորները կտրել էին, որ կրակ անեն կերակուր եփելու համար: Ավազը ծածկված էր կերված կենդանիների մնացորդներով ու ոսկորներով, ապականված՝ մարդկանց, ձիերի և ուղտերի արտաթորանքով: Օդում դժոխա-

յին բզզոցով անթիվ-անհամար ճանճեր էին պտտվում: Ծովին անհնար էր մոտենալ անտանելի գարշահոտի պատճառով. ջրի վրա թանձր փռվել էր մարդկային կղանքը:

Նավահանգստում բարձրանում էր կայմերի անտառը: Մոտակա կայմերը մերկ ու անշարժ էին, բայց նավահանգստի մուտքի թեթև ալիքից գագաթներով արդեն երկնի կապույտը խազողների վրա առագաստներ էին բարձրացնում: Մի քանի նավ լրիվ կազմուպատրաստ էր: Ուշադիր նայելով՝ հասկացա, որ կանգնած չեն, այլ քթերին եղնաչյա սիրեններով լոցմանական նավակների փոքրիկ վտառի առաջնորդությամբ դանդաղ շարժվում են դեպի ծով: Կենդանի արարած պատկերելու՝ Մուհամեդի արգելքին հակառակ նախշած այդ կանացի աչքերը կարողանում էին ծովածոցի պղտոր ջրի տակ տեսնել խութերն ու ծանծաղուտները:

Եգիպտական նավատորմն ահռելի է: Մի քանի ժամում, դիտարկման կետն անընդհատ փոխելով, 54 ռազմանավ ու մոտ չորս հարյուր բեռնանավ հաշվեցի: Ամբոխի մեջ լսածս խոսակցությունները հաստատեցին ինչ առաջ էլ գիտեի. նավատորմի հրամանատարը ծովակալ Հասան փաշան է, Մեհմեդ Ալիի սիրելի փեսան, իսկ ցամաքային կորպուսն ու արշավանքի ընդհանուր ղեկավարությունը հանձնարարվել են Իբրահիմ փաշային՝ նրա գեներալներից լավագույնին: Զինվորական գործը սովորել է Ֆրանսիայում: Հայրը նրան էր վստահել 17 հազար վարժեցված հետևակ, հարյուր հիսուն դաշտային և երկու տասնյակ պաշարողական թնդանոթ: Նրա դրոշը բարձրացված է 120-թնդանոթանոց «Ասիա» ֆրեգատի վրա:

Հելլենասերներից շատերը հավատում են, որ Հունաստանում խաչի ու մահիկի պատերազմ է, և հույները խրախուսում են այդ մոլորությունը, որպեսզի Եվրոպայի աչքին քրիստոնեության պաշտպաններ երևան: Իրականում ամեն ինչ այդքան միանշանակ չէ: Եթե օտարերկրացիները թուրքական բանակում պարտավոր են իսլամ ընդունել, ապա եգիպտականում դա պարտադիր չէ: Իբրահիմ փաշայի բանակում հարյուրավոր քրիստոնյաներ են ծառայում, և դրանք ղպտիներ ու եթովպացիներ չեն: Նավերի ուղին գծելու, ռազմական գործողությունները պլանավորելու, սակրավորական աշխատանքները ղեկավարելու են փորձառու օտարերկրյա սպա-

ները՝ ֆրանսիացիներ, պրուսացիներ, ավստրիացիներ, հոլանդացիներ: Այդ վարձու սրիկայախումբը Իբրահիմ փաշայի մոտ է հասել ողջ Եվրոպայից: Փաշան նրանց համար հսկայական ռոճիկ է սահմանել և աչք է փակում իսլամին ներհակ հարբեցողության վրա:

Ուղեկիցս ինձ գտավ ափին և առաջարկեց վիշտը խեղդել գինու մեջ: Դժվարությամբ ազատվեցի նրանից ու գնացի մենակ շրջելու քաղաքում: Հունական թաղամասերում զբոսանքը մի անգամ ևս համոզեց, որ ալեքսանդրիական հույները մսխել են նախնիների բոլոր արժանիքներն ու մասամբ նույնիսկ արատները՝ փոխարենը վատագույնը վերցնելով հրեաներից ու հայերից:

Պտղոմեոսների մայրաքաղաքից նույնիսկ ավերակներ չեն մնացել, ծովեզերքի աղի հողը ամեն ինչ կլանել ու լուծել է իր մեջ: Տեղիս գլխավոր տեսարժանությունը ծովային մաքսատան շենքն է, որտեղ ապրել են Բոնապարտն ու Կլեբերը՝ պատրաստվելով բանակը տանել դեպի բուրգերը՝ մամլուքների հետ ճակատամարտի: Սենյակներից մեկի հատակին դեռ տաք մոխրի հետքեր են ցույց տալիս, որ թափվել է, երբ նրանք զորադասավորումը քննարկելիս ծխամորճերով կտկտացնում էին քարտեզներին: Նրանց մասին հիշողությունը երկյուղածությամբ պահպանում են բնիկները, որոնց այդ փառավոր ծխողները հազարներով էին կոտորում: Աստված չանի ոտքդ դնես վառված տեղին: Ըստ երևույթին անընդհատ թարմացվող, որ նոր թվան՝ այդ հուշակոթողները պետք է հեռվից նայել, որ ոչ մի դեպքում չտրորեն կրունկներով:

Սուտքը վճարովի է: Եթե մայրամուտի ամպերը կամ սքանչելի բնապատկերները մատչելի լինեին զուտ փողի դիմաց, դրանցով հիանալու սիրահարներն այնքան էլ շատ չէին լինի: Այլ բան է մարդկային վեհության վաղանցիկ նշանների տեսարանը: Ոչ ոք չի հիշում չարը, որով դրանք ուղեկցվում են, բայց դրա մեջ նաև սփոփանք կա. բարին հարազատ է մարդուն, բնական, քան չարը, որն ավելի քիչ է զարմացնում մեզ, ուստի և արագ մոռացվում է:

Մինչ սպասում էինք նավամատույցի մեր հերթին, ամեն օր, ինչպես

ծառայության, գնում էի հաշվելու Իբրահիմ փաշայի մեկնող նավերը, ու երբ բոլորը լքեցին նավահանգիստը, արդեն ափ չէի իջնում: Փակվում էի նավախցում, կարդում, հետևում՝ ինչպես են բարձում մեր նավը: Ալեքսանդրիան արդեն ո՛չ Եգիպտոսի հռչակավոր ցորենն է ուղարկում Եվրոպա, ո՛չ կտավ, ոչ ծիրանի, ո՛չ թրծակավ: Դատարկ չվերադառնալու համար նավապետը պետքարանների կոյաջրերով աճեցրած, արտասովոր խոշոր ու քաղցր սոխ ընդունեց նավամբար: Հիմա դա տեղիս արտահանման գլխավոր ապրանքն է:

Վերջապես դուրս եկանք ծով: Ուժեղ հյուսիս-արևելյան քամին թույլ չտվեց միանգամից ուղղություն վերցնել դեպի Մորեա, ստիպված էինք աֆրիկյան ծովեզերքով լողալ դեպի արևելք: Ծուտով հասանք Իբրահիմ փաշայի հետ մնացած նավերին, և էլի մեկ-երկու օրից հայտնվեցինք եգիպտական նավախմբի կենտրոնում: Դա մեզ թույլ էր տալիս չվախենալ ծովահեններից:

Այդ ընթացքում վրա հասավ մահմեդականների համար կարևորագույն Ուրազա բայրամի տոնը, արաբերեն՝ Իդ-ալ-Ֆիթրը կամ Պասբացեքի օրը: Պահքի ավարտը նշելու համար Իբրահիմ փաշան հրամայեց խարիսխ գցել Մակրիական ծոցում: Անձնակազմերը մնացին նավերի վրա, էքսպեդիցիոն կորպուսի զինվորներին նավակներով ու դեսանտային բարկասներով ցամաք հասցրին: Երեկոյան կողմ, նավապետից թիավարներով մակույկ խնդրելով, ես էլ ափ իջա ճամբարի մոտ: Կաթսաների տակ բոցկլտում էին տասնյակ խարույկներ, բարձրանում էր փլավի խելքամաղ անող հոտը: Ալլահի սոված ռազմիկները դրանով պիտի հագենային արևի մայր մտնելուց հետո:

Մայրամուտից մի քիչ առաջ ողջ 17-հազարանոց բանակը, համաչափ շարասյուներով, որքան տեղանքը թույլ էր տալիս, սպաները՝ գումարտակների ու խմբերի աջից, շարվեցին ափին՝ դեմքով դեպի ծովը, թիկունքով՝ ծովեզրյա լերկ բլուրները: Ասես կախարդական փայտիկի շարժումով՝ մեզ ձանձրացրած ու Հունաստանը պահպանող հյուսիս-արևմտյան քամին հանկարծ դադարեց: Ալիքները, որ ծովածոցում առանց այդ էլ թույլ էին, լրիվ անհետացան:

Քրիստոնյա սպաների մեծ մասը սպասում էր ենթակաների հետ

գիշերային հացկերույթը կիսելուն, բայց շատերը, օգտվելով իրենց կրոնի արտոնությունից, արդեն լցրել էին ստամոքսները: Ոմանք այնքան էին տարվել դրանով, որ չհասցրին տեղ գրավել շարքում: Ուշացածներից մեկը, հրետանավորի համազգեստով մի ջահել ֆրանսիացի, կանգնեց կողքիս: Խոսքի բռնվեցինք, և նա հպարտությամբ նշեց իր ռոճիկի չափը: Հունական կառավարության ծառայության մեջ ես տասնապատիկ քիչ էի ստանում:

Մեզնից հարյուր քայլի վրա, ափին մոտ մի թիանավ էր կանգնած՝ նավակողից նավակող փայտամած բարձրահարթակով: Հարթակին, ավելի ճիշտ՝ վրան փռած գորգին կանգնած էր մի կարճահասակ մարդ, որը համազգեստի պարզությամբ առանձնանում էր իր ոսկեզօծ շքախմբից: Հասկացա, որ Իբրահիմ փաշան է: Այդ հեռվից դեմքը տեսնելն անհնար էր, բայց երևակայությունս պատրական հստակությամբ պատկերում էր նրա մասին գիտեցածով: Ծնունդով հույն է, մայրը փոխել է հավատը՝ դառնալով Մեհմեդ Ալիի կինը, որն այն ժամանակ բեկ էր Ռումելիայում ու որդեգրյալին հարազատ որդու պես էր մեծացրել:

Ինձ միացած հայրենակցիս հարցրի, թե Իբրահիմ փաշան ինչու է թիանավի վրա, ոչ թե զորքի հետ: Պարզվեց, որ նա իրավունք չունի ափ իջնելու, Ղուրանի վրա երդվել է հորը, որ Ալեքսանդրայից դուրս գալուց հետո առաջինը ոտք կդնի Մորեայի հողին:

Ռուանում մի տարեց գնդապետի գիտեի՝ Փարիզի ռազմական դպրոցի նախկին դասախոս, որտեղ սովորել էր պատանի Իբրահիմը: Պատմում էր, որ ընդունակ երիտասարդ էր՝ արդարության սրված զգացումով, ուստի զարմանալի չէ, որ նրա կուռքը դարձավ Ժան-Ժակ Ռուսոն: Բոլորովին նման չէր ստրկամտությունից, ամենաթողությունից ու անբանությունից այլասերված ասիական արքայազնի: Դասախոսները խղճում էին համակրելի պատանուն՝ կանխատեսելով, թե որքան դժվար է լինելու նրա համար Կահիրեի պալատում՝ այնտեղ իշխող բարքերով, բայց երբ գազանաբար ծեծեց համադասարանցուն, դադարեցին նրա համար անհանգստանալ: Պարզվեց՝ տուժողը համաձայնել էր իսլամ ընդունել, գայթակղվելով եգիպտական բանակում խոստացված բարձր պաշտոնով, բայց երբ բանը հա-

սել էր թլպատվելուն, միտքը փոխել էր:

Արևը հարավի համար սովորական արագությամբ գլորվում էր դեպի հորիզոն: Որքան իջնում էր, այնքան լռությունը թանձրանում էր ափին: Եվս մի րոպե, երկու, հինգ, և անլսելի դարձավ ծովափնյա կոպիճի խշրտոցը զինվորների ոտքի տակ: Հազարավոր մարդիկ վերածվել էին արձանների: Ինձ ապշեցրեց, որ աղմկոտ արաբները կարող են այդքան ժամանակ ոչ մի հնչյուն չարձակել: Ասես դադարել էին շնչել:

Կարմիր սկավառակի վերին եզրը նոր էր սուզվել ծովը, երբ լռության մեջ հնչեց միայնակ շեփորը: Այդ ազդանշանով դղրդաց նավային բոլոր հրանոթների, բոլոր հրացանների ու մուշկետների խլացնող համազարկը: Ճրջակա բլուրները ցնցվեցին, հրաձիգները պատվեցին վառոդի ծխով, որի քուլաները, ծավալվելով, դարձան երկու հսկա ամպ: Մեկը դանդաղ բարձրացավ նավերից վեր, մյուսը կախվեց հրանոթների ու հրացանների դղրդոցից խլացած շարասյուների գլխին: Երկուսն էլ երկար ժամանակ չէին հալվում անշարժ օդում:

Այստեղ մայրամուտից հետո միանգամից մթնում է: Երբ ծուխը ցրվեց, իսլամի ռազմիկներն իրենցից վեր, բարձր երկնքում տեսան արծաթե կիսալուսինը՝ իրիկնային գունատ ու միակ աստղիկի կողքին: Նեղ, ծայրերը ոչ թե կողքի, ինչպես հյուսիսային երկրներում, այլ վեր պարզած լուսնի մանգաղն այնքան անսպասելի հայտնվեց բարձունքում, ասես հրանոթների դղրդոցն ավերել էր նրա զնդանի պատերը: Ասես անեծքից ազատված պատանի արքայազն էր հառնել մեր առաջ:

Կրկին լռություն տիրեց, աներևակայելի՝ մարդկանց այդպիսի կուտակման համար: Նույնիսկ իմ կոկորդը սեղմվեց հուզմունքից: Հետո տասնյոթ հազար կոկորդներից պոռթկաց ցնծության աղաղակը:

«Ալլահն օրհնում է մեր արշավանքը»,- սուտ բարեպաշտությամբ ասաց կողքիս կանգնած ֆրանսիացի հրետանավորը, և ես խեղդող ատելություն զգացի նրա հանդեպ:

Հարված

Բարոն Կրիդները՝ բարոնուհի Կրիդներին

Հուլիս, 1824 թ.

Սոսցեպանովի հետ խոսել և նրա գաղտնիքն իմանալ չհաստրի: Չեմ կարծում, թե կապ ունի գրածիդ հետ, ասենք, հիմա դրա սիրտն էլ չունեմ: Օրերս ֆելդեգերական փոստով ստացվեց ինձ պաշտոնից հեռացնելու մասին Պետական խորհրդի որոշումը: Պատճառը չի բացատրվում, բայց հեշտ է եզրակացնել նրանից, որ տեր թագավորն իմ տեղը նշանակել է Ռազմական մինիստրության նախկին բաժնի պետ և Արակչեևի վաղեմի հաճախորդ Կիրիլ Տյուֆյաևին: Ինձ նոր պաշտոն չեն առաջարկել և չեն առաջարկի: Այս շաբաթ մեկնում եմ Պետերբուրգ, այնտեղից՝ տուն, Ռիգա:

Քո հանդեպ Օձի ատելությունից բացի, իմ ճակատագրի վրա ազդել է Աստվածաշնչյան ընկերությունից թագավորի հիասթափվելը: Ընկերության Պերմի բաժանմունքը հիմնվել էր իմ եռանդուն մասնակցությամբ, սկսել էինք Ավետարանը փոխադրել կոմի-զիրյանյան լեզվին, բայց ներկա հովերի պարագայում դա դժվար արժանիք դիտվի ինձ համար: Մեզ մոտ բոլորը միահամուռ հնի ջատագով են դարձել, ինչպես առաջ սարի պես կանգնած էին բարեփոխումների թիկունքում, ու հարձակվում են նույնիսկ Սուրբ գրքի ռուսերեն թարգմանության վրա. թե ինչու, իբր «հավատում եմ միակ Աստծուն» հասկանալի չէ, իսկ «հավատում եմ մեկ Աստծու»՝ հասկանալի է: Տասնյակ անգամներ լսել եմ այդ տափակ կատակը: Ասես նշանաբան լինի, որով ճանաչում են յուրայիններին: Ես դրանցից չեմ:

Լեոնիդ ՅՈՒԶԵՖՈՎԻՉ

Գրիգորի Մոսցեպանովը Մատվեյ Մոսցեպանովին

Հուլիս, 1824 թ.

Ամ, վաղաժամ էր ուրախությունս: Բարոն Կրիդներին դուրս արին, ու մեր գլխին նոր նահանգապետ ընկավ՝ Կիրիլ Յակովլևիչ Տյուֆյաևը: Նրա օրոք հանկարծ պարզվեց, որ իմ գործի քննությունն ավարտված չի: Նորից պահակախմբով տանում են դատարան, էնքան հարց են շարել՝ հինգ թերթի վրա չի տեղավորվում: Դրան էլ գումարել են իմ նախկին աշակերտ Սիդորկա Վանյուկովի զրպարտությունը: Իմ ամենաընդունակ աշակերտն էր, ոչինչ չէի խնայում նրա համար: Սովորացրի ու փորձանք դարձրի գլխիս: Սիգովը վախեցրել է նրան, թե ռուբլով առել, և ահա իժի ծնունդը ջանք չի խնայել, մի սրտաճմլիկ պատմություն է հորինել, թե ոնց է աշնանը գնացած եղել անտառ՝ սունկ հավաքելու, ու ես դարան եմ մտել, իրեն գայթակղելով քաշել Խանձված ձորակ, բլուրներից դենը ու հարկադրել սոդոմական մեղքի, էն էլ էնպես, որ հետո մի ամիս արյուն էր կղում:

Առանց արցունքի կարդալ չի լինում: Ի՞նչ Կարամզին: Ես քու պո՛ռտը... Տաղանդ է, իզուր չեմ հռետորաբանություն սովորեցրել: Մի ամբողջ վեպ է շարադրել՝ որ օրն էր, որ ժամին, ինչ եղանակի, քանի կարմրագլխիկ ու ժանտասունկ կար իր զամբյուղում, երբ հանդիպեցինք: Իսկ ո՞նց էր սիրում ինձ: Սիրով նվիրեց իր գանձը՝ կարմիր թղթով փաթաթած ընկույզը:

Սուտը մերկացրի, ու հոգիս մաքրվեց, բայց մաքուր հոգով Պերմի նահանգում չես ապրի: Այստեղ որ պաշտոնյային էլ վերցնես, արջի թաթեր է պահում ծոցում, հասարակ մարդկանց աչքը կապելու համար. իբր, արջն է չարություն անում, մենք կապ չունենք: Դատավորներն այդ թաթով Սիգովից կաշառք էին վերցնում, որ ինձ դատեն, իսկ հիմա դա հենց իրենց պետք եկավ: Նոր ավելի օրոք նրանց համար ավելի լավ է հին աղբը ոտքի տակ չընկնի: Տեսնելով, թե գործն ինչ ընթացք է ստանում, որոշեցի լավը դառնալ ու խոսք բացեցի գաղտնիքիս մասին, թե՝ պատրաստ եմ հայտնելու, բայց լսել անգամ չուզեցին: Նրանց իմ գաղտնիքը պետք չի, նրանց պետք է, որ հնարավորինս շուտ ինձ Սիբիր քշեն, թե չէ նոր նահանգապետը կպահանջի բացատրել, թե ազնվական անձին ի՞նչ հանցանքի համար

են կես տարի բանտում ու հինգ ամիս էլ հաուպտվախտում պահել:

Ինձ նորից բակից դուրս չեն թողնում ու զրկել են նամակագրությունից: Միայն այս նամակը համաձայնեց փոստատուն տանել հին ծանոթս՝ մայոր Չիխաչովը: Նրան Եկատերինբուրգից Վերխնեուրալյան լեռնային գումարտակով գործուղել են այստեղ, որովհետև Պերմում զինվորները քիչ են, թագավորի գալուց ժամապահ կանգնող չի լինի: Բարեսիրտ մարդ է, ինձ թաքուն հայտնեց, որ այս աշուն թագավոր կայսր Ալեքսանդր Պավլովիչը պատրաստվում է ժամանել Ուրալ ու մի քանի օր Պերմում է մնալու Օրենբուրգից Մոսկվա ճանապարհին:

Գիտեմ, ոտքերդ հիվանդ են, բայց ուրիշ եղբայր չունես: Հետո քեզ ես մեղադրելու, որ օգնության չհասար: Բարի եղիր, խնդրագիր պատրաստիր գերագույնի անունով ու բեր Պերմ: Նկարագրիր իմ բոլոր հալածանքները, իսկ վերջում ավելացրու, որ ես ազնվական-ռազմիկ եմ, որն իր առողջությունը զոհաբերել է պատվո դաշտում, մտադիր եմ նորին կայսերական մեծությանը մի առանձնակի կարևոր գաղտնիք բացել, որը կօգնի մահիկի դեմ խաչի հաղթանակին:

Լավագույնը կլինի, որ կարողանաս խնդրագիրն անձամբ նրան հանձնել: Գուցե այդ դեպքում ցանկանա տեսնել ինձ ու խոսել հետս, իսկ այսպես նրան չեմ հանդիպի: Չիխաչովը տեսել է օրակարգը, թե Պերմում ուր է գնալու, և ասում է, որ հաուպտվախտը նշված չի:

Իջևանել կարող ես Ներքին շուկայի մոտի հյուրատանը, այնտեղ համարներն ավելի էժան են: Աշնան սկզբին ճանապարհները դեռ չոր են լինում, Կազանյան մեծուղով երեք օրում կհասնես մեզ մոտ:

Չիխաչովն ասում է՝ կարգադրված է թագավորին սպասել սեպտեմբերի 20-ից:

Այ եթե այդ ժամանակ հասնեի՞ր:

Պերմի նահանգապետ Կիրիլ Յակովլևիչ Տյուֆյաևը իշխան Լոբանով-Ռոստովսկուն

Հուլիս, 1824 թ.

Ձերդ պայծառափայլության՝ Արդարադատության մինիստրության 2-րդ բաժանմունքից ուղարկված 1223 գրությանն ի պատասխան հայտնում եմ. Պերմի վերին գավառական դատարանի ս/թ հուլիսի 29-ի որոշումով՝ պաշտոնաթող շտաբս-կապիտան Գրիգորի Մաքսիմովիչ Մոսցեպանովը, Նիժնիտագիլյան գործարանների կառավարիչների դեմ զրպարտությունների, ինչպես և սոդոմականության, աստվածանարգության և այլնի համար դատապարտվել է բոլոր կոչումներից և ազնվականությունից զրկման և Սիբիր աքսորվելու: Որոշումն ուղարկվել է Կառավարող Սենատ՝ վավերացման, ու մինչև այն ստանալը Մոսցեպանովը կպահվի ոչ թե բանտում, այլ հաուպտվախտում: Նրա քրեական գործից, որը ներկայումս 1672 էջ է, քաղվածք է պատրաստվում, որն ավարտելուն պես կներկայացվի ձերդ պայծառափայլությանը:

Իգնատի Ելովսկի: Ալեքսանդր I կայսեր կամերքարտուղարի մատյանը

Հուլիս-օգոստոս, 1824 թ.

Տեր թագավորին վերադարձրի Ալեքսանդրիայի մասին Կոստանդիսի նոթագրումները, բայց դրանց մասին չխոսեցինք: Հիմա դրա սիրտը չունի. 16-ամյա Սոֆյան է մահացել՝ նրա աղջիկը Մարիա Նարիշկինայից, միակ երեխան: Հարվածն անսպասելի էր հատկապես նրանով, որ թագավորին չէին զեկուցել երեխայի հիվանդության մասին: Մայրը ուշադրություն չէր դարձրել նրա մրսածությանը, երեկոյան կողմ հիվանդի ջերմությունը բարձրացել էր, սկսել էր տենդել, իսկ հաջորդ օրը մահացել էր: Թագավորը խզել էր կապերը Նարիշկինայի հետ՝ տեղեկանալով, որ դավաճանում է. նրան հատուկ նույն արատավոր թեթևամտությունն էլ կործանեց Սոֆյային:

Դստեր մահվան լուրը ստանալուն պես թագավորը սլացավ Նարիշկինայի ամառանոց: Քառածի կառքով, իսկ թաղումից երկու ձիով վերադարձավ: Երկրորդ զույգը դարձի ճանապարհին ընկել էր խելագար վագքից: Արդեն շտապելու կարիք չկար, բայց ռուս մարդն ինքնամոռացման միայն երկու միջոց գիտի՝ խմիչք և արագ ընթացք: Թագավորին մատչելի է միայն երկրորդը:

Նույն օրը նա շտապեց Ստարայա Ռուսայի մերձակա ռազմաբնակավայրերի շտաբ: Ես շքախմբում էի, Կոստանդիսի հետ, որը փոխարինել էր դոկտոր Վիլիեին: Տարիքի պատճառով նա ի վիճակի չէ դիմանալու բազմաժամյա արշավանքին, երբ կանգ են առնում միայն ձիերը փոխելու:

Մեկ օրում կտրեցինք մոտ երկու հարյուր վերստ: Այդ ամբողջ ընթացքում թագավորը ոչինչ չկերավ, տեղ հասնելուց հետո էլ հրաժարվեց ընթրիքից և անմիջապես պառկեց քնելու: Նրա ժամանելու կապակցությամբ կոմս Արակչեևը հանդիսավոր վարժահրապարակ էր պատրաստել՝ կրով գծած բաժնեմասերով, բայց գիշերվա տեղատարափը ջնջել էր նրա ջանքերի պտուղը: Գծային զորավարժանքները ստիպված եղան չեղարկել ու սահմանափակվել բուն բնակավայրերն այցելելով: Թագավորը հույս ունի դրանց միջոցով կրճատել բանակի ծախսերն ու կարգավորել ֆինանսները: Արծաթե ռուբլին ավելի ու ավելի է կտրվում թղթե ռուբլուց, ինչը նույնպես նրան հետ է պահում սուլթանի հետ պատերազմից: Ժողովուրդների կյանքում Ավետարանի հաղթանակի համար վճարում են ոչ թե քաղցր թեյից հրաժարվելով, այլ փողով և արյամբ: Որքան մեկը քիչ ես ծախսում, այնքան մյուսից շատ է պահանջվում:

Գիշերեցինք Արակչեևի հարևան կալվածքում՝ Գրուզինոյում: Ընթրիքից հետո, որի ընթացքում թագավորը կրկին համարյա ոչնչի ձեռք չտվեց, տանտերը հրավիրեց նրան տեսնելու կալվածքը: Չնայած հոգնածությանը՝ թագավորը համաձայնեց, և շքախմբի անդամները, այդ թվում՝ ես ու Կոստանդիսը, փակվող աչքերով, հետևեցինք նրան: Թագավորը Արակչեևի հետ առջևից էր գնում, մենք՝ երեք-չորս քայլ հետ: Կածանը ոլորվում էր Վոլխովի վրա կախված բլրալանջով: Արևը նստել էր, մշուշը քուլա-քուլա փռվել էր դիմացի ջրողող ափի ուռուտի վրա: Ջրածիծառները զիգզագաձև

հատում էին օդը ու մեր ոտքերի տակ խփվում գետի ուղղաբերձ դարափին, որտեղ սևին էին տալիս նրանց բների փոսիկները: Մի քիչ հեռվում հոյաշեն նավահանգիստն էր: Քարակոփ նավակայանի մոտ, որտեղ կարող էր 100 թնդանոթով ֆրեգատ կառանվել, ցորեն տեղափոխող մի բեռնանավ ու կապույտ նավախելով մի գբոսանավակ էին ճոճվում:

Արակչեևը թագավորի ուշադրությունը հրավիրեց ջրատարածքի եզրերի երկու հզոր, բրգաձև աշտարակների վրա: Պարզվեց՝ դրանք պատճենված են Եգիպտական Ալեքսանդրիայի մուտքի մոտ կանգնած շղթայաշար աշտարակներից: Այդ աշտարակներն անհետացել էին, նույնիսկ պատկերներ չէին մնացել, բայց ճարտարապետը կարողացել էր վերստեղծել հին հեղինակների նկարագրություններով: Միայն նշանավոր Փարոսն էր պակասում, բայց այդ թանկարժեք ծեռնարկը չզարմացրեց ինձ, ավելի վաղ էի ուշադրություն դարձրել, որ թագավոր կայսեր անունն ուղղակի կամ անուղղակի առնչվում է մի շարք շինությունների: Արակչեևը վերջերս նրանից թույլտվություն էր խնդրել Գրուզինոն վերանվանել Ալեքսանդրիա, բայց մերժում էր ստացել:

«Եթե մահվանից հետո,- նրա մեկնաբանություններն ընդհատեց թագավորը,- ինձ թաղեին ոչ թե Պետրոպավլովյան տաճարում, այլ այստեղ, գյուղացիները քո դաշտերից յոթից-տասը բերք կհավաքեին»:

Հետո արագ նայեց ինձ և ոչինչ չասելով, բայց ակնկալելով իմ ըմբռնումը՝ ավելացրեց, որ իր քթի ողջության համար անհանգստանալու պատճառ չունի. մումիա դառնալու վտանգն իրեն չի սպառնում:

Արակչեևն ապշած էր: Չհամարձակվեց պարզաբանումներ խնդրել, իսկ ես ու Կոստանդիսը կարելի չհամարեցինք բացատրել այդ կատակի իմաստը: Մինչդեռ այն պարզ է. համընդհանուր կարծիքով՝ Նապոլեոնին ջախջախողը, աշխարհի կեսի տիրակալը ոչ միայն միապետերից մեծագույնն է, այլև՝ երջանկագույնը մարդկանցից: Նրա աճյունին ապաստան տված հողով կաթ ու մեղրի գետեր են հոսելու:

Թագավորը ժպտաց, իսկ ինձ պատեց տագնապը: Թվում էր՝ տեսնում եմ, ինչպես է մի ճակատագրի միջով երևակվում մյուսը: Մեռյալների ճակատագրի զարդանախշը հստակ է բոլոր գծերով, բայց քանի ողջ ենք,

մշուշով է պատված: Ու մշուշը ցրվում է մեր մեջ կյանքի մարելուն զուգընթաց:

Մայրամուտին քամին դադարեց: Տերևների աղմուկը լռեց, ու լսելի դարձավ, թե որքան նուրբ են սուլում գետի վրայով սլացող ջրածիծառները:

«Աստված երկու սիրելի թռչուն ունի՝ աղավնին ու ծիծեռնակը»,- ասաց թագավորը՝ կարծես ստույգ չիմանալով կամ դիտմամբ անտեսելով նրանց տարբերությունը:

Ու դարձավ դեպի տուն: Նախորդ գիշեր անքուն էր մնացել, իսկ վաղ առավոտյան պետք էր մեկնել Բրեստ-Լիտովսկ: Եղբորը՝ Լեհական թագավորության փոխարքա մեծ իշխան Կոնստանտին Պավլովիչին խոստացել էր Լիտվական կորպուսի հեծելազորի զորատես անցկացնել:

Թագավորը քաշվեց իրեն հատկացված սենյակները: Ես էլ անցա իմ հարկաբաժին, ընկա անկողնուն ու վայրկենապես քնեցի, իսկ կեսգիշերն անց, պետքի համար վեր կենալով, լույս տեսա նրա պատուհաններում: Մարդկանց ներկայությամբ իրեն սովորականի պես էր պահում, սակայն մահացած Սոֆյայի մասին մտքերը նրան զրկում էին ախորժակից ու քնից:

Մեկնեցինք լուսաբացին: Արակչեևը մեզ ուղեկցեց մինչև մեծուղի, և թագավորի սրտագին հրաժեշտից երևում էր, որ Օձն այս անգամ էլ է կարողացել հաճո լինել նրան: Կոստանդիսը նստեց իմ կառքը և հույների համար սովորական կեղծավորությամբ հիանում էր ռուսական բնության գեղեցկությամբ: Նրան տեսել եմ եկեղեցում ջերմեռանդ աղոթելիս, բայց չեմ զարմանա, եթե պարզվի, որ ստամբուլյան կոտորածի օրերին իր կյանքը փրկագնել է թլպատվելու գնով:

Բրեստ-Լիտովսկում թագավորին տհաճ անակնկալ էր սպասում. նրա պատվին կազմակերպված ճաշկերույթին Կոնստանտին Պավլովիչն իր քարտուղար ու բանկիր հույն Կուրուտայի հետ սկսեց նրա մայրենի լեզվով խոսել: Մեծ իշխանը մանկուց է տիրապետում այդ լեզվին: Նրա և թագավորի տատիկը, նպատակադրվելով վերականգնել Հունական կայսրությունը երկրորդ թոռան գահակալությամբ, նրան ստիպել էր սովորել ապագա հպատակների լեզուն, սակայն Պալեոլոգների թագը նրա գլխին դնելը

կայսրուհու ուժերից վեր եղավ: Կոնստանտին Պավլովիչն անտարբեր էր հունական հարցի հանդեպ, փոխարենը՝ երբեք դեմ չէր գրգռել ավագ եղբորը: Իր բռի զինվորական ոճով զլածայն դիմում էր սեղանի մյուս ծայրին նստած Կուրուտային, որը ստիպված էր նույնքան բարձր պատասխանել: Ոչ ոք չէր հասկանում խոսքն ինչի մասին է, մինչև չհնչեց իշխան Իպսիլանտիի անունը: Դա նշանակում էր, որ Կոնստանտին Պավլովիչը որպես հյուրընկալ տանտեր որոշել է մի քիչ փչացնել եղբոր տրամադրությունը:

Վալախիայում թուրքերի կողմից ջախջախված Իպսիլանտին հանձնվել էր ավստրիացիներին ու նրանց մոտ նստած էր ճաղերի հետևում: Դա ավելի լավ էր, քան Ստամբուլում ցցին նստելը, բայց թագավորին մեղադրում են, որ հրաժարվել է բանտից ազատել Կուլմի տակ թևը կորցրած՝ ռուսական ծառայության գեներալին: Հանձին Իպսիլանտիի ազատության նահատակ են տեսնում, չնայած այդ անձնապարծն ուզում էր հունական թագավոր դառնալ: Ու հենց դրա համար էր եփել այդ շիլան, որը ոչ ոք ի վիճակի չէր մարսելու:

Ընդհանուր խոսակցություն սկսվեց Հունաստանի դեպքերի շուրջ: Թագավորը միջամտեց միայն, երբ սեղանակիցներից մեկն արտահայտվեց Բարձր Դռան դեմ բոլոր քրիստոնեական միապետերի խաչակրաց արշավանքի օգտին:

«Սկզբի համար,- կտրուկ պատասխանեց նա,- թող քրիստոնեական միապետերն իրենց հպատակներին արգելեն ծառայության անցնել սուլթանի ու Մեհմեդ Ալիի բանակում: Ի դեպ, այնտեղ ոչ մի ռուս չկա»:

«Դե, մերոնցից ոչ ոք չկա նաև հելլենասերների մեջ,- պետք է արժանին մատուցել՝ արդարացի նկատեց Կոնստանտին Պավլովիչը:

«Եվ փառք Աստծո,- ասաց թագավորը:- Թուրքերն ահավոր դաժանություններ են գործում, բայց մի՞թե հույները գթասրտությամբ գերազանցում են նրանց: Հույները հիշեցնում են մեզ, որ իրենց աշակերտներն ենք, ամենայն լավը մեր մեջ՝ իրենցից է, իսկ իրենք Նավարինում տարեց թրքուհիներին խեղդում էին ծովում, երիտասարդներին բռնաբարում ու վաճառում մալթացի ծովահեններին: Տրիպոլիսը գրավելով՝ քսան հազար մահմեդական ու հրեա կոտորեցին՝ չխնայելով ո՛չ կանանց, ո՛չ երեխաներին:

Կոլոկոտրոնիսը պարծենում էր, որ երբ մտել է քաղաք, դարպասներից մինչև հրապարակ իր նժույգը ոչ մի անգամ սմբակը գետնին չի դրել: Անցնում էր դիակների վրայով: Նրա ողջ ուղին ծածկված էր դիակներով»:

«Մեզ դաժանացրել է թուրքական բռնությունը,- ցեղակիցներին փորձեց արդարացնել Կուրուտան. տանտիրոջ պաշտպանության տակ էր զգում և իրեն թույլ տվեց չհամաձայնել թագավորի հետ:- Տրիպոլիսի գլխավոր հրապարակում մի հսկա չինարի էր աճում, որը երեք հարյուր տարի հույների կախաղան էր եղել: Քաղաքը գրավելով՝ հաղթողներն առաջին հերթին հարձակվեցին այդ ծառի վրա, բայց կացինն անզոր էր, և Կոլոկոտրոնիսը հրամայեց վառել չինարին: Ինչ վերաբերում է հրեաներին, ապա իրենք են մեղավոր իրենց ճակատագրի համար: Սուլթանը նրանց կանչել էր Մորեա, որպեսզի քաղաքներից դուրս մղի հույն վաճառականներին: Չպիտի ընդունեին նրա հրավերը»:

Թագավորը լսում էր՝ Կուրուտայի կողքով նայելով, բայց ոչ իր դժգոհությունն արտահայտելու համար. պարզապես առողջ ականջն էր դարձրել նրան:

«Հույները քիչ են տարբերվում հրեաներից,- լսեցի նրա ձայնը:- Երկուսի համար էլ գլխավորը առևտուրն է, իսկ այն ստորացնում է հոգին... Օ՛, այո,- համաձայնեց նա ինչ-որ մեկի կարծիքին, որ Հունաստանում միայն առևտրականներ չեն ապրում:- Նաև ծովահեններ ու ավազակներ: Լորդ Բայրոնն ու Շիլլերը ապացուցել են մեզ, որ դա ազնվազարմ մարդկանց արժանի միակ զբաղմունքն է: Զարմանալի չէ, որ նոր հունական դրոշի գույները՝ ճերմակն ու կապույտը, խորհրդանշում են մաքրությունն ու խոնարհությունը: Դրանք ավազակների երկու գլխավոր առաքինություններն են»:

Բոլորը լռեցին: Նրա հետ վիճել կարող էր միայն Կոնստանտին Պավլովիչը, բայց նա զբաղված էր աղանդերով:

«Ի՞նչ օգուտ նրանց սահմանադրությունից,- մեռելային լռության մեջ շարունակեց թագավորը,- եթե երեք կառավարություն ունեն, որոնցից յուրաքանչյուրը ժողովրդին զենքի է կոչում մյուս երկուսի դեմ, իսկ Ազգային ժողովի պատգամավորները քաղաքից քաղաք են փախչում, որ նախկին

մաքսանենգներից որևէ հերոս իրենց բանտ չդնի: Այդպիսի մեկը եկել էր Վերոնա՝ Սրբազան դաշինքի կոնգրեսին, հանդիպում էր փնտրում ինձ հետ: Հիշում եմ նրա բեղերն ու ժիլետի մի ամբողջ վաշտ արծաթե կոճակները»:

«Այդ կոճակները յուրատեսակ զրահ են: Պաշտպանում են գնդակներից»,- խույս տվեց Կուրուտան:

«Երկաթե կոճակներն ավելի լավ կպաշտպանեին,- այդ կասկածելի բացատրությանը հակադարձեց թագավորը:- Պալիկարներն իրենց համար նվաստացում են համարում երեք հազար պիաստրից էժան հագուստ կրելը: Հելլենասերները Եվրոպայում ահռելի գումարներ են հավաքում հույների համար, բայց փողերը գողացվում են, ծախսվում առևտրային խարդախությունների, կերուխումի, շտաբների ու նստավայրերի բարբարոս ճոխության վրա»:

«Նրանք քիչ արատներ չունեն, բայց Պերիկլեսի և Ալեքսանդր Մեծի ժառանգներն են: Գովելի է նախնիներին արժանի լինելու նրանց ձգտումը»,- աղանդերի հարցը լուծելով՝ հայտարարեց Կոնստանտին Պավլովիչը, բայց ոչ նրա համար, որ այդպես էր մտածում, այլ եղբորը հակաճառելու սովորությամբ:

«Դուր գալու ձգտումը դեռ առաքինություն չէ,- առարկեց թագավորը:- Հույները երեկ են սովորել այդ անունները, բայց շարունակ նրանց են հիշատակում, այլապես ոչ ոք վարկ չի տա: Իսկ այդ վարկերը ստանում են իրենց չպատկանող գրավով»:

Աջ ձեռքը սեղանին էր: Բոլորը տեսան ինչպես են դողում մատները: Ինքը դա չէր զգում ու չէր նկատում, որ իր նյարդայնությունը վաղուց է տարակուսած ու երբեմն նաև չարախինդ ուշադրություն գրավում: Սիրտս ծակեց նրա հանդեպ խղճահարությունից: Հիշեցի Գրուզինոն, ուշ ժամի լույսը նրա պատուհանում: Իմի կողքին էր, տեսնել չէի կարող, բայց պատուհանի տակից երևում էր միջանցքամուց դողացող մոմի բոցի բիծը, իսկ լույսի շրջանակում՝ քամու տակ սարսռացող խոտը: Երկուսն էլ ինձ նրա հոգու պատկերը թվացին, որ նույն կերպ դողում էր մահացած Սոֆյայի մասին մտքից: Աղջիկը երբեք իրեն այցելելու խնդրանքով ծիծաղելի ու

սրտառուչ երկտողեր չէր ուղարկել, և նա հայրական սիրո պակասի համար չի՞ մեղադրում իրեն: Դա հատուկ է նրան. դստեր մահը մեկնաբանել որպես երկնային պատիժ, որ հայրը չի ցանկացել պաշտպանել հավատակից հույներին: Դրա համար էլ նույն կրքով հարձակվում է նրանց արատներն արդարացնողների վրա:

Համարյա ամեն օր նրա հետ եմ, իսկ ինչպես գիտեք՝ ցարին մոտիկ՝ մահին մոտիկ: Երևի հենց դրա համար էլ այլևս մարմնական սիրո պետք չունեմ: Պատերազմում տղամարդիկ կնոջ կարիք չեն ունենում: Մահը խանդոտ է, խնայում է նրանց, ովքեր միայն իրեն են տիրուհի ճանաչում, և ի տրիտուր հավատարմության՝ նրանց է պարգևում մեծագույն երանությունը՝ լինել իր կողքին, բայց չմեռնել: Լիարժեք կյանքի զգացումը, որ ապրում եմ թագավորի կողքին, համեմատելի է մարտի դաշտում վտանգի զմայլանքի հետ: Ամենաշքեղ կանացի մարմինը չի կարող ինձ ավելի մեծ հաճույք պատճառել: Նա իմ հոգու տերն է, բայց երբ սեղանի շուրջը բոլորն ագահ հետաքրքրասիրությամբ նայում էին նրա դողացող մատներին ու փախցնում հայացքը, ասես ինչ-որ արգելված կամ ամոթալի բանի էին նայել, ես սիրում էի նրան համրանալու աստիճանի, սրտի ջղակծկման: Անիծյալ հունական հարցը նրան նախկինից միայնակ էր դարձրել:

Ասում են՝ սիրտը մարել է: Սուտ է: Նա, ինչպես երիտասարդ տարիներին, ծարավի է գերագույն ճշմարտության, հասկանալով, որ երկրի երեսին այն գոյություն չունի, պետք է որևէ մեկի կողմը բռնել, ոչ այն պատճառով, որ նրանն է ճշմարտությունը, այլ որովհետև այդ կողմում յուրայիններն են: Իրերի նման վիճակը տանջալի է կենդանի զգացումներ ունեցողի համար:

Առավոտյան նշանակված էր հեծելազորի զորատեսը: Ես չէի մասնակցում և տեղի ունեցածի մասին լսել եմ ականատեսներից: Ժամը իննին զորքերը շարված էին, տասնմեկին ժամանեց թագավորը: Նժույգը մոտեցրին, նա եղբոր հետ, շքախմբից մի քիչ առաջ ընկած, սկսեց զորատեսը: Աջ թևում կանգնած էին գնդապետ Գրոծինսկու ուլանները: Կանգ առնելով՝ թագավորը մոտ կանչեց գնդի հրամանատարին, և մինչ նա մոտենում էր, հիանում էր նրա հազվագյուտ երանգի սևաթույր նժույգով: Սև, փառահեղ

ճերմակով օծված գավակն ասես թուջի ամբողջական կտոր լիներ՝ աշնանային մեգի մեջ, բայց Գրոծինսկու զեկույցի ժամանակ պարզ դարձավ, որ այդ հրաշքը վատ է վարժեցված: Ոտնափոխ էր անում, խռպում, ուր որ է պիտի վրնջար: Գրոծինսկին դժվարությամբ էր զսպում նրան: Զեկույցից հետո, աչքաթող արեց նժույգի նյարդայնությունը և ինքը նյարդայնանալով՝ անթույլատրելիորեն թագավորին մոտ շրջադարձ արեց: Նժույգը քացի տվեց հետևի ձախ ոտքով, ու պայտը իջավ թագավորի աջ սրունքին:

Թագավորը քիչ էր մնում ցավից կորցներ գիտակցությունը, բայց դիմացավ թամբին: Դա մեկ անգամ ևս հաստատում է նրա ինքնատիրապետումը: Եթե նախօրեին, ճաշի ժամանակ չէր կարողացել զսպել զգացմունքները, ուրեմն դրա համար ծանրակշիռ պատճառներ կային: Նրան իջեցրին ձիուց ու գրկած տարան: Քայլել չէր կարողանում, բայց իր մեջ ուժ գտավ եղբորը խնդրելու, որ շարունակի զորատեսն ու չպատժի Գրոծինսկուն:

Քառորդ ժամից Տարասովն ու Կոստանդիսը նրա մոտ էին: Ոտքն ուռել էր, ստիպված էին կտրել սապոգի ճիտքը, որ հանեն, բայց ոսկորը, բարեբախտաբար, չէր վնասվել: Մաշկն էլ այնքան չէր տուժել, որքան կարող էր լինել այդպիսի հարվածի դեպքում: Սապոգի ճիտքն էր պահել, նաև՝ սրունքի վերնամասի կոշտուկապատ լինելը: Կոշտուկը հետևանք էր ամենօրյա երեկոյան աղոթքների, երբ թագավորը ժամ ու ավելի ծնկաչոք է լինում: Կոստանդիսը գուլլարդյան ջրի թրջոց դրեց վնասված տեղին ու պատվիրեց չծանրաբեռնել սրունքը:

Տարասովն արգելել է ժամից ավելի զբոսնել ու ծնկել աղոթքի համար: Սա հատկապես մտահոգում է թագավորին: Տևական զբոսանքներից ձեռնպահ է մնում, բայց չեմ երաշխավորի, որ ծնկած աղոթքի արգելքը նույնքան անվերապահ է պահպանվում: Ամենավատն այն է, որ Բրեստ-Լիտովսկի միջադեպից հետո վնասված ոտքը սկսեց կարմրել: Բորբոքումը խստանում է, բայց և այնպես թագավորը մտահոգ է միայն առաջիկա ուրալյան ուղևորությամբ: Երբ հրապարակվեցին նրա աշնանային ծրագրերը, անմիջապես հասկացա, որ վերջնականապես հրաժարվել է հունական

գործին միջամտելու մտքից:

Տարասովն ու Վիլիեն համառորեն խորհուրդ են տալիս հրաժարվել այդ ուղևորությունից կամ հետաձգել մինչև գարուն, բայց նա անհողդողդ է: Նրան առաջնորդում է հույսը, որ ճանապարհի դժվարություններն ու նոր տպավորությունները կմեղմեն մահացած դստեր մասին մտորումների տառապանքը: Հույս ուներ սեպտեմբերի սկզբին լինել Օրենբուրգում, որ հետո Եկատերինբուրգով, Պերմով ու Վյատկայով, մինչև ցրտերն ընկնելը, վերադառնա Մոսկվա:

Երկամսյա ուղևորությունը Եվրոպայի և Ասիայի սահմանագծի լեռներով, անտառներով ու տափաստաններով ծանր է նույնիսկ առողջ մարդու համար, բայց թագավորը ոչ մեկի խորհրդին ականջ չի դնում ու հաստատ որոշել է ավելի քան չորս հազար վերստ կտրել այնպիսի վայրերով, որտեղ ո՛չ խճուղի կա, ո՛չ հարմար գիշերօթևաններ, ո՛չ կամուրջներ մեծ գետերի վրայով, իսկ գերանուղին այն բարձրակետն է, ուր հասել է հաղորդակցության ուղիների կատարելագործման ձգտող մարդկային միտքը:

Ես, իհարկե, շքախմբի կազմում կլինեմ: Դա կանխատեսելով՝ կոմս Արակչեևը խնդրեց հանդիպել Պերմի հաուպտվախտում պահվող ոմն շտաբս-կապիտան Մոսցեպանովի հետ:

«Կարծես թե ինչ-որ գաղտնիք գիտի,- ասաց Արակչեևը,- բայց պատրաստ է հայտնել բացառապես ինձ կամ թագավորին: Համոզված եմ, որ կարևոր բան չկա, բայց և այնպես մի խնայեք մի կես ժամ տրամադրել այդ մարդուն՝ իմանալու նրա գաղտնիքը»:

Ես խոստացա հնարավորության դեպքում կատարել նրա խնդրանքը:

Կոնստանտին Կոստանդիս: Թափառիկ բժշկի նոթերը

Օգոստոս, 1824 թ.

Անցավ երեք շաբաթ, սակայն բարելավում չկա: Վնասված սրունքն ավելի է բորբոքվել: Այտուցը չի իջնում կամ, ինչպես նախընտրում է ասել Տարասովը, ավելի դանդաղ է իջնում, քան կցանկանայինք: Նրա կարծիքով դստեր մահվան հետևանք ուժերի անկումն է թագավորին խանգարում

հաղթահարելու կարմիր քամու բորբոքումը, բայց ես այլ բան եմ կարծում. այդպես է լինում, երբ աննշան արտաքին ազդակից արթնանում է օրգանիզմում ննջող հիվանդությունը, որն առանց այդ ազդակի կարող էր դեռ երկար տարիներ քնել կամ ընդհանրապես չարթնանալ:

Մեզ սովորական է թվում, որ տկարությունն իր հետևից լուրջ հիվանդություն է բերում, որն էլ հանգեցնում է մահվան, բայց այդ կապը պատրանք է և պետք է մեզ, որպեսզի սփոփվենք իրերի թվացյալ բնական ընթացքով՝ ահա աղբյուրը, ահա շարունակությունը, ահա վախճանը. մեկը բխում է մյուսից, ամեն ինչ բացատրելի է, հանգստացե՛ք, մոռացե՛ք: Իրականում մահն այդ շղթայի վերջին օղակը չէ. այն դուրս է շղթայից: Նրան տանող մեր ուղու սկիզբ կարող է դառնալ նույնիսկ չնչին վնասվածքը: Ճակատագիրը հաճախ իրեն ի հայտ է բերում պատճառի ու հետևանքի անհամաչափության մեջ:

Ուղեվորություն

Մատվեյ Մոսցեպանովը Նատալյա Բաժինային

Օգոստոս, 1824 թ.

Խնդրագիրը պատրաստեցի, կցում եմ նամակին: Հասնես Պերմ՝ գլանաձև փաթաթիր, կապիր ժապավենով կամ երիզով, բայց ձեռքիդ չպահես, թաքցրու հագուստիդ տակ: Հանգույցն ամուր չձգես, այնպես կապիր, որ հեշտ արձակվի: Պերմում իմացիր՝ թագավորը երբ է գնալու եկեղեցի, նախօրոք գնա այնտեղ ու կանգնիր դռան մոտ, հետո գավթում այնքան ժողովուրդ կլինի, չես անցնի: Հենց տեսնես նրան, չոքիր ու փորձիր ուղիղ ձեռքը տալ: Եթե չկարողանաս, եթե հետ քաշեն նրանից, տուր հետի պաշտոնյաներին կամ սպաներին, բայց ոչ նրանց, ում մերակները կամ եզրաքուղերը նարնջագույն են: Դրանց ոչինչ չտաս:

Ինքս կգայի, բայց չեմ կարող, ոտքերս ցավում են, ուրիշն էլ չկա, որ ուղարկեմ: Մեկ էլ տեսար՝ հաջողեցիր, թե չէ ես ու դու այլևս չենք տեսնի մեր Գրիգորի Մաքսիմովիչին:

Իգնատի Ելովսկի: Ալեքսանդր I կայսեր կամերքարտուղարի մատյանը

Սեպտեմբեր, 1824 թ.

Վոլգայի գետանցումը մի քիչ ձգձգվեց, հետո կրկին գլխապատառ սլացանք անդրվոլգյան անտառներով: Գիշերում էինք գյուղերում կամ փոստային կայաններում: Ֆելդեգերը հետևում է, որ թագավորի գիշերակացները վաղօրոք պատրաստեն, բայց սենեկապետը փետրաներքնակները փոխարինում է նրա ճամփորդական մատրասով: Միանգամայն

սպարտական ներքնակ է, լցված խոտով. միակ հարմարությունը՝ մարմնի լայնությամբ իջվածքն է: Գլխի տակ սեկե, նույնպես խոտով լցված բարձ է, ոտքերի տակ՝ չոր գլանաբարձիկ, աջ ձեռքի տակ նույնպիսի, բայց ավելի փոքր գլանիկ, քանի որ թագավորը սովոր է քնել ձախ կողին: Ուտելու մեջ սակավապետ է, իսկ ճանապարհի հագուստը իմից չի տարբերվում և բաղկացած է արևից խունացած շինելից ու շքագլխարկից:

Ուղևորության նպատակակետը Օրենբուրգի և Պերմի նահանգներն են, ուր նրա գահակալ նախորդներից ոչ մեկը չի հասել: Այդ նահանգներն այցելելու որոշումը թագավորը բացատրում է նրանով, որ դրանք հարուստ պարոնտիրոջ քայքայված կալվածքների վիճակում են, բայց ուրիշ պատճառներ էլ կան: Անվերջանալի ընթացքով փորձում է կանգնեցնել ժամանակը, որը ճանապարհին դանդաղ է հոսում, նաև մոռացում և ուղեկիցների անկեղծ բարեկամություն է փնտրում, ինչը հնարավոր է միայն այդպիսի ուղևորության ժամանակ: Մենք՝ շքախմբի անդամներս, ուժերի ներածի չափ ջանում ենք արդարացնել նրա սպասումները: Գլխավորն այստեղ՝ չանցնել մտերմության ու մտերմավարության սահմանը:

Ծքախումբը ղեկավարում է Գլխավոր շտաբի պետ գեներալ-համիարզ Դիբիչը: Նշանակությամբ երկրորդ դեմքը վագենմեյստեր Սոլոմկան է՝ մի հսկայամարմին խախոլ՝ գնդապետի աստիճանով: Նա պահպանում է պարգևատրային մեդալներով, մատանիներով, ծխատուփերով ու զարդաճարմանդներով նվիրական արկղն ու նաև պատասխանատու է կառքերի համար: Սա նրան ֆլիգել-համիարզից շատ ավելի կարևոր դեմք է դարձնում, չխոսելով արդեն ֆելդեգերների կորպուսի սպաների ու լեռնային պաշտոնյաների մասին: Երրորդ տեղն իրավամբ զբաղեցնում է լեյբ-կառապան Իլյա Բաժկովը, որը Աուստեռլիցում թագավորին փրկել է ֆրանսիական գերությունից: Բժշկությունը ներկայացնում են Տարասովն ու Կոստանդինը: Ես ղեկավարում եմ գրասենյակն ու վարում մատյանը:

Չորս օր մնացինք Օրենբուրգում: Թագավորը ստուգեց պաշտոնավայրերը, զորանոցները, ուղղիչ և բարեգործական հիմնարկները, եղավ մզկիթում, վերջում էլ այցելեց քաղաքի մոտ հաստատված քոչվոր ղրղզների հորդան, զրուցեց ավագների հետ, ոչխարի ճարպով թեյ խմեց ու ծխա-

տուփեր նվիրեց խաների կանանց: Վերադարձի ճանապարհին ղրղզները տափաստանով բազմությամբ գալիս էին մեր հետևից ու ձեռքերը վեր պարզած՝ ինչ-որ բան գոչում անսերդաշնակ ձայներով: Թարգմանիչը բացատրեց, որ Ալլահին խնդրում են Սպիտակ ցարին այնքան տարվա կյանք տալ երկրի վրա, որքան աստղ կա երկնքում, իսկ դրանք սեպտեմբերյան տաք գիշերվա երկնքում անթիվ-անհամար էին: Երկնակամարը մեր գլխավերևում համատարած ճերմակ լույսով էր բռնվել:

Ղրղզական մաղթանքը հրաշք գործեց: Օրենբուրգից հյուսիս տանող ճանապարհին թագավորի ոտքի բորբոքային կարմրությունն անցավ, այտուցը նույնպես սկսեց իջնել: «Պատերազմի ժամանակ ու ճամփորդելիս միայն հիմարը չի բուժվի»,- դրա կապակցությամբ ցինիկ նկատեց Տարասովը:

Մենք կտրեցինք տափաստանն ու մամուռ ու ձարխոտ բռնած սոճու թավուտները, սկսվեցին տայգան ու լեռները: Բլրաշարերից մեկի վրայից մեր դիմաց բացվեց եղևնուտի անծայրածիր ծովը: Վեհատեսիլ էր, բայց՝ մռայլ: Անտառները շար-շար անցնում էին հորիզոնից այն կողմ, ոչ մի տեղ, որքան աչքս կտրում էր, մարդկային կացարանի հետք չտեսա, սակայն բնապատկերը ճնշում էր նույնիսկ ոչ իր վայրենությամբ, որքան անհոգի միապաղաղությամբ: Մռայլ ճահճագույնն առանց կանաչի միջանկյալ երանգների փոխարկվում էր սևի, որ հեռվում ծուլվեր նախամպրոպային երկնքին: Կեչիների դեղնավուն բծերն ընդգծում էին այդ երկու երանգների կատարյալ իշխանությունը, որոնց մեջ համարյա չէր երևում նույնիսկ մեր աշնանային անտառների համար սովորական կարմիրը: Իր դողդոջուն ամոթխածությամբ հանդերձ՝ ամենուր աճող կաղամախին այստեղ բացակայում էր:

«Ես Հունաստանում չեմ եղել,- ասաց թագավորը՝ ապշեցնելով ինձ նրանով, թե ինչ մտքեր է արթնացնում այդ մռայլ անտառների տեսքը,- բայց երբ մտածում եմ նրա մասին, կակաչներով ծածկված դաշտ եմ տեսնում, իսկ դրանց մեջ՝ հելլենական աստվածների խեղված արձաններ»:

«Ու ծով չե՞ք տեսնում»,- հարցրի:

Օրորեց գլուխը. «Ո՛չ, միայն կակաչներ ու մարմար: Ալ կարմիր ծա-

ղիկներ ու ճերմակ այլանդակված մարմիններ»:

Արյուն ու մահ՝ մտածեցի ես:

Նույն օրը Միասի մերձակա լեռնանցքում աղացքարի շերտերն էինք նայում: Թագավորն իր հիացմունքն արտահայտեց մեզ վրա կախված վիթխարի մայրիների հզորության վերաբերյալ, ինչին ի պատասխան մի լեռնային աստիճանավոր ասաց. «Դրանք զորավոր են թվում, բայց իրականում դյուրաբեկ են: Քարքարոտ հողը չի թողնում արմատները խորանան, և ծառերը կտրվում են հողից»:

«Բնության մեջ մեկի պակասը լրացվում է մյուսի ավելցուկով,- պատասխանեց թագավորը:- Տեսեք, սաղարթներն այնպես են միահյուսվել, որ դա հատուցում է արմատների թուլությունը»:

Սկսեցինք իջնել դեպի ներքևում սպասող կառքերը: Աշնանամուտին չորացած բարձր խոտը զնգոցով ծեծում էր մեր սապոգների ճտքերը:

«Ինչ բա՛րձր է աղմկում»,- ասաց թագավորը:

Երկուսով ահագին առաջ էինք անցել շքախմբից: Միայն ես էի լսում նրան:

«Տերևներն էլ աշնանն ավելի բարձր են խշշում, քան գարնանն ու ամռանը,- ավելացրեց:- Ինչին վիճակված է երկար ապրել, լուռ է ապրում»:

«Չոր ծառն ավելի երկար է ճռնչում»,- առարկեցի ես:

Թագավորը կնճռոտեց ճակատը, և ինձ այրեց թույլ տված անքաղաքավարության ամոթը: Նա վստահելով՝ իմ առաջ բացել էր ինձ ոչ այնքան հասկանալի, բայց ըստ երևույթին խորապես անձնական զգացումները, և ի պատասխան՝ ասացվածք, այսինքն՝ տափակություն լսեց:

Գիշերակացին ճամփորդական մատյանում գրի առա նրա երկու մտքերը՝ իրար օգնության հասնող մայրիների և տերևների աղմուկի մասին՝ որպես մոտալուտ մահվան նշան: Կողք կողքի դրանք ավելի արտահայտիչ են, քան առանձին-առանձին: Առաջինը պատկերացում է տալիս այն մասին, թե նա ինչպիսին կուզեր տեսնել աշխարհն իր շուրջը, երկրորդը՝ ինչպիսին է տեսնում իրականում:

Հիմա արդեն ավելի դանդաղ էինք գնում, ու պատճառը միայն լեռներով անցնող ճանապարհները չէին: Կանգառ էինք անում լեռնային գործա-

բաններում, հանքերում ու հանքատեղերում: Ուղևորությունն Ուրալ պարզապես տեսչական չէ, թագավորն այն նախաձեռնել է, որպեսզի նպաստի այդ հեքիաթային հարուստ երկրի ընդերքում քնած և նոր-նոր միայն երես ելնող զորավոր ուժերի արթնանալուն: Ուրախացավ երեխայի պես, երբ Սիսերտիում գեղջուկ Ֆրոլ Սակեևը ներկայացրեց բացառապես ուրալյան բույսերից ստացված 76 ներկերի նմուշները, ու պառկեց քնելու հրաշալի տրամադրությամբ, բայց ամպից էլ սևակնած եկավ նախաճաշի:

«Դու գիտեիր, չէ՞, այն հովատակի անունը: Գիտեիր ու չասացիր»,- հանդիմանեց ինձ:

Միանգամից հասկացա՝ խոսքն ինչի մասին է, ու պատասխանեցի, որ՝ ո՛չ, ոչ ոք նրա անունն ինձ չէր ասել:

«Կոստանդիսը փոխում էր վիրակապս ու լեզվից թռցրեց,- ասաց թագավորը:- Նրան ու Տարասովին դեռ Բրեստ-Լիտովսկում էին ասել, բայց ինձնից թաքցրել էին: Հովատակի անունը Արմատոլ է»:

Արմատոլները նախկինում թուրքական ժանդարմերիայում ծառայած հույներն էին: Օսմանները ժանդարմերիան ստեղծել էին հարթավայրի բնակիչներին լեռնային կլեֆտ ավազակներից պաշտպանելու համար: Խռովության սկզբում օրենքի այդ պահապանները եղբայրացան նրանց հետ, ում առաջ բռնում էին, կամ ձևացնում էին, թե բռնում են, ու միասին կռվում էին նախկին պետերի դեմ: Եվ դրա հետ միասին՝ կողոպտում նախկին պաշտպանյալներին:

Ակնհայտ էր, թե թագավորը որքան է հուզվել այդ լուրից: Ես գտա Կոստանդիսին և նրանից իմացա, որ իր ու Տարասովի մտքով չի էլ անցել որևէ բան թաքցնել, պարզապես թագավորը չի հարցրել, իսկ այսօր թռցրել էր բերանից: Նա չէր հասկանում կամ ձևացնում էր, թե չի հասկանում իմ տագնապները, բայց անհանգստությունս իզուր չէր. հաջորդ օրը բորբոքումը վերսկսվեց, թագավորը կրկին ստիպված էր աջ սրունքին հագնել քսուքով վիրակապը: Ուղեբեռից վերադարձավ ու ոտքին նստեց Մոսկվայում կարած, ձախ սրնքամասում լայնացրած ճտքով անզույգ սապոգը:

Հույս ունեինք Եկատերինբուրգում իմանալ, թե այդ աշուն խոլերան Վոլգայով ու Կամայով որքան է բարձրացել Աստրախանից: Դրանից

էր կախված հետագա երթուղին, սակայն հավաստի տեղեկություններ չստացվեցին, իսկ ունեցածներս աղքատիկ ու հակասական էին: Ընթրիքին Դիբիչը թագավորին խնդրեց չվտանգել իրեն ու շրջանցել Պերմը: Բոլորը միահամուռ հավանություն տվեցին, Տարասովն՝ առաջինը, միայն Կոստանդիսը հատուկ կարծիք հայտնեց:

Հույն վտարանդիները հրեաների պես են. իրենց համար հայրենիք են կառուցում բառերից, ապրում բառերի մեջ, ցանում ու բերք հավաքում բառերով: Կոստանդիսը խոսում էր երեք րոպեի չափ, բայց ըստ էության չասվեց ավելին, քան՝ նախազգուշական միջոցներ ձեռք առնելու դեպքում հիվանդանալու վտանգը մեծ չէ: Գիտի թագավորի՝ Պերմում լինելու ցանկությունն ու փորձում է հաճոյանալ նրան. ես այդպես գնահատեցի, բայց հետո մտածեցի, որ ստամբուլյան կոտորածը վերապրած ու արմատական չդարձած հույնը կա՛մ սուրբ է, կա՛մ խաբեբա: Առաջինը բացառվում է, մտածում էի ես, մնում է երկրորդը, իսկ այդ մարդկային տեսակը բազում ենթատեսակներ ունի՝ խարդախից մինչև լրտես: Լեյբ-բժշկի պաշտոնն արժի նրան, որ թաքցնես իրական զգացմունքներդ, բայց չափից դուրս լավ չի՞ թաքցնում Կոստանդիսը: Այդպիսի տաղանդով կարելի է թաքցնել թագավորի սրունքի այտուցի ու բորոքման իրական պատճառը: Դրանք կասկածելիորեն նման չէին սովորական վնասվածքի հետևանքի, ու հենց բարելավում էր նկատվել, Կոստանդիսը տվել էր հովատակի անունը: Նկատի ունենալով, որ թրջոցի քսուքը հենց ինքն էլ պատրաստել է, կարելի է հետագա վատթարացում կանխատեսել: Իսկ եթե այդ մարդու մերձությունը նոր հիվանդություններո՞վ է սպառնում թագավորին, նույնքան առեղծվածային, բայց ավելի վտանգավոր: Խոլերան հարմար քող է, ընդամենը պետք է այնպիսի թույն ընտրել, որ ներքին օրգանների վրա թողած ազդեցության ախտանշանները համընկնեն խոլերայի նշաններին: Ասենք, դա էլ պարտադիր չի: Դեղորայքն Աստված չի ստեղծել, դրանց պայքարը հիվանդության դեմ բարու և չարի պատերազմ չէ, այլ մի չարիքի ոչնչացում մյուսի միջոցով: Բժիշկը հարձակվողների թիվը կարող է այնքան մեծացնել, որ հաղթանակից հետո դրանց մեջ ուժ մնա շարունակելու պարտվածների գործը: Հրեաներին աշակերտածի համար դա դժվար գործ չի:

Լսել էի, որ Պետերբուրգ ժամանող հունական նավերի նավապետներն ու նավաստիները խիստ հետաքրքրված են թագավորի առողջությամբ: Դրանով իբր հաստատվում էր հույների սերը նրա հանդեպ: Բա չէ՞: Թագավորի առողջությունը նրանց հետաքրքրում է այն իմաստով, որ նրա մահն են ուզում: Հունական հարցում մեր քաղաքականության նրանց հույսը Կոնստանտին Պավլովիչն է, և անհամբեր սպասում են, թե երբ գահի վրա կփոխարինի եղբորը: Նրանց հայտնի է, որ մեծ իշխանը տիրապետում է իրենց լեզվին, բայց նույնիսկ պատկերացնել չեն կարող, թե որքան անտարբեր է իրենց տառապանքների հանդեպ:

Բարոնուհի Կրիդնները բարոն Կրիդներին

Սեպտեմբեր, 1824 թ.

Վառիր իմ բոլոր նամակները, եթե արդեն չես վառել: Դրանք ինձ թելադրել է մթագնած բանականությունը: Տեղեկանալով, օրինակ, որ Կոստանդնուպոլսի պատրիարք Գրիգորին կախաղան է հանվել 1824 թվականի Զատկին, և այդ ժամանակ էլ Սուրբ Հեղինեում մահացել է կորսիկացին, ու համադրելով այդ տեղեկությունները, առանց որևէ հիմքի երևակայել էի, թե Բոնապարտի մահով սև հրեշտակը լքել է նրա մարմինը՝ տեղափոխվելով Ստամբուլ, ու մտել սուլթան Մահմուդի մեջ: Հանձին Իբրահիմ փաշայի տեսնում էի Եսայի մարգարեի կանխագուշակած վիշապին,- և այդ կարգի ցնդաբանությամբ ոչ միայն քեզ էի ձանձրացնում, այլև թագավորին: Վերջերս գրել էի նրան՝ խնդրելով մոռանալ դա վատ երազի պես: Երկար աղոթքներից կոշտուկներ են հայտնվել ծնկներիս, ինչպիսին նրանն են: Մեր հոգևոր հարազատության այդ մարմնական առհավատչյան ինձ հույս է տալիս, որ կների հիվանդ կնոջ հիմարությունը:

Ես նրան պատերազմի էի կոչում սուլթանի դեմ՝ չխորանալով դրան խանգարող հանգամանքների մեջ: Հաշվի չէի առնում ո՛չ քայքայված ֆինանսները, ո՛չ անգլիացիների դավերը, ո՛չ թագավորի դիրքը՝ որպես Սրբազան դաշինքի հիմնադրի, տեսնում էի միայն հույների տառապանքներն ու խաչի անարգումը մահիկի կողմից: Միայն մի բան կարող է արդարացնել

ինձ. այդ ժամանակ շաբաթներով ոչ մեկի հետ չէի խոսում, օրերով դուրս չէի գալիս վարագուրված պատուհաններով իմ սենյակից, սնվում էի չորահացով, իսկ ուրբաթ օրերը բերանս բան չէի դնում, բացի ջրից, վերջապես, ինձնից կտրել էի ինձ սիրող դստերս,- և այդ ամենը նրա համար, որ ոգու աղոթքի մեջ բացվի Հունաստանի փրկության միջոցը: Ինձ Կասանդրա էի երևակայում և ուզում էի թագավորի խորհրդատուն լինել, երբ խելագարության ձեռքերն արդեն դիպել էին ինձ:

Ինձ հյուծախտամահ էր սպառնում, և միայն Սոֆիիս անձնազոհությունը կյանք վերադարձրեց: Աղջիկս ինձ խնամում էր, ինչպես երեխային, որ չունի, հետո էլ համոզեց իշխան և իշխանուհի Գոլիցինների հետ մեկնել Ղրիմ: Նրանից հետո, երբ նրանց սիրած զավակը՝ Աստվածաշնչյան ընկերությունը, թագավորի շնորհազրկմանն էր արժանացել, որոշել էին գերմանացիների և շվեյցարացիների ավետարանչական գաղութ հիմնել Ղրիմում: Ես, Սոֆին ու նրա ամուսինը՝ բարոն Բերքհայմը, ինչպես և նրա քույրը, միացանք նրանց:

Գոլիցինները կալվածք ունեն Կորեիզում, այնտեղ էլ հաստատվեցինք: Մաքուր օդը, մրգերը, ծովային լոգանքը պետք է կազդուրեն մարմնական առողջությունս, իսկ հոգևորը կվերականգնեմ տեղիս թաթարներին Ավետարան քարոզելով: Իշխանն ապագա գաղութի գործերով է զբաղված, բայց Սոֆիին և իշխանուհուն ներգրավել եմ իմ անհուսալի, ինչպես կարծում են փեսաս և այլ գաղութաբնակներ, ձեռնարկի մեջ: Նրանք համաձայնեցին, որ եթե հաջողությունն ուղեկցի մեզ, իսկ Բարձր Դռան հետ պատերազմն այնուամենայնիվ սկսվի, ավելի եռանդուն ու արևելյան լեզուների տիրապետող մարդիկ հունական զենքի պաշտպանության ներքո կարող են մեր փորձն օգտագործել Օսմանյան կայսրությունում:

Ես այնքան միամիտ չեմ, որ հուսամ, թե թաթարները միանգամից կդառնան Քրիստոսին. սկզբի համար նորը պիտի ընդունեն՝ առանց հնի հետ կապերը խզելու: Ժամանակին հրեա Սաբատայ Ցվին կարողացավ, չէ՞, մահմեդական հավատը միավորել հուդայականի հետ: Նրա հետևորդներն այսօր էլ ապրում են Սալոնիկում, թուրքերն արհամարհաբար նրանց դոնմե, այսինքն՝ «ուրացող» են կոչում, բայց այստեղ դրսևորվում է երկիա-

վատությունը որպես հավատուրացություն ընդունելու՝ ստորակարգ հոգիների ընդհանրական հատկությունը, որը ոչ ազգ ունի, ոչ դավանանք: Ես բավականաչափ տառապել եմ դրանից:

Իմ կարծիքով իսլամական դավանաբանության շրջանակը նեղ է Ղրիմի թաթարների ուժեղ կրոնական զգացմունքների համար: Իշխանուհուն համոզեցի, որ եթե ցանկացել ես կոմի-զիրյաններին տալ Ավետարանը նրանց մայրենի լեզվով, պետք է տալ նաև թաթարներին: Նրանց լեզուն ավելի պարզ է, քան կոմի-զիրյաներենը, փոխարենը՝ վերացական հասկացություններն ավելի զարգացած են. համենայն դեպս հեթանոսներ չեն: Ես պատրաստվում եմ նրանց համար հայտնագործել Ավետարանը, ոչ թե Ղուրանը խլել, և այդ ժամանակ, համեմատելու հնարավորություն ստանալով, երբևէ կկարողանան ճիշտ ընտրություն անել: Բնականաբար, դրա համար տարիներ, նույնիսկ տասնամյակներ կպահանջվեն, բայց և՛ բոսնիացիները, և՛ ալբանացիները, և՛ իրենք՝ թուրքերը, եթե հաջողվի նրանց վրա կրկնել մեր փորձը, չեն կարողանա չփոխվել հոգով, թեկուզև արտաքուստ մահմեդական մնան: Ցանած հատիկները ծիլեր կտան, գթասրտությունը կթափանցի նրանց սրտերը, և յաթաղան բռնած ձեռքում ձիթենու ճյուղ կտեսնենք: Արդյունքում՝ հունական հարցն ինքնին կլուծվի:

Կանխատեսում եմ քո թերահավատությունը: Շատերն էին կասկածում մեր ձեռնարկի իրականացմանը, բայց, ինչպես հիմա պարզվեց, մենք՝ երեք թույլ կանայքս, իրավացի էինք, իսկ մոլորվում էին նրանք, ովքեր մեզ համոզում էին, որ մահմեդականների շրջանում քրիստոնեական քարոզն անմտություն է: Ալուշտայի պարետը երկու զինվոր է դրել մեզ հետ, նրանց հետ շրջում ենք մոտակա գյուղերում: Զինվորները բնակիչներին հավաքում են հրապարակում ու հետևում, որ չցրվեն, բայց շուտով նկատեցի, որ անկեղծ հետաքրքրությամբ են լսում: Ֆրանսերեն կամ գերմաներեն եմ խոսում, մանավանդ այդ կարգի նյութի համար մայրենի լեզուն նախընտրելի է, իշխանուհին թարգմանում է ռուսերեն, իսկ մեր վարձած թաթարը՝ ռուսերենից՝ թաթարերեն: Կրկնակի թարգմանություն անցնելով՝ խոսքս չի կարող չկորցնել արտահայտչականությունը, բայց այդ տեսքով էլ ուժգին տպավորություն է թողնում: Ես դրա մասին դատում եմ լսողների դեմքից,

իսկ թարգմանիչը հաստատում է իմ դիտարկումները: Երեկոները նրա հետ թաթարերեն եմ սովորում և մի քանի ամսից կկարողանամ խոսել այդ լեզվով:

Երեկ երեկոյան հոգնած վերադարձանք Կորեիզ: Ընթրիքից հետո Սոֆյան ու իշխանուհին մնացին տանը, իսկ ես իջա ծով ու մենության մեջ երկար աղոթում էի ափին: Սկսեց մթնել, բայց ափսոս էր բաժանվել այդ երանելի վիճակից, որ ինձ տալիս է ոգու աղոթքը: Ծուրջը՝ ոչ մի շունչ, ափակոծությունը հազիվ զգացվում է խճաքարի շրշյունից: Լսում էի ծովի շնչառությունն ու փորձում նրա չափով շնչել, մինչև չզգացի, որ նրա հետ մի ենք, ես կարող եմ մտնել նրա մեջ և առանց ձեռքերս ու ոտքերս շարժելու՝ չխեղդվել. ծովը կընդունի ինձ որպես իր մասը, քանզի և՛ նրա, և՛ իմ մեջ ապրում է մասնիկը Նրա, ով մեծ է մեզնից:

Ընթրիքին ոչ մի կաթիլ գինի չէի խմել: Միգրենը չէր տանջում, գույնզգույն զիգզագներ չէին պարում աչքիս առաջ: Գլուխս չէր պտտվում, ամեն ինչ բնավ այնպես չէր, ինչպես իմ նախկին տեսիլքներից առաջ, որոնց սովորաբար նախորդում էին ուշաթափության նոպաները, ոչ հազվադեպ՝ և սրտխառնոցը: Այդպիսի դեպքերում թվում է ճախրում եմ երկրի վրա ու հայում կարծես արծվաթռիչ բարձրությունից, իսկ այստեղ պարզապես խավարը ճեղքվել էր, ինչպես բացվում է թատրոնի վարագույրը, իսկ այնտեղ, ուր մեկ րոպե առաջ իշխում էր խավարը, լուսացող երկնքի ֆոնին գծագրվեց բոլորին ծանոթ ժայռուտ բլրի ծանոթ ուրվագիծը՝ ամրոցը գագաթին: Ճանաչեցի աթենական Ակրոպոլիսը, բայց չգիտես ինչու՝ չզարմացա, որ տեսնում եմ, հետևաբար մոտակայքում եմ: Զարմանալի էր միայն, որ Աթենքում ամառ չէ, ինչպես Դրիմում, այլ ուշ աշուն կամ ձմեռ:

Ցրտեց, սառցասառն քամի բարձրացավ: Հետո հասկացա, որ ծովը չքացել է: Նրա փոխարեն իմ դիմաց ավազակրով եզերվող խորդուբորդ ճանապարհով կիսված մի խոտածածկ պարապուտ էր փռվել: Ինչը ալեբախություն էի համարել, պարզվեց՝ քամու տակ պառկող չոր խոտի խշշոց է: Ճանապարհը տանում էր դեպի բլրի գագաթը և շրջապատող դաշտից բաց գույնի էր: Վախվխելով ոտք դրեցի այդ ճանապարհին, բայց ամեն քայլի հետ ավելի ու ավելի վստահ էի գնում: Քայլելն անսովոր հեշտ էր,

հիվանդությունից հետո թուլացած մարմինս ենթարկվում էր, ինչպես երիտասարդ տարիներին: Առջևում, Ակրոպոլիսի ժայռից վեր տեսնում էի Պարթենոնը, բայց ոչ այնպիսին, որ գիտենք փորագրանկարներից ու վիմագրություններից: Կմախքը լրացվել էր պակասող մասերով: Աթենքի տաճարը հրաշքով հառնել էր ավերակներից, սքանչելի, ինչպես Պերիկլեսի օրոք, բոլոր բարձրաքանդակներով ու արձաններով, որ ջարդել էին այնտեղ վառոդ պահող թուրքերը կամ Լոնդոն էր տարել լորդ Էլգինը, իսկ նրանից վեր, ասես ստորոտն իր մեջ առնելով, բարձրանում էր գմբեթով պսակված վեհատեսիլ տաճարը: Չէի կարող ասել՝ ուղղափառներին, կաթոլիկներին կամ քրիստոնեության մեկ այլ ճյուղի՞ է պատկանում, նրա մեջ բոլորիս միավորող ինչ-որ բան կար, որ դավանանքինն էլ լինենք: Նրանից լույս էր բխում, որի մեջ հալվում էի մինչև կատարյալ ինքնամոռացում, բայց և այնպես գիտակցության ծայրով հասկանում՝ Աստված ինձ հայտնում է, որ այստեղ՝ Աթենքում, կիրականանա իմ կյանքի ամենագլխավոր երազանքը՝ ժողովուրդների եղբայրությունը բոլոր քրիստոնեական եկեղեցիների միավորման միջոցով: Հունաստանն իր տառապանքներով Քրիստոսի առաջ կքավի մեր անմիաբանության մեղքը:

Ինչպես հետո իմացա՝ իմ տևական բացակայությունից անհանգստացած Սոֆին լապտերը ձեռքին իջել էր ափ և ինձ գտել ուշակորույս ընկած հենց փրփրաժանյակի եզրին, որ ալեբախությունը թողնում է ծովեզրի խճաքարի վրա: Զգեստիս փեշը թաց էր, կոշիկներս՝ ջրով լցված: Եթե քամին ուժգնանար, իսկ դրան էր գնում, ալիքը կարող էր ինձ քշել ծով:

Սոֆին ինձ հետ էր քաշել ջրից ու վազել ծառաների հետևից: Ուշքի եկա նրանց ձեռքերի վրա: Ուշադրություն չդարձնելով թուլությանս, նույնիսկ չհամբուրելով՝ նա անմիջապես հանդիմանություններով հարձակվեց վրաս. «Տե՛ր Աստված, ուղղակի հրաշք է, որ գլուխդ հետ է ընկել, ոչ թե առաջ, թե չէ ջրահեղձ կլինեիր: Ասես փոքր երեխա լինես: Ո՞ւր էիր գնացել»:

Պատմեցի՝ ինչպես եմ ճանապարհ տեսել իմ առաջ ու գնացել այդ ճանապարհով, բայց նա իր սովորական առարկություն չընդունող տոնով հայտարարեց, որ դա լուսնակածանն է եղել ջրի վրա:

«Ամբողջ երկինքը պատված է ամպերով: Որտե՞ղ ես լուսին տես-

նում»,- հարցրի ես, բայց դուստրս, եթե դա իր շահերից է բխում, կարողանում է չնկատել ակնհայտը:

Տանը նա և իշխանուհին սկսեցին հանել հագուստս, որ չորը հագցնեն, ու զարմանքով պարզեցին, որ ճամփորդական զգեստի տակ, որ առավոտից հագիս էր, մեկն էլ կա՝ բումազե, սպիտակ, բարձր գոտկատեղով, կրծքի տակ գոտի և փեշին՝ հունական քառանկյուն զարդանախշ: Դա տեսնելով՝ ես էլ զարմացա. անծանոթ էր:

«Ահա թե ինչու էիք այսօր ամբողջ օրը քրտինքի մեջ կորած»,- ասաց իշխանուհին այնպիսի տեսքով, ասես մի այնպիսի բան էր իմացել, որ թաքցրել էի իրենցից, իսկ պատասխանիս, թե ցերեկը շոգից մյուսներից ավելի չեմ տառապել, բազմանշանակ ժպտաց:

Ուզում էի ասել, որ երկրորդ շոր չեմ հագել և առաջին անգամ եմ տեսնում: Որտեղի՞ց է հագիս՝ չգիտեի, բայց հետո հիշեցի ցրտի զգացողությունը, խունացած խոտը սարալանջերին, ու հասկացա, թե ինչու է Աթենքում ձմեռ, երբ Դրիմում ամառ էր:

Ապրածս նման չէր այն տեսիլքներին, որ ունենում էի հիվանդության ընթացքում: Կատարյալ հստակությամբ, որը բացառում էր ցանկացած սխալ մեկնաբանություն, գիտակցեցի, որ միայն հոգիս չի եղել այնտեղ, ո՛չ: Ես երկվացել էի մարմնով, ահա թե որն է հագիս շորի բացատրությունը: Իմ երկու էություններից մեկը հրաշքով տեղափոխվել էր ապագա և տեսել Պարթենոնը, ինչպիսին մի օր լինելու է:

Ունկնդիրներիս բացատրեցի, թե ինչպես է պետք հասկանալ ինձ հետ կատարվածը, և ասացի, որ բոլոր ժամանակները կողք կողքի Աստծու ափին են, և նա, ում իր ափին կդնի, հեշտությամբ կանցնի մեկից մյուսին: Սպիտակ շորն իմ հագին էր այնտեղ և մնացել էր, երբ իմ երկու էությունները կրկին միացել էին:

«Իսկ այնտե՞ղ որտեղից է հայտնվել»,- հարցրեց Սոֆին:

Պատասխանեցի, որ այդպիսի հարցերով ինձ չպիտի դիմի, և նա կծեց լեզուն:

Ամբողջ մարմնով դողում էի: Թեյ խմեցի ու մի դեղձ կերա: Տեսնելով, որ արդեն լավ եմ, Սոֆին ու իշխանուհին հանգստացան ու սկսեցին

հոգուս հետ խաղալ, թե՝ a la տունիկան իմն է, ցրվածության պատճառով առավոտյան հագել եմ ներքնաշորի փոխարեն: Սոֆին ավելի առաջ գնաց՝ հավաստիացնելով, որ Ռիգայում ենք կարել՝ Ղրիմ մեկնելուց առաջ, ու տվեց դերձակուհու անունը, որ կյանքում չէի լսել: Ինձ վերջնականապես ոչնչացնելու համար կանչեց սպասուհուն ու հրամայեց վկայել, որ այդ շորը իմ ճամպրուկում ժամանել է Ռիգայից, բայց նա ճարպկորեն խուսանավում էր Սոֆիի և իմ միջև՝ փոքրոգաբար չընդունելով ու չժխտելով իմ իրավացիությունը:

Երբ գնաց, ինձ չարչարողներին հարցրի. «Ձեր կարծիքով ես չգիտե՞մ իմ հագուստները»:

Իշխանուհին ծիծաղից փլվեց ու սկսեց հիշեցնել, թե առաջ երբ ու որտեղ եմ եղել այդ շորով: Սոֆին ձայնակցում էր նրան, և ի վերջո կարողացան ինձ հասցնել հիստերիայի: Ոտքերս խփում էի գետնին, գոռում, որ ծեր եմ, բայց դեռ խելքս չեմ թռցրել, երբեք այդպիսի շոր չեմ ունեցել, ոչ ոք այն ինձ համար չի կարել Ռիգայում, թող վերջ տան հիմար կատակներին կամ դուրս կորչեն, ես իրենց կարիքը չունեմ: Նրանք սսկվեցին ու սկսեցին ամեն ինչում համաձայնել ինձ հետ, ինչը ավելի վատ էր: Ես վռնդեցի նրանց ու կողպեցի դուռը:

Տասը րոպեից միասին ու հերթով սկսեցին թակել դուռս ու ներողություն խնդրել: Ի վերջո, դռան հետևից ներեցի նրանց, բայց հրաժարվեցի բացել:

Իշխանուհին բավարարվեց դրանով ու գնաց քնելու, իսկ Սոֆին աղաչում էր ներս թողնել, լալիս էր, ասում, թե ուշագնացության նոպաներ առաջ էլ եմ ունեցել, ուրեմն բարելավումը ժամանակավոր էր, հիվանդությունը վերադարձել է: Ինձ հասցրեց նրան, որ դադարեցի պատասխանել:

Ռիգայում բժիշկներն ինձ թոքերի cancer էին ախտորոշել, բայց ես նրանց չեմ հավատում: Սոֆին հավատում է, իսկ ես՝ ոչ: Նա հավատում է բոլորին, բացի մորից: Ես գիտեմ, որ cancer չէ, այլ թոքախտ՝ նախնական փուլում: Էլի լավ բան չկա, բայց մորս այդ հիվանդությունն ախտորոշել էին իմ հիմիկվա տարիքում, ինչից հետո սկսեց կումիս խմել և ապրեց մինչև խոր ծերություն: Եթե վիճակս վատանա, ստիպված պիտի դիմեմ կումի-

սաբուժության: Վերջերս այդպիսի առողջարան է բացվել Կարասուբազարում, ու քանի որ՝ որտեղ կումիսն է, այնտեղ՝ մահմեդականները, ինձ համար լրիվ մեկ է՝ այգեպան թաթարների՞ն քարոզել, ինչպես այստեղ, թե՞ քոչվոր նողայներին, որ այնտեղ են:

Դստերս տագնապներին քննադատաբար եմ վերաբերվում: Նա չափազանցում է ամենայն վատը, ու հասկանում եմ՝ ինչու: Մասամբ կյանքի հանդեպ վախից է, որն այնքան էլ բարի չի եղել նրա նկատմամբ, մասամբ՝ ավելի կարևոր անձ երևալու ձգտումից, քան կա իրականում: Սոֆին խանդում է իշխանուհի Գոլիցինային ու ջանում է ուշադրություն գրավել իմ առողջության հանդեպ ծանձրացնող հոգածությամբ: Բնությունը ժլատություն չի արել՝ խելացի է, բայց անհաջող ամուսնության հետևանք պահեցողությունը նրան զրկում է ճկունությունից: Սոֆին իրեն մեծ ինտրիգանուհի է երևակայում, բայց ինձնից ոչինչ չի կարող թաքցնել:

Իմ ուշագնացությունն ավելին չէ, քան նրա ստեղծած միֆը: Տարածում է, որ ինձ վստահաբար բուռը հավաքի, բայց դա չի անցնի: Թագակիր այրեր են ինձ ենթարկվել, այնպես որ, մի կերպ կստիպեմ հաշվի նստել ինձ հետ:

Նամակին նկար եմ կցում: Երեկ տեսածս տաճարն է: Պատկերել եմ բոլոր ճարտարապետական ու քանդակագործական մանրամասներով: Դրանք պետք է համոզեն քեզ, որ սա իմ երևակայության պտուղը չէ, այլ պատկերված է բնօրինակից: Ավելի ճիշտ, թարմ հետքերով պատճենված է նրանից, ինչ պահպանվել է հիշողությանս մեջ և չէր կարող երևակայության ծնունդ լինել: Երևակայությունը մեզ միայն առարկաների ընդհանուր ուրվագիծն է տալիս, առանց մանրամասների:

Յուղաներկով վատ չեմ նկարում, ու չնայած մատիտն իմ սիրելի գործիքը չի, գծագրողի հմտությունները դեռ ինձ չեն լքել: Ինչպես և հիշողությունը: Օրինակ, հիշում եմ քո Մոսցեպանովին ու շատ եմ ափսոսում, որ չհանդիպեցիր նրա հետ: Նրա գաղտնիքը մտքիցս դուրս չի գալիս:

Պերմ

Մայոր Բորիս Չիխաչով: Հիշատակարան

Սեպտեմբեր, 1824 թ.

Թագավորի նախատեսվող այցի կապակցությամբ բերգ-տեսուչ Բուլգակովը պահանջեց, որ Վերխնեուրալյան գումարտակիս մեկ վաշտով ներկայանամ Պերմ: Ինձ բնակարան հատկացրին քաղաքում, իսկ զինվորներին տեղավորեցին զորանոցում, որ կայազորային հաուպտվախտի բակում էր: Այնտեղ էր պահվում իմ հին ծանոթը՝ Մոսցեպանովը: Դատապարտվել է Սիբիր աքսորվելու, բայց մինչև սենատի հաստատումը պահվում է ոչ թե բանտում, այլ հաուպտվախտում: Թույլատրված է ման գալ բակում, ես պարբերաբար տեսնում եմ նրան և հենց առաջին օրը չդիմացա ու հարցրի սև արյունով Զմեյ Գորինիչի մասին: Նա միայն թափ տվեց ձեռքը, թե՝ այդ ամենը անցյալում է: Ես պնդեցի, և այդ ժամանակ նա առաջարկեց գնալ գիմնազիա, վերցնել Ժողովրդական կրթության մինիստրության 1819 թվականի հանդեսն ու կարդալ. ինքս կհասկանամ: Մոսցեպանովը համարն էլ ասաց, բայց մոռացել եմ: Դա այնպիսի տոնով ասվեց, որ այդ թողարկումը փնտրելու ջանքն ակնհայտորեն անիմաստ էր:

Խոսակցության ընթացքում անընդհատ հայհոյում էր Սիգովին և նրա կողմից իբր կաշառված դատավորներին: Որքան կարող էի՝ բացատրում էի, որ այդ զրպարտությունները, նույնիսկ եթե՝ մասամբ արդարացի, կործանարար են: Նիժնիտագիլյան գործարաններն աշխատում են Վիսոցկու հանքանյութով, որի երկաթը լավագույնն է աշխարհում: Կոփելու մեջ հավասարը չունի: Այստեղ այն ձուլում են, կռում, գլանում, կաղապարում, մշակում երկաթաթերթ, ձողեր, կաթսաներ, օղակապեր պատրաս-

տելու համար, բևեկնախեժի, ճարպահալման ու շոգեմեքենայի կաթսաներ են սարքում, լիտվական գերանդիներ ու մանգաղներ, սովորական ու եռակցած սեպերով պայտեր, կառքի շարժակազմեր, վառարանի խուփեր, ծխատարներ, բուխարական բրիչներ, բահեր, եղաններ, կացիններ, թասեր, կասկարաներ, քառեղջյուր ու երկեղջյուր խարիսխներ, բոլոր չափերի շղթաներ՝ բեռնանավերի համար, կրկնատաշ, միատաշ, թելավոր, սնդուկի:

«Այս ամբողջ բազմազանությունն արտադրող մեխանիզմը չափազանց բարդ է ու նուրբ,- ավարտեցի մենախոսությունս:- Նույնիսկ կոմս Դեմիդովը շատ զգույշ է միջամտում նրա աշխատանքին: Իսկ դուք հարկ է, որ ընդհանրապես չխցկվեք»:

«Դուք արդարությունը բուխարական բրիչներից էժա՞ն եք գնահատում»,- կշտամբեց Մոսցեպանովը:

«Այո՛, աշխարհն անարդար է,- խոստովանեցի ես,- և ամենատխուրն այն չէ, որ այդպիսին է, այլ, որ հենց այդպիսին էլ պետք է լինի, որպեսզի չկործանվի»:

Ծանրակշիռ առարկություն չգտավ ու միայն ասաց. «Է՛հ, մայո՛ր, մայո՛ր»:

Նամակագրության իրավունքից նրան զրկել են: Կարեկցանքից դրդված՝ փոստատուն հանձնեցի եղբորը՝ Կազան հասցեագրված նամակը, իսկ փոստից նրան բերեցի «Ռուսսկի ինվալիդի» երկու համար: Դրանցից մեկում հայտնվում էր, որ լորդ Բայրոնը ճահճատենդից մահացել է Միսոլոնգիում: Մոսցեպանովից թեկուզ ոչ վշտի, գոնե մեզ վաղաժամ լքած մեծ մարդու հանդեպ բնական ափսոսանքի արտահայտություն էի սպասում, բայց նա որևէ բարի խոսքով չհիշելով մահացածին, հայտարարեց, որ չի վստահում անգլիացիներին:

«Ինչո՞վ են արժանացել ձեր անբարյացակամությանը»,- հարցրի:

«Ամենաերեսպաշտ ազգն է,- եղավ պատասխանը:- Ահա մի օրինակ. լորդ Ստրանգֆորդը՝ բրիտանական դեսպանորդը թուրքական արքունիքում, սուլթանից ընծա էր ընդունել նախկինում Հաջիերիին պատկանած մեդալների հավաքածուն»:

Այդ անունն ինձ անծանոթ էր:

«Նշանավոր հույն է, մեր դեսպանության թարգմանը Կոստանդնուպոլսում,- պարզաբանեց Մոսցեպանովը՝ բավական կոպիտ հասկանալ տալով, որ ապշած է իմ անգիտությունից:- Սպանվել է սուլթանի գաղտնի հրամանով: Ստրանգֆորդը գիտեր դա, բայց չամաչեց այդպիսի նվեր ընդունել նրանից»:

Դեսպանորդներ, թարգմաններ, լորդեր, մեդալներ,- իսկ դեմքը պատված է ճերմակած ստևով, ու հագուստն էլ ամբողջովին մաշված է, կեղտոտ, կոշիկների կրունկները՝ ծուռտիկ, թևքերն ու փեշերը՝ թել տված: Իմ վաշտի զինվոր Աժաուրովը հացի կող կամ թութուն կհյուրասիրի, դրանից էլ գոհ է: Այդ Աժաուրովը ամենախեղճ զինվորն է, բոլորը նեղացնում են, բայց նա էլ գտել է, թե ում կարելի է խղճալ:

Մոսցեպանովն առանց այն էլ միշտ մռայլ էր, բայց վերջնականապես վիատվեց, երբ ասացի, որ թագավորը խոլերայի պատճառով շրջանցելու է Պերմը: Պերմում այցելելիք վայրերի ցանկում հաուպտվախտը նշված չէր. դրա մասին արդեն ասել էի նրան, բայց ըստ երևույթին դեռ ինչ-որ հույսեր էր կապում գերագույն այցի հետ:

Իմ հերթապահություններին նրան երբեք ոչ ոք տեսության չէր եկել, բայց երեկ չէ առաջին օրը, դարպասից այն կողմ բռնացնելով, ինձ դիմեց թաթարական աչքերով ու հռոմեական կիսադեմով մի ջահել կին: Անմիջապես ճանաչեցի ու նույնիսկ հիշեցի անունը՝ Նատալյա Բաժինա: Անկեղծորեն խոստովանելով, որ Մոսցեպանովը ոչ իր ամուսինն է, ոչ եղբայրը՝ իր աստիճանի կնոջ համար ապշեցուցիչ հանդգնությամբ տեսակցություն խնդրեց նրա հետ:

Սիրտս հալվեց: Հաջորդ երեկոյան, ոչ մեկին չհարցնելով այդպիսի հանդիպման թույլատրելիության մասին ու դրա վերաբերյալ չզեկուցելով, նրան դիմավորեցի դարպասի մոտ, տարա պահականոց, որտեղից նախապես հեռացրել էի Ժամապահ զինվորներին, և այնտեղ բերեցի Մոսցեպանովին:

Ճանապարհին, ենթադրելով, թե որքան երջանիկ կլինի իր Նատալյային տեսնելով, հայտնեցի, թե ինչ անակնկալ է սպասում, բայց ո՛չ շնորհակալություն հայտնեց, ո՛չ էլ որևէ ուրախություն արտահայտեց:

Նատալյան տեսավ նրան ու լաց եղավ: Ստքով չէր անցել, իհարկե, որ այդպիսին կտեսնի: Մազերը թափվել էին, գորշացել էր, ասես զառամյալ ծերունի լիներ: Իսկ երբ բերանը բացեց, երևաց, որ ատամներն էլ պակասել են:

Սատանան էր դրդել սիրահարվելու այդ կիսախելագար բանսարկուին: Վայ թե աչքին Պրոմեթևսն է, որի վրա Սիգովն ու Պլատոնովը արձակել էին նահանգական արծիվներին, որ կտցեն լյարդը:

«Ի՞նչ ես ձենդ գլուխդ գցել»,- չասենք թե մեղմ հարցրեց Մոսցեպանովը:

Կինն արագ սրբեց արցունքները, քիթը ֆսֆսացրեց ու պատասխանեց, որ նրան՝ ծեր ապուշին տեսնելու ուրախությունից է լացում:

Նրանց մենակ թողնելու իրավունք չունեի, անկեղծ ասած՝ չէի էլ ուզում: Հեռու նստեցի, ձևացրի, թե զբաղված եմ ծառայողական թղթերով, բայց ականջս նրանց խոսակցությանն էր:

Լսում եմ՝ կինը շշնջում է. «Ձեր եղբայրն ինձ հետ ուղարկել է՝ ինչ խնդրել էիք»: Մոսցեպանովի պատասխանը խեղդվեց հազի մեջ, բայց հասկացա, որ եղբոր ուղարկածը նրան չի հետաքրքրում:

Տեղավորվեցին աղավնյակներս նստարանին: Կինը մոտեմոտ է անում, ձեռքերն է շոյում, ասում է, որ Սիբիրում նույնպես ռուս մարդիկ են ապրում, ինքն ու որդին կգան նրա մոտ: Մոսցեպանովը՝ ոչ մի խոսք: Փքվել, նստել է բվեճի նման:

Վերջապես ասում է. «Հանգուցյալ հայրս ու մայրս համարյա ամեն գիշեր երազ են գալիս: Առաջ ուզում էի, որ գան, կանչում էի քնից առաջ, և՝ ոչինչ: Իսկ հիմա հենց աչքերս փակում եմ՝ կողքիս են»:

«Խղճում են իրենց որդուն, որ բանտում է»,- ենթադրեց Նատալյան:

Մոսցեպանովն օրորեց գլուխը. «Չէ՛, առաջ կանչս չէր հասնում նրանց, իսկ հիմա վայրկենապես հասնում է: Ըստ երևույթին մոտ եմ այն վայրերին, որտեղ նրանք են»:

Տեսա, որ Նատալյայի շրթունքները նորից դողացին: Վերցրեց իր մախաղը, սկսեց բերածը հանել: Պահականոցի ճանապարհին պատմել էր, որ Պերմում սանամեր ունի, նրա տանը, վառարանատակին շոռաբլիթ է

թխել, աղ դրած միս առել բաշկիրներից, իսկ թթվեղենը, մեղրը, հատապտղի մուրաբան տնից էր բերել կեչակեղևի արկղիկում: Այդ ամենից մի քիչ-մի քիչ ինձ էլ հյուրասիրեց: Չնեղացնելու համար մի շոռաբլիթ վերցրի:

Սոսցեպանովին այստեղ սովամահ չեն անում, բայց համադամությունևներով էլ երես չեն տալիս: Աչքերը վազվզեցին, միանգամից վրա ընկավ բոլորին: Մեկից է կծում, անմիջապես՝ մյուսից, խառը ծամում է: Թթու վարունգից հետո՝ մեղր, մեղրի վրա բաշկիրական միսն է մորու մուրաբայով հուպ տալիս: Նայեմ՝ Նատալյան անհանգստանում է, որ այդպիսի լուկուլոսյան խրախճանքից հանկարծ լուծ չընկնի: Չհամարձակվեց ձեռքից որևէ բան առնել, բայց խորհուրդ տվեց. «Արանք-արանք շոռաբլիթ ծամեք, թե չէ ստամոքսին վատ կնստի»:

Սոսցեպանովը բանի տեղ չդրեց: Հանկարծ ծնոտները սկսեցին դանդաղել, աչքերը կուլ գնացին, ու խոսեց լիքը բերանով. «Սիդորկա Վանյուկովին հանդիպես՝ թքի ռեխին»:

«Բայց ձեր սիրած աշակերտն է: Ինչի՞ համար»,- ապշեց Նատալյան:

«Ինքը գիտի»,- ասաց Սոսցեպանովը, և աչքերը շողացին: Սրա վրա էլ ընկերուհուն դուրս բերեցի պահականոցից: Ճանապարհին, բակն անցնելիս, մի անպարկեշտ միտք հայտնվեց՝ տանեմ նրան ինձ մոտ ու սփոփեմ այդպիսի տեսակցությունից հետո: Ասես պատահմամբ հիշեցի, որ բնակարանում մենակ եմ, ու հարցրի, թե ուր է գնալու էս գիշերով:

«Սանամորս մոտ»,- ասաց Նատալյան:

Հայացքը վկայում էր, որ ակնարկս հասկացվել է, բայց հավանության չի արժանացել:

Դե ինչ, սանամոր, ուրեմն՝ սանամոր:

Ուղեկցեցի մինչև դարպասը, անցկացրի ժամապահի մոտով: Լապտերի լույսի տակ նայեմ՝ ժպտում է:

«Ինչի՞ վրա ես ուրախացել»,- հարցնում եմ:

«Չարանում է,- պատասխանեց,- ուրեմն սիրտը կենդանի է»:

Խոնարհվեց՝ հրաժեշտ տալով ու անհետացավ մթան մեջ:

Փառք Աստծու, խոլերան Վոլգայով Կամիշինից վեր չբարձրացավ,

Կամայի գետեզերքն անվտանգ էր: Կարգադրություն ստացվեց՝ թագավորին սպասել սեպտեմբերի 30-ի կեսօրից հետո, եթե եղանակը չփչանա:

Այցի նախապատրաստություններն ամառվա կեսին էին սկսվել, և այդտեղ քիչ օգուտ կար Կրիդներից. Տյուֆյաևը շատ ավելի եռանդուն էր: Քաղաքամերձ ու առափնյա այգիներում դորիական ոճի ռոտոնդաներ են կառուցվել, Կազանյան ու Սիբիրյան ուղեկալների մոտ կոթողներ էին կանգնեցվել՝ վերնամասում թուջե գնդեր ու արծիվներ: Սիբիրյան մեծուղում, որով թագավորը քաղաք էր մտնելու, ուղեկալից քառորդ վերստի վրա մատղաշ կեչիներ էին տնկել: Գլխավոր փողոցներում եռակի կիսակոճղերով մայթեր էին փռվել: Դրա կապակցությամբ գիմնազիայի ուսուցիչ Վասիլի Ֆեոնովը բանաստեղծություն էր գրել, որը ձեռքից ձեռք էր անցնում.

Օ՛, նահանգապետ մեր Կիրիլ,
Պերմում ինչքա՛ն բաներ արիր:
Սլուդկիից Երոշիխա
Երկար ու ձիգ մայթ է որ կա:
Մի օրում ես ողջը կապել,
Ցանկապատ ու հատակ քանդել,
Բուրգ ես շինել ու ռոտոնդա,
Ի՛նչ տեսարան, հրաշք է դա:
Էլ ինչ Հռոմ ու Հունաստան,
Ոտ չեն գցի մեզ հետ հաստատ:

Ես ֆրոնդյոր չեմ, բայց ինչ-որ մեկը Տյուֆյաևի ականջին շշնջացել էր, թե իբր բարոն Կրիդների առանձնահատուկ բարեհաճությանն եմ արժանացել: Եվ ահա դասված եմ ֆրոնդայի ճամբարին, իսկ այդ խարդավանքի հետևանքով թագավորի հետ հանդիպմանն իմ վաշտը կղեկավարի փոխտեղակալ Դրավերտը՝ կայազորի գումարտակից: Ըստ լուրերի՝ ազգակցական կապ ունի պետերբուրգյան ինչ-որ կարևոր դեմքի հետ:

Սեպտեմբերի 30-ի կեսօրին ժողովուրդը սկսեց հավաքվել մեծու-

դում՝ Քաղաքամերձ այգու մոտ: Ընտանիքներով էին գալիս՝ զուգված-զարդարված, ուտելիքի կապոցներով ու զամբյուղներով: Ինձ հասնող խոսակցությունները ժամանակ առ ժամանակ դառնում էին այն հարցին, թե թագավորն ինչու է ժամանել Ուրալ: Ուղևորության նպատակները չեն հրապարակվել, արդյունքում՝ ամենաֆանտաստիկ ենթադրություններ են արվում: Ամենատարածված վարկածն այն է, որ ընդմիշտ է լքել Պետերբուրգը, որովհետև այնտեղ համատարած դավաճանություն է:

Համազգեստն ինձ տեղ ապահովեց առաջին շարքում՝ ծառայության կարգված աստիճանավորների խմբում:

Կանգնել էինք ուղեկալային նոփ-նոր կոթողների տակ և ժամանակ առ ժամանակ կարկանդակներով ու տաք մեղրահյութով փոր էինք պնդացնում: Ամբոխի մեջ դեսուդեն անող փերեզակներն էին ծախում: Թաքուն թունդ ըմպելիքներ էլ էին առաջարկում, բայց ցանկացողները շատ չէին: Դա ինձ հաճելիորեն զարմացրեց:

Հայտարարվեց, որ թագավորը կժամանի ցերեկվա ժամը չորսի մոտ, բայց ո՛չ չորսին, ո՛չ հինգին, ո՛չ յոթի կեսին ոչինչ չէր հուշում գալուստը, բացի Սիբիրյան փողոցում վառված լույսերից: Ութին ժամանեց կայսերական թափորի միայն առաջին մասը: Ինքը՝ թագավորը որտեղ էր, ոչ ոք չգիտեր: Լուր տարածվեց, որ գիշերը մնացել է Կունգուրում, և առավոտից շուտ պետք չէ սպասել նրան:

Գիշերվա կողմ ցրտեց, անձրև էր կաթկթում: Խոտերին ճաշի նստած մարդիկ հավաքում ու կապոց էին անում ուտելիքի մնացորդները: Երեխաները քչացել էին, նրանց հետևեցին նաև մեծերը, բայց մեծ մասը, այդ թվում՝ ես, հույս ունեինք, որ լուրը կեղծ է: Լույսերը չէին մարում՝ մեր մեջ պահպանելով այդ հույսը: Ամենաճարպիկները, որ ավելի լավ տեսնեն թագավորական երթը, ուղեկալից մեծուղով առաջ շարժվել ու տեղեր էին գրավել կեչիների տակ:

Շուրջբոլորը ջրափոսերում ավազ էր լցված, որը հարյուրավոր ոտքեր տրորելով՝ դարձրել էին ցեխ: Բոլորը, աչք ցավեցնելու չափ, նայում էին մթին հեռուն, որը ոչնչով չէր արձագանքում նրանց հայացքներին: Հանկարծ աղեկտուր ճիչ լսվեց. «Գալի՛ս է»:

Միահամուռ հառաչանք անցավ ամբոխի միջով, գոչում էին. «Ո՞ւր է, ո՞ւր է»: Կոթողներից մեկի պատվանդանին վաղուց կանգնած տղան ձեռքը պարզել էր ինչ-որ ուղղությամբ ու գոռում էր խելագարի պես: Հեռվում մի մենավոր լույս երևաց: Թույլ առկայծում էր խավարի մեջ, ճոճվում սեփական ընթացքից ու մեզ բաժանող խոնավ օդի շարժումից:

Ամբոխը գվվոցով սկսեց տարածվել մեծուղու երկարությամբ: Մարդկային պատն իմ շուրջը փլվեց, բեկվածքներից մեկի միջով նկատեցի Մոսցեպանովի Նատալյային ու սկսեցի մոտենալ: Ոտքերի թաթերին ծգված՝ աչքը չէր կտրում հեռավոր լուսակետից: Նրան հիմշտում էին բոլոր կողմերից, բայց այդ վիճակում էլ կարողանում էր պահպանել իրեն հատուկ նրբագեղությունը: Ինձ չէր տեսնում: Աջ ձեռքը արմունկով հետ էր մղում հարևանների սաստիկ ճնշումը, իսկ ձախը կրծքին թաքցրած ինչ-որ բան էր պահպանում, ասես ծոցում շան թե կատվի ձագ լիներ: Մի պահ երևաց գլանաձև փաթաթած թղթի ծայրը: Հասկացա, որ թագավորին ուղղված խնդրագիրն է, որ Մոսցեպանովի եղբայրն ուղարկել է Կազանից, ու վախենում է ճմռթվի: Նրա մտադրությանը խանգարել չէի ուզում, բայց մտածեցի, որ եթե խցկվի թագավորի մոտ, իսկ ես կողքին լինելով՝ չփորձեմ կանգնեցնել, տհաճություններ կունենամ: Ավելի լավ է հեռու մնալ նրանից, թե չէ աստիճանավորներից մեկնումեկը կհայտնի իմ անգործության մասին: Սպաներին ու պաշտոնյաներին կարգադրված էր բոլոր եղանակներով ու միջոցներով կանխել թագավորին գանգատ կամ խնդրանք փոխանցելու փորձերը:

Ծրջվեցի դեպի խավարում բորբոքվող կարմիր կետը, որ մոտենում էր, մեծանում, ծգվում: Բոցը գետնից բավական բարձր էր և ասես ինքն իրեն էր շարժվում, ինչպես Մովսեսի անկեզ մորենին, ու նույն կերպ դյութված, ինչպես հրեան՝ անապատում, բոլորս նայում էինք նրան: Մշուշոտ ցոլքը լողում էր օդում կախված մանրամաղ անձրևի միջով:

Այնպիսի հուզագրգիռ վիճակում էի, որ չէի կարող միաժամանակ տեսնել ու լսել: Տեսողությունս ու լսողությունս փոխնիփոխ էին գործում: Բազում սմբակների դոփյունը շատ ավելի ուշ դղրդաց ականջներիս մեջ, քան օդում լողացող խորհրդավոր կրակը կվերածվեր հեծյալ ֆելդեգերի

բռնած ուղեջահի: Թնդաց անսերդաշնակ «ուռա»-ն, գլխարկներ թռան օդ: Ձիու տաք քրտինքի հոտ եկավ: Ֆելդեգերի հետևից երեք բաց կառք սուրացին կողքովս: Այնտեղ նստած մարդիկ միանման շքագլխարկներով ու շինելներով էին: Կիսախավարում նրանց մեջ թագավորին ճանաչելն անհնար էր:

Հաջորդ պահին ջահը կախվեց անմիջապես ուղեկալի հետևը՝ նահանգային ճարտարապետ Սվիյազևի տան առաջ: Ըստ կարգացուցակի՝ թագավորն այնտեղ պիտի փոխեր հագուստը: Լսեցի, թե նրա ողջույնին ինչպես պատասխանեց ցանկապատի երկարությամբ շարված պահակային վաշտս, ու մտածեցի, որ իմ ղեկավարությամբ ավելի ներդաշնակ կպատասխանեին:

«Է՛հ, Դրա՛վերտ, Դրա՛վերտ, շա՛ն որդի»,- ոչ առանց իմ վիճակում հասկանալի չարախնդության մտածեցի ես:

Ամբոխը հեղեղել էր տան դիմացի փողոցը: Խցկվեցի առաջ: Կառքերը դատարկ էին, շքախմբի մարդիկ նույնպես ճանապարհի հագուստը փոխում էին տոնականի, բայց ֆելդեգերները մնացել էին ձիերի մոտ, կառապանները՝ նստիքներին: Նրանցից մեկը՝ դյուցազնական կազմվածքով, մինչև կրծքի կեսն իջնող սևաթույր մորուքով, համընդհանուր ուշադրության առարկա էր դարձել: Նստիքին արքայավայել բազմած՝ ուշադրության չէր արժանացնում հիացմունքով իրեն զննող անբաներին: Լեգենդար Իլյա Բայկովն էր՝ թագավորի սիրելի կառապանը:

Քաղաքացիներից մեկը, հենց կողքին կանգնած, նրա մասին այնպես էր պատմում, ասես ոչ թե կենդանի մարդ էր, այլ թանգարանի արձան. «Աուստեռլիցի կռվին թագավորին փրկել է գերությունից, այդ սխրանքի համար գնդապետի աստիճան է ստացել: Թագավորը բոլոր պաշտոնյաներից միայն նրան է թույլատրում չսափրել մորուքը»:

«Կառապանը դասային աստիճան ունենալ չի կարող»,- ասացի ես:

«Ինչի՞ որ»,- վիրավորվեց պատմողը:

«Դասային աստիճաններ շնորհվում են միայն նորին մեծությունների ու բարձրությունների տնային ծառայանուն»,- բացատրեցի ես ու նորից տեսա Նատալյային: Դեմքը առանձնանում էր մյուս դեմքերից, այն չէր

փչացնում նույնիսկ չափազանց երկար ու հիմա էլ դեռ ցրտից ու խոնավությունից կարմրած քիթը:

Օգտվելով նրանից, որ շրջապատողների ուշադրությունը կենտրոնացել է Իլյայի վրա, անտարբեր տեսքով, քողարկվելու համար ուրիշ կողմ նայելով, զգուշորեն, քայլ առ քայլ, թիկունքից սկսեց մոտենալ թագավորի կառքին: Ես կռահեցի նրա պլանը ու մտովի հաջողություն մաղթեցի:

Եվ նույն պահին, ասես ցանկությունս ուժ տված լիներ, նա նետվեց առաջ, ու մինչև զինվորները կհասցնեին բռնել, առանց թափ առնելու, դաստակի անորսալի շարժումով հասցրեց նստիքին գցել վարդագույն երիզով կապած գալարափաթեթը: Այնքան ճարպիկ արվեց, որ կարծես թե միայն ես նկատեցի, և դա էլ այն պատճառով, որ հետևում էի:

Զինվորները հետ՝ ամբոխի մեջ հրեցին նրան: Քիչ էր մնում ընկներ, բայց ժպտաց մեծերի հանձնարարությունը կատարած աղջնակի պես, հպարտ, որ արդարացրել է նրանց վստահությունը, կարողացե՛լ է: Լույսերի տակ աչքերը հաղթական վառվում էին: Հաշվարկն այն էր, որ թագավորը կառք նստելիս կնկատի խնդրագիրն ու չնայած մթան մեջ չի բացի, կվերցնի ավելի ուշ կարդալու համար, բայց Իլյան ինչ-որ անպատեհություն զգալով՝ շրջվեց: Ծառայության բերումով ծոծրակին էլ պիտի աչքեր ունենար, այլապես այդքան երկար չէր մնա լեյբ-կառապանի նստիքին: Հայացքն առավ նստարանի ու կառակողի արանքում ընկած սպիտակ գալարափաթեթին, որոնցից, պետք է ենթադրել, կյանքում քիչ չէր տեսել: Բռնեց մտրակի ծայրով ու գցեց գետնին:

Լապտերը հանեցին սանդղամուտ, հայտնվեց թագավորը: Ծիսելի փոխարեն հագին համազգեստ էր, շքագլխարկին փոխարինել էր եռեզր գլխարկը: Նրան դիմավորեց ամբոխի բուռն ցնծությունը: Շքախմբի ուղեկցությամբ համարյա վազքով իջավ աստիճաններով և պատվի առած զինվորների մոտով ուղղվեց դեպի կառքը:

Ժողովուրդը հետ քաշվեց՝ ճանապարհ տալով: Ուղիղ իմ առաջ գետնին տեսա այն, ինչ մնացել էր խնդրագրից: Տասնյակ ոտքեր էին անցել վրայով: Վարդագույն ժապավենով գեղեցիկ կապված կոկիկ գալարափաթեթը հիմա ընդամենը ճղճղված կեղտակուր թուղթ էր:

Հայացքով փնտրեցի Նատալյային՝ վախենալով նայել նրա աչքերին, բայց հետքն անգամ չկար: Ուզում եմ հավատալ, որ իր խնդրագրի ճակատագիրը մինչև օրս էլ չգիտի, ու երբ գրում եմ այս ամենը, երանելի անտեղյակությամբ թեյ է խմում սանամոր տանը՝ հաստատապես հուսալով թագավորական ողորմածությունը:

Իգնատի Ելովսկի: Ալեքսանդր I կայսեր կամերքարտուղարի մատյանը

Սեպտեմբեր, 1824 թ.

Թագավորը ճարտարապետ Սվիյազևին ադամանդակուռ մատանի նվիրեց, իսկ տիկնոջը՝ նույնպիսի զարդաճարմանդ: Նրանց տանը հագուստը փոխելով՝ կրկին կառք նստեց և կառքերի մի ամբողջ թափորի գլուխն անցած՝ Սիբիրյան փողոցով իջավ Կամայի ափ՝ Պայծառակերպության մայր տաճար: Գավիթում նրան դիմավորեցին նահանգապետ Տյուֆյաևն ու բերգ-տեսուչ Բուլգակովը, պատարագիչը Պերմյան և Վերխոտուրյան եպիսկոպոս նորին սրբազնություն Դիոնիսին էր:

Արարողության ընթացքում հայտնվեցի Դիբիչի կողքին, և նա ականջիս ասաց, որ նախկին նահանգապետ բարոն Կրիդներն իր ծառայակիցն է եղել գնդում, երկար տարիներ չէին տեսնվել ու շատ էր ուզում հանդիպել, բայց՝ ավա՛ղ:

Պատարագից հետո մենք բոլորս և նահանգի առաջին դեմքերը գնացինք ընթրելու Բուլգակովի տանը, որտեղ թագավորին հարկաբաժին էր հատկացված: Ժողովուրդը հեղեղվեց մեր հետևից: Մինչև կեսգիշեր, սեղանի մոտից վեր կենալով՝ թագավորը երեք անգամ դուրս եկավ պատշգամբ, որի տակ հավաքվել էր բազմահազարանոց ամբոխը: Նրա հայտնվելուն պես թնդում էր «ուռա»-ն, գլխարկներ էին օդ թռչում: Մեկը կախվեց-մնաց պատշգամբի եզրապատի լապտերին: Թագավորն իջեցրեց կախ ընկած տեղից, Սոլոմկայից մի բուռ արծաթադրամ վերցնելով՝ լցրեց գլխարկի մեջ ու նետեց ցած: Ի պատասխան տասնյակ գլխարկներ թափվեցին ոտքերի

տակ: Սոլոմկան դրանք հետ էր շպրտում, իսկ թագավորն արծաթե հիսունանոցներն արդեն ոչ թե բռով, այլ հինգ-վեց հատով էր նետում ցած, բայց գլխարկները շարունակում էին թռչել մթան միջից, ինչպես թիթեռնիկները՝ լույսի վրա: Ինչ-որ մեկի կարտուզը դիպավ դեմքին: Թագավորը հեռացավ պատշգամբից և այլևս չվերադարձավ:

Առավոտյան թագավորը մասնակցեց կայազորային գումարտակի ստուգատեսին, ապա ընդունեց հոգևորականության, լեռնային պաշտոնյաների ու վաճառականների պատվիրակությունները. քիչ պարգևներ չբաժանվեցին, իսկ քաղաքապետին համազորային էպոլետներ կրելու իրավունք տրվեց: Ճաշից առաջ պառկեց հանգստանալու, իսկ ես, հիշելով Արակչեևի խնդրանքը, գնացի դատարան և տեղեկացա, որ պաշտոնաթող շտաբս-կապիտան Գրիգորի Մաքսիմով Մոսցեպանովը դատապարտվել է աստիճանազրկման և աքսորի, բայց մինչև սենատական վավերացումը մնում է հաուպտվախտում:

Հարցին, թե պարզվե՞լ է գաղտնիքը, որը պատրաստվում էր հայտնել կոմս Արակչեևին, հոդաբաշխ պատասխան չստացա: Դրա փոխարեն առաջարկեցին ծանոթանալ նախաքննական գործին, որը սարսափեցրեց ինձ իր վեց հատորներով: Վերջին հատորի վերջին էջի հերթական համարը 1672-ն էր: Թերթեցի այդ աշխատությունը, բայց չփորձեցի կարդալ և դատարանական գրասենյակը տեսնելու ցանկություն հայտնեցի:

Ինձ առաջնորդեցին բաղնիքի պես ծխահար առաստաղով ու մրից խավոտած պատերով մի մեծ սենյակ: Սեղանները խազմզած էին դանակով ու թանաքաբծերով ծածկված, դրանց մոտ, կեղևաթելով կապկպած ոտքերով աթոռներին նստել էին գրագիրները: Տակները բարձիկների փոխարեն մատյանների տրցակներ էին, թանաքաման էին ծառայում քսուքի կավե ամանները, ճնշակալ՝ վառելափայտի կտորտանքը: Նկատեցի, որ այդ ընկերախմբի կեսը զուտ երեխաներ են, մյուս կեսը՝ ուռած մռութներով փքված կերպարներ: Միջանկյալ տիպը բացակայում էր, ասես առաջիններին, ոչ թե տարիների հետ, այլ մի ակնթարթում, վերածվում էին երկրորդներին: Այդ ակնթարթը թաքնված է անհամեստ աչքերից, ինչպես բոժոժի՝ թիթեռի վերածվելու պահը:

Գրասենյակի վիճակը արտացոլում է դատավարության կարգը: Ասում են՝ ինչպես գրագիրները գրում են, այնպես էլ դատավորները դատում են: Ինքնին միտք էր ծագում, որ Մոսցեպանովի գործով դատավճիռը նույնքան փնթի, կաղոտն, կեղևաթելերով կապկպած մի բան պիտի լինի: Որոշեցի հաջորդ օրն անցնել հաուպտվախտ և անձամբ խոսել նրա հետ, իսկ օրվա մնացած մասը մենակ շրջում էի գետեզերքի դարավանդին, տաճարի մոտ: Ափսոս, որ այդպես էլ նկարչություն չսովորեցի ու չեմ կարող, ինչպես իմ տեղը կաներ բարոնուհի Կրիդները, անմահացնել այստեղից Կամայի վրա բացվող հրաշք տեսարանը: Նրա վեհությունը բառերով չես արտահայտի: Երեկ ընթրիքին Բուլգակովը թագավորին վստահեցնում էր, որ Կազանի համալսարանում են հորինել, թե Կաման թափվում է Վոլգա, իրականում նրան է առնում իր մեջ:

Հաջորդ օրը թագավորի հետ էի, երբ այցելեց բանտ: Նրան ուղեկցում էր նահանգապետ Տյուֆյաևը՝ պաշտոնյաների հետ, իսկ այդ դժոխքն իջնելիս Վերգիլիոսի դերը կատարում էր նահանգային դատախազ Բարանովը: Բանտային կարգն ու կառուցվածքը չուրախացրին թագավորին, բայց ավելի վատ բանտեր էլ էր տեսել, ուստի բծախնդրություն չարեց՝ սահմանափակվելով հիշեցումով, որ անթույլատրելի են այնպիսի պատիժները, որոնք կալանավորներին զրկում են քրիստոնեական մխիթարություններից: Գավառի համար սովորական՝ կասկածյալների, ամբաստանյալների ու մեղադրյալների խառնիփնթորության հանդեպ վաղուց էր անտարբեր. գիտեր՝ ինչ ու ինչքան էլ ասի, իր մեկնելուց հետո ամեն ինչ նախկինի պես է գնալու, բայց աչքին զարնեց այդպիսի մեծ նահանգի համար խիստ կասկածելի՝ կալանավորների փոքր թիվը:

«Կարծես դեսուդե՞ն եք խցկել»,- հարցրեց նա:

«Ճիշտ այդպես, խցկել ենք, սակայն բացառապես դատարանի որոշումներով,- վարպետորեն դուրս պրծավ Բարանովը:- Դատաքննության ընթացքը չէր կարող արագացվել ծերդ մեծության ժամանելու լուրով»:

Տյուֆյաևն ավելի շատ լռում էր: Մի ամիս առաջ էր ստանձնել պաշտոնն ու չէր կարող իմանալ տեղիս բոլոր հանգամանքները:

Բանտից մեկնեցինք Հանրային խնամատարության վարչության

անկելանոց: Այստեղ թագավորի ուշադրությունը գրավեց զինվոր Սավելևը, որը խախտվել էր նրա վրա, որ երեք տարվա ռոճիկը չէին տվել: Թագավորը կարգադրեց բավարարել այդ դժբախտի պահանջը:

«Թող գոնե կես ժամ գոհ լինի»,- ասաց Տյուֆյաևին, որը համարձակվել էր նկատել, թե դա երկար ժամանակով չի հանգստացնի նրան:

Թագավորին դուր է գալիս խախտել օրակարգը: Նրան սպասում էին գիմնազիայում, բայց ցանկություն հայտնեց այցելելու հաուպտվախտ՝ անհիմն մտածելով օգոստոսի ծյան պես տեղալ նրանց գլխին: Պերմում գիտեին, որ Եկատերինբուրգում մտել է հաուպտվախտ, ու համենայն դեպս միջոցներ էին ձեռք առել: Ես դա հասկացա այնտեղ հասնելուն պես: Ցանկապատը նոր էին ներկել, բակը մաքուր ավլած էր ու ավազ ցանած: Բակի շինությունները փայլում էին թարմ սպիտակ ներկից:

Օրը սառն էր, բայց՝ արևոտ: Հանդիպման համար շարված պահակազորի հրացանները լուսաբծեր էին գցում հաուպտվախտի ստվերոտ պատին, բայց ներսում, ըստ երևույթին, ամեն ինչ այնքան լավ չէր, հակառակ դեպքում կալանավորներին բակ չէին հանի: Ընդամենը երեքն էին: Ծարք էին կազմել սանդղամուտի տակ, և երբ պահակազորը պատասխանում էր թագավորի ողջույնին, նրանցից աջակողմյանը ձայնը խառնեց զինվորական երգչախմբին: Հասկացա, որ հենց նա էլ ինձ պետք է:

Դարպասից մինչև առմուտքը թագավորը երեսուն քայլ պիտի անցներ: Անշտապ էինք քայլում, ու պատկերացրի, ինչպիսին է տեսնում նրան Մոսցեպանովը. փոքր, ամրակամ բերան, պայծառ աչքեր, որ գերագույն ճշմարտություն էին խոստանում դրանց տիրոջ արտասանած առաջին իսկ բառով: Դեմքը հողմահար էր մեկուկես ամսվա դեգերումներից, ասեկոսեների սնունդ տվող դիմագծերի աղոտությունը չքացել էր: Քայլը թեթև է, մեջքը՝ ուղիղ, ասես ինքը չէր, որ այսօր նախաճաշին վարսակի շիլան ուտելիս,- չնայած հենց ինքն էլ եփելու համար նախօրեին մի կարմիր էր տվել խոհարարին,- գդալը գցեց ափսեի մեջ և ասաց. «Մահը լուսաբացին մեր անկողին է մտնում»: Այդպես խոսում են սիրելի կատվի լկտիության մասին, որին հնարավոր չէ պարզապես բռնել ու դուրս շպրտել անկողնուց:

Կանգ առանք կալանավորական եռյակի դիմաց: Մոսցեպանովն աջից

էր: Ձախից՝ պահի վսեմությունից խենթացած մի ոչ երիտասարդ պարոն էր՝ առանց էպոլետների սպայական սերթուկով. նրանից էլ սկսեցին:

«Կնոջն է սպանել»,- նրան բնութագրեց Բարանովն ու անվստահ լռեց՝ պե՞տք է, արդյոք, շարունակել: Խոսքի վերջում ձայնը բարձրացնելով հասկանալ էր տվել, որ ասվածից ավելին գիտի:

Թագավորը գլխի շարժումով խրախուսեց, որ շարունակի: Պարզվեց, որ սպանությունը կատարվել է առանց որևէ պատճառի, հարբած վիճակում, ահա թե ինչու մարդասպանը ոչ թե բանտում էր պահվում, այլ հաուպտվախտում: Այդ կարգի հանցագործները մեզանում ներողամտության արժանի էին համարվում, բայց թագավորին խորթ էին այդ նախապաշարմունքները: Նա սառը նկատեց, որ դատարանին է թողնում վճռելու մեղավորի ճակատագիրը, և ոչ մի հարց չտալով՝ անցավ աջ, դեպի մեջտեղում կանգնած բժիշկ Նեպլոդովը, որ մերկացվել էր կեղծ տեղեկանքներ տալու ու պետական գույքը վաճառելու մեջ: Նեպլոդովի զեղծարարությունների մանրամասները թագավորին չէին հետաքրքրում: Ձեռքի շարժումով կանգնեցրեց նրա մեղքերի մասին զեկուցող Բարանովին ու քայլ արեց աջ՝ դեպի Մոսցեպանովը: Կնոջը սպանածն ու բժիշկը դուրս ընկան նրա տեսադաշտից, որպես ֆիզիկական մարմիններ ասես դադարեցին գոյություն ունենալ: Բավական էր թագավորը հայացքը կտրեր նրանցից, երկուսն էլ իմ աչքին սկսեցին կորցնել նյութականությունը, աղոտանալ, հալվել: Երբեմն զգում եմ, որ նման մի բան ինձ հետ էլ է կատարվում: Ապրում եմ, քանի թագավորը նայում է ինձ:

Մոսցեպանովի նախաքննական գործից իմացել էի, որ տարեկիցներ ենք, այսինքն՝ նա տասը տարով փոքր է թագավորից, բայց ավելի շատ նրա տարեկիցն էր թվում, քան իմ: Ճակատն ու այտերը ակոսված էին կնճիռներով, ինչպես լինում է կյանքում բազմաթիվ զբաղմունքներ փոխած մարդկանց դեպքում. յուրաքանչյուրն իր հետքն է թողնում: Կապույտ մանկական աչքերը դժվարությամբ էին զուգորդվում այտուցված աչքատակերի հետ:

«Պաշտոնաթող շտաբս-կապիտան Մոսցեպանով: Դատապարտվել է Նիժնիտագիլյան կառավարիչների վրա սուտ մատնություն անելու համար»,- զեկուցեց Բարանովը նույն, ինչպես առաջին երկու դեպքում, խո-

ռագույն ափսոսանքի տոնով, որ իրեն ենթակա նահանգում այդպիսի մարդիկ կան:

Հարցը, թե մատնությունները շա՞տ են եղել, շփոթեցրեց նրան, բայց Տյուֆյաևը չդժվարացավ մոտավոր թիվ նշել՝ քսանից ավելի: Դրանից եզրակացրի, որ Մոսցեպանովի գործը հայտնի է նրան: Ըստ երևույթին, Արակչեևը, հույս չդնելով այդ շտաբս-կապիտանի գաղտնիքը բացելու իմ խոստման վրա, նույնը հանձնարարել էր իր հովանավորյալին: Իսկ նա հասցրե՞լ էր իմանալ, թե ոչ՝ չգիտեի:

«Եվ բոլոր քսանն էլ՝ կե՞ղծ»,- չհավատաց թագավորը:

«Բոլոր բողոքներն ուսումնասիրվել են սահմանված կարգով, և ոչ մեկը չի հաստատվել»,- պատասխանեց Տյուֆյաևը:

Թագավորը հայացքը դարձրեց բողոքավորին, որը փորձում էր զգաստ կանգնել նրա առաջ: Ծանր էր տեսնել, թե ինչպես է չռում արցունքոտ աչքերն ու կտրիճավարի ցցում կուրծքը: Ուշադրություն դարձրի, որ ձախ սապոգի թաթն աջից փոքր է, և դա վերագրեցի բուժզննության եզրակացության մեջ հիշատակված խեղմանը՝ ոտքի մատների կորստին:

Այդ ընթացքում Տյուֆյաևը հանգամանորեն, անհարկավոր մանրամասներով, որոնք գավառական պաշտոնյաներից դուրս են թափվում, ինչպես ոջիլները՝ պատի անցքից, պատմում էր, որ դեռևս նահանգապետ Կրիդների օրոք Մոսցեպանովի բոլոր բողոքները հետազոտվել են նահանգային հանձնաժողովի կողմից՝ ներառելով հոգևոր ու լեռնային կողմի պատվիրակներին, և անհիմն են ճանաչվել:

«Այդ դեպքում՝ ինչո՞ւ էր գրում»,- ընդհատեց թագավորը:

«Որ կառավարչին վարկաբեկի,- բացատրեց Տյուֆյաևը:- Կառավարիչ Սիգովը մայր հայհոյելու համար նրան հեռացրել է գործարանային ուսումնարանի ուսուցչի պաշտոնից»:

Եվ այդտեղ լսեցի Մոսցեպանովի՝ իր մարմնին անհարիր բարձր ձայնը:

«Ճշմարտությունը բանսարկություն կոչեցին, իսկ ստին ճշմարտության զգեստներ հագցրին»,- խոպոտ արտաբերեց ըստ երևույթին վաղօրոք պատրաստած նախադասությունը, որը, չնայած իր ծուռտիկ նրբագե-

դությանը, բավական սահուն թռավ նրա լեզվից:

Ոչ ոք, առավել ևս կալանավորը չի համարձակվի բերան բացել թագավորի ներկայությամբ, մինչև նա չդիմի: Բոլորը քարացան, բայց, ինչպես և սպասում էի, Մոսցեպանովի հանդգնությունը որևէ հետևանք չունեցավ: Անխռով, ասես արտակարգ ոչինչ չէր պատահել, թագավորը Տյուֆյաևից հարցրեց, թե ինչպիսին է դատարանի վճիռը, և պատասխանը լսելով՝ տարակուսանքով օրորեց գլուխը. «Եթե մեղքը միայն բողոքագրերն են, թեկուզև կեղծ, չափից դուրս խիստ չէ՞»:

«Միայն այդ չի: Մեղավոր է սոդոմական մեղքում, աշակերտներին ուժով պարտադրել է կենակցության»,- զեկուցեց Տյուֆյաևը՝ հաստատելով իմ ենթադրությունը, որ առանց Արակչեևի ցուցումի դժվար թե նահանգապետության առաջին շաբաթներում ծանոթանար այդ գործի 1672 էջերին:

Մոսցեպանովը նույնիսկ չնայեց նրա կողմը: Գլխահակ էր, բայց ոչ այն պատճառով, որ չէր համարձակվում նայել թագավորին: Նրա ոտքերին էր նայում ու ոչ թե պարզապես նայում էր, այլ համեմատում իրար հետ: Կոպերը թույլ թրթռում էին՝ մատնելով դրանց տակ խաղացող ակնագնդերի շարժումը: Առանձնահատուկ զգացումը, որ իմ մեջ ծնվում էր սրտիս տիրոջ կողքին, հուշեց, որ Մոսցեպանովի հետաքրքրությունը շարժել է թագավորի աջ սապոգը՝ տակից ծգած փաթաթանով: Ինչպես իրենը՝ այդ սապոգն էլ մյուսից մեծ էր, թող որ ոչ թաթի երկարությամբ, այլ՝ ճտքի լայնությամբ:

Թվում էր՝ Մոսցեպանովին կախարդել է այդ նմանությունը: Հայացքն ավելի խոնավացավ, բայց դա արդեն այն խոնավությունը չէր, որ մի քանի րոպե առաջ պղտոր, ինչպես հիվանդ թռչուններինը, փայլարի հոսքով կուտակվում էր աչքերի անկյուններում: Հիմա դրանց մեջ շողում էր խանդաղատանքի ու բախտի հանդեպ երախտապարտության մաքուր արցունքը՝ իրեն միապետին նման տեսնելու շնորհի համար: Աշխարհը երկուսին էլ խեղել էր: Երկու անդաշն սապոգները ներդաշնակ արձագանքում էին նրա հոգու մեջ:

Ներբանները գետնից չկտրելով՝ զգույշ, երկու փորձից, կես թաթ առաջ մղեց մատնազուրկ ոտքը: Ըստ երևույթին հույս ուներ, որ թագավորն էլ կտեսնի այդ զարմանալի նմանությունը: Բայց թագավորը նայում

էր նրա աչքերին՝ ապարդյուն փորձելով որսալ մշուշված հայացքը:

Թագավորը կանգնած էր Տյուֆյաևի ու Բարանովի արանքում, թիկունքում՝ շքախումբը, բայց և այնպես դատարկության շրջանակում էր, որի անտեսանելի սահմանը ոչ ոք չէր հատում: Այնպես ստացվեց, որ ամենամոտը Մոսցեպանովն էր:

Երկու կաթիլ արցունք ընկավ կոպերի տակից ու գլորվեց այտերով: Քիթուբերանի կնճիռներին հասնելով՝ երկուսն էլ փոխեցին երթուղին, աջից ու ձախից համաչափ իջան վատ սափրած ծնոտին, կախվեցին ստևից և ընկան, երբ նա կրկին խոսեց:

«Մեղավորները՝ բուսնելով ինչպես խոտ, և անօրենություն գործողները՝ ծաղկելով...»,- արտաբերեց խորին հուզմունքով, որը զգալուն չէր խանգարում նույնիսկ խռպոտ ֆալցետը:

Ես ճանաչեցի 91-րդ սաղմոսը:

Չասեմ, թե թագավորը ցնցվեց, բայց դա ազդեց նրա վրա: Չէր կարող չհիշել այդ սաղմոսով թղթիկն իրեն տված սև կամզայով անձանոթուհուն, և ինչպես սեղանից ընկնելով՝ հենց այդ էջի վրա բացվեց ինչ-որ գիրք, ոչ Սաղմոսարանը: Դեմքին մի արտահայտություն հայտնվեց, որով առավոտյան կիսատ շիլայի ափսեի մեջ էր գցել գդալը: Այդպիսի զուգադիպություններում նա վատ նշան է տեսնում ու զգում է, որ իր ճակատագիրը շատ է մոտեցել մեկ ուրիշի ճակատագրին: Դա տհաճ է նրան, ինչպես օտար մարմնի հպումը:

«Ո՞ւմ մասին եք ասում»,- հարցրեց՝ առաջին անգամ ուղիղ դիմելով Մոսցեպանովին:

Բարանովն արդեն ուզում էր միջամտել բացատրություններով, բայց թագավորը ձեռքի շարժումով կանգնեցրեց:

«Կոմս Դեմիդովի Նիժնիտագիլյան գործարանների կառավարիչ Սիգովի ու լեռնային ոստիկանապետ Պլատոնովի»,- պատասխանեց Մոսցեպանովը:

«Ճարադրեք ձեր գործի էությունը, ինչպես ինքներդ եք հասկանում»,- առաջարկեց թագավորը և ինձ նշան արեց արձանագրելու նրա ասածը:

Հանեցի մատիտն ու փոքրիկ նոթատետրը:

«Նիժնիտագիլյան գործարաններում կատարվող ապօրինությունները մերկացնելով՝ ես մաքրում էի հոգիս մի առանձնահատուկ հին գաղտնիք պարզելու համար, այլապես այն ինձ չէր բացվի»,- խոսեց Մոսցեպանովն ու կրկին լռեց:

Երկար նախադասություններին շունչը չէր հերիքում, փոխարենը՝ աչքերը չորացել էին, ասես արցունքները գոլորշացած լինեին հոգու մեջ հուրհրացող կրակից: Այդ փոխաբերությունն իմ մեջ անցավ զգայական մակարդակի. դեմքիս փչեց նրանից արձակվող տապը:

«Նա դրա մասին գրել է կոմս Արակչեևին,- սիրտ առնելով՝ հայտնեց Տյուֆյաևը:- Ձերդ մեծության այցի նախապատրաստումն ինձ ժամանակ չտվեց պարզելու նրա գաղտնիքը»:

Եվ թագավորի հայացքի տակ լռեց խոսքի կեսին:

«Խոսե՛ք, մի՛ վախեցեք,- Մոսցեպանովին մեղմ խրախուսեց թագավորը: - Այդ ի՞նչ գաղտնիք է»:

Մինչև այդ ասվածը գրի էի առել ու պատրաստ էի շարունակելու: Կարծես ամեն ինչ գնում էր նրան, որ գերագույն ողորմածություն կցուցաբերվի կալանավորներից մեկին, բայց չգիտես ինչու՝ չէի հավատում դրան:

Մոսցեպանովը հնարավորինս շատ օդ առավ թոքերը: Ծունչ քաշելիս մի քանի անգամ խռռոց լսվեց, ասես ինչ-որ թաղանթներ էին պայթում: Վերջապես լսեցի նրա ձայնը և առաջին իսկ բառերից հասկացա, որ նախազգացումն ինձ չի խաբել. խեղճ բանսարկուն բաց էր թողել իր երջանկությունը:

«Օսմանյան Բարձր Դռան հետ Ձերդ կայսերական մեծության պատերազմի դեպքում,- ծգված դադարից հետո սկսեց նա,- իմ գաղտնիքը կարող է նպաստել մահիկի դեմ խաչի հաղթանակին...»:

Մինչև վերջ չլսելով՝ թագավորը կտրուկ շրջվեց ու դիմեց դեպի դարպասը: Բոլորը հետևեցին նրան:

Չհամարձակվեցի մնալ ու խոսել Մոսցեպանովի հետ, բայց հաստատ գիտեի, որ առաջին իսկ հնարավորության դեպքում վերադառնալու եմ: Այդ մարդու մեջ մի բան կար, որ սրտիս էր դիպել:

Դարպասի մոտից հետ նայեցի: Կնոջը սպանածն ու բժիշկը նախկին

դիրքում էին, իսկ Մոսցեպանովը նստել էր այնտեղ, ուր քիչ առաջ կանգնած էր: Ոտքերը տարօրինակ կերպով շրջված էին, ասես ծնկահոդից բացի առնվազն ևս երկու հոդավորում ունենար, ինչպես միջատները:

Կրկին նստեցինք կառքերն ու մեկնեցինք Բուլգակովի տուն: Ճաշից հետո թագավորը պառկեց հանգստանալու, իսկ ես շտապեցի հետ՝ հաուպտվախտ: Ընդառաջ վազեց Բարանովը՝ ինչ-որ լեռնային մայորի հետ: Երկուսն էլ խիստ հուզված էին, իսկ Մոսցեպանովի հետ հանդիպելու խնդրանքս ավելի մեծ շփոթմունքի մատնեց նրանց: Որոշեցի, որ վախենում են նրա մոտ թողնել առանց Տյուֆյաևից թույլտվություն հարցնելու, ու չգիտեն, թե մերժելու ինչ պատրվակ հորինեն, բայց, ինչպես պարզվեց, հանդիպում կազմակերպելը նրանց ուժից վեր էր: Թագավորի մեկնելուց հետո Մոսցեպանովն ուշաթափվել էր, ընկել ու մահացել:

«Այսօր առավոտյան մահը թագավորի անկողինն էր մտել: Դա նրա մահը չէր»,- ահա առաջինը, որ մտածեցի:

Արդարանալով՝ Բարանովն ասաց, որ ոչ ոք մեղավոր չէ, ցնցումից Մոսցեպանովի սիրտը պայթել է:

«Ինչո՞ւ եք այդպես կարծում»,- հարցրի:

«Դեմքը կապտել էր,- բացատրեց նա:- Բժիշկն ասում է, որ այդպես լինում է սիրտը պայթելու դեպքում»:

Երեկոյան Տարասովից հետաքրքրվեցի՝ այդ ախտանշանի դեպքում հնարավո՞ր է նման ախտորոշում: Տարասովը հաստատեց: Մեր խոսակցությանը ներկա Կոստանդիսի հետ դուրս եկանք: Հաուպտվախտում չէր եղել, բայց շքախմբի անդամներից մեկը պատմել էր կալանավորի մասին, որը հույների համար կարևոր ինչ-որ գաղտնիք գիտեր և ցանկացել էր հայտնել թագավորին: Պատմողը կալանավորի ազգանունը մոռացել էր, ու ես էլ չտվեցի:

Սովորաբար, երբ խոսքը հունական գործերի մասին է, Կոստանդիսը ձև է անում, թե դա իրեն չի վերաբերում, բայց հիմա առանց այլևայլության խնդրեց հիշեմ, թե հատկապես ինչ էր ասում այդ մարդը: Ես ազնվորեն պատմեցի լսածս: Լարված լսում էր, բայց հենց հիշեցի, որ Մոսցեպանովն իր գաղտնիքը բնութագրում էր «հնագույն» բառով, հետաքրքրությունն անմիջապես մարեց:

«Փարիզում,- ասաց,- մի հիվանդ ունեի, հարուստ վաճառական էր, հույն: Ծնվել էր Ֆրանսիայում, նոր հունարեն չէր խոսում, բայց շաբաթը մեկ տանը գիմատիոն էր հագնում ու խնկարկում Զևսին, Ապոլոնին, Աթենասին և մյուս օլիմպիական աստվածներին: Այդ պոլիթեիստը ծանոթներին հավատացնում էր, որ Պարթենոնի հիմքում, կարծեմ արևմտյան մուտքի ձախից երկրորդ սյան տակ, պահված է Աքիլլեսի սրինգը: Կարծես թե սրինգն այնտեղ թաղել էր ոմն Նեստոր՝ Էլևսինում Դեմետրեի տաճարի վերջին քուրմը, և եթե հանենք ու դրանով մարտական օրհներգ փչենք, սուլթանի բանակն ահաբեկված կթողնի Հելլադան: Իմ կարծիքով այս պարոնի գաղտնիքն էլ այդ կարգի մի բան է»:

Այն ամենը, ինչում մի շաբաթ առաջ կասկածում էի նրան, հիմա արդեն իմ երևակայության պտուղը թվաց: Չէի հասկանում՝ ինչպես կարող էի այդպիսի անհեթեթություն մտածել: Մենք բարի գիշեր մաղթեցինք իրար, ու ես գնացի Արակչեևին գրելու պատահածի մասին: Մեր ֆելդեգերներից մեկը վաղը թղթերով կշտապի Պետերբուրգ և նրան կտանի իմ նամակը: Թող Տյուֆյաևը պատրոնին զեկուցի մանրամասները, իսկ ես կգրեմ միայն, որ պաշտոնաթող շտաբս-կապիտան Մոսցեպանովը մահացել է և իր գաղտնիքը հետը տարել գերեզման:

Թագավորին որոշեցի ոչինչ չասել, թե չէ կսկսի իրեն մեղադրել նրա մահվան մեջ: Չէի կասկածում, որ Տյուֆյաևն ու Բարանովը նույնպես կնախընտրեն անտեղյակության մեջ թողնել նրան:

Գրում եմ առանձին էջերի վրա՝ տետրի վերջում: Հետո կպոկեմ ու կվառեմ, բայց սա չեմ կարող գրի չառնել, հակառակ դեպքում գլուխ չեմ հանի իմ զգացմունքներից: Ես այն մարդկանցից եմ, որոնք կարողանում են մտորել միայն գրիչը կամ մատիտը ձեռքին, իսկ մնացած ժամանակն ապրում են սրտով:

Մոսցեպանովի մահվան հաջորդ առավոտյան թագավորի սենեկապանը ականջիս ասաց, որ նախորդ օրը նրա ննջարան են բերել մի աղջկա: Հազվադեպ է լինում նման բան, բայց ես էլ էի հիշում: Միշտ անտարբեր եմ եղել դրա հանդեպ. հպանցիկ սիրո առարկաներից ոչ մեկը չէր կարող նրա սրտում հավակնել այն տեղին, որն իրավամբ ինձ է պատկանում: Մեկ-

երկու այցելությունից հետո բոլորը ցնդում էին ծխի, առավոտվա մշուշի պես: Սենեկապանի ասելով՝ նախօրեի անծնավորությունը թագավորի մոտ մնացել էր ժամից ոչ ավելի ու մեկնել էր իրեն սպասող հոր հետ: Դա վկայում է, որ նրան էլ վիճակված է նույն ճակատագիրը:

Սենեկապանը հանդիպման նախապատմությունը չգիտեր, օրիորդի անունն ու ազգանունը՝ նույնպես: Առաջինն այդպես էլ գաղտնիք մնաց, իսկ երկրորդը պարզվեց քիչ ավելի ուշ, երբ թագավորն ինձ Արակչեևին ուղղված մի նամակ թելադրեց, որով խնդրում էր գվարդիա տեղափոխել Պերմի կայազորային գումարտակի պորուչիկ Դրավերտին: Հասկացա, որ դա գիշերային այցելուի եղբայրն է:

Այդ օրը նա վաղ պառկեց քնելու: Առավոտ շուտ պիտի դուրս գային Պերմից՝ Վյատկա մեկնելու, և ցանկանում էր քունն առնել ճանապարհից առաջ: Թագավորը զբաղեցնում էր բերգ-տեսուչ Բուլգակովի տան վերևի հարկը: Դիբիչին, Տարասովին և ինձ մեկական սենյակ էին հատկացրել ներքևի հարկում, իսկ մնացած շքախմբին տեղավորել էին հարևան տներում: Քնելուց առաջ դուրս եկա զբոսնելու: Դարպասի առաջ վառվում էր քաղաքի սակավաթիվ լապտերներից մեկը, լապտերասյան տակ միածի մի կառեթ էր կանգնած, կառապանը սպասում էր նստիքին: Կառեթում աստիճանավորի շինելով մի պարոն էր նստած և սալոպով ու տաք գլխարկով մի օրիորդ: Սեպտեմբերին Ուրալում գիշերները սառն են:

Հասա Պայծառակերպության տաճարի մոտ, մի քանի րոպե կանգնեցի Կամայի դարավանդի գլխին: Անտեսանելի գետը ներքևում ենթադրվում էր ջրի լուսնածփանքով, անսպասելի լիաթոք շնչառությամբ, որ հնարավոր է միայն ջրային արձակ տարածության մեջ, և կյանքի անսահմանության զգացումով, որ մեզ վերադարձնում է ջահելության ժամանակները: Երբեմն նման բան ինձ հետ կատարվում է նաև թագավորի ներկայությամբ:

Վերադարձին Բուլգակովի տան առաջ տեսա նույն կառեթը՝ նույն ուղևորներով: Երկուսն էլ ջանում էին հայացքով չհանդիպել ինձ: Լապտերի լույսը թիկունքից էր ընկնում՝ նրանց դեմքերը թողնելով ստվերում, բայց արդեն կռահել էի, թե ինչի են սպասում այդ երկուսը, չնայած՝ ինչպե՞ս չեն հասկանում, որ երկրորդ հանդիպում չի լինի: Թագավորի ննջարանում՝

երկրորդ հարկում, բոլոր պատուհաններն անկենդան մութ էին՝ ցույց տալով, որ տերը քնած է: Առավոտ շուտ էինք մեկնելու, ինչպես նա միշտ պահանջում է նման դեպքերում, առանց նախաճաշի:

Իմ սենյակում տնայինի փոխեցի հագուստս ու մոմը մարելով, որ ապակու մեջ իմ իսկ արտացոլումով տեսադաշտս չփակեմ, նայեցի պատուհանից դուրս: Կառեթը տեղում էր: Մնացածն ինքն իրեն եղավ: Դրան նախորդած որևէ միտք չեմ հիշում, ուրեմն, ավելի շուտ, չի էլ եղել, ինչպես չկար ո՛չ ամոթ, ո՛չ վախ իմ, իրերն իրենց անունով կոչենք, արկածախնդրության հնարավոր հետևանքների համար:

Հինգ րոպեից կրկին փողոցում էի: Սիրտս պատրաստ էր դուրս թռչելու կրծքից: Պարզկա օրվանից հետո գիշերն աստղաշատ էր, մեքենայաբար սկսեցի փնտրել ծանոթ համաստեղությունները. ահա Օրիոնը, ահա Որսաշները, քիչ այն կողմ՝ Կասիոպեան, ու հանկարծ ողջ սրությամբ զգացի, ասես առաջ չէի իմանում, որ այդ կախարդական անուններն ըստ էության ոչինչ չեն նշանակում, դրանցից այն կողմ ամայություն է, սառցեղեն խավար: Նրանց օգնությամբ ընդամենը պաշտպանվում ենք անհուն ու անանուն սարսափից, պարուրում բառերի զարդաշղթաներով, գույնզգույն լապտերիկներ կախում վրան:

Մոտեցա կառեթին ու հարցրի՝ չե՞մ սխալվում, իրո՞ք խոսում եմ պարոն Դրավերտի հետ:

Տղամարդն ուրախացավ. «Այո՛, այո՛, ես եմ»:

«Թագավորը սպասում է,- ասացի ես՝ արբելով իմ հանդգնությունից:- Ինձ հրամայված է ձեր դստերն ուղեկցել նրա մոտ»:

Նա համբուրեց աղջկա այտը՝ ասելով. «Աստված քեզ հետ, Լի՛զենկա»:

Օրիորդին օգնեցի իջնել կառեթից ու ճանապարհին արդեն Ելիզավետա Իվանովնա էի ասում: Անունը հենց նոր էի իմացել, իսկ հայրանունը, բնականաբար, նույնն էր, ինչ եղբորինը, որի մասին թագավորի թելադրությամբ գրում էի Արակչեևին:

Ճքամուտքը բակի կողմից էր: Ելիզավետա Իվանովնան գնաց դեպի դարպասը, բայց ես թևանցուկ արեցի ու տարա մյուս կողմ: Այնտեղ մի մուտք էլ կար, որը տանում էր ինձ հատկացված սենյակի միջանցքը:

Դարպասի մոտ ժամապահ չկար, թագավորը թույլ չի տալիս ժամապահ կանգնեցնել իր գիշերակացի մոտ, բայց ուղեկցիս դարպասով ու գլխավոր մուտքով անցկացնել չէի կարող, քանի որ նախասրահում նստած էր հերթապահ ֆլիգել-համհարզը:

Եթե հետո որևէ մեկը փորձեր հարցաքննել ինձ տեղի ունեցածի մասին, անգամ չնչին կասկած չէր ունենա, որ գործել եմ նախապես մտածված պլանով: Իրականում գաղափարը ծնվել էր հենց իրականացման պահին, իսկ հարցը, թե ինչու էի անում, ոչ մի սպառիչ պատասխան չուներ: Սիրող մարդու համար ոչինչ ավելի բնական չէ, քան որևէ քայլ անել հանուն սիրո, ընդսմին՝ ենթարկվելով այն կորցնելու վտանգին:

Մենք բոլորից աննկատ մտանք իմ սենյակը: Իջեցրի վարագույրը, վառեցի մոմերն ու վերջապես կարողացա կարգին տեսնել հյուրիս: Բարձրահասակ չէր, տիկնիկային, բայց խելացի դեմքով: Այդպիսի դեմքերով տիկնիկներն ամենափոքր աղջիկների համար չեն նախատեսված, այլ ավելի մեծերի:

«Թագավորի սենյակում ծխատարը խցանվել է: Հրամայեց ձեզ բերել այստեղ»,- բացատրեցի ես:

Այդ պահին ինձ առաջնորդում էր այն աստիճան շիկացած ոգեշնչումը, որի դեպքում մեր երևակայության ծնած պատկերները սուտ չեն թվում, այլ կյանքի կարելիություններից մեկը, որ պատահմամբ նրա սահմաններից դուրս է մնացել:

Վառարանը լավ տաքացել էր: Ելիզավետա Իվանովնան հանեց սալոպը, կապորը ու կախեց կախիչից: Դրանց տակ, պարզվեց, տիրոլյան հովվուհու զգեստ է, ինչպիսին հագնում են նույն ցեղատեսակի կովերին խնամող ցարսկոսելյան ֆերմայի աշխատավորուհիները: Ըստ երևույթին ինչ-որ մեկը հայրիկին հուշել էր, որ դուստրն այդպիսի շորով հաջողություն կունենա: Թե այս խուլ վայրում մի օրում ինչպես էին կարել ձեռքի տակ ունեցածից, չէի պատկերացնում: Մանր դողում էի: Վախենում էի, որ ձայնս կմատնի դողը, ուստի շշուկով, առանց ձայնալարերի մասնակցության Ելիզավետա Իվանովնային ասացի, որ հանվի ու պառկի անկողնում, իսկ ես կգնամ թագավորի հետևից:

Միջանցքում հեռացող քայլեր պատկերեցի ու պահ մտա դռան հետևը: Հինգ րոպե սպասելով՝ արեցի նույնը, բայց արդեն ոտնաձայնի աճող ուժգնությամբ, ինչից հետո մտա սենյակ:

Իմ հովվուհին պառկած էր անկողնում, ծածկոցի տակից միայն գլուխն էր երևում, սակայն բազկաթոռին դարսած պարագաները հասկանալ տվին, որ հագին ոչինչ չկա:

«Թագավորը խնդրում է ներել,- ասացի:- Ընթրիքից հետո վատ է զգացել և գալ չի կարող: Ի հիշատակ՝ ինձ հրամայված է ձեզ փոխանցել այ սա...»:

Նա ձեռքը հանեց ծածկոցի տակից ու վերցրեց իմ արծաթե քթախոտի տուփը, որի վրա ձկնորսներ էին պատկերված. նրանց ցանցը մի քանի ձուկ էր ընկել, մեկը՝ սուտակե աչքով: Փորագրիչն իմ խնդրանքով վերևում ոսկով պատկերել էր թագավորի անվանագիրը: Ես քթախոտ չեմ օգտագործում և տուփը պահում էի, որ զրույցի ընթացքում հարկ եղած դեպքում ցուցադրաբար, բայց մի տեսակ ցրված պտտեմ մատներիս արանքում կամ ծանրութեթև անեմ ափիս:

Թվաց՝ իմ բերած լուրը ոչ միայն չի սպանել Ելիզավետա Իվանովնային, այլև առանձնապես վշտացած էլ չէ: Առանց անկողնուց դուրս գալու սկսեց զննել նվերը: Բացեց կափարիչը, հոտ քաշեց, նորից փակեց, շրջվեց կողքի՝ չմտահոգվելով, որ ցած սահած ծածկոցի տակից երևում է կուրծքը, ու խնդրեց՝ որևէ բան պատմեմ:

«Ի՞նչ»,- զարմացա ես:

«Ինչ կուզեք, մեկ է,- պատասխանեց:- Դեռ էլի գոնե կես ժամ պիտի մնամ այստեղ, թե չէ հայրս չի հավատա, որ թագավորի հետ եմ եղել: Իսկ ես պետք է ասեմ, որ եղել եմ»:

Արդեն պատրաստվում էի պատմել օրենբուրգյան դրդզների սովորույթների մասին, բայց նա ընդհատեց ու կես ժամ միայն ինքն էր խոսում: Իմացա նրա կատվի մասին, սիրած ծաղիկների, մուրաբայի սիրելի տեսակի, պորուչիկ եղբոր, մյուս եղբոր, մեծ քրոջ, փոքր քրոջ մասին, բայց նրան թագավորի ննջարան բերած հանգամանքները յոթ կնիքով կնքված գաղտնիք մնացին: Ստվերից դուրս չեկավ նաև այն գիտունիկը, որը պա-

րոն Դրավերտին խորհուրդ էր տվել տիրոյյան զգեստ հագցնել դստերը: Այդ տիկնիկը կարողանում էր լեզուն ատամների տակ պահել:

Ես կռացա ու նրա բերանը փակեցի համբույրով: Նպատակս ոչ թե այդ պտղի համն էր, այլ մինչև այդ այն ճաշակածի զգացողությունը, բայց դրան հասնել չհաջողվեց: Ելիզավետա Իվանովնան թաթիկով անչար շպպացրեց շրթունքներիս ու դուրս եկավ անկողնուց: Ծրջվելու խնդրանք չլսեցի: Ինձնից բոլորովին չամաչելով՝ սկսեց հավաքել հագուստը: Ես թագավորի աչքերով էի նայում բոլորովին ոչ տիկնիկային կրծքերին, լայն ազդրերին, որոնց արանքում սևին էր տալիս ոչ թե կանոնավոր եռանկյունը, այլ ինչ-որ տձև մազմզոտ թռչնաբույն, որն անհամաչափ մեծ էր նրա հասակի համեմատ:

Ինձ ոչ այնքան ցնցեց, որքան սրտնեղեցի այդ պարզունակ անամոթությունից: Չորս տարի մերկ կին չէի տեսել, բայց այդ պահին ոչ թե ցանկություն էի զգում, այլ սիրտ ծվատող խղճահարություն՝ թագավորի հանդեպ: Հիմա գիտեի նրա մենության ողջ խորությունը: Միայն այդ մենությունը կարող էր նրան մերձեցնել այս կոպիտ հմայքների տիրուհու հետ:

Հագնվելով՝ օրիորդը սալոպի տակ խցկեց իմ քթախոտի տուփը, և նույն ճանապարհով իջանք փողոց, բայց ոչ այն, որտեղ սպասում էր հայրը, այլ լայնակի հատողը: Ոչ մի շունչ մեզ չնկատեց: Տան անկյունը չհասած, երբ լապտերի լույսն ընկավ մեր ոտքերի տակ, բայց կառեթը դեռ չէր երևում, նա կանգ առավ և ասաց. «Մոտեցե՛ք, մի բան պիտի ասեմ»: Ես ենթարկվեցի ու ոչ թե ապտակ, այլ իսկական չափալախ ստացա, որից գլխարկս թռավ: Ելիզավետա Իվանովնան անհետացավ մթան մեջ: Չէի սպասում, որ բանն այդպես կավարտվի, բայց հասկանում էի, որ վախենալու ոչինչ չունեմ. նրա շահերից չի բխում բերանից թռցնել տեղի ունեցածի մասին:

Գետնից վերցրի գլխարկս, հետո զգույշ դուրս նայեցի անկյունից: Դեպի աջ՝ մինչև ուղեկալն ու Քաղաքամերձ այգին, և ձախ՝ դեպի Մայր տաճարն ու Կաման ձգվում էր քաղաքի գլխավոր Սիբիրյան փողոցը, նույնքան անսալարկ ու փայտաշեն տնակներով, որքան հարևան փողոցները: Ցերեկվա լույսի տակ այդ փողոցը մյուսներից տարբերվում էր, թերևս, մի-

այն ճամփեզրի առուներում հավի ծերտի բացակայությամբ: Կրիդները, պատրաստվելով թագավորի այցին, հատուկ կարգադրությամբ բնակիչներին արգելել էր դուրս թողնել հավերին:

Կառապանը դարձնում էր կառեթը, որ գնան հակառակ կողմը: Ելիզավետա Իվանովնան ոչ թե նստել, այլ կանգնած էր՝ տիրաբար հենված հոր ուսին: Նրա մեջ ոչինչ չէր մնացել տիկնիկի դեմքով տիրոլյան հովվուհուց: Կապորը ձեռքին, գլուխը հետ գցած, աչքերը կիսախուփ, ասես սուրալու էր ոչ թե այդ մորուքավոր յաբուով, այլ ինչ-որ հրաշք նժույգներով, վառվող ճակատը հաճույքով տված կատաղի վազքից խտացած սառը օդին: Սալոպը ծանր ծալքերով հոսում էր վրայից, ինչպես հունական արձանի թիկնոցը: Կանգնել էր կառեթի մեջ, ինչպես հաղթահերոսը՝ իր մարտակառքում, գլխաբաց, հեթանոս աստվածուհու հաղթական անդենական դեմքով, որն աղետներ է տանում անհնազանդներին, բայց ողորմածություն՝ իրենց վրա նրա վեհապետական աջն ընդունածներին: Հայրն ուռկանը նետել էր կյանքի ծովը, ու երջանիկ դուստրը դուրս էր քաշել ցանկություններ կատարող կախարդական ձուկը՝ սուտակե աչքով: Համր քաղաքը փռված էր նրա ոտքերի տակ:

Վյատկայում մեր հետևից հասավ Տյուֆյաևի սուրհանդակը:

Նահանգապետը նամակ էր ուղարկել՝ գերագույն թույլտվություն խնդրելով Պերմի նահանգում թագավորի գտնվելու ժամանակը խորհրդանշող մի համեստ հուշարձան կանգնեցնելու այնտեղ, ուր նա ընդունել էր կայազորային գումարտակի զորատեսը:

Ինձ կարգադրվեց Տյուֆյաևին պատասխանել հետևյալը.

«Թագավորը գնահատում է ձեր հավատարմությունը, բայց կանոն է դարձրել արգելել իրեն արձան դնելը՝ ցանկանալով դրանք տեսնել միայն հպատակների սրտերում, որոնց մեջ զորանում է սերը՝ միապետի և երախտագիտության զգացումը՝ Աստծուց իրեն վստահված ու սիրելի ժողովրդի բարօրությունն ապահովելու՝ նրա ձգտման հանդեպ»:

ԿՆԻՔԸ

Կոնստանտին Կոստանդիս: Թափառիկ բժշկի նոթերը

Նոյեմբեր, 1824 թ.

Ալեքսանդրիայի փողոցներով նրա կործանման գիշերն անցած անտեսանելի նվագախումբը Պետերբուրգում արեց առաջին փորձը: Նկատի ունեմ նոյեմբերի 7-ի ջրհեղեղը: Լեյբ-կառապան Իլյա Բայկովը պատմեց, որ երբ ջուրն իջել էր, և ինքը թագավորին տանում էր Տուչկովի կամրջով, Կամեննոօստրովյան պողոտայում, նրանց ճանապարհը փակելով՝ կանգնած էր մի հսկա գալիոտ, իսկ Տրոիցկի եկեղեցու մոտ՝ համարյա նրա բարձրության երկու ածխատար բեռնանավ: Թագավորը ստիպված էր կառքից իջնել ու ոտքով շարունակել ճանապարհը:

Ամենուր ավերի սարսափելի պատկերներ էին: Նևայի ափերը պատված էին ջրի քշած-բերած վառելափայտի կտորներով, այնքան շատ, որ անհնար էր քայլ անել: Հինգ հարյուրից ավելի մարդ էր խեղդվել, բայց մարմինների կեսն էլ չհայտնաբերվեց: Մնացածին Նևան քշել էր ծով:

Հոգեհանգիստը Կազանյան տաճարում էր: Ես ներկա էի և լսեցի, թե եկեղեցում շարված դագաղներին նայելով՝ թագավորն ինչպես ասաց Դիբիչին. «Ես դիակներով ծածկված ճակատամարտի դաշտեր եմ տեսել, լսել մեռնողների տնքոցը, բայց դա պատերազմի անխուսափելի ճակատագիրն է: Իսկ այստեղ...»:

Աչքերում արցունքներ շողացին:

Կարծում եմ՝ դրանց պատճառը նաև այն էր, որ ժողովուրդն այդ դժբախտների մահվան համար նրան էր մեղադրում: Տարերքի մոլեգնության մեջ տեսնում էին երկնքի պատիժը՝ հավատակից հույներին չօգնելու համար:

Բայց և այնպես, նա հաստատուն տանում է իր գիծը. Սրբազան դաշինքի հերթական կոնգրեսը, որը հունական հարցը քննարկելու համար նոյեմբերին պետք է հրավիրվեր Ֆլորենցիայում, չի կայանա, դրա փոխարեն որոշվել է կոնֆերանսներ անցկացնել Պետերբուրգում: Իբրահիմ փաշան 20-հազարանոց էքսպեդիցիոն կորպուսով Ալեքսանդրիայից հասել է Մորեա, սակայն անդունդի եզրին կանգնած հույները արժանի համարվեցին ոչ թե կոնգրեսի, այլ ընդամենը կոնֆերանսների: Դրանց ընթացքում թագավորը կառաջադրի հունական հարցի լուծման իր նոր ծրագիրը: Եթե անգլիացիները համաձայնեն ազատություն տալ միայն Մորեային, ապա նա, ինչպես բերանից թռցրեց Ելովսկին, պատրաստ է շարունակել և կառաջարկի մեր հողերը բաժանել երեք իշխանության. առաջինը՝ Արևելյան Հունաստան՝ Բեոտիա, Թեսալիա և Ատտիկա, երկրորդը՝ Արևմտյան, որի մեջ կմտնեն Նավպլիոնն ու Վենետիկյան ափը, Էպիրոսն ու Ակարնանիան, երրորդը՝ Մորեա: Բոլոր երեքն ու կղզիներից ամենախոշորները ինքնավարություն կստանան սուլթանի իշխանության ներքո, բայց Ռուսաստանի և Անգլիայի համատեղ հսկողության տակ: Պարզ ասած, ոչխարներին պատվավոր իրավունք է տրվում անձամբ որոշելու, թե իրենցից որը ճաշին կերակուր կդառնա գայլի համար, որը՝ ընթրիքին, իսկ հսկիչները կհետևեն, որ իրենց գորշ եղբայրը շատակերությունից չպայթի: Թագավորը ելնում է նրանից, որ Բարձր Դուռը չի հաշտվի մեր ազատության հետ, իսկ մենք՝ այն վիճակի, որ կար մինչև ապստամբությունը. ուրեմն պետք է միջին վիճակ: Նրա մտամոլությունն է՝ ամենուր միջին գիծ փնտրել: Ելովսկին դրա մեջ իմաստնության դրսևորում է տեսնում, ես՝ կյանքից հոգնածություն: Երբ և՛ սուլթանը, և՛ Անգլիան, և՛ մեր կառավարությունը Նավպլիոնում մերժեն նրա նախագիծը, վիրավորված կհամարի իր լավագույն զգացումները, ցուցադրաբար կլվա ձեռքերն ու մաքուր խղճով կշարունակի մորի աճեցնել, երեք ժամ անընդմեջ աղոթել, սերտել Թովմաս Քեմպիացու «Հիսուսի նմանակման մասին»-ը կամ բարեկարգել իր համար Ցարսկոյե Սելոյում պատրաստված տիրոլյան կովերի օրինակելի ֆերման: Նրա սիրտը պատկանում է այդ խաղաղ կենդանիներին: Երկոտանիներն ու անկոտոշները ծանծրացրել են:

Ասում են՝ նրա գլուխը պսակված է նույն զարդարանքով, ինչ իր ֆավորիտուհիներինը: Սկզբում նրան պոզեր էր դնում կայսրուհին՝ վրեժխնդիր լինելով, որ իրեն վտարել են մահճից, ավելի ուշ՝ Մարիա Նարիշկինան, որին նա քաշել էր այդ մահիճը: Կանանցից հիասթափվելը նրան մղում է ասկետիզմի, իսկ հոգու մաքրության հոգածությունը, որ վերջին ժամանակներս հատուկ է նրան, մեզ ոչ մի լավ բան չի խոստանում: Նրա մտամոլությունն է՝ ոչ մեկի դատավորը չլինել, պատերազմը զզվանք է հարուցում: Նախանցյալ օգոստոսին լրացավ Բորոդինոյի ճակատամարտի տասը տարին, ողջ Ռուսաստանը նշում էր այդ տարեդարձը, եկեղեցում մաղթանքներ էին կատարվում, ամեն տուն սգում էր իր զոհվածներին, բայց թագավորն անհաղորդ էր հպատակների զգացմունքներին և չփոխեց օրվա սովորական կարգը: Ճատերը դա չներեցին նրան:

Նա դաստիարակվել է ուղղափառության ոգով, բայց մեր ծեսերն ու ավանդույթները նրան ավելի չեն հուզում, քան հասուն տղամարդուն՝ մանկության հուշերը: Դեռ բոլորովին վերջերս նրա վրա ուժեղ ազդեցություն ուներ բարոնուհի Կրիդները, որը երազում էր քրիստոնեական եկեղեցիների միավորման մասին, իսկ նա անտարբեր է մեր հավատի միասնության հանդեպ, նրա քայլերը դրանով չեն որոշվում: Ծրջահայացությունն առաքինություն չէ, իսկ զգացմունքները նրա մեջ մարել են: Ճիշտ է, որպես քրիստոնյա լիովին համամիտ չէ այն սկզբունքներին, որոնցով առաջնորդվում է որպես թագավորող միապետ, իսկ հոգու այդպիսի երկվությունը հղի է մարմնական ախտերով: Դա միակ բանն է, որի վրա կարելի է հույս դնել: Երեխաներ չունի, ժառանգորդը մեծ իշխան Կոնստանտին Պավլովիչն է, բայց դժվար թե մոտակա ժամանակներս նրան տեսնենք գահին:

Թագավորը սիրում է պարծենալ իր դիմացկունությամբ, հաճույքով պատմում է, թե Ֆրօրինեքին, 16 աստիճան սառնամանիքին ինչպես է շքերթ ընդունել միայն համազգեստով, իսկ 1812 թվականի ձմռանը բաց սահնակով Պետերբուրգից հասել է Վիլնո. բայց նրա առողջությունն այնքան ամուր չէ, որքան կուզեր կարծել: Չնայած այնքան էլ վատ չէ, որ կտրուկ վատթարացում սպասենք:

Մենք՝ բժիշկներս, գիտենք, հիվանդությունը չի հետևից մահ բերում,

հակառակը՝ մահն է իրենից առաջ ուղարկում հիվանդությունը, որպես իր շուտափույթ գալստյան սուրհանդակ: Ես թագավորին տհաճություն պատճառող մանր տկարությունների մեջ առայժմ այդ սուրհանդակին չեմ տեսնում: Նրա սրունքի հանելուկային բորբոքումը չքացել է Պերմից Մոսկվա ճանապարհին:

Ես կանոնավոր կերպով Նավպլիոն եմ զեկուցում նրա առողջական վիճակի մասին, բայց կասկածում եմ, թե իմ հաշվետվությունները որևէ մեկին պետք են: Վերջին մեկուկես տարում իշխանությունն այնտեղ բազմիցս փոխվել է, բոլոր պաշտոններում այլ մարդիկ են: Ֆաբիեն դադարել է պատասխանել նամակներիս, իսկ ովքեր հիմա դրանք կարդում են նրա փոխարեն, եթե անմիջապես դեն էլ չեն նետում, ապա այնքան էլ չեն հասկանում՝ ով եմ ես և ինչ եմ անում Պետերբուրգում: Նրանցից ոչ մեկն ինձ այստեղ չի ուղարկել, հետևաբար ոչ մեկն ինձ հանձնարարություններ չի տալիս: Իմ բոլոր պարտավորություններն իմ հանդեպ են:

Նախկին հրահանգները կորցրել են իմաստը, նորերը չեմ ստանում և ինձ զգում եմ ծովագնացի պես, որը շուրջերկրյա նավարկությունից նամակներ է գրում տանը մնացած հարսնացուին, իսկ նա վաղուց ամուսնացել է ուրիշի հետ և թքած ունի տեղական սովորույթների ու անդրծովյան կենդանական աշխարհի նկարագրության վրա:

Նատալյա Բաժինայի խոսակցությունը Գրիգորի Մոսցեպանովի հետ

Դեկտեմբեր, 1824 թ.

Պաշտոնական նամակներն արագ են հասնում, բայց երկար են գրվում: Ձեր եղբորն էլ Պերմից շուտ չգրեցին ձեր մահվան մասին, բայց այն օրվանից, որ Կազանից ստացա նրա նամակը, օր չի եղել, որ չխոսեմ ձեզ հետ: Երեկոյան, քնելուց առաջ, մթան մեջ կանգնում եմ նկարի դիմաց, որ շրջանակել եք մայրու արմտիքի ու թեղու ճիպոտներ հյուսքով, մոտեցնում եմ ճրագը, աջուձախ տանում, նայում՝ ինչպես է լեռան գագաթի ամրոցը լողում ստվերների ու լույսի մեջ, իսկ հետո, անկողնում, աչքերս

փակած, պատկերացնում, որ, ահա, բարձրանում եմ վերև ու դարպասից մտնում ներս: Ստածում էի՝ հոգիս, երազի մեջ թռչելով, այնտեղ կհանդիպի ձեզ: Երազներն ու այն երկիրը, ուր գտնվում եք, Տերը հյուսում է նույն մանվածքից, մեկը անցնում է մյուսին, բայց ձեր քաղաքը մեկ անգամ չէ, որ տեսա, իսկ ձեզ այնտեղ՝ ոչ: Հետո արդեն մտածում էի, որ ձեր հոգին այնտեղ թռչելու պետքը չուներ: Անցավոր աշխարհից ճախրել է այդ լեռան գագաթը, իսկ Տիրոջ գահի առաջ առանց այն էլ իրեն լավ է զգում:

Իսկ հիմա ամեն ինչ փոխվել է:

Դեռ աշնանը, շուրջբոլորը ցեխ էր, ինձ մոտ եկավ մայոր Չիխաչովը՝ պորուչիկ Պերեվոզչիկովի ու երկու լեռնային զինվորների հետ. այդ ժամանակ չհասկացա՝ ինչի՞ համար: Տունը լրիվ խուզարկեցին, ներքնահարկ իջան, նոր ու հին բաղնիքները նայեցին, իսկ թե ինչ են փնտրում՝ չասացին: Հարցրի, բայց պատասխանն այն էր, որ ինձ չի վերաբերում: Այն ժամանակ դեռ ձեր մահվան մասին չգիտեի ու որոշեցի, որ փորձում են ինչ-որ հանցանշան գտնել ձեր դեմ, որևէ իր կամ թուղթ, որի մասին Չիխաչովը մտածում է, թե իմ տանը կամ բակում եք թաքցրել: Իսկ այսօր մենակ էր եկել, առանց զինվորների: Կարգադրեց հեռացնել Ֆեդենկային ու տատին, նրանց հետևից դուռը փակեց, կեռիկը գցեց:

«Մեղքս գալիս ես,- ասում է:- Ուզում եմ մի բան ասել»:

Հրավիրեցի սեղանի մոտ, բայց հրաժարվեց: Սրբապատկերների դարակից իջեցրեց Սուրբ կույս Աստվածամոր պատկերն ու հրամայեց համբուրել՝ երդվելով, որ ոչ մեկին չեմ պատմի այն, ինչ հիմա կասի:

Ինքը մռայլվում է, իսկ իմ սիրտը հանկարծ ուրախությամբ լցվեց, ինչպես ջահել տարիներին: Վերցնում եմ սրբապատկերն ու ժպտում:

Չիխաչովը, ինչպես Պերմում, երբ դուրս էինք գալիս հաուպտվախտից, հարցնում է. «Ինչի՞ վրա ես ուրախանում»:

«Ձեզ՝ բարի մարդուն տեսնելու»,- պատասխանում եմ:

Կրկնեցի նրա բառերը, համբուրեցի սրբապատկերը, դրեցի տեղը ու կանգնել՝ սպասում եմ: Ասում է. «Չի մահացել քո Գրիգորի Մաքսիմովիչը»:

Ասես դրան էլ սպասում էի, բոլորովին չզարմացա:

Ասում եմ. «Իսկ որտե՞ղ է»:

«Չգիտեմ»,- պատասխանում է:

«Իսկ ո՞վ գիտի»,- հարցնում եմ:

Իսկ նա. «Եթե դու չգիտես, ուրեմն՝ ոչ ոք»:

Այստեղ միայն հասկացա, թե աշնանը ինչու էր եկել զինվորների հետ, ինչ էին փնտրում: Նա և իրենից վեր գտնվողները սարսափելով պատժից, որ ձեզ ձեռից թողել են, զեկուցել էին ղեկավարությանը, թե իբր մեռել եք: Չիխաչովն ինչ-որ բան հարցրեց, տեսնում եմ՝ շրթունքները շարժվում են, իսկ թե ինչ է խոսում, ոչ մի բառ չեմ լսում: Սիրտս մուրճի պես խփում է ականջներիս մեջ, իսկ գլխումս նույնն է կրկնվում՝ Աստված չանի գտնեն ձեզ: Ի՞նչ կանեն այս հոգեառները, եթե բռնեն, ո՞ւր կքշեն, որ իրենց սուտը չբացվի՝ վախենում եմ նույնիսկ մտածելուց: Տեսնում եմ՝ քնած եք, իսկ արջի թաթը դուրս է պրծել կրակից ու մոտենում է ձեր կոկորդին:

Թե ոնց եք անհետացել՝ Չիխաչովը չասաց, ես էլ չհարցրի: Առանց էն էլ ասել էր, ինչ իրավունք չուներ ասելու, ինչի՞ անհարմար վիճակի մեջ դնեմ մարդուն:

Նրա առաջ խաչը պաչեցի, որ չգիտեմ՝ որտեղ եք, ու լռում եմ: Ֆեդենկային ու տատին էլ առանձին հարցուփորձ արեց՝ մտածելով, թե նրանցից մի բան դուրս կքաշի, բայց ոչինչ չիմացավ, հրաժեշտ տվեց, նստեց սահնակը, ծածկոցը գցեց ոտերին ու գնաց:

Սրբապատկերի վրա երդվել էի, որ ոչ մեկին չեմ ասի, բայց առանց դրա էլ չէի ասի, նույնիսկ հարազատ մորս: Լռության մեջ, ոնց որ սառցատանը, ոչինչ չի փչանում, բայց հենց լեզվից թռցրիր, կսկսի նեխել: Հետո կնայես հոգուդ խորքը, և այն ուրախությունը, որ կար, չես տեսնի:

Ֆեդենկան ու տատը քնեցին, ես հագնվեցի, դուրս եկա բանջարանոց: Սութ է, լուռ, միայն սառնամանիքն է ճթճթում: Ձեր մասին միտքը դեսուդեն է խփվում իմ մեջ, ոնց որ երեխան արգանդում, տաքացնում է սառնամանիքին: Երկինքը լցված է աստղերով, և իմ հոգում էլ մի աստղիկ է առկայծում: Ինձ հույսով չեմ բորբոքում, հասկանում եմ, որ առանձնակի սպասելիք չկա. նամակ չեք ուղարկի, որ փոստատանը չբռնեն ու չիմանան՝ որտեղ եք թաքնվում, ու քիչ եմ հավատում, թե մի օր, թեկուզև ոչ շուտ, հավատարիմ մարդու միջոցով լուր կտաք ձեր մասին և ինձ ու Ֆեդենկային

կկանչեք ձեզ մոտ: Ձեր ճանապարհը դեպի էստեղ փակ է, բայց այ էսպես կանգնել, երազել, որ կկարոտեք ինձ ու կգաք գոնե մի գիշերով՝ նույնպես սփոփանք է: Կարծում եմ՝ նույնիսկ մութ փողոցներով կվախենաք անցնել, որ շները չհաչեն, բանջարանոցով կմտնեք: Հենց այդտեղ էլ ձեզ կդիմավորեմ:

Մայոր Բորիս Չիխաչով: Հիշատակարան

Փետրվար, 1825 թ.

Փետրվարի 9-ին, առավոտվա ժամը հինգին մոտ, ձի քշել իմացող վեց զինվորի, պորուչիկ Պերեվոզչիկովի և ուղեկցորդի հետ մեր վերջին գիշերակացի վայրից մեկնեցի Ուվիլդի լճի կողմը: Մոտ քսան վերստ պիտի կտրեինք: Ես ու Պերեվոզչիկովը զինված էինք ատրճանակներով, իսկ զինվորներից հինգը՝ հրացաններով: Ձենք չուներ միայն Աժաուրովը՝ Մոսցեպանովի ընկերն ու բարերարը: Զինվորական ծառայության բացարձակապես պիտանի չէր ու ստիպված ինձ սպասյակ էի նշանակել:

Այդ վայրերում թաքնվող անհայտ շրջմոլիկի մասին զեկուցագիրը ստացվել էր անցած շաբաթ: Հայտնվում էր, որ նա անտառից դուս գալով՝ ձավարի, ալյուրի ու որսորդական պիտույքների համար տեղացի կերժակներին ո՛չ փողով է վճարում, ո՛չ սկյուռի մորթիներով, այլ Գ և Մ տառերով ձվաձև կնքադրոշմով կեչակեղևի ստացականներ է տալիս: Այդ անհասկանալի գրերի դիմաց կերժակները նրան սննդամթերք ու վառոդ են մատակարարում: Գլուխները լցրել է, թե իբր շուտով թղթադրամները շրջանառությունից դուրս են գալու, ամբողջը կհավաքեն մի տեղ ու կվառեն, իսկ պղինձն ու ոսկին կսկսեն տալ ահա այդպիսի կեչակեղևի դիմաց: Իբր թագավորը գաղտնի դարձել է հին հավատին, ինչը երևում է հենց միայն նրանից, որ նիկոնականները նրան խնդրում են հույներին թիկունք կանգնել թուրքերի դեմ, իսկ նա չի ուզում: «Ծուն Նիկոնին,- ասում է,- սովորեցրել են Ռուսիայում կործանել բարեպաշտությունը, ուրեմն թող պատժվեն սուլթանի միջոցով»:

Մոսցեպանովից բացի՝ ո՞վ այդպիսի բան կմտածի: Սովը նեղել է,

ահա և հորինել է, թե իբր թագավորը հնադավանության անցնելով՝ նոր անուն է ընդունել, որ վկայվում է կնիքի տառերով ու կհայտարարվի իր ժամանակին: Մինչև այդ ոչ ոք իրավունք չունի իմանալու:

Սակայն բոլորը չէ, որ գայթակղվել էին կեչու կեղևով: Մեկը, պակաս երևութական վարձատրություն ցանկանալով, հետևել էր փախստականին ու Կիշտիմի լեռնային ոստիկանապետին հայտնել, թե որտեղ է թաքնվում: Մատնիչը ստացել էր հինգ ռուբլի, իսկ նեռ-ցարի ժամանակների իր հրացանի երկու ֆունտ վառոդի դիմաց համաձայնեց իմ ուղեկցորդը դառնալ: Հանձին նրա կերժակյան Սուսանին գտնելուց չէի վախենում. այդ դեպքում չէր զգուշացնի, որ Մոսցեպանովը զինված է:

Առավոտյան կողմ քունս չէր տանում, նա նույնպես նստել էր վառարանի մոտ, ինչ-որ ծող էր տաշում ու տաշեղները գցում կրակը: Սկսեցի հարցուփորձ անել իրենց հավատի մասին, բայց իմացա միայն, որ շուն չեն պահում ու նապաստակի միս չեն ուտում, քանի որ շունն անմաքուր է, իսկ նապաստակի թաթը՝ անսմբակ:

«Բայց որ սատանան ձեռներդ ընկներ, կխժռեիք ու սմբակներից էլ դոնդող կեփեիք, չէ՞»,- հարցրի ես:

Չպատասխանեց: Հաստատել չէր կարող, իսկ «ոչ» ասելը արժանապատվությունից վեր էր:

Դուրս եկանք բակ, որտեղ սպասում էր Աժաուրովը: Նա միշտ հոգեպահուստ հացի կող է ունենում: Պերմում Մոսցեպանովին էր տալիս, հիմա մեկով իմ ձիուն կերակրեց, մյուսով՝ իր:

Պերեվոզչիկովը թփթփացրեց կենդանու նիհար կողին. «Լավ ձի ունես: Կողերը՝ նավդան, մեջքը՝ ծող»:

Ոչ ոք նույնիսկ չժպտաց, չնայած դանդաղամիտ Աժաուրովի հետ նրա կատակները հաջողություն ունեն զինվորների շրջանում: Միայն ինքը՝ Աժաուրովը ծիծաղեց. դեռ չէր հասկացել, որ իբրև իմ սպասյակ կարող է և չծիծաղել: Տանտերը բացեց դարպասը, մենք դուրս եկանք բակից, ու կրկին նկատեցի, որ այդտեղի ձմեռն ասիական է. ձյունը քիչ է, հողը չի ծածկել, իսկ սառնամանիքն ուժեղ է:

Լուսնյակ գիշեր էր, տեղ-տեղ նույնիսկ եղևնիների տակն էինք տես-

նում: Մի ժամից անտառի արահետը մեզ հասցրեց ինչ-որ գետակի, որի անունն ուղեկցորդը չասաց, կամ էլ մոռացել եմ: Ափերը բռնված էին սառույցով, բայց սառցաճեղքերով ջուր էր հոսում: Գետի վրա նստել էր կաթնագույն մշուշը: Կերժակն ասաց, որ հատակին տաք աղբյուրներ են բխում:

Ձիերն ամառային պայտերով էին, առանց սեպերի: Սայթաքում էին սառույցի վրա, ջուրը տեղ-տեղ հասնում էր մինչև կողերի կեսը, բայց և այնպես մի կերպ գետակն անցան: Թեթևացած շունչ քաշեցի, բայց այդտեղ պարզվեց, որ ձիերից մեկը հետևից արյունոտ հետք է թողնում: Հետևի աջ ոտքի ոսկորը ճեղքվել էր: Ըստ երևույթին, սառույցի սուր եզրն էր վնասել: Կաղացող ձին կդանդաղեցներ մեր ընթացքը, ստիպված էինք հետ ուղարկել: Պերեվոզչիկովը վերցրեց հեծյալի հրացանը:

Ի լրումն՝ ամենաջահել զինվորի կաճյակները գետանցման ժամանակ ջուր էր լցվել: Կաճյակները սառել էին՝ սպառնալով մատների կորստով: Խղճացի տղային ու թողեցի այդտեղ, որ կրակ անի: Մնացինք, ինձ հաշված, յոթ հոգով: Ութերորդ ձին Մոսցեպանովի համար էինք տանում: Ծուտով կածանը կորավ, բայց կարճ փնտրտուքից հետո նորից գտնվեց ու այլևս չանհետացավ մինչև ճանապարհի վերջը: Եղևնիներն ավելի ու ավելի խիտ էին պատում կածանը, իջանք ձիերից ու իծաշարուկ գնացինք՝ ձիերը տանելով սանձերից բռնած: Սկսեցին քարեր հանդիպել, կածանը բարձրանում էր սարը: Վերելքին չէի սպասում, որ անտառն ուր որ է կվերջանա, ոչինչ անտառեզրի մոտիկություն չէր հուշում: Ծառերը չէին նոսրանում, մանրանտառ չկար, թեքությամբ բարձրացող բացատը համարյա անսպասելի հայտնվեց մեր առաջ:

Անտառի մթան ու բաց տարածության մեջ նշմարվող այգաբացի լույսը մի պահ ստիպեց մտածել, որ գիշերը հետևում է, օրն արդեն բացվել է: Թվացյալ պարզությամբ, որ ուղեկցում է երևակայությանը, երբ այն առաջ է ընկնում տեսողությունից, ամբողջությամբ, մինչև ամենահեռու եզրը տեսա այդ բացատը: Ինչպես վաղ գարնանը՝ ձյունը նստած էր երկարուկ կղզյակներով՝ հերվա խոտի հյուսքերի միջև, բայց փխրուն չէր, այլ չոր ու ճռճռան:

Բացատի կենտրոնում սևին էր տալիս եղևնիների համարյա կանոնավոր շրջանակը՝ այստեղից անտեսանելի, բայց ենթադրվող փոս ընկած

հողաշերտով: Ուրալում գետինը քարքարոտ է, տակը՝ հաճախ փուչ: Այդպիսի վայրերը եզերող կեչու կամ եղևնու շրջանակներին ժողովուրդը վհուկի օղակներ է ասում:

Կերժակը կանգնելու նշան արեց: Մինչ մենք լուռ սպասում էինք նրա որոշմանը, մոտիկ մի տեղ ճչաց բվեճը: Պերեվոզչիկովը նշանակալի նայեց ինձ: Հասկացա՝ ինչ է մտածում, և ասացի. «Չվախենաս, ազնվականները բվեճի նման կանչել չգիտեն»:

Բացատից այն կողմ նորից սկսվում էր անտառը: Երկինքն այնտեղ ավելի լուսավոր էր, քան մեր գլխին, ու սևին էին տալիս եղևնիների գագաթները: Ամենայն հավանականությամբ, այնտեղով բլրաշար էր անցնում, շատ հստակ էին երևում գագաթները:

«Այնտեղ է,- վերջապես որոշեց կերժակը:- Ծխի հոտ է գալիս»:

Գյուղում շների բացակայությունը նրա մեջ շան հոտառություն էր արթնացրել, իսկ ավելի ուշ ականատես եղա նաև խիզախությանը: Նապաստակի միս չուտելը նույնպես նրանց օգտին էր:

Ցույց տվեց՝ ուր նայենք: Բացատի հակառակ եզրին, լուսաբացի մթնշաղի մեջ աղոտ երևում էր որսորդական ձմեռոցը, կամ ինչպես Ուրալում են ասում՝ բալագանը: Հենց դա էլ Մոսցեպանովի թաքստոցն էր:

Ձիերի դոփյունը կամ պատահական խրխինջը կարող էին մեզ ավելի շուտ մատնել, քան պետք էր, իսկ հետապնդումից այս թավուտներում մեկ է ոչ մի օգուտ չկար: Կարգադրեցի ձիերն այդտեղ թողնել: Գնացինք ոտքով: Մեզ չմատնելու համար շրջանցելով պիտի մոտենայինք ձմեռոցին, անտառի եզրով, բայց որոշեցի ուղիղ գնալ:

Հրացանները լիցքավորել էինք դեռ անտառում: Կարգադրեցի առանց իմ հրամանի չկրակել, բայց հրամանի դեպքում էլ վատագույն դեպքում նշան բռնել ոտքերին: Պերմից ակնարկել էին, որ Մոսցեպանովի մահվան համար ոչ ոք ինձնից հաշիվ չի պահանջի, բայց հոգուս մեղք առնել չէի ուզում ու պատրաստվում էի պահակախմբի ուղեկցությամբ ուղարկել նահանգապետություն, չնայած լավ չէի հասկանում, թե այնտեղ ինչ են անելու կենդանի մարդու հետ, երբ արդեն չորս ամիս բոլոր թղթերով մեռած է: Սպանելը, իհարկե, չեն սպանի, ավելի շուտ, Ցյուֆյաևն ու Բարանովը,

ցանկանալով հանգիստ քնել, ուրիշի անվան տակ կաքսորեն Սիբիր, և թող այնտեղ ապացուցի, որ ինքը ինքը չի: Ո՞վ կհավատա: Կեղծ մարդ պատրաստելն ավելի հեշտ է, քան կեղծ թղթադրամ:

Բացատի կենտրոն չհասած՝ հասկացա, որ եթե շարունակենք այդպես գնալ, վիուկի օղակը մեզնից ձախ կմնա: Ձախ ընդունեցի, մյուսները հետևեցին ինձ: Ասում են՝ այդպիսի օղակները դժբախտություն են բերում, ու դրանից խուսափելու համար օղակը պիտի քեզնից աջ թողնես: Վտանգի պահին բոլորը սնահավատ են:

Ձմեռոցը մոտենում էր, արդեն կարող էի տեսնել ցածրիկ խրճիթը, կապած այն չափի գերաններով, որ մարդը կարող է մենակ քարշ տալ, ծողանակապ տանիքին փռած փշատերևը դեռ թարմ էր: Դա ստույգ նշան էր, որ խրճիթը բնակեցված է: Երդի անցքը սևին էր տալիս տանիքի տակ: Դուռը չէր երևում. ըստ երևույթին մյուս կողմից էր բացված, բայց թե հատկապես որ, չգիտեի, դրա համար էլ նպատակակետից հարյուր քայլի վրա ջոկատս երկու մասի բաժանեցի. ես կերժակի, Աժաուրովի ու մի զինվորի հետ ձմեռոցը սկսեցի շրջանցել աջից, իսկ Պերեվոզչիկովին մյուս երկուսի հետ ուղարկեցի ձախից մոտենալու:

Դուռը, պարզվեց, իմ ուղղությամբ է: Տախտակից չէր, այլ բարակ, կեղևահան չարած ծառաբներից: Սպասելով Պերեվոզչիկովին ու իր մարդկանց՝ հրամայեցի բացել դուռը, բայց չմտնել, ու պատրաստվեցի բացվելուն պես ձայն տալ: Համոզված էի, որ Մոսցեպանովը ձայնից կճանաչի ինձ ու չի կրակի:

Պերեվոզչիկովը, ավելի վճռական, քան պետք էր, քայլ արեց առաջ, ու հակառակի պես սառած ձյուն ընկավ ոտքի տակ: Սոթ տվեց ու գլորվելով՝ ուսով խփվեց դռանը: Համարյա նույն պահին դուռը բացվեց հակառակ կողմից ու վայրկենապես փակվեց: Լսվեց ձողը դիմհարելու թխկոցը: Զինվորները ողջ խմբով վրա ընկան, բայց ներսից դղրդաց կրակոցը: Տաշեղը դեսուդեն թռավ: Հրացանի փողը սեղմված էր ծառաբների արանքի նեղ ճեղքին: Ուղիղ նրա առաջ հայտնված Աժաուրովը ճչաց ու բռնեց փորը:

Գլխիս մեջ պայթեցին բառերը, որոնցով Մոսցեպանովը ժամանակին հայհոյում էր Սիգովի աշխատասենյակում: Դրանք ամուր նստել էին հի-

շողությանս մեջ: Ա՛յ քեզ ծեր հիմար: Հիմա արդեն տաժանակրությունից չի խուսափի: Պերեվոզչիկովը ատրճանակից կրակեց դռան վրա, կրակեց առանց իմ հրամանի, բայց ոչինչ չասացի:

Թափված արյունը նրան տալիս էր դրա իրավունքը: Կրակեց ու մի կողմ թռավ, որ ճեղքից արձակված երկրորդ գնդակի տակ չընկնի, չնայած Մոսցեպանովն այդքան արագ չէր կարող լիցքավորել հրացանը: Ձին-վորներն աջ ու ձախ փախան: Կերժակը, անտանելի բղավող Աժաուրովին քարշ տալով, վերջինը հետ քաշվեց: Բոլորը հրացանները կրակի էին պահել: Ես համենայն դեպս կրկնեցի Մոսցեպանովի ոտքերին նշան բռնելու հրամանը, եթե դուրս թռչի ու փորձի թաքնվել անտառում, բայց չէի հավատում, որ իր խեղված ոտքով կգնա դրան: Ներսից ձայն չէր լսվում:

«Ոնց որ կպել եմ»,- ասաց Պերեվոզչիկովը, բայց և չշտապեց ստուգել՝ իսկապե՞ս կրակոցը հասել է նպատակին:

Երդիկը, որի միջով նույնպես կարելի էր կրակել, խրճիթի հակառակ կողմում էր: Մենք վերադարձանք ձմեռոցի մոտ և դռան աջ ու ձախ կողմը կանգնած՝ ուշադիր հետևում էինք երդիկին: Աժաուրովը շարունակում էր գոռալ, բայց անհնար էր հասնել հագուստն ու վիրակապել: Նյարդայնանում էի՝ չհասկանալով մեռնո՞ւմ է, թե՞, հակառակը, վերքը վտանգավոր չի, եթե այդպես գոռալու ուժ ունի: Նրա աղաղակների մեջ բողոք էր լսվում մարդու ապերախտության հանդեպ, որին ոչինչ չէր արել, բայց խփեց իրեն:

Ոչ մեկի մտքով չէր անցնում, որ Մոսցեպանովը կարող էր դուրս գալ տանիքով: Խմբվել էինք հենց այդ պատի տակ, շատ մոտ, որ կարողանայինք տեսնել ինչ է կատարվում վերևում: Խուլ թմփոցը, որով մարդը բարձրությունից ընկնում է գետնին, բացարձակ անսպասելի էր մեզ համար: Միայն հետո, մտնելով ձմեռոց, հասկացա, թե դա բանն ինչպես է եղել. տանտերը բարձրացել էր սեղանի տեղ ծառայող քոթուկի վրա, տանիքից զգուշորեն մի քանի ծողան դուրս քաշել, նույնքան անաղմուկ հետ քաշել դրանք ծածկող փշատերևը, ձգվել ձեռքերի վրա ու ցած թռել ոչ այն կողմից, որտեղ սպասում էինք, այլ՝ հակառակ:

Կերժակն իր ֆուզեյով բոլորից ճարպիկ դուրս եկավ ու հասցրեց փակել նրա ճանապարհը դեպի անտառ: Փախստակը բացատով նետվեց հա-

կառակ կողմը, ուր մեր ձիերն էին: Մեքենայաբար մտածեցի, որ վիուկի օղակը նրանից ձախ պիտի մնա:

Նրա հետևից դղրդացին կրակոցները: Միայն կերժակը չէր կրակում: Մոսցեպանովի հետ ոչ մի անձնական հաշիվ չուներ, բացի այդ, զինվորների վառոդն ու փամփուշտները պետական էին, իսկ իրենը՝ սեփական:

Հրացանափողերի ուղղությունից հասկանում էի, որ ոտքերին նշան բռնելու հրամանը չի կատարվում, բայց հրաձիգներին հետ պահել չհաջողի: Վազողը սայթաքեց ու բերանքսիվար ընկավ ձյան մեջ: Հեռվից նրա դիրքն ինձ հուշեց, որ մեռած է:

Ողջ խմբով նետվեցինք նրա մոտ: Բերանքսիվար էր ընկած, զիպունը մեջքին երկու տեղից պատռվել էր գնդակներից: Զինվորները նրան շրջեցին մեջքի վրա, ու տեսա, որ Մոսցեպանովը չի:

Բայց և այնպես սպանվածը ծանոթ էր: Պերեվոզչիկովն էլ անմիջապես ճանաչեց: Մեր առաջ պառկած էր ոչ այլ ոք, եթե ոչ կիշտիմյան խռովարար Կլիմենտի Կոսոլապովը: Անցած տարի նրան եկատերինբուրգյան բանտից տեղափոխել էին Մոնետնի դվորի մենախուց, որտեղ սպասել էր գարնան տաքերին, կոտրել պատուհանի ճաղավանդակը, խեղդել ժամապահին ու փախել: Աստված ուժի հարցում ժլատ չէր եղել նրա հանդեպ:

«Ի՞նքն է»,- հարցրի կերժակին:

Հաստատեց, որ ինքը հենց այդ մարդուն էր հետևում:

«Իսկ ինչո՞ւ չասացիր,- կշտամբեցի նրան,- թե ինչ տեսք ունի»:

«Չէիք հարցրել»,- պատասխանեց կերժակը:

Պատասխան չունեի: Նրա բերած կեչու կեղևի կտորը՝ հիշարժան դրոշմով, կասկած չէր թողնում, թե ումն է կնիքը: Տիրոջ արտաքինի մասին հարցնելն ավելորդ էի համարել, սակայն այդ բացթողումն ավելի շուտ ուրախացնում էր ինձ: Մոսցեպանովի փախուստի մեղքս լիուլի քավել էի: Ագռավ էինք որսում, գայլ բռնեցինք:

Կերժակը, չնայած հենց ինքն էր գտել ու մատնել հանգուցյալին հինգ ռուբլով ու երկու ֆունտ վառոդով, խիստ սրտառուչ աղոթք կարդաց վրան: Երբ ավարտեց, բռնեցի մեռածի ձեռքը: Ձկույթին պղնձե մատանին էր, որով Մոսցեպանովը կնքել էր Զմեյ Գորինիչի մասին գրությունը: Դժվարությամբ կարողացա հանել:

Արդեն լրիվ լուսացել էր: Օճառաքարից ձվածև կնիքը՝ փորագիր Գ և Մ տառերով, աղոտ կանաչին էր տալիս մատներիս արանքում: Երկրորդ կետը ջնջվել էր կամ չէր էլ եղել: Մարդուն, ում անունը հուշում էին այդ սկզբնատառերը, վերջին անգամ տեսել էի անցած սեպտեմբերին, Պերմում, երբ թագավորն այցելել էր հաուպտվախտ:

Նրա հետ խոսելուց հետո թագավորը գնաց դեպի ելքը, իսկ Մոսցեպանովի ոտքերն ապրած ցնցումից թուլացել էին, և որտեղ կանգնած էր, այդտեղ էլ նստեց գետնին: Աչքի պոչով նկատեցի, երբ վազում էի դեպի դարպասը՝ ժամապահներին զգուշացնելու, որ թագավորը մոտենում է, ու մեկնելիս պետք է ողջունեն նրան: Տասը րոպեից բոլորը նստեցին կառեթներն ու մեկնեցին: Վերադառնալով բակ՝ տեսա, որ հաուպտվախտի առմուտքի մոտ ոչ ոք չկա: «Ներս են տարել»,- մտածեցի, բայց քիչ անց զինվորները զեկուցեցին, որ տարել են միայն կնոջը սպանածին, իսկ Մոսցեպանովին թողել էին տեղում, որ հետո քարշ տան, քանի որ իր ոտքով գնալ չէր կարող կամ չէր ուզում, ու մինչ ներսուդուրս էին անում, նա ասես գետնի տակն էր անցել:

Պերեվոզչիկովը սկսեց խուզարկել հանգուցյալին, իսկ ես նորից զննեցի իմ ավարը: Չկար մեկը, որ հարցնեի, թե մատանին ինչպես է հայտնվել Կոսոլապովի մոտ, բայց այդպիսի իրը կարելի էր հանել թերևս միայն դիակի վրայից, այսինքն՝ Մոսցեպանովն արդեն ողջ չէ: Միաժամանակ մի ուրիշ, հենց ինձ զարմացրած միտք հայտնվեց. ուրեմն Նատալյային կարելի է ասել, որ վրեժ եմ լուծել նրան սպանողից:

Նայեցի մահացածին: Աղոթք կարդալուց առաջ կերժակը հեռատեսորեն փակել էր նրա աչքերը՝ որ իրեն սպանողին չտեսնի, բայց ձախ կոպը, սառչելով, նորից կիսով բարձրացել էր: Կոսոլապովը աչքը շլել էր վիուկի օղակին՝ ասես ափսոսալով, որ աջից չի շրջանցել: Չոր ձյունը նրա տակ արյունից թրջվել էր: Զարմանալի էր, թե կյանքն ինչ արագ էր հեռացել այդ զորեղ մարմնից:

Աժաուրովից, չնայած թերաճ էր ու տաշեղի պես բարակ, երեք ժամ շարունակ չէր հեռանում: Ձմեռոցում վառեցինք վառարանը, վիրավորին պառկեցրինք մահճակին, վիրակապեցինք իր իսկ շապիկի պատռած շեր-

տերով: Էլ չէր գոռում, ուշագնաց էր ու շուտով մեռավ:

Զմեռոցում Աստվածաշնչյան ըներության հրատարակած ռուսերեն Ավետարան ու Լեռնային կանոնագիրք գտանք: Առաջինի որոշ համարներ ու երկրորդի որոշ պարագրաֆներ ընդգծված էին կամ լուսանցքներում միևնույն նշաններն ունեին: Պերեվոզչիկովի հետ երկար նայեցինք, բայց այդպես էլ չհասկացանք՝ ինչ են նշանակում:

Բարոն Կրիդները Իգնատի Ելովսկուն
Ապրիլ, 1825 թ.

Հնարավորություն չունեմ անձամբ դիմելու թագավորին և մի շարք կարևոր պատճառներով հարմար չեմ համարում դիմել նորին մեծության գրասենյակի կառավարիչ կոմս Արակչեևի միջոցով, ուստի, իմանալով ձեր մերձավորությունը թագավորի հետ, խնդրում եմ հայտնել նրան դեկտեմբերի 13-ին Ղրիմում, Կարասու-Բազար բնակավայրում ma tante բարոնուհի Բեատա-Բարբարա-Յուլիա ֆոն Կրիդների վախճանվելու մասին:

Հեռու լինելուս պատճառով շատ ուշ իմացա, բայց եթե թագավորին արդեն զեկուցել են, ապա կկարողանայիք որոշ տեղեկություններ հայտնել նրան, թե ինչ հանգամանքներում կյանքին հրաժեշտ տվեց բարոնուհին: Տեղեկություններիս աղբյուրն ինձ ուղարկած նրա նամակներն են: Դրանց մեծ մասն անձամբ է գրել, մնացածը թելադրել է դստերը, երբ ուժ չի ունեցել բռնելու գրիչը, բայց ոչ մեկը չի կարողացել ուղարկել Ռիգա՝ ո՛չ ծովով, ձմեռային փոթորիկների, ո՛չ ցամաքով՝ աշնանային ուղեխափանքի պատճառով: Սոֆի Բերքհայմը՝ նրա դուստրը, միայն վերջերս է միջոց գտել ինձ ուղարկելու մոր վերջին օրերի մասին պատմող նամակը:

Ղրիմում բարոնուհին դստեր ու կոմսուհի Գոլիցինայի հետ Ավետարան էր քարոզում թաթարներին, որոնց մկրտությունը նրա ծրագրերի մեջ չէր մտնում, ցանկանում էր միայն հերկել նրանց հոգու հողն ու ավետարանական ուսմունքի սերմեր գցել այնտեղ, որոնք երբևէ ծիլ կտային, բայց ուղևորության գլխավոր նպատակը դա չէր: Նրան Ղրիմ մեկնելու էր մղել պահեցողության տևական վարժանքներից քայքայված առողջությունը:

Սպասումներն արդարացել էին, լավ էր զգում, բայց հետո վրա հասավ կտրուկ վատթարացումը: Հիվանդության պատճառը միայն մարմնական հյուծումը չէր պահքի և աղոթքների հետևանքով: Ռիգայում բժիշկները cancer էին ախտորոշել, բայց նրանց չէր հավատում՝ մտածելով, որ ժառանգական թոքախտ ունի, և կումիսը կօգնի իրեն: Իզուր էր Սոֆին մորն աղաչում վերադառնալ Լիֆլյանդիա կամ գոնե ծմռանը մնալ Գոլիցինների մոտ՝ Կորեիզում: Գժտվելով նրա հետ՝ բարոնուհին իր թոքերի համար ամենաանպաստ շրջանում մեկնեց Կարասու-բազար: Այնտեղ ինչ-որ գերմանացի դեղագործ կումիսաբուժություն էր սկսել, որը նրա դեպքում միանգամայն անօգուտ էր:

Դեղագործը, բնականաբար, կատարյալ ապաքինում էր խոստացել: Երախտապարտ բարոնուհին սկսել էր նրան վարժեցնել ոգու աղոթքին, հարաբերությունները հրաշալի էին, մինչև զբոսանքներից մեկի ժամանակ, որոնց ուժերը դեռ բավականացնում էին, քաղաքի մերձակայքում հասել էր մի հայկական գերեզմանոց: Կարասու-բազարում ուղղափառների գերեզմանոց չկար, և Դրիմը նվաճելիս այնտեղ էին թաղել Պոտյոմկինի՝ խոլերայից մեռած զինվորներին: Նրանց լքված գերեզմանների հարևանությամբ բարոնուհին երկու-երեք թարմ, ակնհայտորեն ոչ հայկական գերեզման էր տեսել, և խաչերի ու տապանաքարերի գրություններից դժվար չէր հասկանալ, որ այնտեղ պառկած են խաբեբա դեղագործի բուժառուները: Դա խորտակել էր առանց այն էլ թուլացած վստահությունը նրա հանդեպ: Կումիսը չէր օգնում, ի վերջո որոշեց տանը մեռնել, բայց արդեն այնքան թույլ էր, որ չէր դիմանա ճանապարհի հարյուրավոր վերստերին՝ ռուսական ցեխի միջով: Ծովային ուղին նույնպես անմատչելի էր:

Հետը միայն նաժիշտն էր, նրան թաթարերեն սովորեցնող թաթար թարգմանիչն ու փեսայի քույրը՝ Շառլոտա Բերքհեյմը, մի պառաված օրիորդ, որի հետ բարոնուհին մտերմացել էր դստեր հետ գժտվելուց հետո և պահապան հրեշտակ էր կոչում, Բայց ամեն ինչում հնազանդ այդ հրեշտակն անկարող էր հետ պահել նրան, երբ որոշեց վերսկսել քարոզչությունը: Սոֆին տեսնում էր մոր համար սովորական համառությունը, չնայած գուցե տարաբախտ բարոնուհին թաքուն հույս ուներ դրանով ապաքինում

վաստակել:

Այսպես թե այնպես, որոշեց Կարասու-բազարում Ավետարան քարոզել ծմռանն իրենց թաբուններն այդտեղի հովիտները քշող նողայներին: Արդյունքը մի, մեղմ ասած, միջադեպ էր, որը վերջնականապես քայքայեց նրա առողջությունը: Մանրամասներն ինձ հայտնի չեն, բարոնուհին դրա մասին չէր խոսում, բայց կարելի է ենթադրել, որ կիսավայրի քոչվորները անպաշտպան քարոզչին միայն խոսքերով չէին վիրավորել: Դրանից հետո արդեն դուրս չէր գալիս տնից, իսկ նոյեմբերի կեսից նաև անկողնուց վեր չէր կենում, անընդհատ մրսում էր, ոչինչ չէր ուտում թաթարական բլիթներից ու չրից բացի, բայց մինչև վերջին ժամը պահպանեց մտքի պայծառությունն ու ոգու ամրությունը: Այդ ամենի մասին գիտեմ Սոֆիի նամակից: Տեղեկանալով նողայների հետ միջադեպի մասին՝ Կորեիզից շտապել էր մոր մոտ, որը չէր վանել նրան: Սոֆիի իմաստնությունը բավականացրել էր իր իրավացիությունը մեռնողին երեսով չտալու և չհանդիմանելու համար:

Սիրող ու սիրելի դստեր մերձավորությունից բացի, բարոնուհու համար սփոփանք էր նաև այն, որ սենյակի պատուհանը բացվում էր Կարասու-բազարի վրա կախված և նրա ցանկացած կետից երևացող Ակ-Կայա հոյակերտ ժայռի վրա: Օրվա երկրորդ կեսին, երբ մի քիչ լավ էր զգում, հաճախ խնդրում էր իրեն դեմքով դարձնել դեպի պատուհանն ու բարձ դնել մեջքի տակ, որ տեսնի թաթարների սրբազան այդ ճերմակ լեռը, որի գագաթին իշխան Պոտյոմկինը հավատարմության երդում էր ընդունել Ղրիմի բեկերից ու մուրզաներից: Չնայած, դժվար հիվանդը մտածելիս լիներ դրա մասին: Աշնանային կարճ երեկոներին ուրիշ ստվերներ էին անցնում Ակ-Կայայի կավճասարերի վրայով: Խղճուկ թաթարական հյուղակում մեռնող այդ կոնֆեդենտուհին ու միապետների խորհրդատուն, Եվրոպայի մեծագույն հանճարների այդ զրուցակիցը մահվան մահճում էլ չէր դադարում տագնապել կործանվող Հունաստանի համար: Նույն կերպ՝ շարունակ մտածում էր թագավորի մասին և աղոթում նրա համար:

Կես տարի առաջ, Կորեիզում, երեկոյան ծովի ափին ոգու աղոթք անելիս նա հոգու աչքերով տեսել էր աթենական Ակրոպոլիսը, բայց ոչ ներկայիս տեսքով, որ մեզ հայտնի է փորագրանկարներից ու վիմագրու-

թյուններից, այլ այն, որ ունեցել էր մինչև Պարթենոնում պահվող վառոդի պայթյունը և գուցե Պերիկլեսի օրոք: Պարթենոնը նրա աչքին հառնել էր ավերակներից, իսկ վերևում բարձրանում էր վեհատեսիլ քրիստոնեական տաճարի գմբեթը, որն անհամեմատելի էր նրան հայտնի գմբեթներից որևէ մեկի հետ: Տեսիլքը ուղեկցվում էր հանգամանքներով, որոնք նա գերբնական էր համարում, բայց Սոֆին ու իշխանուհի Գոլիցինան անմիջապես դրանց շատ պարզ բացատրություն տվեցին: Հետագայում բարոնուհին իր մեջ արիություն գտավ ընդունելու այդ փաստարկների խելամտությունը, բայց և այնպես կարծում էր, որ դա ոչ մի կերպ չի բացառում բուն տեսիլքը:

Դրա մասին պատմությունը իր ձեռամբ գրված և ինձ ուղարկված նամակում առանձին թերթի վրա պատկերազարդված է մատիտանկարով: Կարող եք թագավորի ուշադրությունը հրավիրել նրա վրա, որ այդ գիշեր բարոնուհու առաջ Ակրոպոլիսում հառնած տաճարը պատկերված է ճարտարապետական մանրամասների այնպիսի ճշգրտությամբ, ասես նկարչուհին արթմնի տեսել ու նկարել է բնօրինակից:

Դարձերեսին բարոնուհու ձեռքով գրված է հետևյալ ընդարձակ բացատրությունը. «Այս տաճարում մարմնավորվել է ժողովուրդների եղբայրության և քրիստոնեության բոլոր ճյուղերը միասնական Եկեղեցու մեջ միավորելու իմ վաղեմի երազանքը, բայց երբ քեզ գրում էի դրա մասին, չէի կարող Սոֆիին ու իշխանուհի Գոլիցինային բացատրել, թե ինչու իմ հույսերը պետք է մարմնավորվեն ոչ այլ տեղ, եթե ոչ աթենական Ակրոպոլիսում: Հիմա մտքերս կարգի են եկել, և դրա համար գտնում եմ երկու պատճառ: Նախ՝ Հունաստանը տառապում է մարդկային ողջ ցեղի մեղքերի համար, ինչպես Հիսուս Քրիստոսը խաչի վրա: Երկրորդ՝ չի կարելի նկատի չառնել այն, ինչի մասին ինձ պատմել է բուսաբան Կասպար Լաուրենցը՝ Բեռլինի համալսարանից: Մենք ծանոթացանք Սևաստոպոլում. Ղրիմ էր եկել տեղական բուսաշխարհն ուսումնասիրելու, իսկ մինչև այդ Աթենքում հերբարիում էր կազմել Ակրոպոլիսի ժայռին և մոտակայքում աճող ծառերից, թփերից, խոտերից, ծաղիկներից, մամուռից, քարաքոսից: Պատերազմական գործողությունների պատճառով ստիպված էր եղել ընդհատել աշխատանքը, բայց նույնիսկ անավարտ վիճակում նրա հավաքածուն

ավելի քան 600 նմուշ է ամփոփում: Լաուրենցը, ինչպես ինքն ընդգծեց ինձ հետ զրուցելիս, ապշած էր այդպիսի աննշան տարածության բուսաշխարհի բազմազանությունից, իսկ ավելի ուժգին՝ նրանից, որ արդեն Ակրոպոլիսից կես մղոնի վրա ոչ մի նման բան չկա: Դրանով, նրա կարծիքով, հաստատվում էր, որ վաղնջական ժամանակներում մարդիկ այստեղ են եկել աշխարհի տարբեր ծայրերից և իրենց կամ ընտանի կենդանիների մորթու վրա ակամա բերել հարազատ վայրերի բույսերի սերմերը, ահա թե ինչու դրանք այստեղ հանդիպում են այնպիսի համադրություններով, ինչպիսիք աշխարհում ոչ մի տեղ չկա: Այստեղից՝ եզրակացություն. Ակրոպոլիսը մեր ընդհանուր սրբավայրն է, աշխարհի բոլոր ցեղերի միասնության խորհրդանիշը»:

Եթե տեղին համարեք, կարող եք նամակիս հետ նկարը հանձնել թագավորին կամ թողնել ձեզ մոտ, եթե սահմանափակվեք վերը շարադրվածը բանավոր հաղորդելով:

Բարոնուհուն ցանկանում էին հուղարկավորել Կորեիզում, Գոլիցինների կալվածքում, բայց պարզվեց, որ սարսափելի ճանապարհների պատճառով անհնար է դեկտեմբերին տեղափոխել մարմինը: Ինչպես գրում է Սոֆին՝ Կորեիզից Կարասու-բազար ճանապարհին մի տեղ վեցուկես ժամ է պահանջվել վեց վերստ հաղթահարելու համար. ամեն հինգ րոպեն մեկ ստիպված են եղել անիվները դուրս քաշել կպչուն կավացեխից: Աճյունը տեղափոխելը հետաձգեցին մինչև գարուն, իսկ մինչև այդ բարոնուհին ժամանակավոր օթևան է գտել այն նույն հայկական գերեզմանատանը, որտեղ երկու ամիս առաջ իմացել էր իր սուտ բարերարի երաշխիքների իրական գինը: Այստեղ, փոքրիկ մատուռի ստորգետնյա դամբարանում են հանգչում ժամանակին Կարասու-բազարում տեղակայված հուսարական գնդի հրամանատար գնդապետ Շիցի և նրա տիկնոջ մասունքները: Երկու դագաղների կողքին դրվեց երրորդը, բայց ևս մեկ անուն գետնահարկը ծածկող քարասալի վրա չփորագրեցին: Գարնանը կփորագրվի նրա տապանաքարի վրա, Կորեիզում:

Որպեսզի թագավորը կարողանա պատկերացնել, թե բարոնուհին ինչ հոգեվիճակում լքեց մեր աշխարհը, մի հատված բերեմ ինձ ուղարկած

նամակից, որը, սակայն, նախնական բացատրությունների կարիք ունի:

Նույնիսկ մեզնից լավագույններին է հատուկ մխիթարվել ուրիշի դժբախտություններով: Ստածելով, որ բարոնուհին զերծ չէ այդ թուլությունից, ես չափազանցելով բողոքում էի իմ հիվանդություններից:

Ահա թե ինչ պատասխանեց. «Դու տրտնջում ես, որ սկսել ես վատ տեսնել, արագ ես հոգնում, շունչդ կտրվում է աստիճաններով բարձրանալիս: Բայց մի՞թե դա այդքան վատ է: Դրանով չի՞ արտահայտվում, արդյոք, Տիրոջ խնամատարական իմաստնությունը: Տեսողությունը կորցնելով՝ չենք նկատում, թե ինչպես են տգեղանում մեր սիրելիները, ինչպես են խարխլվում մեր սիրելի իրերը: Կորցնելով շարժումների թեթևությունը՝ ավելի հաճույքով ենք մնում տանը, ավելի քիչ ենք ուզում իմանալ, թե ինչ է կատարվում նրա պատերից դուրս, և ավելի հանգիստ ենք տեղափոխվում բոլորիս սպասող անդուռ-անլուսամուտ շինությունը: Ծերունական հիվանդությունները փչացնում են մարմինը, բայց դրանով իսկ հոգին նախապատրաստում նրա անհետանալուն: Այդպես հոգատար մայրը, երբ երեխան շոգ օրով ուզում է լողալ գետում, որպեսզի չմրսի, թույլ չի տալիս կիզող արևից միանգամից սառը ջուրը մտնել, ստիպում է նախ նստել ստվերում»:

Մայոր Բորիս Չիխաչով: Հիշատակարան

Մայիս, 1825 թ.

Կոսոլապովի մատից մատանին հանելիս արդեն գիտեի, թե ում եմ հանձնելու, բայց միայն մայիսին կարողացա: Նիժնիտագիլյան գործարաններում ծառայող Պերեվոզչիկովը բռնվեց զինվորների վարձատրության գողության վրա. փողը պիտի վճարվեր Սիգովի համար արվող աշխատանքների դիմաց: Ստիպված էի մեկնել այնտեղ, լավ է, որ ճանապարհներն արդեն չորացել էին: Այդ փողերը նրանից թափ տալով՝ ուղղվեցի Երուսաղեմ մուտքի եկեղեցուց ոչ հեռու գտնվող ինձ համար հիշարժան տնակը:

Սոսցեպանովը փախել էր Պերմից, Կոսոլապովը՝ Եկատերինբուրգից: Նրանց պատահական հանդիպման հնարավորությունն այդ քաղաք-

ներն իրարից բաժանող լեռների ու թավուտների տարածության մեջ չնչին էր, ուրեմն պատահմամբ չէին հանդիպել, կամ այդ հանդիպումով նրանց մահվան էր տարել ճակատագիրը, իսկ նա խուսափում է շիտակ ուղիներից: Իհարկե, կար նաև ավելի պարզ բացատրություն. փախստականները ողջ Ուրալով գաղտնի կածաններ ունեն, և դրանցից մեկի վրա էլ ի ցավ իրենց հանդիպել էին: Կոսոլապովը սպանել էր Մոսցեպանովին ու խլել մատանին, բայց վրան դրոշմած տառերը հենց իրեն էլ կործանեցին:

Գտածոն պետք էր ուղարկել Պերմ, որպեսզի կարողանային դադարեցնել փախստականի որոնումները, սակայն բերգ-տեսուչ Բուլգակովին ու նահանգապետ Տյուֆյաևին զեկուցեցի, որ մատանին, որով Կոսոլապովը կնքում էր իր կեչակեղևները, չեմ գտել, ու պահեցի ինձ մոտ:

Նատալյայի հետ խոսակցությունից առաջ սիրտս անհանգիստ էր: Աշնանն իմացել էր, որ Մոսցեպանովը մահացել է սրտի կաթվածից, ծմռանը ինքս էի ասել, որ ողջ է, իսկ հիմա ստիպված էր երկրորդ անգամ լսել նրա մահվան մասին: Քարը կճաքի, եթե փոխնիփոխ վրան տաք ու սառը ջուր լցնես, բայց Նատալյան ինձ լսեց առանց ողբի, նույնիսկ՝ անարցունք:

Թեթևացած՝ նրան տվեցի մատանին:

Սկսեց պտտել մատների արանքում՝ մերթ մեկին, մերթ մյուսին հագցնելով: Դա տարօրինակ չէր դիտվի, եթե չլինեին լուսնոտի շարժումները՝ ասես երազում կամ հոգում թաքնված ինչ-որ մեկի մութ կամքով: Թվում էր՝ ինքը չի շարժում մատները, այլ հանգուցյալի անտեսանելի ձեռքն է վերուվար անում՝ մատանին չափելով: Ահա կընտրի՝ որ մատին է ավելի հարմար, և արդեն երբեք չի հանի:

«Մի՛ դիր,- զգուշացրի,- թե չէ կսկսի քեզ մոտ գալ»:

Նատալյան անմիջապես հասկացավ ում մասին է խոսքը, բայց շատ չանհանգստացավ այդ հեռանկարից:

«Եվ ի՞նչ»,- հետևեց հարցը:

«Ծուտով կհասկանաս»,- ասացի:

Նա գլխով արեց, բայց ցած չդրեց մատանին, մինչև չփորձեց երկու ձեռքերի մատներին ու չհամոզվեց, որ բոլորն էլ բարակ են մատանու համար:

Փախուստ

Շառլ-Անտուան Ֆաբիե: Ապստամբի օրագիրը

Հունիս, 1825 թ.

Եգիպտական բանակն ապահովված է տևական ռազմարշավի համար անհրաժեշտ ամեն ինչով, բացի ձմեռային հանդերձանքից, ասենք, աշնանային ծովամրրիկների շրջանում 17-հազարանոց բանակի ափհանումն էլ հարմար չէ: Ի վերջո, Իբրահիմ փաշան ողջ էքսպեդիցիոն կորպուսով ձմեռեց Կրետե կղզում: Ասում են, որ պահել էր հորը տված երդումը, և այդ բոլոր ամիսներին ոչ մի անգամ նավից ափ չէր իջել: Ուխտն արվել էր Ղուրանի վրա, բայց վկայում էր նրա բնույթի հունական հիմքը: Հույներն անընդհատ այսինչն ու այնինչը չանելու երդումներ են տալիս ու հանգիստ խղճով խախտում: Իբրահիմ փաշան մորից ու հարազատ հորից ժառանգել է առաջինի սովորույթը, բայց իսլամը նրան հետ է վարժեցրել երկրորդից:

Հույների համար ժամանակը հոսում է ինչպես երեխաների համար: Մանուկ օրերին, եթե մայրս խոստանում էր, որ կես տարուց շան ձագ կնվիրի, դա նույնն էր, թե՝ երբեք: Հիմա ինձ համար կես տարի առաջը երեկ է, կես տարի հետոն՝ վաղը, սակայն ռազմական մինիստրությունում գարունը մի այնպիսի հեռավոր բան էին համարում, որ իմաստ չտեսան մտածելու նրա գալստյան մասին և դրա հետ կապված ոչինչ չձեռնարկեցին: Թեթևամտությունն ու ճակատագրապաշտությունը ավելի մոտ են իրար, քան ընդունված է կարծել:

Իմ խորհուրդներն ականջի հետև էին գցում: Օտարերկրացիներին այստեղ չեն վստահում, ոչ մի հելլենասեր չի նշանակվում նույնիսկ ամենացածր սպայական պաշտոնի: Ինձ մեկ անգամ չէ, որ ակնարկել են, որ եթե ուզում եմ ղեկավարել հույներին, ապա պետք է ընդունեմ նրանց հավատը: Փորձերս՝ բացատրելու, որ աթեիստ եմ, նույնպիսի տպավորություն են թողնում, ինչպես եթե ասեի, որ անդրաշխարհից եմ եկել: Հելլենասերներից մեկը չդիմացավ նվաստացումներին ու թողեց-գնաց, մյուսներն իրենց խիզախությունն ապացուցում են որպես շարքայիններ: Սկզբում կառավարությանն առաջարկեցի կանոնավոր գունդ կազմել, հետո՝ գումարտակ, բայց դրան էլ չհասա: Իմ հրամանատարության տակ վաթսուն հելլենասերներ են, և՝ ոչ մի հույն, չհաշված խոհարարներն ու թարգմանիչները: Մեզ վատ չենք դրսևորել արշավանքներում, ինչը հույներին չի խանգարում արհամարհել մեզ լեզուն վատ իմանալու, համեստ հագուստի, անզարդարանք հրացանների, մարտակարգի մասին իրենց գաղափար տալու և հակառակորդին տեսնելուն պես ողջ կոկորդով գոռալու ու մուշկետներով ուր աչքը կտրի կրակելու սովորությունից հետ վարժելու համար: Նրանց վաղեմի հաղթանակները բացատրվում են նրանով, որ թուրքերն ավելի վատ են կռվում և մե՛կ պարենի, մե՛կ անասնակերի, մե՛կ արճճի ու վառոդի մշտական կարիք ունեն: Այդ ամենը կողոպտում են թուրքական զորահրամանատարները, որոնք հունականներից ավելի գող են:

Նավպլիոնում կյանքն իր հունով էր հոսում նրանից հետո էլ, երբ Իբրահիմ փաշան երկու հետևակային դիվիզիա ափ հանեց Մոդոնում: Նրանք պլացդարմ պատրաստեցին ներխուժման համար, իսկ մնացյալ կորպուսն այնտեղ ափ իջավ մեկ ամիս անց: Այդ ամբողջ ամսում հույները կատարյալ անխռովության մեջ էին: Ապարդյուն էի համոզում մինչև Իբրահիմ փաշայի գլխավոր ուժերի տեղ հասնելը հետ գրավել Մոդոնը: Սինիստրությունների պաշտոնյաները հավատացնում էին, որ կեղտոտ արաբները խիզախ արմատոլներին ու նրանց մուշկետները տեսնելուն պես կփախչեն Եգիպտոսից, իսկ մինչև այդ հարբեցողությամբ էին զբաղվում, պաշտոններ սարքում, կռվշտում փողի ու կանանց համար:

Կոլոկոտրոնիսի դիկտատուրան տապալվեց, նրան հավատարիմ մո-

ռեական կլեֆտները քաշվեցին լեռները: Նախագահ դարձավ Կոնդուրիոտիսը, բնականաբար՝ բոլոր եկամտաբեր պաշտոններում հայտնվեցին նրա հայրենակից հիդրիացիները, իսկ Անգլիայից վերցրած երկու միլիոն ֆունտ վարկի առյուծի բաժինը հասավ մի կողմից՝ հենց անգլիացիներին, մյուս կողմից՝ Հիդրիայի նավատերերի կլանին: Կառավարությունը նրանցից եռակի թանկ գնեց հին առագաստանավերը՝ իբր մեր նավատորմն ուժեղացնելու, իսկ իրականում՝ Կոնդուրիոտիսին պրեզիդենտական աթոռին նստեցնողներին երախտահատույց լինելու համար:

Երբ Իբրահիմ փաշան ափ էր իջնում Մոդոնում, նոր պրեզիդենտը մուտք գործեց Նավպլիոն՝ երկժամանոց հրածգությամբ ողջունվելով այն ամենից, որ կարող է կրակել: Նա պարծենում էր, թե երեսուն հազար զինվոր ունի, բայց դրանց մեծ մասին ոչ ոք չէր տեսել, մյուսներն էլ զինվոր էին կոչվում, քանի որ դանակներով ու հրացաններով զինված՝ թրև էին գալիս քաղաքում: Երբ Իբրահիմ փաշան Մոդոնից շարժվեց դեպի Նավարին, Կոնդուրիոտիսին հաջողվեց հավաքել յոթ հազարից ոչ ավելի, որոնց կեսը ուղղափառ ալբանացի-սուլիցիներ էին, բուլղարներ ու վալախներ: Այդ զորքով, դրոշակիրներից ու գրագիրներից կազմված իր շտաբով, քարտուղարներից, գրումներից, բեռնակիրներից, թիկնապահներից և ճաշին ու քնելուց առաջ ընդմիջումներով ծխվող իր ղեյլանների պահապաններից բաղկացած շքախմբով պրեզիդենտը բարբարոսական ճոխությամբ դուրս եկավ քաղաքային դարպասներից և չորս օր անց վերադարձավ՝ հայտարարելով, թե վախկոտ արաբները վախեցան իր հետ մարտի դաշտում հանդիպելուց:

Հրամանատարությունն ընդունեց նրա տեղակալը, որը փորձեց եգիպտացիներին կանգնեցնել Քրոմիդի տակ, բայց առաջին իսկ սվինային գրոհը (հույները ոչ տեսել էին, ոչ լսել, որ այդպիսի բան լինում է) նրանց սրբեց դիրքերից: Փախչում էին՝ հետևում հինգ հարյուր դիակ թողած, իսկ Իբրահիմ փաշան մոտեցավ Նավարինին, շրջափակեց ծովի կողմից և կայազորին առաջարկեց անձնատուր լինել: Ձենքը վայր դրածներին ազնիվ խոսքով կյանք, ազատություն և Նավպլիոնից նավերով չեզոք Փսարի հեռանալու հնարավորություն խոստացավ:

Պաշարվածները տատանվում էին: Եգիպտացիների հետ Նավարին էին հասել երեք տարի առաջ այդտեղ հույների կազմակերպած կոտորածին սպանված մահմեդականների հայրերը, եղբայրներն ու որդիները: Կասկած կար, որ իրենց հարազատներին սպանողներին թույլ չեն տա ողջ դուրս գալ քաղաքից: Իրավիճակի անելանելիությունը ստիպեց հույսը դնել Իբրահիմ փաշայի խոսքի վրա, և նա պահեց խոստումը: Եգիպտական զինվորները Նավարինի պաշտպաններին, գազազած ամբոխից պաշտպանելով, ուղեկցեցին մինչև նավահանգիստ:

Մի քանի քաջեր նախընտրեցին մեռնել, բայց չհանձնվել: Նրանց մեջ էր նաև ընկերս՝ այեմոնտցի գնդապետ Սանտա Ռոզան: Հույները նրան ողորմածաբար թույլ էին տվել իրենց ազատության համար մարտնչել որպես շարքային կամավորական:

Տեղեկանելով նրա մահվան մասին՝ որպես սև համբավաբեր եկա հույն Խարայի մոտ, որի հետ նա ապրում էր ու պատրաստվում էր ամուսնանալու: Ինձ համար դժվար էր նրան հայտնել սիրելիի մահվան մասին, բայց ժպիտով առավ բոթը: Ապշելով՝ նրան մեղադրեցի, որ քարսիրտ է, և Խարան, իր հերթին զարմանալով, ասաց. «Դու, ի՞նչ է, չգիտե՞ս: Միաուլիսը վառել է «Ասիան»:

Դա լավագույն եգիպտական ֆրեգատն էր, Իբրահիմ փաշան ամբողջ ձմեռ նրա վրա էր մնացել Կրետեում: Նախորդ գիշեր Միաուլիսի բրանդերները վառել էին նավը, որի ածխացած կմախքը հիմա էլ ցցված է Նավարինի նավահանգստում: Խարան չէր կարող այդպիսի օրով սգալ իր կորուստը, բայց ավելի ուշ իմացա, որ ուրախության պակաս հայրենասիրական պատճառներ էլ ուներ: Սանտա Ռոզայի թողած փողերով մասնաբաժին էր գնել ծովեզերքի բիլիարդանոցներից մեկում:

Սանտա Ռոզայի մահը, ըստ էության, ինքնասպանություն էր: Ինձնից ավելի իդեալիստ լինելով՝ նա այդպես էլ չհաշտվեց Կոնդուրիոտիսի և նրա ներքին գործերի մինիստր Գրիգորիոս Դիկայոսի իշխանության հետ: Երկուսն էլ, հատկապես երկրորդը, ատելի էին Սանտա Ռոզայի համար, և այն, որ Հունաստանը հնազանդվել էր այդ երկուսին, նրա համար նույնն էր, թե ինքը բռնացողներից պաշտպանում է սիրած կնոջը, իսկ նա իր թիկուն-

քում տրվում է հարուստ սրիկային:

Հունարեն դիկայոս նշանակում է արդար: Ծքեղ մականունն ու հոգևոր աստիճանը նրան չէին խանգարում գերի թրքուհիների հարեմ պահելու և իր իսկ հրամանագրերով արգելված՝ հնությունների անվերահսկելի ու անմաքսատուրք առևտուր անել: Լուրեր էին պտտվում, որ Լոնդոնի բանկերում նրա հաշիվներին խելագար գումարներ են կուտակվել: Ես համամիտ էի նրա հանդեպ Սանտա Ռոզայի վերաբերմունքին, բայց հերթական անգամ ստիպված էի համոզվել, որ ամեն հույն երկու հոգի ունի. մեկով ապրում է, մյուսով՝ մեռնում:

Սայիսին Իբրահիմ փաշան Նավարինից շարժվեց դեպի Նավպլիոն: Հույները Սանիում, Սալիա լեռան լանջերին փակեցին նրա ճանապարհը, և կրկին, ինչպես Քրոմիդի տակ, տեսնելով եգիպտական գումարտակների՝ իրենց վրա եկող կուռ զորաշարքերը՝ խուճապահար փախան, բացի հազար մարդուց՝ Դիկայոսի գլխավորությամբ: Այդ անառակ տերտերն ու ծախու մինիստրը ոգևորեց նրանց բոցաշունչ խոսքով, որ Լեոնիդաս արքայի սպարտացիների պես կընկնեն մարտում, բայց փոխարենը ժողովուրդը երգեր կհյուսի նրանց մասին: Ես Թերմոպիլի կիրճի ճակատամարտի մասին ժողովրդական երգեր չէի լսել ու վստահ չէի, թե այդպիսիք գոյություն ունեն, բայց Դիկայոսի մասին սկսեցին երգել նրա մահվանից մի շաբաթ անց: Լսում էի՝ ինչպես է Խարան նրա մասին երգում իր բիլիարդանոցում, բայց կյանքը նրա երգային սխրանքներից ֆանտաստիկ էր: Ինձ պատմեցին, որ մարտից հետո արաբները գտել են Դիկայոսի անգլուխ, այլանդակված մարմինը ու տարել Իբրահիմ փաշային: Նա հրամայել է գտնել գլուխը, ու երբ երկար փնտրտուքից հետո բերել ու տեղն են դրել, մարմինը կանգնած կապել են սյանը, ու եգիպտական առաջնորդը զինվորական պատիվ է տվել մեռած հերոսին:

Ես Սալիայում չէի: Դրանից մի կարճ ժամանակ առաջ կառավարությունն ինձ էր վստահել հետևակային գնդի կազմավորումը, ինչին ձգտում էի երկու տարի, իսկ այդ ընթացքում Իբրահիմ փաշան մոտեցել էր Նավպլիոնին ու հեշտությամբ կարող էր գրավել, երբ հանկարծ շրջվեց դեպի Տրիպոլիս: Հույները դա վերագրում են ինչ-որ հրաշագործ սրբապատկերի

օգնությանը, չնայած հրաշքը պարզ բացատրություն ունի. անգլիացիները Իբրահիմ փաշային սպառնացել էին ռմբակոծել ծովից, եթե համարձակվի գրոհել քաղաքը:

Կոնդուրիոտիսը Լոնդոնի մարդն է: Նրա հաղթանակը Կոլոկոտրոնիսի հանդեպ, որը մեզ ապարդյուն Ալեքսանդր կայսեր օգնությունն էր խոստանում, նշանակում է անգլիական կուսակցության ուժեղացում ու ռուսականի թուլացում, և քանի որ հույներ ու գաղտնիք բառերն անհամատեղելի են, իմ նոր վիճակում խուսափելով Պետերբուրգից ստացած հաղորդագրությունների մասին վտանգավոր հարցերից, դադարեցրի նամակագրությունը Կոստանդիսի հետ: Ինձ հասցեագրված նրա վերջին երկու նամակը մնաց անպատասխան:

Իգնատի Ելովսկի: Ալեքսանդր I կայսեր կամերքարտուղարի մատյանը

Սեպտեմբեր, 1825 թ.

Աշնան կողմ կայսրուհի Ելիզավետա Ալեքսեևնայի առողջական վիճակը վատացավ, դոկտոր Վիլիեն պնդում էր, որ ձմեռն անցկացնի Ֆրանսիայում, Իտալիայում կամ Ռուսաստանի հարավում: Թագավորն ընտրեց ոչ թե Ղրիմը, այլ Տագանռոգը, ու հայտարարեց, որ նրան մենակ չի թողնի: Գարնանը նրանք, քսան տարվա ընթացքում առաջին անգամ, սկսեցին հանդիպել երեկոյան զբոսանքների ժամանակ, իսկ հունիսի կեսին կայացավ կատարյալ հաշտությունը, ինչին նրանց ամուսնության քաջատեղյակներից ոչ ոք չէր սպասում: Կայսրուհին ներեց նրան Մարիա Նարիշկինայի, կայսրը կնոջը՝ գեղեցկատես կավալերգարդ, վաղուց մեռած Օխոտնիկովի համար: Ասենք, առաջ էլ իրեն անպատվված չէր համարում, որ լքված կինը սփոփանք է գտնում ուրիշ տղամարդու գրկում, և դրա համար ո՛չ նրան էր մեղադրում, ո՛չ էլ Օխոտնիկովին, այլ իրեն: Որպես կայսր ներողամիտ չպիտի լիներ այդ կապի հանդեպ, որպեսզի չթուլացներ իրենով մարմնավորվող պետության հիմերը,- բայց մարդը նրա մեջ միշտ հաղթում էր միապետին:

Մենք՝ տղամարդիկս, կանանց պես բնական չենք վերաբերվում

մարմնական սիրուն, և ավելի ուժգին ենք խանդում նրանց իրենց անցյալի համար, քան նրանք մեզ՝ մեր անցյալի: Կարծում եմ՝ այդ զգացումը օտար չէր նաև թագավորին, բայց կարողացավ բարձր լինել դրանից: Ամուսին-ները կրկին միացան, ու պարզվեց, որ առանձին ապրած կյանքը երկուսի համար էլ հանգել էր նույն կետին: Առաջ առանձին-առանձին էին գնում իրենց դստեր գերեզմանին, հիմա միասին էին գնում, նույնպես միասին այցելում էին Սոֆյա Նարիշկինայի շիրմին և այն աղջնակի, որին կայս-րուհին ունեցել էր Օխոտնիկովից: Նրա հայրը թաղված էր դստեր կողքին, նույն մահարձանն էր նրանց վրա՝ կայծակից ճեղքված կաղնի՝ մանկիկն արմատների արանքում:

Թագավորը որոշել էր կնոջից շուտ հասնել Տագանռոգ և տունն անձամբ պատրաստել նրա այցին, որպեսզի առաջին օրվանից որևէ անհարմարավետություն չունենա: Բոլորը հիանում էին նրա հոգատա-ությամբ, չնայած այդ հապճեպ մեկնումն ասես փախուստ լիներ ինչ-որ բանից, որ դատապարտված էր կրելու: Թագավորին ուղեկցում էին միայն սենեկասպասավորը, երկու ծառա, դոկտոր Վիլիեն ու ես: Ճքախումբը, այդ թվում՝ Տարասովն ու Կոստանդիսը, ավելի ուշ էին ժամանելու՝ Ելիզավետա Ալեքսեևնայի ու ֆրեյլինների հետ:

Սեպտեմբերի 1-ի առավոտյան, Ալեքսանդրո-Նևսկի մայրավանքի տաճարում մասնակցելով ժամերգությանը՝ թագավորը լքեց մայրաքաղա-քը: Ուղեկալի մոտ Իլյային հրամայեց կանգ առնել, կանգնեց կառքի մեջ ու երկար նայում էր աշնանային մեգով պատած քաղաքին: Չեմ ասի, թե ար-դեն այն ժամանակ մտքովս անցավ, որ ընդմիշտ է հրաժեշտ տալիս, բայց այլ կերպ էլ չեմ կարող բացատրել անսահման թախծի արտահայտությունը նրա հայացքում: Մոտակա մահվան նախազգացո՞ւմ էր, թե՞ նրա մեջ հա-սունանում էր իշխանության բեռը թոթափելու որոշումը, և գիտեր, որ այլևս երբեք չի վերադառնա Պետերբուրգ: Չգիտեմ, ու ոչ ոք չգիտի, բայց եթե ճիշտ է երկրորդը, ապա այդտեղ վերջին դերը չի խաղացել հունական հար-ցը: Թագավորը նախընտրեց այն թողնել կրտսեր եղբոր խղճին: Հոգնել էր և ոչինչ չէր ուզում, բացի հանգստից:

Տագանռոգ ժամանելու առաջին օրերին իմ մեջ ավելի լավի հույս

արթնացավ: Թագավորը եռանդուն էր, օգնում էր դասավորել կահույքը կայսրուհու սենյակներում և աթոռին կանգնած՝ անձամբ էր մեխ խփում՝ նկարները կախելու համար: Քառասունյոթ տարեկան տղամարդը ծերունի չէ, բայց աթոռակից ցած թռչելով, դեռ մուրճը ձեռքին, ինձ հետ խոսեց կնոջ հանդեպ սիրո մասին և ի մասնավորի ասաց. «Ծեր տարիքում որոշ բաներ մեզ համար պակաս կարևոր չեն, քան երիտասարդ օրերին: Այն ժամանակ՝ որպես առաջին, հիմա՝ որպես վերջին»: Ինձ խոցեց խոնարհությունը, որով նա ընդունել էր պարտությունը:

Քաղաքագլուխ Պապկովը նրան է տրամադրել իր վերջերս բարեկարգված տունը Մեծ Հունական փողոցում, միհարկանի, բայց նկուղային հարկով՝ ծառայանու համար: Շինությունն ութ սենյակ ունի, չհաշված միջանցիկ սրահները, որոնցից երկուսը զբաղեցրել է թագավորը. մեկը հարդասենյակ է ծառայում, երկրորդը՝ աշխատասենյակ ու ննջարան: Մնացած վեցը, չհաշված սրահները, հանձնվել են կայսրուհուն ու նրա ֆրեյլիններին: Ճքախմբի համար բնակարաններ են վարձել հարևանությամբ՝ Փոքր Հունական ու Պետրովյան փողոցներում:

Ելիզավետա Ալեքսեևնան ժամանեց մեկ շաբաթ անց: Թագավորը կնոջը շրջապատեց հոգածությամբ, ջանում էր ժամ առաջ կատարել նրա յուրաքանչյուր ցանկություն: Մի անգամ զբոսնելիս ծովափին մի տեղ էր դուր եկել նրան, Կարանտինի մոտ. ասաց ամուսնուն, որը կարգադրեց այնտեղ այգի գցել: Հիվանդը սկսել էր կենդանություն առնել, դեմքին գույն էր հայտնվել, շրթունքներին՝ ժպիտ: Ամուսիններն իրար հետ այնպես էին, ինչպես հարսանիքին հաջորդած առաջին ամիսներին: Նրանց թաքուն նորապսակներ էին ասում, բայց ես հասկանում էի՝ եթե կյանքի շրջանը փակվել է՝ վերադառնալով իր սկզբին, դրանից ոչ մի լավ բան դուրս գալ չի կարող: Ոչ թե վաղեմի սիրո վերածնունդը, այլ ուժերի անկումն էր նրանց ստիպում ապաստան փնտրել մեկմեկու մեջ: Մարած կրքերը նոր կյանքի լավագույն հիմքը չեն, իսկ ես հիմք ունեի մտածելու, որ թագավորը կնոջ մոտ վերադարձել է հոգով, բայց ոչ մարմնով: Այդ հրեշտակային միությունն ինձ մեկ այլ միության նախաբան էր թվում, որ նրանց կապելու էր երկնքում, և նույնքան արագ, որքան քիչ են պահանջում նրանց մեղավոր

մարմինները՝ այն այստեղ հաստատելու համար:

Հովվերգությունն ավարտվեց, երբ նախաճաշին թագավորը քարի մի փոքր հատիկ գտավ չորահացի մեջ: Եղունգով մտահոգ քչփորեց-հանեց, վեր կացավ, մոտեցավ պատուհանին ու սկսեց զննել լույսի տակ: Ելիզավետա Ալեքսեևնան համոզում էր, որ պետք չէ անհանգստանալ այդպիսի դատարկ բանի համար, բայց նա բավական կոպիտ պատասխանեց ու հրամայեց պարզել, թե ինչ է ու որտեղից է հայտնվել հացի մեջ: Վիլիեն ասաց, որ ամենասովորական քար է, հարցաքննության կանչված հացթուխը մեղա եկավ, որ չի նկատել, բայց նախաճաշն այլևս փչացած էր, թագավորը ոչ մի կերպ չէր կարողանում հանգստանալ: Ինձ վախեցրեց նրա՝ թունավորված լինելու անհիմն վախը: Այնպիսի զգացողություն էր, ասես ուժ չունի հաղթահարելու իր հոգում հաստատված անհիմն սարսափը և հուսահատ կառչում է ամեն ինչից, միայն թե որևէ խելամիտ բացատրություն գտնի դրա համար:

Երեք օր անց սենյակներն անսպասելի մթնեցին քաղաքի գլխին կախված ամպերից: Թագավորն աշխատում էր ու խնդրեց վառել սեղանի մոմը: Կես ժամից ծովից փչող քամին քշեց ամպերը, կրկին լուսավորվեց, բայց մոմը շարունակում էր վառվել: Նա ուշադրություն չէր դարձնում դրան, մինչև որ հիմարություն ունեցա նկատելու, որ ցերեկով մոմ վառելը տանը հանգուցյալ ունենալու նշան է: Ցարսկոյե Սելոյում, որտեղ նրա պատուհանի տակ փարթամացած եղրևանին փակում է ցերեկային լույսի ճանապարհը, մեկ անգամ չէ, որ լսել էր նույնը ու ծիծաղել իմ սնահավատության վրա, իսկ հիմա, գունատվելով, սկսեց փչել մոմը, բայց հուզմունքից հանգցնել չէր կարողանում: Ստիպված ես հանգցրի:

Մի շաբաթ անց հուզված վերադարձավ զբոսանքից, ինձ հրավիրեց իր սենյակ ու հարցրեց. «Հիշո՞ւմ ես Պերմի հաուպտվախտի այն բանսարկուին: Որ ուզում էր ինչ-որ գաղտնիք բացել ինձ»:

«Մոսցեպանովը»,- հուշեցի ազգանունը:

Թագավորը կրկնեց այնպիսի արտահայտությամբ, ասես այն կարող էր ինչ-որ կարևոր բան հայտնել տիրոջ մասին, համարյա թե բացել նրա գաղտնի բնությունը: Հետո, դուռն ամուր փակելով, չնայած առանց այդ էլ

ոչ ոք չէր կարող լսել, ասաց. «Այսօր տեսա այդ մարդուն»:

«Որտե՞ղ»,- ապշեցի ես:

«Իմ ելքին սպասող անբանների ամբոխի մեջ,- պատասխանեց նա:- Ուզում էի մոտանալ, հետո տեսնեմ՝ արդեն չկա»:

Սկսեցի պնդել, որ դա անհնար է, Մոսցեպանովը դատապարտվել է աքսորի ու պետք է Սիբիրում լինի: Նրա մահվան մասին խոսել չէի ուզում: Նախ, կբարձրանար հարցը, թե ինչու ես գիտեմ, իսկ ինքը՝ ոչ, երկրորդ՝ այդպիսի նորությունը նրա մեջ սեփական վախճանի մերձության միտք կարթնացներ, որը հուշում էր ուրվականի հետ հանդիպումը:

«Ո՛չ, ես ճանաչեցի նրան»,- ասաց ինձ ապշեցրած մռայլ համոզվածությամբ:

Եվ ավելացրեց. «Ուրեմն այդ մարդը մեռած է»:

Ես ջանում էի չմատնել զգացումներս, բայց չէի կարող չհիշել, որ, ինչպես վստահեցնում էր Սոկրատեսը, կանխատեսման շնորհը մարդիկ ստանում են շիրմափոսի եզրին:

Մատվեյ Մոսցեպանովը Նատալյա Բաժինային

Սեպտեմբեր, 1825 թ.

Գրիգորի Մաքսիմովիչի մահվանից հետո հիվանդացա, աշնանից տնից դուրս չէի գալիս: Ձմեռը ձյունառատ էր, հիվանդ ոտքով ձյան վրայով երկար ման չես գա: Իսկ մինչև ձյան հալվելը ուրիշ փորձանք եկավ՝ քամի բարձրացավ, ինչպիսին նույնիսկ ծերերը չէին հիշում: Մի անգամ գիշերն արթնացա, լսեմ՝ պատուհանների ապակիները մեկ թրթռում, մեկ դադարում են, ոնց որ կաղ մարդ քայլի՝ մի ոտքին ընկնելով: Դուռը կեռիկով կողպած է, բայց, մեկ է, թխկում է, ճռճվում: Ամուր փակելու համար որոշեցի ուրիշ կեռիկ գցել, ավելի կարճ: Երկուսը միասին չի կարելի՝ կամ մեկը, կամ մյուսը: Առաջին կեռիկը հանեցի, իսկ երկրորդը միանգամից գցել չկարողացա, ու քամին ձեռքիցս պոկեց դուռը: Այնպիսի սարսափելի քամի էր, որ նույնիսկ արցունքներս սկսեցին հոսել: Մեզ մոտ՝ Կազան էր

հասել հյուսիս-արևելքից, Կամայով, Վոլգայով: Ձմռանը հանդարտվել էր, իսկ տաքերի հետ նորից փչեց նույն կողմը՝ դեպի հարավ: Կուրծքս դրանից կսկծում է, շունչս՝ ծանրանում, ասես տան ամբողջ օդը դուրս քաշած լինեն: Մնացած հարցերում, փառք Աստծո, ես ու կինս լավ ենք: Մի բան է վատ. հիշողությունս սկսել է փչանալ: Այս նամակը դեռ ամռանն եմ գրել, բայց մոռացել էի ուղարկել:

Գրիգորի Մոսցեպանովը Նատալյա Բաժինային

Հոկտեմբեր, 1825 թ.

Սատվեյ եղբայրս խոստացել էր, որ իմ մեկնելուց հետո քեզ նամակ կուղարկի: Հենց ինքս էլ գրել ու թողել էի նրան, թե չէ կյանքում մտքով չէր անցնի: Դու խելացի ես, կհասկանաս, թե այս աշուն հյուսիսից ինչ քամի էր հասել Կազան, իսկ գարնանը փչեց հարավ, բայց եղբայրս ոչ մի այլասություն ու փոխաբերություն չի հասկանում, երեխա ժամանակ ոչ մի հանելուկ չէր կարողանում լուծել: Եթե կարողանար, իր խելքով ոչ թե մայորի, այլ գեներալի կոչումով պաշտոնաթող կլիներ:

Մի օր հնար կգտնեմ քեզ ուղարկելու նամակներս, բայց դեռ չի կարելի. փոստում կբռնեն ու կիմանան որտեղ եմ: Պերմի նահանգի ղեկավարության համար իմ անունն ասես կոկորդում մնացած ոսկոր լինի, Սիգովի ու Պլատանովի մասին արդեն չեմ խոսում: Ողջ նամակագրությունն այդ հոգեառների հսկողության տակ է: Ինձ այստեղ էլ կգտնեն, նրանց ձեռքերը երկար են, իսկ ինքնագլուխ օտար պետություն անցնելու համար կարող են տաժանակրության էլ դատապարտել: Առայժմ կգրեմ, կհամարակալեմ ու կպահեմ պայուսակում: Բոլոր նամակները միանգամից կստանաս, ու հենց այնպես մի կարդա, այլ համարների կարգով: Սկզբի համար կպատմեմ, թե ինչպես անհետացա հաուպտվախտից:

Այդ օրը թագավորն անձամբ խոսեց ինձ հետ: Նրա բարությունը տեսնելով՝ ուզում էի բացել իմ գաղտնիքը, երբ հանկարծ շրջվեց ու հեռացավ: Թե ինչ պատահեց նրան, ինչ ճանճ էր կծել՝ հիմա էլ չեմ հասկանում, իսկ այն ժամանակ ասես կացնով գլխիս տվին: Ոտերս թուլացան, նստեցի

գետնին: Ականջներս զնգում են, աչքերս մթնել են, սիրտս թրթռում է հրացանազարկ եղածի պես: Զինվորներն ընկերներիս տարան ներս տարան: Մի կերպ վեր կացա, քարշ եկա դեպի պետքարան ու ճանապարհին հիշեցի, որ դրա հետևը ցանկապատի երկու տախտակ միայն վերի ծայրերով է ամրացրած ծողաններին, իսկ ներքևում ազատ կախված են, մեխերն էլ՝ զուտ ձևի համար: Մի քիչ շարժեցիր՝ ու գնա քեզ համար ուր կուզես: Զինվորներն են այդ անցքը բացել, որ կին բերեն մոտները կամ իրենք առանց թույլտվության դուրս գան: Մի տախտակը քաշեցի, զգացի, որ կարծես ավելի թեթև եմ շնչում, ասես ցանկապատից դենը օդն ուրիշ է: Հետ նայեցի՝ մարդ չկա, բոլորը թագավորին են ճանապարհում: Մի խոսքով, այնպես ստացվեց, որ դուրս եկա, չնայած պետքարանի կողմը գնալիս դրա մասին չէի էլ մտածում: Կարծում եմ՝ զինվորները վախեցել էին այդ անցքի մասին պատմել Չիխաչովին, և նա մինչ օրս գլուխ է կոտրում, թե ուր չքացա: Գիտես՝ բարի հոգի է, ու բոլորը քթից բռնած ման են ածում:

Դուրս սողացի, հետո ոտքերս ինձ իրենք իրենց տարան: Այնտեղ ցանկապատից այն կողմ մի խոր ձորակ կա, որով դեպի Կաման է հոսում մի արշին լայնությամբ Եգոշիխա գետակը: Մի կերպ հասա: Պպզեցի, բռով ջուր եմ առնում, մեկ էլ տեսնեմ՝ տգրուկ: Ուշադիր նայեցի՝ ափին մոտ ուղղակի վխտում են: Մի հինգ հատ բռնեցի, կպցրի ծոծրակիս, ու նրանք ծծեցին վատ արյունը:

Վերևում գոռգոռում են, վազվզում. ինձ են փնտրում: Ձայներից հասկացա, որ արդեն ներքև են իջնում: Ձորակում առաջ մի պետական գործարան կար, պղինձ էին ձուլում, բայց հանքերակը սպառվել էր, հնոցները՝ փլվել, ծածկվել կոթուկներով: Սողացի դրանցից մեկի մեջ, ու թուլությունից քուն եկավ վրաս: Արթնացա, երբ մթնել էր, ամբողջ մարմնով դողում եմ: Սեպտեմբերը վերջանում էր, գիշերներն արդեն սառն էին: Մինչև առավոտ աչք չփակեցի, իսկ լույսը բացվելուն պես Եգոշիխայով հասա Կամա, որտեղ հացահատիկ տեղափոխող բեռնանավերն են կառանվում: Դրանցից երկուսը դատարկ վերադառնում էին Վոլգա: Բանվորները հանձն առան ինձ հասցնել Կազան, բայց փող ուզեցին: Մոտս եղած ամբողջ փողը տվի՝ մտածելով, որ ավելի լավ է միանգամից ամբողջը տալ, թե չէ հետո իրենք

կխլեն ու ինձ էլ ջուրը կգցեն, որ չհայտնեմ կողոպուտի մասին: Իսկ այդպես ամբողջ նավարկության ընթացքում շատ սիրով էինք: Ցամաքային ճանապարհները մարդաշատ են, ուղեկալներ են դրված, իսկ գետը Աստծո ճանապարհ է, ու ոչ ոք տալ, առնել, փակել չի կարող:

Ամբողջ ձմեռ մնացի եղբորս մոտ, իսկ գարնանը սկսեցինք մտածել, թե ուր գնամ: Հարսս սկսել էր ծուռ նայել, երբեմն նաև վատ խոսք էլ կասեր՝ կարծես ոչ ինձ ու ոչ իմ մասին, բայց հասկանալի էր, թե ում: Եղբայրս սկզբում ինձ պաշտպանում էր, բայց հետո սկսեց ականջ դնել նրան: Պառկում են քնելու, պատի մյուս կողմից լսում եմ՝ բո՛ւ-բո՛ւ-բո՛ւ, անուսս է տալիս: Այստեղ հարևաններն էլ սկսեցին հարցուփորձ անել, թե էդ ի՞նչ մարդ է կենում նրանց մոտ, ինչի՞ բակից դուրս չի գալիս: Այդ ժամանակ, ինչպես ամեն գարուն, Դեմիդովի բեռնանավերը երկաթ բարձած հասան Կազան: Եղբայրս խոսեց դրանց պետի հետ, փողով յուղեց, նա էլ ինձ նավ վերցրեց:

Կամիշին քաղաքի մոտ գետ կա՝ Կամիշինկա, Վոլգան է թափվում: Այդ գետով բարձրացանք մինչև Իլովլիա գետակը: Իլովլյայով լողացինք Դոն, Դոնով՝ Ազով, իսկ այնտեղ հենց այդ ժամանակ ծովային նավեր են գալիս Տագանռոգից: Տագանռոգում կոմս Դեմիդովն իր նավատորմիկն ունի. հինգ նավ նրա երկաթը հասցնում են Մարսել և այլ նավահանգիստներ: Բոլոր նավապետները հույներ են, նավաստիները՝ նույնպես: Մեր եղբայր ռուսներին մատների վրա կարելի է հաշվել, դրանք էլ խախոլներ են: Նրանց հետ հասա Տագանռոգ, իսկ թե հետո ինչ եմ անելու՝ չգիտեմ: Իմ բախտից նավապետը Քիոսից էր: Մինչ դեմիդովյան երկաթը տեղափոխում էր Ֆրանսիա, Կարա Ալիի ենիչերիները մորթել էին կնոջն ու երեխաներին: Չգիտեր, որ Կարա Ալին հատուցել է իր գազանության համար: Ես ուրախացրի նրան, պատմեցի, թե այդ հոգեառն ինչպես է խրախճանք սարքել իր ֆլագմանական նավի վրա, փաշաներին հրավիրել, սպաներին, ու նոր էին նստել տախտակամածին, որ երաժշտության տակ փլավ ճաշակեն, վրան շարբաթ խմեն, երկու հունական բրանդեր էր մոտեցել, երկու կողմից սեղմել էին թուրքական նավն ու պայթեցրել: Երեք հազար թուրք խեղդվեց, կամ ջուրը քշեց նրանց կտորները: Կարա Ալիին դուրս քաշեցին ափ, բայց շուտով վերքերից շունչը փչեց:

Նավապետը հարցրեց, թե ինչ արհեստ գիտեմ, ու Տագանռոգում ինձ ուղեկցեց մի հույն ցորնավաճառի մոտ: Նրան ուսուցիչ էր պետք երեխաների համար: Ես քո ազգանունը տվեցի, իսկ անունը պահեցի իմը, բայց նա գլխի ընկավ, որ փախստական եմ, ու որոշեց խնայել ինձ վրա. ռոճիկ չնշանակեց, բայց փոխարենը փաստաթուղթ սարքեց իմ՝ իբր Դոնն ընկածի փոխարեն:

Սեղանի ու գիշերակացի դիմաց սկսեցի ամեն ինչից մի քիչ սովորեցնել նրա երկու երեխաներին՝ թվաբանություն, ֆրանսերեն, պատմություն ու աշխարհագրություն: Չասեմ, թե ամեն ինչ յուղումեղրի պես էր, բայց սոված չէի մնում: Տանտերը գոհ էր, իսկ երեխաները սիրեցին բարության համար, ինչպես բոլոր երեխաները, որոնց դաս էի տալիս Օխտայի վառոդի գործարանի դպրոցում ու Վիյսկի դեմիդովյան ուսումնարանում: Դու այդ սերը կարող էիր քո Ֆեդենկայով տեսնել: Ապրում էի երկնքի թռչունների նման, ապագայի մասին չէի մտածում: Ձմեռը կանցկացնեմ, հետո կորոշենք՝ ինչ եմ անելու: Ու հանկարծ ամեն ինչ շուռ եկավ: Լսում եմ՝ փոքրիկ շքախմբով մեզ մոտ է ժամանել թագավոր կայսր Ալեքսանդր Պավլովիչը: Սա ինչ է, եթե ոչ ճակատագիր: Ինձ բերեցին Պերմ, նա՝ իմ հետևից, ես՝ Տագանռոգ, նա էլ այստեղ: Ձմեռն այստեղ է անցկացնելու կնոջ հետ՝ նրա առողջության պատճառով: Իմանալով դրա մասին՝ մտածեցի, որ վերին կամքով կարծես ինչ-որ բան պիտի կատարվի ինձ հետ, ու որոշեցի գործել: Առավոտյան գնացի այն տան մոտ, որտեղ թագավորն իջևանել էր, ու նրան նայելու հավաքված մյուս մարդկանց հետ սկսեցի սպասել՝ երբ է դուրս գալու: Կառքը դարպասի մոտ է, կառապանը՝ նստիքին: Ամեն ինչից երևում է՝ ուր որ է դուրս կգա:

Կանգնել՝ սպասում եմ: Մտքերս թռչկոտում են, երազանքների գիրկն եմ ընկել,- ու բաց թողեցի թագավորի դուրս գալու պահը: Մեկ էլ տեսնեմ՝ արդեն կառք է նստում: Նստեց, նայեց շուրջը և ամբոխի մեջ տեսավ ինձ: Ուղիղ դեմքիս է նայում, չի փախցնում հայացքը, բայց ոչ այնպես, որ հասկանում են՝ ինչ-որ տեղ տեսել են այդ մարդուն, այլ որ՝ հիշել չեն կարողանում: Ձգում եմ՝ հիշեց և աչքերին չի հավատում: Կկոցեց՝ երևի հուսալով, որ աչքին եմ երևում, որ հիմա կրկին կբարձրացնի կոպերն ու ես չեմ լինի:

Իսկ ես այդ ընթացքում վախից պպզել եմ կանգնածների հետևը: Թագավորը բացեց աչքերը, նորից նայեց և ինձ չտեսնելով՝ հանգստացավ ու կառապանին կարգադրեց շարժվել: Միայն այդ ժամանակ ուշքի եկա ու սկսեցի ինձ մեղադրել փոքրոգության համար:

Այուս օրը գնացի նույն տեղը. ուզում էի մոտենալ, ոտքերն ընկնել ու պատմել ողջ ճշմարտությունը, բայց մեկը դարպասի մոտ բռնեց ձեռքս:

«Մոսցեպա՞նով»,- հարցնում է:

Նա ինձ ճանաչեց, ես՝ իրեն: Պերմում թագավորի հետ էր, հաուպտվախտում, երբ նա խոսում էր հետս: Բոյով, նիհար, բայց մատները չանչերի պես են: Մի կերպ պոկվեցի:

Ցերեկը տանտերը եկավ, պատմում է. «Ոստիկանապետին հրամայվել է փնտրել փախստակ կալանավորի, մեզ մոտ՝ Տագանռոգում է թաքնվում: Ահա նշանները. բարձրահասակ, ոսկրոտ, գլխին՝ ճաղատություն, աչքերը՝ կապույտ, քայլելիս կաղում է մի ոտքին»: Սիրտս փորս ընկավ, իսկ նա ասում է. «Գնա նավահանգիստ, մերոնցից մի նավապետի խնդրել եմ քեզ համար»:

Տվեց նրա և նավի անունը: Ուզում էի գրել, բայց ասաց, որ խելացի մարդիկ այդպիսի բաները թղթին չեն գրում, այլ՝ սրտում: Ծնորհակալություն հայտնեցի բարության համար, հավաքեցի կապոցս, երեխաներին պատվիրեցի չմոռանալ դասերս ու գնացի նավահանգիստ: Գտա այդ նավապետին, որն ինձ նավահանգստի պահակախմբից թաքցրեց նավամբարում, ուր ցորեն էր բարձած: Չորս օր անց դուրս եկանք նավահանգստից, ու սկսեցի ազատ ման գալ նավի մեջ: Իսկ երբ արդեն անցել էինք Բոսֆորն ու լողում էինք հունական ափերի երկարությամբ, վաղ առավոտյան տախտակամածին կանգնած աղ ու քամի էի շնչում, նայում ծովին, մշուշապատ լեռներին, ու որպեսզի լրիվ վայելեմ երջանկությունս՝ շշնջում էի ինքս ինձ, որ՝ հա՛, ոչ թե ուրիշ մեկը, այլ ես՝ Գրիգորի Մոսցեպանովս եմ կապույտի ու լույսի մեջ լողում նրանց կողքով, երբ կարող էի մեռնել Սիբիրում՝ չիմանալով, որ այսպիսի գեղեցկություն կա աշխարհում:

Արևի շողերը անդրադառնում էին ջրի հայելուց ու բարձրանում վեր՝ իրար մոտեցնելով ծովն ու երկինքը: Աչքերդ կկոցես՝ չես էլ տարբերի՝

որը որտեղ է: Ձայները պտտվում էին նավի հետևում: Մեկ անհետանում էին արևի փայլի մեջ, մեկ նորից դուրս թռչում՝ ոսկելույսը փետուրներին, ու մտածում էի, որ եթե Տերն իր զորավոր աջով պահպանել է ինձ բոլոր դժբախտություններից, ուրեմն իմ ուղին ես չեմ գծել:

Հենց նոր էր ծնվել այդ միտքը, երբ նավաստիներից մեկը կանգնելով կողքիս՝ զարմանք հայտնեց, որ ծովն այնքան խաղաղ է, երկինքը՝ մաքուր, չնայած ամեն տարի այդ ժամանակ մեծ փոթորիկներ են լինում: Ոչինչ չասացի, բայց սիրտս սկսեց արագ խփել: Եթե ուղին մաքուր է, ուրեմն դա իմ ուղին է:

Լողում էինք դեպի Մարսել, ճանապարհին մտնելու էինք Նավպլիոն, որ հիմա հույների մայրաքաղաքն է, և Լիվոռնո: Ժամանակ կար որոշելու, թե որտեղ խարիսխ գցեմ, բայց երկար մտածելու բան չէր: Նավպլիոնում ափ իջա: Տագանռոգի բարերարս վերջնահաշիվն արծաթով էր տվել, եղբորս ուղարկածից էլ դեռ ինչ-որ բան մնացել էր քսակում: Քաղաքում հրացան առա, վառոդաման, փնտրեցի-գտա գնդապետ Ֆաբիեին, ում մասին կարդացել էի «Ռուսսկի ինվալիդում», զեկուցեցի՝ ով եմ, որտեղից, ինչ աստիճան ունեմ, ինչ ճակատամարտերի եմ մասնակցել:

«Ծառայության ընդունեք ձեզ մոտ,- ասում եմ,- չեք զղջա: Մենք՝ ռուսներս, էությամբ զինվորական մարդիկ ենք»:

Իսկ նա՝ ինձ. «Դա այն դեպքում, երբ ցարը ձեզ ուղարկում է պատերազմի: Առանց նրա կարգադրության կռիվ չեք գնում: Մորեայում ձեզնից մարդ չկա»:

Նստել է դիմացս, քարին. առանց սերթուկի, միտակ շապիկով: Ծոգ է: Օձիքը՝ արձակ, կրծքին՝ շղթայիկ՝ արծաթե մեդալյոնով, իսկ խաչ չի երևում: Ամեն երկրորդ ֆրանսիացին անաստված է, չասացի, որ վճռել եմ կռվել հանուն հավատի, ստեցի, թե դեռ մինչև Բոնապարտի հետ պատերազմը Կուտուզովի հետ ռազմարշավի եմ գնացել Վալախիա, ու ենիչերիները սպանել են ընկերոջս, ուզում եմ արյան վրեժ առնել:

Նա ասաց, որ այստեղ ենիչերիներ չկան, ընկերոջ վրեժը լուծելու համար պետք է գնալ Ստամբուլ, և շտապել է պետք, որովհետև լուրեր կան, որ նրանք մահու չափ ձանձրացրել են սուլթանին, շուտով բոլորին կուղարկի

գրողի ծոցը կամ կկոտորի, ինչպես Սեհմեդ Ալին Եգիպտոսում՝ մամլուքներին:

Ֆաբիեի մոտ տարբեր ազգերի կամավորներ են ծառայում, բայց ինձ վերցնել չցանկացավ: Իբր իմ տարիքում կամ պիտի գեներալ լինես, կամ նստես տանը, ասենք, գնդում թնդանոթներ էլ չունի, հետևակային գունդ է, իմ ոտքով սարերում դժվար է: Բորոդինոյում նռնակն իր ոտնաթաթն էլ է փչացրել, ինձնից վատ կաղում է ու տարիքով էլ ինձ հավասար չի: Գլուխը ճերմակել է, բայց ինքը բարեկազմ է, ձիգ, ոնց որ մոմը: Մենակ բոյն է կարճ:

«Գրագիր չե՞ք վերցնի»,- հարցնում եմ:

Ծիծաղեց. «Դուք հունարեն չգիտեք, իսկ ձեր ֆրանսերենով՝ միայն շանը մոտ կանչես, այն էլ՝ ոսկորը ձեռքիդ, թե չէ չի հասկանա»:

Ինչքան խնդրեցի, պատասխանը մեկն էր. ո՛չ: Հեռացա, մի ուրիշ քարի նստեցի, մի կտոր հաց հանեցի, աղի փոխարեն վառոդ ցանեցի վրան, կծեցի, ծամում եմ: Տեսնեմ՝ Ֆաբիեն ինձ է նայում: Մի որպե չանցած՝ մոտեցավ, թե. «Ձեզ վերցնում եմ գունդ, բայց սպայական պաշտոն չեմ տա»:

Մի պատառ պոկեց իմ հացից, դրեց բերանն ու մեծագույն հաճույքից աչքերը փակեց: «Մերոնցից ոչ մեկը,- ասում է,- այսպես չի անում, ես էլ մոռացել էի: Իսկ ջահել ժամանակ արշավանքներին ինչքա՛ն ենք տանջվել առանց աղի, նույնիսկ ձիու միսը աղ անելու հնար չունեինք»:

Մի խոսքով, նրա գնդում եմ, հելլենասերների ջոկատում: Դեռ արշավանքի չենք եղել, կանգնած ենք Նավպլիոնի մոտակա մի գյուղում: Գյուղը համարյա դատարկ է, տղամարդիկ կա՛մ պատերազմում են, կա՛մ նավաստիներ, իսկ կանանցից ու երեխաներից շատերը մահացել են ծաղկախտից: Հիվանդությունը թուրքերն են բերել, ինչպես պարսիկները մեզ մոտ խոլերա են բերում: Տները փոքրիկ են, առանց պատուհանների, փոխարենը՝ քարաշեն: Փայտոջիլները պատերի մեջ թաքնվելու հնար չունեն ու չկան: Ուտիճներ էլ չկան, իսկ ահա լվերը հարյուրներով են վազ տալիս վրայովս, ոնց որ շան վրայով, քորվում եմ, բայց քորած տեղերը չեն թարախակալում: Ծովային օդը ուզածդ վերք լավացնում է սուրբ ջրի պես:

Կյանքը կարծես թե վատ չի, բայց զինվորները վատն են: Հրամաններին չեն ենթարկվում, շարքն ինչ է՝ չգիտեն ու չեն էլ ուզում իմանալ, օրերով

թուղթ են խաղում, իսկ շաբաթ օրվանից երկուշաբթի ժամապահ կարգելու մարդ չկա. բոլորը քաղաքում են, թրև են գալիս պանդոկներում ու անառականոցներում: Ֆաբիեն տառապում է նրանց հետ: Հրացանները չեն մաքրում, հագուստը չեն լվանում և իրենք էլ չեն լողանում, բայց հոտ ես քաշում՝ կեղտահոտ չկա: Այդպիսի երկիր է:

Ֆաբիեն կարգադրեց հունարեն սովորել և ուսուցիչ նշանակեց Գրիշա Ցիկուրիսին: Օդեսայից է, ռուսերեն խոսում է, ինչպես ես ու դու: Իպսիլանտիի հետ Վալախիայում է եղել, Ֆարմակիի ջոկատում, ոտքը ջարդել ու հետ է ընկել ինչ-որ վանքի ճանապարհին, որտեղ թուրքերը դարան էին սարքել, ու ողջ է մնացել: Պատմում էր, թե ինչպես է մի ոտքի կանգնած՝ ընկերներին ճանապարհել վերջին արշավանքին, ու հանկարծ Ֆարմակիի թիկունքի հետևից տեսել՝ ինչպես են հեռանում: Ասում է՝ նրա աջ թևատակին հրեշտակներ էին ճախրում, իսկ ձախի տակով երևում էին հետերիստները, իրենց ողջ ջոկատը, ու բոլորի գլխին՝ նահատակի պսակ: Գուցե և հավատայի, բայց շատ է խմում:

Երեկ հունարեն բառեր էինք սովորում ու գինի խմում: Պատուհաններին ապակի չկա, պատերով մողեսներ են վերուվար անում, օդում սոճու, ծաղկափոշու հոտ է կանգնած: Գինին ծորուն է, սև, թանձր, հույները խեժ են խառնում: Գինին նրանց զվարթացնում է, բայց Ցիկուրիսը, որ երկար ժամանակ ապրել է Ռուսաստանում, մեզ պես սովորել է տխրել գինուց: Խմում ու պատմում էր, թե Ֆարմակիի հետ ինչպես են Վալախիայում գերի վերցրել մի ծեր աղայի: Տեղի հույներն ասել էին, որ գազանություններ է արել իրենց հանդեպ: Օրինակ տալու համար Ֆարմակին Ցիկուրիսին հրամայել էր ոչ թե սրատել նրան, այլ գնդակահարել, ինչպես կարգն է: Ցիկուրիսն իր մարդկանցից չորսին շարք էր կանգնեցրել, հրամայում է. «Լիցքավորե՛լ... Պատրա՛ստ»: Հանկարծ աղան բարձրացնում է ձեռքը. «Սպասեք,- խնդրում է:- Վերջին ցանկություն ունեմ»: Ցիկուրիսը ձեռքով արեց իր մարդկանց, հրացաններն իջեցրին: Աղան ասում է. «Ես հին զինվոր եմ, քառասուն տարի ծառայել եմ սուլթանին: Թույլ տուր իմ հրամանով մեռնեմ»: Ցիկուրիսը շփոթվեց, չգիտեր ինչ պատասխանի: Վերջապես գլուխն օրորեց, թե՝ ո՛չ:

«Ուրախ կլինեի,- շարունակում է,- կատարելու խնդրանքը, բայց հասկանում էի՝ չի կարելի»:

«Ինչո՞ւ»,- հարցնում եմ:

«Նա, - բացատրեց Ցիկուրիսը,- նույնիսկ մահով էր ուզում բարձրացնել իրեն: Չորս հարյուր տարի հրամայել են մեզ, պետք է վերջ տալ դրան: «Նշա՛ն առ»,- գոռում եմ: Ու ծերունին սկսեց լաց լինել: Նայում եմ ու զգում, որ իմ աչքերն էլ թրջվեցին: Կանգնել ենք դեմ դիմաց, երկուսս էլ արցունքի մեջ կորած: Նրա համար իր անզորությունն է դառը, ինձ համար՝ իմ ուժը: Նա կյանքի համար է լալիս, որ ավարտվում է, ես՝ հոգուս, որի մաքրությունը տալիս եմ ընդհանուր գործին»:

Ճիշտ է, այդպիսի ուրիշ հույների այստեղ չեմ հանդիպել: Խիզախ ժողովուրդ են ու հավատի մեջ էլ՝ հաստատուն, բայց զգայուն չեն: Ահա մի դեպք, որով կարող ես դատել նրանց մասին: Երկու նավաստի հարբած վիճել ու կռվել էին: Հետո մեկը քնել էր, մյուսը բռնել էր նրա կնոջը, բերանը փակել, կապկպել, գցել նավակը, հասցրել մալթյան մի նավ ու նավապետին առաջարկել, որ առնի: Մալթացիները հույներից գերի թրքուհիներ են գնում, իսկ թուրքերից՝ հույն կանանց, ու բոլորին վաճառում Ափրիկայում: Նավապետը, ապրանքը զննելով, հայտարարել էր, թե բոլոր հույն կանայք տգեղ են, սա՝ նույնպես, մեծ գին չի տա: Նավաստին վերցրել էր ինչ տվել էին, ու խոստացել, որ մեկին էլ կբերի, ավելի լավը: Հետ էր դառել, տարել սեփական կնոջն ու ավելի թանկ ծախել նույն գնորդին: Գոհ վերադարձել էր իր նավն ու հանգիստ խղճով պառկել քնելու, բայց առավոտյան արթնանալով՝ հիշել էր անցած օրվա արածը, որը նրան այնքան լավ բան չէր թվացել, որքան հարբած ժամանակ: Արթնացրել էր ընկերոջը, ամեն ինչ խոստովանել և ասել. «Քո կնոջ համար էսքան են տվել, իմի համար՝ էսքան: Դու իմ ընկերն ես, ազնիվ կլինի, փողը հավասար կիսենք»: Ընկերն ուրախությամբ ընդունել էր իր բաժինն ու էլի պառկել էր քնելու, բայց մյուսը չէր թողել: Երկուսով նորից նավակ էին նստել, հասել նույն նավը, հարձակվել մալթացիների վրա, խլել կանանց ու հրացաններից հաղթական կրակոցներ արձակելով՝ ափ իջել: Երեկոյան տեսա ինչպես են այդ երջանիկ ամուսնական զույգերը տոնում իրենց վերամիավորումը. հայթայթած

փողերով պանդոկում ափսեներ էին առել, կանայք երգելով դրանք փշրում էին հատակին, իսկ տղամարդիկ բոբիկացած պարում էին խեցիների վրա՝ չվախենալով, որ ոտքերը կվնասեն:

Մի ջարդած ափսեի համար ամուսինդ քեզ ծեծել էր, իսկ նրանք քսան հատ ջարդեցին ու՝ ոչինչ: Փոխարենը՝ եթե դու ամուսնանայիր հույնի հետ, այդպիսի կնոջը ոչ մի գնով չէր ծախի: Քեզ նմանների մասին այստեղ ասում են՝ ճուտիկի թևի պես ճերմակ: Մալթացի նավապետն իրավացի է. այստեղի կանայք գեղեցկությամբ աչքի չեն ընկնում, կարող ես ինձ չխանդել: Քթերը քո քթի պես են, իսկ մնացած ամեն ինչը, որ դու ունես և ինչի համար քեզ սիրում եմ, չկա:

Ինձ համար չանհանգստանաս, կուշտ եմ ու գինի շատ չեմ խմում, միայն Ցիկուրիսի հետ, թե չէ լեզուն չի սովորեցնի: Բանտում թութուն չէին տալիս, ու էդ ժամանակից ծխելը թողել եմ, առավոտները հազը չի խեղդում: Գլխավոր սնունդն էստեղ ձուկն է, ես այնքան մեծ սիրահար չեմ, բայց ստամոքսիս օգտակար է: Ծովի ձկան ճարպը քիչ է, գետի ձկան պես չի, ու հեշտ էլ մարսվում է: Հասարակ ժողովուրդը այծի միս է ուտում, բայց ես, եթե ծայրահեղ վիճակ չի, դրանից զզվում եմ: Ոչխար պահում են բրդի համար, իսկ խոզերը համարյա լրիվ մորթել են, որովհետև եթե հանկարծ թուրքերը հարձակվեն, այծ ու ոչխար կարելի է քշել սարերը, իսկ խոզերի հետ հեռուն չես գնա: Մեղրը առաջ Աթենքի մոտի Հիմետ սարից էին բերում, բայց հիմա քիչ է ու թանկ. մեղվանոցներն ավերվել են: Բոված սիսեռ եմ ուտում, փողոցներում են ծախում, տա՛ք. ծախողները թիթեղյա վառարանները վրաներն են շրջում: Համարյա ամեն օր նարինջ եմ ուտում, չնայած այստեղ փոքր են ու առանձնապես քաղցր չեն: Փոխարենը՝ ընկույզն ու պիստակը շատ լավն են, սիրում եմ: Բրինձ են ծախում, լոբի, կապույտ կաղամբ, հազար, սպանախ, ծնեբեկ, բայց չէի ասի, թե էժան է: Հացն էլ էժան չի: Էժան է ձիթապտուղն ու դրա ձեթը, մնացածին ի՞նչ գներ են ջարդում, մեռոն չկա երեսներին: Առևտրի մեջ սրանց ջիուդն էլ չի դիմանա, բայց ես Աստծո օգնությամբ դիմանում եմ: Ասենք, վաղուց շուկա չեմ գնացել: Հելլենասերները երկու հույն են վարձել, բոլորի համար ընդհանուր եփութափ են անում: Դրանից բացի, ամեն մեկը իր համար առնում է իր

ճաշակով, բայց ինձ ընդհանուրն էլ հերիք է: Դու էլ գիտես, քմահաճ չեմ:

Ճիշտ է, ոջիլը շատ է, բայց խորն եմ քնում, ոչ թե ինչպես եղբորս մոտ, Կազանում: Հայրս ու մայրս երազիս չեն գալիս, չեն կշտամբում, որ իրենց գերեզմանին հացի փշուրներ չեմ գցել: Երազներ տեսնում եմ, բայց հիշել չեմ կարողանում, հիշում եմ միայն զարմանքս երազի մեջ, որ, ահա, երազ եմ տեսնում, բայց սարսափելի չի, ոչ մեկը չի հետապնդում, չի խեղդում, դանակը կոկորդիս դրած՝ չի պահանջում, որ տամ ինչ չունեմ, իսկ եթե ունեմ էլ, տալ չի կարելի, թե չէ այլևս չես զարթնի:

Վերջացրի նամակս ու սովորության համաձայն ուզում էի կնքել մատանիով, մոռանալով, որ կիշտիմցի խառնակչի՝ Կլիմենտի Կոսոլապովի մոտ է: Միասին Եկատերինբուրգի բանտում էինք. Սիգովն ու Պլատոնովը նրան դրդել էին խեղդել կամ մորթել ինձ, որ ոտքի տակ չընկնեմ: Կնիքով մատանիս տեսավ, ասում է՝ ինձ տուր: Ինչքան էլ համոզեցի, որ կնիքի տառերն իր անունի հետ չեն բռնում, ստիպված էի տալ:

Մատանին ոչ մի մատին չեկավ, բացի ճկույթից, բայց, մեկ է, գոհ էր: Իսկ երբ իմացավ, որ ճշտի համար եմ տառապում, ընդհանրապես լավացավ հետս: Ինքն էլ սիրում էր կռիվ տալ դատավորների հետ: Գրագետ մարդ էր: Լեռնային կանոնագիրքը նրանցից վատ չգիտեր, իսկ Ավետարանը՝ ավելի լավ, ցույց էր տալիս՝ որտեղ մեկը մյուսին չի բռնում: Մոռացել էր միայն, որ Աստված պատվիրել է ուրիշի ունեցածը չվերցնել:

Ստորև գրում եմ պաչիկ ու շրջանակի մեջ առնում:

Չե՞ս մոռացել՝ ինչի համար:

Մումիան

Իգնատի Ելովսկի: Ալեքսանդր I կայսեր կամեր քարտուղարի մատյանը

Հոկտեմբեր-դեկտեմբեր, 1825 թ.

Մի բան որ սոսնձված է, նոր չի: Ամուսնությունը, որի հիմքում ոչ թե հոգիների և մարմինների ներդաշնակությունն է, այլ փոխադարձ ներումը, քիչ ուրախություն էր բերում թագավորին: Նա հաճույքով ընդունեց Նովոռոսիայի գեներալ-նահանգապետ, կոմս Վորոնցովի՝ Ղրիմ այցելելու հրավերը: Ելիզավետա Ալեքսեևնան իր առողջական վիճակով չէր կարող ուղեկցել ամուսնուն, բայց ըմբռնումով մոտեցավ փոքրիկ մի ճամփորդությամբ ցրվելու նրա ցանկությանը: Երթուղին նախատեսված էր 17 օրվա համար: Վորոնցովը հավաստիացրեց, որ մինչև աշնանային անձրևներն ու ցրտերը կհասցնենք վերադառնալ Տագանռոգ:

Դուրս եկանք սեպտեմբերի 20-ին, 24-ին Սիմֆերոպոլում էինք. այնտեղից թաթարական ձիերով հասանք Գուրզուֆ, իսկ Բայդարյան դարպասների մոտ կրկին կառք նստեցինք: Օրեանդան, Ալուշտան, Լիվադիան երևացին-անցան որպես միօրինակ, չնայած և վառ տպավորությունների շարք, բայց Կորեիզը դուրս ընկավ ընդհանուր կարգից: Այնտեղ մի քանի ժամ կանգ առանք իշխանուհի Գոլիցինայի կալվածքում: Չնայած նրա և ամուսնու շնորհազրկմանը, ավելի ճիշտ, հենց այդ պատճառով, թագավորը առանձնակի ուշադիր էր նրանց հանդեպ, շրջեց կալվածքում և անկեղծորեն, ոչ միայն քաղաքավարությունից, գովեց տանտիրուհուն, որը մերժել էր արքունիքի գայթակղությունները հանուն բնության հետ ներդաշնակ ու խաղաղ կյանքի: Ճաշից հրաժարվեց: Իշխանուհու հետ մտան

տուն, իսկ մենք՝ շքախմբի անդամներս, մնացինք բակում: Օրը շոգ էր, հյուրասենյակի պատուհանները՝ կրնկաբաց, փակված միայն թեթև շղարշավարագույրներով: Դրանց հետևից գդալների զնգոց, անհասկանալի խոսակցության ձայներ էին լսվում: Հետո, աթոռի տեղաշարժվելու աղմուկի հետ հասավ թագավորի ձայնը. «Իսկ հիմա ինձ տարեք նրա մոտ...»:

Ես չէի մոռացել Կրիդների նամակը ու միանգամից հասկացա՝ ում մասին է խոսքը: Թե ինչ պատասխանեց իշխանուհին, լսել չկարողացա, բայց մեկնելիս թագավորը նրա հետ նույնքան բարեհամբույր էր, որքան այցելության սկզբում: Միայն ինձ և ուրիշ ոչ մեկին էր տեսանելի, որ զայրացած է վրան: Պատճառը պարզվեց ավելի ուշ:

Հոկտեմբերի 2-ի գիշերն անցկացրինք Բալակլավայում: Քնելուց առաջ թագավորը Արտաքին գործերի մինիստրությանն ուղղված մի հեռագիր թելադրեց, որը ֆելդեգերն առավոտյան պիտի տաներ Պետերբուրգ, և այդ ընթացքում հիշեց, թե ինչպես են մինիստրության արխիվում իրեն ցույց տվել Կուչում խանի նամակը Բորիս Գոդունովին:

«Երմակից ջախջախված Կուչումը,- պատմեց,- Սիբիրից փախել էր նողայական տափաստանները, որտեղ քոչվորություն էր անում մինչև կյանքի վերջը: Նողայական խաները ցարից սամույրի մորթի, դիպակ, հրացաններ էին խնդրում, իսկ ծերուկ Կուչումը միայն մի երազանք ուներ. ուզում էր տեսնելու ապակի ունենալ: Պարզ ասած՝ ակնոց»:

«Որ Ղուրան կարդա»,- գլխի ընկա ես և իրավացի էի:

«Օր ծերության ուրիշ ի՞նչ է պետք մարդուն, բացի լավ, հարմար ակնոցից»,- ասաց թագավորը:

«Լավ գրադարան»,- համարձակվեցի լրացնել:

«Ճիշտ է»,- համաձայնեց նա:

Եվ ավելացրեց. «Իսկ դու կլինես իմ գրադարանավարը»:

Երջանկացած դուրս եկա նրա սենյակից, իսկ առավոտյան ամեն ինչ փուլ եկավ: Սկսվեց նրանից, որ մեկնեցինք Ֆիոլենտ հրվանդան, որտեղ, ծովի վրա բարձր կախված՝ Գեորգիևյան վանքն էր. այնտեղ կապելլաներ են պատրաստում Սևծովյան նավատորմի համար: Հակառակ Վորոնցովի հավաստիացումների՝ եղանակն անսպասելի փչացավ, սառցաքամի փչեց:

Առավոտը հրաշալի արևոտ օր էր խոստանում, թագավորը շինել չէր հագել: Ցույց չտվեց, որ մրսում է, բայց, իհարկե, սառել էր: Սահվան վախը նրա մեջ զուգորդվում էր իր առողջության հանդեպ թեթևամիտ վերաբերմունքին: Պետք էր կա՛մ շտապ մեկնել, կա՛մ մտնել սեղանատուն՝ խմիչքով տաքանալու, բայց նրան անհարգալից թվաց մերժել վանահոր՝ կեֆալոնցի հույն Ագաթանգեղոսի, քարանձավային տաճարը տեսնելու հրավերը: Այնտեղ՝ ժայռափոր անձավում, քամուն փոխարինեցին ցուրտն ու խոնավությունը: Եթե այդ հույնի փոխարեն ռուս մարդ լիներ, թագավորը հաստատ պակաս նրբանկատ կվարվեր:

Ծքախումբը, ներառյալ՝ ես, հիմարություն էինք ունեցել նրա օրինակով թեթև հագնվել: Միայն Կոստանդիսը, որին օտար է ընկերության ոգին, շինելով էր: «Ձեր շինելն առաջարկեք թագավորին»,- շշնջացի նրան, բայց խնդրանքս մերժվեց՝ պատճառաբանությամբ, թե իբր շինելը թագավորի հագով չի, ու դրանով շատ վատ տեսք կունենա: Չպնդեցի, ինչի համար հետագայում մեկ անգամ չէ, որ զղջացել եմ: Հոգնեցուցիչ անցումները թուլացրել էին թագավորին, և հիվանդության առաջին նախանշանը ստամոքսի խանգարումն էր: Սևաստոպոլում Տարասովին խնդրեց բրնձի խաշուկ պատրաստել, ինչպես անցած տարվա տենդի ժամանակ, որը սրունքի բորբոքման հետևանք էր: Տարասովը կատարեց նրա ցանկությունը և դրանից հետո իրեն չէր կարողանում ներել: Սրսածության նշաններ էր տեսել, բայց լրիվ աչքաթող էր արել, որ դա կարող է ոչ թե ցրտառություն, այլ ղրիմյան տենդ լինել: Վարակը կարող էր դուրս գալ փորլուծով: Բրնձի խաշուկն այն պահեց մարմնում:

Երբ հասանք Բախչիսարայ, թագավորն արդեն անառողջ էր, բայց ուշադրություն չդարձրեց: Հաջորդ օրը, դեռ լույսը չբացված, արթնացրեց ինձ, կարգադրեց արագ հագնվել ու դուրս գալ բակ: Հինգ րոպեից արդեն հոկտեմբերի ցուրտ ու անձրևոտ առավոտվա պաղության մեջ էի: Արևելքը նոր էր սկսել վարդագունել: Սանդղամուտի տակ երկու կառեթ էր կանգնած, կառապանները՝ նստիքին: Առաջինում նստած էին թագավորն ու Վորոնցովի հատուկ հանձնարարություններով պաշտոնյա Մելիքովը, որը մեզ դիմավորել էր Սիմֆերոպոլում և ուղեկցում էր Ղրիմում ճամփորդե-

լիս, երկրորդում՝ սեսեկապանը՝ ուտելիքով ու ջրի՝ ծղոտահյուս շշերով, վատ եղանակի համար պատրաստած անձրևանոցներով ու թիկնոցներով: Նստեցի նրա կողքին: Իլյան մտրակեց ձիերին, մենք դուրս եկանք քաղաքից և բլուրների ու կաղնու պուրակների արանքով ձգվող քարած ճանապարհով սլացանք մշուշից բարձրացող արևին ընդառաջ:

Որքան հասկացա՝ թագավորն այդ ուղևորությունը Տարասովից գաղտնի էր ձեռնարկել, որ խուսափի նախօրեի հիվանդության մասին հիշեցումներից ու ողջամտության կոչերից: Թե ուր ենք գնում՝ չգիտեի և նույնիսկ չէի կռահում, բայց չէի ուզում սպասավորի մոտ ցույց տալ անտեղյակությունս ու ձևացնում էի, թե ուղևորության նպատակը հայտնի է ինձ: Նման դեպքերում հույսս նրա վրա է, որ խնդիրը ինքնին կլուծվի: Այդպես եղավ նաև այս անգամ. առաջին իսկ կանգառին թագավորն ինձ հայտնեց երթուղու վերջնակետը՝ Կարասու-բազար: Պարզվում է՝ Կորեիզում իմացել էր, որ բարոնուհի Կրիդների աճյունով դագաղը դեռ Ակ-Կայայի ստորոտում գտնվող այդ փոքրիկ քաղաքում է: Կալվածքի հոգսերն ու ընկճված ավետարանչական գաղութաբնակների համար մտահոգությունը իշխանուհուն խանգարել էին նրան տեղափոխել Կորեիզ և անվանական տապանասալով ու արժանավայել մահարձանով ամփոփել իր ու ամուսնու համար պատրաստված դամբարանում, բայց թագավորին երդվել էր, որ մինչև ձմեռ կանի:

Բախչիսարայից Կարասու-բազար ութսուն վերստ է, ճանապարհը տևեց համարյա չորս ժամ: Այդ ընթացքում եղանակը չլավացավ: Մելիքովը, որ հայ է, մի վանականի բերեց հայկական վանքից, որը ցույց տվեց գերեզմանոցի ճանապարհը, մեզ ուղեկցեց մատուռ, որի սալած հատակի տակ, գնդապետ Ճիցի և կնոջ կողքին դրել էին բարոնուհու դագաղը, բանալիով բացեց ժանգոտած երկաթե դռան կողպեքն ու ոչ առանց դժվարության՝ դուռը: Թագավորը ներս չմտավ՝ փակ շինության մեջ դիակի ժահահոտից զգուշանալով, թե ինչ-որ այլ պատճառով,- բայց քսան րոպե կամ կես ժամ կանգնեց մուտքի մոտ: Ոչ թե կնոջ հարկաբաժնում, այլ այստեղ էր նրա սիրտը: Փառք Աստծո, որ այս անգամ շինելով էր, բայց այն չէր պաշտպանում թափանցող քամուց, որի պոռթկումների տակ խոնարհվում

էին կիսալքված գերեզմանոցը խեղդած առյուծատամի դեղնավուն ծաղիկները: Ծուրջն ամեն ինչ ոչ թե անդորրություն, այլ լքում էր շնչում: Փոխարենը՝ աջից, որպես ամպերից հառնած երկնային քաղաքի պարիսպ, ճերմակին էր տալիս Ակ-Կայան՝ մեռնող բարոնուհու վերջին սփոփանքը: Ստածեցի, որ նրա cancer-ը պատահական չէր: Քաղցկեղը սնվում է չունեցածն ունենալու ցանկությամբ, իսկ նա գիտեր՝ իրեն ինչն է պակասում:

Ճանապարհին բոլորս քամուց պաշտպանված էինք թիկնոցների տակ, իսկ հիմա միայն շինելներով էինք: Լրիվ սառել էի ու վախենում էի թագավորի առողջության համար, բայց նա ամբողջովին թաղվել էր իր մտքերի մեջ: Մելիքովի դեմքը ճերմակել էր վախից, որ թագավորը կհիվանդանա, և ինքը՝ Մելիքովը կլինի դրա մեղավորը:

Վերջապես մոտեցա թագավորին և ասացի. «Մեկնելու ժամանակն է: Դուք մոտենում եք վեցերորդ տասնամյակին և չեք կարող ապավինել այն ուժերին, որ քսան տարեկանում են ունենում»:

Նշան արեց, որ չխանգարեմ: Ես հետ քաշվեցի, և այդ րոպեներին վճռվեց նրա ճակատագիրը: Բախչիսարայի ճանապարհին բողոքեց դողէրոցքից, իսկ երբ կշտամբեցի անշրջահայացության համար, առարկեց, թե գերեզմանոցում բոլորովին չի մրսել՝ ջերմանալով ոգու աղոթքով, որը սովորել էր հանգուցյալից: Ավելի ուշ այնպիսի զգացողություն ունեի, որ պառավ վհուկը նրան քաշել է իր հետևից:

Ղրիմից վերադառնալիս հիվանդությունն ակնհայտ դարձավ բոլորին, և ամենավերջում՝ իրեն: Մարիուպոլում, գիշերակացին, Կոստանդիսն ականջիս ասաց. «Հանկարծահաս տենդի բռնկում է»:

«Ինչո՞ւ,- հարցրի,- Ֆիոլենտում նրան չտվիք ձեր շինելը»:

Պատասխանեց, որ դա ոչինչ չէր փոխի, և ես պետք է ընդունեի, որ իրավացի է: Այդ օրերին ինձ պատած տարատեսակ զգացումների մեջ միայն զարմանքն էր բացակայում:

Մարիուպոլում արթնացա, երբ դեռ մութ էր: Աշնանն ուշ է լուսանում: Սենյակում կիսախավար էր, պատուհանից այն կողմ պատի պես կանգնած էր գիշերը: Մթան մեջ պատուհանը չէր երևում, բայց հետո, քիչ-քիչ գունատվող երկնքի ֆոնին սկսեց արտածվել շրջանակների խաչահատումը,

ինչպես հողում քայքայվող մեռյալի մարմնից ժամանակի հետ կմախքն է հայտնվում: Այդ պատկերն անմիջապես համեմատության մեջ դրեցի մարդկային կյանքի հետ՝ պատկերացնելով այն փափուկ, բայց ներսում՝ ոսկրամիջուկով, որն իմաստ ու ձև է տալիս նրան: Այդ միջուկը ճակատագիրն է, որն ավելի ու ավելի է ցուցանում իրեն, որքան խարխլվում է մեր մարմինն ու ավելի քիչ կյանք է մնում մեզ:

Հագնվելով՝ գնացի թագավորի մոտ: Գիշերն ավելի էր վատացել, ջերմությունը բարձր էր, բայց մանկան համառությամբ հրաժարվում էր դեղորայքից: Տարասովը համարյա ծնկաչոք էր խնդրում, բայց՝ ապարդյուն: Համաձայնեց միայն մի գավաթ պունշի և Մարիուպոլի ու Տագանռոգի միջև վերջին հարյուր վերստին թույլ տվեց իրեն ծածկել արջի մորթով:

Տագանռոգում ընթրիքին նստեց կայսրուհու կողքին, բայց ոչինչ չկերավ, բացի ցորնաջրից: Քնելուց առաջ Ավետարան կարդաց, իսկ առավոտյան, անկողնուց վեր կենալով՝ ուշաթափվեց: Պառկեցրին, ուշքի եկավ, կրկին փորձեց վեր կենալ ու նորից չկարողացավ, բայց օրվա ընթացքում, չնայած Տարասովի ու Վիլիեի բողոքներին, էլի մի քանի անգամ փորձեց ոտքի ելնել: Երեկոյան կողմ թողեց այդ փորձերն ու այլևս չկրկնեց:

Հաջորդ օրերին Վիլիեն, Տարասովը, Կոստանդիսն ու Ելիզավետա Ալեքսեևնան, մեկ միասին, մեկ հերթով, նրան համոզում էին, որ պետք է արյուն թողնել, բայց ոչնչի չհասան: Թագավորը կատաղության մեջ էր ընկնում, իսկ երբ զայրանալու ուժ չէր մնում, շրջվում էր դեպի պատն ու չէր ցանկանում խոսել որևէ մեկի հետ: Տզրուկները նույնպես մերժեց:

Նշանակո՞ւմ է դա, արդյոք, որ ուզում էր մեռնել:

Չեմ կարծում:

Հիվանդությունը սկզբում այնքան լուրջ չէր համարում, որ լսեր բժիշկներին, հաջորդող շաբաթներին մտքերը շփոթ էին, բայց դժվար թե նրա առաջ կանգներ հարցը, թե արժի՞ արդյոք ապրել: Մեռնողներն այդպիսի հարցեր չեն ունենում: Հաստատ գիտեմ մի բան. նա երազում էր հանգստի մասին ոչ թե երկնքում, այլ երկրի վրա: Աշուշված ուղեղում այդ ցանկությունը վերածվել էր այն կյանքի պատկերներին, որի պակասն ունեցել էր ողջ կյանքում:

Մի անգամ մատի շարժումով կանչեց ինձ: Մոտ վազեցի ու լսեցի նրա շշուկը. «Հիշո՞ւմ ես Օրեանդան»:

Դեմքին մի արտահայտություն հայտնվեց, որը երազկոտ կկոչեի, եթե խոսքը մեռնողի մասին չլիներ:

«Դրախտային վայր է,- շշնջաց:- Այնտեղ ինձ համար պալատ կկառուցեն, ու մենակ կապրեմ... Լրիվ մենակ... Իսկ դու... Դու կլինես իմ գրադարանավարը»:

Այդպիսի հանգամանքներում անհարկի ուրախություն զգացի: Ուրեմն չի մոռացել Բալակլավայի մեր խոսակցությունը և իր մենությունն ուզում է կիսել ինձ հետ: Միայն ինձ հետ: Ինձ հաշիվ էի տալիս, որ այդ ամենը չի լինի, նույնիսկ եթե լավանա, բայց երևակայությունս բորբոքվել էր ինչպես ափիոնից: Միայն կամային ջանքով հաջողվեց զսպել:

Սենյակում ոչ ոք չկար՝ մեզնից բացի, բոլորը ցրվել էին ինչ-որ կարևոր գործերով: Օգտվելով դրանից՝ հանդգնորեն համբուրեցի թագավորի ճակատը, և նրա տապն այրեց ինձ:

Հանդգնություն ասելով՝ նկատի ունեմ բացառապես այն, որ այդպես վարվելու իրավունք չունեի, ուրիշ ոչինչ: Նա հեռանում էր դեպի խավարը, ու ես համբուրեցի նրան, ինչպես սիրող մայրն է համբուրում գիշերն արթնացած երեխային. բայց դժվար թե զգաց շրթունքներիս հպումը: Աչքերը փակ էին: Զգույշ դուրս եկա նրա սնարին վառվող մոմի լույսի շրջանակից, քաշվեցի դեպի պատուհանն ու լաց եղա:

Հաջորդ օրը հիվանդի վիճակն ավելի վատացավ, որոշեցին քահանա կանչել՝ հաղորդության համար: Տարասովն այդպիսի որոշումը վաղաժամ էր համարում, բայց Վիլիեն համոզեց՝ ասելով, որ գուցե թագավորը վախենա և համաձայնի տզրուկներին կամ դեղերին: Ելիզավետա Ալեքսեևնան իր վրա վերցրեց դա ամուսնուն հայտնելու ոչ թեթև առաքելությունը: Լսեցի, ինչպես նստելով կողքին՝ ասաց. «Եթե դուք հրաժարվում եք բժշկական դարմաններից, ցանկանում եմ առաջարկել իմ դեղը: Ուզո՞ւմ եք իմանալ՝ ինչպիսի»:

«Ասե՛ք»,- դժգոհությամբ համաձայնեց նա:

«Խորհուրդ եմ տալիս,- մեղմությամբ շարունակեց կայսրուհին,- դի-

մել հոգևոր ապաքինման, որն օգնում է բոլոր տառապյալներին ու բարեպատեհ ելք բերում ծանրագույն հիվանդություններին»:

«Ձեզ ով ասաց, որ այնպիսի վիճակում եմ, երբ դարման է անհրաժեշտ»,- հարցրեց թագավորը:

«Վիլիեն, Տարասովն ու Կոստանդիսը»,- խոստովանեց կայսրուհին:

Երեքին էլ կանչեցին:

«Կարծում եք՝ հիվանդությունն այդքան խորացե՞լ է»,- նրանց դիմեց թագավորը:

Վիլիեն ու Տարասովը վախեցան ու փորձեցին դուրս պրծնել նեղ վիճակից, բայց Կոստանդիսը քաջություն ունեցավ ճշմարտությունը բացելու:

Նրան լսելով՝ թագավորը կնոջն ասաց. «Ծնորհակալ եմ, բարեկա՛մս: Հրամայե՛ք, ես պատրաստ եմ»:

Խոստովանությունից ու հաղորդությունից հետո միանգամայն հանգստացավ, Տերը հոգին թեթևացրել էր առանձնապես տանջող երկու մտքից՝ որ մեղավոր է հոր մահվան համար, ու որ Սորեա է թողել Իբրահիմ փաշայի բանակը: Խիղճը դադարեց տանջել նրան, չքացավ նաև մահվան վախը: Այլևս չէր բղավում բժիշկների վրա, չէր գալարվում, չէր տրտնջում: Հանգիստ դեղ էր խմում, թույլ տվեց ծոծրակին խարանաճանճ դնել, բայց տզրուկները մեկընդմիշտ մերժեց:

Անձրևներից ու ծովի մոտիկությունից տան օդը հագեցած էր խոնավությամբ: Վառարանները չէին հաղթահարում: Սավանները փոխում էին օրը երկու անգամ, և դրանք արագորեն խոնավանում էին: Թագավորն այդ ամենը չէր նկատում, ինչպես չէր նկատում ցերեկվա ու գիշերվա հերթափոխումը:

Բժիշկները քունը չէին առնում, իսկ Ելիզավետա Ալեքսեևնան, իր առողջությամբ, չէր կարող արթուն մնալ գիշերները: Մի գիշեր մինչև առավոտ նստեցի թագավորի մոտ: Անզգայությունից դուրս գալով՝ աղոթքներ ու սաղմոսներ էր մրմնջում, բայց 91-րդ սաղմոսը ոչ մի անգամ չհնչեց: Երկար տարիների ընթացքում առաջին անգամ՝ խաղաղություն գտնելու համար չդիմեց դրան: Հիմա դրա պահանջը չուներ:

Այդ օրվանից ավելի ու ավելի հաճախ էր թաղվում ուշագնացության

մեջ, ի վերջո դադարեց խոսել, իսկ նոյեմբերի 19-ի ժամը 10.52-ին հավիտենության գիրկն անցավ: Ելիզավետա Ալեքսեևնան, ծնկի գալով, իր թաշկինակով կապեց ծնոտը: Նկատեցի, որ ձեռքերը չեն դողում:

Նա զգաց՝ ինչպես եմ նայում իրեն, ու հետո հարցրեց. «Ձեզ զարմացրե՞ց իմ հանգստությունը»:

Լռեցի՝ չհամարձակվելով հաստատել նրա ասածն ու չցանկանալով հերքել:

«Հանգիստ եմ, քանզի մեր բաժանումը երկար չի տևի: Ծուտով կհետևեմ նրան»,- բացատրեց Ելիզավետա Ալեքսեևնան, բայց ես մնացի այն կարծիքին, որ չի կարողացել ո՛չ ներել ամուսնուն, ո՛չ կրկին սիրել:

Մենությունը ողջ կյանքում թագավորի ճակատագիրն էր եղել, բայց մտքովս չէր անցնի, որ ավելի սարսափելի կերպ է առնելու: Ինչպես Ալեքսանդր Մեծը Բաբելոնում՝ թագավորը զրկված էր նրանից, ինչը չեն մերժում նույնիսկ վերջին մուրացկանին:

Ըստ այստեղ հասնող լուրերի՝ Կոնստանտին Պավլովիչն ու Նիկոլայ Պավլովիչը ոչ մի կերպ չեն կարողանում պայմանավորվել, թե իրենցից որին բաժին կընկնի գահը. այդ խնդրի հետևում բոլորը մոռացել էին հանգուցյալ թագավորին: Արդեն երկրորդ ամիսն է՝ նրա անթաղ մարմինը Տագանռոգում է, մայրաքաղաքից երկու հազար վերստ հեռավորության վրա, ու վախենամ, որ այնքան էլ շուտ չի հասնի գերեզման: Ծքախմբի անդամների մեծ մասը տարբեր պատրվակներով փախել է Պետերբուրգ, այդ թվում և Վիլիեն, բայց Տարասովն ու Կոստանդիսը դեռ մնում են: Ելիզավետա Ալեքսեևնայի խնդրանքով, որը ցանկանում էր համենայն դեպս երկու բժիշկներին էլ ունենալ կողքին, նրանք տեղափոխվեցին Մեծ Հունականի տուն: Ես տեղափոխվեցի նրանցից հետո: Ինձ թույլատրվել է զբաղեցնել կայսրուհու մեկնած ֆրեյլիններից մեկի հարկաբաժինը: Երեքս էլ օգտվում ենք թագավորի նախկին հարդասենյակից, իսկ սրահներն ու սենյակը, որտեղ նա վախճանվեց, դատարկ են: Մեզնից բացի, տանն ապրում են նաև Ելիզավետա Ալեքսեևնայի երկու ֆրեյլինները, իսկ նկուղային հարկում լեյբ-կառապան Իլյա Բայկովն ու սակավաթիվ ծառաներն են:

Գիշերները ցուրտ է անում, անքուն պառկում եմ, լսում՝ խնձորենիներ-

րի սառած ճյուղերն ինչպես են այգում զնգում քամու տակ: Սենյակները սառն են, վառարանները վատ են վառվում, փայտը՝ թաց, ծխատարները՝ չմաքրած: Նույնիսկ քամոտ եղանակին ծուխը վատ է քաշում: Վառարանների կեսի կափարիչները վատ են փակվում, ամբողջ տաքությունը դուրս է թռչում: Հարդասենյակում շարունակ ջուր չկա, սավանները փոխում են շաբաթը մեկ, այն էլ, եթե հիշեցնես, ճաշն ու ընթրիքը ժամանակին չեն տալիս: Ընդհանուր սեղանի շուրջը հավաքվում ենք հազվադեպ, ավելի հաճախ մենակ ենք ճաշում:

Տարասովը չի կարողանում ներել իրեն, որ Բախչիսարայում լուծողականի փոխարեն բրնձի խաշուկ է տվել թագավորին: Կասկածում եմ, որ խիղճը ավելի քիչ է տանջում, քան դրա մասին խոսում է, բայց դա նրան իրավունք է տալիս փակվելու իր սենյակում ու խմելու:

Ելիզավետա Ալեքսեևնան Ավետարան է կարդում, երկար ճաշում է, իսկ դադարներին երկար նամակներ է գրում մորը կամ թուղթ խաղում ֆրեյլիների հետ: Կոստանդիսը Տագանռոգում հարազատներ ու գիմնազիական ընկերներ ունի, երեկոները հյուր է գնում նրանց, հաճախ գիշերում դրսում ու նախաճաշին ներկայանում գունատ, դեմքին՝ չափն անցնելու հետքեր:

Դեկտեմբերի 1-ին աճյունը տեղափոխեցին տեղիս հունական Ալեքսանդրյան վանք: Այդ օրվանից անցավ ևս երեք շաբաթ, սակայն Պետերբուրգ մեկնելու կարգադրություն դեռ չկա, և հայտնի չէ՝ երբ կլինի: Թագավորի մահվանից ամսից ավելի է անցել, մոտենում են Ծննդյան տոները, ձմեռային ճանապարհը պնդացել է, բայց այդ ամբողջ ընթացքում ֆելդեգեր չի ժամանել մայրաքաղաքից: Ցարական մասունքների ճակատագիրն այնտեղ ոչ մեկին չի հետաքրքրում:

Նոր Ագամեմնոնը, Նապոլեոնին հաղթողը, միապետերից մեծագույնն ու երջանկագույնը պառկած է սառը խցում: Դագաղը բաց է, երևում է անհմուտ զմռսելուց սևացած դեմքը: Էպոլետներով համազգեստը վրան նայվում է, ինչպես բալագանային եթովպական գեներալի հագին, շքանշանների աստղերն ասես գունավոր թղթից են կտրել: Վանականներն իրենց լեզվով հերթով աղոթք են անում նրա վրա, բայց դեմքերն անտար-

բեր են, ձայների մեջ՝ ոչ մի կենդանի հույզ:

Այն օրվանից, երբ դագաղը տաճարից տեղափոխեցին այստեղ, Ելիզավետա Ալեքսեևևան միայն երկու անգամ է այցելել ամուսնուն: Ես մենակ գալիս եմ ամեն օր, աղոթում, կարդում նրա սիրած 91-րդ սաղմոսը, պարզապես նստում կողքին: Գրուզինոյում թագավորն Արակչեևին ասում էր, որ մումիա դառնալու վտանգն իրեն չի սպառնում: Աստված այլ կերպ դատեց: Տագանռոգում կիրառվել էին եգիպտական քրմերի մեթոդները, որոնք Ալեքսանդր Մեծի մարմինը պահպանել էին երեք հարյուրամյակ, բայց այստեղ նրանց հմտությունը չունեին: Սարսափով եմ հիշում, թե ինչպես անցավ զմռսումը: Թագավորի մահվանից մեկ օր անց մտա նրա սենյակ ու տեսա, որ սեղանին տարածված մերկ մարմինը հանձնվել է չորս կայազորային բուժակների իշխանությանը. նրանք խոհանոցի դանակներով մսի կտորներ էին փրցնում մարմնից, բացված խոռոչները լցնում սպիրտի մեջ եփած խոտաբույսերով, հետո բարուրում երիզաշերտերով: Փորոտին, ուղեղն ու սիրտը արդեն հանվել ու պահվել էին կախովի կողպեքով արծաթե անոթում, որ մեծ շաքարաման էր հիշեցնում: Հատակն ամբողջովին ծածկված էր հապճեպ մաքրած արյան բծերով, սապոգների ներբանները կպչում էին:

Սրտխառնոց առաջացնող միտքը, թե ինչ են անելու թագավորի մարմնից հատած մսի կտորները, հետո եկավ: Այդ պահին դրա մասին չէի մտածում: Թագավորի մարմինն ամբողջովին գրավել էր սեղանը, Վիլիեն հերձման արդյունքների մասին եզրակացությունը ստիպված էր կազմել լուսամուտագոգին: Տրտնջաց, որ շքախմբի անդամները սենյակից դուրս չեն գալիս, ծառայանին դեսուդեն է ցրվել, նույնիսկ սովորական լաթերը չեն հերիքում, չխոսելով արդեն մաքուր սավանների ու սրբիչների մասին: Նրա օգնականները՝ շոտլանդացի Դոբբերտն ու Ռեյնոլդը, կարմրած ու քրտնած դեմքերով, ժիլետներն արձակած, սիգարներն ատամների արանքում, խոտաբույսեր էին եփում զմռսման համար: Բուխարու կրակին դրված էր մրոտ կաթսան, որի պարունակությունը խառնում էին գդալներով:

Թագավորի մարմնից անջատած գլուխը վերածվել էր գանգի: Մինչև մերկ ոսկորը քերած՝ այն դեռ չէր վերադարձվել տեղն ու դրված էր աթո-

ռին: Հենց իմ հայտնվելու պահին Կոստանդիսը սկսեց վրան քաշել մաշկը՝ մազերով: Կարկամած հետևում էի, թե ինչպես է անում՝ անզոր դուրս գալու կամ գոնե փակելու աչքերս: Սենյակում անտանելի հեղձուկ էր, բոլոր պատուհաններն ու նույնիսկ օդանցքները պինդ փակել էին: Ճթճթում էին հաստ պատրույգներով եկեղեցական մոմերը, բայց ո՛չ սիգարների ծխին խառնված հալված մոմի հոտը, ո՛չ խոտաբույսերի եռացող խաշուկի կախարդիչ բույրը չէին կարող ցրել մեռած մարմնի թանձր հոտը: Հասցրի նկատել, որ երբ մաշկը ձգվեց գանգի վրա, թագավորի դեմքի արտահայտությունը փոխվեց, ու միայն դրանից հետո կորցրի գիտակցությունս:

Ուշքի եկա միջանցիկ սրահի բազմոցին պառկած: Կոստանդիսը նստած էր կողքիս ու շոշափում էր զարկերակս: Նկատելով, որ ուշքի եմ եկել՝ արդարացավ, որ չի հաջողվել անհրաժեշտ քանակի սպիրտ ճարել, և իր մեղքը չի, եթե հանգուցյալի դեմքը սևանա:

Ծառլ-Անտուան Ֆաբիե: Ապստամբի օրագիրը

Մարտ, 1826 թ.

Փետրվարին իմ գնդով փորձում էի ճեղքել-հասնել պաշարված Միսոլոնգի, բայց Իբրահիմ փաշան ստիպեց նահանջել: Եգիպտացիների հետ մարտում 32 զինվոր ու վեց հելլենասեր զոհվեցին: Մարմինների մեծ մասը չհաջողվեց դուրս բերել, բայց ինձ մխիթարում եմ նրանով, որ նրանք առանց պղծելու հողին կհանձնվեն: Իբրահիմ փաշան ո՛չ մեռյալների կտրած քթեր ու ականջներ է ուղարկում Ստամբուլ, ո՛չ կտրած գլուխներ: Նրա հաղթանակներն այդպիսի ապացույցների կարիք չունեն:

Քյութահյա Ռեշիդ փաշան մի շաբաթ առաջ գրավեց Միսոլոնգին: Վերջին պաշտպանները սպանված են, կանայք ու երեխաները՝ վաճառված ստրկության: Սպարտակը, Սքանդերբեգը, Վիլհելմ Թելը, Բենջամեն Ֆրանկլինը, որոնց անունները կրում էին ամրոցի աշտարակները, անզոր գտնվեցին պաշարողական հրետանու դեմ: Քյութահյան պատրաստվում է 10-հազարանոց բանակով գնալ Աթենքի վրա, և մենք ուժ չունենք նրան խանգարելու:

Մեր հրամանատարները կռվշտում են իրար հետ, նրանց ջոկատները սակավամարդ են, ու եղածն էլ չի կարող դուրս գալ արշավանքի, քանի որ սնունդ չեն ճարում Իբրահիմ փաշայի ամայացրած Մորեայում: Իմ գունդը բացառություն չէ: Կարող ենք, իհարկե, մթերք վերցնել հետներս, բայց դրա համար այն պետք է գնել, իսկ կառավարությունը փող չունի նույնիսկ նավաստիների ռոճիկի համար: Նավերի անձնակազմերը փախչում են, նավերից շատերն ի վիճակի չեն դուրս գալու նավահանգստից:

Կոնստանտին Կոստանդիս: Թափառիկ բժշկի նոթերը

Մայիս, 1826 թ.

Այսօր դարձյալ, արդեն որերորդ անգամ, երազ էր եկել հանգուցյալ թագավորը, և կրկին, ինչպես ինձ հետ պատահում է քնի մեջ, թե արթնացման առաջին րոպեներին, տառապագին փորձում էի լուծել հետևյալ հարցը՝ տարածվո՞ւմ է, արդյոք, ճակատագրի իշխանությունը մեռած մարմնի վրա, թե՞ մահը վերջինն է, որ հայտնվում է նրան: Եթե երկրորդը ճիշտ է, ուրեմն դիակի բախտը սահմանվում է նրանց ճակատագրով, ովքեր այն այդպես և ոչ այլ կերպ են տնօրինել:

Թագավորի մարմինը երկու ամսից ավելի անթաղ մնաց հունական Ալեքսանդրյան վանքում: Միայն հունվարի վերջին, Տագանռոգի նավաշինարաններում պատրաստած դիակառքով, որին սգո սթարներով չորս ձի էր լծված, տեղափոխեցին Պետերբուրգ:

Լեյբ-կառապան Իլյա Բայկովը, որքան հիշում եմ՝ առաջին անգամ, կապույտ կաֆտանը փոխարինել էր սևով: Ծքախմբի,- պետք է ասել՝ բավական համեստ,- հեծյալները նույնպես սգազգեստ էին, ինչպես Ելովսկին: Մենք սառը բաժանվեցինք, և նա հետևեց թագավորին վերջին երկրային ուղևորության ընթացքում:

Տարասովը, որպեսզի վերջնականապես հարբեցողության չտրվի, ավելի վաղ էր վերադարձել տուն, կնոջ մոտ, բայց ես ստիպված էի մնալ Ելիզավետա Ալեքսեևնայի հետ: Իր առողջությամբ՝ նրա համար վտանգավոր էր ձմռանը ոչ միայն ուղեկցել ամուսնուն, այլև տեղից շարժվել: Սպա-

սելով տաքերն ընկնեն, նա ապրիլին Տագանռոգից մեկնեց Պետերբուրգ, բայց նույնիսկ Մոսկվա չհասավ ու վախճանվեց ճանապարհին: Նրա մահվան լուրը ստացա մինչև նավարկության սկզբին Նավպլիոն մեկնելս, որտեղ որպես բժիշկ մտա Ֆաբիեի ջոկատը: Ավելի ճիշտ՝ գունդը, միակ կանոնավոր գունդը հունական բանակում: Ձմռանը կանգնած էին Աթենքում, բայց երբ թուրքական զորքերը սկսեցին մոտենալ քաղաքին, Ֆաբիեն գունդը վերատեղակայել էր Նավպլիոնում, որ չկործանի անհույս պաշարման մեջ: Դա իմ գալուց կարճ ժամանակ առաջ էր արվել:

Հինգ տարի չէինք հանդիպել և ամբողջ գիշեր զրուցեցինք: Ֆաբիեն բացատրեց, թե ինչու չէր պատասխանում նամակներիս: Պատճառներն ինձ համոզիչ չթվացին, բայց ներեցի նրան: Լուսաբացին, երբ ռեցինայի երրորդ, թե չորրորդ շշից հետո, որի խեժահոտը ինձ համար հայրենիքի բույր էր, դուրս եկանք այգի և ուս ուսի կանգնած՝ երկու շիթով ոռոգեցինք առանց այն էլ ցողից խոնավացած խոտը: Եվ ես լսեցի Ֆաբիեի պատմությունը սքանչելի անգլուհու՝ նրա սրտի տիրուհու մասին: Բաժանվելիս, ի հուշ իրենց սիրո և որպես նոր հանդիպման գրավական, կինը նրան ցայլքի մազերից մի փունջ էր նվիրել: Ֆաբիեն ծոցից հանեց ու ինձ ցույց տվեց մի սրտաձև արծաթե մեդալիոն, որ խաչի փոխարեն շղթայով կախված էր կրծքին: Ներսում սիրեցյալի հրաժեշտի նվերն էր: Չասացի, որ այդպիսի կանանցից ավելի լավ է հեռու մնալ:

Վերադարձանք տուն: Հիմա չեմ հիշում ինչի հետ կապված՝ Ֆաբիեն պատմեց իր գնդում ծառայող մի սերբից արդեն լսածս պատմությունը Միլոշ Օբրենովիչի մասին: Այդ իշխանը, հաշտության պայմանագիր կնքելով թուրքերի հետ, տեղափոխվել էր թուրքական փաշայի արքունիք ու տեսել, թե ենիչերիներն ինչպես են պարկերում տեղավորում նրանց գլուխները, ովքեր հաշտվել չէին ցանկացել: «Տե՛ս, իշխա՛ն, որ քո գլխի հետ էլ նույնը չպատահի»,- հյուրին զգուշացրել էր փաշան: «Իմ գլուխը վաղուց է պարկի մեջ,- պատասխանել էր Միլոշը:- Ուսերիս ուրիշինն եմ կրում»:

Հին ընկերների գիշերային զրույցի ժամանակ, հնգամյա բաժանումից հետո այդպիսի պատմություններ հենց այնպես չեն արվում: Պատրաստվեցի լսելու շարունակությունը, և այն չուշացավ: «Ռուսաստանում,

Իսպանիայում մի անգամ չէ, որ նայել եմ մահվան աչքերին,- ամփոփեց Ֆաբիեն,- բայց նույնն եմ մնացել, իսկ հիմա իմ գլուխն իմը չի: Ասես մեռել եմ, և իմ մարմնում ուրիշ մարդ է հաստատվել: Նրա ուղեղում մտքեր են ծնվում, որպիսիք երբեք չեմ ունեցե, և այնպիսի բաներ է անում, որոնց համար նախկինը կգնդակահարեր նրան որպես հանցագործի»:

Իգնատի Ելովսկի: Ալեքսանդր I կայսեր կամերքարտուղարի մատյանը

Հունիս, 1826 թ.

«Վեպն ավարտված է, սկսվում է Ռուսաստանի պատմությունը»,- ասել է Մետեռնիխը, երբ նրան հայտնել են թագավորի մահվան լուրը, սակայն որոշ վեպերում ավելի շատ ճշմարտություն կա, քան հուշերում ու պատմաբանների աշխատություններում:

«Ո՛չ սառն էր, ո՛չ տաք»,- իբր մերձավորների շրջանում ավագ եղբոր մասին այդպես է արտահայտվել Նիկոլայ Պավլովիչը,- սակայն ուժգին կիրքը, որն ընդունված է հարգել անկախ նրանից, թե ինչ նպատակով և ում է ուղղված, հաճախ որևէ մեկին կյանքից դուրս մղելու ցանկություն է թաքցնում: Իմ թագավորը նման բան չուներ: Նրանցից չէր, ում Ավետարանը միշտ բացվում է «թուր» բառի վրա:

Նա մշտապես ջանում էր կանգնել ծայրահեղությունների միջև, ամենուր և ամեն ինչում փնտրում էր միջին գիծը: Նրանց,- իսկ այդպիսիք մեծամասնություն են,- ովքեր օժտված չեն հոգու նրբությամբ և չարի ու բարու բնատուր չափով, դա շարքային երեսպաշտություն էր թվում: Պրոտեոսը նրա ամենաանմեղ մականունն էր: Իրար դեմ մարտնչող կուսակցությունները նրա մեջ ո՛չ հաստատուն կողմնակից էին գտնում, ո՛չ բացահայտ հակառակորդ, իսկ այդպիսի դեպքերում կուսակցական մարդը միշտ պատրաստի բառեր ունի՝ երկերեսանություն, կեղծավորություն, խորամանկություն: Կուսակցությունների կարծիքներն ամրագրվում են կուսակցականների գրած գրքերում և կրկնվում պատմագիրների կողմից: Դրան խանգարելն իմ ուժից վեր է:

Պետերբուրգում ժողովուրդը խոսում է, թե ցարը չի մահացել, այլ նավով անցել է ծովից այն կողմ, նրա փոխարեն ինչ-որ զինվոր, թե լաքեյ է թաղված: Կազանյան Աստվածամոր եկեղեցում հուղարկավորման կարգ կատարելիս նա բաց դագաղում էր և այնքան նման չէր իրեն, որ այդպիսի խոսակցություններ չէին կարող չծագել: Սոտիկից նայելիս տպավորություն էր ստեղծվում, որ մարմնին ուրիշի գլուխ են կպցրել: Անհնար էր հավատալ, որ դիմափոշու հաստ շերտի տակից թափանցող եթովպական դեմքով այդ սարսափելի ծերունին պայծառափայլագույն վեհապետ Ալեքսանդր Օրհնյալն է:

Արակչեևի կալվածքում՝ Գրուզինոյում, պատի ժամացույցն այնպես է լարված, որ օրը միայն մի անգամ է խփում՝ ժամը 10.52-ին, երբ կանգ առավ թագավորի սիրտը: Ժամացույցի մեխանիզմն ամեն օր երեք զարկով տանտիրոջ սրտում սեր է արթնացնում առ հանգուցյալը: Ինչպես իր հիմնած ռազմական բնակավայրերում՝ նա ամեն ինչ ժամանակացույցով է անում. նախաճաշում է, գնում արտաքնոց, սիրում հանգուցյալ թագավորին: Մենք վարժվում ենք ամեն ժամ, նույնիսկ ավելի հաճախ հնչող ժամացույցի զարկերին, և գիշերն էլ այն չի արթնացնում մեզ, բայց օրը մեկ զարկը լրիվ ուրիշ բան է:

Դժվար թե Օձը գնար դրան, եթե թագավորը ոչ թե առավոտյան, այլ գիշերվա երկուսին կամ երեքին վախճանվեր: Նրա սերը չէր դիմանա ամեն գիշերվա արթնացումներին:

Ես հաճախ եմ մտածում՝ արդյո՞ք թագավորի մահն անխուսափելի էր: Ճատերը շատ են ուզում հավատալ դրան, որպեսզի խուսափեն կատարվածի պատասխանատվությունից, բայց մեզ հարմար է անխուսափելի համարել այն, ինչից չի հաջողվել խուսափել: Այդպես ավելի հեշտ է հաշտվել դրա հետ:

Մենք վարժվել ենք մահվան մասին մտածել որպես մեր մարմինը խոցող նետի,- բայց այն մեր մեջ կարող է փշի պես ապրել, որը փտելով՝ աստիճանաբար թունավորում է մեր արյունը: Մենք աչքաթող ենք անում, որ գալիքը մեզ կործանումով է սպառնում ոչ ավելի, քան անցյալը: Վերցնենք չարաբաստիկ բրնձի խաշուկը, որ Տարասովը Բախչիսարայում

տվեց թագավորին: Հենց այն էլ վարակը պահեց մարմնում, բայց չէ՞ որ թագավորն ինքն էր Տարասովին ու Կոստանդիսին խնդրել պատրաստել այդ թուրմը: Նրա մասին իմացել էր, երբ ծիու սմբակի հարվածից հետո սրունքի բորբոքումը խորացել էր:

Մի տարի անց, Ղրիմում, տենդը կրկին թուլացրել էր ստամոքսը, ինչը, որքան հիշում եմ, նրա հետ միայն երկու անգամ էր պատահել: Ողջ կյանքում հակառակ ազդեցության դեղերի պետք էր ունեցել: Կեղևահան սալոր, կանաչ թեյ. ահա նրա դեղերը: Մի խոսքով, եթե չլիներ Բրեստ-Լիտովսկի այդ հովատակը, թագավորը ողջ կմնար:

Էլեվսին

Ծառլ-Անտուան Ֆաբիե: Ապստամբի օրագիրը

Հուլիս, 1826 թ.

Չէի կարծում, որ Քյութահյան այդքան երկար չի կարողանա գրավել Աթենքը: Քաղաքն արդեն երեք շաբաթ դիմանում է: Պարետ Գուրասը կողոպուտներով ու հարկերով քաղաքացիներին հասցրել է մուրացկանության, բայց նրանք առաջվա հնազանդությամբ ենթարկվեցին նոր տերերին ու քաջաբար մեռնում են իրենց ունեցվածքը ոչ թե մահմեդականներին, այլ հավատակիցներին տալու իրավունքի համար: Ստրուկի համար ազատությունը տեր ընտրելու հնարավորությունն է:

Գուրասը կողոպուտով ու կողոպտածը վաճառելով էր զբաղված: Այդ երկու զբաղմունքի միջև երկու կես լինելով՝ չէր բարեհաճել նորոգել քաղաքային ամրություններն ու կազմակերպել պաշտպանությունը: Դա նրա փոխարեն արեց Յանիս Մակրիյանիսը, որն աչքի էր ընկել Արգոսի և Նեոկաստրոյի պաշտպանության ժամանակ: Նա վայելում էր ժողովրդի սերը, իսկ Կոնդուրիոտիսը, որպեսզի Կոլոկոտրոնիսի դեմ պայքարում իր կողմը քաշի, նրան գեներալական աստիճան շնորհեց: Անցած աշուն Մակրիյանիսը հաստատվել էր Աթենքում՝ սիրով ամուսնանալով մի տեղացի թրքուհու հետ, ինչը մեր ժամանակներում առնվազն հարգանքի է արժանի: Ձմռանը ինձ մոտ եկավ՝ գունդ ընդունվելու խնդրանքով: Ասացի, որ գնդապետի կոչումով իրավունք չունեմ ղեկավարելու գեներալին, բայց պատրաստ եմ նրան լեյտենանտի կոչում առաջարկել: Ծիծաղելով համաձայնեց: Դա միանգամից իմ համակրանքն առաջացրեց: Ես մարդու մասին դատում եմ առաջին տպավորությամբ ու հազվադեպ եմ սխալվում:

Երբ թուրքերը մոտենում էին, ու որոշեցի գունդը հետ քաշել Նավպլիոն, աթենացիները պատվիրակություն ուղարկեցին՝ խնդրելով պաշտպանության համար Մակրիյանիսին թողնել քաղաքում: Ես նրան թույլ տվեցի մնալ ու ճիշտ արեցի: Առանց նրա Քյութահյան վաղուց գրաված կլիներ Աթենքը:

Կոնստանտին Կոստանդիս: Թափառիկ բժշկի նոթերը

Օգոստոս, 1826 թ.

Օգոստոսի 3-ին Քյութահյա Ռաշիդ փաշան գրոհով վերցրեց Աթենքն ու պաշարեց Ակրոպոլիսը: Սանրամասներն իմացանք Աթենքում մնացած լեյտենանտ Մակրիյանիսից: Ինչ-որ մեկը նրա նամակը հասցրել էր Ֆաբիեին, իսկ նա ցույց տվեց ինձ: Կոպիտ մոխրագույն թղթի երկու թերթ՝ երկու կողմից գրած մի մարդու ձեռագրով, որը գիտի իր գրչի տակից դուրս եկածի գինը:

«Նա տառաճանաչ չի, - ձեռագրով խառնվածքը բացատրելու փորձերս ընդհատեց Ֆաբիեն:- Գրագիրն է գրել թելադրությամբ»:

Նամակը պահել էին հագուստի տակ կամ կոշիկի մեջ: Թուղթը պահպանել էր բազում ծալվածքների հետքերը ու տեղ-տեղ մաշվելուց ծակծկվել, ստիպված էինք տառեր կազմել երկու կեսից, ինչպես այբուբենը սովորելիս անում են երեխաները:

«Նավպլիոնից ձեր հեռանալուց հետո,- հայտնում էր Մակրիյանիսը,- ինձ ծանոթացրին աթենացի Սիմեոն Զաքարիցայի և Ներուձոն Մեձելոյի հետ: Նրանք օգնության բերեցին իրենց մարդկանց: Բոլորս բարձրացանք քաղաքային պարիսպներն ու գիշեր-ցերեկ, առանց հանգստի կռվեցինք երեսունչորս օր: Պարիսպը դրսից պաշտպանում էին աթենացիները՝ քաջարի Մորֆոպուլոսի հրամանատարությամբ, Բուբունիստրայից կանգնած էր Մամուրիսը՝ Գուրասի մարդկանց ու գյուղացիների հետ, Սուրբ Գևորգից մինչև ամրոց Ստատիս Կածիկոյանիսն էր: Բոլորն արիաբար էին կռվում և արժանապատիվ պահում իրենց: Թուրքերը հրանոթներ էին շարել քաղաքի շուրջը, անընդհատ կրակում էին: Անթիվ-անհամար էին, իսկ մենք լավ

է, եթե հինգ հարյուրյակ լինեինք: Ամեն տեղ չես հասնի, կուզես երկու կես եղիր...»:

Մինչ կարդում էի, Ֆաբիեն մտմտում էր իրեն տանջող հարցի շուրջ՝ պե՞տք էր, արդյոք, գնդով մնալ Աթենքում: Ստացվում էր, որ՝ ոչ, քաղաքը, մեկ է, չէինք պահի, իսկ Ակրոպոլիսի պաշտպանության համար մարդիկ բավականացնում են: Նրան տանջում են կասկածները՝ արդյո՞ք ճիշտ է վարվել:

«Քյութահյան հրանոթներով ավերեց մեր ամրությունները,- կարդում էի ես,- վերականգնեցինք՝ որքան կարող էինք: Սպանվածներն ու վիրավորներն անհաշիվ էին: Օգոստոսի երրորդ օրը, արևածագից մի ժամ էլ չէր անցել, թուրքերը ներս խուժեցին: Պարիսպներն այսուայնտեղ փլվել էին, որովհետև անհնար է ամենուր հասնել ու ամեն ինչ վերականգնել, երբ գնդառումբերը չեն թողնում գլուխ բարձրացնես: Եվ ահա ներս խուժեցին: Քյութահյան առավոտից զինվորներին ռոմ էր խմացրել ու միանգամից երեք կողմից թողել քաղաքի վրա: Մերձամարտի մտանք և այդպես կռվելով՝ նահանջեցինք մինչև ամրոց...»:

«Քյութահյան,- ասաց Ֆաբիեն, տեսնելով, թե ուր եմ հասել,- Աթենքում հրեշտակային մեծահոգություն է դրսևորել: Ոչ մի բնակիչ չի սպանվել, ստրկության չի վաճառվել: Միսոլոնգիից հետո համոզված է, որ առանց այն էլ սարսափեցնում է հույներին»:

Ծարունակեցի կարդալ. «Մեզ քշեցին ամրոց, իսկ այնտեղ ահավոր խառնաշփոթ է: Ասեղ գցելու տեղ չկա: Կանայք, երեխաներ, այծեր: Կովերն էլ էին շատ, բայց երբ ներս մտանք, պաշարման փորձ չունեցող Գուրասը լրիվ դուրս քշեց: Կովերը բաժին ընկան թուրքերին: Ասում եմ. «Էդ ի՞նչ ես անում, ախր պաշարման մեջ ենք»: Իսկ նա՝ ինձ. «Երկար չենք դիմանա»: Աթենքում եղած եվրոպացիներն էին համոզել, և Գուրասը հավատում է նրանց: Այ երբ հաց չենք ունենա, իսկ մեր կովերը թուրքերը կլափեն՝ փառաբանելով Գուրասի հիմարությունը, դառնորեն կզղջա: Ես դրա փորձն ունեմ, քաղցել եմ Արտում, Նեոկաստրոյում արդեն ջուր էլ չունեինք, այնպես որ, գինու ու ամեն կարգի մթերքի պաշար տեսա: Վեցհարյուր օխա բրինձ էի առել, լոբի, սիսեռ, տավարի ու խոզի միս աղ դրի: Ամեն ինչում

հույսս Տիրոջ ողորմածության վրա է, բայց երկար չենք դիմանա: Այսպիսի մեծ ամրոցի համար փորձառու մարտիկները քիչ են»:

«Ակրոպոլիսը Սակրիյանիսի համար պարզապես ամրոց է,- նկատեց Ֆաբիեն:- Հույները չեն գիտակցում նրա նշանակությունը»:

Հիշեցրի, որ բոլորովին վերջերս Ակրոպոլիսում կանգնած էր թուրքական կայազորը, և հունական ջոկատներն էին այն պաշարել: Թուրքերի գնդակների արձիճը սպառվել էր, սկսել էին ջարդել Պարթենոնի սյուների թմբուկները, որ արճճե առանցքները հանեն, այդ ժամանակ հույները նրանց արճճի պաշար էին ուղարկել:

«Է՛-է՛-է՛,- ձեռքը թափ տվեց Ֆաբիեն,- գիտեմ էդ հեքիաթը: Հույներն ահա թե ինչ կուղարկեին թուրքերին...»:

Ծարժումը շատ ավելի եռանդուն էր, քան ենթադրում էր խոսակցության լարվածությունը: Նրա նյարդայնությունն ակնհայտ է: Օրերս ջարդեց ըստ կարգի ժամապահ կանգնելու փոխարեն եկեղեցի գնացած զինվորի քիթը: Դեռ լավ է, որ զինվորը վալախներից էր: Հույները նման բաները չեն ներում:

«Ակրոպոլիսը չի կարելի վստահել հույներին, այնտեղ եկեղեցիներ կշարեն,- ասաց նա:- Ամբողջ Պարթենոնը կդարձնեն եկեղեցի: Ակրոպոլիսը պետք է հանձնել բրիտանական ենթադատության: Անգլիացիները բոլորից լավ են հասկանում նրա նշանակությունը»:

Ես այդ գաղափարը վերագրեցի նրա հիվանդագին վիճակին: Նույնիսկ հագուստից է երևում ինչքան է նիհարել: Դեմքը սմքել է, այտոսկրերի տակի արևայրուքը դեղնավուն երանգ ստացել:

Ես օգտվեցի նրանից, որ մենակ ենք, և առաջարկեցի. «Հանվի՛ր, ուզում եմ նայել: Տեսքդ դուրս չի գալիս»:

Հեշտությամբ համաձայնեց ու մի քանի րոպեից, մինչև գոտկատեղը մերկ պառկած էր մահճակալին: Բարձր կրունկները նրան հասակ են ավելացնում, սակայն պառկած վիճակում ընկերս կտրուկ փոքրացել էր: Անմազ գունատ կրծքին մեդալյոնն էր՝ անգլուհու նվիրած գանձով: Դեն քաշեց, որ չխանգարի: Առաջ երբեք Ֆաբիեին հանված չէի տեսել ու միայն հիմա հասկացա, որ նրա մարմնական բնույթը հակասում է ստանձնած դե-

րին: Իմ կյանքն ու մահը կախված էին մի մարդուց, որի ծանրության տակ նույնիսկ խախուտ մահճակալը չճկվեց:

Անպարկեշտ բժշկական կատակներ անելով՝ նայեցի կոկորդը, լսեցի սիրտը, մատնահարեցի փորը: Ոչ մի շեղում նորմայից, բացի մի քիչ մեծացած լյարդից:

«Ի՞նչ կա էդտեղ»,- անհանգստացավ՝ զգալով, որ մատներս կանգ առան կողաշարի վրա:

Ծիծաղեցի նրա կասկածամտության վրա ու խորհուրդ տվի ավելի հաճախ ուտել, ավելի շատ քնել ու քիչ նյարդայնանալ:

«Ես Աթենքից հեռացա, որ փրկեմ գունդն ու պահպանեմ գործողությունների ազատությունը, իսկ հիմա ասում են, թե այդպես վարվելու իրավունք չունեի,- բարեհաջող ավարտված բուժզննությունից զգացած թեթևության ալիքի վրա խոսում էր նա՝ հագնվելով ու թափահարելով դեռ թևքերը չգտած ձեռները:- Թե Գուրասի ու Մակրիյանիսի հետ պիտի նստեի պաշարման մեջ»:

«Դրա մեջ իմաստ կար,- դավաճանաբար անցա նրա ընդդիմախոսների կողմը:- Եվրոպայում շատերն են հավատում, որ եթե թուրքերը վերցնեն Ակրոպոլիսը, կավերեն Պարթենոնը: Մեզ օգտակար է այդ մոլորությունը: Ակրոպոլիսի պաշտպանությունն ապացուցում է, որ հույներն արժանի են իրենց նախնիներին: Որքան երկար տևի, այնքան հավանական է, որ Անգլիան, Ֆրանսիան ու Ռուսաստանը պատերազմ հայտարարեն Բարձր Դռանը»:

«Դո՞ւ էլ ես այդպես կարծում,- զայրացավ Ֆաբիեն:- Հետաքրքիր է, այդտեղ ի՞նչ եք ուտում բոլորդ»:

«Դու կովերն Ակրոպոլիսից դուրս չէիր անի»,- գտա պատասխանը, բայց նա չգնահատեց կատակս:

Ֆաբիեն գնաց քաղաք, որտեղ մնաց մինչև երեկո: Վերադառնալով՝ գնդի շտաբի պետ, միաժամանակ՝ հելլենասերների հրամանատար մաջար Չեկեիին հրամայեց ջոկատը հավաքել ճամբարի հետևում: Այդպես ենք ասում գյուղին, որտեղ կանգնած ենք:

Հավաքատեղում ինձ մոտեցավ Գրիգորի Մոսցեպանովը՝ միակ ռուսը հելլենասերների մեջ: Նստեցինք արևից ճերմակած քարերին: Այստեղ չկա մեկը, որի հետ խոսի մայրենի լեզվով, բացի ինձնից և օդեսացի հույն Ցիկուրիսից, ու որպեսզի իրենից փախս չտամ, ջանում է հետս խոսել բժշկությունից: Արդեն բազմիցս լսել եմ նրա կյանքը փրկած տզրուկների և ինչ-որ հրաշագործ բժշկի՝ անտեր շների սիրեցյալի մասին: Շները, ասում է, կրծել են ինչ-որ շանորդու սեռական անդամը, իսկ այդ բժիշկը տեղն է կարել, չնայած ավելի լավ կլիներ՝ չկարեր:

Հիմա նորից հիշեց տզրուկներին. թե վատ չէր լինի դրանցից ունենայի իմ լազարեթում: Համածայնեցի՝ ասելով, որ հույները Մորեայում արյամբ են վճարել տզրուկներով ազատ բուժվելու իրավունքի համար:

«Ինչպե՞ս»,- չհասկացավ նա:

«Թուրքերի օրոք մարդկանց այդպիսի բուժման համար բանտ էին դնում,- բացատրեցի ես:- Օսմանյան կայսրությունում բոլոր տզրուկները պատկանում են սուլթանին, դրանց պետական մենաշնորհ կա, ինչպես Ռուսաստանում՝ աղի վրա»:

Մոսցեպանովն ապշած էր այդ բռնատիրությունից: Մտախոհ գլխով արեց, ասես վերջապես հասկացել էր, թե ինչու ենք դիմել ապստամբության, ու հետաքրքրվեց՝ շա՞տ են հիվանդներն իմ լազարեթում: Իմանալով, որ երեքն են, այն էլ՝ փորլուծով, խորիմաստ կկոցեց աչքերը. «Վայ թե բոլորը հելլենասերներ են»: Հաստատեցի ենթադրությունը, և նա գոհացավ, որ իր փորը պինդ է:

Հելլենասերները մեկական ու խմբերով գալիս էին գյուղից ու մեր կողքին նստոտում խոտերին: Մեկը ամիսներով է պատրաստվել այստեղ գալուն, այդ մտքին վարժեցրել կնոջը, սովորել լեզուն, մյուսը նախաճաշին թերթում կարդացել է Միսոլոնգիի անկման մասին, դուրս է եկել տնից ու չի վերադարձել: Ես նրանց բաժանում եմ երեք խմբի. առաջինները՝ իրենց բանակներից արձակված սպաներն ու ենթասպաները, որոնք ունակ չեն վերադառնալու խաղաղ կյանքի, երկրորդը՝ նրանք, որ սիրահարված են հին Հելլադային ու երազում են նրա վերածնունդը, երրորդը՝ մաջարներ, իտալացիներ, իռլանդացիներ, որոնք համակրում են մեզ, քանզի իրենք էլ

ճնշվում են օտարներից: Հանդիպում են նաև Ֆաբիեի նմանները, որոնք դժգոհ են սեփական հայրենիքից ու որոշել են ուրիշը վերցնել, որ վերափոխեն ըստ իրենց ճաշակի: Մոսցեպանովն այդ տիպերից ոչ մեկին չի համապատասխանում: Հավատացնում է, թե այստեղ է եկել հանուն հավատի կռվելու, բայց մեր եկեղեցիները դուր չեն գալիս նրան աղքատության պատճառով, և մենք՝ նույնպես, չնայած եթե հետաքրքրվենք մեր հանդեպ նրա բողոքներով, այս կարգի մի բան կլսենք՝ որ Պետերբուրգում, Գոստինի դվորի մոտ, հույներն անաստված գներով ծովասպունգ են ծախում, իսկ այդ սպունգները բանի պետք չեն, առնելն ու շպրտելը մեկ է լինում:

Մեր դիմաց անմշակ դաշտ էր՝ ծածկված կակաչներով: Մթնշաղին դրանք ոչ թե ալ կարմիր, այլ մուգ էին թվում չորացած բարձր խոտի ֆոնին: Քաղաքին մոտ՝ այծերը կերել էին, իսկ այստեղ խոտն անվնաս էր չորացել: Դրանից այն կողմ ձգվում էին վայրի պիստակի, խնկածառի, մորենու թփուտները: Այուս կողմից դեպի ծովն էին իջնում մեր նոր երևութական մայրաքաղաքի կղմինդրե տանիքները, դրանցից այն կողմ բարձրանում էին Պալամիդայի բաստիոնները: Անկյունային աշտարակի ազդանշանային լույսը դեռ չէր վառվում, ինչպես և Բուրձի ամրոցիկի փարոսը՝ ծովածոցի մուտքին: Դրանք պետք է վառվեն ոչ ավելի շուտ, քան երկինքը լրիվ կձուլվի ծովին: Արևն արդեն մայր էր մտել, բայց ծոցը շարունակում էր թույլ վարդագունել. վերջին ճառագայթները, հորիզոնի հետևից բարձրանալով, ոսկեզօծում էին ամպերի ստորին եզրերը, իսկ ամպերը դրանք անդրադարձնում էին ջրի վրա: Ես միշտ դրա մեջ մահից հետո կյանքի խոստում եմ տեսնում:

Մեր կողքին նստած Չեկեին ասաց, որ վենետիկցիների օրոք այս տեղերում շատ հարուստ բերք են հավաքել, իսկ հիմա դաշտերը լքված են ու արոտատեղ են ծառայում այծերին: Հույները հողի հետ գլուխ դնել չեն սիրում:

Նրա հայրը մաջար է, մայրը՝ Դալմաթիայի իտալուհի: Չեկեին ծառայել է տարբեր բանակներում, տիրապետում է բազում լեզուների, այդ թվում՝ հունարենին, դրա համար էլ հույս ունի ժամանակի հետ զբաղեցնել Ֆաբիեի տեղը: Անհարմար էի զգում հիշեցնել նրան, որ հեղափոխությունների

ժամանակ վերջինները կարող են դառնալ առաջին, բայց երկրորդները՝ երբեք:

«Հույները բաժանվում են երեք դասի: Վաճառականներ, նույն ինքը՝ ավազակներ, նավաստիներ, նույն ինքը՝ ծովահեններ, և տերտերներ ու միաբաններ: Գյուղացիները քիչ են, ու եղածն էլ՝ ծույլ»,- դասավորեց մեզ, ինչպես սնկերը կույտ-կույտ բաժանելով, նույն թեթևությամբ, որով ես նրա ենթականերին բաժանում էի երեք տարատեսակի: Ուրիշինն ավելի հեշտ է դասակարգել, քան սեփականը:

Իմ վիճակը երկիմաստ է: Ուրախ եմ, որ հելլենասերներն ինձ յուրայիս են համարում, բայց տհաճ է, որ իմ ներկայությամբ քամահրանքով են արտահայտվում հույների մասին: Սովորաբար ավելի բորբոքված եմ առարկում նրանց կարծիքին, որքան այն ինձ արդարացի է թվում, բայց հիմա գործը դրան չհասավ. հայտնվեց Ֆաբիեն: Տրամադրությունը զգալիորեն լավացել էր. նշանացի կանգնեցրեց Չեկեհին, որն ուզում էր շարվելու հրաման տալ, ու մոտ հրավիրեց մեզ: Հելլենասերների հետ իրեն պահում է որպես առաջինը հավասարների մեջ:

Հելլենասերները խմբվեցին նրա շուրջը. Եվրոպայի բոլոր ազգերի զավակները. երկու մուլատ՝ Նոր Գրանադայից, հինգ ամերիկացի և ալեքսանդրիացի մի հրեա: Կարբոնարներ, մասոններ, հանրապետականներ, սահմանադրականներ, իդեալիստներ, արկածախնդիրներ: Մարտիկներ, գինեսերներ, փառամոլներ, երազողներ, հնությունների սիրահարներ, Էսքիլեսի ու Պլուտարքոսի ընթերցողներ, Բայրոնի երկրպագուներ. յուրաքանչյուրը հետապնդում է իր սեփական ուրվականին, սակայն բոլոր տարբերություններով հանդերձ, ի մի գալով, զինվորներին կարգապահության ու զինվորական հմտության օրինակ էին ծառայում, որից հույները զուրկ են: Առանց նրանց մեր գունդը քիչ կտարբերվեր մյուս հունական ջոկատներից: Ազգակիցներս գնահատում են նրանց, բայց չեն սիրում:

Նավպլիոնում այլ կարգի հելլենասերներ էլ կան՝ այն թագակիր այրերի գործակալներն են, որոնք ցանկանում են Հունաստանը միապետություն տեսնել, իրենց ժառանգներից մեկնումեկին՝ գահին: Նրանք անընդհատ փոխադարձ խարդավանքներ են նյութում, բայց միավորվում են գնդապետ

Կառլ Քլոյդեկի դեմ. նրան մի գումարտակ զինվորներով այստեղ է ուղարկել Եվրոպայի գլխավոր հելլենասերը՝ բավարական թագավոր Լյուդվիգը, նպատակ ունենալով որդուն՝ արքայազն Օտտոնին հելլենների թագավոր դարձնելու գաղափարի իրագործումը: Քլոյդեկը ընդունում է ցանկացածին, որը համաձայն է բավարական համազգեստ հագնելու: Նրա զինվորների ռոճիկն անհամեմատելի է այն գրոշների հետ, որ մեզ վճարում է կառավարությունը:

Մեր կամավորների մեծ մասը հունական զգեստ է հագնում. լայն շալվար, շապիկ, ժիլետ՝ եռաշար արծաթե, եթե միջոցները բավականացնում են, կամ անագե կոճակներով, կլոր թասակ: Ոտքերին՝ լեռները մագլցելուն հարմար ցարուգներ են, կոշկատակերը դաբաղած կաշվից: Հագուստը հարմար է և մարտում չի գրավում թուրքերի ուշադրությունը: Հելլենասերները ցանկալի ավար են թուրքերի համար, նրանց համար լավ գլխագին են վճարում, բայց ես որպես բժիշկ կարող եմ ինձ բլուզ ու լայնեզր գլխարկ թույլ տալ՝ առանց նրանց կողմից սպանվելու վտանգի:

Մոսցեպանովն անդրոշմ կոճակներով ժիլետ է հագնում, որը նվիրել է Ցիկուրիսը, սակայն թասակին նախընտրում է շքագլխարկը, ցարուգներին՝ սապոգները: Հունական գահը, որ դեռ գոյություն չունի նույնիսկ թղթի վրա, նա վերապահել է ռուսական մեծ իշխաններից մեկի՝ Կոնստանտին Պավլովիչի կամ Միխայիլ Պավլովիչի համար, բայց դա նրան չի խանգարում դառնորեն սգալու թույլ տված սխալի համար. թե, հիմա՛ր դու հիմար, եկել ես Ֆաբիեի մոտ, երբ պետք էր Քլոյդեկի մոտ գնալ: Թագավորական ռոճիկն ու բավարական համազգեստների գեղեցկությունը նրա պարզ հոգին ալեկոծում են բաց թողնված հնարավորությունների համար ափսոսանքով:

«Աթենքն ընկել է, Ակրոպոլիսը պաշարված է,- խոսեց Ֆաբիեն, երբ բոլորը հավաքվեցին:- Միջնաբերդում փակված են հինգ հարյուր հույն՝ չհաշված տեղի բնակիչներին: Հրամանատարները կապիտան Գուրասն ու լեյտենանտ Մակրիյանիսն են, բայց երկար չեն դիմանա: Մենք պետք է մի օրով կամ գոնե մի քան ժամով մտնենք Աթենք, փչացնենք պաշարողական հրանոթները, խլենք կամ ոչնչացնենք մթերքի ու վառոդի պաշարնե-

ը: Մեզ հետ կգան Կարահիսկակիսի լեռնցիներն ու աշխարահազորայինները»,- ավելացրեց նա, հենց մտածեցի, որ մենք հինգ հարյուր մարտիկ ունենք, իսկ Քյութահյան՝ տասը հազարանոց հեծելազոր ու հրետանի:

«Իսկ բավարացինե՞ը»,- հարցրեց ինչ-որ մեկը:

Ֆաբիեն անպարկեշտ շարժումով արտահայտեց իր վերաբերմունքը Քլոյդեկի և Լյուդվիգ թագավորի ու դրա հետ միասին արքայազն Օտտոնի հանդեպ և առաջարկեց. «Աշխարհազորայինները երկու հազար են, Կարահիսկակիսը նույնքան ունի: Անսպասելի հարձակման դեպքում կարելի է հաջողության հույս ունենալ...»:

Ես նայեցի Մոսցեպանովին: Այնպես էր լսում, ասես Ֆաբիեի ձայնով ճակատագիրն էր խոսում իր հետ:

«Ափ ենք իջնում Էլևսինում,- զնգում էր այդ ձայնը:- Ստնում ենք քաղաք, նույն պահին Գուրասն ու Մակրիյանիսը թիկունքից կխփեն թուրքերին: Նրանց նամակով կզգուշացնենք: Մեկնում ենք լույս տասնիննի գիշերը...»:

Ֆաբիեն մղվում էր ապացուցելու, որ իզուր չի գունդը դուրս բերել Աթենքից: Ըստ երևույթին պլանը հասունացել էր այն բանից հետո, երբ նրան էին հասցրել Մակրիյանիսի նամակը, և միայն մի քանի ժամ առաջ էր հաստատվել Նավպլիոնի զինվորական խորհրդում: Ոգևորությունից ոտներոտ էր անում տեղում, ինչպես երեխան, որի միզապարկը լցվել է:

Վաղնջական անցյալում Աթենքից Էլևսին, Դեմետրեի տաճար էր տանում սրբազան ճանապարհը, որով անցնում էին էլևսինյան միստերիաների մասնակիցները: Մենք անցնելու էինք այդ ճանապարհով, ավելի ճիշտ՝ ճանապարհի վրայով: Նախկինը, եթե նրանից որևէ բան մնացել է, հողի տակ է անցել՝ մեզնից հեռու, իրենց մեռյալներին մոտ:

Այն ժամանակներում, երբ Քարոնը դեռ մեռյալների թագավորության տիրակալը չէր, այլ սովորական մակույկավար, այստեղ կատարվում էին խորհրդավոր էլևսինյան միստերիաները: Գիտնականներից ոչ մեկը չի համարձակվի ասել, թե հատկապես երբ, հայտնի է միայն, որ դա հավերժ մեռնող ու հառնող աստվածուհու տոնն էր: Նրա հետ տեսակցելու թույլատրվում էին միայն օծյալները: Նրանց ստվերները մեզ կդիմավո-

րեն աստվածուհու սրբարանի ավերակներում, ու բնավ չեմ զարմանա, եթե դափնետերևների խշշոցի մեջ լսեմ Պողոս առաքյալի բառերը՝ ապագա կյանքի մասին, բայց կիրառելի Հելլադայի համար, երբ վերադառնա մահվան ստվերների հովտից. «Սերմանվում է ապականությամբ և հարություն առնում առանց ապականության, սերմանվում է անարգությամբ և հարություն առնում փառքով, սերմանվում է տկարությամբ և հարություն է առնում զորությամբ...»:

Հելլենասերները սկսեցին ցրվել: Իմ կողքով անցան Ֆաբիեն ու Չեկեին, որն ասում էր. «Իբրահիմ փաշան կարող էր գրավել Աթենքը՝ Ակրոպոլիսի հետ միասին, բայց չի ուզում ներխուժել Ատտիկա: Ատտիկան նրա փաշալիքը չի: Նրա փաշալիքը Սորեան է: Ամայացնում է, որ բնակեցնի Եգիպտոսի արաբներով: Անցյալ տարի նա թուրք գեներալներից միակն էր, որ գթասրտություն դրսևորեց, հիմա դա ուրիշ մարդ է»:

«Հիմա բոլորս ենք ուրիշ»,- արձագանքեց Ֆաբիեն:

Նրանց ձայները մարեցին հեռվում, և այդ ժամանակ Մոսցեպանովը հարցրեց, թե այսօր ամսի քանիսն է:

«Տասնհինգը»,- ասացի ես:

Նա լրջախոհ տեսքով ծալեց բութ մատը, ցուցամատն ու միջնամատը՝ հաշվելով մեկնելուն մնացած օրերը: Հեռավոր եկեղեցական զանգահարությունը մի քանի պղնձադրամ թափեց քարերին: Մոսցեպանովը շրջվեց այդ ձայնի վրա ու խաչակնքվեց: Ես նույնն արեցի, բայց խաղաղություն չկար: Մտքերս խառնվում էին, ինչպես անքնության ժամանակ: Անպատեհ վնասված ոտնաթաթից անհանգստությունս անցնում էր վիրաբուժական գործիքներով պայուսակի փոկին, այնտեղից վերադառնում օգնականիս հիվանդությանը, որն իմ հետևից պիտի բերեր կարբոլաթթվով, սպիրտով ու վիրակապերով արկղը, բայց այդ և շատ այլ մտահոգություններ ու տագնապներ մտքիս մեջ առկայծում էին այն հիշողության ֆոնին, որ հիմա Ակրոպոլիսի վրա է սևեռված ողջ Եվրոպայի ուշադրությունը. նրա պատկերը կախում են ցուցափեղկերում, պալատներում ու պառլամենտներում: Գիտեի. երեք օրից մեզ վրա կսառչի աշխարհի աչքը:

Գրիգորի Մոսցեպանովի զրույցը Մատվեյ Մոսցեպանովի հետ

Օգոստոս, 1826 թ.

Երկար ժամանակ քեզ նամակ չէի գրում ու չէի ստանում, բայց մտքում հաճախ եմ խոսում քեզ հետ: Այ քայլում ու խոսում եմ: Ոչ բարձրաձայն, իհարկե, չնայած երբեմն ինքս էլ չեմ նկատում, ինչպես է որևէ բառ բարձրաձայնվում:

Տեղիս ընկալմամբ՝ Քյութահյա Ռաշիդ փաշայի զորքը բանակ է, մերով՝ երեք դիվիզիա, ճիշտ է՝ կանոնավոր: Դրանցով եռօրյա պաշարումից հետո նա վերցրեց Աթենքը: Հույները քաշվեցին Ակրոպոլիս ու փակվեցին այնտեղ, կամավորական կես հարյուրյակ: Մեզ օգնության ուղարկեցին նրանց: Երեկոյան ափ իջանք Էլևսին բնակավայրի մոտ ու գիշերը շարժվեցինք դեպի Աթենք: Ձիավոր միայն Ֆաբիեն էր: Ես առանց մատների էլ վատ քայլող չեմ, իսկ այնպիսի ոտքով, որ նրանն է, հեռուն չես գնա:

Քսան, թե երեսուն վերստ պիտի անցնենք, իսկ հրացանը ծանր է: Ուսումնարանից հետո հրացան չեմ կրել, բայց դեռ ջահելներից հետ չէի մնում: Սապոգներս ամուր են, ծախ՝ անմատ ոտքիս համար պատվերով է կարվել, չի լխկլխկում: Միայն կրունկս էի հարել՝ քարերին խփելով, բայց հիմա կրունկի ժամանակ չի:

Հետախույզները հայտնեցին, որ մինչև քաղաք թուրքեր չկան: Ծովախորշի վերևը, որտեղ ափ էինք իջել նավերից, մի մարտկոց կար, և այն էլ չէր կրակում: Մերոնք անցած գիշեր կոտորել էին քնած հրետանավորներին: Նրանց հրամանատարը ֆրանսիացի էր, լրիվ ջահել տղա, բերեցին Ֆաբիեի մոտ: Պարզվեց, որ հին ծանոթներ են: Մոտ էի կանգնած ու լսեցի Ֆաբիեն ինչպես պահանջեց, որ ինչ-որ ծովածոց հիշի, որի ափին կանգնած էին եղել, ու նորալուսինը փայլում էր ծովի վրա: Չգիտեմ ինչ էր եղել այդ լուսնի հետ, բայց ֆրանսիացին կախեց գլուխը ու լուռ էր: Ֆաբիեն կամացուկ ինչ-որ բան ասաց ականջին ու հեռացավ, իսկ այդ խեղճին յաթաղանի տակ առան: Ծրջվելով՝ նստեցի ափին, որ ալեկոծության աղմուկը խլացնի նրա ճիչերը: Գիտեմ՝ չկա ավելի մեծ տառապանք, քան երբ սրի

տակ են առնում: Գնդակը սրի համեմատ ընկերուհի է: Ճանապարհը ծովից բարձրանում է լեռը: Բարձրացանք, ու վերևից տեսա այդ ֆրանսիացուն: Մերոնք շորերը հանել էին, պառկած էր միտակ շապիկով ու վարտիքով: Գլուխը չէին կտրել, վերքերն այդ բարձրությունից չէին երևում:

Կոստանդիսը նույնպես նայեց, անմիջապես փախցրեց հայացքն ու ասաց. «Եթե նրա տեղը գերմանացի լիներ, իտալացի, ով կուզես՝ ողջ կմնար: Ֆաբիեն միայն ֆրանսիացիներին չի ներում, եթե որպես վարձկան ծառայում են թուրքերին: Անխնա է նրանց հանդեպ»:

«Յուրայիններից,- ասացի ես,- ավելին են պահանջում»:

Նա կնճռոտեց ճակատը: «Խնդիրն այդ չէ: Այս պատերազմում թշնամին որքան շատ է նման քեզ, այնքան ատելի է»:

Ու մի քիչ հապաղելով՝ ավելացրեց. «Ֆաբիեի համար Ֆրանսիան ազատության հայրենիքն է: Եթե ֆրանսիացին կռվում է ազատության դեմ, ուրեմն դավաճանել է հայրենիքին»:

«Ստացվում է՝ հայրենիքը բարձր է ազատությունի՞ց»,- հարցրի ես, բայց պատասխան չստացա:

Երրորդ ժամն է՝ գնում ենք: Ցիկուրիսը խնայեց ինձ, վերցրեց հրացանս: Քայլում է երկու հրացանով ու մեկ է՝ բերանը չի փակվում: Ցահել է դեռ, չի վախենում շունչը կտրվի: Դեռ քայլելիս էլ գինի է խմում տափաշշից: Ինձ էլ առաջարկեց, բայց հրաժարվեցի: Գիտես, որ գինու մեծ սիրահար չեմ: Լավ գինի կխմեի, բայց այստեղինը կամ թթու է, կամ խեժով: Խմում ես, ոնց որ փսլինք ծամես:

Ահա մտանք անտառ, ծառերը խշշում են: Ինչ ծառեր են՝ չի երևում, ասենք, չգիտեմ էլ դրանց այստեղ ինչ են ասում: Ճանապարհի սկզբում անցանք ընկուզենիների մոտով: Մթան մեջ տերևներից չճանաչեցի, մինչև որ թափված ընկույզները չսկսեցին գլորվել ոտքիս տակ: Մի քանիսը վերցրի, փորձում եմ իրար սեղմելով ջարդել ափիս մեջ, չեն ջարդվում: Բանտից հետո ատամներս այն չեն, որ կրծեմ, իսկ եթե փորձես քարով ջարդել, հետ կընկնես: Լավ է, Ցիկուրիսը սովորեցրեց, թե ոնց դանակը խրեմ դրանց կիսվածքի մեջ ու պտտեմ: Մեկը բացեցի, ու էստեղ Ֆաբիեն է ձիավոր անցնում մեր կողքով:

Կանգնեց կողքիս, հարցրեց՝ չե՞մ հոգնել: Ասացի, որ ոչ, և այդ ընկույզն էլ, երկու կես արած, ափիս վրա պարզեցի նրան:

Գլուխն օրորեց. «Մերսի՛, ես այդ ընկույզից չեմ ուտում»:

«Իզուր,- ասում եմ,- գիտե՞ք հույներն ինչ են ասում սրան»:

«Ի՞նչ»,- հարցնում է:

Պատասխանեցի, ինչպես Ցիկուրիսն էր սովորեցրել. «Աստծու կաղին»:

Ծամածռեց շրթունքները. «Նրանց ամեն ինչը աստվածային է»:

«Էդպիսի երկիր է»,- ասացի, բայց նա արդեն առաջ էր անցել ու չլսեց:

Գնում ենք մեկ շարասյունով, առաջապահը Կարահիսկակիսի լեռնցիներն են: Ավարի հույս ունեն, դրա համար էլ ոչ մեկին առաջ չեն թողնում: Հոգեառներ են, դրանցից վատը չկա, դրանցից նույնիսկ ալբանացիներն են վախենում, իսկ այստեղ նրանցով մայրերը վախեցնում են երեխաներին: Նրանց ատամանը, ինչպես ինքն իրեն կոչում է, մեկ հրեշտակ է, մեկ դև, բայց, կարծում եմ, եթե հարցնես այդ երկուսից որն է հիմա նրա մեջ, ինքն էլ չգիտի:

Մեր գունդը հետևապահ է, կենտրոնում աշխարհազորայիններն են: Կեսը հավաքվել է Իբրահիմ փաշայից փախած գյուղացիներից, մյուս կեսը՝ նավահանգստային պանդոկների ու բիլիարդանոցների խաժամուժից: Մեկը ոտաբոբիկ է, մյուսը՝ հարբած, որը դանակով ու մահակով՝ հրացանի փոխարեն, ոմանք այնպիսի մուշկետներով, որ պետք է սայլով տանես: Երկուական են տանում՝ գերանի պես ուսերին դրած: Հարյուր հոգի պետ են, ոչ մեկը ոչ մեկին չի լսում:

Օգոստոսին երկու լիալուսին է լինում: Առաջինն անցել է, երկրորդին դեռ շատ կա: Արևելքում, ուր Աթենքն է, երկինքը գորշացավ, և աստղերն էլ այնքան շատ չեն, որքան մեր գլխավերևում: Գիշերն անցնում է:

Մի ժամ առաջ մի փոքրիկ գյուղ անցանք՝ եկեղեցով: Կոստանդիսն ասաց՝ Դափնեական վանք է, այդտեղից Աթենք տասը վերստ է: Երբեք այստեղ չի եղել, բայց մայրը ծնունդով այս տեղերից է:

Ես էլ Աթենքում չեմ եղել: Մեր գունդը ձմռանն այնտեղ էր կանգնած, այնտեղից էին շարժվել Միսոլոնգի, բայց չէին հասել, իսկ ես այդ ժամա-

նակ նստած էի Նավպլիոնի մոտ: Ֆաբիեն ինձ այնտեղ էր թողել տասը հելլենասերների հետ: Հանձնարարել էր ընդունել կամավորների Եվրոպայից, խնամք տանել, տեղավորել բնակարաններում ու գլխավորը՝ հետևել, որ ծառայության չգնան Քլոյդեկի մոտ: Ֆրանսիացիները պիտի յուրայիններին դիմավորեին, գերմանացիներն՝ իրենց հայրենակիցներին, իսկ ես՝ ինչ-որ լեհուկների: Ֆաբիեին նամակ էին գրել, որ ցանկանում են նրա դրոշի տակ կռվել հունական ազատության համար, բայց ըստ երևույթին մտքափոխ էին եղել: Թեթևամիտ ժողովուրդ է: Մեր գնդում ոչ մեկը չկա, և ինձ թողեցին որպես լեհ: Ոնց էլ նայենք՝ ես ու դու Կիևում ենք մեծացել, լեհերեն ջարդում ենք:

Առջևում մեկը էլի հոտ հանեց, շնչել չի լինում: Աջ ու ձախից սար է, նեղվածք, քամի չի փչում: Սովորական բան է, զինվորական. հացը վատն է, հետն էլ՝ Վերափոխման պահք: Սիսեռ ու լոբի ենք ուտում: Փորս շատ է չարչարում:

Լուսանում է, ճանապարհը պտույտ է տալիս բլրի շուրջը: Հետո հարթավայրն է: Այն կողմից, որտեղ Աթենքն է, երկինքը վարդագունում է: Երևում է սարը, սևը վարդագույնի վրա, միայն գագաթն է ոսկեզօծված: Գիտեմ, որ Գամետան է: Իջնում ենք դաշտ... Ա՛խ: Տեսնում եմ Ակրոպոլիսի ժայռը: Պարթենոնն եմ տեսնում:

Ես քու պորտը...

Ծառլ-Անտուան Ֆաբիե: Ապստամբի օրագիրը

Օգոստոս, 1826 թ.

Մոտենում էինք Աթենքին: Ձի հեծած՝ առաջ անցա շարասյունից ու բարձրացա քաղաքը բոլորող բլուրներից վերջինի գագաթը: Դիմացս ծագող արևից վարդագունած դաշտն է, որի վրա իշխում էին երկու կողմնորոշիչ՝ Ակրոպոլիսի ժայռն ու մակվիսից, ինչպես ծովի ալիքներից բարձրացող Լիկաբետոսի մերկ քարափը: Մինչև քաղաք թուրքական զորք չէր երևում:

Համոզվելով, որ Քյութահյան մեզ չի սպասում, վերադարձա գունդ, երբ հանկարծ առջևում բղավոցներ ու հրաձգություն լսվեց: Դա միայն մեկ

բան կարող էր նշանակել. մեր առաջապահը դարանն է ընկել:

Հրամայեցի պատրաստվել մարտի և իրավիճակը հասկանալու համար նորից անցա շարասյան գլուխն ու տեսա, որ ոչ մի դարան էլ չկա. Կարահիսկակիսի լեռնցիներն էին գոռում ողջ կոկորդով և օդ կրակում: Քաղաքից երկու կիլոմետրի վրա որոշել էին ոգևորել Ակրոպոլիսում նստած ընկերներին ու ցույց էին տալիս, որ օգնությունը մոտ է:

Կես ժամից մեզ վրա թափվեց թուրքական հեծելազորը: Կարահիսկակիսի մարդիկ ցրիվ եկան, որ հետո կրկին հավաքվեն, իսկ աշխարհազորայինները փախան խմբով, ոչխարների պես: Երկու հազար փախստականները սրբեցին-տարան իմ մարդկանց, որոնց սկսել էի քառանկյուն շարել: Ստիպված էինք Էլևսին հասնել լեռնային կածաններով, որտեղ հեծելազորը չէր կարող մեզ հետապնդել: Բարեբախտաբար, մինչև սիփահական հետևակի հասնելը հասցրինք բարձրանալ նավերն ու հեռացանք ափից:

Առավոտյան առաջին միտքս այն էր, որ պետք չէր Կարահիսկակահիսին առաջապահ թողնել, բայց, ցավոք, այդ միտքը ծածկվում է շատ ավելի տառապալից հիշողությամբ. աչքիս առաջ կանգնում է իմ հրամանով սրատված ֆրանսիացի հրետանավորը: Տեսնում եմ արտասուքից թրջված կիսամանկական դեմքը: Աստվա՜ծ իմ, ոնց էր հեծկլտում, ոնց էր գթություն խնդրում: Դաժանությունս խորամանկաբար վերագրում եմ պատերազմական սովորույթներին, չնայած գիտեմ իրական պատճառը:

Երբ Քսերքսեսի հորդաները խուժեցին Հելլադա, հույները Ակրոպոլիսում մարդկանց զոհաբերեցին ատվածներին: Առաջ իմ պատկերացմամբ այդ պատմությունը սև բիծ էր այն դարաշրջանի վրա, որն ինձ մարդկության ոսկեդարն էր թվում, իսկ հիմա ես՝ աթեիստս, հանրապետականս, չասեմ, թե հավատում, բայց ընդունում եմ, որ մարտից առաջ արված արյունոտ զոհաբերությունը հաղթանակ է խոստանում, ինչպես որ կառուցվող ամրոցն անառիկ կլինի, եթե անկյունաքարը ցողեն մարդկային արյունով:

Երեխա ժամանակ մորս հետ անտառում գիհենու մի պինդ ճյուղ կտրեցինք, որ աղեղ սարքեմ, ու դանակով կտրեցի մատս: Մի ուրիշ մայր կնետվեր համբուրելու խեղճ մատիկս, կկապեր թաշկինակով, իսկ իմ մայրը, չնայելով արցունքներիս, բռնեց ձեռքս, պահեց ճյուղի վրա, այնպես,

որ մի քանի կաթիլ արյուն ընկավ փայտին, և ասաց. «Այ հիմա հրաշալի նետուաղեղ կունենաս»:

Թվում է՝ նման դեպքերում իմաստ ունի թափել միայն սեփական արյունը, չէ՞ որ նրանք, ում վճարում ենք հաջողության համար, հեշտությամբ են տարբերում իսկական ոսկին կեղծից: Այուս կողմից, եթե որևէ մեխանիզմ գործարկվում է բանալիով, դրա համար նախատեսված բոլոր բանալիները պիտի նույն ձևն ունենան, բայց ոչինչ չի խանգարում, որ պատրաստված լինեն տարբեր մետաղներից:

Կրակը

Կոնստանտին Կոստանդիս: Թափառիկ բժշկի նոթերը

Օգոստոս, 1826 թ.

Էլևսինից վերադառնալուց երկու օր անց ինձ մոտ՝ լազարեթ մտավ Մոսցեպանովը՝ օդեսացի հույն Ցիկուրիսի հետ: Մոսցեպանովին հունարեն է սովորեցնում, բայց մեծ կասկածներ ունեմ, որ դասերին ավելի շատ խմում են, քան գործով զբաղվում: Երախտապարտ աշակերտն ուղեկցում էր վիրավոր ուսուցչին: Աթենքի մոտ, երբ թուրք հեծյալը Մոսցեպանովի գլխին էր բարձրացրել սուրը, Ցիկուրիսը պաշտպանել էր նրան երկու ձեռքով պահած հրացանով: Հարվածի պահին բաց էր թողել, ու սուրը փողով սահելով՝ վիրավորել էր նախաբազուկը: Մոսցեպանովը չէր վնասվել, բայց ապրած վախից ձախ կոպը թրթռում է, ասես կտրիճավարի աչքով է անում ինչ-որ մեկին, իսկ երեսը քերծոտվել է փշերից, ինչպես իմ դեմքը: Բոլորս հեծելազորից փրկություն էինք փնտրում մակվիսով պատած բլուրներին: Այնտեղ մնաց իմ լայնեզր գլխարկը:

Փոխեցի Ցիկուրիսի վիրակապը: Մոսցեպանովը հայացքը փախցնում էր նրա վերքից, իսկ Ցիկուրիսը ոչ միայն նայում էր, այլև փորձում էր փորփրել կեղտոտ մատներով: Ստիպված էի խփել ձեռքին, միայն դրանից հետո դադարեց ինձ ցուցադրել արհամարհանքը ցավի հանդեպ:

Հինգ տարի առաջ Ցիկուրիսը Իպսիլանտիի հետ Վալախիայում էր, ծառայում էր նշանավոր Ֆարմակիի հրամանատարությամբ, բայց հիվանդության պատճառով չմասնակցեց Սեկոսի արշավանքին, որի ժամանակ թուրքերը ոչնչացրին նրա ողջ ջոկատը, իսկ հրամանատարին գերի վերցրին: Ցիկուրիսը դեռահաս տարիքում էր ընդունվել «Ֆիլիկի Էտերի»

և հետերիստների հետ շփումները նրան՝ շարքային նավաստու որդուն, ազգային ոգով դաստիարակության սաղմեր էին տվել: Առանց դժվարության կթվարկի մի տասնյակ օլիմպիական աստվածների, գաղափար ունի Աթենքի և Սպարտայի պետական կարգի տարբերություններից, գիտի ով ում դեմ է կռվել Թերմոպիլեսում, բայց դրանով հանդերձ՝ կարող է ասել, որ պարսիկների հետ ճակատամարտից առաջ Լեոնիդաս արքան աղոթում էր Սուրբ կույս Աստվածամորը:

Ցիկուրիսն օտար չէ մուսաներին ու դեմոտիկայով ոտանավորներ է հորինում, ավելի ճիշտ, ժողովրդական երգերը վերափոխում է հայրենասիրական կերպի: Նրա գրչին է պատկանում Ֆարմակիի զոհվելու մասին հանրահայտ երգը: Այնտեղ պատմվում է, թե Կոստանդնուպոլսում, տանջալից մահապատժին սպասելով, այդ հոգեշահ տեսարանով հիանալու հրավիրված ռուսական, բրիտանական ու ֆրանսիական դեսպանների ներկայությամբ Ֆարմակին ինչպես է հայացքը հառում երկինք, տեսնում ծիծեռնակների երամն ու խնդրում նրանց՝ սիրուն թռչուններին, թռչել Ֆրանսիա ու հայտնել այնտեղ ապրող գեղեցկուհի կնոջը, թե ինչպես արիաբար ընդունեց մահը:

Ես հեղինակին տեսել էի ուշագնացության աստիճանի հարբած-ընկած սեփական մեզի լճակի մեջ: Գիտեմ, թե ի՞նչ արդարակյացն էր Ֆարմակին: Բայց հենց երգը հասնում է այդ ծիծեռնակներին, արցունքը խեղդում է կոկորդս,- մասամբ, գուցե, այն պատճառով, որ նրանց քնքուշ սուլոցի մեջ, ինչպես կենդանի արարածներից ոչ մեկի արձակած հնչյուններում, ներառյալ ամորձատների հրեշտակային տենորներն ու երգեցիկ թռչունների գեղգեղանքը, լսվում է այն ձայների արձագանքը, որ լսելու ենք այլ աշխարհ անցնելիս, եթե այս աշխարհում մեզ տղամարդուն վայել ենք պահել:

Էլևսին լողալուց առաջ մեզ տվեցին անցած ամիսներին չվճարված ռոճիկի մի մասը: Մոսցեպանովն ու Ցիկուրիսը պատրաստվում էին գնալու Նավպլիոն և ինձ առաջարկեցին միանալ իրենց: Մերժեցի, բայց մեկ ժամ անց ընդունեցի Ֆաբիեի ու Չեկեիի նույնպիսի առաջարկը. նրանք քաղաք էին գնում գնդային սայլակով՝ պատրաստվելով տեղի տրատորիումներից

մեկում գինի ու տապակած իշխան վայելելու: Հինգ վիրավորներ մնացին օգնականիս խնամքին: Ֆաբիեն չէր ուզում Աթենքի տակ կրած անհաջողությունից հետո երևալ Նավպլիոնում, բայց Չեկեին համոզեց, այլապես հույները կարող էին մտածել, թե ամաչում է մարդամեջ դուրս գալուց, հետևաբար ընդունում է իր մեղքը կատարվածի համար, իսկ դա թույլ տալ չի կարելի, առանց այն էլ նրանք բոլոր հաղթանակներն իրենց են վերագրում, իսկ պարտությունները գցում օտարերկրացիների վրա: Ճանապարհին նա շարունակում էր հիմնավորել իր դիրքորոշումը ու միաժամանակ հայհոյում Կարահիսկակիսին՝ թուրքերից վերցրած ինչ-որ փողեր հիշեցնելով, ու որ Բայրոնը նրա պատճառով Լեպանտոյի տակ վարակվել էր մալարիայով:

«Լավ է, որ Բայրոնի մարմինը տեղափոխեցին հայրենիք, ոչ թե թաղեցին Ակրոպոլիսում, ինչպես սկզբում ուզում էին,- հիշեց Ֆաբիեն:- Թուրքերը կարող էին պղծել աճյունը»:

«Եթե նրան թաղեին Ակրոպոլիսում,- քմծիծաղեց Չեկեին,- դագաղում վաղուց ոչինչ մնացած չէր լինի»:

«Ինչո՞ւ»,- չհասկացա ես:

«Մարմինը զմռսել էին, որ տեղափոխեն Անգլիա,- բացատրեց նա,- ու երբ հանել էին փորոտին, Միսոլոնգիի բնակիչները խնդրել էին ի հիշատակ իրենց հանձնել նրա սիրտը: Սիրտը չտվին, տվեցին թոքերը: Դրանք որպես սրբազան մասունք զետեղեցին եկեղեցում, բայց թոքերն այնտեղ երկար չմնացին»:

«Տերտերները ստիպեցին հանե՞լ այնտեղից»,- ենթադրեց Ֆաբիեն:

Իմ գլխում ծագեց նույն միտքը, բայց պարզվեց՝ թոքերը պարզապես գողացել էին:

«Երևի ծախել են նրա տաղանդի որևէ երկրպագուի»,- ասացի:

«Ավելի ճիշտ՝ երկրպագուհու,- ճշտեց Չեկեին:- Եթե նա թաղվեր Ակրոպոլիսում, թուրքերին ոչինչ չի մնա պղծելու: Հույները հրաշալի առևտրականներ են: Հենց իրենք էլ կհանեին դիակն ու մաս-մաս կծախեին»:

Առափնյակում իջանք կառեթից: Իրիկնաժամին փողոցը լեփ-լեցուն էր զբոսնող մարդկանցով: Նավպլիոնը համարյա Նեապոլի պես է հնչում և նշանակում է նույնը: Ամենուր իտալերեն էր լսվում, բայց հունարենն էլ վեր-

ջերս ավելի ու ավելի հաճախ էր հանդիպում: Ծովի և ափի երկարությամբ ձգվող պանդոկների, գինետների, սրճարանների, բիլիարդանոցների արանքով բազմաբղետ զանգվածով հոսում էին անգլիական նավաստիներն ու զբոսաշրջիկները, բավարացի սպաները, տեղացի պատրիկներ՝ քրեական տեսքով հաճախորդների ու ծառաների շքախմբերով, դեռ չկազմավորված կամ վաղուց ցիրուցան եղած պարտիզանական ջոկատների մինչև ատամները զինված հրամանատարներ, արատավոր դեմքերով լևանտացի վաճառականներ և նրանց մորեացի գործընկերները՝ ազնիվ ավազակների մռութներով: Տեղական նեգոցիանտները, եվրոպականություն ցուցադրելով, թևանցուկ զբոսնում էին ամբողջովին սևազգեստ կանանց հետ, որոնք արհամարհանքով էին նայում նարնջագույն ալբանական թասակներով էժանագին պոռնիկներին ու նախանձոտ հանդիմանությամբ՝ թանկարժեքներին, որ վառվռուն շորերով էին, ինչպիսիք Հունաստանում կրում են միայն մահմեդական կանայք, և կեղտոտ փետուրներով լայնեզր գլխարկներով: Վերջիններս, մեծ մասամբ նեապոլիտանուհիներ, այստեղ իրենց տանն են զգում: Երբ նրանց թիվը հանկարծ աճում է, նշանակում է, որ կառավարությունը զինվորներին ռոճիկ տալու միջոցներ է գտել, ու փողը շուտով կարժեզրկվի: Այդպիսին է Ադամ Սմիթի նկարագրած հատկությունը. փողն էժանանում է նրանց ձեռքին, ովքեր չգիտեն՝ մինչև վաղը կապրե՞ն:

Ֆաբիեն ընտրեց մի իտալուհու, ամենից մանրամարմնին: Ժլատ Չեկեին թասակով մի աղջիկ ջոկեց՝ զգուշացնելով, որ նա օգտագործվելու է բացառապես ըստ նշանակության, առանց նախնական գինու և ուտելիքի: Ես ոչ մեկին չընտրեցի: Որպես բժիշկ շատ լավ գիտեի, թե ինչով են սպառնում նման հաճույքները, եթե չնախապատրաստվես: Չեկեին ասում էր, թե հոնորեայով, իսկ ավելի լավ է՝ սիֆիլիսով, չհիվանդացած սպան հեղինակություն չունի զինվորների մոտ, բայց ես առարկեցի, որ հրամանատարական գդակի և նույնիսկ պրոտոպալիկարի թանաքամանի հավակնություններ չունեմ:

Թասակով աղջիկը ստվերի նման հետևեց մեզ ու ձայն չէր հանում, փոխարենը՝ Ֆաբիեի ընտրյալը անդադար խոսում էր: Նա իրեն Ջիգի էր

անվանում և իր մասին խոսում երրորդ դեմքով. «Զիզին սոված է, արագ գնանք», «Զիզին պիպի ունի, դանդաղ գնացեք, հետևներիցդ կհասնի»: Նրա հակասական ցանկությունների ցանկն ընդարձակվում էր, մինչև որ Ֆաբիեն չկարգադրեց լռել:

Թե այդ աղջիկն ինչին էր պետք՝ չէի հասկանում: Որքան հիշում եմ՝ միայն մի անգամ էր մարմնավաճառ բերել իր մոտ, բայց հետո, երբ ինքս բոլոր նախազգուշական միջոցները ձեռնարկելով՝ այցելեցի այդ կնոջը, ասաց, թե մեր հրամանատարի նիզակը, որ Տերը պարգևել է բոլոր տղամարդկանց, կոտրված է: Հիշում եմ՝ մտածեցի՝ չարժեր, որ կրծքին կրեր իր մեդալոնը: Ցայլքի մազերն այն դարմանների թվում են, որոնց առեղծվածային իշխանությունը մեր մարմնի ու ոգու վրա գիտական բացատրություն չունի: Փարիզյան դիպլոմով բժշկի իմ թերահավատությունը մնացել է անցյալում, պատերազմն իմ մեջ արթնացրել է հորից ու մորից ավելի հեռու նախնիների սնապաշտությունը: Պատրաստ եմ ընդունելու, որ մեկնելիս այդ անգլուհին հոգացել է, որ բաժանման ընթացքում սիրեցյալին զրկի այրական ուժից:

Զինանոցի հետևում, գլխավոր զբոսատեղից մի քիչ կողք ընկած, բայց նրա ցանկացած կետից լավ տեսանելի՝ հրարից կես քայլի վրա պառկած էին հունական հագուստով չորս հոգի: Ձեռքերը ծալված էին կրծքի տակ, յուրաքանչյուրի կրծքին՝ մաշված անագե ափսե՝ երկու-երեք սևին տվող պղնձադրամներով: Նրանց կողքին նստած էր մի ծեր հույն ու սոճու ճյուղով քշում էր մեռածների դեմքերին նստող ճանճերը:

Ըստ երևույթին, սպանվել էին փախուստի փորձ անելիս, թիկունքից: Դիմացից հագուստի վրա շեղբի կամ գնդակի հետքեր չկային: Բոլորի կոպերը փակ էին, միայն ամենամոտիկի մի կոպը բաց էր մնացել, երևում էր սպիտակուցի շերտը՝ կապիճից դուրս ընկած ակնախնձորի տակ: Ծնոտները կապված էին ցարուգների կապիչներով: Արդեն քայքայման բծեր էին երևում ճակատի արևառ մաշկի տակից: Գեղջկական խոշոր թաթերը, որոնց վրայից անհետացել էին աշխատանքից ուռած երակները, դեմքերից անկենդան էին թվում: Վերքերից արյունը վաղուց էր հոսել, մարմինների տակ քարասալերը մաքուր էին, չոր: Զբոսնողները նույնիսկ չէին ջա-

նում հեռվից շրջանցել նրանց, թերևս միայն կանայք էին մեքենայաբար քշտում փեշերը: Ամենազգայունները քթին էին տանում թաշկինակները, չնայած համարյա նեխահոտ չկար: Ծովի քամին հեշտությամբ հաղթահարում էր հոտը: Մեր գլխավերևում ճախրում էին ճայերը: Պատերազմի հինգ տարիներին նրանք ագռավներից վատ չէին սովորել մարդու միս ճաշակել, ու հիմա դռան ժանգոտած ծխնիների ճռռոց հիշեցնող նողկալի ճիչերով գորշափետուր մրցակիցներին հետ էին պահում ավարին ոտնձգելու մտադրությունից: Թվական գերակշռությունը նրանց կողմն էր:

Մոտեցան Ցիկուրսն ու Մոսցեպանովը: Ասացին, որ այդ չորսին գիշերը կտեղափոխեն փակ տարածք, թե չէ ջրագռավները կկտցեն դեմքերը, իսկ ցերեկը նորից կբերեն այստեղ: Դեռ բավարար փող չի հավաքվել հոգեհանգստի ու թաղման համար: «Տերտերներն առանց փողի հոգեհանգիստ չե՞ն անի»,- հեգնանքով հետաքրքրվեց Ֆաբիեն:

«Տերտերները կին ունեն, երեխաներ: Բոլորն էլ ապրել են ուզում»,- իր սարսափելի ֆրանսերենով նրանց արդարացրեց Մոսցեպանովը՝ աչքով անելով ինձ, ասես այն չէր ուզում ասել, ինչ ասում էր:

Ֆաբիեն հանեց քսակն ու ափսեներին բաժանեց ողջ պարունակությունը: Զիզին հուսահատ հայացքով հետևում էր անագին զնգացող դրամներին: Արդեն հասկացել էր, որ ստիպված պիտի ուրիշ հաճախորդ փնտրի: Ես, Մոսցեպանովն ու Չեկեին էլ մեր բաժինը բերեցինք, իսկ Ցիկուրիսը ցեղակիցների օրինակով ձևացրեց, թե դա իրեն չի վերաբերում: Իմ ժողովուրդը զուրկ է սենտիմենտներից: Հրեաների պես՝ մենք էլ պատրաստ ենք մեռնել հանուն հավատի ու խեղդվել գրոշի համար: Մորեացի հույները բարբարոսաբար ազատատենչ ու սակավապետ են, իսկ այնպիսիք, ինչպիսիք ես ու հայրս ենք, ցրված են աշխարհով մեկ, Աֆրիկայից մինչև Տագանռոգ ու Պետերբուրգ, ու նաև նրանով են նման Իսրայելի որդիներին, որ կամ ողջ կյանքում սողում ենք չորեքթաթ, որ ավելի ամուր կառչենք օտար հողից, կամ գլուխներս ցցում երկինք, որ ընդհանրապես այն չտեսնենք:

Մեր ընկերախումբը ցրվեց: Ֆաբիեն վերադարձավ ճամբար, Ցիկուրիսը որոշեց այցելել ծանոթ օդեսացի նավաստիներին, Չեկեին իր ալբա-

նուհու հետ կորավ ամբոխի մեջ, իսկ ես ու Մոսցեպանովը մտանք մեր զինվորների շրջանում հայտնի մի էժանանոց տրատորիա, որ կից էր նույնքան խղճուկ՝ քրքրված կեղտոտ մահուդով պաստառած կաղոտն սեղաններով բիլիարդանոցին: Այդ սեղաններից երեքը պատկանում էին Խարային՝ Սանտա Ռոզայի սիրեցյալին, որը ժպիտով էր ընդունել նրա մահվան լուրը:

Ֆաբիեն ինձ մի անգամ բերել էր այստեղ, որ ցույց տա այդ կնոջը: Սպասում էի, որ կտեսնեմ Էվմենիդեսի և Ճառլոտա Կորդեի հիբրիդը, բայց տեսա մի շարքային հույն քաղքենուհու, ինչպիսիք լիքն էին Տագանռոգում: Նրանք շորերի հուղարկավորման գույնը անճաշակ զուգորդում էին մոդայիկ ձևերի հետ, մռայլ էին դրսում, շողոքորթ՝ մորս հետ, ու ճղճղան իրենց ընտանեկան շրջանում, բայց առաջին տպավորությունս, որից կուռքեր ենք կերտում մեզ համար, կեղծ դուրս եկավ: Խարան հիմա այնպիսի տեսքով էր բազմել աթոռակին, ասես աչքերս ինձ խաբում էին, և նա իրականում արծվի պես ճախրում էր ծխախոտի ծխի ամպերի և մահուդի վրայով քերծոտած գնդերը գլորող խաղացողների գլխավերևում: Ոչինչ չէր վրիպում նրա գիշատիչ հայացքից:

Գինու շուրջը Մոսցեպանովն ինձ հետ կիսեց իր մտքերն այն մասին, թե որքան երջանիկ են ապրելու հույները թուրքերին ու եգիպտացիներին վռնդելուց հետո: Հունաստանի ապագան նրան պատկերանում է որպես Ռուսաստանի պատճեն, բայց առանց ռուսական գանձագողության, հարբեցողության, անարդար դատարանի և հայհոյական զազրախոսության: Ցանասեր գեղջուկները, ազնիվ դատավորներն ու իմաստուն միապետը այն կբարձրացնեն վեհության ու փառքի գագաթը: Սուրբ Սոֆիա վերադարձված զանգերի ղողանջի ներքո Աթենքում կհիմնվի ակադեմիա, Սալոնիկում ու Նավպլիոնում՝ համալսարաններ: Այդ հաստատությունների ներքին կազմությունը նա տեսնում է հին կիևյան բուրսայի նմանությամբ, որի մասին ինձ հենց ինքն էլ պատմել է, իսկ արտաքուստ հիշեցնում են Բանականության թագավորություն, ինչպիսին այն պատկերվում է մեր հայրերի ջահելության ժամանակի փորագրանկարներում՝ սյունասրահներով, շատրվաններով, ձիթենու և դափնու պուրակներում դրված փիլիսոփաների անդրիներով:

Նրա իդեալը ծուռ հայելու պես անդրադարձնում է Ֆաբիեի երազանքն ազատ Հունաստանի մասին, որն օրինակ է տալիս ողջ մարդկությանը: Մոսցեպանովը կանգնած էր այն ճանապարհի սկզբին, որն իմ ընկերն անցել էր համարյա մինչև վերջ:

«Ծովերով կլողան շոգենավեր»՝ իր հովվերգության ամփոփիչ վրձնահարվածն արեց նա, ու դրանով երևակայությունը սպառվեց:

Առաջարկեցի բիլիարդ խաղալ, բայց նոր էինք շարել խաղագնդերն ու զինվել զարկածողերով, երբ խաղացողներն ու տրատորիայի այցելուները Խարային խնդրեցին իրենց համար որևէ բան երգել: Այլ հարավային երկրներում հասարակ ժողովուրդը կենսախինդ է, տխրությունը հասարակության բարձր դասերի արտոնությունն է, բայց մեզ մոտ նույնիսկ նավաստիներն ու առևտրականներն են սիրում մահվան երգեր: Զարմանալի չէ, որ Խարան երգեց հենց իր հորինած երգը Սանտա Ռոզայի մասին: Երբ երգը հայտարարվեց, որոշեցի, որ խոսքը Նավարինում նրա անձնազոհության մասին է, բայց սխալվում էի:

Ահա այդ բալլադի համառոտ բովանդակությունը:

Սանտա Ռոզան արշալույսին վեր է կենում անկողնուց և ասում իր սիրելիին. «Մնաս բարով, ես լքում եմ քեզ»:

Կինը տարակուսում է. «Ինչպե՞ս: Ինչո՞ւ: Մի՞թե Մորեայում ինձնից գեղեցիկ աղջիկ կա»:

«Շատ են գեղեցկուհիներն աշխարհում,- պատասխանում է Սանտա Ռոզան,- բայց իմ սիրտը մեկին է պատկանում»:

«Անունը Հունաստա՞ն է»,- հարցնում է աղջիկը:

«Ո՛չ»,- առարկում է նա:

«Ազատությո՞ւն»,- հետևում է հարցը:

Պատասխանը նույնն է:

«Մա՞հ»,- շարունակում է հարցնել կինը և ստանում իր ենթադրության հաստատումը:

Մահ բառը Խարան երգեց իտալերեն, որը Նավպլիոնում բոլորը թեկուզ մի քիչ գիտեն: Հունարեն բառն արական սեռի է և կխախտեր ողջ կառույցը:

Երգն այնքան պարզ էր, որ Մոսցեպանովը հաստատ ամեն ինչ հաս-

կացավ: Իտալերեն morte-ն առավել ևս չպիտի շփոթեցներ նրան, բայց երբ հասարակությունը ծափահարեց ու ոգևորված՝ զարկածողերով սկսեց թխկթխկացնել սեղաններին, նրա ձեռքերը մնացին գրպաններում:

«Դուր չեկա՞վ»,- հարցրի ես:

«Նա է գայթակղել: Ինքը դա չէր անի»,- պատասխանեց ոչ թե ինձ, այլ սեփական մտորումներին:

«Ո՞վ՝ նա,- չհասկացա:- Մա՞հը»:

«Նա»,- աչքերով Խարային ցույց տվեց Մոսցեպանովը:

«Ձեր կարծիքով,- զարմացա ես,- Խարան սիրեցյալին ներշնչում էր, որ սիրում է ոչ թե իրեն, այլ իր մա՞հը: Ինչո՞ւ»:

«Ձանձրացել էր նրանից»,- հակիրճ բացատրեց Մոսցեպանովը:

Ընդհանրապես, նա այնքան պարզունակ չէ, որքան թվում է: Վաղուց եմ նրա մեջ այլասության հակում նկատել: Հնարավոր է, որ մշտապես հիշատակվող տգրուկները, որ ծծել էին նրա վատ արյունը, և՛ այդ արյունը, և՛ կծած անդամով չարագործը, և՛ նրան խեղած շները ինչ-որ բանի այլաբանությունն են, ինչո՞ւ չեմ հասկանում, չնայած տվյալ դեպքում ամեն ինչ փոքրիշատե հասկանալի է. Սանտա Ռոզան իրենով խորհրդանշում էր հելլենասերներին, Խարան՝ նրանց բարոյախոսություններից հոգնած Հունաստանը:

Մայոր Բորիս Չիխաչով: Հիշատակարան

Սեպտեմբեր, 1826 թ.

Իմ գրառումներում նշվում է. Մոսցեպանովի մատանին հանձնվել է Նատալյա Բաժինային 1825 թվականի մարտի 21-ին: Այդ օրվանից մի անգամ չէ, որ այցելել եմ նրան, և այդ օրերը նույնպես արձանագրված են: Նրա մոտ եղել եմ գործերով Նիժնիտագիլյան գործարաններ այցելելիս, և միշտ՝ ոչ դատարկաձեռն. մեկ գլխաշոր եմ նվիրել, մեկ հայելի, մեկ որդուն որևէ քաղցրավենիք կամ խաղալիք: Նկատել եմ, որ պատուհանի ապակին ճաքել է, նորն եմ բերել, զինվորներս փոխել են: Հիմա չի դզզում, երբ խփում է Երուսաղեմ մուտքի եկեղեցու մեծ զանգը: Նա ինձ թեյ էր հյուրա-

սիրում, ես պատմում էի Մաշայի, կնոջս մասին:

Կինս մահացել էր ծննդաբերության ժամանակ: Մաշային մեծացրել էի, ամուսնացրել, և այդպես էլ ամուրի էի: Պատահում էր՝ վերջնական որոշում ես ամուսնանալ, հարսնացու ես փնտրում, որ դուրեկան լինի, դու էլ կարծես իրեն ես դուր գալիս, բայց ամուսնությունը շտապելու գործ չի: Մինչև բանը դրան հասնի, մեկ էլ տեսար՝ չհամբերեցիր, այցելեցիր ուրախ տուն կամ որևէ զինվորական այրու, հյութդ թափեցիր, և ահա՝ ընտրյալդ արդեն առաջվա պես լավը չի: Նայում ես նրան ու մտածում՝ ինչի՞ն է պետք: Երեխաներ ծնելո՞ւ: Մաշա ունեմ, երկու թոռ, ու դեռ կլինեն, զբաղմունք, փառք Աստծո, կա: Գումարտակում գործը շատ է, չես հասցնի ծանծրանալ:

Հիմա ուրիշ է: Պառկում ես որևէ մեկի հետ, ցանկությունդ կատարում, բայց, մեկ է, Նատալյան է աչքիդ առաջ: Ընդ որում, ինչն է տարօրինակ, նույնիսկ քնելուց առաջ, անկողնում, նրա մասին եմ մտածում, ու գիշերն էլ երազ է գալիս, բայց երբեք մերկ չեմ տեսնում: Չենք պառկում իրար հետ, այլ զբոսնում ենք գեղեցիկ վայրերում կամ զրուցում ենք: Երազում հաճախ ժպտում է ինձ, չնայած արթմնի երբեք նրան ուրախ չեմ տեսել: Նրա այդ ժպիտից երազախաբ եմ լինում, բայց դրանից արթնանալուց էլ վատը չի դառնում: Գնդերը դատարկ են, իսկ հոգիդ՝ լիքը:

Մոսցեպանովին վերջին անգամ տեսել էինք նախանցյալ սեպտեմբերին, Պերմում, բայց երկու տարին իմ ու նրա համար նույն ժամանակը չեն: Տարիքը, երբ մարդ գիտակցում է իրեն, սկսվում է տասնհինգ տարեկանից: Նատալյան հիմա քսանհինգ տարեկան է, լա՛վ, քսանյոթ, ես՝ քառասունն անց, ուրեմն ստացվում է, որ նա Մոսցեպանովին չի հանդիպել իր բանական կյանքի մեկ տասներորդը, իսկ ես արդեն քսաներորդը: Այդ երկու տարին իմ օրացույցով կրկնակի կարճ է, քան նրա: Իմ հաշվարկով՝ վերջերս եմ տեսել, նրա հաշվարկով՝ վաղուց: Հետևաբար կարող էր մոռանալ կամ չմտածել նրա մասին:

Մի շիշ մադերա վերցրի, կոնֆետներ, նարինջ ու մեկնեցի Նիժնիտագիլյան գործարաններ: Եկատերինբուրգից հեռու է, մի օրում չես տեղավորվի, բայց կատաղած շան համար յոթ վերստը ճամփա չի: Գնում եմ, ճանապարհի երկարությամբ արոսենուց կարմրած անտառներ են, չոր

խաշամ է թափված: Օդն ասես ապակի լինի: Եղևնիների յուրաքանչյուր ճյուղը երևում է: Գեղեցկությո՛ւն:

Գիշերեցի վաշտում: Երեկոյան Նատալյային լուր տվի, որ հաջորդ օրը կայցելեմ, ու կեսօրին նրա մոտ էի: Զուգվել-զարդարվել էր իմ այցելության կապակցությամբ, հրավիրեց սեղանի մոտ: Ասացի, որ նախաճաշել եմ, բայց թեյից չեմ հրաժարվի: Հանեցի մադերան, կոնֆետները լցրի ափսեի մեջ: Մի նարինջը շերտ-շերտ կտրեցի, բայց կեղևահան չարի, միջուկը Ֆեդենկան կերավ, նրա տեղը դրեցի մոմի կտորը: Կեղևով շուրջը պատեցի ծաղկաթերթերի տեսքով, վառեցի պատրույգն ու տղային տարա խորդանոց: Այնտեղ մթան մեջ էլ մնաց իր չինական լապտերիկի հետ, իսկ ես վերադարձա սեղանի մոտ, գինի լցրի բաժակները: Նատալյան իր բաժակից միայն կում արեց՝ ասելով, որ գինու սիրահար չի: Կոնֆետից մի քիչ կծեց, մնացածը դրեց թղթի մեջ: Խոսքը խոսք բերեց, ու ես հարցրի. «Կամուսնանա՞ս ինձ հետ»:

Նատալյան ազատ է, կցագրված իրբիտյան քաղքենությանը: Հայրը մահացել է, եղբայրները նրան ղեկավար չեն, որևէ մեկից թույլտվություն խնդրելու կարիք չունի, բացի մորից, դե, նա էլ դստեր թշնամին չի: Իմ կողմից ամեն ինչ այնքան էլ հեշտ չի, բայց Ուրալում ազնվական կոչումն ավելի փոքր նշանակություն ունի, քան այլ վայրերում:

Մտածում էի՝ Մաշայի հետ ինչ-որ կերպ կբացատրվեմ, կհասկանա հորը, իսկ որ այդպիսի տիկնոջով մեր աստիճանավորներն իրենց շրջապատ չեն ընդունի, մի կերպ կդիմանամ: Փոխարենը՝ ընկեր կունենամ ծերությանս, որ սարերի հետևում չէ:

«Կամուսնանամ»,- ոչ միանգամից պատասխանեց Նատալյան, բայց և ոչ այնպես, երբ մարդ միանգամից ամեն ինչ որոշած է լինում, բայց ձևացնում, թե մտածում է: Ձև էլ չարեց, թե ականջներին չի հավատում: Վերջին այցելությանս այդ ոգով ակնարկներ էի արել, նրա խելքով՝ դժվար չէր ամեն ինչ հասկանալ:

Վեր կացա ու համբուրեցի շրթունքները: Թույլ պատասխանեց: Ձեռքերս իջան կողերով, որ կանգ առնեն ազդրերի վրա, բայց այստեղ խորդանոցից վերադարձավ Ֆեդենկան: Մոմը մինչև վերջ վառվել էր, նարնջե

լապտերիկը՝ կոկվել: Նատալյան վերցրեց որդու ձեռքից, ու հանկարծ տեսա, որ նրա մեջ էլ կրակը մարել է, դեմքը՝ թոշնել, քիթը՝ ցցվել, ինչպես վառարանի ծխնելույզը՝ հրդեհից հետո: Ի՞նչ քսանհինգ: Երեսուն ու ավելի, ամենաքիչը: Ո՞ւր էին աչքերս:

Նա դա կարդաց դեմքիս ու մեղավոր ժպտաց, ինչպես երբեք չէր ժպտացել իմ երազներում: Ժպիտի հետ իմ առջև կրկին հայտնվեց այն կինը, որի մոտ երեկ գալիս էի արոսենու անտառներով, բայց անմիջապես էլ հասկացա, որ ուրիշ բանի համար է ներողություն խնդրում, նրա, ինչ դեռ պատրաստվում էր ասելու: Վրան ընկած էր ստվերն այն մարդու, որին այսուհետև պետք է մոռանար:

Պարզվեց, որ խնդրանք ունի:

Մոսցեպանովին կալանավորելուց ու Եկատերինբուրգ տեղափոխելուց հետո նրա ունեցած-չունեցածը տարել էին գործարանի գրասենյակ, և արդեն երեք տարի այնտեղ էին պահում: Չե՞մ կարող, արդյոք, այնպես անել, որ դրանք տան իրեն:

Կառեթս, զինվոր-կառապանը՝ նստիքին, կանգնած էր սանդղամուտի տակ: Քառորդ ժամից մտա այն աշխատասենյակը, որտեղ ժամանակին ջանում էի Մոսցեպանովից իմանալ նրա գաղտնիքը: Հնոցների ու մեխանիզմների նույն ուրվանկարներն էին պատերին, սեղանին՝ նույն գրապարագաները՝ թանաքամաններին դրոշմած դեմիդովյան հին սամույրով: Սիգովը տեղում էր, իսկ ես հույս ունեի, որ չեմ տեսնի: Նրա հետ Մոսցեպանովի մասին խոսել չէի ուզում: Նա, իհարկե, ամենուր լրտեսներ ունի, նրան, իհարկե, հայտնել են, որ այցելում եմ Նատալյային. կհամադրի մեկը մյուսի հետ, իսկ եթե իրերը գողացվել են, չի ցանկանա խոստովանել, և վրեժ լուծելով իրեն անհարմար վիճակի մեջ դնելու համար՝ կմերժի խնդրանքս որևէ վիրավորական պատրվակով: Ստածում էի, որ նրա համար ցավալի կլինի հիշատակումը մի մարդու մասին, որի զրպարտագրերը չէին կարող ընդհանրապես անհիմն լինել, և որի մահը մասամբ իր խղճին էր: Բայց երբ հնչեց Մոսցեպանովի անունը, Սիգովի դեմքին ոչինչ չարտահայտվեց: Նրա համար անցած-գնացած օրերի բան էր:

Մեռած թշնամու իրերի մասին ոչինչ չգիտեր կամ էլ երեք տարում

հասցրել էր մոռանալ, բայց խորհրդատվության համար կանչված գործակատար Ռյաբովը զեկուցեց, որ դրանք արկղի մեջ են պահվում, արկղը նկուղում է:

Հարցրի՝ չի՞ կարելի, արդյոք, դրանք տալ ինձ: Սիգովը զարմացավ, բայց դա կանխատեսել էի ու բացատրություն պատրաստել. թե հանգուցյալի՝ Կազանում ապրող եղբայրը՝ պաշտոնաթող մայոր Մատվեյ Մոսցեպանովը, պահանջում է դրանք իրեն հանձնել որպես օրինական ժառանգություն: Ավագ եղբոր անունն ու աստիճանը նշվում էր նամակում, որը Պերմից նրան էր ուղարկել կրտսերը: Նա այն ժամանակ զրկված էր նամակագրության իրավունքից, և ես էի իմ անունով նամակը հանձնել փոստատուն:

«Իսկ դո՞ւք ինչ կապ ունեք»,- հարցրեց Սիգովը:

Այդ հարցն էլ էի կանխատեսել և անմիջապես պատասխանեցի, որ եղբոր միջնորդությունը քննարկվել է Պերմի գավառական դատարանում ու բավարարվել: Դատական քարտուղարն ընկերս է, գիտի, որ ծառայության բերումով լինում եմ Նիժնիտագիլյան գործարաններում, ու խնդրել է վերցնել իրերը:

Ռյաբովը ևս մի մի գրասենյակային ծառայողի հետ կեչափայտի մի մեծ արկղ բերեց: Վրան կողպեք կար, բայց առաջնապատի ու կափարիչի արանքում սոսնձված կնիքով թղթի երիզը պատռված էր:

«Ինքն իրեն է պոկվել,- ասաց Սիգովը, երբ ուշադրությունը հրավիրեցի դրա վրա:- Ո՞ւմ է պետք այդ հնոտին»:

Կողպեքը տեղի տվեց ծառայողի բերած բանալիների առաջին իսկ կապին: Բանալին ակնհայտորեն բախտաբերի էր ընտրվել, այնպես որ, կարծում եմ, ցանկացածը հարմար կգար: Հետ գցած կափարիչի տակից ամպի պես դուրս թռավ ցեցը, նամշած լաթերի հոտ եկավ: Ռյաբովը ձեռքը պարզեց վերևում դրված ոչխարենու կացավեյկային, բայց Սիգովը, փոշուց կնճռոտվելով, հետ պահեց նրան և ինձ առաջարկեց վերցնել բոլոր իրերը՝ արկղի հետ միասին: Նրա պահանջով ստացական գրեցի, որ վերցրել եմ Մոսցեպանովի լիարժեք պահպանված ողջ ունեցվածքը: Թուղթն առանց կարդալու խցկեց սեղանի դարակն ու ըմբռնումով գլխով արեց,

երբ նրա առաջ դրեցի արկղի կողպեքը՝ որպես Մոսցեպանովին չպատկանող իր: Ռյաբովը ծառայողի հետ արկղը տեղավորեց ինձ սպասող կառեթում, իսկ Նատալյայի սենյակ տարանք երկուսով՝ կառապանի հետ: Փթից մի քիչ պակաս քաշ կունենար:

Տասը րոպե չանցած արկղը դատարկ էր: Պղնձաշրջանակ սրբապատկերները, երկու գիրքն ու հախճապակե թանաքամանը Նատալյան, փոշին առնելով, դրեց սեղանին, սոճու արմտիքով անհմուտ շրջահյուսած իշխան Իպսիլանտիի դիմանկարը հենեց պատին: Մնացած իրերը, հպանցիկ նայելով, հատակին էր թափում:

Աստվա՛ծ իմ, ի՞նչ հնոտի էր: Ցեցն այդտեղ խրախճանք էր արել, բայց առանց դրա էլ քիչ բան կփոխվեր: Գլխարկները վատ տնտեսուհու թխած բլիթներ էին հիշեցնում, շապիկների վրա՝ ժանգաբծեր, բրդե ծածկոցը շղարշ էր դառել, իսկ գայլագույն նապաստակի մորթով աստառածն այնպիսի տպավորություն էր թողնում, ասես մինչև արկղում հայտնվելը, մի տասը տարի չէր օգտագործվել:

Հատակից վերցրի իրերից մեկի հետ ընկած թղթի կտորը: Արկղում պահվող Մոսցեպանովի ունեցվածքի ցուցակն էր: Վերջին տողում նշվում էր. «Փողը թղթադրամներով՝ 36 ռուբ., արծաթով 3 ռուբ., պղնձով 24 ռուբ.»:

«Կա՞»,- հարցրի ես:

Նատալյան օրորեց գլուխը, իսկ հարցին, թե է՞լ ինչ է պակասում, ասաց՝ սուսերն ու ծխամորճները: Գլխիս դրի շքագլխարկն ու վճռական ուղղվեցի դեպի դուռը՝ տենդագին մտածելով՝ ոնց եմ Սիգովին բացատրելու, թե ինչու հանկարծ որոշեցի ստուգել արկղի պարունակությունը: Ոչ մի ճշմարտանման բացատրություն մտքովս չէր անցնում, և երբ Նատալյան, հասկանալով կասկածներս, փակեց ճանապարհս, ամենաստոր կերպով ուրախացա դրա համար ու պարտքս համարեցի հարցնել.

«Համարյա քառասուն ռուբլի, կատա՞կ բան է: Եվ սուսերն էլ ինչ-որ բան արժի»:

«Մի՛ գնացեք, պետք չի»,- խնդրեց նա:

Խոժոռված դեմքով, իբր դժգոհություն արտահայտելով, որ թույլ չտվին պաշտպան կանգնել ճշմարտությանը, իսկ իրականում նահանջե-

լու փոքրոգի պատրաստակամությամբ, մի բաժակ մադերա կուլ տվի, լցրի երկրորդը: Նատալյան այդ ընթացքում խուրձ արեց հատակին թափած իրերն ու Ֆեդենկայի օգնությամբ քաշ տվեց բակ: Քիչ անց ես էլ դուրս եկա նրանց հետևից: Մոսցեպանովի ուսեցվածքը կիտված էր սեպտեմբերվերջի լքված մարգին: Արևի պայծառ լույսի տակ՝ ասես շրջմոլիկի մահվանից հետո դեն նետված խղճուկ քրջեր լինեին, որ նրան և՛ հագուստ, և՛ անկողին էին ծառայել: Նատալյան կույտի վրա ինչ-որ յուղոտ հեղուկ լցրեց շշից:

«Նավթա է,- ասաց նա:- Պեչորայից են բերել, Ուստ-Սիսոլսկից: Գրիգորի Մաքսիմովիչը սրանից յուղ էր քամում կանթեղների համար»:

Ֆեդենկան մոր կարգադրությամբ քաշ տվեց-բերեց Իպսիլանտիի նկարն ու գցեց կույտի վրա: Չխկաց կայծքարը: Արևի տակ կրակը համարյա չէր երևում, սակայն հունական գահի կռնատ հավակնորդը պատվեց բշտիկներով, բռնկվեց ու չքացավ ծխի մեջ: Բոցն արագ բռնեց ողջ կույտը: Նատալյան նայում էր աչքերի հարբած փայլով, իսկ ես նեղվեցի: Տղեկի պես վազել էի Սիգովի մոտ՝ այդ իրերի հետևից, նվաստացել նրա առաջ, խաբել: Ինչի՞ համար:

Կրակի լեզվակները խարույկից սողացին բանջարանոցի փրերի վրայով: Նատալյան վերցրեց բահն ու սկսեց հող լցնել վրան, որ կրակը չհասնի մարագներին ու բաղնիքին: Նկատեցի, որ իմ հայացքից խուսափելով՝ փորձում է կռանալ կամ շրջվել: Արցունքներն է թաքցնում՝ մտածեցի, բայց երբ համենայն դեպս կարողացա տեսնել դեմքը, ապշեցի: Ո՛չ տխրություն էր արտահայտում, ո՛չ ցավ, ո՛չ դառնություն՝ նախորդ կյանքին հրաժեշտ տալու համար, որն այդ օրը բնական կլիներ թաքցնել ինձնից, այլ վրեժխնդիր ու հաղթական հրճվանքի պես մի բան: Նույն վայրկյանին հասկացա, որ Մոսցեպանովը ողջ է, ու Նատալյան դա գիտի: Վրեժ էր առնում նրանից, որ մոռացել է իրեն, իր մոտ չի կանչել: Հոգու աչքերով պիտի տեսներ իր բանջարանոցում, իսկ իրականում՝ սրտում վառվող այդ կրակը: Ես կրակին նայում էի նույնքան ուժեղ, սակայն բովանդակությամբ և իմաստով տարբեր զգացումով. ուզում էի զոհաբերություն տեսնել մեր ապագայի զոհասեղանին:

Ծուտով մարգին միայն անկշիռ սև քրջերի մոխրակույտ մնաց: Քամի

չկար, բայց մոխիրը թրթռում էր տաք օդի հոսանքի տակ: Մի քանի փերթ փորձում էին թռչել: Տհաճ էր հետևել այդ հետմահու կյանքին: Մենք երկու բահով հող լցրինք դրանց վրա ու վերադարձանք տուն: Նատալյան նյարդային ծիծաղում ու քաշքշում էր Ֆեդենկային, բայց ես չէի շտապում կիսել նրա ուրախությունը՝ կասկածելով, որ այդ ամենը վատ է վերջանալու: Հանգուցյալ կնոջս ու Մաշայի նույնպիսի անբնական ուրախությունը հաճախ ավարտվում էր արցունքներով:

Նատալյան խորդանոց տարավ կրակե մահապատժից խույս տված արկղն ու երկար մնաց այնտեղ: Ներս եկավ լացից աչքերն ուռած, նստեց սեղանի մոտ և ինձ չառաջարկելով միանալ՝ թափով երկու բաժակ մադերա քամեց: Ամեն բաժակի վրա մի կոնֆետ կերավ, ընդ որում՝ չկծելով, այլ ամբողջությամբ խցկելով բերանը: Ոչինչ չհարցրի, բայց չէի կասկածում, որ եթե Մոսցեպանովը մեռած է, ապա իմաստ չուներ կազմակերպել այդ աուտոդաֆեն: Նատալյան ինքը խոսեց նրա մասին:

Պարզվեց՝ Մոսցեպանովի եղբայրը, այլաբանորեն, որ նամակը բռնելու դեպքում ոչինչ չհասկանան, նրան գրել էր, որ Գրիգորի Մաքսիմովիչը ձմեռել է իր մոտ, իսկ տաքերն ընկնելու հետ ուղևորվել հարավ: Դրանից հետո Նատալյան եղբայրներից նամակ չէր ստացել: Մտածում էր, որ Գրիգորի Մաքսիմովիչը Կազանից Վոլգայով լողացել է Հունաստան:

«Վոլգայով Հունաստան չես հասնի»,- ասացի ես:

Նա լռեց ու սկսեց մոլեգին շարժումներով կլպել նարնջի կեղևը: Եղունգների տակից ցայտող հյութի կաթիլները փայլփլում էին արևի տակ: Փոքրիկ ամառվա եռուն շրջանն էր:

Մտածեցի, որ եթե Մոսցեպանովը ողջ լիներ, մեկ տարուց ավելի ժամանակում ինչ-որ կերպ լուր կտար:

Նատալյան կրկին կարդաց մտքերս:

«Դուք արդեն երկու անգամ թաղել եք նրան,- պատասխանեց չբարձրաձայնվածին,- իսկ սիրտս երբեք չի ասել, որ նա մեռած է: Ու հիմա էլ չի ասում»:

«Իսկ եթե ես մեռնեմ, կասի՞»,- հարցրի ես:

Նա կրկին ձեռքը տարավ գինուն: Առաջ ընկնելով՝ շիշը հրեցի սե-

ղանի մյուս ծայրը: Այնտեղ դրված էին արկղից հանած գրքերը՝ հրետանային կանոնագիրքն ու էլի մեկը, ավելի հաստ: Բացեցի, և ականջներիս մեջ հնչեց Մոսցեպանովի ձայնը. «Գնացեք գիմնազիա, խնդրեք Ժողովրդական լուսավորության հանդեսը...»: Թողարկման տարին ու համարը մոռացել էի, բայց հաստատ այդ հանդեսն էր:

«Վերցնե՞մ»,- նայեցի Նատալյային:

Անտարբեր գլխով արեց: Պարզ էր, որ այնտեղ պահված գաղտնիքն անհայտ է նրան: Պայմանավորվեցինք, որ հաջորդ շաբաթ պորուչիկ Պերեվոզչիկովը նրան կբերի ինձ մոտ՝ Եկատերինբուրգ, կգնանք ծանոթանալու Մաշայի հետ: Հարցրեց՝ կարո՞ղ է Ֆեդենկային հետը բերել: Ասացի՝ հաջորդ անգամ, ամսագիրը դրեցի ծոցս ու մեկնեցի:

Նշումներով հոդվածը, ինչպես Կոսոլապովի մոտ գտած գրքերում, վերնագրված էր «Հունական կրակի պատմության ու քիմիական հատկությունների մասին»: Հենց առաջին էջի լուսանցքներում կտրուկ ուղղահայաց գծով առանձնացված էր պատմությունն այն մասին, թե Կոնստանտին Մեծը ինչպես էր դրսի կանչ լսել, իսկ հետո հրեշտակը նրան բացել էր այդ հրաշք-զենքի գաղտնիքը, որը հարյուրամյակներով Բյուզանդիան փրկել էր սարակինոսներից ու սլավոններից: Ես, բնականաբար, գիտեի դրա մասին: Այդ հեղուկ խառնուրդի մասին, որով հույները վառեցին կիևցի Իգորի նավատորմը, պատմվում է գիմնազիական դասագրքում: Այն լցնում էին սիֆոնների մեջ, վառում ու դարբնոցի փուքսերով կրակը փչում թշնամու զորքի, իսկ ծովամարտում՝ նավերի վրա: Ջուրն անզոր էր մարելու այդ կրակը: Արաբներն ու ֆրանկները չկարողացան հույներից կորզել այդ խառնուրդի գաղտնիքն ու իրենք նույնպես գտնել չկարողացան: Անհաջողության էին մատնվել և՛ ալքիմիկոսները, և՛ ժամանակակից գիտնականները, ներառյալ՝ հոդվածի հեղինակը: Նա միայն զգուշորեն ենթադրում էր, որ խառնուրդի բաղադրության մեջ անմշակ նավթայի, նույն ինքը՝ նավթի հետ, բորակ, չմարած կիր, հանքային յուղեր ու խեժ է եղել: Հնարավոր է՝ նաև պոտաշ: Պակաս հավանական է՝ հանքածյութ: Թե ինչ բաժնեչափերով էր այդ ամենը խառնվում, հանելուկ էր նույնիսկ այն դեպքում, եթե բաղադրիչները ճիշտ գուշակվեին: Հոդվածի հեղինակը գալիս էր եզրակացության,

որ հրեշտակի արարածն անհասանելի է մահկանացուին, սակայն Մոսցեպանովը, ըստ երևույթին, իրեն այդ կանոնի տակ չէր համարում: Ինչ-որ վերին կանչ էր հիշատակվում Եկատերինբուրգի հարցարանին տրված նրա պատասխաններում:

Ուրեմն ահա՛ ինչի համար էին այդ բոլոր տառապանքները:

Մի՞թե նա՝ հրետանավորը, չգիտեր, որ այդ տեսակի հրկիզող խառնուրդը վաղուց օգտագործվում է զինվորական գործում: Դրանք տարբեր բաղադրություն, բայց նույն հատկություններն ունեն: Կոնգրիվի հրթիռները, բրանդսկուգելի տիպի ռումբերը:

Գուցե համենայն դեպս հասկանում էր, բայց հույս ուներ Արակչեևի ու հանգուցյալ թագավորի միջոցով համոզել հույներին, որ բացել է նրանց հնագույն զենքի գաղտնիքը: Հիշեցնել փառավոր հաղթանակները, որ այդ զենքը նրանց բերել է նախկինում: Ոգեշնչել նոր հաղթանակների: Զմեյ Գորինիչը նրան պետք է հասցներ Պետերբուրգ, այնտեղ ավելի հեշտ էր թվում առաջ մղել իր նախագիծը, բայց այդ համեմատաբար սթափ դատողություններով հանդերձ, իրեն միայն մի ոտքով բանականության հողի վրա կանգնած մարդու պես էր պահում:

Ես հիշեցի այն ամենը, որ լսել էի նրա մասին ու լրացրի սեփական դիտարկումներով: Նպատակին հասնելու անմարդկային համառությունը, կատաղության պոռթկումները, որոնք ընդմիջվում էին մռայլության տևական շրջաններով, դյութող ռիթմիկ խոսքը՝ միևնույն բառերի կրկնությամբ, որպեսզի դրանք հմայախոսքի նման անէությունից կանչեն նրա նշած առարկաները, վերջապես ծիծաղաշարժ վստահությունը, որ խիզախորեն մերկացնելով ղեկավարական չարաշահումները, կարելի է հաջողության հասնել քիմիայում,- այդ ամենը մատնում էր մոլագարին: Առաջին տպավորությունը ճիշտ դուրս եկավ, բայց իմ մեջ արդեն բույն էր դրել տագնապը: Եթե Նատալյան նրան այդ հատկությունների համար է սիրել, արդյո՞ք ինձ էլ կսիրի: Ես լրիվ ուրիշ մարդ եմ:

Բացված հանդեսը ծնկներիս էր: Վաղուց էի կարդացել հոդվածի առաջին պարբերությունը, որն այնպիսի կրքով էր ընդգծել, որ մատիտը տեղ-տեղ ծակել էր թուղթը: Այդտեղ հայտնվում էր, որ ճակատամարտերում

բյուզանդական զորքերի առջևից հունական կրակի հրանետներ էին տանում և թշնամուն սարսափի մատնելու համար դրանք երբեմն պատրաստված էին լինում վիշապի տեսքով, ներսում՝ հրկիզող խառնուրդի անոթները: Երբ վառում էին, վիշապի երախից բոց էր արձակվում, ռունգերից՝ ծուխ, իսկ եթե պարսպակործան բաբանը կամ կատապուլտից արձակված քարը ջարդում էր այդպիսի հրեշի կողը, հոսում էր նրա սև արյունը, որը հողը չէր քաշում: Նատալյան այսօր դրանով ցողում էր Մոսցեպանովի հնոտին, որ հեշտ վառվի:

Բազմաթիվ մարդիկ էին փորձել գտնել գաղտնիքը, և ահա ես հասկացա:

Եվ ի՞նչ:

Ո՛չ ուրախություն, ո՛չ նույնիսկ հանդարտ գոհություն: Անծայրածիր տխրությունն էր պատել ինձ:

Անցնում էինք անտառով: Ճանապարհի երկարությամբ՝ եղևնուտ, կաղամախիներ: Ողջ ուժով հեռու նետեցի ամսագիրը, որ էջերը խղճալի թափ թալով, չհասկանալով, թե որ մեղքի համար իր հետ այդպես վարվեցին, թռավ ու թաղվեց խաշամի մեջ:

Քարոն

Կոնստանտին Կոստանդիս: Թափառիկ բժշկի նոթերը

Նոյեմբեր, 1826 թ.

Ֆաբիեն ինձ կարդալու տվեց Մակրիյանիսի նոր ուղերձը:

«Քշվելով ամրոց,- գրում էր նա,- մենք բաժանվեցինք, և ամեն մեկը զբաղեցրեց իր տեղը: Մորֆոպոլուսին ու ինձ բաժին ընկավ Խրիսոսպիլյոտիսը, որտեղ քարանձավ է ու վերևից երկու սյուն. այդ օրվանից էլ կանգնած ենք այնտեղ: Մահ ու արյունից աչք չենք բացում. թուրքական հրանոթները Կոլոնակիից խփում են լուսաբացից մինչև մայրամուտ: Ամֆիթատրոնից մինչև գլխավոր դարպասի աշտարակը կանգնած են Նարուձոսն ու Պապակոստասը, Արևմտյան բաստիոնում՝ Գուրասի մարդիկ են, իսկ Առյուծի բաստիոնում,- ամենաձանր տեղը,- Դավարիսն ու նրա գեղջուկները: Այդ դժբախտներին Գուրասը վայ թե միայն վերջին շապիկն է թողել, բայց չէ՞ որ նրանք իրենց անասունն ու ամբողջ ունեցվածքը բերեցին քաղաք, պաշարման ընթացքում կերակրում ու հագցնում էին կողոպտված աթենացիներին: Գուրասը, անիծված լինի, քանի պարետ էր, լրիվ կողոպտեց Աթենքը...»:

Մակրիյանիսը նամակները թելադրում է. դրանց մեջ կենդանի խոսք է: Կարդալիս լսում էի նրա ձայնը, ու համակրանքս նրա հանդեպ վայրկյան առ վայրկյան աճում էր:

«Արևմտյանից մինչև Առյուծի բաստիոն պարսպից այն կողմ խրամ էր փորված,- շարունակում էր նա:- Վառոդով լցրինք ու պատրույգն իջեցրինք մեջը: Այդ հատվածը պաշտպանում էին Դանիլիսի՝ մի ազնիվ հայրենասերի աթենացիները, նրան հետո, Միտրոս Լեկասի հետ թուրքերը

բռնեցին ու ցից հանեցին մեր աչքի առաջ: Այդ խրամի պատրույգը լաթից էր: Իսկ մենք փոքր կարիքը հոգում էինք հենց այնտեղ: Ո՞ւր գնաս, երբ բոլոր կողմերից կրակում են: Եվ ահա առավոտյան թուրքերը պատրաստվեցին հարձակման: Մեծ բազմությամբ կուտակվել էին բաստիոնի առաջ, հենց այնտեղ, որտեղ խրամի վառոդը պայթեց նրանց տակ: Դա տեսնելով՝ շարք ենք կազմում ու սվինամերկ ելնում նրանց դեմ: Փորձում ենք վառել պատրույգը, բայց մեր մեզից թրջվել է, չի վառվում: Փորձում ենք վառել, չենք կարողանում: Աթենացիներից մեկը մերկ ձեռքերով վերցրեց վառվող ածխակոթն ու դրեց պատրույգի վրա: Կրակը ջրի պես բուռն առավ այդ քաջը՝ հանուն Հելլադայի, բայց սատանի լաթը չի վառվում ու չի վառվում: Կրակն անցավ վրայով ու հանգավ: Թուրքերը հարձակվեցին մեզ վրա...»:

Եվ վերջապես.

«Միջնաբերդը խժռում է նրանց, ում տարիներով սնել է: Ամեն օր մարդիկ են զոհվում, իսկ սրիկա Գուրասն իր համար տաճար է սարքել, վերևից հող լցրել, որ արկերից վտանգ չլինի, ընտանիքը թաքցրել այնտեղ և ինքն էլ թաքնվել է: Իր քավոր Ստավրիս Վլախոսին էլ հացկատակների ավազակախմբի հետ ապաստան է տվել նկուղում: Նրանց ավագներ է նշանակել, իսկ պրոտոպալիկար կարգել է Սուրմելիսին: Սա էլ զեկուցագիր է հորինել՝ իբր Գուրասը պարիսպներից դուրս է կռվում, այն դեպքում, երբ նա և ազգականները քթները դուրս հանած չկան: Մենք դուրս ենք եկել պարիսպներից՝ թուրքերի հետ զարկվելու, իսկ դրանք, որ գետնի տակ են նստած, Սուրմելիսի միջոցով կառավարությանն ու թերթերին գրել են, թե, իբր, կապիտան Գուրասը դուրս է եկել թուրքերի դեմ ու ջարդել: Նկուղում նստածները փառաբանում էին տաճարում նստածներին: Մենք դրա մասին իմացանք թերթերից, երբ մի աթենացի դրանք բերեց ամրոց, ու կորցրինք խոսելու ունակությունը: Հետո գազազեցինք, և ես ի լուր ամենքի հայտարարեցի. «Այսօրվանից ոչ ոք ամրոցից դուրս չի գա, մինչև չկարդանք նրա մոտ եղած բոլոր թղթերն ու չստորագրենք, որ դրանց մեջ ամեն ինչ ճշմարիտ է»:

Իսկ Գուրասին այսպես ասացի. «Գնա, զբաղեցրու տեղդ պարիսպների հետևում, այդ ժամանակ էլ ուզածիդ չափ կգովերգես սխրանքներդ»:

Խիզախ ու փառասեր մարդ էր, դուրս եկավ և անմիջապես էլ սպանվեց, իսկ հիմա լուրեր են տարածում, թե մարդասպանը ես եմ: Թող գեհենական կրակի բաժին դառնամ, եթե նման բան եմ արել կամ թեկուզ մի վայրկյան մտքովս անցել է:

Ես նամակը վերադարձրի Ֆաբիեին:

«Չեմ հավատում,- նկատեց նա,- հաստատ հենց ինքն էլ սպանել է, բայց դա նշանակություն չունի: Ինքն է, ինքը չի՝ ի՞նչ տարբերություն»:

«Ինչպե՞ս թե»,- զարմացա ես:

«Մակրիյանիսի համար առանց Գուրասի ավելի հեշտ կլինի պաշտպանել Ակրոպոլիսը, իսկ մնացածի վրա՝ թքած,- ցինիկ պատասխանեց Ֆաբիեն:- Դուք բոլորդ այստեղ կարող եք իրար կոկորդ կտրել, խնդրեմ, ձեր գործն է, բայց՝ մի պայմանով. թուրքերը չպիտի գրավեն Ակրոպոլիսը»:

Պաշարման առաջին շաբաթներին Քյութահիան ծանր հրետանիով անդադար խփում էր Ակրոպոլիսին: Այդպիսի հրանոթների երկու մարտկոց դրվել էր Մուսեյոնում, բայց գնդառումբերն ու արկերը անզոր էին ժայռափոր բաստիոնների դեմ: Իսկ եթե բարձր էին նշան բռնում, դրանք թռչում էին լեռան վրայով և ընկնում թիկունքում: Որոշ արկեր խփում էին Պարթենոնի սյուներին՝ մարմարի կտորներ թռցնելով: Դրանով անհանգստացած էին հելլենական մշակույթի գլխավոր գնահատողները՝ անգլիացիները: Նրանց չէր մտահոգում, որ Իբրահիմ փաշան Մոդոնում գերիների շուկա է բացել, որտեղ հարյուրավոր մորեացի գեղջուկների վաճառում է Աֆրիկա,- իսկ այստեղ Քյութահիայից պահանջեցին դադարեցնել հրետակոծությունը՝ մերժման դեպքում սպառնալով վառել թուրքական նավատորմը Պիրոսում:

Ահագին սակարկելուց հետո նա Ակրոպոլիսը պաշարողական թնդանոթներով չհրետակոծելու պարտավորություն ստորագրեց: «Times»-ն ու «Morning Chronicle»-ը դա շեփորեցին Եվրոպայով մեկ, բայց խորամանկ փաշան խախտեց պայմանագիրը՝ պահպանելով հավատարմությունը նրա տառին:

Հոկտեմբերին Կրիեզոտիսը չորս հարյուր մարտիկներով, պարենի ու վառոդի պաշարով ճեղքեց-օգնության հասավ պաշարվածներին. դրանից

հետո Քյութահիան հասկացավ, որ Ակրոպոլիսն արագ գրավել չի կարողանա, ու որոշեց մի հսկա խրամ փորել: Տեղն ընտրեցին ժայռի հիմքում, ուղիղ Պարթենոնի տակ: Սակրավորներն այնտեղ ոչ մեծ լիցքեր են պայթեցնում, հետո զինվորները քլունգ ու բահով մաքրում են հողի ու քարի կույտերը: Աշխատողների թվից դատելով՝ խրամում ահռելի հզորության ական է դրվելու:

Սակրիյանիսի մարդիկ պահում են բերվող վառոդի արկղերի ու տակառների հաշիվը: Արդեն համարյա երկու հազար օխա է, այսինքն՝ վեց հազար ֆունտ, բայց էլի կավելանա: Քյութահիան սպասում է, թե երբ նոր պաշարներ կբերեն: Գրոհը կսկսվի պայթյունից անմիջապես հետո: Պարթենոնը վերջնականապես կավերվի, Ակրոպոլիսի պաշտպանները կզոհվեն պայթյունից, կամ թուրքերը կկոտորեն:

Չորրորդ ամիսն է՝ հարյուրավոր մարդիկ նեղվածք միջնաբերդում են: Առաջ այնտեղ թուրքական կայազորն էր կանգնած ու բնակվում էին մահմեդականները՝ իրենց այդտեղ շատ ավելի անվտանգ զգալով, քան ստորին քաղաքում, սակայն տերերից լքված զորանոցները, խանութներն ու տները ամայացել են: Կահույքը վառվել է օջախներում, շուրջը մերկ քարեր են, կեղտ, գարշահոտ, խոնավություն: Վառելիքը չի հերիքում, ո՛չ տաքանալ է հնարավոր, ո՛չ տաքացնել աղքատիկ ճաշը: Ջրի չնչին բաժինները Սակրիյանիսն անձամբ է բաժանում: Գինին քիչ է, բայց երեկոները, ֆլոյերի սուլոցի տակ երգեր են հնչում, որոնք երեխա ժամանակ երգում էր մայրս: Ատտիկայում առանձնապես շատ են Քարոնի մասին երգերը: Մահը մեզանում պառավ չէ, ինչպես մյուս ժողովուրդների մոտ, այլ ծերունի: Քարոնը ոտքով է ման գալիս, բայց հեշտությամբ անցնում է արաբական նժույգներ հեծածներին, նրա դեմքն ու հագուստը խատուտիկ են, ինչպես լուսանի մորթին, աչքերը՝ երկու փայլակ: Ջորեղ պալիկարները՝ սարակինոսների ու թուրքերի սարսափը, մարտահրավեր են նետում նրան ու մարտնչում Պառնասի լեռներում, գերեզմանոցներում, եկեղեցու դարպասների տակ կամ այդպիսի մենամարտերի համար նախատեսված մարմարապատ հրապարակում, ընդ որում՝ նախապես գիտենալով, որ հաղթանակը հակառակորդինն է լինելու: Չկա ոչ մի երգ, որն այլ կերպ ավարտվի, բայց

սփոփանքը հենց դա է: Միշտ այդպես է եղել, ասում են նրանք երգիչներին ու լսողներին, այդպես է լինելու բոլորի հետ, մի՛ վախեցիր, մի՛ լա, դու ոչնչով վատը չես այն հերոսներից, որոնց արդեն հաղթել է այդ խատուտիկը:

Շառլ-Անտուան Ֆաբիե: Ապստամբի օրագիրը

Դեկտեմբեր, 1826 թ.

Գրում եմ Նավպլիոնից Ֆալերոն լողացող նավի վրա: Շատ բարենպաստ եղանակ է. ամպամած, երկնքում՝ ոչ մի աստղ: Չնայած՝ լիալուսին է: Այսինքն, չի երևում, բայց ամպերից այն կողմ ինչ-որ տեղ կա և ամենաանպատեհ պահին կարող է դուրս լողալ: Անլուսին գիշերների սպասելու ժամանակ չունենք:

Ծովն անհանգիստ է, ալեկոծ, բայց գրել կարելի է: Խնդիրն այլ է: Մեկ ամսից ավելի չեմ բացել այս տետրը, վերջին գրառումից հետո այնքան բան է կատարվել, որ շատերի մասին ստիպված եմ համառոտ հիշատակել:

Հոկտեմբերին իմացանք, որ Քյութահիան պատրաստվում է պայթեցնել Ակրոպոլիսի պատը՝ ուղիղ Պարթենոնի տակ: Մակրիյանիսը դրա մասին հայտնել էր Նավպլիոն, բայց անգլիական էսկադրան հեռացավ Կորֆու, իսկ մենք անզոր էինք որևէ բան ձեռնարկել:

Նոյեմբերի 12-ի առավոտյան թուրքական զորքերը հետ քաշվեցին անվտանգ տարածության վրա, բնակիչները լքեցին քաղաքն ու հետևները տարան իրենց անասունները: Միջնաբերդի մոտակա տների բնակիչները ողբում էին իրենց բախտը: Կեսօրին Քյութահիան հրամայեց վառել պատրույգը: Պատկերացնում եմ կրակն ինչպես է պատրույգի վրայով վազում դեպի ամուր զմռսված քարանձավը, անհետանում պատի տակի փոքրիկ, մկան ծակի չափ անցքում: Ի տարբերություն Մակրիյանիսին խաբած լաթի կտորի, սա չոր է: Սակրավորները թաղվել են հողի մեջ, փակել ականջները: Այդ ամենն այնքան պարզ եմ տեսնում, ասես ներկա եմ եղել, բայց լսողության օրգանները չեն ենթարկվում երևակայությանը: Պայթյունը լսել չեմ կարող, միայն գիտեմ, որ երկինքը չի պատռվել ձեռակերտ ամպրոպից, թռչունները չեն թափվել գետնին: Կոստաս Խորմովիտիսը, Լագումի-

ձիս մականունով, այսինքն՝ սակրավորը, գտել էր ականը վնասազերծելու միջոցը: Այն երեք շաբաթում, երբ Քյութահիան սպասում էր վառոդի վերջին բաժնեչափին, պաշարվածները, գիշերներն աշխատելով, մի դյուժին հորանցքեր էին բացել դեպի քարանձավը: Վառոդի գազի մի մասը դուրս եկավ դրանցով, պայթյունի ուժը նվազեց, ի լրումն՝ պարզվեց, որ խրամի միջնապատն ամուր չէ: Հարվածի ալիքը ցրիվ տվեց ու սպանեց սակրավորների ողջ խումբը: Շատ բան կտայի այդ պահին Քյութահիան դեմքը տեսնելու համար:

Մենք դրա մասին իմացանք հաջորդ օրվա երեկոյան: Ամբողջ գիշեր Նավպլիոնում ցնծություն էր, կրակում էին հրանոթներից ու հրավառություն անում, իսկ մի շաբաթից եկավ ինձ համար սպասելի, բայց հույներին հանկարծակիի բերած լուրը. անհաջողությունից գազազած թուրքերն անցել էին գրոհի: Մակրիյանիսին մեծ կորուստներով հաջողվեց հետ մղել, իսկ երկու օր անց նրա ուղարկած մարդն ինձ զեկուցեց, որ նա՝ ծանր վիրավոր, թողել է Ակրոպոլիսն ու բժշկի է սպասում Աթենքի և Նավպլիոնի միջև գտնվող գյուղերից մեկում:

Սլացա նրա մոտ՝ հետս վերցնելով Չեկեհին ու մտերիմ մի քանի սպաների: Մակրիյանիսը մեզ ընդունեց անկողնում պառկած: Անհմուտ դրված վիրակապերը պրկել էին կուրծքը, աջ ուսն ու վիզը՝ մինչև ծնոտ: Առյուծի բաստիոնի մոտ, մինչ Խորմովիտիսը վնասազերծում էր հերթական ականը, նա կրակելով պաշտպանվել էր սիփահիներից, վիրավորվել երեք գնդակով ու շատ արյուն կորցրել: Գիշերը նրան պատգարակին դրած անցկացրել էին թուրքական դիրքերով: Կարծում եմ, որ ժամապահներին կաշառելուն օգնել էին նրա թրքուհի կնոջ՝ իսլամի գրկում մնացած ազգականները:

Մակրոյանիսը կայազորի հրամանատար էր նշանակել Խորմովիտիսին, չնայած այդ պաշտոնին հավակնում էր Կրիեզոտիսը, որը Ակրոպոլիս էր մտել դեռ հոկտեմբերին. նրա հավակնություններին զորավիգ էին չորս հարյուր մարտիկներն ու Կարահիսկակիսի հեղինակությունը, որին նա ենթարկվում էր: Երկու կուսակցությունների մրցակցությունը թուլացնում էր պաշարվածներին, բայց ավելի վատ լուրն այն էր, որ սպառվում էր

նրանց վառոդը: Կրիեզոտիսի բերածը հերիքեց մեկուկես ամիս: Մի քանի շաբաթ անց, մի քիչ ուշ կամ շուտ, կախված նրանից, թե ինչպես կծախսեին մնացորդները, կայազորը ստիպված անձնատուր էր լինելու:

Ես սկսեցի հանդիպում փնտրել Կոլոկոտրոնիսի կամ Կոնդուրիոտիսի հետ: Վերջինս նախագահ է համարվում, չնայած ոչինչ չի կառավարում, առաջինը՝ գլխավոր հրամանատար, չնայած զորք չունի: Նրանք ատում են իրար, ուստի պետք է յուրաքանչյուրի հետ առանձին խոսել և մեկի հետ խոսակցությունը թաքցնել մյուսից: Կոնդուրիոտիսն իր ղեյլաններով ու գրումներով նստել էր ինչ-որ մեկի առանձնատանն ու անհասանելի էր, բայց Կոլոկոտրոնիսը հավանություն տվեց Ակրոպոլիս վառոդի պաշար հասցնելու իմ ծրագրին: Փառք Աստծո, որ գոնե դա լիուլի ունենք:

Այսօր՝ դեկտեմբերի 3-ին, երկու հնամաշ նավերով, որ կառավարությունն առասպելական գնով առել էր Կոնդուրիատիսի հայրենակիցներից՝ հիդրացիներից, և անվտանգ չէին տարվա այդ եղանակին, Նավպլիոնից լողացինք Ֆալերոն: Այնտեղից Աթենք մոտ մեկ մղոն է, ափ ենք իջնելու վաղը երեկոյան: Մակրիյանիսի մարդիկ մեզ կդիմավորեն ափին ու կառաջնորդեն Ակրոպոլիս:

Ինձ հետ է ողջ գունդս՝ 434 հույն ու 68 հելլենասեր: Համարյա յուրաքանչյուրը վառոդի պարկ է կրում, կաշվից, որ բեռը անձրևից կամ ափ իջնելիս չթրջվի: Անձամբ ենք կարել մատակարարների տված կաշվից, բայց դա չհերիքեց, ստիպված էինք օգտագործել գինու տիկերը: Եթե ամեն ինչ հաջող անցնի, Խորմովիտիսը երեք հազար ֆունտ վառոդ կստանա: Դա երկար կբավականացնի, նույնիսկ նկատի ունենալով խրամներ սարքելու նրա սերը:

Քաղաքում լրտեսներ կան, ուստի ճանապարհվեցինք մայրամուտից հետո: Լոցմանները նավերն անցկացրին Բուրձի ամրոցիկի փարոսի մոտով, հեռվում խարիսխ գցած նավերի մոտով, որոնց պատուհաններում լույս էր երևում: Այդ պատկերն անընդհատ տանջում է հոգիս հարմարավետության մասին հիշեցումով, որից զրկված եմ: Մի անգամ Սյուզիի հետ երեկոյան զբոսնում էինք նավահանգստում, ու նրան ասացի այդ տրամադրության մասին: Ի պատասխան, ցույց տալով առափնյակի տների լու-

սավոր պատուհանները, նա հարցրեց՝ դրանք նույնպիսի զգացումներ չե՞ն արթնացնում: «Ոչ,- պատասխանեցի,- ինձ ոչ թե պարզապես հարմարավետությունն է ձգում, այլ հարմարավետությունը՝ տարերքի մեջ»: Ըմբռնումով սեղմեց ձեռքս՝ ասելով, որ իրեն Արեսի սաղավարտում բույն հյուսած աղավնի է զգում: Այդ օրերին մեր սիրավեպը հասել էր գագաթնակետին:

Նավահանգստից դուրս գալիս տախտակամածին կանգնած էի Չեկեհի ու Ցիկուրիսի հետ, որն իբրև պարգև երկամսյա սթափության համար՝ վերադարձվել էր վաշտապետի պաշտոնին: Պատմում էր, որ շաբաթ օրն է ծնվել, դրա համար էլ խեղդվելուց չի վախենում. ջրահարսերը հովանավորում են շաբաթվա վեցերորդ օրը ծնվածներին և նավաբեկության դեպքում իրեն ափ կհանեն: Կատակի պես էր հնչում, բայց այդ տոնը տուրք էր քաղաքավարությանն իմ հանդեպ, որը նման բաների չի հավատում: Գետահարսերին ժամանակակից հույները միացրել են ծովահարսերի հետ և ի լրումն՝ նրանց ձկան պոչեր կպցրել, Քարոնը նրանց մոտ մահվան սուրհանդակ, թե գերեզմանոցների տիրակալ է, կենտավրոսները՝ նրա հովիվները, որոնք գիշերները սարերով քշում են թափառիկ հոգիների հոտերը, հավերժահարսերը՝ հիստերիկ ու չար անտառային վհուկներ: Ժողովրդական երևակայության այդ արարվածքները խղճուկ ու տգեղ են, ինչպես անչափահասի հագին՝ վերակարված հայրական հագուստը: Դրանցով բնակեցված Հունաստանը իմ մանկական երազանքների ծաղրանմանակում է թվում:

«Պետք է խոսել: Գնանք քո նավասենյակ»,- առաջարկեց Չեկեհին, երբ ջրահարսերի սիրահարը լքեց մեզ:

«Մրսո՞ւմ ես»,- հարցրի ես:

«Կարող են ականջ դնել»,- համարյա շշուկով պատասխանեց նա, չնայած առանց այդ էլ վատ էի լսում նավասարքերի մեջ սուլող քամու և ձայների գվվոցի միջից:

Մեր նավը երկուսից մեծն է, այնտեղ տեղավորվել էին բոլոր հելլենասերներն ու գնդի երկու երրորդը: Նավամբարներում ծնկահար գարշահոտ ջուր է կանգնած, որը նավահանգստում ոչ ոք չէր բարեհաճել դուրս թափել. երեք հարյուր մարդ՝ հրացաններով, փամփշտատուփերով, վառոդի

պարկերով ու մթերքով, փորձում էին տեղավորվել վերին տախտակամածին՝ այդ պայմաններում հնարավոր հարմարություններով: Սարսափելի աղմուկ էր: Ոչ ոք ուշադրություն չէր դարձնում մեզ: Չեկեիին հրամայեցի այդտեղ խոսել: Դժկամ ենթարկվեց ու հայտնեց՝ ինչ նախորդ օրն էի Կոլոկնտրակիի մոտ տեղի ունեցած զրույցի ժամանակ լսել ծանոթ իտալացուց. Քութահիային հետ են կանչել Ստամբուլ, նրա փոխարեն նշանակվել է Քյուհին փաշան: Նա մի շաբաթ առաջ է ժամանել Աթենք, հետևաբար մոտակա օրերին պետք է հարձակման սպասել: Նոր գլխավոր հրամանատարը կցանկանա ցույց տալ, որ հնից լավն է:

Երկրորդ լուրը շատ ավելի վատն էր:

«Ոչ մի եգիպտական դիվիզիա չի մասնակցել Աթենքի պաշարմանը,- հիշեցրեց Չեկեին:- Քյութահիան ու Իբրահիմ փաշան թշնամիներ են, գժտվել են դեռ Միսոլոնգիի տակ, բայց Իբրահիմ փաշան Քյուհին փաշայի հետ թշնամություն չունի: Մի քանի օր առաջ երեք գումարտակով Տրիպոլիսից շարժվել է Աթենք: Կարծում եմ՝ արդեն այնտեղ է»:

Հիմա հասկացա, թե ինչու էր ուզում ինձ նավախուց տանել: Այդպիսի տեղեկությունն ավելի լավ է գաղտնի պահել զինվորներից: Իբրահիմ փաշան սարսափ է ներշնչում նրանց, ինչո՞ւ ևս մեկ անգամ փորձության ենթարկել մարդկանց սերը հայրենիքի հանդեպ:

«Կներես, որ երեկ չասացի,- ասաց Չեկեին:- Չէի ուզում անհանգստացնել ծով դուրս գալուց առաջ: Առանց այն էլ հոգսերդ շատ են: Դե, երեկ ասեի, ի՞նչ էր փոխվելու»:

«Ոչինչ»,- համաձայնեցի ես, չնայած, անկեղծ ասած, ինձ անհանգստացրին նրա մտերիմ հարաբերությունները Կոլոկոտրոնիսի մարդկանց հետ: Ըստ երևույթին ակնկալում է նրա հովանավորությունը: Չեկեին աչք ունի իմ տեղին, դրա համար էլ աչքի ընկնելու առիթ է փնտրում: Շտաբային խորհրդակցության ժամանակ, գիշերը, առաջարկեց Կրիեզոտիսի պես ճեղքել-անցնել Ակրոպոլիսը, բայց ես մերժեցի այդ գաղափարը: Կրիեոզոտիսի վառոդը քիչ էր, իսկ կռվի մեջ մտնել առձեռն համարյա հինգ հարյուր պարկ կրելով, կնշանակեր վտանգի ենթարկել մեր կյանքն ու ողջ գործը: Բավական էր մեկ գնդակ, որ կրակ ու մոխիր դառնայինք:

Թուրքերը Ակրոպոլիսը շրջապատել էին խրամատների գծով, բայց տեղ-տեղ ծուլացել էին քաղել մակվիսը կամ փորել քարքարոտ հողը, կամ այն լայնության խրամատներ էին փորել, որ հավն էլ կհաղթահարեր: Մակրիյանիսն այդ բոլոր տեղերը նշել էր գծագրի վրա, որ նրան էր հասցրել իմ մարդը: Բացի այդ, ինձ մոտ է մի աթենացի փախստականի գծած տեղանքի քարտեզը: Վրան, ինչպես մանկական նկարում, պատկերված են տնակներ, այգիներ, ջրհորներ, փոքրիկ մարդկային կերպարանքներ, որոնք մրջյունի չափսի ոչխարներ են արածացնում, խնամքով գծագրված էին տարակերպ տերևներ՝ տարբեր տեսակի ծառերի վրա,- բայց այդ գեղանկարը, ինչպես և Մակրիյանիսի գծագիրը, գիշերով զուտ օժանդակ նշանակություն ունեին: Մթան մեջ հիմնականում պետք է հույս դնել ուղեկցորդների վրա:

Իբրահիմ փաշայի ժամանելը լրջորեն փոխում էր իրավիճակն ու բարդացնում մեր խնդիրը: Եգիպտական հրածիգները՝ ավստրիացի ու ֆրանսիացի սպաների հրամանի տակ, բնավ այն չեն, ինչ բոսնիացիներն ու ալբանացիները՝ Քյութահիայի կամ Քյուհիին փաշայի: Նույնիսկ եթե այսօր կամ վաղը գրոհ չլինի, եգիպտացիների ներկայությունը նվազեցնում է հաջողության մեր հնարավորությունները: Նրանք առնվազն գիտեն, որ պահակետում քնել չի կարելի, ինչը չես ասի նրանց զինակիցների մասին:

Ես ու Չեկեին կանգնել էինք նավակողին, դեմքով դեպի ծովը, երբ թիկունքում ինչ-որ իրարանցում սկսվեց: Հետ նայելով՝ տեսա, որ զինվորները մի հնամաշ առագաստ են ձգում տախտակամածին, որը նրանց համար և՛ փռոց էր լինելու, և՛ ծածկոց: Տաք-տաք քննարկում էին, թե ով, որտեղ ու գլուխը որ կողմ պիտի պառկի, որ առագաստը հերիքի բոլորին, չնայած երևում էր, որ ցանկացած պարագայում բոլորին չի հերիքելու: Երկրորդ առագաստը բերեցին, բայց փռելու ձևն ավելի սուր բանավեճ բորբոքեց: Հետոն գուշակելը դժվար չէր. հիմա, ինչպես միշտ՝ հույների դեպքում, երկու թշնամի կուսակցություն կգոյանա, գումարած փոխզիջման կուսակցությունը, որը համառությամբ չի զիջում նրանց, ում փորձում է հաշտեցնել, առաջնորդներ կառաջադրվեն, փաստարկները կփոխարինվեն վիրավորանքներով ու մեղադրանքներով, ընդհուպ՝ քաղաքական: Միջամտելն

անօգուտ էր: Իջա նավախուց ու բացեցի օրագիրս:

Պատուհանից այն կողմ ցուրտ էր ու խավար, բայց սեղանիս անպետք գինի, հաց, պանիր, կանաչի կա: Մատիտը չի փշրվում, գումէլաստիկ ունեմ՝ անհաջող դարձվածը կամ սխալ օգտագործված բառը ջնջելու համար: Որպես ֆրանսիացի՝ պահանջկոտ եմ ոճի հարցում: Մենք ողջ կյանքում այգի ենք տնկում, որ ծեր հասակում զբոսնենք այնտեղ. իմ օրագիրը նրա ծառուղիներից մեկն է: Զբոսանքի հաճույքը չպիտի մթագնեն ո՛չ աղբը, ո՛չ չհնձած խոտը, ո՛չ եղինջը՝ ցանկապատի տակ:

«Գնացեք առաջ, վստահությունը կհասնի ձեր հետևից»,- աշակերտներին խորհուրդ էր տալիս դ'Ալամբերը: Տասնհինգ տարեկանում ես նշանաբան դարձրի այդ հորդորը, որն ինձ կենսական իմաստնության ապոթեոզ էր թվում: Եվ ահա հանեցի հիշողության խորդանոցից, փչեցի փոշին, և այն կրկին շողշողաց ադամանդե նիստերով:

Գրիգորի Մոսցեպանովի խոսակցությունը Նատալյա Բաժինայի հետ

Դեկտեմբեր, 1826 թ.

Ձեզ մոտ այդտեղ ձմեռ է, սառնամանիք, իսկ մեզ մոտ եղանակը՝ ինչպես ձեզ մոտ՝ Խաչվերացին, բայց հազվադեպ է անձրև գալիս, չոր է: Ափին՝ ոչ մառախուղ, ոչ մեգ: Ձմեռ է, ծովը սառել է ու ցրտին վրան գոլորշի չի կանգնում: Քամի կա, բայց մեծ ալիք չի անում: Ջրի այդպիսի շերտը շարժելու համար տարածություն է պետք, իսկ այստեղ հորիզոնը մոտ է՝ մե՛կ հրվանդան, մե՛կ կղզի: Նայում եմ նավից՝ շուրջը պա՞րզ, մաքո՞ւր, չնայած արդեն երեկոյանում է: Հունաստանում լինում է այդպես. լույս է հորդում, իսկ թե որտեղից՝ Աստված գիտի, ասես ամպերի տակ անտեսանելի անմար կանթեղ է կախված: Այդպիսի երկիր է:

Իսկ ժողովուրդը ամեն կարգի ժողովուրդ են, ու զինվորների մեջ էլ տարբեր մարդիկ կան: Կան, որ բանտն է նրանց կարոտում: Ծով դուրս գալուց մի օր առաջ մեզ ռոճիկ տվեցին անցած ամիսների համար, և ահա երկու հոգի գալիս են մոտս ու ասում. «Քո թագավորին Աստված առել է ու

քեզ էլ կառնի, եթե կեսը մեզ չտաս»: Լավ է, Ցիկուրիսը պաշտպան կանգնեց: Բոլոր փողերը տվեցի, որ պահի, էդպես չեն կորչի:

Նա հիմա իր վաշտում է, իսկ ես նստած եմ Կոստանդիսի հետ: Հագիս մետաքսաքաթանի խալաթ է՝ սերթուկի վրայից, չեմ մրսում, իսկ սիրտս երբեք չի տաքանում: Ոչ մի տեղ, բացի քո մոտից և լեռնագագաթի այն քաղաքից, ուր քնելուց առաջ բարձրանում եմ, օթևան չկա նրա համար: Ապրում եմ, ինչպես մանկատան սոված երեխան, որ պատի ծակից ուտիճ է քչփորում-հանում, ու՝ բերանը, ու գոհ է դրանով:

Ռուսաստանում գոնե փորձում էին իմանալ իմ գաղտնիքը, իսկ հույներին այն ընդհանրապես չի հետաքրքրում, դեռ ինձ էլ կշտամբում են հանգուցյալ թագավորի համար: Ես եմ պատասխանատու, որ սուլթանի դեմ չի օգնել իրենց: Աչքերս փակեցի, տեսնում եմ՝ առավոտ է, սև կատուն քայլում է ձյան վրայով, ասես լող է տալիս: Թաթերը չեն երևում, մինչև փորը թաղվում է ձյան մեջ: Բանջարանոցիդ սնձենու ճյուղերին խաձկտիկները սառած պտուղներ են կտցում:

Դու նոր-նոր վեր ես կացել անկողնուց, անհագնվել՝ նրանց ես նայում, քնից տաքացած, կրծքերդ չկապած, թշիդ՝ բարձի հետք, ոտքերիդ՝ հին կաճյակները, ճտքերը կտրել-կարճացրել եմ, որ տանը հագնես ու տոտիկներդ չմրսեն: Պատուհանը դեռ եղյամապատ է, նայում ես միջով ու կկոցվում. առավոտյան Ժամերգության զանգերը տվին, իսկ մի ապակին ճաքած է, տնքում է, հոգի հանում:

Երուսաղեմ մուտքի եկեղեցու զանգը այստեղիների նման չի. սրանցով ճնճղուկ էլ չես վախեցնի: Մեր գործարաններում թուջե կոչնակն ավելի բարձր է գվվում: Եկեղեցիներն այստեղ ցածրիկ են, մութ, մերի հետ չես համեմատի, բայց մեկ-մեկ երեկոները Նավպլիոնում Սուրբ Սպիրիդոնի զանգն այնպես նուրբ է ծլնգում, ասես հատ-հատ պղնձադրամներ թափեն քարերին, ու սիրտդ կարծես ճանկռում են կատվի թաթով: Լաց լինելու աստիճանի մեղքանում եմ բոլորին՝ և՛ քեզ, և՛ ինձ, և՛ հանգուցյալ թագավորին, և՛ հույներին:

Քեզ Պերմից գրել էի, թե ոնց եմ քնելուց առաջ ծածկոցը գցում գլխիս կամ շրջվում դեպի պատը, մատներս պարզում աչքիս առաջ, շարժում ու

մտածում, որ դրանք իմ քաղաքի բնակիչներն են, բայց հարազատներից ու ծանոթներից ոչ մեկին չէի պատկերացնում: Այնպես, ինչ-որ մարդիկ, որ սիրել են ինձ, որոնց սիրել եմ, անանուն, անդեմք: Իսկ վերջին ժամանակները մեկ մորս ու հորս եմ տեսնում, մեկ հանգուցյալ կնոջս, մեկ սպա ընկերոջս, որին ֆրանսիական ռումբը կտոր-կտոր արեց Ծամպոբերի մոտ, մեկ հարևանի տղային, որ երեսուն տարի առաջ նավակից թռավ Դնեպրն ու դուրս չլողաց, հետո նրանց ու նրանցպեսներին հանդիպում եմ իմ քաղաքում: Ծրջում են փողոցներում կամ խմբվում հրապարակում, հարյուր հոգի, բոլորը մեռած: Ձեռքով են անում, կանչում իրենց մոտ:

Ցիկուրիսն ասում է՝ դա դեռ ոչինչ, ավելի վատ է, եթե նրանց մեջ կա մեկը, որը որտեղ էլ կանգնի, արևի տակ, թե մթան մեջ, լույսն ու ստվերը պուտերով են ընկնում վրան: Այդ պուտավորը Քարոնն է, առաջ նավակով էր մարդկանց մառախլապատ գետով տեղափոխում ելիսեյան դաշտեր, իսկ հիմա չես հասկանում ով է՝ թաղային գերեզմանոցի պահա՞կ, թե՞ մահվան թագավորի ֆելդեգեր, թե՞ հենց մահն ինքը:

Իսկ որ լույսն ու խավարն էլ փոխնիփոխ են իջնում վրան, դրանով մեզ սփոփանք է տալիս, թե այն և այս աշխարհների միջև տարբերություն չկա, ամեն տեղ նույնն է: Ինձ դեռ ոչ երազում է հայտնվել, ոչ նախաքնի երազանքներում: Ուրեմն դեռ կապրենք:

Գիշերվա դեմ Ֆալերոնում կլինենք: Կիջնենք նավերից ու մթով կշարժվենք Աթենք, դեպի ամրոցով լեռը, որի նկարը քո պատին է, եթե մնացել է: Զինվորներն ասում են՝ չենք բարձրանալու, վառոդի պարկերը կշարենք ժայռի տակ, հույներն իրենք կբարձրացնեն վերև, իսկ մենք մինչև առավոտ նավ կվերադառնանք, բայց դրան այնքան էլ չեմ հավատում: Մենք անտեսանելի գլխարկներ չունենք. կարելի՞ բան է, որ հինգ հարյուր մարդ մտնի քաղաք, ու ոչ մի ժամապահ տագնապ չբարձրացնի, ոչ մի շուն չհաչի:

Բայց, դե, ղեկավարության որոշելիքն է, իսկ ես մի դեպք հիշելով՝ լավի հույս ունեմ: Առաջ իմ կյանքում կատարված շատ բաների մեջ հիմա կատարվողի բացատրությունն եմ գտնում, և որքան վաղուց է առաջինը, այնքան երկրորդը ստույգ է:

Ես ու եղբայրս դեռ երեխա էինք, Կիևում էինք ապրում: Մի անգամ մի ջրածիծառ թռավ մեր տան վրայով, ու,- քամին քշեց, թե աչքերը մթնեցին,- թևով դիպավ հողմացույցին ու ընկավ տանիքին: Մատվեյը դուրս եկավ ձեղնահարկով ու թռչունը բերեց ինձ: Մտածում էինք՝ թևն է կոտրել, բայց շոշափեցինք՝ երկուսն էլ անվնաս են: Դրեցինք խոտին, հետ քաշվեցինք, որ չվախենա. իսկ նա պառկել է, նույնիսկ թաթերին չի կանգում: Ոտքերը ստուգեցինք. ամեն ինչ կարգին է: Կարող էր, իհարկե, հարվածից ներսում որևէ բան պոկած կամ վախից թռչնային ուղեղը խախտված լինել, բայց աչքերին նայեցի՝ սպիտակ փառ չի կապել, ինչպես հիվանդ թռչուններինը, սուր է նայում, ծակող: Իսկ թռչել չի ուզում: Հետո արդեն հարևանի աղջիկն ասաց, որ ջրածիծառները գետնից թռչել չգիտեն, պիտի բարձրությունից թողնես, այդ դեպքում կթռչի:

Երեքով գնացինք Դնեպրի ափը, կանգնեցինք դարավանդի գլխին ու չենք համարձակվում ցած նետել թռչունը: Փափուկ սիրտ ունեինք ես ու եղբայրս, սարսափում էինք, որ կջախջախվի: Աղջիկը վերցրեց, կանգնեց զառիթափի ծայրին, կարգադրեց որ գոտկատեղից բռնենք ու ամուր պահենք, կռացավ, ջրածիծառին բռնած ձեռքերը պարզեց, բացեց մատներն ու նրան թողեց անդունդը: Թռչունն ընկնելով՝ թպրտաց օդում, թևահարեց, հրվեց օդից ու թռավ-գնաց, շնորհակալություն էլ չհայտնեց:

Ջրածիծառը ծիծեռնակի եղբայրն է, նրանք ու մեկ էլ աղավնին Աստծու ամենասիրելին են, և եթե Նա այդպես է արել, որ ջրածիծառը միայն անկման մեջ ճախրի երկինք, իսկ հարթ տեղից՝ ոչ, մեղք չի՞ արդյոք ինձ ու քեզ համար բողոքել Նրանից, թե Սիգովին թույլ է տվել ինձ բանտ գցի, որտեղ կորցրել եմ կյանքի առաջնային բարիքը՝ առողջությունս: Եթե չլինեին իմ դժբախտությունները, մի՞թե այստեղ կլինեի: Ուղին, որով երկրային խորխորատներից հասել եմ այս նավն ու կհասնեմ Աթենք, ոչ մեկն առանց վերին առաջնորդության անցնել չի կարող:

Աթենք

Կոնստանտին Կոստանդիս: Թափառիկ բժշկի նոթերը

Դեկտեմբեր, 1826 թ.

Ես անկարող եմ նկարագրել կյանքը իր ողջ կոպիտ պարզությամբ: Հենց գրիչը հայտնվում է ձեռքիս, կյանքի և իմ միջև, ինչպես երեխայի և կեցության անանց սարսափի արանքում, կախվում է կիսաթափանցիկ վարագույրը, որն ինձ խանգարում է տեսնել մարդկանց ու հանգամանքները այն պարզությամբ, որով տեսնում եմ իմ հիվանդներին ու նրանց հիվանդությունները: Այն ամենը, ինչի մասին գրում եմ, նման է դիմանկարին մի մարդու, որը նկարչին բնորդել է մոծակի ցանցի հետևից, սակայն տեսողության անհստակությունը և որպես հետևանք՝ վրայի վառ բծերով առանձնացող բուն կտավի թափանցիկությունը բավական հստակ պատկերացում են տալիս, թե ինչպես եմ ընկալել լույս դեկտեմբերի 5-ի գիշերը մեզ հետ կատարվածը, երբ ափ իջանք Ֆալերոնում:

Ափհանումից չորս ժամ առաջ ես ու Մոսցեպանովը նստած էինք տախտակամածին: Մեջքով հենվել էի նավակողին, որ խուսափեմ քամուց: Ցիկուրիսը, արդարացնելով Ֆաբիեի վստահությունը, չէր հեռանում իր վաշտից, իսկ նրա աշակերտն ու բաժակակիցը միացել էր ինձ: Բերանից ցցվել էր չվառած ծխամորճը: Կրակ վառելն ու ծխելը արգելված է: Մեր բեռի վրա ընկած մի պատահական կայծից բոլորս, նավի հետ միասին, կարող էինք օդ թռչել:

Ֆաբիեն կանգնեց կողքիս:

«Իբրահիմ փաշան Աթենքում է,- ասաց ականջիս՝ գլխով անելով ննջող Մոսցեպանովի կողմը, իբր՝ թող չիմանա:- Մնա նավի վրա, պետք չի, որ գաս մեզ հետ»:

Նրա տագնապը փոխանցվեց ինձ, բայց հասկանում էի, թե Իբրահամ փաշան ինչով է սարսափելի Քյութահիայից: Եթե թուրքական ուղեկալները հայտնաբերեն մեզ, նրա ողջ զորավարական արվեստը անօգուտ կլինի անկառավարելի գիշերային մարտում՝ մակվիսի դաշտում կամ քաղաքային արվարձաններում: Այդպիսի մարտերում ամեն ինչ վճռում են պատահականությունն ու ճակատագիրը, իսկ ուժն ամեն դեպքում մեր կողմը չէ:

«Մնա՛,- կրկնեց Ֆաբիեն:- Ավելի հանգիստ կլինեմ»:

Ես ասացի, որ կգնամ բոլորի հետ, ու վեր կացա: Ուզում էի մի անգամ էլ տեսնել Ատտիկայի ափերը, մինչև կթաքնվեին մառախուղի մեջ: Դիմացը գորշ ծխապատի պես կանգնել էր Կոլիադայի գագաթը: Երկու հազար տարի առաջ նրա ստորոտին էին կառանվել Թեմիստոկլեսի ջախջախած պարսկական նավատորմի մնացորդները:

Թուրքական նավատորմը կանգնած է Պիրոսում: Երբ երեկոյան ժամը տասնմեկին մեր երկու նավերը մտան ֆալերնյան նավահանգիստ, այն դատարկ էր: Մակրիյանիսի խոստացած ուղեկցորդները մեզ սպասում էին ափին ու լապտերով նշան արեցին, որ ամեն ինչ կարգին է, կարելի է իջնել:

Ես ու Մոսցեպանովը հայտնվեցինք առաջին իսկ ջուրն իջեցրած մակույկում և առաջինն էլ ափ իջանք. հենց նավաքթին էինք նստած: Ծովում, անդրադառնալով ջրից ու ցրվելով օդում, թույլ առկայծում էր երկնալույսը, իսկ ցամաքում այնպիսի խավար էր, որ ճնշում էր ակնախնձորների վրա: Սպիտակին էին տալիս միայն ծովային աղի հետքերը քարերին, բայց մինչ բարձրանում էինք ծովեզրյա դարիվերը, ամպերի տակից դուրս նայեց թուրքերի դաշնակիցը՝ լուսինը: Կրծոտած, լղոզված աջ եզրով սկավառակն անհաջողությամբ էր սպառնում այդ գիշերվա մեր բոլոր ձեռնարկներին:

Ուղիղ իմ առաջ մի խոտածածկ պարապուտ տեսա՝ կիսված բացգույն կրաքարով սալած ճանապարհով, որի եզրերը կերել էին հողն ու խոտը, ինչպես երկրի ստվերը՝ լուսինը: Գունատ քարաշերտը երևում էր ավելի հեռվից, քան դաշտի շուրջը ձգվող մակերևույթը: Թվում էր՝ երկուերեք տասնյակ քայլի վրա ճանապարհը կտրվում է գետնից և այդուհետև անցնում օդով: Ավելի հեռվում ու բարձր առկայծում էր երկու թույլ կար-

միր կրակ: Ազդանշանային խարույկներն էին: Ակրոպոլիսի պաշտպանները մեզ համար որպես ուղենշան էին վառել: Խարույկները պատված էին ընդհանուր լուսապսակով և այնքան բարձր ու այնքան իրար մոտ էին, որ մեկ երկնային մարմնի տպավորություն էին ստեղծում՝ երկատված տեսողական խաբկանքով: Պիտի ուղղություն պահեինք նրանց վրա:

Ծովն այդտեղ Աթենքին մոտենում է ավելի, քան որևէ այլ տեղ: Ակրոպոլիսը ցերեկով երևում է ափի ցանկացած կետից: Ֆալերն ու Յասոնը այստեղից են լողացել ոսկեգեղմի հետևից՝ Կոլխիդա, Մենեսթեոսն ու Ագամեմնոնը՝ Տրոյա, Թեսևսը՝ Կրետե: Ինձ մանկուց ծանոթ անունները ոչինչ չէին հուշում, բացի իմ ներկա կյանքում դրանց անտեղիությունից:

Հայտնվեց Ֆաբիեն՝ իր շտաբով, համհարզներով և անձնական թիկնազորի ուղղափառ ալբան-սուլիացիներով: Բոլորը, ինչպես և ես ու Մոսցեպանովը, ասիական խալաթներով էինք, որ երթի պատահական ականատեսները մեզ թուրքի տեղ դնեն:

«Հին Հելլադայում ամենաարժանավոր քաղաքացիներին թաղում էին ճանապարհների երկայնքով: Ճանապարհորդները տապանագրերը կարդալով՝ հիշում էին նրանց,- մոտենալով՝ ասաց Ֆաբիեն՝ ինձ հաճելիորեն զարմացնելով նրանով, որ այդպիսի պահին մտորում է նման բաների մասին, ուրեմն ես էլ անհանգստանալու բան չունեմ:- Եթե այսօր զոհեր ունենանք, հետագայում նրանց պետք է թաղել այստեղ»:

«Մենք քրիստոնյաներ ենք,- նկատեցի:- Քրիստոնյաները հանգուցյալների համար գերեզմանատուն ունեն»:

«Դրանք ինչո՞վ են լավ ճանապարհներից»,- հետաքրքրվեց նա:

«Նրանով, որ հողն այնտեղ սրբագործված է»,- խոսակցությանը միջամտեց Մոսցեպանովը, բայց պատասխանի չարժանացավ:

Ֆաբիեն հանեց Մակրիյանիսի պատրաստած գծագիրը: Նրա մարդկանցից մեկը լապտերը մոտեցրեց թղթին, սկսեցին ճշտել շարժման երթուղին: Երեքն էլ թուրքի պես էինք հագնվել ու խոսքի մեջ թուրքերեն բառեր էին օգտագործում: Ալեքսանդրիայի հույներն այդպես չեն խոսում, իսկ մայրս հորս ազդեցությամբ այդ ատտիկյան սովորությունից դեռ իմ ծնվելուց առաջ էր ազատվել:

Լուսինը չէր անհետացել, միայն ժամանակ առ ժամանակ մթնում էր վրայով փերթ-փերթ սահող ամպաքուլաներից: Օգոստոսին, Էլևսինից Աթենք ճանապարհին չէի նյարդայնանում բացառապես անփորձության պատճառով: Թուրքական հեծելազորի հարձակման ժամանակ ծերուկ Քարոնն իմ կողքով էր անցել, բավական մոտ, որպեսզի ճանաչեի նոր հանդիպման ժամանակ:

Սպաները սկսեցին շարել մարդկանց: Ես ու Մոսցեպանովը կանգնեցինք հելլենասերների հետ ու միայն հիմա հիշեցինք նրա պայուսակում պահվող հաստ դեղին կտորի երկու շերտերի մասին. դեռ Նավպլիոնում էին տվել մի բուռ քորոցների հետ, որ գլխներիս փաթթոցի պես մի բան սարքենք: Եթե որևէ թուրք նկատի, մեր ուրվագծերը ոչ մի կասկած չպիտի հարուցեն: Ես Մոսցեպանովի համար փաթթոց կապեցի, նա՝ իմ:

Ծարասյունն անաղմուկ շարժվեց ու շարունակում էր նույն կերպ անձայն քայլել: Ո՛չ խոսակցություն էր լսվում, ո՛չ հայհոյանք ու ծիծաղ, ո՛չ խիտ զորաշարքում անխուսափելիորեն իրար խփվող զենքի ու հանդերձանքի մետաղյա մասերի զնգոց: Մոսցեպանովը սապոգներով էր, բայց վրայից լաթեր էր փաթաթել, պայտիկները չէին զնգում քարերին: Ճանապարհի երկու կողմով քամուց ալիքվում էր չորանալուց անկշռելի դարձած խոտը:

Մինչև Ակրոպոլիս հինգ վերստ էր: Վառոդը պիտի դատարկեինք հյուսիսային՝ ամենաբարձր և ուղղաբերձ լանջի տակ: Հյուսիսից Ակրոպոլիսն անմատչելի է, այստեղից արտելք կազմակերպելը նույնպես անհնար է: Այդ կողմից թուրքական խրամատներ չկան, պահակետեր չեն դրվում: Տեղիս աղքատ հյուղակներն ավար չեն դառնում զորքին, թուրքերն այստեղ չեն հայտնվում:

Ձախից ճերմակ բծերով լողացին տների պատերը: Մարդու կացարանի հոտ եկավ, այգիներում քամին այնպես չէր աղմկում, ինչպես ծովեզերքի սոճիների մեջ, բայց ոչ մի տեղ լույսի նշույլ չէր երևում: Ծների հաչոց էլ չէր լսվում: Ուղեկցորդները խոստացել էին, որ շները մեզ հաստատ չեն մատնի թուրքերին, ու չսխալվեցին: Համարյա բոլոր շները տերերի հետ լքել էին Աթենքը կամ նրանց հետ նստած էին Ակրոպոլիսում, եթե պաշարման հին-

գերորդ ամսում արդեն բոլորին չէին կերել: Մնացածը խելամտորեն լռում էին՝ սեփական փորձով համոզվելով, որ զավթած քաղաքում լավ պահակներն առաջինն են զոհվում. դիակապուտները չէին խնայում նրանց:

Ուղեկցորդները միշտ շարասյան գլխին էին, իսկ Ֆաբիեն հետ մնաց ու քայլում էր իմ կողքով՝ պատմելով, որ ժամանակին Ֆալերոնից Աթենք ճանապարհն անցնում էր Իտոնի դարպասներով:

«Պավսանիոսի գործերո՞ւմ ես կարդացել»,- կռահեցի ես:

Նա անտեսեց իմ հարցն ու շարունակեց. «Այդ դարպասների մոտ էր ամազոնուհի Անտիոպեի տապանաքարը: Նա սիրահարվել էր Թեսևսին ու դավաճանել ընկերուհիներին, երբ նրանք պաշարել էին Աթենքը, ինչի համար մեկ այլ ամազոնուհի՝ Մոլպադիան, սպանել էր նրան որպես դավաճանի, ապա սպանվել Թեսևսի ձեռքով: Աթենացիները երկուսին էլ հուշարձան էին կանգնեցրել. Մոլպադիային՝ պարտքին հավատարիմ լինելու, Անտիոպեին՝ սիրո ուժի համար, որը ստիպել էր անտեսել պարտքը: Մեր ժամանակներում դա անհնար է: Մակրիյանիսի կինը թրքուհի է, բայց պատկերացրու՝ որևէ մոլեռանդ հայրենակցուհի մորթի նրան դավաճանության համար ու վճարի կյանքով: Մի՞թե թուրքերը արձան կկանգնեցնեն ուրացողին: Երբե՛ք: Ինչպես և հույները՝ մարդասպանին»:

Ուզում էի ասել, որ աթենացիներն ու նրանց միկրոձքանի հակառակորդները պաշտում էին նույն աստվածներին, բայց նա արդեն հեռացել էր: Ճարասյունը կանգ առավ: Ձիավորների մոտ մեկ երրորդը մնաց տեղում, մյուսներն ու հելլենասերները շարժվեցին առաջ: Կողքիս ինչ-որ մեկը ենթադրություն արեց, որ եթե թուրքերը հայտնաբերեն մեզ ու փորձեն կտրել ծովից, մնացածները թիկունքից կխփեն նրանց: Մնացողներն իրենց պարկերը մեզ էին տվել: Մինչև այդ Մոսցեպանովը թեթև էր քայլում, նրա պարկը տանում էր Ցիկուրիսը, բայց հիմա ստիպված էր ուրիշի պարկը վերցնել:

Երկու ամազոնուհիների տապանաքարերը վաղուց անհետացել էին, Իտոնի դարպասները՝ նույնպես: Քաղաքը կծկվել էր. հին պարիսպները, եթե պահպանվեին մինչև մեր օրերը, մեծ կլինեին նրան, ինչպես ծերունուն՝ ուժերի ծաղկման շրջանում կրած հագուստը: Թուրքերի կառուցած

ամրությունները, որ Մակրոյանիսը հապճեպ նորոգել էր, Կոլոնակիի կողմից մոտենում են Ակրոպոլիսին, ինչպես հույները կոչում են Օդեոնը, բայց դրանց չհասած՝ դուրս եկանք ճանապարհից: Գիտեի, որ Ակրոպոլիսը մերկ բլուրներ են շրջապատում, բայց դրանց արանքում տեղ-տեղ մացառուտներ էին երևում: Այստեղ էլ այդպես էր. իծաշարուկ, իրար ծոծրակի նայելով՝ ծգվեցինք մակվիսը հատող մի քանի նեղ կածանով: Դրանք մեկ միանում էին, մերթ բաժանվում, սակայն բոլորը տանում էին նույն ուղղությամբ: Մոսցեպանովն իմ առջևից էր քայլում, խփվում էի նրան, երբ կանգ էր առնում՝ ոտքով շոշափելով կածանի անհարթությունները կամ դուրս պրծած արմատները: Հեշտ չէր խեղված ոտքով մթության մեջ քայլել այդպիսի տեղանքում, այն էլ՝ բեռով, բայց նրանից տրտունջ չլսեցի: Վառոդի պարկը մեջքին էր, աջ ուսից կախված էր հրացանը, ձախից՝ քաթանե պարկը՝ ուտելիքի ու գինու մեր ընդհանուր պաշարով: Այն ինձ ուղեցույց աստղ էր ծառայում, ինչպես գիշերով եղջերվածագին՝ եղջերու-մայրիկի սպիտակ հետույքը:

Կածանը ավելի ու ավելի կտրուկ էր բարձրանում լեռը: Մացառուտը կրկին անհետացավ. լանջին ցրված քարերը ստիպում էին, որ ամեն մեկն ինքը ընտրի իր ճանապարհը: Ակրոպոլիսի ազդանշանային կրակները տեղաշարժվել-մոտեցել էին երկնակամարի կենտրոնին. այդպես երկրի պտույտն է տեղաշարժում երեկոյան հայտնված աստղաբույլերը: Մի պահ, գլուխս բարձրացնելով, դրանցից մեկը չտեսա ու հասկացա, որ ոչ թե ձուլվել է մյուսին, այլ անցել ժայռի հետևը: Ստորոտը հանկարծ հայտնվեց աչքիս առաջ: Մոտավորապես հասակիս բարձրության վրա ժայռը լուծվեց խավարում, սակայն գլխապտույտ բարձրությունը ենթադրվում էր հիմքի հզորությամբ: Վաղ անցյալում այստեղից ցած էին նետվում ինքնասպանները:

Առջևից քայլողները դանդաղեցրին ընթացքը: Բարձունքում առկայծեցին ջահերի կրակները: Պաշարվածները նկատել էին մեր մոտենալը, բայց թե ինչպես են բարձրացնելու վառոդի պարկերը, հանելուկ էր: Գետնուղու մասին միտքը մերժեցի ժայռի միջով փորելու անհնարինության բերումով. դեպի թուրքական խրամը Խորմովիտիսի փորած գետնու-

դիներն անցնում էին ժայռի ստորոտը ծածկող հողի շերտով: Ճիշտ է, վաղ անցյալում Էրեքթեոնից Արտեմիսի տաճար հյուսիսային լանջի տակով գաղտնի անցք կար. դրանով, գրում է Հերոդոտոսը, պարսիկները, մտնելով բնակիչներից լքված Աթենք, բարձրացան Ակրոպոլիս, բայց մտքովս չէր անցնի, որ այն հասել է մեր օրերը, մինչև որ Սոսցեպանովի հետևից չմտա այնտեղ, ուր զինվորներն իջեցնում էին վառոդի պարկերը, ու չտեսա երկու տասնյակ մարդկանց՝ առանց զենքի և հագնված ոչ այնպես, ինչպես մենք, առանց խալաթների ու փաթթոցների: Ֆաբիեն կիսաձայն ինչ-որ բան էր բացատրում նրանց, երկուսը, ավագի իրավունքով, նույնպես խլաձայն պատասխանում էին: Թե ովքեր են ու որտեղից էին հայտնվել, հուշում էր երկու ժայռաբեկորների արանքում բացված նեղ անցքը, որը, ըստ երևույթին, մինչ այդ ծածկված էր եղել ճիմով ու քարերով: Այնտեղ մութն ավելի թանձր էր, քան դրսում:

Ես նետվեցի Ֆաբիեի մոտ ու զգուշացրի, որ այստեղ ինչ-որ բան այն չէ, մեզ դավաճանել են, թուրքերը չէին կարող չիմանալ այդ անցքի մասին: Նա լուռումունջ մի կողմ քաշեց ինձ, իսկ մեր կողքին կանգնած Չեկեին ասաց. «Պատերազմի սկզբում թուրքերը լցրել են, ու չգիտեին, որ մաքրվել է: Մակրիյանիսը երկու ամիս է ծախսել դրա վրա»:

Հինավուրց գետնուղին, որի ներսում հնարավոր էր միայն մեկական շարժվել, սկսեց կուլ տալ Խորմովիտիսի մարդկանց, բայց այն երկուսը, որ բանակցություններ էին վարում, մնացին դրսում: Չեկեին նրանցից մեկին տվեց վառոդի պարկը, որը փոխանցվեց ժայռի մեջ անհետացած յուրայիններից մեկին, վերջինին նրանցից, որ, ինչքան հասկացա, շղթայաձև ձգվում էին դեպի ամենավերը:

Շուտով ջահերը վերևում մարեցին: Ըստ երևույթին հանգցրել էին անվտանգության համար, երբ առաջին պարկը հասել էր գագաթին: Պարկերի մոտավոր թիվն իմանալով ու տեսնելով, թե ինչ արագությամբ են անհետանում գետնի տակ, հաշվեցի, որ ամբողջ գործողությունը երկու-երեք ժամ կտևի: Եթե թուրքերն այդ ընթացքում մեզ հայտնաբերեն, կհասցնենք մթնով վերադառնալ Ֆալերոն:

Ցիկուրիսն իր վաշտով ու Չեկեին հելլենասերների մեծ մասի հետ

անցան մարտական պահպանության, մյուսները ցրվեցին լեռնալանջին՝ հանգստանալու ու վերադարձից առաջ մի կտոր բան ուտելու: Ես ու Մոսցեպանովը առաջվա պես երկուսով էինք: Օգնականս վախեցել էր լողալ Ֆալերոն ու նախօրեին հիվանդ էր ձևացել, ուրիշին գտնել չհասցրի ու ծանրաբեռնվեցի վիրակապերի արկղով, սպիրտի շշերով, յոդով, կարբոլաթթվով, բայց չազատվեցի նաև սեփական բժշկական պայուսակից, ուստի նավի վրա Մոսցեպանովին տվեցի վերցրած ուտելիքը: Հիմա նա բացել էր տոպրակը, իմ արկղի վրա դասավորել հաց, ոչխարի պանիր, տապակած հավի միս: Իր համար մեկական կտոր կտրեց այդ ամենից ու դանակը փոխանցեց ինձ՝ ասելով, «Թուր չկա, գոնե դանակ լինի»: Ըստ երևույթին նկատի ուներ, որ եթե բանը հասնի ձեռնամարտի, դա իր զենքն է լինելու:

«Լա՛վ, դուք էլ,- ոչ այնքան բնական՝ նման վիճակներում փրկարար թեթևամտություն պատկերեցի:- Նավ կբարձրանանք ու վաղը երեկոյան տանը կլինենք»:

«Տունը սարերի հետևում է, մահը՝ թիկունքում»,- պատասխանեց նա տխուր ժողովրդական ասացվածքով, որն ինձ ստիպեց փշաքաղվել: Որոշ պահերի բազմապատիկ օգտագործումից բթացած իմաստնությունը ստանում է նախնական սրությունն ու խոցում սիրտդ:

Սկսեցինք ճաշել: Մոսցեպանովի պատմությունների ուղեկցությամբ, թե ինչպես է ստիպված աղի փոխարեն վառոդով ձիու միս կերել կռվի ժամանակ, նաև հունական հավի մսի, չխոսելով արդեն ռուսականի մասին, թե որքան լավն է ձկից, որի մեծ սիրահար չի: «Կռվում եղել եմ, բայց չեմ վիրավորվել,- հիշում էր նա:- Մատներս հրասայլի անիվն է ճզմել, իսկ ամբողջ մարմնիս վրա երկաթի ոչ մի հետք չկա: Մարմինս մաքուր է: Միայն ձախ կոպիս մի փոքրիկ սպի ունեմ, ինչպես ծաղկախտից: Չորս տարեկան եմ եղել, դայակս այգում նստացրել է գիշերանոթին, մի կտոր հաց է տվել՝ վրան մուրաբա քսած, ու գնացել իր գործերով: Մուրաբան լպստել եմ ու հացը ծամելով՝ նայելիս եմ եղել, թե ոնց են հավ ու աքլոր քուջուջ անում: Աքլորը սկսել է ձեռքիս հացը կտցել: Ձեռքս բարձրացրել եմ, որ նրան չհասնի, տեղս նստած՝ ճչացել, մայրիկին եմ կանչել: Աքլորն էդպես էլ հացին չի հասել ու չարությունից կտցել է աչքս: Լավ է, որ կոպին է դիպել»:

Հավի մսի՞ց էր միտքն անցել աքլորին, թե՞ շարունակում էր պտտվել թուրքերի հետ հնարավոր հանդիպման շուրջը, որի դեպում նրա մաքուր մարմնին շատ ավելի սարսափելի բան էր սպառնում, քան աքլորի կտուցը:

«Ո՞ր ականջիս մեջ է զնգում»,- հարցրեց Մոսցեպանովը:

«Ձախ»,- ասացի:

«Չգուշակեցիք,- մի քիչ միտք անելով՝ որոշեց նա:- Ուրեմն դուք եք հավաքելու»:

Տոպրակի մեջ դրեցի ուտելիքի մնացորդները, վեր կացա ու վերադարձա վառոդի պարկերի մոտ: Պակասել էին, բայց իմ հաշվարկներից դանդաղ էին նվազում: Հանգուցյալ թագավորն էլ այդ կարգի թվաբանության թուլություն ուներ: Բոլոր ուղևորությունների ժամանակ, հատկապես վերջինի՝ ղրիմյանի, ցանկանալով ստույգ իմանալ, թե որտեղ կլինենք վաղը կամ մի շաբաթից, երեկոները մատիտը ձեռքին գումարում ու բազմապատկում էր վերստերը, ժամերը, օրերը, շատ էր տխրում, երբ կյանքը հերքում էր իր հաշվարկները, բայց հավատում էր, որ պարզապես սխալ է թույլ տվել ու հաջորդ անգամ ամեն ինչ ճիշտ կհաշվի: Ես այն ժամանակ չէի հասկանում, որ փորձում էր ընտելացնել ապագան, որից սարսափում էր:

Երկինքը համարյա մաքրվել էր, աստղալույսը մեգի պես կանգնած էր օդում: Մի քանի զինվոր, լեռնալանջի քարերի արանքում խուսանավելով, ստորգետնյա անցքին էին մոտեցնում հիմնական խմբից առանձին դրված պարկերը: Միայն նրանց ուրվագծերն էի տեսնում, և այդ ստվերների պարի ողջ ֆանտաստիկությամբ հանդերձ,- լեռան ստորոտում, որի գագաթը պսակում էր Եվրոպայի մեծագույն սրբություններից մեկը, տասը հազարանոց թուրքական բանակի հարևանությամբ, որ ցանկացած պահի կարող էր դուրս պրծնել խավարից,- այդ իրավիճակում տեղի ունեցողի սովորականության տարօրինակ զգացում պատեց ինձ: Հաջորդ վայրկյանին հասկացա պատճառը: Ուղեղս բնազդով պաշտպանվում էր վախից ու ներշնչում իրեն, որ մահը քիչ հավանական է, քանզի առանձնակի ոչինչ չի կատարվում:

Չգիտեի՝ Ֆաբիեն հատկապես երբ գործն ավարտած կհամարի ու կորոշի վերադառնալ, իսկ հարցնել չէի ուզում: Նա իր խաղերն ունի

ճակատագրի հետ: Ինչպես շատ աթեիստներ, հավատում է ճակատագրին ու թաքուն հույս ունի, որ բարեհաճ կլինի իր հանդեպ, քանի դեռ ինքը բանի տեղ չի դնում իր կյանքը:

Փորձեցի կողմնորոշվել ու հասկանալ, թե որ կողմն են Ֆալերոնն ու ծովը, որտեղ՝ Օդեոնը, Արեոպագոսը, Աթենքի կենտրոնական թաղամասերը: Ես այդ քաղաքի մասին գիտեի ամեն ինչ, որ հնարավոր էր կարդալ հին հեղինակների գործերում, բայց մանկուց տեսել էի մորս աչքերով, ինչպես Ալեքսանդրիան՝ հորս: Ալեքսանդրիական շուկաների, մզկիթների, լումայափոխի կրպակների շերտի տակ նա տեսնում էր Պտղոմեոսյանների մայրաքաղաքը, իսկ մորս համար հայրենի քաղաքը հյուսված էր Միխայիլ Ակոմինատի երգերից ու նրա մարած վեհության համար հեղված արցունքներից. «Քո փառքը լեռներ էր շարժում, իսկ հիմա խաղում է միայն ամպերի հետ: Օ՜, իմաստնության մայր, ո՞ւր են քո գանձերը: Ո՞ւր է չքացել գեղեցկությունդ: Ինչո՞ւ այստեղ ամեն ինչ կործանվել ու վերածվել է ավանդությունների...»:

Սկսեցի մրսել: Տաքանալու համար հետուառաջ էի քայլում, ու քայլերի ռիթմով կրկնում տրտունջը մարդու, որը տառապում էր կյանքում երբեք չտեսածի հետ բաժանումից. «Մեղուները լքեցին Գիմետան... Կալիրոեն այլևս չի խոխոջում...»:

Հասնելով վերջին՝ նորից էի սկսում: Եվ ամեն սկզբի հետ բուն բառերի գեղեցկությունը կարևոր էր դառնում դրանց արտահայտած վշտից, տրվեցի նրանց հոսքին, որն ինձ քշեց այն երջանիկ ժամանակները, երբ արցունքները, որ ինձնից՝ տասնամյա տղայից քամում էին, կրթում էին իմ սիրտը:

Այդ երանելի վիճակից ինձ հանեց մոտիկ պայթած հրացանի կրակոցը:

Քիչ անց՝ երկրորդը, երրորդը:

Լսվեց ինչ-որ մեկի խուճապահար աղաղակը. «Թուրքե՛րը»: Զինվորների մի մեծ խումբ հետ թռավ ժայռից: «Կանգնի՛ր: Հե՛տ» բղավոցների ու փախչողների ոտքերի տակ խճաքարի խշշոցի միջով լսում էի հրացանների լիցքավորվման ձայները: Մոսցեպանովը նույնպես ուսից իջեցրեց

հրացանը, բայց մեր կողքով վազող Ֆաբիեն խփեց ձեռքին: «Չկրակե՛լ: Չկրակե՛լ»,- գոռում էր նա:

Մի քանի ձայն կրկնեցին նրա հրամանը, և ամեն ինչ խաղաղվեց: Աշխարհը շուրջը համրացավ, ասես բոլորս հանկարծ հայտնվել էինք ջրի տակ: Ինձ քաշեց ջրապտույտներից մեկը: Չգիտեմ՝ ինքնուրույն էին շարժվում, թե ենթարկվելով սպաների հրամաններին, որոնք խլանում էին ականջներիս մեջ հնչող արյան խշշոցից:

Ես անմիջապես տրվեցի խուճապին, և հաջորդ տասը րոպեներին, չնայած, գուցե և քսան կամ, հակառակը, հինգ րոպեներին, անում էի նույնը, ինչ մյուսները,- քայլում էի, երբեմն վազում, եթե առջևից կամ հետևից վազում էին: Դեմքիս խփվող ճյուղեր, ստվերների ու լուսնալույսի բծերի խելահեղ պար՝ ուրիշ ոչինչ: Երբ նորից հայտնվեցին ձայները, վախեցնող բարձր էին, ինչպես թիթեղյա խուփի տակ: Խճաքարի խշրտոցը տառապագին խփվում էր ականջներիս: Ալիք-ալիք լսվում էր ոտքերի խուլ թփթփոցը: Բազմագլուխ-բազմաոտ գազանը սարսափահար սլանում էր մացառուտով: Ես նրա մի մասն էի ու տեղի ունեցողը գիտակցում էի բանականության նույն աստիճանով, որ կարող էր ունենալ իմ մատը կամ հոդը:

Մակվիսում պտույտ անող կածանները սկսեցին միանալով մեկ հունի մեջ: Դրա հետ ընդարձակվեց ժամանակը, որի մեջ ապրում էի, և ներկայի հետ բացվեց մոտ ապագան: Պարզ ասած, ինձ վերադարձավ իրավիճակը գոնե կես ժամ առաջ գնահատելու ունակությունը:

Ուր որ է դուրս էինք գալու Ֆալերոնի ճանապարհը: Եթե թուրքերը հետապնդեն ու փորձեն խանգարել նավ բարձրանալուն, նավային հրանոթները հետ կքշեն նրանց: Բաց տարածության մեջ սիփահիներն ի վիճակի չեն դիմանալու նույնիսկ չնչին հրետանային կրակին:

Միայն հիմա պարզեցի, որ այդ ամբողջ ընթացքում ինձնից երկու մարդ առաջ գնում էր Մոսցեպանովը: Վազելիս սապոգների լաթերն արձակվել էին, պայտիկները զնգացին քարերին, երբ հետ թռավ՝ բաց թողնելով ընդառաջ ելած Չեկեիին: Ես իմ հերթին առաջ թողեցի Ֆաբիեին, որն անսպասելի հայտնվեց ու հրեց հետևից: «Սիփահինե՛ր,- շնչակտուր զեկուցեց Չեկեին:- Շատ են ու դեռ գալիս են»:

Սիրտս թպրտում էր, բոլոր երակներս վազքից լայնացել էին, իսկ ուղեղիս անոթները, հակառակը, սեղմվել: Աչքերս կայծկլտում էր, ինչպես ուժեղ գլխացավից առաջ: Անորսալի ալիքները, արևից շիկացած ավազից բարձրացող օդի շիթերի պես, կրճատում էին տեսադաշտը, ու հասկացա, թե Քարոնի դեմքն ու հագուստը ինչու են պուտավոր, լուսանի մորթու պես: Պուտերը մորթու վրա չեն, այլ նայողների աչքերում:

Շառլ-Անտուան Ֆաբիե: Ապստամբի օրագիրը

Դեկտեմբեր, 1826 թ.

Ինձ չէր հետաքրքրում՝ թուրքերն ինչպես են իմացել մեր մասին: Պատահականությո՞ւն, դավաճանությո՞ւն, ինչ-որ մեկի անզգուշությո՞ւնը. մի՞թե նույնը չէ: Կարևորն այն էր, թե իրենց ինչպես կպահեն այն հարյուր հիսուն զինվորները, որոնց թողել էի Ֆալերոնից Աթենք կեսճանապարհին: Նրանք առայժմ կյանքի նշաններ ցույց չէին տալիս: Փոխհրաձգությունը շարունակվում էր, բայց կրակոցների բռնկումներից հասկանում էի, որ թուրքերի կրակին պատասխանում են ինձ հետ մնացած մարդիկ:

Ցիկուրիսը գլխից պոկեց փաթթոցն ու դեն նետեց: Այդպես վարվեցին նաև մյուս սպաները, Չեկեին ու նրան շրջապատող հելլենասերները: Ես հետևեցի նրանց օրինակին՝ ափսոսելով, որ առաջինը չեմ արել: Շարժումը խոսքից արտահայտիչ էր. նշանակում էր, որ մեզ այլևս քողարկում պետք չէ, թշնամուն դեմ հանդիման ընդունում ենք մեր իսկական տեսքը:

Շուրջս համարյա աննշմար, բայց անդադար շարժում էր եռում: Զինվորները դանդաղ տեղաշարժվում էին իրենց իսկ կազմած շրջանում, որի կենտրոնում ես էի: Գիտեի, որ առաջիկա րոպեներին այդ պտույտը կարագանա, շրջանը կտրոհվի բազում մասերի, և կենտրոնախույս ուժը կսկսի նրանց նետել այն ուղղությամբ, ուր մենք ավելի քիչ կուզեինք գնալ: Վրա էր հասնում պահը, երբ միածույլ մարդկային զանգվածը տրոհվելու էր հյուլեների: Մինչև իսկական խուճապը դեռ հեռու էր, բայց իշխանությունս զինվորների վրա ամեն վայրկյան թուլանում էր:

Ձմռանը գունդը կանգնած էր Աթենքում, իմ մարդիկ ուսումնասիրում

էին քաղաքը: Ո՛չ հավաքների պետք եղավ, ո՛չ մտքերի փոխանակության, որ երեք հարյուր գլուխներում ծնվեր նույն միտքը. պետք է քաշվել Ակրոպոլիս, քանի դեռ թուրքերը չեն փակել մեր փրկության վերջին ճանապարհը: Գունդն իմ ենթակայության տակ պահելու վերջին հնարավորությունն ընդհանուր պոռթկումը գլխավորելն էր, որին դիմադրելը, մեկ է, վեր էր իմ ուժերից, բայց ես հապաղում էի: Կրիեզոտիսը պաշարվածներին և՛ վառոդ էր հասցրել, և՛ պարեն, իսկ մենք մթերքի միայն երեք օրվա պաշար ունեինք, որի կեսն արդեն կերել էինք: Երեք հարյուրից ավելի զինվորները կուժեղացնեն Ակրոպոլիսի կայազորը. նույնքան նոր ուտող բերանը կարագացնի նրա պարտությունը: Դրա մեղքը կդնեն ինձ վրա, միևնույն ժամանակ կհիշեցնեն, որ Քյութահիայի մոտենալու ժամանակ գունդը դուրս եմ բերել քաղաքից: Հունաստանում արած մնացած ամեն ինչ մոռացության կմատնվի կամ այնպես կմեկնաբանվի, թե միշտ գործել եմ ի վնաս հունական ազատության:

Նույն ստորգետնյա անցքով պարեն էլ կարող էր հասնել Ակրոպոլիս, բայց միանգամից մեծ պաշար տեղափոխելը բարդագույն գործողություն էր, ինչպիսին իրականացրինք այսօր: Դժվար թե մոտակա ժամանակներս որևէ մեկն ի վիճակի լինի կրկնելու, ասենք, թուրքերն էլ այս գիշերվանից հետո կուժեղացնեն պահակետերը: Իսկ եթե ալյուրն ու աղ դրած միսը տեղափոխվեն փոքր խմբաքանակներով, կամ կամավորները կհոգնեն մշտական վտանգից, կամ ի վերջո նրանց հետքը կգտնեն, և այդ ժամանակ կրկին կփակեն գետնուղին:

Ես հետևողականորեն շարադրում եմ մտքերս, բայց դա պարզապես տուրք է պայմանականություններին, որ ընդունել եմ օրագիր վարելիս: Ոչ մի միտք չունեի, որ կարողանար բառ դառնալ՝ դրանց նշանակության աճի կամ նվազման կարգով. ուղեղիս մեջ շիկացման տարբեր աստիճանի կետեր էին բռնկվում ու մարում ավելի վաղ կամ ուշ՝ կախված նրանից, թե որքան վառ էր պատկերանում ինձ հետագայի այս կամ այն տարբերակը, և որքան երկար էի դիտարկում: Ելք էի փնտրում այնպիսի հանգամանքներում, որից ելք չկար:

Փորձել ճեղքել-դուրս գալ ծո՞վ:

Ենթադրենք այդպիսի հրաման տվեցի: Ո՞վ կգա իմ հետևից: Հելլենասերները, այն էլ ոչ բոլորը, սպաների մի մասը ու կես հարյուրյակ զինվոր:

Այո՛, պատվով կզոհվենք, բայց մյուսները կքաշվեն Ակրոպոլիս ու մեկ-երկու ամսից, քաղցից օրորվելով կհանձնվեն Քյուհին փաշայի ողորմածությանը: Ավելի ազնիվ չի՞ լինի, որ մենակ վերադառնամ գետնուղի: Այնտեղ դեռ վառոդի մի քանի պարկ մնացել է: Ու սպասելով, որ թուրքերը մոտենան, պայթեցնեմ... Մի ակնթարթում պատկերացրի, թե ինչպես է Սյուզին «Times»-ում կարդում, որ գնդապետ Ֆաբիեն վառոդ էր տանում Ակրոպոլիսում պաշարվածներին և պայթեցրել է իրեն գերի չընկնելու համար:

Ակրոպոլիսի կես ճանապարհին մնացած հարյուր հիսուն հոգին առաջվա պես կենդանության նշաններ ցույց չէին տալիս: Մեր պահակետերը նահանջել էին, իսկ թուրքերը չէին ուզում մինչև առավոտ անկանոն կռվի բռնվել թփերի ու քարերի արանքում և, ըստ երևույթին, ինչպես ես կվարվեի նրա տեղում, սպասում էին, որ նախ հարմար դիրքում հետ մղեն դեպի ծով ճեղքելու մեր փորձերը, հետո արդեն գրոհեն: Ուժեղը նախընտրում է կռվել ցերեկվա լույսի տակ:

Զգացի, թե ինչպես զինվորական զանգվածի շարժումը, որ առաջ պարփակված էր իր ներսում, սկսեց ուղղորդվել դրսից: Ես այլ ընտրություն չունեի, բացի նրա մասը դառնալուց: Վկաները կհաստատեն, որ Ակրոպոլիս քաշվելու հրաման չեմ տվել ու ստիպված եմ միացել գնդին՝ չցանկանալով առանց ղեկավարության թողնել: Սուլիացիներն ու Ցիկուրիսի մարդիկ, հենց իր գլխավորությամբ, ուսերով ու հրացանների կոթերով ինձ համար ճանապարհ բացեցին նեղ կածանին խտացած մարդկային հոսանքում: Իշխանությունը, միացած ուժին, դեռ գործում էր, ինքնին՝ ոչ: Առաջ մղվեցին ամենալկտիները: Ես ու Չեկեին մի տասնյակ հելլենասերների հետ հետ մղեցինք նրանց ու գնացինք եթե ոչ առաջին, ապա երկրորդ շարքում: Անբաժան Կոստանդիսը հետևեց ինձ, Մոսցեպանովը՝ նրան:

Լուսաբացը սարերի հետևում չէր, բայց Աթենքի կողմից ոչ մի աքաղաղ չէր ազդարարում նրա գալուստը: Թուրքերը բոլորի վզերը վաղուց ոլորել էին: Քաղաքում մնացած սակավաթիվ բնակիչները, փողոցները լցվող

Քյուհին փաշայի զինվորների հրածգությունից ու աղմուկից արթնացած, պահվել էին տներում: Լսվում էր, թե նրա հեծելազորն ինչպես է շարժվում դեպի հյուսիսային լեռնալանջը: Նա չէր կասկածում, որ մենք արդեն այնտեղ չենք:

Նիհարության պատճառով գիշերները սառչում էի, իսկ հիմա այտերով ու ճակատով զգալով սառցեղեն քամին, այն որպես մարմնիս հետ կապ չունեցող արտաքո մի բան էի զգում: Արագ էինք գնում, ժամանակ առ ժամանակ վազքի անցնելով, բայց լույսն ավելի արագ էր բացվում: Հարավային լանջի շրջադարձին, դեռ հեռվից, միջնաբերդի դարպասների գլխին, նույն ինքը Ակրոպոլիսի մուտքից վեր, տեսա միջնադարյան ամրությունը, որը թուրքերից շատ առաջ Պրոպիլեյներում կառուցել էր Աթենքին տիրող կատալանյան կամ ֆրանսիական բարոնևերից մեկը: Նրա քառանկյուն աշտարակի վերնամասն ուրվագծվում էր գորշացող երկնքի ֆոնին: Ֆալերոնի ճանապարհին մեզ սպասող թուրքական հրամանատարներն ուր որ է հայտնաբերելու էին մեր անհետանալն ու նետվելու էին հետապնդման, բայց մենք համարյա նպատակակետի մոտ էինք:

Հողը փոխարինվեց քարերով: Ոտք էինք դրել դեպի ամրոցի դարպասները տանող ճանապարհի վերջին հատվածին, երբ իմ առջևից գնացողները կանգ առան ու հետ քաշվեցին, իսկ ես ու շքախումբս շարունակում էինք նույն արագությամբ: Ամեն ինչ մի ակնթարթում կատարվեց. մեր խումբը, որին երկու կողմից պատում էին հանդիպակաց հոսքերը, անցավ առաջ, ու մարող սրտով հասկացա, որ կատարվել է այն, ինչի մասին ես ու Չեկեին ջանում էինք ոչ միայն չխոսել, այլև չմտածել, որ չարթնացնենք խավարում ննջող սարսափը. ուղիղ մեր առաջ, գուցե քսան քայլի վրա, ճանապարհը փակել էին զինվորների շարասյուները՝ մարտի պատրաստ հրացաններով: Աչքի զարնեցին հարազատ ֆրանսիական համազգեստները: Մակրիական ծովածոցում ես դրանք տեսել էի Իբրահիմ փաշայի արաբների հագին: Փշաքաղված սվիններով նրանց խիտ շարքը հասնում էր լեռան ստորոտին, իջնում լանջն ի վար և անհետանում լուսաբացի մշուշում:

Կարկամած՝ սպասում էի համազարկի, բայց լսեցի ինչպես է մեկը

ֆրանսերեն տալիս անունս. «Ֆա՛բիե: Գնդապե՛տ Ֆաբիե: Ձայն տվեք: Գիտեմ, որ այստեղ եք»:

«Չխոսե՛ս,- շշնջաց Չեկեին:- Արձագանքես՝ կսպանեն ու կանցնեն մեզ»:

Նշան արեց, որ սուլիցիները պաշտպանեն ինձ: Մոտակա երկուսին հետ մղելով՝ քայլեցի ճակատագրին ընդառաջ, որն ինձ հայտնվեց ոչ բարձրահասակ, լայնակուրծք մարդու կերպարով, որը շքագլխարկով էր և առանց էպոլետների հասարակ զինվորական սերթուկով: Այդ նույն ասկետիկ կոստյումով, որն իրեն կարող է թույլ տալ բացարձակ, որևէ հաստատման կարիք չունեցող իշխանության տերը, նա Ուրազա-բայրամի նախօրեին կանգնած էր ափին կառանված թիանավի տախտակամածին, բայց հիմա տարածությունը մեր միջև շատ ավելի փոքր էր: Արդեն բավականաչափ լուսացել էր, որ կարողանայի տեսնել նրան: Դեմքին խելք և ուժ էր կարդացվում, բայց երկուսն էլ սքողված էին ինչ-որ երրորդով, որին անուն գտնել չէի կարողանում. և այդ երրորդը թույլ չէր տալիս նրան վերագրել արտաքինի ու խառնվածքի կապի մեր սովորական պատկերացումները: Դրա հետ մեկտեղ՝ դա հունական ռամիկի սովորական դեմք էր, և նա, ըստ էության, այդպիսին էլ կար: Հիմա, այդ ժամանակվա զգացողություններս փորփրելով՝ մտածում եմ, որ նրա մեջ վանում էր կոպիտ կամքի կնիքն ու գրավում քառասնամյա տղամարդկանց համար հազվադեպ դիմագծերի պատանեկան նրբությունը:

«Այստե՞ղ եմ»,- գոչեցի ես:

Ինձ պատասխանեց համաչափ, անարտահայտիչ ձայնը մարդու, որին չի մտահոգում ասվածի նշանակությունը շեշտադրությամբ ընդգծելը: Արքայազնը դրա կարիքը չունի:

Անբասիր ֆրանսերենը հորդեց նրա շրթունքներից, բայց հրացանափողերի տակ միանգամից չկարողացա հասկանալ. խանգարում էր միտքը, որ հենց նա ավարտի, ես կմեռնեմ:

Կամային ջանքով վերադարձրի ինքնատիրապետումս ու հասկացա, որ Իբրահիմ փաշան սկսել է հաճոյախոսություններից՝ իմ խիզախության ու բարոյական սկզբունքների վերաբերյալ: Նրա գովեստներում բուտա-

ֆորական արևելյան փքունության նշույլ իսկ չկար, փոխարենը՝ իմ մասին ստույգ տեղեկություններ էին: Ակնհայտորեն երեկ չէր իմացել իմ գոյության մասին: Ըստ երևույթին, տեղեկություններ էր հավաքել, հետաքրքրվել ինձնով, ինչպես ես՝ իրենով:

Դրանից առաջ սուլիցիները, Ցիկուրիսը, Մոսցեպանովն ու առաջին գիծ հանված հելլենասերները նշանառության տակ էին առել նրան, ինչպես որ եգիպտացիներն՝ ինձ: Մեզնից յուրաքանչյունը մյուսի կյանքի գրավականն էր:

Անասելի լարված էի, բայց արդեն հասկանում էի, որ շուտափույթ մահ չի սպառնում: Թիկունքով զգում էի զինվորների շփոթմունքը, որոնք արագ հասկացել էին, թե ինչ թշնամու ենք հանդիպել: Նրանց առաջնորդի անունը տագնապալի շշուկով անցավ շարքերով, բայց ի վերջո այն ազդեցությունը չունեցավ, ինչից ես ու Չեկեին վախենում էինք: Հետ չնայելով՝ զգում էի, թե ինչպես են իմ մարդիկ կրկին մեկ ամբողջություն դառնում: Գունդը դարձյալ հավատում էր ինձ, ապավինում ու սպասում իմ խոսքին:

Իբրահիմ փաշան իմ արժանիքներից անցավ իմ քաղաքական հայացքներին: Մի երկու ընդհանուր արտահայտություն,- և մեջբերում հնչեց Ռուսոյից: Ականջներիս չհավատացի, ու չնայած համարյա անմիջապես հիշեցի, որ Ժան-Ժակը պատանի Իբրահիմի՝ Փարիզի զինվորական դպրոցի սանի կուռքն է եղել, մեջբերումն ասես ջնարի հնչյուն լիներ տանջախցում, վարդի թուփ՝ սպանդանոցում:

Նախնադարյան վիճակում, նրա միտքը փոխանցեց Իբրահիմ փաշան, մարդիկ ապրում էին կրքերով, սակայն պետության ի հայտ գալով՝ սովորեցին կրքերը ենթարկել բանականությանը: Ահռելի նշանակությունը, որ հույները տալիս են ազգային զգացումին, այն վերածելով անսանձ կրքի, հաստատում է, որ նրանք վերադառնում են վայրենության վիճակի: Պե՞տք է, արդյոք, որ բանական մարդը դրա մեջ խրախուսի նրանց:

Հարցը հռետորական չէր, Իբրահիմ փաշան պատասխանի էր սպասում, բայց ես չէի ուզում նրա հետ այդ թեմայով բանավիճել նման իրավիճակում: Նրա փաստարկները ի սկզբանե ծանրակշիռ էին իմից: Երեք հետևակային գումարտակ ուներ, երկու հազարից ավելի մարտիկ, ես՝ վեց

անգամ քիչ, և եթե նույնիսկ առաջինը կրակ բացենք, դա ոչինչ չի փոխի: Համազարկից հետո կհանդիպենք սվիններին: Մեր հրացանները սվին չունեն, իսկ սրով զինված է, լավագույն դեպքում, ամեն երրորդը, ասենք նաև, ո՞ւր է երաշխիքը, որ ամբողջ գունդն իմ հետևից կգնա գրոհի: Որ կեսը ցիրուցան չի լինի թփուտներում: Այդ բոպեներին մտքումս գործողությունների ոչ մի պլան չհասունացավ, միայն փոքրոգաբար ծգում էի անխուսափելին:

«Շարունակե՛ք»,- գոչեցի ես:

Իբրահիմ փաշան արաբերեն ինչ-որ բան հրամայեց: Լսվեց քարերին իջնող խզակոթերի կոտորակազարկը. նրա զինվորները հրացաններն առան ոտքի: Դա ոչ այնքան վստահության նշան էր, որքան գերազանցության ցուցադրում: Նա, իհարկե, համարժեք սիրալիրություն էր ակնկալում իմ կողմից, բայց ես այդպիսի հրաման չտվեցի: Ինձ ուղղված հրացանների փողերը դարձան վեր, իսկ նրան նշան բռնածները մնացին նախկին դիրքում:

Ես պատրաստվեցի «Կրա՛կ» հրաման տալու, հենց նա չեղարկի իր հրամանը, բայց դա տեղի չունեցավ: Նրա շրթունքներին իմ թուլության հանդեպ ներողամտության ժպիտ հայտնվեց:

«Ալլահի պատգամաբերը մեզ պատվիրել է սրել սուրը, երբ ոչխարը նայում է նրան»,- ասաց նա ու նշան արեց, որ ուզում է շարունակել խոսքը:

Ինձ շոյեց նրա վստահությունը, որ առանց հրամանի իմ մարդկանցից ոչ մեկը չի համարձակվի կրակել իր վրա: Եթե իմանա՛ր, թե ինչ վիճակ է իրականում:

«Ես ծնունդով հույն եմ,- խոսեց Իբրահիմ փաշան:- Խորթ հայրս ալբանացի է, Քյութահիան ու Քյուհին փաշան վրացիներ են...»:

Նա էլի մի քանի նշանավոր օսմանյան գեներալների ու նահանգապետերի անուններ տվեց: Պարզվեց՝ մեկը բուլղարացի է, երկրորդը՝ չերքեզ, երրորդը՝ եգիպտական ղպտի, չորրորդը՝ ֆրանսիացի:

«Մենք՝ այլ հավատի մեջ ծնվածներս,- համարյա մտերմաբար հնչում էր նրա ձայնը,- պահպանում ենք մանուկ տարիների, նախկին կյանքի հիշողությունը, բայց որքան լավ ենք հիշում այն աշխարհը, որտեղից դուրս

ենք եկել, այնքան ուժգին ենք ցանկանում լուծվել այս մեկի մեջ: Մենք այն ավելի ենք գնահատում, քան այդ աշխարհին արյան իրավունքով պատկանողները, իսկ նրա համար մեր օտարածին լինելն արատ չէ, այլ արժանիք: Կա՞, արդյոք, Եվրոպայում թեկուզ մեկ գեներալ կամ մինիստր, որ ծնունդով մահմեդական լինի: Ինձ այդպիսիք հայտնի չեն: Դուք սարսափում եք խոստովանել, որ ապագայի ձեր իդեալը ներկայիս Օսմանյան կայսրությունն է...»:

Ես կանգնել էի մեզ բաժանող դատարկության մի ափին, նա՝ մյուս: Իմ թիկունքում իրար սեղմվող բեղավոր մարդկանց ամբոխն էր՝ խայտաբղետ խալաթներով, ոմանք՝ գլխներին ծռված ապուշ փաթթոցներով, նրա թիկունքում՝ կանոնավոր շարքով ջահել տղամարդիկ էին՝ ածիլած դեմքերով, արևմտյան ձևվածքի միակերպ համազգեստով: Նրանք իրենցով մարմնավորում էին կարգը, մենք՝ քաոսը:

«Կարծում եք, որ ազատ Հունաստանը ոգու վեհության օրինա՞կ կտա աշխարհին: Որ հելլենասերները կդառնան այն հատիկը, որից կաճի ժողովուրդների եղբայրությո՞ւնը,- Իբրահիմ փաշան ոչ միայն իմ կյանքի ապշեցուցիչ իմացություն էր դրսևորում, այլև իմ համոզմունքների, որոնք, ճիշտ է, մերժել էի, բայց ոչ մինչև վերջ. դրանք երբեմն վերադառնում էին, ինչպես արևոտ եղանակին մի բաժակ լավ գինուց հետո վերադառնում են երիտասարդության մեր հույսերը:- Ես խղճում եմ ձեզ, գնդապե՛տ: Ձեզ հիասթափություն է սպասում: Եթե կարողանաք մեզնից հույներով բնակեցված թեկուզ մի պատառ հող պոկել, հաջորդ օրը ձեր հելլենասերները կբաժանվեն ըստ ազգությունների ու կսկսեն իրար կոկորդ կրծել այնտեղ սեփական կարգերը հաստատելու համար: Իսկ հույները, եթե նրանց բաժին ընկնի Ակրոպոլիսը, մաս-մաս կանեն ու վարձակալության կտան եվրոպացիներին: Ձեզնից փող կառնեն Պարթենոնը տեսնելու հնարավորության համար...»:

Ես նրա ասածը չեմ գրի առնում, այլ իմ լսածը: Ավելի հակիրճ էր խոսում, պարզ, կտրուկ, ես նրա ասածը լրացնում եմ իմ մտքերով, այնքան էլ չհասկանալով՝ այդ պահի՞ն էին ծնվել, երբ լսում էի, թե՞ ծնվում են հիմա՝ որպես իրականում նրա ասածի շարունակություն ու զարգացում: Բառացի չեմ

փոխանցում նրա խոսքը, այլ հետևելով նրա ոգուն ու տրամաբանությանը:

«Մի՞թե դուք սիրում եք հույներին: Դուք սիրում եք նրանց մասին ձեր ֆանտազիաները, ձեր երազներն այն մասին, թե ժամանակին ինչպիսին են եղել և կրկին ինչ կդառնան ձեր հովանու ներքո: Այնպիսին, ինչպիսին կան, նրանք ձեզ հարմար չեն,- ցավոտ արթնացրեց իմ մեջ Սյուզիի հանդիմանությունը:- Դուք նրանց ու ձեզ ներշնչել եք, թե լավագույնը, որ ունեք, իրենցից է, դուք որպես հավասար կընդունեք նրանց ձեր ընտանիք, երբ ապացուցեն, որ արժանի են իրենց մեծ անցյալին, որը դեռ հայտնի չէ, իսկապե՞ս եղել է, թե՞ դուք եք հորինել, և եթե եղել է, արդյո՞ք նրանց է պատկանել, թե լրիվ ուրիշ ժողովրդի: Իրականում նրանք համարյա մենք ենք, մեր միջև տարբերությունը չնչին է, նրանց ու ձեր միջև՝ ահռելի: Նրանք մեր ազգականն են, ձեզ՝ օտար: Եթե նրանց պոկեք մեզնից, դեռ կափսոսեն այն ժամանակը, երբ կիսում էին ճակատագիրը մեզ հետ: Ավելի վատ՝ կանիծեն ձեզ: Մեզ պետք են նրանց նավերը, խանութները, բանկերը, լումայափոխի կրպակները, իսկ դուք դրանցից լիուլի ունեք: Մեր մեջ նրանք համարյա առաջին էին, ձեր մեջ վերջին են լինելու...»:

Ես նորից կորցրի նրա խոսքի թելը: Այդ պատերազմն իր սարսափներով իմ առաջ կանգնեց որպես անիմաստ կոտորած, իմ կյանքը՝ սխալների ու մոլորությունների շղթա: Ինձ պատեց անտարբերությունն այն ամենի հանդեպ, որ նրա իմաստն էր, բայց մահն էլ նույնքան աննպատակ էր թվում:

Անտանելի ցուրտ ու մենություն. ահա ամենը, որ զգում էի:

Դա տևեց մի քանի վայրկյան և նման էր ուշաթափության: Հետո գիտակցությունս պարզվեց, Իբրահիմ փաշայի ձայնի մեջ լսեցի սեփական ձայնս, որ ինձ հետապնդում էր անքնության ժամերին, միայն թե ես ինձ առաջին դեմքով էի դիմում, իսկ նա՝ երկրորդ:

«Հույնե՛ր, հույնե՛ր, հույնե՛ր»,- ծաղրեց նա իմ սևեռումն այդ թեմայի վրա:- Ճա՞տ բարիք եք տեսել նրանցից: Ինչքան շուտ մոռանաք նրանց, այնքան լավ: Նույնիսկ եթե հաղթանակը նրանցը լինի, պտուղները դառն են լինելու ձեզ համար: Հույները չեն արդարացնելու ձեր հույսերը: Այն, ինչ ձեզ պետք է, այստեղ չեք գտնի, իսկ ինչ ունեք, կկորցնեք: Հեռացեք այս-

տեղից, գնդապե՛տ: Վերադարձեք Ֆրանսիա: Թագավորը կների ձեզ...»:

Նա առանց անցման սկսեց թվարկել այն պայմանները, որոնցով ինձ առաջարկվում էր ցած դնել զենքը:

Երկրորդ կետի վրա որոշեցի ընդունել դրանք:

Կոնստանտին Կոստանդիս: Թափառիկ բժշկի նոթերը

Դեկտեմբեր, 1826 թ.

Ձզվանքով էի լսում նրան: Եվ ձգվանքն ավելի ուժեղ էր, քան նրա հանդեպ վախը: Մահմեդականություն ընդունած հույն, խաբուսիկ-նրբագեղ դեմքով ասիական բուրբոն՝ նա ֆրանսիական համազգեստ էր կրում, սովորել էր Ֆրանսիայում, կարողանում էր դանակ-պատառաքաղ օգտագործել, Ռուսը էր կարդացել,- ու դրա հիման վրա իրեն Արևմուտքի բոլոր գայթակղություններն անցած մարդ էր համարում: Առավոտները հայելուն նայելով՝ նա, իհարկե, տեսնում է մի մարդու, որը հպարտորեն վեր է բարձրացել կեղծավոր արևմտյան բարոյականությունից ու չի ցանկանում ընդունել միայն վերջերս ստրկավաճառությունից հրաժարված ֆրանսիացիների իրավունքը՝ մեղադրելու իրեն Սոդոնում գերիների շուկա բացելու համար: Այո՛, այնտեղ վաճառում են Տրիպոլիսի շրջակա գյուղերից հավաքած ջահել տղամարդկանց ու կանանց,- բայց ո՞վ է նրանց Աֆրիկա ու Սիրիա հասցնում իրենց նավերով: Նույն հույները: Ինքն իրեն ոչնչացնող ժողովուրդն արժանի չէ ապրելու: Ասենք, հույն գեղջուկներն էլ բթամիտ են, ծույլ. Եգիպտոսից վերաբնակեցված աշխատասեր ֆելլահները Սորեան կդարձնեն ծաղկուն պարտեզ:

Իբրահիմ փաշայի կողքին կանգնած սպաները արաբի նման չէին, բայց գլխներին ոչ թե շքագլխարկ էր, այլ փաթթոցներ: Բնականաբար, եթե որևէ մեկը կարող էր հասկանալ նրա հոգին ու կիսել նրա զգացմունքները, ապա միայն իսլամ ընդունած եվրոպացիները: Նրանք հենց դրա համար էլ հեքիաթային ռոճիկ էին ստանում: Սակրավորական աշխատանքները ղեկավարելը կամ հրետանու կառավարումը նրանց ժամանցն է:

Այդ հիմա կարող եմ հեգնել, իսկ այն ժամանակ սիրտս զանգի պես

խփում էր ականջներիս մեջ, ոտքերս կպել էին հողին: Մոսցեպանովի խորհրդով վերջին քառորդ ժամն իր պես ջանում էի մոտ կանգնել Ֆաբիեին: Տեղը հրամանատարի կողքին Մոսցեպանովն ամենաանվտանգն էր համարում, որովհետև մարտում սուլիցիները նրա հետ մեզ էլ կպաշտպանեին: Նրա թվացյալ-ռացիոնալ հաշվարկը մեզ դրեց եգիպտական հրացանների փողերի տակ: Ամպրոպի ժամանակ կայծակը խփում է ամենաբարձր ծառերին, որոնց տակ դժբախտ հիմարները փրկություն են փնտրում անձրևից: Առաջին շարքում ողջ մնալու հնարավորությունը փոքր էր: Մոսցեպանովն իր ռուսական ճակատագրապաշտությամբ հնազանդվել էր բախտին, իսկ ես փորձում էի հետևանց խցկվել շարասյան խորքը: Ապարդյուն ջանքեր: Խիտ զինվորական զանգվածի մեջ նույնիսկ չնչին սողանցք չգտնվեց: Զինվածներից ոչ մեկը չցանկացավ տեղփոխ լինել անզենիս հետ:

Ֆաբիեից աջ կանգնած էր Չեկեին, ձախ՝ երկու սուլիացիներ ու Ցիկուրիսը: Ցիկուրիսից ձախ ու ինձնից աջ՝ Մոսցեպանովը: Տեսնում էի՝ նրա համար որքան դժվար էր պահել կրակի պատրաստ հրացանը: Ամեն անգամ շունչ առնելիս կրծքի տակ ինչ-որ բան խռխռում էր: Ըստ երևույթին լարումից ու հոգնածությունից բրոնխները կծկվել էին, օդը դժվարությամբ էր անցնում թոքերը: Ուսից կախված տոպրակում ամենայն հավանականությամբ ուտելիքի մնացորդներն էին, որ հանել էի իմ բժշկական արկղից: Արկղը մնացել էր մեր հացկերույթի տեղում:

Ես մի բան էի ուզում՝ ապրե՛լ: Երբ Իբրահիմ փաշան եգիպտացիներին հրամայեց «Հրացանները ոտքի՛», իսկ ինքը մնաց մեր մուշկետների նշանառության տակ, իմ մեջ հույսի թույլ կրակ առկայծեց: Այդպիսի վտանգի չէր գնա, եթե վստահ չլիներ, որ իրավիճակի անելանելիությունը մեզ ստիպելու է հանձնվել: Ես անասելի ուզում էի դա ու վախենում, որ Ֆաբիեն, ցանկանալով պահպանել արժանապատվությունը, կձգձգի մինչև Քյուհին փաշայի մոտենալը: Արդեն լսում էի մեր հետքով եկող եգիպտական հետևակի պայտերի զնգոցը քարերին: Եթե մամլակի մեջ առնեն, ոչ ոք անձնատուր լինելու բանակցություններ չի վարի մեզ հետ:

Իմ կարծիքով Իբրահիմ փաշայի ողջ խոսքը երկու րոպե տևեց, բայց

այն ժամանակ ինձ անվերջանալի էր թվում:

Նայեցի Ֆաբիեին, և ինձ տհաճորեն զարմացրեց, թե դեմքի ինչ արտահայտությամբ է լսում այդ աֆրիկյան սիրենին, որի երգը բաղկացած էր կեղծ դայլայլներից ու շարքային հիմարություններից: Դրանք առաջինն են գալիս ցանկացածի մտքին, որը փորձում է դատել Հունաստանի մասին, բայց սթափ դատողությամբ հնոտու պես դեն են նետվում, իսկ Ֆաբիեն դրանք լսում էր իբրև երկնային հայտնություն: Այդպես է լինում, երբ որևէ մեկը քեզ շարադրում է քո իսկ նվիրական մտքերը: Բոլորս էլ մեզ այնքան բարձր ենք դասում, որ մեր սրտինը կարդալու ունակությունն անհնար է թվում առանց վերին հուշման:

Կրկնում եմ՝ այս դատողությունները Ֆաբիեի մտքերը կարդալու իմ այսօրվա ջանքի պտուղն են: Երեկ պարզապես սպասում էի, թե Իբրահիմ փաշան երբ կավարտի իր սոփեստություններն ու կպահանջի ցած դնել զենքը: Հույս կար, որ Ֆաբիեի խելքը կբավականացնի առևտուր չանելու և ընդունելու ցանկացած պայման: Թվում էր՝ գործը դրան է գնում, երբ հանկարծ լռության մեջ հնչեց Ցիկուրիսի հիստերիկ-զնգուն ձայնը:

«Հանգիստ թող մեզ: Կորի-գնա քո Եգիպտոսը»,- հունարեն գոչեց նա:

Հողը փախավ ոտքերիս տակից, սակայն մեզնից մեկի լեզվից թռած վիրավորանքին ընդհանրական պատիժ չհետևեց:

«Ալլահի պատգամաբերն ասում է՝ եթե մեկի ձեռքից մի պատառ ընկնի, պետք է վերցնել և ուտել, ոչ թե թողնել շեյթանին»,- նրան հանգիստ պատասխանեց Իբրահիմ փաշան:

Վերջապես նա անցավ նրան, ինչին անհամբեր սպասում էի՝ անձնատուր լինելու պայմաններին: Առաջարկվեց հետևյալը. հույները, զինվորներն ու սպաները խաչի կամ սրբապատկերի վրա երդվում են, որ զենք չեն բարձրացնի սուլթանի դեմ և գնում՝ ուր կուզեն, հելլենասերները խոսք են տալիս, որ երբեք չեն վերադառնա Հունաստան, ինչից հետո նրանց, ողջ ունեցվածքով, նավով կուղարկեն Լիվոռնո, Ֆաբիեն ազատ է մեկնելու նրանց հետ կամ օգտվելու Իբրահիմ փաշայի հյուրընկալությունից այնքան, որքան կկամենա:

«Հուսամ, գնդապե՛տ, ձեզ կբավականացնի իմ ազնիվ խոսքը: Չեի ու-

զի երդվել Ղուրանի վրա»,- ժպտաց նա:

Ավելի ճիշտ՝ ցույց տվեց ժանիքները:

Ֆաբիեն ձևացրեց, թե մտածում է առաջարկի վրա, բայց դեմքից երևում էր, որ որոշումն արդեն կայացրել է, և այն չի տարբերվում իմ սպասումներից: Համենայն դեպս առաջին տարին չէինք իրար ճանաչում:

«Պիտի խորհրդակցեմ իմ մարդկանց հետ»,- ասաց նա:

Դա նրա շահերից էր բխում: Ցանկանում էր ապահովագրել իրեն, եթե ռազմական մինիստրությունում որևէ մեկի մտքով անցներ քննություն սկսել, թե հատկապես ինչպես է տեղի ունեցել կապիտուլյացիան:

«Երեք րոպե եմ տալիս»,- Իբրահիմ փաշան բարձրացրած մատների թվով սահմանեց այդ խորհրդակցության առավելագույն տևողությունը:

Ֆաբիեն, իրեն շտապողականությամբ չնվաստացնելով, մեջքով դարձավ եգիպտացիներին: Ծրթունքներն անձայն շարժվում էին, բայց դժվար թե արդարանում էր ինքն իր առաջ, ավելի շուտ բառեր էր ընտրում, որ հասցնի սահմանված ժամանակում զինվորներին հունարեն շարադրել այն, ինչ Իբրահիմ փաշան ասել էր ֆրանսերեն: Չեկեին, հելլենասերների մեծ մասը և ես ու Մոսցեպանովը թարգմանության կարիք չունեինք:

Անասելի թեթևություն էի զգում: Չնչին իսկ կասկած չունեի, որ Իբրահիմ փաշայի պայմանները կընդունվեն: Միայն մի հարց էր անհանգստացնում՝ ինձ ո՞ւմ շարքին կդասեն՝ հույների՞, թե՞ հելլենասերների: Հույս ունեի, որ հագուստս ու ֆրանսերենս թույլ կտան միանալ վերջիններին:

«Ապրելու ենք»,- շշնջացի Մոսցեպանովին:

Նա գլխով արեց ու քաշեց ձգանը:

Քսան քայլից արձակված գնդակը հետ շպրտեց Իբրահիմ փաշային: Կողքին կանգնած սպաները բարձրացրին նրան:

Երկու կողմից թնդացին կրակոցները: Մեզ վրա կախված ժայռից վերադարձող արձագանքը խլացրեց գնդակների սուլոցը: Տեսա Ֆաբիեի շփոթված դեմքը, հետո սուլիացիները ծածկեցին նրան: Նրանցից երկուսն ընկան իմ կողքին: Մոսցեպանովն ինչ-որ տեղ չքացավ, իսկ ես քիչ էր մնում ոտքս դնեի մեռած Չեկեիի մարմնին, միայն վերջին պահին կարողացա ցատկել վրայով:

Ցիկուրիսը զոհվեց աչքիս առաջ: Գնդակը ծակել էր ճակատը, բայց արյունը դեռ չէր հոսել դեմքին, երբ ինձ քշեց-տարավ հետևիցս հորդող զինվորների բազմությունը: Կայազորը պարիսպների վրայից մեզ պաշտպանեց հրաձգությամբ:

Եգիպտական զորաշարքն անսպասելի թեթևությամբ քանդվեց՝ մեզ համար ճանապարհ բացելով դեպի դարպասները: Դրանք բաց էին: Մի քանի րոպե անց մտանք Ակրոպոլիս: Ես տեսա դիմացս բարձրացող Պարթենոնը, ու ողջ անցած կյանքս ինձ այդ պահին նախադուռ թվաց:

Ակրոպոլիս

Շառլ-Անտուան Ֆաբիե: Ապստամբի օրագիրը

Դեկտեմբեր, 1826 թ.

Մեր հաջողությունը փոքր արյունով հատուցվեց: Հիմնականում զոհվել են առաջին շարքում կանգնածները՝ Չեկեին, չորս հելլենասերներ, երեք սուլիացի, որոնք գրոհի սկզբում պաշտպանում էին ինձ, Ցիկուրիսն ու նրա երկու զինվորները: Մոսցեպանովը թեթև վիրավորվեց ատրճանակի գնդակով:

Հաջորդ օրը թուրքական հին զորանոցում, որ մեզ էր տրամադրել Խորմովիտիսը, հավաքեցի սպաներին և առավել մտերիմ հելլենասերներին: Նախօրեին բոլորս մոտիկից տեսել էինք ամեն ինչ, ու որպեսզի ոչ մեկը սխալ պատկերացում չկազմի տեղի ունեցածի մասին, բացատրեցի, թե ինչ է կատարվել իրականում:

Նախ և առաջ հիշեցրի, որ եգիպտացիները ճանապարհը փակել էին այնտեղ, որտեղից սկսում է բարձրանալ: Մենք ներքևում էինք հայտնվել, ուստի նրանց ավելի վատ էինք տեսնում, քան իրենք՝ մեզ: Ներքևից, իմ կարճ հասակով, չէի կարող ճիշտ գնահատել հակառակորդի քանակը. հետևի շարքերից ավելի վատ էր երևում, բայց կողքիս կանգնած Չեկեին, որն ինձնից մի գլուխ բարձր էր, հասկացավ, որ եգիպտական զորաշարքերը, թվացյալ խտությամբ հանդերձ, մեծ խորություն չունեն: Հիմա մենք գիտենք. Իբրահիմ փաշան, շտապելով կտրել մեր ճանապարհը դեպի Ակրոպոլիս, իր երեք գումարտակից հասցրել էր հավաքել երեք հարյուր մարտիկից ոչ ավելի: Մտածում էի, թե վեց անգամ ավելի մարդ ունի, քան մենք, այն դեպքում, երբ թվական գերակշռությունը մերն էր: Մնացած եր-

կու հազար եգիպտացիները մոտեցան, երբ ամրոցի դարպասները փակվել էին մեր հետևից, իսկ Քյուհին փաշայի հեծելազորը ուշացավ ևս կես ժամով:

Զորանոցում ոչ սեղան կար, ոչ աթոռ: Ինչ կարելի էր վառել, վաղուց վառվել էր օջախներում ու վառարաններում: Ես կանգնած էի խոսում: Մարդկանց փոքր մասը նախընտրել էր այդ դիրքը, մյուսները նստել էին հողե հատակին կամ պպզել պատի տակ:

«Եվ այսպես,- շարունակեցի ես,- Չեկեին թաքուն շշնջաց ականջիս, որ արաբներն ավելի քիչ են, քան թվում է: Ես ձևացրի, թե համաձայն եմ անձնատուր լինելու, ու շրջվեցի զինվորների կողմը՝ իբր նրանց կարծիքը հարցնելու, իսկ իրականում՝ որ նրանց տանեմ մարտի: Ձախից Ցիկուրիսն էր, նրա հետևում՝ Մոսցեպանովը: Առաջինին որպես վատ հրածիգ գիտեի, երկրորդին՝ շատ լավ, ուստի շշուկով Ցիկուրիսին կարգադրեցի Մոսցեպանովին փոխանցել կարգադրությունս՝ հենց գրոհի հրաման տամ, կրակել Իբրահիմ փաշայի վրա, բայց Մոսցեպանովի նյարդերը չդիմացան: Ավելի շուտ կրակեց»:

Իմ գործողությունները հավանության արժանացան առանց քննադատության, բայց և առանց խանդավառության: Նախօրեի ոգևորությունն անցել էր, մարդկանց տրամադրությունը լավ չէր: Բոլորն արդեն հասկացել էին, թե ինչ պայմաններում են ծմեռելու: Ճանապարհի պաշարից մնացած վերջին գինով հիշեցինք զոհվածներին ու ցրվեցինք:

Սութն ընկնելուն պես Աթենքից ամրոց թափանցեց մեր լրտեսը և Խերմովիտիսին, նա էլ՝ ինձ, հայտնեց, որ Իբրահիմ փաշան սպանված չէ, ուսից է վիրավորվել: Նախօրեին գժտվել է Քյուհին փաշայի հետ՝ մեղադրելով, որ նրա պատճառով մեզ հաջողվեց ճեղքել-մտնել Ակրոպոլիս, իսկ այսօր առավոտյան իր գումարտակը հետ է տարել Տրիպոլիս:

Եթե այդ ամենի համար ուժ է ունեցել, ուրեմն վերքը վտանգավոր չէ:

Տա՛ Աստված:

Լեոնիդ ՅՈՒԶԵՖՈՎԻՉ

Գրիգորի Մոսցեպանովը Նատալյա Բաժինային

Դեկտեմբեր, 1826 թ.

Թղթի մի փոքր կտոր է մնացել: Պետք է մանր գրել, որ շատ տեղավորվի, բայց ես հուլունքաշարի վարժ չեմ: Կարճ կգրեմ: Նստած ենք պաշարման մեջ, սարի գլխի այն ամրոցում, որ քո տան իմ փորագրանկարում է: Ստորոտին, որտեղ մի կին քշում է այծին, մարտ եղավ թուրքերի հետ, ես գնդակահարեցի թուրքական գեներալին, ու նրա զինվորները փախան, ու մենք մտանք Ակրոպոլիս: Գեներալի համիարզը ատրճանակից կրակեց ինձ վրա, գնդակը քերծեց կողս: Մի քանի օր պառկեցի և արդեն ոտի վրա եմ, երեկ ժամապահ էի կանգնել, իսկ ուրիշ գնալու տեղ չունենք: Ծուրջը աղբ է, կեղտաջուր, արտաքնոցի գարշահոտ: Պարթենոնը չեչոտ է, սարսափելի, մարմարե կույսերն Էրեքթեոնում կախել են քթերը, ով ունի, իհարկե: Կարծես հենց իմ տեսիլքի մեջ եմ ընկել. շուրջս, ինչպես այնտեղ, անթիվ-անհամար թշնամիներ են, մենք նրանց մեջ՝ կղզի ծովում, ժայռուտ լեռը նույնքան բարձր է, ու պարիսպը՝ ամուր, բայց եղբայրների պես չենք ապրում: Հույները գզվռտվում են իրար հետ, քիչ է մնում կռվի հասնի, ու մեր գալով էլ այնքան ուրախ չեն: Իրենք ուտելու բան չունեն, իսկ այստեղ՝ երեք հարյուր ուտող բերան է հայտնվել: Հիմա Ծնունդյան պահք է, մսի երես համարյա չենք տեսնում, չնայած պատերազմի ժամանակ ուտել թույլատրվում է, ներառյալ՝ միսը: Պետերն իրենց ու յուրայինների համար աղ դրած ունեն, բայց մենք այն պասից դուրս էլ չենք տեսնում: Օրը մի գդալ յուղ, լոբի ու մի բուռ բրինձ են տալիս վռիկի համար ու պահուց բլիթ-լագանա: Ջրի հարցն ընդհանրապես վատ է. ոչ լվացքի, ոչ լվացվելու: Նույնիսկ խմել ուզածիդ չափ չես կարող: Մյուսները քաղցից քնելով են փրկվում, իսկ իմ քունը չի գալիս: Պառկում եմ, փաթաթվում քրջերով, մթան մեջ, ինչպես միշտ, չռում երկու ձեռքերիս մատները, շարժում եմ, կենդանացնող տաք եմ փչում վրաները, բայց շունչ տալ չեմ կարողանում: Քաղաքս, ուր քնելուց առաջ մտնում եմ, ամայի է, խավար: Իմ ողջ կյանքում այնտեղ հասնելուն պես քնել եմ, իսկ հիմա գիշերվա կեսը անքուն տառապում եմ: Մտքերը չեն հոսում, ցատկոտում են լվերի նման, գլուխս ուռչում է դրանցից: Իսկ առաջ

ուզածդ տեղից, թեկուզ բանտից, բարձրանում էի այդ սարն ու երջանիկ էի: Մի բան է լավ. Կոստանդիսն ասում է՝ հույները, ջհուդների պես, իրենց փոստն ունեն. հույն նավաստիները նամակները հասցնում են բոլոր նավահանգիստները, իսկ այնտեղից ուրիշ հույներ ցամաքով, իրար փոխանցելով՝ հասցնում են անհրաժեշտ մարդուն: Ավելի քան մեկ տարում քեզ տասնմեկ նամակ եմ գրել, սա տասներկուերորդն է: Կոստանդիսը խոստացել է, որ երբ պաշարումից դուրս գանք, բոլորը ոչ պետական փոստով կհասցնեն քեզ, ոչ ոք չի բռնի: Իսկ դրանց հետևից մեկ էլ տեսար ես էլ եկա: Մեզ մոտ այստեղ խոսում են, թե տեր թագավոր Նիկոլայ Պավլովիչն ուզում է հույների համար կռվել թուրքերի դեմ: Աղաչում եմ Աստծուն, որ այդպես լինի: Այդ դեպքում հույները նրան կպատմեն իմ մասին, և նա միապետական ողորմածությամբ կների ինքնակամ մեկնելս օտար պետություն:

Կոնստանտին Կոստանդիս: Թափառիկ բժշկի նոթերը

Հունվար, 1827 թ.

Մոսցեպանովին վիրավորել էր Իբրահիմ փաշայի մոտ ծառայող ֆրանսիացիներից, թե ավստրիացիներից մեկը: Գնդակը դիպել էր ձախ կողին ու հարվածային ոչ մեծ ուժի պատճառով խրվել կողերի արանքը՝ բարեբախտաբար չվնասելով ո՛չ սիրտը, ո՛չ թոքերը: Ունելիով հանեցի, լվացի, ախտահանեցի ու կապեցի վերքը: Մոսցեպանովը մի քանի օր պառկեց զորանոցում, հետո սկսեց քայլել՝ ինձ վստահեցնելով, որ միանգամայն առողջ է:

Սկզբում զինվորները սխրանքի պատվին ամենալավ պատառներն էին թողնում նրան ու համբերատար լսում բոլոր անհեթեթությունները, որ լուրջ տեսքով բարբառում էր: Ականջս չարչարող հունարենով, վշտալի դիմախաղեր ու պաթետիկ ժեստեր հավելելով՝ նա տարատեսակ հանդիսատեսի առաջ կատարում էր միևնույն համարը՝ պատմում էր, թե ինչպես է տեսել իր կրծքին պահած ատրճանակը, ու սիրտը վախից այնպես է սեղմվել, որ գնդակը կողքով է անցել, երբ ուղիղ սրտին պիտի դիպչեր, եթե մի վայրկյան առաջ նրա չափսերը չփոքրանային:

«Խիզախ ռազմիկին վախն էլ է օգնում»,- այսպիսի արտահայտությամբ էր ավարտում իր պատմությունը:

Առանց այդ ամփոփման պարզապես զվարճապատում կմնար, իսկ այսպես վերածվում էր փիլիսոփայական ասքի՝ պատմողի կյանքից:

Նրա ելույթների մյուս թեման հունական կրակն էր. թե՝ բացել է այդ լեգենդար զենքի գաղտնիքը և մտադիր է հայտնել հույներին: Ջինվորները՝ հասարակ գեղջուկ տղաներ, հատկապես ապշում էին, որ այդ կրակն անհնար է հանգցնել ջրով:

Մի անգամ, երկուսով էինք, հարցրի, թե ինչու անձամբ կամ Ֆաբիեի միջոցով այդ նախագիծը չի ներկայացրել ռազմական մինիստրություն:

«Այստեղ ինչի՞ց պատրաստես,- բացատրեց Մոսցեպանովը:- Նույնիսկ նավթա չկա, չխոսելով արդեն մնացածի մասին: Թե չէ կարձակեինք սիֆոններից ու էս եգիպտական մարախը կվառեինք գրողի ծոցը»:

Այդ օրը մինչև երեկո անձրև էր գալիս, շորերն ու կոշիկները խոնավացել էին: Չորացնելն անհնար էր: Փայտը վառել էինք, կերակուրը սառն էինք ուտում: Մոսցեպանովը, որն առանց այն էլ տառապում էր առանց թեյի, այն նույնիսկ որևէ մոլախոտով թրմած եռջրով չէր կարող փոխարինել:

Ի լրումն այդ բոլոր դժբախտությունների՝ թութունն էլ պրծավ, որն այստեղ ոչ թե ոսկու քաշ ունի, այլ շատ ավելի: Նորն առնելու փող չկար, փոխանակելիք նույնպես, իսկ ձրի արդեն ոչինչ չէին տալիս: Նրա սխրանքը մոռացվել էր, բոլորն իրենց հոգսին էին:

Տրտմագին ծծելով դատարկ ծխամորճը՝ Մոսցեպանովն ինձ հասկանալ տվեց, որ զղջում է իր անհարկի խիզախության համար. ախր, բոլորը գիտեն, որ Իբրահիմ փաշան իր խոսքի տերն է, և այստեղ ռմբագնդերի տակ, ցրտի մեջ, առանց թութունի ու թեյի նստելու փոխարեն ավելի լավ կլիներ հանձնվեինք ու մեկնեինք Լիվոռնո: Այնտեղից Ֆլորենցիա ընդամենը մի հարյուր վերստ է: Լիվոռնոյից կանցներ Ֆլորենցիա, որն էլ հենց իրեն պետք է:

Հարցին, թե ինչ գործեր ունի Ֆլորենցիայում, պատասխանեց, որ կոմս Դեմիդովն այնտեղ դեսպանորդ է Տոսկանայի դքսի մոտ. Մոսցեպանովն ուզում էր զեկուցել նրա ուրալյան տիրույթներում կատարվող այլան-

դակությունների մասին: Սկսեց պատմել, բայց ինչ-որ կապույտ շիլայից ու նրանից հետո, թե գործարանային ուսումնարանի սաներն ինչպես էին գրածը գումէլաստիկի փոխարեն բուկու պատառով ջնջում, դադարեցի լսել:

Նրա վերքն արդեն համարյա լավացել էր, երբ հանկարծ, Ծնունդյան տոներից առաջ, թարախակալեց, հետո տաքությունը բարձրացավ: Մյուս վիրավորների հետ նրա խնամքն էլ հանձնեցի պաշարման ժամանակ այրիացած իմ օգնական կանանց: Թուրքերը նրանց ազատել էին ամուսիններին խնամելու հոգսից, և նրանք բարի դիցանուշներ էին դարձել ուրիշների համար:

Ակրոպոլիսում ուրիշ բժիշկ չկար, ու ստիպված ստանձնել էի բոլոր վիրավորների ու հիվանդների խնամքը: Լազարեթը նախկին օսմանյան գրասենյակում էր, որից մերկ պատերն էին մնացել, ու հարմարեցված չէր հոսպիտալային կարիքների համար: Ձմռան ամիսներին այդպիսի բարձունքում համարյա չդադարող քամուց պաշտպանվելու և հրետակոծության ժամանակ անվտանգ լինելու համար պատուհանները փակել ենք սյուների մարմարե սալերի բեկորներով. ցերեկային լույսի համար պիտի հանես այդ շարվածքի տարրերից մեկը, ստույգ որոշակի, հակառակ դեպքում ամբողջ շարվածքը կփլվի: Ճարպի մեջ լողացող թոկի պատրույգով կավե ճրագը շքեղություն է: Ցերեկը, հատկապես արևոտ եղանակին, օդը ներսում թեթևակի տաքանում է, բայց գիշերները սառն է, ինչպես նկուղում: Վառելիքը ստիպված ենք խնայել, վառարանը վառում ենք օրը մեկ, երեկոները, և՝ տարբեր ծագման ու ծավալի երեք-չորս վառելափայտի կտորով: Դրանք միասին այնքան տաքություն են տալիս, որքան կեչու մեկ ճղոնը: Ո՛չ ծածկոց, ո՛չ ներքնակ, վիրավորները պառկում են հողե հատակին՝ տակները փռելով ինչ կարողացել են ճարել ընկերները կամ կանայք, ու ծածկվում փալաս-փուլուսով, որ Ակրոպոլիսի պաշտպանները մետաքսի ու թավշի գնով ծախում են իրար: Ոչխարենին դրամական արժեքով ընդհանրապես անգին է:

Վերքը թուլացրել է Մոսցեպանովին: Թարախակալման պատճառը կեղտն էր, հետո մշտական ցրտից թոքերի բորբոքում սկսվեց: Ինչառու-

թյունից առաջ էլ լսում էի, որ թոքերը թույլ են: Դեղորայքի բացակայության ու վատ սննդի պատճառով հույսը միայն լավ խնամքն էր, և արդարացվեց. աթենուհի Քրիսան՝ դեռ սեպտեմբերին, առաջին գրոհի ժամանակ զոհված ծովասպունգի վաճառականի այրին, Մոսցեպանովին ավելի շատ ուշադրություն է հատկացնում, քան մյուսներին: Մոսցեպանովը նրա համար հերոս է, որի մասին Ատտիկայում ու Մորեայում երգեր են հյուսում: Քրիսայի վերաբերմունքը չի փոխվում նույնիսկ նրանից, որ այդ քաջը բացարձակ չի դիմանում ցավին: Վիրակապելիս բռնում է ձեռքը, ինչ-որ քնքուշ բառեր շշնջում, իսկ նա տնքում է, գոռում կամ հայհոյում այլանդակ բառերով, որ Ռուսաստանում նույնիսկ կառապաններից ու զինվորներից չեմ լսել: Քրիսան այդ ամենը կրում է հրեշտակային հեզությամբ:

Մի անգամ լսեցի՝ Մոսցեպանովն ինչպես է նրան շարադրում իր կարծիքը Իբրահիմ փաշայի մասին: Լրիվ հակադրությունն էր նրա, որ դրանից առաջ ինձ էր հայտնել:

«Նրանք,- ասում էր Մոսցեպանովը՝ նկատի ունենալով մահմեդականներին,- Ղուրանի վրա երդվելիս վերջում ասում են ինշալլահ: Այսինքն, եթե Ալլահին հաճո է: Իսկ եթե հաճո չլինի, այսինքն՝ շահավետ չլինի իրենց, երդումը կատարելը պարտադիր չի: Իսկ ազնիվ խոսքը նրանց համար՝ թքած, թքած ու սրբած: Փառք Աստծո, քաջությունս հերիքեց այդ ճիվաղի վրա կրակելու: Աղոթեցի ու կրակեցի, թե չէ Քյուհին փաշան բոլորիս, ինչպես Դանիլիսին ու Միտրոս Լեկասին, որ ձեզ խրատ լինի, ցցի հանած կշարեին Ակրոպոլիսի շուրջը: Պարսպի վրայից կնայեիր, թե ոնց եմ շունչս փչում ցցին»:

Քրիսան ախ էր անում, բայց շարունակում էր աղ դրած մսի արգանակ կերցնել նրան: Ծղոտ է ճարել տակը փռելու համար, ծածկում է իր կիսափեշերով ու կոֆտաներով: Մոսցեպանովը պառկում է դրանց տակ, ինչպես հիվանդ երեխան՝ մոր շորերի կույտի:

Այսօր անցնում էի նրա մոտով. բռնեց փողքս, ստիպեց նստեմ ու հազի միջից դժվարությամբ ասաց. «Ցիկուրիսին սպանեցին, իսկ ես ռոճիկս պահ էի տվել նրան: Բոլոր փողերս մոտն էին: Ֆաբիեին ասեք, թող վնասս հատուցի գնդային գանձարկղից»: Դա նշանակում էր, որ իզուր էի հույս

դնում Քրիսայի վրա: Այդպիսի պահանջները սովորական են մեռնողների համար: Նրանց ուղեղը բորբոքված է լինում, տրամաբանական կապերը խախտվում են, զգում են, որ վերջը մոտ է, բայց չեն գիտակցում և իրենց վիճակը բացատրում են ինչ-որ ֆանտաստիկ պատճառներով, որոնց վերանալու դեպքում իբր ամեն ինչ կարգի կընկնի:

Սուտ խոստացա, որ կկատարեմ խնդրանքը, և ուզում էի հեռանալ, բայց Մոսցեպանովը թույլ չտվեց: Թույլ ձեռքն ու կառչուն մատները նույնպես բնութագրական են գերեզմանի եզրին կանգնածների համար:

«Դուք՝ հույնե՞րդ էլ,- հարցրեց,- երբ մարմնի խալերը շատ են, համարում եք, որ դա երջանկություն է բերում»:

Չգիտեի, բայց ասացի՝ այո՛: Հասկանալի էր, որ դրա մեջ ուզում էր ոչ թե ազգային նախապաշարմունք, այլ մարդկային բնության՝ բոլոր ժողովուրդների համար ընդհանուր, հետևաբար ճիշտ դիտարկում տեսնել:

«Դուք բաղնիք չունեք,- շարունակեց նա,- կարգին չես լողանա: Նավպլիոնում երկու ամիս ինձ տկլոր չէի տեսել: Ցուրտ էր, շորերով էի քնում, իսկ երբ առաջին անգամ վիրակապում էիք, տեսա. Աստվա՛ծ իմ: Ամբողջ կուրծքս ոնց որ հնդկացորենով ծածկված լինի: Խալերը փոքրիկ են, իրար կպած, իսկ ողջ կյանքում ոչ մի հատիկ չեմ ունեցել: Ի՞նչ է ստացվում: Դժբախտ եմ եղել, երջանի՞կ կդառնամ»:

Այդ անսպասելի հայտնված խալերը, որ նրա վրա չէի նկատել, կորած փողերի հետ նույն շարքում էին. երկուսին էլ ծնունդ էր տվել մարող գիտակցությունը:

«Մեռնել առանց տանջվելու. ահա իմ երջանկությունը»,- այնքան հասարակ ասաց Մոսցեպանովը, որ վատ զգացի:

Սխիթարելով՝ ձեռքս դրեցի ուսին, ի պատասխան ամեն ինչի սպասելով, բայց ոչ նրան, ինչ արեց: Ինչպես մայրս մահվան նախորդ շաբաթներին, երբ արդեն վեր չէր կենում անկողնուց, և բոլոր բառերը վաղուց ասված էին, և ես առանց բառերի սերս արտահայտելու համար այսպես ձեռքս դնում էի ուսին,- Մոսցեպանովը երեխայի պես թեքեց գլուխն ու այտը քսեց ձեռքիս:

Ակամա հետ քաշեցի:

Նրա հանդեպ կարեկցանքից ուժեղ էր ամոթը, որ այդ անբառ տրտունջին չեմ կարող համազոր զգացումով պատասխանել:

Մայոր Բորիս Չիխաչով: Հիշատակարան

Նոյեմբեր, 1827 թ.

Երեկ գումարտակ չգնացի. ուժեղ մրսել ու պառկած էի տանը: Ճաշին Ֆեդենկան վերադարձավ Լեռնային ուսումնարանից և մոր կարգադրությամբ, որն այնպիսի ահեղ շշուկով արվեց, որ դռան մյուս կողմից լսեցի, մտավ ինձ մոտ՝ հարցնելու, թե ինչպես եմ:

Սովորաբար ինձ հետ լարված է լինում, իսկ հիմա ազնվամորիով թեյ խմեց, փափկեց ու ասում է. «Պատկերացրեք՝ մի քուղ ունեք: Չասենք, թե գրպանում, բայց հենց դրա մասին մտածում եք, ինչ-որ տեղից կախվում է ձեռքի տակ: Օրինակ, մրսել եք, ու եթե քաշեք,- ա՛յ քեզ բան,- մի շաբաթից ո՛չ կոկորդն է ցավում, ո՛չ հազում եք: Կամ չեք ուզում ծառայության գնալ, քաշում եք քուղը, և ահա երեկո է, ընթրում եք մայրիկի հետ, իսկ գումարտակում բոլոր գործերն արված են: Կուզեի՞ք այդպիսի քուղ ունենալ»:

Միայն մի մարդ էր կարող այդպիսի հանելուկ տալ նրան:

«Քեզ ո՞վ է տվել այդ հարցը,- հարցրի:- Գրիգորի Մաքսիմովի՞չը»:

Ֆեդենկան վախեցավ: Մեծ տղա է, հասկանում է, որ իմ ներկայությամբ պետք չի հիշել Սոսցեպանովին, մայրը դրա համար գլուխը չի շոյի: Ստիպված հաստատեց իմ ենթադրությունը:

«Ո՛չ,- վճռեցի ես,- պետք չի ինձ քո քուղը: Մեկ-երկու քաշեցիր, կարող է համի ընկնես: Մեկ էլ տեսար՝ կյանքդ անցել է, արդեն ծերունի ես, պառկած դագաղում: Էստեղ՝ քաշես, չքաշես, մահը չես շրջանցի»:

Ֆեդենկան սրտնեղեց իմ խորաթափանցությունից: Հազարից մեկ ուզում էր դաս տալ, բայց չստացվեց:

«Այդպես էլ կա,- գլխով արեց նա:- Գրիգորի Մաքսիմովիչն ասում էր. էդ քուղ չի, սատանան է պոչը կախել»:

Ես ծիծաղեցի ու մոռացա, բայց Սոսցեպանովը, ինչպես ասում են, անունը տուր՝ սուփրան գցիր: Երեկոյան մի անծանոթ տղա եկավ, ներկա-

յացավ որպես Իվան Դիմիտրակիի որդի՝ Վերխոտուրիեից, առանց փոստային կնիքների ու հասցեատիրոջ անվան նամակ էր բերել, և ասաց, որ հայրը պատվիրել է հանձնել տիկին Չիխաչովային:

Գիտեմ այդ Դիմիտրակիին: Պիստակ, ընկույզ, դափնու տերև, չիր ու այդ կարգի բաներ է ծախում: Ի՞նչ գործ կարող է ունենալ Նատալյայի հետ:

Ձեռքս պարզեցի, որ վերցնեմ ծրարը, բայց տղան չտվեց, իսկ երբ հարցրի՝ ի՞նչ է ծրարի մեջ, պատասխանեց, որ չգիտի: Ասաց՝ հորն են փոխանցել, պատվիրելով հասցնել Նատալյա Բաժինային՝ Նիժնիտագիլյան գործարաններ, բայց այնտեղ մորից իմացել են, որ նա իմ կինն է և ինձ հետ այստեղ է ապրում:

Փորձերը՝ պարզելու, թե նամակն ումից է, նույնպես հաջողություն չունեցան. Դիմիտրակի-կրտսերը նույնն էր պնդում. բերել են ու՝ վերջ: Գնաց միայն այն բանից հետո, երբ խորքի սենյակներից կանչեցի Նատալյային, և նա անձանոթից անձամբ վերցրեց նամակը, որը չգիտես ինչպես Վերխոտուրիեում ընկել էր նրա հոր մոտ: Ուզում էի հիսուն կոպեկ տալ նեղության համար, բայց չվերցրեց:

Նատալյան իր սովորական անշտապությամբ ատամներով բռնեց ծրարի անկյունը, որ եզրով պատռի, բայց չթողեցի: Անցանք խորքի սենյակները, վերցրի գրչահատ դանակն ու կոկիկ կտրեցի եզրը: Ներսում ավելի փոքր ծրար էր և Նատալյային հասցեագրված նամակ՝ ոմն Կոնստանտին Կոստանդիսից: Առաջինը ես կարդացի:

Հայտնվում էր, որ նա՝ Կոստանդիսն ու Գրիգորի Մոսցեպանովը յոթ ամիս թուրքերի կողմից պաշարված հունական Ակրոպոլիսում են եղել: Կայազորը հետ է մղել չորս գրոհ, բայց հուլիսին, երբ պարենը սպառվել է, անձնատուր են եղել պատվավոր պայմաններով. հույներն ու հելլենասերները դարպասներից դուրս են եկել զենքով, բաց դրոշներով և անգլիական զինվորների պահպանության տակ հասել Պիրոս, այնտեղից բրիտանական ֆրեգատը նրանց հասցրել է Նավպլիոն: Այնտեղ Մոսցեպանովն ամուսնացել է հույն կնոջ հետ, որը վիրավորվելուց հետո խնամել էր նրան և իր հոգատարությամբ փրկել մահից: Հարսանիքի հոգսերով զբաղված՝ նա Կոստանդիսին, որը կապ ուներ հունական փոստի հետ,- այդպես են

կոչում առևտրական կարիքների համար օգտագործվող ազգակցական ու հայրենակցական կապերի ցանցը ողջ աշխարհով մեկ ցրված հույների միջև,- խնդրել էր իր նամակներն ուղարկել տիկին Բաժինային՝ Ուրալ: Կոստանդիսն իր կողմից ուշադրություն էր հրավիրում այն բանի վրա, որ Մոսցեպանովը նամակներ է գրել մեկուկես տարի, ուստի դրանք համարակալված են՝ 1-ից 12, ինչը ցույց է տալիս, թե ինչ հաջորդականությամբ պիտի կարդացվեն:

Նույնիսկ չեմ փորձի թղթի վրա արտահայտել ինձ այդ պահին պատած զգացումները: Ցսպելով դրանք՝ նամակը փոխանցեցի Նատալյային ու սպասելով, որ կարդա, հարցրի. «Գիտե՞ր, որ նա այնտեղ է»:

«Չէ՛: Էն խաչը»: Նա արագ, իր ոճով խաչակնքեց սրբապատկերի կողմը:

Ուզում էի դուրս գալ, որ կարողանա մենակ, առանց իմ ներկայությունից քաշվելու կարդալ այդ նամակները, բայց խնդրեց, որ միասին կարդանք: Նստեցինք կողք կողքի, գլուխ գլխի ու կարդացինք բոլոր տասներկուսը: Առաջին իսկ նամակում գտնվեցին ինձ անլուծելի թվացող երեք հարցի պատասխանները. Մոսցեպանովն ինչպես է անհետացել Պերմի հաուպտվախտից, ինչպես է նրա մատանին ընկել Կոսոլապովի մոտ և ինչ էին նշանակում Լեռնային ծմեռոցում գտած կանոնագրքի ու Ավետարանի լուսանցքներում մատիտով արված նշումները:

Ես Նատալյայից արագ էի կարդում և ամեն անգամ սպասում, թե երբ հնարավոր կլինի շրջել էջը կամ անցնել հաջորդին: Այդ ընթացքում աչքս ակամա առնում էր Աթենքի և Ակրոպոլիսի տեսարանով փորագրանկարին: Ակնհայտորեն ինչ-որ գրքից պոկած նկարը Մոսցեպանովինն էր. Նատալյան չէր ուզում հետը վերցնել, բայց ես պնդեցի ու կախեցի երևացող տեղում՝ ցույց տալով, որ հիմքեր չունեմ նախկին կենակցի հանդեպ կասկածելու կնոջս: Պատկերների լղոզված ուրվագիծն ու ընդհանուր անճաշակությունը վկայում էին, որ ոչ միայն նկարիչն ինքը երբեք չի եղել Աթենքում, այլև՝ ում աշխատանքը պատճենել է, երկու-երեք նույնպիսի վատ պատճենով հեռու է բնօրինակի հեղինակից:

Պարթենոնի գլխին սևին էր տեսել երկնքի կեսը պատած ամպը: Նրա

գծագրության մեջ կարելի էր վիշապ տեսնել, եթե որոշեիր, որ հենց այդ ես ուզում տեսնել ու երևակայությամբ լրացնեիր չբավարարող կամ թերաճ մարմնամասերը: Գլխի շրջանում, այնտեղ, ուր ենթադրվում էր հրեշի մռութը, բաց երախից արձակվող բոցի պես, դուրս էին պրծնում ամպերի արանքից թափանցող արևի ճառագայթները: Խեղճ բանսարկուն, ցանկանալով տիրել այդ վիշապային կրակին, հենց ինքն էլ վառվել էր դրա մեջ: Թռչող օձը նրան չէր անցկացրել մահվան միջով: Դեռ մինչև Նատալյայի հետ կսկսեինք կարդալ, հասկացա, որ դա ուղերձ է այն աշխարհից:

Ամեն նամակի վերջում, բացի վերջինից, ծռակող շրջանակ էր՝ «Պաչիկ» գրությամբ: Դրա նշանակությունը բացատրվում էր 1-ում, բայց առանց այդ էլ հասկանալի էր:

«Դե ինչ: Համբուրիր, ես կշրջվեմ»,- առաջարկեցի ես:

«Հիմա նա արդեն համբուրող ունի»,- պատասխանեց Նատալյան, մի քիչ ավելի անտարբեր, քան եթե դա իսկապես չհուզեր նրան:

Եվ այդ ժամանակ ես վերջապես խիզախեցի ու նրան հայտնեցի այն, ինչի մասին մտածում էի մի ժամ առաջ, բայց չէի համարձակվում ասել:

«Իմ գումարտակում մի հույն կար Տագանռոգից,- ասացի:- Հունական երգեր էր երգում ու պատմում, թե ինչի մասին են: Ահա դրանցից մեկը... Վիրավոր կլեֆտը հայրենի վայրերից հեռու մեռնելիս ընկերոջը խնդրում է կնոջը չհայտնել իր մահվան մասին: Գրիր, խնդրում է, որ ամուսնացել եմ ուրիշի հետ ու երջանիկ եմ օտարության մեջ: Ապա ընկերոջը, թե հենց իրեն ասում է. ինձ կին կդառնա հողը, աներ՝ շիրմաքարը, աներորդիներ՝ նոճիները իմ գերեզմանին»:

Նատալյան փչեց-հանգցրեց մոմը, վեր կացավ ու մոտեցավ պահարանին՝ ճանապարհին ևս երկու մոմ հանգցնելով, որ ապակու մեջ տեսնի ոչ միայն իր արտացոլումը, այլև գիշերն ու երկինքը: Սառնամանիքին երկինքը պարզվել էր: Լուսնալույսով օծված մերկ թփերի ստվերներն ընկել էին աստղերն անդրադարձնող ձյան վրա, և ինչպես լեռան գագաթին, գետի ափին կամ սիրելի խաղաղ օջախի մոտ, հիշողության ու թախծի զգացողություն արթնացավ, սահմանագծին երկու տարերքների, որոնցից մեկն իր մեջ է առնում մյուսի ծնածը:

Մի քիչ սպասելով՝ հետևեցի Նատալյային ու կես քայլի վրա կանգնեցի նրա թիկունքում: Չէր կարող չլսել մոտենալս, բայց շարունակեց մնալ նույն դիրքում: Գրկեցի նրան: Եվ նույն պահին, ասես հենց դրան էր սպասում, ողջ մարմնով շրջվեց իմ կողմը, բացեց շապիկի վրայից հագած խալաթիս օձիքը, գրկեց, դեմքը սեղմեց կրծքիս: Շապիկի միջով մաշկիս զգացի նրա արցունքների տաք խոնավությունը: Մի քիչ լաց եղավ կրծքիս, ու գնացինք ընթրելու:

Նատալյա Չիխաչովայի խոսակցությունը Գրիգորի Մոսցեպանովի հետ

Նոյեմբեր, 1827 թ.

Չգիտեմ որ ամսվա որ օրն եք մահացել, բայց այդ օրվանից քառասուն օրը վաղուց անցել է: Հոգու հիշատակության համար փող տվեցի Պայծառակերպության եկեղեցում, մոմ վառեցի և անհրաժեշտ աղոթքներն արեցի. որ ճիշտ լինի, ամեն ինչ եկեղեցում տված թղթով եմ անում, բայց եթե մի բան էլ ժամանակին չի արվել, էլ չես ուղղի: Սիրտս ինձ չէր ասել ձեր մահվան մասին, ուրեմն Տերը իմ մեղքերի և ձեզ դավաճանելու պատճառով խոսք չէր դրել այնտեղ:

Մինչ ձեր հոգին չարչարանաց ճանապարհ էր անցնում, չկար մեկը, որ նրա համար խնդրեր Աստծուն, և դրանից հետո էլ ոչ ոք չհոգաց նրա համար: Ես նրա համար խաչումաչ ծղոտիկներով մի գավաթ ջուր չդրի սեղանին, որ հոգին լվացվի չարչարանքից հետո:

Տանը սրբապատկերները չծածկեցի սրբիչով ու քառասուներորդ օրը չհանեցի, գավաթի կողքին սեղանին չդրի: Ոչինչ չուներ ձեր հոգին՝ սրբվելու համար, ոչինչ՝ փաթաթվելու:

Հետո էլ չվերցրի այդ սրբիչը, չբարձրացա Աղվեսասար, չկանգնեցի լճակի ափին, թափ չտվի սրբիչը, չարձակեցի հոգին քամուն և լույսին և ողջ երկնային արձակությանն ընդառաջ:

Կամ գուցե նրան պետք չէ՞ր ոչ լվացվել, ոչ էլ սրբվել: Սաքուր է նորածնի հոգու պես:

Կոնստանտին Կոստանդիսը Իգնատի Ելովսկուն

Ապրիլ, 1829 թ.

Երբ թագավոր կայսեր ծառայության մեջ էի, ինձ հետ զրույցներում ուզածին չափ ծաղրում էիք դժբախտ հույներին և ազատության մեր ձգտումը, և ես այդ ժամանակ հնարավորություն չունեի արժանապատվորեն պատասխանելու: Մասնավորապես, հավատացնում էիք, որ Հունաստանի կործանումը գալու է Եգիպտոսից, հիշո՞ւմ եք: Կուզեի իմանալ՝ ձեր կարծիքը նախկի՞նն է մնացել այն բանից հետո, երբ Նավարինի ճակատամարտում դաշնակցային նավատորմիկը վառեց եգիպտական նավատորմը, և նրա ածխացած մնացորդները ծովով մեկ սփռվեցին Նավարինից Նավպլիոն:

Կայսր Նիկոլայ Պավլովիչը գթասիրտ ու խորաթափանց եղավ իր գահակալ նախորդից. ռուսական բանակը ջախջախեց սուլթանի զորքն ու հասավ Ադրիանապոլիս: Անգլիացիները գրավեցին Միսոլոնգին, Մեզոնի ֆրանսիական կորպուսը Իբրահիմ փաշային վռնդեց Մորեայից: Աթենքը մերն է, Պարթենոնի վրա բարձրացվել է հունական դրոշը: Սպիտակն ու կապույտը հաղթեցին կանաչին: Ակրոպոլիսի պաշտպանության ժամանակ ցուցաբերված արիությունը մեր օգտին տրամադրեց աշխարհիս ուժեղներին: Պատերազմը դեռ չի ավարտվել, բայց տերությունների կողմից Հունաստանի ճանաչումը մոտակա շաբաթների հարց է:

Մենք մի հինավուրց երգ ունենք թուրքերի կողմից Կոստանդնուպոլսի գրավման մասին: Ահա համառոտ բովանդակությունը:

Սև երեքշաբթիի, այսինքն՝ 1453 թվի մայիսի 28-ի առավոտյան, մի վանական խոհանոցում ձուկ էր տապակում ու հանկարծ լսում է ինչ-որ տեղից իրեն դիմող ահեղ ձայնը. «Փախիր, վանակա՛ն: Փրկվի՛ր: Հիմա քաղաք կխուժեն թուրքերը»: Վանականը միայն ծիծաղում է, թե ավելի շուտ իր տապակած ձկները կենդանություն կառնեն ու թռչունների պես կճախրեն օդում, քան թուրքերը կգրավեն սուրբ քաղաքը: Հենց նոր էր ավարտել խոսքը, երբ ձկները բարձրացան, պտտվեցին թավայի վրա ու դուրս թռան: Նույն պահին սուլթանի զորքը խուժեց Կոստանդնուպոլիս:

Բարի եղեք, Իգնա՛տի Իվանովիչ, մոտեցեք պատուհանին: Ձեզ մոտ

հիմա սպիտակ գիշերներ են, պատուհանից այն կողմ ցանկացած ժամի լույս է:

Ի՞նչ եք տեսնում:

Ցարսկոե սելոյի վրայով չի՞ թռչում, արդյոք, ձեր սիրած տապակած սաղմոնիկը, որը հենց պատրաստվում էիք ընթրելու:

Եթե՝ այո, ապա օդ է բարձրացել հույների՝ ազատ ժողովուրդ դառնալու ունակության ձեր անհավատության ուժով:

Անդորրություն

Իգնատի Ելովսկի: Ալեքսանդր I կայսեր կամերքարտուղարի մատյանը

Հոկտեմբեր, 1835 թ.

Երեկ հոկտեմբերի 1-ն էր, տասներորդ տարին այն օրվա, երբ տեր թագավորը Բալակլավայում ինձ իր գրադարանավարը դարձնելու և ինձ հետ ծերությունը կիսելու ցանկություն հայտնեց: Այդ օրը ես նվիրում եմ նրա մասին հիշողություններին, վերընթերցում Թովմա Կեմպիացու «Քրիստոսին ընդօրինակելու մասին», անցնում Ցարսկոսելսկյան զբոսայգու նրա սովորական երթուղիներով, եթե հաջողվում է մտնել այգի, իսկ Պետերբուրգում այցելում եմ Կոնյուշենների դվոր, կանգնում սպիտակ զամբիկի խրտվիլակի մոտ, որով, բանակի գլուխ անցած, 1814 թվականին մտել էր Փարիզ: Նրա հետ կապված և ինձ համար կարևոր վայրերը, որպես մասնավոր անձի, անմատչելի են, սակայն բավարարվում եմ նրանով, ինչ կա: Այդպես տևում է տարեցտարի, իսկ երեկ, տասը տարվա ընթացքում առաջին անգամ, մոռացա այդ օրը: Արդարանում եմ նրանով, որ այն դիմավորել էի ոչ տանը, ոչ սովորական իրերի ու գրքերի շրջապատում, այլ Դուվրից Աթենք լողացող շոգենավի վրա:

Ես թագավորի տարիքում եմ, երբ վախճանվեց: Ես էլ, ինչպես նա՝ իմ այս տարիքում, տառապում եմ ստամոքսի թուլությամբ, կեղևահան սալորաչիր եմ օգտագործում ու շատ ճամփորդում: Ճանապարհին ժամանակը դանդաղ է հոսում, իսկ տպավորությունների սրընթաց հերթափոխումը ծերության շեմին լիարժեք կյանքի անգին զգացողություն է պարգևում: Կտրել եմ Իտալիայի կեսը, եղել Սուրբ երկրում, Ալեքսանդրիայում: Եգիպտոսն առաջվա պես կառավարում է Մեհմեդ Ալին, իսկ նրա խորթ որդին

հանելուկային կերպով անհետացել է: Ամեն դեպքում, «Ռուսսկի ինվալիդ»-ը դադարել է հետաքրքրվել նրանով:

Ավելի հեռու, քան Պետերբուրգից Կրոնշտադտ, շոգենավով չէի լողացել: Պարզվեց, որ արագությունն ու հարմարավետությունը հենց այնպես չեն տրվում, դրանց գինն առնվում է ոչ միայն փողով, այլև ջղագրգռությամբ ու անքնությամբ: Նավախցի տակ անընդհատ թխկթխկում է շոգեմեքենան: Այդ թխկթխկոցին անհնար է վարժվել դժոխային ռիթմի պատճառով: Նրանից փրկվելու համար ժամերով պտտվում եմ տախտակամածին: Այստեղ այն խլացնում են ալիքների ճողփյունն ու շոգենավի ջրանիվների շրմփոցը: Ջրի աղմուկն անվաթիերի տակ այնքան ծանր չի լսելիքի համար և իր մեքենայական միալարությամբ հանդերձ, ավելի մոտ է բնության ձայներին:

Ուղևորներից մտերմացա միստր և միսիս Լաթթիմորների հետ, միջին տարիքի ամուսնական զույգի՝ Լոնդոնից: Ամուսինը լռակյաց պարոն է, առանց արտաքինի ու բնավորության կտրուկ գծերի, իսկ կինը այն կանանցից է, որոնց մասին ասում են՝ ջահել ժամանակ գեղեցկուհի էր: Դեմքը, կարծես, հիմա էլ կրում է վաղեմի գեղեցկության հետքերը, որը գուցե և ընդհանրապես չի եղել:

Միստր Լաթթիմորն էլ, ինձ նման, միայն գրքերով գիտի Հունաստանը, բայց կինն այնտեղ ժամանակին եղել է: Նրա ասելով՝ այդ երկիրն ապշեցուցիչ կերպով տարբերվում է Իտալիայից, և նույն բարձր ու մաքուր երկնքով, նույնքան, եթե ոչ ավելի շքեղ տեսարաններով հանդերձ՝ զուրկ է կենդանությունից և իտալացիների համար բնութագրական եռուն էներգիայից: Հունաստանում քիչ են քաղաքները, դա մի խստաշունչ, ամայի, աղքատ, անհյուրընկալ երկիր է: Իտալիայում ամեն ինչ տրամադրում է ուրախության ու վայելքի, իսկ այնտեղ անընդհատ գիտակցում ես պատմական գիտելիքների անբավարարությունը, որոնք անհրաժեշտ են տխուր ներկայից հնոց ժամանակները տեղափոխվելու համար: Եթե կենդանի մարդիկ չեն ուրախացնում, մնում է սփոփանք փնտրել մեռյալների մոտ:

«Այո՛,- համաձայնեցի ես՝ հիշելով Ալեքսանդրիան, որտեղ նույնիսկ շնչելը լավ է օծանված թաշկինակի միջով:- Պատմության սիրա-

հարներին հետաքրքրող երկրներն այնքան էլ հարմար չեն սովորական ճանապարհորդներին»:

Հաջորդ օրը միստր Լաթթիմորից իմացա, որ կինը մասնակցել է ազատության համար հույների պայքարին և ծանոթ է եղել գնդապետ Ֆաբիեի հետ: Առաջին անգամ էր տալիս այդ անունը, բայց չուղեկցեց բացատրություններով. մտքով իսկ չէր անցնում, որ նա կարող է անծանոթ լինել ինձ: Իսկապես, թերթերում կարդացել էի ժամանակին նշանավոր այդ հելլենասերի մասին:

Ֆաբիեի հետ հարաբերությունների մասին միսիս Լաթթիմորը բավական անկեղծ էր խոսում: Ճիշտ է, ուղիղ ոչինչ չասվեց, բայց տոնն ու ժպիտը, միաժամանակ խուսափողական ու երազկոտ, կասկած չէին թողնում նրանց մտերմության աստիճանի վերաբերյալ: Նրա պատմածում Ֆաբիեն պարզապես Ճառլ էր, իսկ ինքը, երբ շարադրանքի բնականության համար առաջին դեմքով էր հաղորդում իրեն ուղղված նրա ռեպլիկները, հանդես էր գալիս որպես Սյուզի:

Այդ ամենն ասվում էր ամուսնու ներկայությամբ: Սկզբում հասկանալի անհարմարություն էի զգում այդ զեղումները լսելով, բայց հանգստացա՝ նկատելով, որ միստր Լաթթիմորը հպարտությամբ ու միևնույն ժամանակ զննաբար է նայում ինձ. ասես ստուգում էր՝ ունա՞կ եմ գնահատելու, թե ինչ գանձ է բաժին ընկել իրեն: Ըստ երևույթին կնոջ սիրավեպը Հունաստանի ազատագրության հերոսի հետ դիտարկվում էր որպես ընդհանուր ընտանեկան դրամագլուխ:

Զարմանալի չէ, որ խոսակցությունն անցավ լորդ Բայրոնին:

«Պետք չէ իդեալականացնել նրան,- ասաց միսիս Լաթթիմորը:- Շատ բան նրա կյանքում բացատրվում է նրանով, որ կրքոտ երազում էր Լոնդոնի «Աթենական ակումբի» անդամ դառնալ, բայց չէին ընդունում: Ակումբի անդամները՝ երիտասարդ արիստոկրատներ, հելլենական արվեստի սիրահարներ էին, իսկ Բայրոնը հունական քանդակի ու խեցեղենի այդպիսի հավաքածու չուներ, որը կփոխհատուցեր ազնվատոհմության պակասը: Բայրոնը Հունաստան մեկնեց ոչ հանուն նրա, ինչով հիմա բոլորն այդպես հիանում են: Պարզապես հասկանալ էին տվել, որ եթե որոշ գումար նվի-

ռաբերի հույների զինական կարիքներին ու հետևի, որ փողերը չհափշտակեն, կընդունեն «Հունական ակումբ»:

Ես լսում էի խառը զգացումներով: Մեզ հաճելի է որևէ տհաճ բան իմանալ բոլորի կուռքի մասին, բայց տհաճ է, որ դա մեզ հաճելի է:

Ընթրիքին ընդհանուր նավասենյակում խոսակցությունը պտտվում էր նույն թեմայի շուրջ: Խոսվեց բավարական արքայազն Օտտոնի մասին, որը նախանցյալ տարի դարձել էր Հունաստանի թագավոր: Միսիս Լաթթիմորը գիտեր, թե ինչ ստորջրյա հոսանքներ են նրան հունական գահ բարձրացրել ու հաճույքով բացատրեց, որ նրա թագադրումը մեծ տերությունների փոխզիջման հետևանք է: Նրանցից յուրաքանչյուրը կնախընտրեր նրա տեղն իր թագավորական տան ներկայացուցիչն ունենալ, ու որպեսզի չգժտվեն, կանգ էին առել Եվրոպայի գլխավոր հելլենասերի՝ Լյուդվիգ թագավորի վրա:

Միսիս Լաթթիմորը կարեկցում էր երիտասարդ թագակրին, որն ուսերին էր առել կիսասիական երկիրը եվրոպական դարձնելու և իր իսկ մեծ անցյալը նրան վերադարձնելու ծանր բեռը:

Միստր Լաթթիմորը հետաքրքրվեց, թե ինչ կարծիքի եմ դրա մասին ու շատ զարմացավ՝ լսելով, որ կարծիք չունեմ:

«Ես դուրս եմ եկել այն տարիքից, երբ մարդն իրեն պարտավորված է զգում ամեն հարցով կարծիք ունենալ,- ասացի:- Վերջին պաշտոնս կայսր Ալեքսանդր Պավլովիչի կամեր-քարտուղարն էր: Քանի դեռ նա ողջ էր, հետաքրքրվում էի քաղաքականությամբ, որ կարողանամ կիսել նրա կարծիքը պետական նշանակություն ունեցող հարցերում, բայց այդ ամենն անցյալում է: Մեռյալներն ուրիշ հոգսեր ունեն: Ինձ հազվադեպ է երազ գալիս հանգուցյալ թագավորը, բայց այն սակավ դեպքերում էլ, երբ երջանկություն եմ ունեցել երազում տեսնելու նրան, ոչ մի անգամ հետս քաղաքականությունից չի խոսել»:

Այս մենախոսությունն արտասանելիս միաժամանակ ամոթով ու սարսափով մտածում էի՝ Աստվա՛ծ իմ, այս ինչե՛ր եմ խոսում: Ինչի՞ համար...

Միստր Լաթթիմորն ապշած էր նայում ինձ, կինը՝ ծաղրանքով: Ասացի, որ անառողջ եմ: Դա այնքան էլ հեռու չէր ճշմարտությունից, ու քաշվեցի իմ նավախուցը:

Շոգեմեքենան խցի տակ թխկթխկում էր չտեսնված ուժով: Ընդհանուր գծերով գիտեի կառուցվածքն ու հասկանում էի՝ եթե բոլոր մասերի այդպիսի ցնցումով է աշխատում, ուրեմն գոլորշու ճնշումը հասել է սահմանայինին: Շարժաթևերի ու մխոցների կատաղի ընթացքից դողալով՝ ընկա աթոռին, և ուշաթափության մշուշի միջով, հասկանալով, որ ոչ միայն մեքենան է թրթռում, այլև սիրտս, տեսա տեր թագավորին: Ավելի ճիշտ, երկու թագավորի: Մեկը զմռսվելուց սևացած դեմքով պառկած էր Պետրոպավլովյան տաճարում, երկրորդը, հսկա խաչը ձեռքին, լրիվ տարբեր նրանից, ում սիրում էի կյանքից ավելի, արդեն երրորդ տարին կանգնած էր Պալատական հրապարակում, վարդագույն գրանիտե սյան գագաթով հասնելով երկինք, առաջինից երես դարձրած, ինչպես հոգին է շրջվում իրենից լքված մարմնից:

Հենց այդտեղ էլ հիշեցի ամսի քանիսն է:

Պիրոսից լուր էի տվել Աթենքի մեր դեսպանորդին: Ժամանակին ընկերություն էինք արել նրա հոր հետ, ակնկալում էի որդու օժանդակությունը հյուրանոցի ու տեսարժան վայրերն այցելելու հարցում, բայց դեսպանորդը ժամանակավորապես բացակայում էր: Նրա փոխարեն եկավ մի ոչ երիտասարդ պարոն, որը ներկայացավ որպես դեսպանական քարտուղար: Ազգանունը լավ չլսեցի, բայց հետո հասկացա, որ դիտմամբ է անհասկանալի արտասանել: Կառապանը տեղավորեց ուղեբեռս, կառք նստեցինք ու շարժվեցինք:

Ճանապարհը սարսափելի վիճակում էր՝ չսալարկած, եզրերին փոշոտ խոտի փնջեր: Չնայած հետո լավացավ, նորոգող բանվորների խմբեր երևացին, միանման, կարծես տարազային, մետաղյա կոճակներով, բայց քրքրված ու կեղտոտ հագուստով:

«Այո՛, զինվորներ են,- գլխով արեց ուղեկիցս՝ հասկանալով ինչի մասին եմ մտածում:- Բավարացիներ: Օտտոն թագավորն է բերել իր հետ: Ճանճի պես կոտորվում են խեղճերը»:

«Կլիման է մեղավոր»,- ենթադրեցի ես:

«Ավելի շուտ՝ բնությունը»,- քմծիծաղեց նա:

«Հունակա՞ն»,- մեքենաբար նոր ու ակնհայտորեն ավելորդ հարց տվեցի: Այստեղ ուրիշ բնություն չկար:

«Չէ, իրե՛նց բնությունը,- պատասխանեց քարտուղարը:- Անընդհատ ու առանց ընտրության խժռում են այստեղի բոլոր մրգերը, բայց և իրենց գարեջրից հրաժարվելու ուժ չունեն: Օրգանիզմը թուլանում է մշտական փորլուծով: Ցանկացած հիվանդություն գերեզման է տանում նրանց»:

Հանկարծ կտրուկ շրջվեց իմ կողմը. «Մենք ծանոթ չենք, բայց ես գիտեմ ձեզ, ու դուք էլ՝ ինձ: Ես Պերմի նախկին նահանգապետն եմ, բարոն Կրիդները»:

Ծփոթվելով՝ ավելի լավ բան չմտածեցի, քան հայտնել, որ Կարասու-բազարում այցելել եմ իր հորաքրոջ գերեզմանին:

«Ուզում էի գնալ, բայց այդպես էլ չկարողացա»,- հոգոց հանեց նա:

«Եթե երբևէ կարողանաք, պետք է գնալ Կորեիզ,- խորհուրդ տվի ես:- Իշխանուհի Գոլիցինան թագավորին խոստացել է բարոնուհու աճյունը տեղափոխել իր կալվածքն ու հուղարկավորել այնտեղ»:

«Չէ՛ մի,- արձագանքեց Կրիդները:- Թագավորի մահվանից հետո մոռացել է խոստումը: Ma tante-ն այդպես էլ պառկած է Կարասու-բազարում»:

Բարոնուհին մերձեցրել էր մեզ, այլապես չէի համարձակվի հարցնել, թե ինչպես է նահանգապետից դարձել դեսպանական քարտուղար:

- Եթե կալվածքներ չունես ու երեք չամուսնացած աղջիկ ունես, ընտրությունը մեծ չէ,- եղավ պատասխանը:- Հինգ տարի առաջ Հունաստանում բացվեց մեր դեսպանատունը, և գեներալ-համիարզ Դիբիչը՝ գնդային ընկերս, ինձ ընդգրկեց հաստիքակազմում: Նա մեծ ազդեցություն ուներ որպես վերջին թուրքական արշավանքի գլխավոր հրամանատար:

«Այո՛,- հիշեցի,- թագավորի շքախմբում միասին էինք Ուրալյան նրա վերջին ուղևորության ժամանակ: Ափսոսում էր, որ Պերմում չի հանդիպել ձեզ»:

«Իսկ ես ուժեղ հաղթաթուղթ ունեի,- հավելեց Կրիդները,- նոր հունարեն գիտեի»:

Պարզվեց, որ երբ Պերմի՝ նրա ղեկավարած Աստվածաշնչյան ընկերությունը սկսել է կոմի-զիրյաներեն թարգմանել Կտակարանը, բարո-

նուիին որպես նմանատիպ աշխատանքի նմուշ ուղարկել է նույն Աստվածաշնչյան ընկերության՝ Լոնդոնում լույս տեսած Նոր կտակարանի նոր հունարեն հրատարակությունը: Հոգևոր ճեմարանում ոչ ոք այդ լեզուն չգիտեր, և Կրիդները սկսել էր դասեր առնել Պերմում սրբապատկերներ վաճառող մի մարիուպոլցի հույնից:

«Լավ սրբապատկերներ էին, լավ էլ ծախվում էին,- պատմում էր նա:- Մի բան էր վատ. ինչպես ընդունված է հույների մեջ՝ բոլոր սրբերը, ասենք, Մարիամն ու Հիսուսն ինքն էլ, պատկերված էին առանց լուսապսակի: Դրա համար թեմական ղեկավարությունը նրան վտարեց Պերմից, բայց մինչև այդ մի ամբողջ տարի շաբաթը երկու անգամ գալիս էր ինձ մոտ: Կողք կողքի էինք դնում սլավոնական ու հունական կտակարաններն ու կարդում: Որոշ բան սովորեցի, իսկ բանավոր խոսքին տիրապետեցի Նավպլիոնում: Անցյալ տարի Նավպլիոնից տեղափոխվեցի նոր մայրաքաղաք»:

Առջևում հառնեց Ակրոպոլիսի ժայռը: Նայում էի ինչպես կենդանություն առած երազի: Արդեն Աթենքում էինք: Իրար հետևից ծգվեցին քար ու ցեխից ծեփած տնակները, անտաշ քարով շարած կոպիտ ցանկապատերով այգիները: Վերջապես մտանք կարմրակղմինդր տանիքներով գերմանական տիպի շինություններով մի ավելի վայելուչ շրջան: Ծուրջը շինարարական աղբ էր կիտված: Այս տները, ասաց Կրիդները, բավարական սպաների, ինժեներների, աստիճանավորների համար են կառուցվել:

Փողոցների անվանումները անկյունային տների վրա գրված էին հունարեն ու գերմաներեն: Գոթական *straße*-ն ուժգնացնում էր տպավորությունը, ասես ոչ թե Աթենքում էի, այլ Մյունխենի կամ Գերմանիայի որևէ այլ քաղաքի արվարձանում: Ասենք, լապտերներ ու կառքեր, որպես Եվրոպայի ամենահամեստ քաղաքային կյանքի նշաններ, այստեղ էլ չկային: Անցորդներն էլ հազվադեպ էին, և բոլորը, հագուստից դատելով, գերմանացիներ ու իտալացիներ: Երևի նրանց մեջ եվրոպական հագուստով հույներ էլ կային, բայց իսկական, ազգային տարազով մարդիկ աչքի էին զարնում միայն սրճարանների առջև: Ճիշտ ինչպես թուրքերը Ստամբուլում կամ Յաֆֆայում, ճիշտ նույնպիսի բեղերով՝ նրանք շրջան էին կազմել մուտքի մոտ կամ ուղղակի նստել գետնին, ու չնայած դիրքն ինքը նորու-

թյունների կամ կարծիքների աշխույժ փոխանակում էր ենթադրում, լռում էին՝ փստացնելով կարճափող ծխամորճերը: Ըստ երևույթին, նոր աշխարհում նրանց բավական էր միայն յուրայինների մեջ լինելը:

Անցանք տանիքից տանիք ձգվող արևապաշտպան պարուսիներ ծածկով նեղլիկ առևտրային փողոցն ու ելքին կանգ առանք երկհարկանի, խորդուբորդ աստիճաններով ու կասկածելի մաքրությամբ պատուհաններով մի երկհարկանի շինության առաջ: *Albergo Nuova* ՝ կարդացի մուտքի ցուցանակին:

«Լավ հյուրանոց է,- հանգստացրեց ուղեկիցս:- Նույնիսկ ճաշին սպիտակ հաց են տալիս»:

«Իսկ մյուսներում չե՞ն տալիս»,- հարցրի:

«Տարբե՛ր»,- ասաց նա, ու ես մտածեցի, որ տեղիս կյանքը նրան ճակատագրապաշտ է դարձրել:

Հաջորդ օրը, նախօրեի պայմանավորվածությամբ, բարձրացանք Ակրոպոլիս: Կրիդներն իմ հետևից եկավ կեսօրին, մի ժամից արդեն Պրոպիլեոնի վերելքին էինք: Դարպասների մոտ աթոռակին մի սերթուկավոր երիտասարդ էր նստել, նրա առաջ սեղանին անագե ափսե էր՝ մետաղադրամներով, և կողքին՝ ինչ-որ մանուշակագույն թղթիկներ, որոնցից յուրաքանչյուրի վրա կնիք կար:

«Պետք է տոմս առնել»,- այդ բեղավոր ջահելի ներկայությունը բացատրեց Կրիդները:

«Ահա՛ թե ինչ,- ժպտացի ես:- Երբ հույներին վարկեր էին պետք, հավատացնում էին, որ իրենց հնությունները պատկանում են ողջ մարդկությանը»:

«Հարկադրված քայլ է,- հույներին պաշտպանեց Կրիդները:- Հունաստանն աղքատ է, իսկ Օտտոն թագավորը համարյա ոչինչ չի անում արվեստի պահպանման համար: Գանձարկղն այդպիսի ծախսերի չի դիմանում»:

Նա երկու տոմս գնեց: Ուզում էի հատուցել արժեքը, չէ՞ որ ինձ համար էր եկել, բայց նկատեց, որ ռուս մարդկանց միջև այդպիսի մանր հաշիվներն ընդունված չեն:

Բարձրացանք աստիճաններով ու հայտնվեցինք փոշու ամպի մեջ: Տասնյակ բանվորներ քլունգներով ու նիգերով ջարդում էին Պարթենոնն

ու Էրեխթեոնը փակող վենետիկյան ու թուրքական կառույցները:

Հնության կնիքը կրող բեկորներն առանձին էին դարսում, իսկ սովորական քարերն ու աղբը ժայռից թափվում էին ցած: Հելլենական հանճարի մեծագույն ստեղծագործությունների խորամուխ հայեցողության մասին խոսք լինել չէր կարող, բայց ես պատրաստ էի խոստովանելու, որ չնայած աշխատանքն ավարտված չէ, երկու տաճարներն էլ աստիճանաբար ազատվում են վերջին երեք հարյուրամյակում իրենց շրջապատած խանութների, զորանոցների, տնտեսական ու բնակելի շինությունների խայտաբղետ պատից:

Պարթենոնը մուտքից աջ է: Պետք է ասել, որ սպասված տպավորությունը չթողեց: Ես պատմաբան չեմ, անտիկվար չեմ, իսկ ավերածությունները այստեղ այնքան նկատելի են, որ դժվար է իրական պատկերը փոխարինել նրանով, որը պետք է հառնի մեր մտավոր հայացքի առաջ: Մարմարը դեղնել է, սյուները խիտ խզբզված են այցելուների անուններով: Հատկապես շատ են Նավարինի ճակատամարտից առաջ կամ հետո Աթենքում եղած ռուս նավաստիների ինքնագրերը: Մի կողմից դա իմ մեջ ազգային հպարտության պոռթկում առաջացրեց, մյուս կողմից՝ ամոթ հայրենակիցներիս համար և որոշ գրություններ ջնջելու սուր ցանկություն:

Հորիզոնի անեզրությունը. ահա թե ինչն էր ամենից ուժեղ ազդում: Ժայռի եզրին բարձրությունից ու հիացմունքից շունչս բռնվում էր: Պայծառ օր էր, վաղ աշնան թափանցիկ օդում աչքը ոչ մի սահմանափակում չէր գտնում, բացի սեփական թուլությունից: Կրիդները մատնացույց արեց աշխարհի կողմերը, ինչը թույլ էր տալիս իմ առաջ բացված պատկերները դասակարգել չորս բաժնով, որ ավելի հուսալի պահպանեմ հիշողության մեջ: Հյուսիսում տարածվել էին քաղաքի թաղամասերը՝ դրանցից վեր հառնող վիթխարի Լիկաբետոսով. արևելքում, Ադրիանայի դարպասները շրջանցելով, դեպի Էլևսին էր ձգվում նույնիսկ ինձ՝ անգետիս հայտնի էլևսինյան միստերիաների սրբազան ուղին.. արևմուտքում սևին էր տալիս Արեոպագոսի բլուրը՝ երկու քարանձավներով, որտեղ Սոկրատեսի զնդանն էր. վերջապես, հարավում հայացքը սահում էր Պիրեոսի տնակների, նավահանգստի խաղալիք նավերի, կայծկլտացող ծովային կապույտի

վրայով ու դեմ առնում Սալամինի կամ Էգինի հեռավոր բարձունքներին: Կրիդները չէր կարող ստույգ ասել, թե այդ երկու կղզիներից որն ենք տեսնում:

Պարթենոնի հյուսիսային սյունասրահի մոտ նա ինձ տարավ դեպի փայտե վահանակը, որ դրված էր ոտնակների վրա ու ծածկված կղմինդրե շվաքարանով: Վահանակի վրա ճերմակին էին տալիս թղթի մի քանի թերթ՝ ճարտարապետական ուրվանկարներով ու դրանց բացատրություններով, սակայն առյուծի բաժինը զբաղեցնում էր սյունաշարով ու զանգվածեղ գմբեթով ինչ-որ շինության տեմպերայով արված պատկերը:

Վերնաճակատն ու քառանկյուն որմնասյուները արված էին պրուսական հելլենիզմի ոճով, իսկ վերևից դրված գմբեթն ասես զիջում լիներ պալլադիական ավանդույթներին:

Կրիդները պերճախոս լռում էր՝ ժամանակ տալով, որ ուսումնասիրեմ նկարը: Հասկացա, որ մեր այստեղ գալու առաջին իսկ րոպեներից ցանկացել է հենց այդ ցույց տալ, բայց չի համարձակվել մինչև գլխավոր տեսարժանությունները նայելը:

«Ի՞նչ շինություն է»,- հարցրի. ակնոցս թողել էի հյուրանոցում ու չէի կարող կարդալ բացատրությունները:

«Օտտոն թագավորի ապագա պալատը: Ճարտարապետը նշանավոր Շինկելն է՝ Բեռլինից»,- պատասխանեց Կրիդները:

Հարցս, թե որտեղ է կառուցվելու պալատը, զարմացրեց նրան:

«Ահա,- ցույց տվեց դիմացի սյունաշարը, որը մեկ ամբողջություն էր կազմում պալատի հետ:- Չիմացա՞ք: Ախր սա Պարթենոնն է, պարզապես բոլոր տապալված սյուները վերականգնվել են»:

«Մի՞թե,- չհավատացի ես,- թագավորական պալատը պատրաստվում են Պարթենոնո՞ւմ կառուցել»:

Պարզվեց, որ՝ այո՛, այնտեղ, ուր կանգնած ենք:

Ես հելլենասեր չեմ ու երբեք չեմ եղել, բայց Հունաստանի հանդեպ հազարավոր սրտերում բոցկլտացող սիրո հուրը ինձ էլ էր դիպել: Հիմա այն մարել է, ծուխը՝ ցրվել, ու երևում էր, որ նրանից ծնունդ է առել այս անհեթեթ շինությունը՝ Պարթենոնով՝ որպես շքամուտքի սյունասրահ:

«Դուք էիք ասում,- հիշեցրի Կրիդներին,- որ թագավորը գիշեր ու զօր հոգում է հունական արվեստի հուշարձանների պահպանման համար»:

«Այո՛,- շփոթվեց նա,- բայց ես այլ բանի մասին էի ուզում խոսել ձեզ հետ: Ժամանակին ձեզ էի ուղարկել բարոնուհու արած նկարը՝ խնդրելով փոխանցել թագավորին: Բարոնուհին պատկերել էր տեսիլքը, որ նա ունեցել էր Ղրիմում, ոգու աղոթքի ժամանակ, հիշո՞ւմ եք»:

Ասացի, որ նկարով նամակը հիշում եմ, բայց նկարը մոռացել եմ:

Նա մատնացույց արեց վահանակը. «Բարոնուհին ճշգրիտ պատկերել էր այն, ինչ ձեր աչքի առաջ է: Օտտոնի ապագա պալատը տաճարի պատճենն է, որը նա այդ գիշեր տեսել էր Ակրոպոլիսում: Նա այդ տաճարը ժողովուրդների ապագա եղբայրության խորհրդանշանն էր համարում, քրիստոնեական բոլոր դավանանքների տաճար, դրա համար էլ նկարում գմբեթը խաչով է: Այստեղ խաչ չկա, ահա և ողջ տարբերությունը, եթե չհաշվենք զարդարանքի որոշ մանրամասներ:

«Այո՛, լինում են զարմանալի զուգադիպություններ»,- խոստովանեցի ես:

«Զուգադիպությունն՞ե՞ր,- վեր թռավ Կրիդները:- Այդպիսի զուգադիպություններ չեն լինում: Ma tante -ն զուտ պարզ, մարդկային խորաթափանցությամբ չէր օժտված: Ոգու աղոթքում նրան հայտնվել էր ապագան: Հիշե՛ք,- նա սկսեց ծալել մատները,- կատարվեց նրա կանխագուշակումը Էլբայից Նապոլեոնի փախուստի մասին: Գնանք առաջ. տեր թագավորին զգուշացնում էր, որ հույներին օգնելուց հրաժարվելու համար Աստված կպատժի նրա հպատակներին, ու եղավ քսանչորս թվի հեղեղը: Կատարվեց նաև մարգարեությունը, որ Հունաստանի կործանումը կգա Եգիպտոսից»:

«Մի՞թե դա կատարվել է»,- կասկածեցի ես:

«Համարյա,- իրեն չկորցրեց Կրիդները:- Զուտ պատահականություն է, որ Իբրահիմ փաշան չգրավեց ողջ Հունաստանը: Եթե դա նրան հաջողվեր, Անգլիան, Ֆրանսիան ու Ռուսաստանը պատերազմի մեջ չէին մտնի: Ի բարեբախտություն հույների՝ Աթենքում, Ակրոպոլիսի տակ Իբրահիմ փաշան վիրավորվեց ինչ-որ հելլենասերի գնդակից: Հետո երկար ժամա-

նակ ապաքինվում էր ու չկարողացավ ավարտին հասցնել շատ հաջող սկսած արշավանքը»:

«Ստացվում է, որ բարոնուհին սխալվել է»,- ոչ առանց չարախնդության ամփոփեցի ես:

«Մի շտապեք եզրակացություններ անել,- զգուշացրեց նա:- Այսպես ասենք, բարոնուհուն բացվել էր մեզ համար երկնքում կանխագծվածը, ոչ թե մեզ հետ կյանքում կատարվողը»:

«Մի՞թե դա նույնը չէ»,- հարցրի:

Նա ժպտաց. «Ձեզ համար երբևէ ծեռնագուշակություն արե՞լ են»:

Պատասխանեցի, որ՝ ոչ:

«Խիրոմանտները գիտեն,- ասաց Կրիդները,- որ ծախ ափի գծերը պատմում են, թե մեզ ինչ ճակատագիր է սպասում: Իսկ աջինը՝ իրականում ինչպես է դասավորվելու մեր կյանքը: Բարոնուհին միայն ծախ ափն էր նայում...»:

«Ծոգ է, հոգնեցի»,- ընդհատեցի նրան ու հետ դարձա դեպի սյունասրահը:

«Եթե հանգուցյալ թագավորը լսեր նրան ու զորքը շարժեր թուրքերի դեմ, ողջ կլիներ,- հետևիցս հասնելով՝ շարունակեց Կրիդները:- Բարոնուհին ցանկանում էր փրկել նրան...»:

Արդեն դարպասների մոտ էինք: Սեղանիկի առաջ ստիպված էինք շրջանցել գերմանական հագուստով ու հունական կլոր թասակով մի ոչ երիտասարդ տղամարդու: Կրծքով հրում էր իր ճանապարհը փակած տոմսավաճառին ու զայրագին ինչ-որ բան բղավում՝ դիմելով շուրջը հավաքված ամբոխին: Մի պահ դեմքը ծանոթ թվաց, բայց նշանակություն չտվի:

Որքան երկար ես ապրում, այնքան ավելի ես համոզվում, որ մարդկային բնության տխրահռչակ բազմազանությունն ավելին չէ, քան միֆ: Երիտասարդ հասակում մարդկանց մեջ տեսնում ենք այն, ինչը նրանց տարբերում է իրարից, իմ տարիքում՝ ինչ նրանց իրար նման է դարձնում: Վերջինն ավելի շատ է:

«Ի՞նչ է ուզում»,- հարցրի Կրիդներին:

«Ուզում է մտնել Ակրոպոլիս: Չի ուզում տոմս առնի,- ներկայացրեց

նա տղամարդու բողոքը:- Ասում է՝ արյուն է թափել այստեղ, և իր օրինական իրավունքն է՝ առանց տոմսի անցնել: Ինքը չպիտի վճարի թագավորին, այլ թագավորը՝ իրեն»:

Հայտնվեցին երկու զինվոր՝ կապույտ հունական համազգեստներով, ներքևը՝ սպիտակ ֆուստանել: Երկու կողմից բռնեցին աղմկարարի արմունկները, մի տասը քայլ քարշ տվին ճանապարհով ներքև, չթողնելով, որ դուրս պրծնի և ուշադրություն չդարձնելով նրա ճիչերին, բաց թողեցին: Նրանցից մեկը, որ ավելի ջահել էր, վերջում ծնկով թեթև հասցրեց հետույքին: Կռվազանն անզոր կատաղությամբ թքեց նեղացնողի հետևից, և թքի հետ բերանից մի կարճ ու եռանդուն արտահայտություն թռավ, ակնհայտորեն ոչ հունարեն: Հենց այդ անհեթեթությունից էլ ճանաչեցի նրան: Բառերի թվով, ռիթմով ու սկզբնատառով այն կրկնում էր մեր գլխավոր հայհոյանքը, բայց շատ ավելի զզվելի էր հնչում: Հազար տարի առաջ, Պերմում, այդ երեք բառն ինձ հանդիպել էր քննչական գործում և այնքան ամուր նստել հիշողությանս մեջ, ասես այսօրվա հանդիպման կանխատեսությամբ սրտիս էր փորագրվել:

Ծուտով Մոսցեպանովի հետ նստած էինք սեղանի շուրջը: Թանկարժեք պաստառներից, «Բավարական սուրճի տուն» դրոշմից և իտալական կահույքից դատելով՝ նրա գործերը վատ չէին: Ճանապարհին իմացա նրա կյանքի պատմությունը Պերմի մեր հանդիպումից հետո, միևնույն ժամանակ անհայտության խավարից ելավ չարաբաստիկ գաղտնիքը, որ նա ցանկանում էր հայտնել թագավորին: Հենց դրանով էլ բարձրացել էր. Կովկասից բերվող նավթից յուղ էր քամում կանթեղների համար և առաքում վանքերին, ընդհուպ՝ Ափոնի վանքին: Մնացորդները ծախում էր Էրմու փողոցի կրպակին:

Կրիդներից ավելի շուտ էի բաժանվել: Ասաց՝ լսել է, որ Մոսցեպանովն ապրում է Հունաստանում, բայց նրա հետ հանդիպում չի փնտրել: Միասին նրան այցելելու առաջարկիս պատասխանեց, որ ծառայության բերումով պարտավոր է Հունական կառավարությունից պահանջել Մոսցեպանովի արտահանձնումը Ռուսաստան, բայց չի ուզում, ուստի նրան հյուր լինել չի

կարող: Օդեոնի մոտ հանդիսավոր խոնարհումով հրաժեշտ տվեց ու հեռացավ: Բայց սեղանի շուրջը նստեցինք երեքով: Երրորդը Կոստանդիսն էր:

Մոսցեպանովից տեղեկանալով, որ նախկին լեյբ-բժիշկը հարևանությամբ է ապրում ու հինգ րոպեից մեզ մոտ կլինի, այնքան էլ չզարմացա: Նախորդ օրվանից ասես շիրմափոսի եզրին եմ կանգնած, աչքիս առաջ իրար հետևից հայտնվում էին մարդիկ, որոնց կարող էի հանդիպել գուցե թե հաջորդ, բայց ոչ մի կերպ՝ այս կյանքում: Այնպիսի զգացում ունեի, որ նրանք կոչված են հիշեցնելու թագավորի մահից հետո իմ գոյության երևութականության մասին:

Ես ու Կոստանդիսը վերջին անգամ հանդիպել էինք տասը տարի առաջ, Տագանռոգում, բայց կճանաչեի, եթե նույնիսկ նրա մասին զգուշացված չլինեի: Քիչ էր փոխվել, միայն մի քիչ լցվել էր, ճերմակել և գլխավորը՝ պայթել կամ թուլացել էր նրա մեջ ծգված զսպանակը, որի ոչ բարձր, նյարդային զնգոցը լսում էի մեր բոլոր խոսակցություններում:

Նրա գալուց առաջ Մոսցեպանովը հասցրեց պատմել, որ իբրև բժիշկ Կոստանդիսը ճանաչված է բավարական ինժեներների և աստիճանավորների շրջանում, բազում բուժառուներ ունի, իտալուհի կին, երկու որդի:

Քրիսան՝ տանտիրուհին, բերեց ու սեղանին գեղեցիկ դասավորեց մրգեր, հաց, պանիր, մի շիշ անխառն, անխեժ գինի, բայց մեզ հետ չնստեց: Նիհար, ամբողջովին սևազգեստ՝ նա գեղեցիկ ու նույնիսկ բարետես չէր, ընդսմին՝ խելացի մարդը չէր կարող չնկատել, որ ամուսինների հարաբերություններում կատարյալ ներդաշնակություն է: Նրանց սիրո պտուղը վեցամյա սքանչելի աղջնակն էր, որն ինձ հանդիսավոր ներկայացվեց որպես Եվանգելիա: Մոսցեպանովը նրան Էվի էր ասում:

Ծանոթացնելուց հետո նա դստերը խնդրեց հյուրի համար արտասանել Կռիլովի «Ագռավն ու աղվեսը»: Պատասխանը լռությունն էր: Մոսցեպանովը սկսեց հորդորել դստերը, բայց՝ անօգուտ: «Էվի,- դիմեց նրան ու շարունակեց ռուսերեն՝ ցույց տալով, որ նա հասկանում է մեր լեզուն:- Բոլոր հարևանների երեխաները սիրում են ինձ, բոլորը քո ընկերներն են: Երեկ դուրս եմ գալիս տնից, տեսնեմ՝ անձրև է գալու, իսկ անձրևանոց չեմ վերցրել: Ասում եմ՝ Յա՛ննի, վազիր մեր տուն, Քրիսայից խնդրիր անձրևա-

նոցը: Վազեց, բերեց: Նրա քրոջն ասում եմ՝ պարի՛ր, ուրախացրո՛ւ քեռի Գրիգորիոսին: Նա պարում է: Իսկ դո՞ւ»:

Հորդորներն ու հանդիմանությունները տևեցին այնքան, մինչև որ Էվին լաց եղավ: Միայն այդ ժամանակ Մոսցեպանովը հանգիստ թողեց նրան: Աղջիկը նստեց գորգին և հյուրերի համար հաշվարկված արտիստիկ կանացիությամբ սկսեց օրորել տիրոջյան հովվուհու տարազով տիկնիկին, ինչը իմ մեջ շատ հաճելի հիշողություններ արթնացրեց, հետո պառկեցրեց, բացեց երկու ձեռքերի մատիկները և, ինչ-որ բան մրմնջալով՝ սկսեց հերթով շարժել:

Մոսցեպանովն այդ ընթացքում ծաղկացնելով Կոստանդիսին պատմում էր Ակրոպոլիս մտնելու իր անհաջող փորձի մասին:

«Որոշել էի տեսնել, թե ինչ տեսք է ունենալու Օտտոնի պալատը,- պատասխանեց Կոստանդիսի հարցին, թե ինչն էր նրան տարել այնտեղ:- Բոլորը դրա մասին են խոսում, իսկ ես այդպես էլ չեմ տեսել»:

Թագավորի անունը հունարեն արտասանեց՝ Օֆոն:

«Շատ բան չես կորցրել,- մխիթարեց Կոստանդիսը:- Այդպիսի այլանդակություն քիչ կա: Եթե կառուցեն, կհեռանամ Աթենքից»:

Մոսցեպանովն անհանգստացավ այդ հեռանկարից, բայց ես համարյա վստահ էի, որ մեկնելու կարիք չի լինի: Նույնիսկ երկնքում մեր ճակատագիրը մաքրագիր չի արվում: Բարոնուհին ամեն դեպքում միայն ապագայի սևագիրն էր տեսել՝ կանխորոշված ու չիրականացած: Պատճառներ չունեի մտածելու, որ Ակրոպոլիսի պալատը բացառություն կլինի կանոններից:

Արդեն գիտեի, որ թուրքերի հետ պատերազմի ժամանակ Մոսցեպանովը ծառայել է գնդապետ Ֆաբիեի հրամանատարության տակ, և հիշելով ուղեկցուհուս՝ հետաքրքրվեցի նախկին հրամանատարով:

Նրա փոխարեն պատասխանեց Կոստանդիսը. «Հուլիսյան հեղափոխությունից հետո Ֆաբիեն մեկնեց Ֆրանսիա, շահավետ ամուսնացավ: Լուի-Ֆիլիպը վերադարձրեց կալվածքներն ու նրան մտցրեց Պերերի պալատ: Ես ու Գրիգորին կապ չենք պահպանում նրա հետ: Խնդիրն ահա թե ինչ է,- կանխեց նա իմ հարցը:- Բավական չէ, որ Ֆաբիեն հանրապետա-

կան է, նաև դավաճանել է իր իդեալներին ու փորձում էր հունական գահին նստեցնել հերցոգ Նամյուրցուն և առաջին մինիստր դառնալ: Ես պատրաստ եմ ընդունելու, որ հույները հանրապետության համար չեն հասունացել, բայց որպես թագավոր մեր վզին փաթաթել ինչ-որ երկրորդական դքսի, նշանակում է մեզ ընդհանրապես բանի տեղ չդնել: Օտտոնի մեջ գոնե մի կաթիլ հունական արյուն կա. մոր գծով Կոմնինների ժառանգն է: Հաճելի երիտասարդ է, ցավն այն է, որ նրա փոխարեն կառավարում են ինչ-որ ժամիշխաններ: Ես ու Գրիգորին հրաշալի հիշում ենք այդ պարոնին: Պատերազմի ողջ ընթացքում նստել էր Նավպլիոնում, իսկ հիմա պարզվում է՝ հենց նա է մեր գլխավոր ազգային հերոսը»:

Խոսակցությունն անցավ քաղաքականությանը: Կոստանդիսն էր մենախոսում, ես ու Մոսցեպանովը լուռ էինք: Գինու շիշը դանդաղ էր դատարկվում: Ոչ մեկս գինու սիրահար չէինք:

Ի վերջո Քրիսան նեղվեց, որ ամուսինը չի ուշադրության կենտրոնում: Մոտեցավ մեզ և ցույց տալով նրան, բայց ինձ դիմելով՝ հունարեն ինչ-որ բան ասաց:

«Ասում է, որ ես եմ սպանել Իբրահիմ փաշային,- շփոթված թարգմանեց Մոսցեպանովը,- բայց ճիշտ չի: Ես միայն վիրավորել եմ»:

Նա մեղմ հանդիմանությամբ դիմեց կնոջը, որը կտրուկ օրորեց գլուխն ու էլի մի բան ավելացրեց:

«Չգիտեմ ինչպես թարգմանեմ,- դժվարացավ Մոսցեպանովը:- Ասում է՝ ես նրա մեջ սպանել եմ տղամարդուն: Փաշան տեսել է սրտին ուղղված հրացանը, վախից սիրտը կծկվել է և արդեն չի վերադարձել նախկին չափերին: Ընդմիշտ փոքր է մնացել: Այդպիսի սրտով վախեցել է շարունակել պատերազմը: Նստել է Տրիպոլիում, ինչպես մուկը բնում, քիթն այնտեղից չի հանել, իսկ հետո ֆրանսիացիներից փախել է իր Եգիպտոսը»:

«Եթե մի կողմ թողնենք ժողովրդական պոեզիային հատուկ չափազանցությունները, ամեն ինչ հենց այդպես էլ կա»,- նկատեց Կոստանդիսը, ու ես վերջապես հասկացա, որ անանուն հելլենասերը, որի մասին Կրիդները խոսում էր որպես ճակատագրի նախասահմանումը խախտած մարդու, ոչ այլ ոք է, եթե ոչ Մոսցեպանովը:

«Ողջ է»,- հարցրի Իբրահիմ փաշայի մասին:

«Ողջ-առողջ ,- ասաց Կոստանդիսը:- Գժտվել է հոր հետ, քաշվել իր կալվածքն ու հողագործությամբ է զբաղվում: Գյուղատնտեսներ է հրավիրել Ֆրանսիայից: Այդ ասպարեզում, ի տարբերություն զինվորականի, հաջողությունն ուղեկցում է նրան»:

Ես էլ ժպտացի: Նարինջ, ձիթապտուղ, ծնեբեկ, սուրճի ծառ: Նա, ում մեջ բարոնուհի Կրիդները տեսել էր Եսայու կանխագուշակած թևավոր վիշապին, դարձել էր խաղաղաբարո աֆրիկյան կալվածատեր: Փոթորիկն անցել է, ամպրոպի հուրը շողացել ու մարել: Բոլորն անդորրություն են գտել:

Այդ պահին անկյունից լսվեց մանկական զնգուն ձայնը.

Քանի անգամ են ասել աշխարհին,
Որ նողկալի է քծնանքը, բայց ի՞նչ,
Քծնողը սրտում միշտ ունի անկյուն...

Հաղթահարելով դժվարընկալելի հատվածը՝ ասմունքողը թեթևացած շունչ քաշեց: Ագռավին ուղարկված պանրի կտորի մասին տողի վրա ձայնը հաստատուն դարձավ, բայց առջևում նոր փորձություն էր սպասվում «դարսդարսվել» բառի տեսքով: Ասենք, Էվին դա էլ պատվով հաղթահարեց:

Հոր հերոսականությամբ ոգեշնչված, խրախուսված նրա հայացքով, դժվարանալով, բայց չընկրկելով դժվարությունների առաջ՝ նա առակն արտասանեց մինչև վերջ: Բոլորս, ներառյալ տիրոլյան հովվուհին, լսում էինք ակնածալի լռությամբ: Մոսցեպանովի շրթունքներն անձայն շարժվում էին նրա արտասանության հետ: Ոչ մի հուշում նրանից չլսեցի, բայց օդը ճթճթում էր մեսմերիկ ազդանշաններից, որ ուղարկում էր դստերը, երբ նա շփոթվում կամ որևէ բառ մոռանում էր:

Դրանից հետո նախկին խոսակցությանը վերադառնալ արդեն չհաջողվեց, մի թեմայից թռչում էինք մյուսին: Ու բոլորը մանր էին թվում հենց նոր տեսածի համեմատությամբ: Քրիսան սկսեց աննկատ հավաքել սեղանը:

«Դե ինչ,- Մոսցեպանովին դիմեց Կոստանդիսը:- Ցույց տա՞նք»:

Մոսցեպանովը գլխով արեց: Նրանք սպասողական նայեցին ինձ:

Լարվեցի. «Ի՞նչ եք ուզում ցույց տալ»:

«Գնանք, կտեսնեք,- ասաց Կոստանդիսը:- Այստեղից հեռու չի: Աթենքը փոքր քաղաք է»:

Իսկապես, կես ժամում ոտքով կտրեցինք քաղաքն ու վերջին տներից այն կողմ ոչ թե մշակված դաշտեր էին, ինչպես ցանկացած եվրոպական քաղաքի արվարձանում, այլ մի լայնարձակ պարապուտ՝ ճտքերի վերևը հասնող գորշ աշնանային խոտով: Տեղ-տեղ, առանձին քարերի ու քարակույտերի շուրջը մգին էին տալիս չոր ցողունների կղզյակները: Հրաշքով հոկտեմբեր հասած երկու-երեք ծղրիդ դատապարտված ճնկճնկացնում էին իրենց ջութակները:

Քառորդ վերստից կածանը մեզ հասցրեց մի փոքրիկ եկեղեցի. տանիքը քայքայված էր, մեջտեղը՝ ծակ: Կողքին թափթփված էին ժամանակին այդտեղ կանգնած հեթանոսական տաճարի մարմարե բեկորները, որոնցով էլ եկեղեցին մասամբ կառուցված էր: Մի կողմից եկեղեցուն հարում էր մի ոչ մեծ գերեզմանոց, մյուս կողմից՝ մի փոքրիկ պուրակ՝ հոկտեմբերի թոշնած տերևներով: Ծառերի մեջ հառնում էր տեղիս անտառների արիստոկրատը՝ մշտադալար դափնին:

Եկեղեցին բաց էր, քահանան պատրաստվում էր իրիկնային ժամերգության: Ուզում էի տեսնել, ու չնայած ուղեկիցներս մտադիր էին շարունակել ճանապարհը, պնդեցի, որ ինձ հետ ներս մտնեն: Տաճարը դրսից էլ անշուք էր, բայց ներսը ապշեցրեց խորագույն աղքատությամբ: Տանիքը ծակծկված էր, մերկ պատերին՝ օձագալար ճաքեր: Բյուզանդական ոգով որմնանկարված սրբապատկերները փորագրանախշեր ու ոսկեշերտեր չունեին, բեմի միջնադուռը՝ փեղկեր: Քահանան գաղտնաձեսը կատարում էր հնամաշ վարագույրի հետևը, որի գլխին կախված էր թղթից կտրած ու փայտե չորսուին քորոցով ամրացված խաչելությունը: Ջարդված խոյակը գրքակալ էր ծառայում:

«Տեսնում եմ, որ զարմացած եք,- իմ զգացումները ճիշտ մեկնեց Կոստանդիսը,- բայց Հունաստանում եկեղեցական գրաքննություն չկա: Մենք

տաճարները զարդարում ենք այնպես, ինչպես մեզ դուր է գալիս, և մեր ճաշակը տարբերվում է ծերինից: Ձեզ մոտ գնահատվում է ճոխությունը, մեզ մոտ՝ պարզությունը, դուք ոսկի, ներկեր, լաք եք սիրում, մենք՝ դաշտային ծաղիկներ ու հնագույն արվեստի գործեր: Աստծո աչքին թղթե խաչելությունը ոչնչով չի տարբերվում արծաթյա խաչելությունից: Հույների համար, ըստ Ավետարանի, ամեն ինչ մաքուր է, քանզի նրանք չեն տեսնում անմաքրությունը»:

Մոսցեպանովը խորամանկ ժպտաց, բայց լռեց: Տանտիրոջ հյուրընկալ շարժումով ինձ հրավիրեց շարունակել դիտումը: Պարագծով պտտվեցինք եկեղեցում: Պատերին՝ ոչ մի զարդարանք, բացի կիսաթոշնած ծաղիկներից ու լրիվ չորացած ծաղկեպսակներից, արանքում ճերմակին էին տալիս տետրի թերթերի նման թղթիկներ, ամեն շարքում՝ երկու-երեքական, հենց քարերին փակցված ինչ-որ սոսնձանյութով, որի չորացած շիթերը դուրս էին պրծել անկյուններից: Բոլորը գրված էին բանաստեղծության տեսքով:

«Հոգևոր հիմնե՞ր են»,- ենթադրեցի ես:

«Ո՛չ,- պատասխանեց Կոստանդիսը:- Հայրենասիրական ժողովրդական երգեր»:

Խնդրեցի որևէ մեկը թարգմանել: Նա ընտրեց ամենակարճն ու բացատրեց, որ դրա հերոսը՝ հետերիստ Ֆարմակին, պատմական դեմք է, Օդեսայից Վալախիա իշխան Իպսիլանտիի անհաջող արշավանքի մասնակից, ապա ներկայացրեց բովանդակությունը. «Թուրքերը գերի են վերցնում մարտում վիրավորված Ֆարմակիին, տանում Կոստանդնուպոլիս և այնտեղ տանջալի մահապատժի ենթարկում ռուս, ֆրանսիացի և անգլիացի դեսպանների աչքի առաջ: Դահիճների ձեռքով խոշտանգված Ֆարմակին հայացքը հառում է երկինք, տեսնում ծիծեռնակների մի երամ և խնդրում, որ թռչեն իր կնոջ մոտ, պատմեն, թե ինչպես է քաջաբար ընդունել մահը»:

Ձայնը խզվեց: Արագ շրջվելով, որ չտեսնեմ աչքերում շողացող արցունքները, արագ դուրս եկավ և ուղղվեց դեպի գերեզմանատուն: Ես ու Մոսցեպանովը գնացինք հետևից: Արևը դեռ չէր նստել, բայց օրը

զգալիորեն հակվում էր դեպի երեկո: Ժամերգության շտապող ոչ մի ծխականի չտեսա:

Գերեզմանոցը ոչ լքված էր, ոչ էլ անխնամ, պարզապես աղքատիկ էր: Շիրիմներին խաչերի փոխարեն քարեր էին, կոպտատաշ, երբեմն էլ առանց մշակման հետքերի, կամ մարմարի բեկորներ, որ առատորեն թափված էին եկեղեցու մոտ: Որոշ տապանաքարեր գրություններ ու նշաններ չունեին, բայց մեծ մասի վրա տարբեր աստիճանի ջանադրությամբ փորագրված էին խաչեր ու հանգուցյալների անունները, երբեմն՝ հակիրճ ասույթներ, պետք է ենթադրել՝ Աստվածաշնչից կամ սուրբ հայրերից: Ավելի հազվադեպ՝ երկրաչափական զարդանախշի մանրամասներ ու բուսական նախշեր էին հանդիպում: Տեղ-տեղ շիրիմներին չոր ծաղիկների փոքրիկ փնջեր էին դրված, թիթեղյա կամ փայտե փոքրիկ սրբապատկերներ, բայց նրա վրա, որին մեզ մոտեցրեց Կոստանդիսը, միայն հողի մեջ թաղված գորշ գղձաքարի մի հսկա կտոր տեսա: Քարտաշի հատիչը միայն դիմային կողմից էր դիպել քարին, որտեղ ոչ կատարյալ հարթ և ուղղահայաց մակերեսին հունարեն փորագրված էր մի անուն, առանց ազգանվան ու որևէ տեղեկության այն մասին, թե ինչով էր զբաղվում այդ մարդը, մինչև այստեղ հայտնվելը.

ΑΛΈΞΑΝΔΡΟΣ:

Ներքևի երկու թվերը նշում էին նրա ծննդյան ու մահվան տարիները: Մեքենայաբար նկատեցի, որ ապրել է քառասունյոթ տարի, նույնքան, որքան ես էի հիմա, ու մահացել տասը տարի առաջ:

Կոստանդիսն ու Մոսցեպանովը կանգ առան՝ չփորձելով առաջնորդել ինձ: Հասկացա, որ նպատակակետի մոտ ենք. հենց այդ գերեզմանն էին ուզում ցույց տալ: Երկուսն էլ սպասողաբար լռում էին:

Ծանր դատարկություն հայտնվեց սրտիս տակ, ասես Ակրոպոլիսում հասցրել էին ժայռի եզրին ու խոնարհել անդունդի վրա:

Ինձ ստիպեցի ժպտալ. «Կենոտաֆ է, հասկանում եմ... Չեմ հասկանում՝ ում և ինչի համար է դա պետք եղել»:

«Չէ՛, կենոտաֆ չի,- խոսեց Կոստանդիսը, ու կրկին, ինչպես շատ տարիներ առաջ, լսեցի ներսում պրկված զսպանակի երգը:- Այստեղ թագա-

վոր կայսր Ալեքսանդր Պավլովիչի սիրտն է թաղված»:

Որքան էլ տարօրինակ է՝ միանգամից հավատացի: Ստախոսներն իրենց այդպես չեն պահում:

«Իր նախամահու ցանկությունն էր,- ավարտեց նա:- Մահվանից մի շաբաթ առաջ ինձ կանչեց իր մոտ ու խնդրեց բոլորից գաղտնի այնպես կազմակերպել, որ իր աճյունի մի մասը ննջի Հունաստանում»:

«Մա՞սը»,- կրկնեցի ես:

«Բառը ստույգ չեմ հիշում, բայց իմաստը դա էր: Գիտեր, որ մարմինը Պետերբուրգ ուղարկելու համար զմռսվելու է, ու ներքին օրգանները պիտի հանվեն... Ամեն ինչ գիտակցում էր»,- իմ չտված հարցին պատասխանեց Կոստանդիսը:

Մի հարցում բարոնուհի Կրիդները չէր սխալվել: «Ինչ էլ որ ասեք, ձեր սիրտը պատկանում է Հունաստանին»,- գրել էր նա թագավորին: Կյանքում միայն մի անգամ ճակատագրի հրեշտակը նրան ցույց էր տվել իր աջ ձեռքը:

Աչքիս առաջ լողաց կողպեքով փակված մեծ արծաթյա, շաքարամանի նման անոթը: Այնտեղ թագավորի ներքին օրգաններն էին, սիրտն ու թոքերը: Սպիրտի մեջ՝ դրանք մարմնի հետ ուղարկվել էին Պետերբուրգ, սակայն Տարասովի ու Վիլիեի մեկնելուց հետո երկու ամիս Կոստանդիսի տնօրինության տակ էին: Առանց դժվարության կարող էր փոխել սիրտը կամ վերցնել առանց փոխարինողի՝ հիմնավոր համոզմունքով, որ հուղարկավորությունից առաջ, երբ կորուստը նկատեն, այդ գաղտնիքն իմացողները կնախընտրեն աղմուկ չբարձրացնել:

Կոստանդիսը զննաբար նայեց ինձ: Ես լուռ գլխով արեցի:

«Գիտեմ, դուք սիրում էիք նրան,- ասաց նա որոշ դադարից հետո:- Խնդիրն ահա թե ինչ է. ձեր սերը նո՞ւյնքան ուժեղ կլիներ, եթե նա թագավոր չլիներ»:

Ես շրջվեցի ու քայլեցի դեպի քաղաք: Մեզ եկեղեցի հասցրած կածանը մի կողմ էր մնացել, չվերադարձա ու գնացի ուղիղ պարապուտով: Ուղեկիցներս հետևեցին ինձ:

«Հիմար հարց է,- հետևից լսեցի Մոսցեպանովի ձայնը:- Նույն հաջո-

ղությամբ կարող ես իմ Էվային հարցնել՝ կսիրե՞ր ինձ, եթե իր հայրը չլինեի»:

Նա հասավ ինձ ու քայլեց իմ կողքից:

«Ամբարիշտները կփարթամանան խոտի պես»,- հիշեցի 91-րդ սաղմոսը:

Ամբարիշտները՝ չգիտեմ, բայց երկար հարավային ամառվա ընթացքում չորացած խոտի ցախավելները դողում էին երեկոյան ուշքի եկած քամու տակ: Զնգոցով մտրակում էին սապոգներիս ճտքերը:

Գիմետայի ուրվագծերը, որ քիչ առաջ հստակ էին, սկսեցին աղոտանալ իրիկնային մեգի մեջ: Այդպիսի հեռվից Պարթենոնի դեղին մարմարը կուրացուցիչ սպիտակ էր թվում: Իմ առջև փռված էր մի երկիր, որին երջանկություն ու հավերժ ծաղկում է սպասում:

Մոսցեպանովը մի չոր ճյուղ էր գտել և, ինչ-որ բան սուլելով, դրանով թռցնում էր ղրիմյան առյուծատամի նման ինչ-որ դեղին ծաղիկների գլխիկները: Զգացվում էր, որ գոհ է զբոսանքից, իմ ընկերակցությունից, կնոջից, դստրիկից, իր անցյալ ու ներկա ողջ կյանքից: Նաև նրանից, որ թագավորի՝ մշտապես անդորրություն փնտրող սիրտն այն, իր նման այստեղ՝ Հունաստանում է գտել:

Նա դադարեց սուլել ու դեն նետեց ճյուղը: Քաղաքի աղմուկը չէր հասնում մեզ: Խոտը շարունակում էր զնգալ, բայց այդ ձայնը միայն ընդգծում էր շուրջը տիրող լռությունը: Այն չէին խախտում նույնիսկ թռչունները: Նրանք երգել էին իրենց ամուսնական երգերն ու լռել մինչև հաջորդ գարուն:

Բովանդակություն

Հեղինակի կողմից 5

Օձը 7
Մարգարեություն 25
Արագիլը 49
Կալանավորը 68
Ալեքսանդրիա 89
Հարված 103
Ուղևորություն 117
Պերմ 131
Կնիքը 158
Փախուստ 179
Մումիան 200
Էլևսին 217
Կրակը 234
Քարոն 253
Աթենք 267
Ակրոպոլիս 292
Անդորրություն 307

Լեոնիդ ՅՈՒԶԵՖՈՎԻՉ

ՀԵԼԼԵՆԱՍԵՐԸ

Վեպ՝ օրագրերով, նամակներով ու բացակա զրուցակիցների հետ մտքի զրույցներով
Ոչ պատմական վեպ

Թարգմանությունը ռուսերենից՝
Ներսես ԱԹԱԲԵԿՅԱՆԻ

Հրատ խմբագիր՝ Հ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Մ. Արիստակեսյան
Էջադրումը՝ Հ. Փիլոյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Սարգսյանի

Թուղթը՝ օֆսեթ 60x84 1/16: Ծավալը՝ 21 տպ. մամուլ:

Տպագրվել է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպագրատանը:

EDIT PRINT
43 D.Malyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Դ. Մալյան 43
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

«ԳԵՂարմ» հանդեսի մատենաշարով լույս են տեսել

Թատերախաղեր Արևմտյան գրականությունից – 2010
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչյունը» (բանաստեղծություններ) – 2011
Միխայիլ Բախտին. «Դոստոևսկու պոետիկայի խնդիրները» – 2012
«Սիրիուսի սրնգահարները» (Վ. Խլեբնիկով, Ն. Գումիլյով,
Վ. Խոդասևիչ), (բանաստեղծություններ) – 2012
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» (պատմվածքներ) – 2012
Յուրի Լոտման. «Միֆ. Անուն. Մշակույթ» – 2012
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ» – 2012
Ժարկո Միլենիչ. «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը»
(հեքիաթ-վիպակ) – 2013
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» – 2014
Ռուս կոնցեպտուալ պոեզիա (Դ. Պրիգով, Վ. Նեկրասով,
Լ. Ռուբինշտեյն) – 2014
Հենրիխ Սապգիր. «Զուգահեռ մարդը» (բանաստեղծություններ) – 2014
Վասիլի Գրոսման. «Կյանք և ճակատագիր» (վեպ 2 գրքով) – 2014
«Կամուրջների խռովությունը. մետաֆորիստներ»
(բանաստեղծությունների անթոլոգիա) – 2015
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կալվածքը»
(պատմվածքներ) – 2015
Անդրեյ Պլատոնով. «Չևենգուր. Գուբը. Պատմվածքներ» – 2015
Արդի ռուսական վերլիբր (բանաստեղծությունների անթոլոգիա) – 2015
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա – 2015
Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» (բանաստեղծություններ) – 2015
Մա Քայ. «Սրտի արձագանքներ» (բանաստեղծություններ) – 2015
Եվգենի Վոդոլազկին. «Լավր» (վեպ) – 2015
Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» (բանաստեղծություններ) – 2015
Ռուս այլախոհական պոեզիա (բանաստեղծությունների
անթոլոգիա)– 2015

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ
(հատորներ 1-9) – 2016-2021
Յու Ջիան. «Անձրևից պատսպարվող թռչունը»
(բանաստեղծություններ) – 2016
Պավել Բասինսկի. «Լև Տոլստոյ. Փախուստ դրախտից»
(վավերագրական վեպ) – 2016
Չժան Ցզի-յան. «Երազ ծովի մասին» (բանաստեղծություններ) – 2016
Վան Ջենչկի. «Երիտասարդ վանականի սիրո պատմությունը» – 2016
Լյուդմիլա Պետրուշևսկայա. «Սեր. Երջանկություն. Ռեքվիեմ»
(պատմվածքներ)- 2016
Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» (վեպ) – 2016
«Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան»
(բանաստեղծությունների անթոլոգիա) – 2016
Ռուս մինիմալիստներ (բանաստեղծությունների անթոլոգիա) – 2016
Իձյե Թան. «Կոնֆուցիականությունը, բուդդայականությունը, դաոսիզմը,
քրիստոնեությունը և չինական մշակույթը» – 2016
Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» (վեպ) – 2016
Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» (ազգագրություն) – 2017
Դոնգ Քիանգ. «Կացարաններ» (ազգագրություն) – 2017
Ինգեբորգ Բախման. «30-րդ տարին» (պատմվածքներ
և բանաստեղծություններ) – 2017
Ջիդի Մաջիա. «Ընձառյուծից մինչև Մայակովսկի»
(բանաստեղծություններ)- 2017
Անդրեյ Վոլոս. «Վերադարձ Փանջիռուդ» (վեպ) – 2017
Դոնգ Քիանգ. «Թաղում» (ազգագրություն) – 2017
Դոնգ Քիանգ. «Փառատոներ» (ազգագրություն) – 2017
Դոնգ Քիանգ. «Ուտեստներ» (ազգագրություն) – 2017
Սյաո Ցյան. «Վիշապի մորուքներն ընդդեմ նախագծերի»
(գրականագիտություն)- 2017

Ուան Ցուլիան. «Մերձակցության աստիճաններ»
(գրականագիտություն) – 2017
Ֆյոդոր Սոլոգուբ. «Չնչադևը» (վեպ) – 2018
Ու Չուն. «Չինական մշակույթ. Փիլիսոփայություն» – 2018
Մարտիրոս Ոբն. «Սոմերն իզուր են այրվել մեղքերիս համար»
(վիպակ) –2018
Ս. Ուեյսին, Ճ. Սյուն.«Չինաստանի յուրահատկությունները:
Չինաստանի համաշխարհային ժառանգությունը» – 2018
«Աղի ձայնը» (20-րդ դարի հետութսունական թվականների սերնդի
չին գրողների պատմվածքներ) – 2019
20-րդ դարի ռուսական պատմվածք (անթոլոգիա) – 2019
Գվինեթ Լյուիս. «Քաոսի հրեշտակները»
(բանաստեղծություններ) – 2020
Պավել Բասինսկի. «Լև Տոլստոյ. Ազատ մարդը»
(վավերագրական վեպ) – 2020
Ցերինգ Նորբու. «Փրկված գառը» (տիբեթյան պատմվածքներ) – 2020
Չժան Ցավեն. «Դարերի կանչը. Մտորումներ Հոնկոնգի մասին» – 2020
Կոնֆուցիոս. «Զրույցներ» – 2020
Մարիա Գրեչ Գանադո. «Երիզվածք« (բանաստեղծություններ) – 2021
Էլիզաբեթ Քրիստին Ցոկուլսդոտիր. «Սեր, նյարդերի քայքայում.
Ոչ մի պար Զուկ-քարի վրա» (բանաստեղծություններ) – 2021
Ալեքսեյ Վառլամով. «Մտագայլը» (վեպ) – 2021
Միխալ Այվազ. «Այլ քաղաք» (վեպ) – 2021
Իմանուել Միֆսուդ. «Ցուտա Հայմ» (վեպ) – 2021
Խոսեբա Սարիոնանդիա. «Բանտեր և աքսորներ»
(բանաստեղծություններ) – 2022
Չինական ավանդական բժշկության հիմնական հասկացությունների
հանրագիտարան (հատորներ 1-2) – 2022
Նիկոլա Դուրետիչ. «Մահվան և անհետացման ժամանակագրությունը»
(պատմվածքներ) – 2022

Սլավենկա Դրակուլիչ. «Ֆրիդա կամ՝ ցավի մասին» (վեպ) – 2022
Սիգիզմունդ Կրժիժանովսկի. «Հիշողություններ ապագայի մասին» (երեք վիպակ) – 2022
Եվգենի Վոդոլազկին. «Կղզու արդարացումը» (վեպ) – 2022
Թրևոր Ջահրա. «Երեկոյան ժամերգություն» (պատմվածքներ) – 2023

Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

www. vogi-nairi.am
Էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru
հեռ.: +374 97252323, +374 94259161